



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am



«ԳԱՆՉԱՍԱՐ»
ՄԱՏԵՆԱԾԱՐ

ՀԱՌՔԲ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ
ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

ՀԱՅԱՋԳԻ ՍՈՒՐԲԵՐ

ԵՐՐՈՂ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ



ԳԱՆՁԱՍԱՐ
ԱՄՈՒՍԱՐԱՆԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Երևան 1997

ԴՏՀ 23/28
ԳՄԴ 86-37
Օ 757

Ծնորձը արքեպիսկոպոս Գալուստեան

Օ 757 Հայագոյի Սուրբեր. - Եր. - : Գանձասար, 1997. - 428 էջ:

Ներկայացուած է Ենորհք արքեպիսկոպոս Գալուստեանի «Հայագոյի սուրբեր» ռատմանախրութեան երրորդ վերահրատարակութիւնը: Իր տեսակի մէջ եզակի այս աշխատութիւնը ընդգրկում է Հայ Եկեղեցու տօնակարգում տեղ գտած եւ ինչ-ինչ պատճառներով դուրս մնացած սուրբերի վարքերի եւ վկայաբանութիւնների գրեթէ ամբողջական պատկերը:

Քրիստոնէութիւնը Հայաստանում որպէս պետական կրօն հռչակելու 1700-ամեակին նուիրուած այս հրատարակութիւնը թելադրուած է ոչ միայն Հայ սուրբերի վարքագրութիւնը համակարգուած ներկայացնելու ցանկութեամբ, այլեւ մեր Եկեղեցու տօնակարգութեան խզումները վերականգնելու հրամայական պահանջով:

Օ $\frac{0403000000}{846(01) - 97}$ 97

ԳՄԴ 86-37

Խմբագիր Պարոյր Մուրադեան

© «Գանձասար» աստուածաբանական կենտրոն, 1997

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ.Տ. ԳԵՐԵԳՆԻ Ա

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. ՊԵՐԳԵԻԻ

ՍՐԲԱԶՆՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԱՌԱՋՆՈՐՈՒՆ ԱՐՑԱՆԱՅ

Երանայիշատակ Շնորհք Արքեպսկ. Գալուստեանի կանխաբանութեամբ՝ «Հայազգի սուրբերը» հեղինակելիս իր «դիտաւորութիւնը չէ եղած պատմական, ուսումնական կամ բանասիրական աշխատանք կատարել ներկայացուած դէմքերու մասին», այլ՝ «ծանօթացնել սուրբերը իրենց նկարագրի կրօնաբարոյական գիծերուն եւ գործունէութեան մէջ՝ իբրեւ օրինակ եւ ներշնչումի աղբիւր»: Բարեպաշտական այս առաքինի եւ ազնուական կեցուածքը, սակայն, բնաւ չի կաշկանդել զրջի հաւատաւոր սպասաւորին՝ ինքնաբերաբար դրսեւորելու պրպտումի իր կարողութիւնը, ուստի, Ն. Ղեւոնդ Ալիշանի «Յուշիկք Հայրենեաց Հայոցի» պէս, սոյն աշխատութիւնը թէ իսկ «ուսումնական ձեռնարկ» չէ, բայց արժանաւորապէս ուսանելի գիրք է, անձնաւորեալ պատմութիւն:

Ազգային Եկեղեցին իր պատմական կառոյցի, նուիրապետութեան, քրիստոսաբանութեան, իրաւասութիւնների ու յարաբերութիւնների մանրամասնութեանց մէջ ճանաչող հեղինակը եղելութիւններն արձանագրելուց առաւել յետամուտ է ինքնութեան խորհուրդը բացայայտելուն, նուիրումն ու յիշատակը գնահատելուն, սրբացեալ եւ սրբացումի արժանի անհատականութեանց առաքինութիւնները ստիւբելուն: Եւ սոյն երկրորդ հրատարակութեան նախաձեռնութիւնը ապացոյց է, թէ Պատրիարք Հօր մղումներն ու մտահոգութիւնները անարձագանք չեն:

«Հայազգի սուրբերի» նախորդ հրատարակութեան վերջընթեր էջին (317) արդէն տասնհինգ գրքերի հեղինակը մորմոքումով գրել է. «Մեր ներկայ գրքին տպագրական երկունքը ամենադժուարինը եղաւ սակայն մեր հոգը այդ չէ, այլ հայ գրքի տպագրական արուեստին կրած չարչարանքն է, տպագրական թեքնիք թերիները եւ մեծ ու պզտիկ սխալները: Եւ ասոր համար ոչ ոք պատասխանատու կամ մեղադրելի է, ոչ իսկ հեղինակը, որ չէ կոցած իր տպագրութեան գլուխը գտնուիլ եւ անձամբ հսկել անոր աւելի կանոնաւոր դուրս գալուն»: Ուրեմն՝ հանդուցեալ հեղինակի կամքը կատարած լինելու համար անհրաժեշտ էր ստանձնել որոշակի սրբագրական-խմբագրական աշխատանք, վերացնել «մեծ ու պզտիկ սխալները»: Պատրիարք Հայրը

«Եղիշիք ՍՈՒՐԲԸ, զի ես ՍՈՒՐԲ եմ.» (Ղեւտ. ԺԱ 45):

«Քանզի ոչ կօչեաց զմեզ Աստուած ի պզծութիւն, այլ՝ ի ՍՐՐՈՒԹԻՒՆ» (Ա. Թես. Դ 7):

«Զի խաղաղութեամբ եւ հանդարտութեամբ վարեացուք զկեանս մեր ամենայն աստուածապաշտութեամբ եւ ՍՐՐՈՒԹԵԱՄԲ» (Ա Տիմ. Բ. 2):

«Օրինակ լինիշիք հաւատացելոց բանիւք, գնացիւք, սիրով, հաւատովք եւ ՍՐՐՈՒԹԵԱՄԲ» (Ա Տիմ. Դ. 12):

անշուշտ պիտի նախընտրէր պատմական սկզբնաղբիւրներէ առաւել
գիտական ու ստոյգ հրատարակութիւնները՝ եթէ այդպիսիք իր ձեռքի
տակ ունենար, ուստի անհրաժեշտ նկատեցինք ընթերցողին յանձնա-
րարուող գրականութեան ցանկը լրացնել կարեւորագոյն հրատարա-
կութիւններով: Դարձեալ՝ տեղեկատու գրականութեան պակասով պի-
տի բացատրել գրքի մէջ առկայ մի քանի թիւր վերագրումներն ու
ընտրողները, որոնք այլեւս վերանայուած են՝ մասամբ կրճատու-
մանով, մասամբ՝ շտկումներով: Բնագրերով ստուգուած է ընդարձակ
վկայակոչութիւններէ մեծ մասը՝ ակամայ բացթողումները լրացնելով
եւ ազաւազումները կանխելով: Ի վերջոյ՝ Տօնացոյց չանցած «սրբա-
կենցաղ անձերու եւ մեծագործ դէմքերու» ցանկը լրացուած է Հայազ-
գի ցարդ անծանօթ մնացած նահատակների անուններով, որպիսիք են
Տայք ու Կող գաւառներու մէջ քրիստոնէութեան առաջին գարեբուծ
վկայուած Դաւիթն ու Տիրիճանը, Կողացի ինը մանուկները, 1441
թուին Գուգարաց Սամշուկիդէ քաղաքում նահատակուած Հայազգի
երիտասարդները: Գրքի խորագրի պահանջով լրացումների մէջ
ընդգրկուեցին նաեւ լատինական «Վարք սրբոցնորից» յայտնի «Ա-
բարատեան բիւր վկաները», Սերւանտիոս և Մակար Հայազգի եպիս-
կոպոսների վարքերը:

«Հայազգի սուրբեր» գիրքը շարագրանքով գիւրընկալելի, հաւա-
տաւորին շերմացնող, բայց նաեւ գիտութեան սպասաւորին ոգեւորող
աշխատութիւն է, որի ազդեցութիւնն ու պատուական առաքելութիւնն ան-
վերապահ է: Համոզուած ենք՝ այս գիրքը առաջիկայում բազում նոր
հրատարակութիւններ ու լրացումներ կունենայ, որովհետեւ Գրիգոր
Աբասայ որդու խօսքերով (ԺԳ դար)՝ «Գիտութիւն գրոց ծով է անեզր
եւ անհաս, եւ չիք գրաւանդակն իմանալ ումեք ըստ արժանւոյն, այլ
զսակաւս ի բաղմացն»:

Պրոֆ. Պարոյր Մուրադեան
8.10.1995

ՄՈՒՏՔ

Կրօնական կամ տօնական տարին ներկայացնելու մեր ծրագիրը եւ
աշխատանքները իրենց վերջաւորութեան կը բերուին այս հատորով,
որ երբորդն է Սուրբերու համառօտ կեանքը ներկայացնելու մեր
ձեռնարկին:

Նախորդներէն էին՝

Ա. ԱՍՏՈՒԱԾԱՇԵՉԱԿԱՆ ՍՈՒՐԲԵՐ:

Բ. ՀԱՄԱՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՍՈՒՐԲԵՐ:

ՀԱՅԱՁԳԻ կամ հայացած սուրբերն ալ պատկերացնելու ատեն կը
հետեւինք այն ծրագրին, զոր գործագրած էինք Բ. Հատորի պատրաս-
տութեան ընթացքին, այսինքն՝ մօտենալ անոնց դաս առ դաս, համա-
ձայն այն ասպարէզին կամ ընկերային դասակարգին, որուն մէջ ինք-
զինք սրբացուցած է տուեալ դէմքը: Ուրեմն ասոնք ալ կը ներկայաց-
նենք հետեւեալ հինգ խումբերով.

ա. Հոգեւորականներ.

բ. Ծգնաւորներ.

գ. Պետական դէմքեր եւ զօրականներ.

դ. Կոյսեր.

ե. Մնացեալ մարտիրոսներ:

Այստեղ կը տողանցեն շուրջ 100 անհատ կամ խմբական Հայազգի
Սուրբեր, որոնք պաշտօնապէս անցած են մեր տօնացոյցին: Ասոնցմէ
դուրս, գրքիս վերջաւորութեան դրած ենք նաեւ ՅԱԻԵԼՈՒԱԾ մը,
ինչպէս ըրած էինք նախորդ հատորին մէջ, ուր անդրադարձած ենք
մեր պատմութեան կարգ մը սրբազան, անձնդիր, բարեպաշտ, բարե-
գործ եւ նահատակ դէմքերուն, որոնք թէեւ չեն անցած տօնացոյցին,
բայց իրենց վարքը սուրբի մը վայել օրինակելի կեանք եղած է:

ԱՂԲԻԻՐՆԵՐ.- Իւրաքանչիւր սուրբի կեանքը տալու ընթացքին
գործածուած են, ուր որ հնարաւոր էր, այն սկզբնական աղբիւրները,
որոնց մէջ առաջին անգամ կը պատմուի տուեալ սուրբին վարքը: Այն
պարագային, որ ի ձեռին չենք ունեցած այդ սկզբնական աղբիւրնե-
րը, գոհացած ենք այն հաւաքարաններով, որոնք իրենց մէջ կը պա-
րունակեն սրբոց կեանքերը, այսինքն ՎԱՐՔ ՍՐԲՈՑՆԵՐՈՎ, որոնց

աւելի մանրամասնօրէն անդրադարձած էինք մեր նախորդ Հատորին մէջ (Համաքրիստոնէական Սուրբեր, էջ 6-8): Անոնք են.

1. - Գրիգոր դպիր ՄԱՐԶՈՒԱՆՑԻՒՆ 1730ին Կ. Պոլսոյ մէջ հրատարակած Յայսմատուրքը,
2. - Գրիգոր դպիր ՓԵՇՏԻՄԱԼՃԵԱՆԻՒ 1834ին Կ. Պոլսոյ մէջ հրատարակած Յայսմատուրքը,
3. - ԼԻԱԿԱՏԱՐ Վարք եւ Վկայաբանութիւն Սրբոց, 1810, Վենետիկ,
4. - Թորգոմ Պատրիարքի ՍՈՒՐԲԻ Եւ ՏՕՆՔ, 1939, Երուսաղէմ.
5. - Լայն չափով օգտագործած ենք Մ.Արքեպս. Օրմանեանի ԱԶԳԱՊԱՏՈՒՄ եռահատոր Համադրական ու պատկառելի գործը եւ նորայր Արք. Պողոսեանի ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ գիրքը. (1971, Երուսաղէմ):

Այս աղբիւրները յիշուած պարագային գործածեր ենք վերեւ զլխադրուած անունները միայն:

Ըսած ենք նախապէս եւ կը կրկնենք մեր դիտաւորութիւնը չէ եղած պատմական, ուսումնական կամ բանասիրական աշխատանք կատարել ներկայացուած դէմքերու մասին: Մեր նպատակը զուտ կրօնական ու բարեպաշտական եղած է, այսինքն՝ ծանօթացնել սուրբերը իրենց նկարագրի կրօնաբարոյական գիծերուն եւ գործունէութեան մէջ՝ իբրեւ օրինակ եւ ներշնչումի աղբիւր բոլոր անոնց, որոնք կը ձգտին ապրիլ քրիստոնէական առաքիլի եւ ազնուական կեանք մը, նմանելու Համար անոնց, ինչպէս անոնք ճգնած են նմանիլ մեր Հաւատքի Առաջնորդին ու յաւերժական Մտատիպարին՝ նոյնինքն մեր Փրկչին Յիսուս Քրիստոսին, Որուն փառքին եւ իր արիւննով փրկանաւորուած Հոգիներու բարիքին ու իր յաւերժական Հարսին՝ Հայաստանեայց Եկեղեցիի պայծառացումի առաջնահերթ գաղափարին կը ձօնուի այս գրքոյկներու ամբողջ շարքը:

ԾՆՈՐՀՔ ԱՐՔԵՊՍԿ. ԳԱԼՈՒՍԵԱՆ

ՓՈՒՍԱՆ ՆԵՐԱԾԱԿԱՆԻ

Այս գիրքով միասին մենք եօթը մեծ ու փոքր Հատորներ հրատարակ դրած ենք անցնող տասը տարիներու ընթացքին՝ Հանգամանօրէն բացատրելու Համար այն, ինչ որ Սաղմոսերգուն կը կոչէ «Աստուծմէ օրհնուած քաղցր տարիիմ պսակը» (Սաղմ. ԿԳ. 12), այսինքն՝ կրօնական տարեշրջանը: Այս Հատորները գրուեցան բնականաբար մեր Եկեղեցիի այն զաւակներուն ու պաշտօնեաներուն Համար, որոնք Հայերէն կարդալու կարողութիւնը եւ տրամադրութիւնը պահելով Հանդերձ՝ կը սնուցանեն նաեւ փափաքը քչիկ մը աւելին գիտնալու իրենց Հոգեւոր ժառանգութեան մասին, աւելի գիտակից ու աւելի կատարեալ անդամ մնալու Համար իրենց մայրենի Եկեղեցիին: Ինչպէս նախորդ Հատորներու մէջ որոշ նիւթ մը, որ Հեռուէն կամ մօտէն կապ ունէր Սրբութեան գաղափարին՝ կամ Սրբոց կեանքին Հետ, ներածականի նիւթ ըրած էինք, այնպէս ալ ներկայ Հատորին մէջ խորհրդածութեան նիւթ կ'ուզենք դարձնել Համառօտ կերպով Հետեւեալ քանի մը կէտերը, որոնք մեր կարծիքով սերտօրէն կապ ունին մեր Եկեղեցիի ներկային եւ ապագային Հետ, եւ Հետեւաբար որքան յաւերժական՝ նոյնքան ալ այժմէական հարցեր են:

Ա - ՉԽԶԵԼ ԿԱՊԸ ՄԵՐ ԱՍՏՈՒԾՈՅ ՆԵՏ

Անհատներ կամ Հաւաքականութիւններ երբ կը խզեն իրենց կապը Աստուծոյ Հետ՝ անխուսափելիօրէն ուշ կամ կանուխ կը դատապարտուին այլասերումի եւ կորուստի:

Մարդ Հոգեւոր ու բանաւոր արարած մըն է: Ծնորհիւ իր այս վերջին կարողութեան՝ բանաւորութեան, աշխարհը եւ արարչագործութիւնը դիտելով եւ դատելով Հասած է Արարիչ Աստուծոյ գաղափարին: Իսկ իբրեւ Հոգեւոր արարած՝ մարդը բարոյական ու կրօնական ըմբռնումի տէր էակ մըն է: Իր այս կրօնագգած կարողութեան շնորհիւ ի վիճակի եղած է ընդունելու գերբնական յայտնութիւններ եւ պատգամներ, որոնցմէ Հիմնականն էր. «Ես եմ քու Տէր Աստուածդ, Իճմէ՛ գաւտ ուրիշ Աստուած չունենաս»: Քրիստոնէական եկեղեցին այդ յայտնութիւնը վերածեց սա Հաւատամքի. «Կը Հաւատանք մէկ Աստուծոյ, որ Ամենակալ Հայր է եւ Արարիչը երկինքի

եւ երկրի»: Երրորդ միաստուածութեան կրօնքը՝ Մահմետականութիւնը, օրական Հինգ անգամ կը յայտարարէ ի լուր աշխարհի. «Աստուծո՛ւմէ զատ ուրիշ Աստուած չկայ»:

Այս բոլորը կը նշանակեն, որ մարդ Աստուծոյ գոյութեան հաւատացող արտարած մըն է: Հին ատեն գրեթէ ամէն մարդ աստուծոյ մը կը հաւատար. ոմն ալիս, ոմն այնպէս: Անհաւատութիւնը, եթէ իրականին մէջ ալիսի բան գոյութիւն ունի, համեմատաբար արդի ժամանակներու նորաձեւութիւն մըն է՝ յաճախ Հիմնուած նիւթապաշտութեան կամ կենսապաշտութեան վրայ, որոնք ինքնին հաւատքի տեսակներ են:

Հաւատքը կ'ենթադրէ, որ Աստուծոյ եւ մարդու միջեւ կապ մը կամ հաղորդակցութիւն մը գոյութիւն ունի: Այդ կապը կ'արտայայտուի Աստուծոյ կողմէ մարդուն պաշտպանութեամբ եւ բարիքներու բաշխումով, իսկ մարդու կողմէ՝ Աստուծոյ Հանդէպ պաշտամունքով, պատուիրանապահութեամբ եւ սէրով: «Քու Տէր Աստուծոյդ երկրպագութիւն պիտի ընես եւ զԱյն միայն պիտի պաշտես» (Մատթ. Գ. 10): «Աստուծո՛ւմէ վախցիր եւ Անոր պատուիրանները պահէ» (Ժող. ԺԲ. 13): «Պիտի սիրես քու Տէր Աստուածդ ամբողջ սիրտովդ...» (Մատթ. ԻԲ. 37): Աստուծոյ հետ մեր ունեցած կապին խզուած ըլլալը գործնականին մէջ կ'արտայայտուի, երբ կարեւորութիւն չենք ընծայեր կրօնական արժէքներուն եւ բարոյական ու հոգեւոր ճշմարտութեանց, ինչ որ նախ մարդը կ'առաջնորդէ բարոյական այլասերումի եւ ապա՝ անխուսափելի կորուստի:

Աստուծո՛ւմէ օտարացումը եւ հեռացումը առհասարակ երեք կերպերով կ'ըլլայ՝ կոնապաշտութեամբ, ուրացումով եւ անտարբերութեամբ: Երեքին մէջ ալ հասարակաց երեւոյթը այն է, որ մարդ այլեւս կը դադրի պահելէ Անոր պատուիրանները, որոնք դրուած էին իր հոգեւոր եւ մարմնաւոր բարօրութեան եւ յաւիտենական երջանկութեան համար:

Հին Ուխտին մէջ Աստուծո՛ւմէ հեռացման գլխաւոր ձեւն էր կոնապաշտութիւնը. այսինքն՝ Աստուծոյ տեղ դնել անմռունչ եւ ձեռագործ կուռքերը եւ անոնց երկրպագութիւն ընել: Մեր ժամանակներուն, առնուազն մեր անմիջական շրջանակէն, շատոնց վերցուած է կոնապաշտութիւնը. այնպէս որ այսօր գրեթէ ոչ ոք կը հեռանայ Աս-

տուծո՛ւմէ կուռքեր պաշտելու համար: Սակայն եթէ Հինկոնապաշտանան իմաստով կոնապաշտութիւնը վերցուած է մէջտեղէն, կը շարունակէ ան իր գոյութիւնը բառին բարոյական իմաստով: Կուռք է ամէն ինչ, որ Աստուծոյ տեղը կը գրաւէ մեր սրտին մէջ, այսինքն՝ առաջին գիծին վրայ կուռքայ մեր սիրոյն մէջ: Մեր ժամանակներու կուռքերն ու կրօնքներն են, օրինակ, նիւթապաշտութիւնը, հաճոյապաշտութիւնը, դրամապաշտութիւնը ու մանաւանդ եսապաշտութիւնը: Կուռքեր են բոլոր մոլութիւնները, որոնց անկարգ ցանկութեամբ կը կապուին մարդիկ եւ կը հեռանան ճշմարիտ աստուածաւիրութենէ: Ասոնցմէ են, օրինակ գինեմոլութիւնը, կնամոլութիւնը, միասեռականութիւնը, խաղամոլութիւնը եւ մեր ժամանակներու անէծքը եղող տեսակ-տեսակ թմրեցուցիչներու մոլութիւնները:

Մեր ժամանակակից կուռքեր կրնան ըլլալ նաեւ միջազգային բառերով ծանօթ կարգ մը ընկերային դրութիւնները, որոնց երբեմն մոլեգին կերպով կը կապուին մարդիկ՝ մոռնալով Աստուած եւ ամէն բարոյական սկզբունք. անոնք են ֆաշիզմը, ցարիզմը, ցախիոնալիզմը, անարշիզմը եւլն: Մինչեւ իսկ ընկերային կարգ մը դրութիւններ, որոնք ըստ ինքեան օգտակար են մարդկութեան համար, բայց վնասակար կը դառնան, եթէ մարդիկ հաւատան ու հետեւին անոնց՝ հրաժարելէ յետոյ ճշմարիտ Աստուծոյ գաղափարէն: Ասոնցմէ են, օրինակ, դարձեալ միջազգային բառերով, սոսիալիզմը, կոմունիզմը, գաբիթալիզմը եւլն: Ինչպէս որ նիւթական կոնապաշտութիւնը մարդիկը խաբել է ու պատրանքի գոհ դարձնել է ուրիշ նպատակի չէր ծառայեր, նոյնը կ'ընեն ու պիտի շարունակեն ընել Աստուծոյ հակադրուած բոլոր ...ԻԶՄԵՐԸ, որոնք, հայերէն լեզուի յատուկ սքանչելի ճկնութեամբ եւ ճշգրտութեամբ առհասարակ կը թարգմանուին ...ՊԱՇՏ վերջնամասնիկով, որ, ինչպէս ծանօթ է, կրօնական իմաստ ու երանգ ունի: Որքան ալ ըստ երեւոյթին ասոնցմէ ոմանք օգտակար, մինչեւ իսկ վեհ իտէալ թուին, երբ կ'անջատուին կրօնական ու բարոյական Հիմնական սկզբունքներէն, ի վերջոյ կը ծառային մարդկութիւնը կաշկանդելու, ստրկացնելու, մինչեւ իսկ անբարոյացնելու նպատակին:

Ասոնցմէ ամենէն անմեղ, մինչեւ իսկ ցանկալի երեւցածը՝ սոսիալիզմը, երբ կ'ամուսնալուծուի Աստուծոյ գաղափարէն, կը

վերածուխի ամուլ ընկերային գրութեան մը, որ եթէ մինչեւ իսկ մարդուն կ'ապահովէ ինչինչ ընկերային դիւրութիւններ եւ նիւթական առաւելութիւններ, սակայն կը կապուէ գայն շատ աւելի կարեւոր եւ հիմնական ընկերային սկզբունքներէն: Օրինակ՝ Աքանտինաւեան երկիրներու մէջ, ուր կը տիրապետէ սոսիալիստական գրութիւնը, որքան ալ ստեղծուած ըլլան ընկերային հանգստաւէտութեան գրեթէ բոլոր պայմանները, եւ սակայն մարդիկ դժգոհ են եւ անձկութեան մատնուած են նաեւ այս երկիրներու մէջ: Անձնասպանութիւնները բարձրագոյն համեմատութեան հասած են այս երկիրներու մէջ: Ալքոլիզմը, որձառումները, ամլացումները տիրապետող են այս երկիրներու մէջ: Ընկերային եւ ընտանեկան բարքերը ամէնէն աւելի թուլցած են այս երկիրներու մէջ: Այլասերումի առաջնորդող սեռային խենչէզ գրականութիւնը եւ պատկերները ամէնէն աւելի տարածուած են այս երկիրներուն մէջ: Անխախտ ճշգրտութիւն ունին Աստուածաշունչի յայտնեալ ճշմարտութիւնները. «Ոչ զօրութեամբ եւ ոչ ուժգնութեամբ», ոչ ալ հանգստաւէտութեան բոլոր պայմաններու ստեղծումով, պիտի աւելցնէինք մենք. «այլ Հոգւով Իմով, - սաէ՛ Տէր Ամենակալ» (Ձաք. Դ. 6): «Առանց Ինծի ոչինչ կրնաք ընել», կ'ըսէ մեր Տէրը, (Յովհ. ԺԵ. 5): Այս բոլոր ...ԻՉՄերու, ...ԳԱՇՏերու ետին կայ ի վերջոյ յօրանջող Գարապուծիւնը, Ունայնութիւնը, Անդուսը, որուն մէջ սահմանուած են իյնալու, դժբախտաբար, բոլոր անոնք, որ կը պաշտեն զանոնք. այսինքն՝ թողլով ճշմարիտ Աստուածը՝ իբրեւ փրկութեան միջոց ասոնց կ'ապաւինին: Կուսպաշտութիւնը՝ իր բնական ու բարոյական տեսակներուն մէջ, ծանրագոյն մեղքն է Աստուածաշնչական տեսակէտով:

Իսկ նոր Ուխտի մէջ, այսինքն՝ Քրիստոնէական շրջանակէ ներս, ծանրագոյն մեղքը ուրացումն է. այսինքն՝ Հրաժարիլ Քրիստոսէ, որուն դիտակցաբար կամ անգիտակցաբար հաւատացած ու կապուած էր ենթական Մկրտութեամբ Ա. Աւագանին: Հոգ չէ, թէ ինչ ըլլան ուրացումին պատճառները, բացայայտ է, թէ ուրացողը իր վրայ կը հրաւիրէ «Արագահաս կորուստը» (Բ. Գեո. Բ. 1): Արդարեւ՝ Գետրոս Առաքեալի Բ. թուղթի Բ. գլուխը սքանչելի բացատրական մըն է ուրացման մեղքի ծանրութեան եւ անոր ահաւոր հետեւանքներուն, ըսելու աստիճան, որ ուրացողներուն համար աւելի ազէկ պիտի ըլլար, ե-

թէ բնաւ ճանչցած ըլլային «Արդարութեան ճանապարհը», քան թէ ճանչնալէ յետոյ Հրաժարէին անկէ. որովհետեւ այսպիսիներու վախճանը շատ աւելի չար պիտի ըլլայ: Ուրացողը նոյնացուած է Անին, այսինքն՝ Հակա-Քրիստոսին հետ Յովհաննէս Առաքեալի գրութեանց մէջ. «Ո՞վ է ստախօսը, եթէ ոչ ան, որ կ'ուրանայ Յիսուսի Աստուծոյ Օծեալը՝ այսինքն Մեսիան ըլլալը, ան է Անը: Ով որ կ'ուրանայ Հայրը, կ'ուրանայ նաեւ Որդին, իսկ ով որ կ'ուրանայ Որդին, ուրացած կ'ըլլայ նաեւ Հայրը»: (Ա. Յովհ. Բ. 22-23): Իսկ աւետարանները կը հաստատեն, որ մարդոց առջեւ զՔրիստոս ուրացողը պիտի ուրացուի Քրիստոսի կողմէ՝ երկինքի հրեշտակներու առջեւ: (Մատթ. Ժ. 33):

Հին ատեն տկար քրիստոնեաներ ուրացումի մեղքին մէջ կ'իյնային՝ չկարենալով տոկալ ու համբերել հալածանքներուն եւ իրենց վրայ բանեցուած ճնշումներուն եւ չարչարանքներուն: Ներկայ ժամանակներու մէջ ուրացումը կը շարունակուի քրիստոնէական շրջանակներու մէջ պարզապէս ազատագրուելու համար քրիստոնէական կրօնքի կարծեցեալ բեռներէն կամ իրական բարոյական պահանջներէն եւ կամ՝ չկարենալով տոկալ իրենց շրջապատի հեթանոս ընկերութեան ուղղակի կամ անուղղակի ճնշումներուն: Ներկայ ընկերութիւնը իր ջախջախիչ մեծամասնութեան մէջ անկրօն եւ անաստուած է եթէ ոչ դաւանանքով, գէթ՝ գործքով:

Սակայն ներկայ ժամանակներու մէջ Աստուծոյ հետ յարաբերութեանց խզումը առաւելագոյն չափով կը կատարուի աճատարբերութեամբ: Ենթական այնպէս մը կապուած ու վարժուած է ապակրօն կեանքի, որ այլեւս չի հետաքրքրուիր, չուզեր հետաքրքրուիլ Աստուծոյ գոյութեամբ կամ Անոր կամքով: Միակ բանը, որով տարուած է, որով գրեթէ կլանուած է ժամանակակից մարդոց մեծագոյն մասը, իր գործն է, իր առօրեայ կեանքն է, որմէ դուրս գրեթէ ոչինչ կը հետաքրքրէ զինքը: Բարեպաշտ Հայ մը կը հարցնէ կրօնապէս իր անտարբեր ընկերոջ. «Քեզ երբեք եկեղեցի չեմ տեսեր. ի՞նչ պատահած է քեզի»: Մարդուկը կը պատասխանէ. «Վերինը անհանգիստ չընենք եկեղեցիով, աղօթքով կամ նման բաներով: Ան՝ իր գործին, մենք՝ մեր գործին...»: Կրնայ ըլլալ, որ ամէն անտարբեր Հայ քրիստոնեան այսպէս չ'արտայայտուիր, բայց գործնականին մէջ իր ցոյց տուած ոգին տարբեր չէ այս մարդուկին արտայայտածէն: Իրապէս անտարբեր

ե՞նք, թէ՞ չենք. պատասխանը կուտանք մեր կեանքով եւ գործերով: Եթէ Աստուծոյ պատուիրանները կը պահենք հաւատարմօրէն, տարակոյս չկայ, որ անտարբեր չենք, որովհետեւ անտարբերութեան մէջ չենք կրնար, չենք ուզեր պահել, անիմաստ եւ աւելորդ կը նկատենք պատուիրանապահութիւնը, ըսել է թէ՛ անտարբեր ենք: Ասիկա անսխալելի փորձ մը եւ սկզբունք մըն է մեր անտարբեր ըլլալը կամ չըլլալը հաստատող:

Ուրեմն, կրնայ ըլլալ, որ մարդ յարած չըլլայ իրական կամ բարոյական կուսակալութեան, ոչ ալ պաշտօնապէս ուրացած ըլլայ իր Աստուածը կամ զՔրիստոս, բայց երբ չի պահեր Աստուծոյ Պատուիրանները, հետեւանքը նոյն կ'ըլլայ. կապը կը խզուի իր եւ Աստուծոյ միջեւ, եւ մարդ կը դատապարտուի կորուստի: Երեք մանուկներու ծանօթ երգին մէջ՝ «Օրհնեալ ես Տէր Աստուած Հարցն մերոց», կը հաստատուի, որ Իսրայէլ կորուստի մատնուած է, «որովհետեւ Պատուիրաններուդ մտիկ չըրինք եւ չպահեցինք զանոնք», եւ հետեւաբար այս պատճառով «մատնեցիր զմեզ մեր թշնամիներուն ձեռքը, անօրէններուն, խիստ ու բիրտ մարդերուն եւ ամենէն չար ու անիրաւ թագաւորին ձեռքը» (Դան. Գ. 32):

Սուրբերը ամէն բանէ առաջ եւ ամէն բանէ աւելի կատարի Հակառակորդները եղան կուսակալութեան, ուրացումին եւ անտարբերութեան: «Իբրեք (չաստուածներդ) չենք պաշտեր եւ քու կանգնած ոսկի արձանիդ երկրպագութիւն չենք ընել», - Երեք Մանուկներու այս համարձակ արտայայտութիւնը նշանաբանը եղած է բոլոր Սուրբերուն բոլոր դարերուն մէջ: Ինչո՞ւ. «Որովհետեւ մենք երկինքի մէջ մեր Աստուածը ունինք եւ զԱյն միայն կը պաշտենք», - կը յայտարարէին բոլոր Սուրբերը բոլոր դարերուն մէջ: Յատկապէս Հայագոյի Սուրբերը իրենց հոգիի եւ սիրտի կապը անխզելի պահեցին իրենց կենդանի Աստուծոյն հետ եւ արժանացան յաւերժական կեանքին, երկնային երանութեան ու մեր յարգանքին, երախտիքին եւ սիրոյն:

Սուրբերը կը խօսին մեզի իրենց կեանքով, իրենց պայքարով եւ իրենց արիւնով ու կը պատգամեն յաւերժօրէն. «Նմանեցէք մեզի, հետեւեցէք մեզի եւ մի՛ խզէք ձեր կապը մեր Երկնաւոր Հօր՝ մեր Փրկչին Յիսուս Քրիստոսին եւ մխիթարար ու զօրացուցիչ Ս. Հոգիին հետ»:

Բ. ԶԿՈՐՍԵՑՆԵԼ ՀԱԻԱՏՔԸ

Շատ բան կորսնցուցինք դարերու ընթացքին, ու մանաւանդ՝ մեր ժամանակներուն: Ահաւոր կորուստներ՝ նիւթական, մշակութային եւ կեանքի: Սակայն մեր կորուստներէն ոչ մէկը այնքան աղիտալի կը թուի մեզի իր հետեւանքներով, որքան մեզմէ ոմանց, յատկապէս մեր մտաւորականութեան, յարգելի քանի մը բացառութիւններով, հաւատքի կորուստը: Միւս կորուստներէն շատերը կրնան վերստին ձեռք ձգուիլ, քանդուած տնտեսութիւնը կրնայ վերականգնիլ, եւ գրեթէ վերականգնած է արդէն, կորզուած հարստութիւնը կրնայ վերաշահուիլ եւ վերաշահուած է արդէն, աւերուած տունները կրնան վերաշինուիլ, վերաշինուած են արդէն: Իսկ հաւատքը, կորսուած հաւատքը ո՞վ պիտի կրնայ վերադարձնել մեզի... Այո, ո՞վ պիտի կրնայ վերադարձնել զայն մեր մտաւորականութեան: Պատասխանը Հոովմայեցեաց թուղթի ժ. գլուխին մէջ է, որմէ կ'ընենք սովորականէն աւելի երկայնկեկ հետեւեալ մէջբերումը, ազատ թարգմանութեամբ, այնտեղ թաքնուած միտքերը աւելի յստակ դարձնելու համար: Ուրեմն մենք եւս, փոխ առնելով Պօղոս Առաքեալի խօսքերը, կ'ըսենք սրտանց.

«Եղբայրներ՛, իմ սրտի ցանկութիւնը եւ ազօթքը այն է, որ մեր ժողովուրդը փրկութեան առաջնորդուի: Կը վկայեմ, որ անոնք (մեր ժողովուրդը) թէեւ Աստուծոյ նախանձախնդրութիւնը ունին, բայց այդ նախանձախնդրութիւնը հիմնուած չէ ճշմարիտ գիտութեան վրայ: Որովհետեւ չեն գիտեր այն կերպերը եւ միջոցները, որոնցմով Աստուած մարդերը կ'առաջնորդէ արդարութեան, այսինքն՝ իր հետ հաշտութեան եւ հաղորդութեան. այլ՝ իրենց կերպերը եւ միջոցները առաջ կը քշեն: Ու այս իսկ պատճառով Աստուծոյ արդարութեան չեն հնազանդիր, չեն հասնիր... Արդ, եթե բերանով յայտարարենք, թէ Քրիստոս Տէրն է, եւ սրտով հաւատանք, թէ Աստուած յարութիւն տուաւ Անոր, պիտի փրկուինք: Որովհետեւ երբ սրտով հաւատանք՝ կ'արդարանանք, իսկ երբ բերանով յայտարարենք՝ կը փրկուինք: Որովհետեւ Հին Կտակարանի մէջ ըսուած է. Ով որ կը հաւատայ Աստուծոյ՝ պիտի չամչնայ, յուսախաբ պիտի չըլլայ.. Աստուած իր օրհնութիւնները կը տեղացնէ բոլոր անոնց վրայ, որոնք Անոր կը դիմեն... :

Սակայն ի՞նչպէս պիտի կրնան դիմել Աստուծոյ, եթէ չհաւա-

տան. եւ ի՞նչպէս պիտի հաւատան, եթէ չլսեն Աստուծոյ պատգամը կամ ի՞նչպէս կրնան լսել, եթէ մէկը չքարոզէ, կամ ի՞նչպէս պիտի քարոզուի, եթէ մէկը չղրկուի քարոզելու համար: Անոր համար կ'ըսէ Աստուածաշունչը. «Ի՞նչ սքանչելի է գալուստը խաղաղութեան ու բարութեան աւետարանիչներուն, քարոզիչներուն»: Սակայն, դժբախտաբար, ամէն ոք չհնազանդիր, չհաւատար Աւետարանի քարոզութեան, ինչպէս Եսային կ'աղաղակէ ու կ'ըսէ. «Տէր, ո՞վ հաւատաց մեր բերած բարի լուրին»: Այս բոլորէն կը հետեւի, որ հաւատքը կը ծնի պատգամը լսելէն. իսկ պատգամը Առնիմաքս Բրիտանի խօսքն է:

Ու կը հարցնենք. մի՞թէ չլսեցին պատգամը: Անշուշտ լսեցին, որովհետեւ, ինչպէս Ա. Գիրքը կ'ըսէ. Անոնց (այսինքն մարգարէներուն եւ առաքեալներուն) քարոզութեան խօսքը տարածուեցաւ ամբողջ աշխարհի վրայ: Անոնց խօսքը հասաւ մինչեւ աշխարհի բոլոր ծայրերը: Նոյն Սուրբ Գիրքը կ'ըսէ. Աստուծոյ պատգամը մօտ է ձեզի, ձեր բերնին ու ձեր սրտին մէջն է. այսինքն այն պատգամը, որ մենք կը քարոզենք:

Ու կ'եզրակացնէ Եսայի մարգարէն համարձակօրէն. «Գտնուեցայ անոնց կողմէ, որ զիս չէին փնտռեր», «Յայտնուեցայ անոնց, որոնք իմ մասին հարցումներ չէին ըներ»: Սակայն դժուարահաւատ Իսրայէլի մասին կ'ըսուի. «Ամբողջ օրը իմ ձեռքերս երկարեցի անհաւատ եւ ապստամբ ժողովուրդին»:

Ուրեմն՝ հաւատքը ըստածը անհատապէս ձեռք ձգուելիք գործ մըն է: Պատգամը լսելէն ետքը ենթական ինք կը հաւատայ կամ կը մերժէ հաւատալ, կ'ընդունի կամ կը կորսնցնէ զայն իր իսկ կամքով: Հող, հայրենիք եւ հարստութիւն մարդուն ձեռքէն կը խլուին հակառակ իր կամքին, կը խլուին ոյժով եւ բռնութեամբ, իսկ հաւատքէն մենք միայն կրնանք հրաժարիլ մեր ազատ կամքով: Ոչ ոք կրնայ առնել հաւատքը մեզմէ՝ եթէ մենք չկամենանք տալ. վկայ են Վարդանանք եւ բոլոր Սուրբերը: Աշխարհի ամէնէն հզօր կայսրութիւնն անգամ, որուն առջեւ ծունկի եկած էին շրջակայ բոլոր ազգերը, չկրցաւ բռնա մի քրիստոնեաներու սիրտէն խլել հաւատքի ոյժը. չկրցաւ մարել հաւատքի կայծը: Ի վերջոյ ինք (Հռովմէական հզօր կայսրութիւնը) խոնարհեցաւ այդ հաւատքին առջեւ:

Մեր հաւատք ունենալը կամ չունենալը, զայն պահած կամ կորսնցուցած ըլլալը կեանքի պատահարները կը փաստեն: Հարստութիւն կամ աղքատութիւն, յաջողութիւն կամ ձախողանք, առողջութիւն կամ հիւանդութիւն, երջանկութիւն կամ փորձանքներ, ամենքն ալ ունին իրենց դերը՝ մէջտեղ հանելու մեր ունեցած կամ չունեցած հաւատքը, զօրացնելու կամ տկարացնելու զայն, նայած թէ ինչ դիրք կը բռնենք անոնց հանդէպ: Եթէ վերոյիշեալ դրական երեւոյթներու դիմաց (հարստութեան կամ յաջողութեան պարագային օրինակ) կը մոռնանք զԱստուած կամ ինքնաբաւ կը դառնանք, կամ Աստուծոյ պէտք չենք ունենար այլեւս եւ կամ կզրկենք մենք զմեզ Աստուծմէ կախումի մեր գիտակցութենէն ու կեանքի վայելքը մեզի նպատակ կ'որդեգրենք, այն ատեն այս բոլորը կը նշանակեն, որ հիմնաւոր հաւատք չունէինք: Ընդհակառակը, եթէ Աստուծոյ փառք տանք մեր կեանքի այդ դրական երեւոյթներուն համար, այդ փաստ է, որ առողջ հաւատք ունինք: Եթէ ընդունինք ու յայտարարենք, որ «Ամենայն տուրք բարիք (այսինքն՝ բոլոր տրուած բարի բաները) եւ ամենայն պարգեւք կատարեալք ի վերուստ են իջեալ առ ի Հօրէ լուսոյ», կը նշանակէ, որ մեր հաւատքը հաստատ եւ հիմնաւոր է:

Իսկ ժխտական երեւոյթներու դիմաց (հիւանդութեանց եւ ձախողանքներու մէջ օրինակ) եթէ վհատինք, այդ եւս նշան է, որ հաւատքէ պարպուած ենք: Իսկ ընդհակառակը՝ եթէ կարենանք ըսել. «Տէրը տուաւ, Տէրը առաւ, օրհնեալ ըլլայ իր կամքը» մեր հաւատաւոր եղած ըլլալուն փաստը կուտանք: Եթէ կեանքի ժխտական երեւոյթներու դիմաց դառնանանք, թթուինք կամ հայհոյենք, եթէ կը կարծէինք որ հաւատք ունէինք, անոր պատրանք մը եղած ըլլալը կը հաստատենք: Ընդհակառակը, եթէ քաջաբար համբերենք չքաւորութեան ու տառապանքներուն՝ հաւատքի նոր մթերքներու պիտի տիրանանք, որոնք պիտի սնուցանեն մեր ներքին կեանքը եւ պիտի ապահովեն մեզի մեր յաւիտենական կեանքը. «Ով որ մինչեւ վերջը համբերէ, ան պիտի տիրանայ յաւիտենական կեանքի» կամ՝ «Ձեր համբերութեամբ պիտի ազատէք ձեր հոգին», - կը պատգամէ մեր Տէրը:

Սուրբերուն համար կեանքի դրական կամ ժխտական երեւոյթները մեծ կարեւորութիւն չունէին. անոնց համար հիմնական մտածումը այն էր, որ իրենց կեանքին մէջ տիրապետող ըլլային հաւատքի գոր-

ծերը, այսինքն՝ «ինչ որ ճշմարտութեամբ է, ինչ որ պարկեշտութեամբ է, ինչ որ արդարութեամբ ու սրբութեամբ է, ինչ որ սէր է, ինչ որ բարի Համբաւ կ'ապահովէ, ինչ որ առաքինութեամբ է եւ ինչ որ գովութեան արժանի է» (Փիլ. Դ. 8):

Անոնք Հասած էին այնպիսի վիճակի մը, ուր այլեւս սորված էին գոհանալ իրենց ունեցածով եւ կրնային ըսել Պօղոս Առաքելի Հետ. «Գիտեմ նուազիլ, գիտեմ նաեւ առաւելուլ»: Ըսել ուզելով՝ ճանչցած ենք չքաւորութեան ինչ ըլլալը, գիտենք Հարստութեան ինչ ըլլալը. երկուքն ալ մեզի Համար այլեւս նոյն նշանակութիւնը ունին, «Որովհետեւ սորված ենք գաղտնիքը գոհ ըլլալու որեւէ տեղ եւ որեւէ ատեն. կուշտ եղած ատեն կամ անօթութեան միջոցին, շատ ունենանք կամ քիչ ունենանք: Մենք ոյժը ունինք գիմագրաւելու կեանքի բոլոր պայմանները այն զօրութեամբ, որ Քրիստոս կուտայ մեզի» (Փիլ. Դ. 12-13): Ուրիշ խօսքով՝ ըսել կ'ուզեն. կեանքի պայմանները չեն ազդեր առողջ Հիմքի վրայ դրուած Հաւատքին վրայ. որովհետեւ այդ Հաւատքը Հաստատուած է Քրիստոսի Վէմին վրայ, որ յաղթահարած է աշխարհը եւ որ «Նոյն է երէկ եւ այսօր, եւ նոյն՝ յաւիտեան»:

Գ. ՏԷՐ ՄՆԱՆՔ ՄԵՐ ՀՈԳԵՒՈՐ ԺԱՌԱՆ ԳՈՒԹԵԱՆ

Այսօր ամբողջ մարդկութեան Հետ, քրիստոնեայ Հաւաքականութիւններ եւս (որոնց կարգին նաեւ մենք) անտեսելու վրայ են իրենց Հոգեւոր ժառանգութիւնը: Մենք ազգովին արդարապէս մտահոգուած ենք ի տես մեր լիզուական ու մշակութային ժառանգութեանց մոռացումին կամ անոնց Հանդէպ բռնուած անտարբերութեան Համար: Տկար կամ Հզօր ճիգեր կը թափուին առաջին առնելու Համար այդ ինքնամոռացման կամ ինքնամեռացման վտանգին: Այդ գովելի ճիգերէն մէկն է, օրինակ, Հրատարակութիւնները մեր ճարտարապետական ու մանրանկարչական արուեստներու վերաբերեալ Հարուստ ու Հարազատ պատկերալից Հատորներու: Ինչո՞ւ նման աշխատանքներ չտարուին նաեւ մեր կրօնական ու Հոգեւոր ժառանգութեանց անդաստանին մէջ՝ ի լոյս աշխարհ բերելու Համար Հին մատեաններու մէջ թաքնուած մեր կրօնական գանձերը: Ոչ միայն գեղարուեստի, այլ նաեւ Հոգեւոր մարզի մէջ եւս ունինք շատ մը Հաշուի առնուելիք արժէքներ, որոնք եթէ չեն գերազանցեր՝ գէթ ոչ մէկ կերպով վար կը մնան

ուրիշ եկեղեցիներու Համապատասխան իրագործումներէն: Գրեթէ Հայացած բողոքական ամերիկացի միսիոնար մը՝ Հըրպըրտ Ալլէն (1865-1911), կուտայ Հետեւեալ վկայութիւնը մեր եկեղեցիի մասին.

«Կրօնական բովանդակ պատմութեան մէջ չկայ բան մը, որ Հայաստանեայց եկեղեցիին չափ ուժգին ազդէ երեւակայութեանս եւ խանդավառէ զիս Համակ: Պատճառը անոր Հնութիւնը չէ սոսկ...: Ոչ ալ անոր կազմութիւնը, թէեւ ուշագրաւ ու Հոյակապ է այդ: Պատճառը սա է մանաւանդ, այս եկեղեցին ամէն ուրիշէ աւելի՝ ազգի մը Հոգիին մարմնացումը կը ներկայացնէ: Թանձր այն խաւին տակ, զոր տգիտութեան եւ նախապաշարման դարեր անոր շուրջ գոյացուցած են իր գեղեցկութիւնը եղծանելու եւ կենսաւտութիւնը չքացնելու Համար, անմահ կեանքի մը կենդանի Հոգին կը բարախէ տակաւին»:

«...Ամբողջ տասնվեց դար ինչե՛րինչե՛ր կը յայտնեն այն ոգիին նկատմամբ, զոր ոչ Հուրը, ոչ սուրը եւ ոչ ժամանակը կրցած են մարել: Երբ այսպիսի մտածումներու մէջ թաղուած կը կանգնիմ ես Հայկական տաճարի մը մէջ, փոյթ չէ որչափ անփառունակ ըլլայ այն, եւ կ'ուսկնդրեմ Աւետարանի ընթերցման կամ պատմական շարականներու վեհ եղանակներուն, կամ Հոգեշունչ աղօթքի մատուցման, խորապէս կը յուզուի սիրտս: Հայ մը ի՞նչպէս կրնայ անտարբեր կե՞նալ Ազգին այս մայր ոգիին առջեւ, ի զուր ջանացած եմ Հասկնալ: ... Ահա թէ ինչո՞ւ Հայաստանեայց Եկեղեցին կ'ազդէ իմ երեւակայութեանս, եւ թէ ինչո՞ւ կը ստիպուիմ ըսել, թէ՛ Բարեբախտ են այն Հայերը, որոնք իրենց Հոգեւոր ժառանգութեան թանկագին յարգը կը զգան»:

Այո, օտարներ կրնան տեսնել, գնահատել եւ լոյս աշխարհ բերել մեր նիւթական, գեղարուեստական եւ այլ մշակութային արժէքները: Սակայն անոնք եթէ տեսնեն ու գնահատեն անգամ մեր Հոգեւոր ժառանգութեան արժէքը, պիտի չկրնան ի լոյս աշխարհ բերել զանոնք. մենք պիտի ընենք այդ գործը: Առաջին Հերթին եւ ի պաշտօնէ Հայաստանեայց Եկեղեցիի նուիրապետական Աթոռները պիտի ընեն այդ աշխատանքը: Դեռ Աստուածաշունչ մը անգամ չեն Հրատարակած մեր նուիրապետական Աթոռները Ոսկան վարդապետին ասդին (1666ին) կամ Ներսէս Վարժապետեան Պատրիարքի խնդրանքով Ա.

Գրոց ընկերութեան կողմէ յատկապէս մեր եկեղեցիին համար 1895ին Հրատարակուած եւ այժմ սպառած գրաբար Աստուածաշնչէն ասդին*:

Մեր Հոգեւոր ժառանգութեան բարձր արժէքը օտարներուն կողմէ ճանչցուելը չէ կարեւորը, ինչպէս կը կարծենք արդարապէս, թէ կարեւոր է այդ ճանաչումը մեր մշակոյթի միւս երեսներուն համար: Այդ ճանաչումը յաճախ մեզ մակերեսային, ինքնագոհ եւ անտեղի կերպով պարծենկոտ կը դարձնէ: Էականը եւ կարեւորը մեր ճանչնալն է, մեր գնահատելն է ու մեր իւրացնելն է այդ ժառանգութեան, ինչ որ կրնայ լրջացնել մեզ եւ աւելի ամուր Հիմքերու վրայ դնել անհատական ու հաւաքական կեանքը:

Այս Հատորով մենք կը փորձենք ծանօթացնել ոչ թէ կրօնական ժառանգութեան այս կամ այն երեսը, այլ՝ անոր Հիմնադիրները, յօրինողները եւ հեղինակները, ինչպէս նաեւ ապրողները, եւ ի հարկին իրենց արեան եւ կեանքին գինով զայն պահպանողները եւ պաշտպանողները: Ասոնք զուգահեռաբար իրենց կրօնական ստեղծումներուն կարգ (երգ, ծէս, աղօթք, արարողութիւն, աստուածաբանութիւն ու ամէն տեսակ Հոգեւոր գրականութիւն) ունին, նաեւ՝ իրենց կեանքը եւ ոգին, որ նոյնքան ու աւելի թանկագին ժառանգութիւն է մեզի ձգուած: «Հայագոհ սուրբն՝... գիտեմք արդէն» ըսելով՝ պէտք չէ անցնել ասոնց առջեւէն: Կը կրկնենք. ասոնք ոչ միայն սկսողները եւ ստեղծողները եղան մեր Հոգեւոր մշակոյթին, այլ նաեւ ապրողները, կենդանի պահողները, պաշտպանները եւ յաջորդ սերունդներուն փոխանցողները եղան: Մենք անոնց ժառանգորդներն ենք: Առանց անոնց մեզի ձգած ժառանգութեան տէր մնալու, առանց այդ Հոգեւոր Հարստութեան վրայ սնանելու, առանց զայն մեզի Հրիտակ ձգողներու մտերմութեան մէջ ապրելու, մենք դատապարտուած ենք սնանկանալու եւ սովահար դառնալու, եթէ արդէն իսկ չենք եղած:

* Գրական աշխատանք ու գնահատելի գործ էր Մայր Աթոռի կողմէ Արեւելահայերէն ու Արեւմտահայերէն բարբառներով Նոր Կտակարանի Հրատարակութիւնը վերջին տարիներու ընթացքին: Նոյնքան գնահատելի էր Կիլիկիոյ Աթոռի կողմէ չորս Աւետարաններու տպագրութիւնը աշխարհաբար լեզուով: Անհրաժեշտ է սակայն մեր գրաբար Աստուածաշունչի ամբողջական Ռատարակութիւնը եւ Հին Կտակարանի եւս աշխարհաբար թարգմանութեան լոյս ընծայումը:

Փառք Աստուծոյ, հակառակ մեզմէ ոմանց յոռետեսութեան, համանման Եղիայի (Գ Թագ. ԺԹ. 14), Աստուած դեռ թողած է մեզի «Եօթ Հազար մարդ, որ ծուռկի չէ եկած Բահադի կուռքին առջեւ եւ երկրպագութիւն չէ ըրած անոր»: Սակայն ոչ ոքի գաղտնիք է, որ տակաւ առ տակաւ կը մաշի մեր կապը մեր Աստուծոյն եւ մեր Հոգեւոր ժառանգութեան հետ: Այս ժառանգութեան մէջ կը մտնեն նաեւ մեր Սուրբերը, որոնք երկինքը բացին մեզի համար եւ Միածինը իջեցուցին նաեւ Հայ Հողին վրայ. լոյսի ջահեր վառեցին Հայ Հոգիներուն մէջ, լուսեղէն կամարներ կապեցին մեր երկրին ու երկինքին միջեւ. Հոգեւոր արժէքները գնահատելու եւ բարոյական ճշմարտութիւնները ճանչնալու զգայարաններով օժտեցին զմեզ՝ իրենց աղօթքներով, շարականներով, սքանչելի ծիսական դրութեամբ, տօնական կարգ ու կանոնով: Մեր ճիգը պիտի ըլլայ վերագտնել զանոնք: Երբ կորսնցնենք մեր սուրբերը, պիտի կորսնցնենք սրբութեամբ զաղափարը, Հիմնական ու գերագանց գաղափարը ամբողջ Աստուածաշունչին, ամբողջ մեր կրօնքին: Գիտի դադրինք սուրբ ըլլալէ եւ սուրբեր արտադրելէ: Եկեղեցի մը, որ դադրած է սուրբեր երկնելէ, կորսնցուցած է իր գերագոյն նպատակը. դարձած է ամուլ, դարձած է անպտուղ եւ հետեւաբար ոչ ոք թող զարմանայ, եթէ օրին մէկը իր վրայ հրակրէ անպտուղ թղթնիրն դատաւճիռը. «Կտրէ զայն, ինչո՞ւ երկիրը կը խափանէ»: (Ղուկ. ԺԳ. 6-9): Բրիտանոս-Գարտիզպանը սակայն միշտ կը միջնորդէ. «Այս տարի ալ ձգէ զայն, շուրջը փորեմ, պարարտութիւն նետեմ. թերեւս պտուղ տայ»: «Շուրջ փորելու եւ պարարտութիւն նետելու» աշխատանքներէն մէկն ալ թերեւս այս գիրքերուն Հրատարակութիւնն է...:

Նիւթական կամ տնտեսական բարգաւաճումով ամէն բան չի վերջանար. վկայ Լիբանանի եւ Իրանի հայութիւնը: Ընդհակառակը, նիւթական բարգաւաճումին յաճախ զուգընթաց է բարոյական աղքատացումը: Կեանքին նպատակը ուտել-խմելը չէ, ոչ ալ՝ մեծանալ եւ նիւթական ապահովութեան տիրանալը, ինչպէս շատեր կը կարծեն: Կարեւորը նիւթական փարթամութեան յաջորդող յաճախ սովի տարիներուն տոկալն է, անխուսափելի այլասերումն ազատ մնալն է, կորուստէն փրկուելն է. «Կ'ուտէին, կ'ըմպէին, կ'ին կ'առնէին եւ հրկան կ'երթային, մինչեւ այն օրը, երբ Նոյ տապանը մտաւ, եւ ջրհեղեղը եկաւ

ու կորուստի մատնեց ամէնքն ալ»։ (Ղուկ. ԺԷ. 27)։ Ոչ ոք կրնայ փրկել անաստուած ու այլասերած մարդը գալիք ջրհեղեղէն. ոչ սուրբերը եւ ոչ ալ հրեշտակները, այլ միայն Որդին Մարդոյ եւ Անոր վրայ մեր ունեցած հաւատքը եւ սէրը։ Գալիք ջրհեղեղէն փրկուելու միակ միջոցը տապանին մէջ գտնուիլն է։ Հայաստանեայց Եկեղեցին մեր Տապանն է։

Դ. ՍՐԲՈՑ ԿԵԱՆՔԵՐԸ ԼԱԽԱԳՈՅՆ ՄԻՋՈՑՆԵՐԸՆ ԵՆ ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ ՄԾԱԿԵԼՈՒ

Ամէն օր կամ պարբերաբար Սուրբի մը կեանքի ընթերցումը կ'օգնէ մեզի մեր կապը ամուր պահելու նախ Աստուածաշունչին հետ, որ մեր փրկութեան ուղեցոյցն է եւ ուրկէ կուգան առաջին եւ մեծագոյն սուրբերը, ապա՝ Համայն քրիստոնէութեան հետ, որուն անբաժան մէկ մասն է մեր մայրենի Եկեղեցին, ու վերջապէս՝ մեր պատմութեան եւ մեր Հոգեւոր ժառանգութեան հետ, զոր անոնք կերտած, գրած եւ իբրեւ ժառանգ ձգած են մեզի։

Պատմութիւնը լաւագոյն ուսուցիչն է՝ սորվիլ ուզողին Համար, որովհետեւ օրինակով կը սորվեցնէ։ Կ'ըսէ Սրբոց կեանքի մասնագէտ մը. «Սրբոց վարքերը լաւագոյն նիւթերն են ընթերցումի եւ լաւագոյն կերպը՝ ուսուցումի, որովհետեւ այստեղ ոչ թէ վերացական առաքինութեան մը մասին խորհրդածութիւններ կ'ըլլան, այլ առաքինութիւնները իրենց իրականացած ձեւին մէջ կը պատկերացուին մեզի. օրինակ՝ կրօնաւորութիւնը, քաջութիւնը, բարեպաշտութիւնը եւ ծառայելու բնական տրամադրութիւնը իր նմաններուն, բայց ամէնէն աւելի Աստուծոյ եւ ընկեր արարածի սէրը»։

Միւս կողմէ՝ Սուրբերը կուգան կեանքի բոլոր ասպարէզներէն՝ խոնարհագոյնէն մինչեւ բարձրագոյնը, կոթողիկոսներէն մինչեւ յետին կրօնաւորը, թագաւորէն մինչեւ պետական բոլոր պաշտօնատարները։ Անոնց մէջ կան այրեր եւ կիներ, երիտասարդներ եւ ծերեր, մինչեւ անգամ մանուկներ, հարուստներ ու աղքատներ, մտաւորականներ ու գեղջուկ մարդեր։ Հետեւաբար անոնց կեանքերը կիրարկելի կրնան ըլլալ ամէն մարդու համար անխտիր։ Ասոնք մեզի համար քաջալերութիւն եւ ուղեցոյցներ են կեանքի ամէն տեսակ կացու-

թեանց դիմաց։ Սուրբեր անայլայլ կերպով կը թելադրեն մեզի, իրենց կեանքով ու խօսքով, որ միշտ եւ անսայթաք Աստուծոյ եւ Արդարութեան կողմը կենանք՝ Հակառակ ամէն բանի եւ ի գին ամէն զոհողութեան։ Միշտ Սրբութեան ու քաջութեան ձգտինք, միշտ պատրաստ ըլլանք փոքր, աշխարհիկ, գոհճիկ ու ժամանակաւոր բաներ զոհել՝ մեծագոյն, Հոգեւոր, ազնիւ ու յաւիտենական բարիքներու համար։ Ի մի բան. մեզի տրուած այս երկրաւոր կեանքը այնպէս մը գործածենք, այնպէս մը արժեւորենք, որ շահինք ու ժառանգենք ի վերջոյ յաւիտենական երանական կեանքը, ինչպէս իրենք ըրին. «Որք զչարսն պարտեցին, նեղութեանցն համբերեցին, լուսեղէն եւ երկնային անթաւամ պսակացն արժանի եղեն»։

Չմոռնալ, որ «Սուրբ» բառը ոչ միայն կը գործածուի Աստուծոյ համար, Ս. Երրորդութեան իւրաքանչիւր զէմքին համար, հրեշտակներուն եւ Աստուծոյ երկրաւոր ծառաներուն համար, այլ նաեւ բոլոր քրիստոնեաներուն համար անխտիր։ Պօղոս Առաքեալ իր նամակները կը դրկէ «Կոչեցելոց Սրբոց», որոնք կը բնակին Հռովմի կամ Կորնթոսի մէջ։ Կամ՝ պարզապէս «Սրբոց», որոնք կը գտնուին Եփեսոս, Փիլիպէ կամ Կոզոսա քաղաքները կամ այլուր։ Ուրեմն Սրբութիւնը ասպարէզ մըն է, որ բաց է ամենքիս առջեւ. յատկապէս բոլոր Հաւատաւոր քրիստոնեաներուն առջեւ։ Միւս ասպարէզներուն ամէն մարդ չի կրնար հետեւիլ, եթէ փափաքի անգամ. «Միթէ ամենեքեան Առաքեալ իցեն...»։ Պատասխանը «ոչ» է։ Նոյն է պարագան Հոգեւորականութեան, վաճառականութեան, բժշկութեան, օրէնսդիտութեան, այլովքն Հանդերձ։ Սակայն Սրբութեան ասպարէզը ոչ միայն բաց է ամենքին առաջ, այլ Աստուածային հրահանգ կայ այդ մասին. «Սուրբ եղէ՛ք, որովհետեւ ես Սուրբ եմ», - կ'ըսէ Աստուած (Ղեւտ. ԺԱ. 45)։ «Եղէք կատարեալ, ինչպէս ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է», - կը պատգամէ Քրիստոս՝ իր խօսքն ուղղելով բոլոր իր հետեւորդներուն։

Արդարեւ մենք՝ քրիստոնեաներս, ըստ Առաքելական Հաւատաւորման, «Ազգ ենք ընտիր, Ազգ Սուրբ եւ ժողովուրդ սեպհական Աստուծոյ, ընտրուած՝ յայտարարելու սքանչելիքները Աստուծոյ, որ կանչեց մեզ ամենքս խաւարէն իր սքանչելի լոյսին։ Կար ժամանակ, որ մենք Աստուծոյ ժողովուրդը չէինք, սակայն Հիմա ենք։ Կար ատեն

մը, որ Աստուծոյ ողորմութիւնը չէինք ճանչցած, սակայն այժմ արժանացած ենք Աստուծոյ ողորմութեան» (Ա. Պետ. Բ 9-10):

Չմոռնալ նաեւ, որ Սուրբերուն թիւը այս երեք Հատորներու մէջ Համադրուած 5-600 անուններով չէ սահմանափակուած, ոչ ալ լատին վկայութեան մէջ յիշուած 5-6000 անուններու մէջ: Անոնք անթիւ անհամար են ըստ Հաստատումին Յայտնութեան գրքին, որմէ կատարուած Հետեւեալ մէջբերումով կը փափաքինք վերջաւորութեան բերել մեր ներածական այս խորհրդածութիւնները:

«Եւ ասկէ յետոյ տեսայ մեծ թիւով ժողովուրդ մը, անթիւ, անհամար, բոլոր ազգերէն, բոլոր ցեղերէն, բոլոր լեզուներէն եւ բոլոր ժողովուրդներէն, որոնք կեցած էին Աստուծոյ Աթոռին եւ Քրիստոս-Գառնուկին առջեւ՝ ճերմակ զգեստներ հագած եւ իրենց ձեռքերուն մէջ արմաւենիներ բռնած: Բարձր ձայնով կ'աղաղակէին ու կ'ըսէին: «Մեր փրկութիւնը կուգայ մեր Աստուծմէ, որ կը նստի Աթոռին վրայ, եւ Գառնուկէն»: Եւ բոլոր հրեշտակները շրջապատած էին Աթոռը, եւ (144 Հազար) երէցներով ու չորս կենդանիներով կ'իյնային իրենց երեսներուն վրայ Աթոռին առջեւ եւ երկրպագութիւն կ'ընէին Աստուծոյ, ըսելով. «Ամէն. օրհնութիւն եւ փառք, իմաստութիւն եւ գոհութիւն, պատիւ եւ զօրութիւն ու կարողութիւն մեր Տէր Աստուծոյն յաւիտեանս եւ յաւիտենից: Ամէն»: Երէցներէն մէկը Հարցուց ինծի. «Որո՞նք են այս սպիտակ Հագածները եւ ուրկէ՞ կուգան»: Ու ես պատասխանեցի. «Դուն գիտես, տէր»: Այն ատեն ըսաւ ինծի. «Ասոնք կուգան մեծամեծ վիշտերէ (Հալածանքներէ) եւ լուացին ու սպիտակացուցին իրենց զգեստները Գառնուկին արիւնով: Անոր Համար Աստուծոյ Աթոռին առջեւ կը կենան եւ կը պաշտեն զԱյն ցերեկ ու գիշեր Անոր տաճարին մէջ: Ան, որ կը նստի Աթոռին վրայ Հովանի պիտի ըլլայ ու պիտի պաշտպանէ զանոնք Իր ներկայութեամբ: Ասկէ յետոյ անոնք երբեք պիտի չանօթենան եւ պիտի չծարաւին. ո՛չ արեգակը, ո՛չ ալ որեւէ տեսակի տաքութիւն պիտի չայրէ զանոնք, որովհետեւ Գառնուկը, որ Աթոռին մէջտեղն է, պիտի Հովուէ զանոնք, եւ պիտի առաջնորդէ զանոնք կենդանի շուրբերու ակունքներուն, եւ Աստուած պիտի շնջէ անոնց աչքերէն բոլոր արցունքները» (Յայտ. է. 9-17):

ԳԼՈՒԽ Ա.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴԷՄՔԵՐ

1. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ 240-326

Պատշաճ էր, որ Հայագրի սուրբերու շարքը բանայինք մեր Հաւատքի Հայր այս մեծ Հայրապետով, որովհետեւ բացի ժամանակագրական կարգէ, միւս բոլոր մարգերուն մէջ գլուխը կը կենայ Հայ Եկեղեցիի յատուկ սուրբերուն: Ամէնէն շատ չարչարանք կրողն է, ամէնէն սրբակեաց անձն է, ամէնէն մեծ ու մնայուն արդիւնքներ ձգողը եղաւ Հայաստանեայց եկեղեցիին: Մէկ խօսքով՝ Հայ Եկեղեցիի մեծագոյն գործիչը եւ աւետարանիչն է, այն աստիճան, որ Հետեւողութեամբ «Երեքտասաներորդ» Պողոս Առաքեալի՝ ինքն ալ կոչուեցաւ «Չորեքտասաներորդ Առաքեալ» մեր մէջ:

Եթէ ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ կոչուած սքանչելի ճառերու Հաւաքածոն կամ իր առաջին կենսագիր Ազաթանգեղոս Պատմիչի գրքին մաս կազմող ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ կոչեցեալ քարոզներն ալ իրեն վերագրենք, ինչպէս կ'ընէ արդարեւ Պատմութիւնը, Գրիգոր կ'ըլլայ նաեւ մեր մեծագոյն աստուածաբանը եւ քարոզիչը, որուն անունով կարելոր գրաւոր ժառանգութիւն մըն ալ ձգուած է մեզի:

Հիմնադիր կոչուելու աստիճան վերանորոգիչը եւ վերակենդանացնողը եղաւ Հայ Եկեղեցիին: Իրմով սկսաւ Հայոց Կաթողիկոսութիւնը: Առաջին Հայ եկեղեցիները, որոնց գլուխը կը կենայ Էջմիածնի Մայր Տաճարը, իր նախաձեռնութեամբ կառուցուեցան: Ու վերջապէս՝ ամբողջ Հայ ժողովուրդը իր թագաւորով, պալատականներով, իշխաններով, բանակով, ազատորեարով ու ռամիկ զանգուածով առաջնորդեց Աւետարանի լոյսին՝ ժառանգելով արժանապէս ԼՈՒՍԱՒՈՐԻՉ պանծալի տիտղոսը: Մեր Եկեղեցիին միակ ՍՈՒՐԲՆ է, որ Համաքրիստոնէական ընդունելութեան եւ տօնակատարութեան արժանացած է՝:

* Ոմանք կը Հարցնեն. քանի որ Գր. Լուսաւորիչն ալ Համաքրիստոնէական սուրբ է, ինչո՞ւ անոր անունը չ'երեւիր «ՀԱՄԱՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

Համաձայն մեր ձեռքը գտնուած պատմական տուեալներու, ծնած է Հայ Հողի վրայ, հաւանաբար այդ օրուան Հայոց մայրաքաղաք Վաղարշապատին՝ այսօրուան Էջմիածին քաղաքին մէջ, քանի որ անոր ծննդեան օրերուն իր ծնողքը, հանդերձ ընտանեօք, հիւրն էին Հայոց Խոսրով Թագաւորին: Իսկ ազգային աւանդութիւնը կը հաստատէ, որ իր մայրը յղացած է զայն Հայոց Արտազ գաւառին մէջ, մօտերը այսօրուան Ս. Թադէի նշանաւոր վանքին: Անորոջ կը մնայ իր ծննդեան թուականը, որ կը տարուբերի 239-257ի միջեւ: Մենք, հետեւելով Օքսֆորդիւն Ան ՍՐԲՈՑ բառարաններուն, դրած ենք զայն 240 թուականին:

Իր մանկութեան պարագաները որքան եղերական՝ նոյնքան ալ յոյժ հետաքրքրական են: Որդին է Անակ Պարթեւ իշխանին, որ Հայաստան զրկուած էր Պարսից Արտաշէր Սասանեան թագաւորին կողմէ, ամբողջ ընտանեօք եւ իբրեւ թէ հալածական, որպէսզի նենգութեամբ սպաննէ Հայոց թագաւորը, վերջ տալու համար Հայ Արշակունի թագաւորական գերդաստանին, ինչպէս վերջ տրուած էր անոր մայր ճիւղին Պարսկաստանի մէջ: Անակ կը յաջողի սպաննել Հայոց Խոսրով Թագաւորը, բայց իր կարգին կը սպաննուի Հայ իշխաններու կողմէ, եւ կը բնաջնջուի իր ընտանիքը մեռնող թագաւորին հրամանով: Այս կտորածէն կ'ազատին երկու մանուկներ. մէկը կը փախցուի ետ Պարսկաստան, իսկ միւսը՝ Կեսարիա: Այս վերջին մանուկն է, որ կը ստանայ Գրիգոր անունը եւ կը դառնայ Հայոց ապագայ ԼՈՒՍԱՒՈՐԻՉԸ:

Գրիգոր Կեսարիոյ մէջ կ'իյնայ քրիստոնէական շրջանակի մէջ եւ հետեւաբար կը ստանայ քրիստոնէական հիմնական դաստիարակութիւն եւ յունական բարձր կրթութիւն, հոգածութեամբ նոյնինքն Կեսարիացի Եւթաղիոսի, որուն քոյրը կը նկատուի Գրիգորը փախցնող ստնտուն, որուն անունն էր Սոփիա: Կեսարիոյ օրուան Արքեպիսկո-

ՍՈՒՐԲՈՐ՝ Հատորին մէջ: Պատասխանը հետեւեալն է. «Համաքրիստոնէական» սուրբերը մենք առած ենք մեր քոյր եկեղեցիներէն, մինչդեռ Գր. Լուսաւորիչը անոնք առած են մեզմէ: Նախ Հայ եկեղեցին է, որ սկսած է յիշատակել զայն, որմէ անցած է ուրիշ եկեղեցիներուն: Հետեւաբար «Համաքրիստոնէական» ըլլալով հանդերձ՝ հիմնականին մէջ Հայ եկեղեցիի յատուկ Սուրբ մըն է Գր. Լուսաւորիչ:

պոսը՝ Փիրմիլիանոս, կարեւոր դեր ունեցած կը նկատուի անոր դաստիարակութեան մէջ: Երբ չափահաս կ'ըլլայ, կ'ամուսնանայ Մարիամ անունով օրիորդի մը հետ, որ կը նկատուի քոյրը Սեբաստացի Աթանազիոս Եպիսկոպոսին, որ նահատակուելով անցած էր սուրբերու կարգը, եւ որուն նշխարները Հայաստան պիտի բերէր Գրիգոր իր ձեռնադրութենէն յետոյ: Ունեցաւ երկու զաւակներ՝ Վրթանէս եւ Արիստակէս:

Ատեն մը յետոյ Գրիգոր Աստուծոյ ծառայելու կոչում զգալով իր մէջ, փոխադարձ համաձայնութեամբ եւ սիրով բաժնուեցաւ իր կնոջմէ, որ կուսանոց մտաւ, իսկ զաւակները յանձնուեցան իրենց ծանօթ ու վստահելի անձերու խնամքին ու դաստիարակութեան: Այդ օրերուն, Հայոց սպաննեալ թագաւորի որդին Տրդատ Հռովմէական բանակով մը կ'անցնէր Կեսարիոյ կողմերէն՝ երթալ տիրանալու համար իր հօր գահին: Գրիգոր, օգտուելով առիթէն, մտաւ Տրդատի ծառայութեան մէջ երբ շուրջ 35 տարեկան հասուն անձնաւորութիւն մըն էր: Տրդատ, զնահատելով անոր բարձր ուսմունքը եւ կարողութիւնները, կարգեց զայն Արքունի դիւանապետ:

Տրդատ կարեւոր յաղթանակ մը շահելէ յետոյ զոհ մատուցանելու համար եկաւ Հայոց կռապաշտական կեդրոններէն մէկը եղող Երիզա աւանը (ետքէն ծանօթ Երզնկա եւ այժմ Էրզինճան անուններով): Այստեղ կը գտնուէր Հայոց ամէնէն ժողովրդական դիցուհիին՝ Անահիտի ոսկի արձանը: Ձոհագործութեան յաջորդող գինարբուքի ընթացքին Տրդատ հրամայեց Գրիգորին, որ դալար ճիւղերէ պսակ մը դնէ Անահիտի արձանին առջեւ. Գրիգորի մերժելուն վրայ՝ մէջտեղ ելաւ իր քրիստոնէայ ըլլալը եւ դատապարտուեցաւ ահաւոր չարչարանքներու, որոնցմէ 12 հատ կը յիշուին իր կենսագրութեան մէջ, եւ որոնցմէ մէկը միայն կրնար սպաննել ոեւէ սովորական մահականացու մը: Գրիգոր ոչ միայն գերբնական համբերութեամբ կը տոկար անոնց, այլ նաեւ քաջ պատուիրաններով կը քարոզէր քրիստոնէութիւնը. (Ազգթ. Ե-Ժ [§ 48-120] հատուածները): Ի յիշատակ այս չարչարանքներուն՝ Երզնկային մէջ զոյուցիւն ունէր «Լուսաւորիչի Չարչարանաց վանքը, քաղաքէն դէպի հարաւ երկու ժամ հեռու» (Ազգապատում, հատած 48):

Ի վերջոյ՝ մէջտեղ ելաւ նաեւ Գրիգորին Անակի որդի ըլլալը, ինչ

որ աւելի կատրոնցուց Տրդատը, որ հրամայեց նետել զայն Արտաշատի խոր վիրապ կոչուած ահաւոր բանտը, որ սահամանուած էր առ հասարակ մահուան դատապարտուած մեծ յանցապարտներու: Այստեղ նետուողը կարճ ժամանակ յետոյ կը մեռնէր անսուաղութենէ, օձերու խայթումներէ եւ ապականած օդէն: Սակայն Գրիգոր կրցաւ այստեղ ապրիլ 13-15 տարիներ՝ Աստուծոյ նախախնամութեամբ եւ հոգածութեամբ քրիստոնեայ կնոջ մը, որ միջոցը գտած է ուտելիք նետելու վիրապէն ներս: Այս վիրապը մինչեւ օրս կը պահէ իր գոյութիւնը Արտաշատ քաղաքի մօտիկ բլուրի մը վրայ, պատմական վանքի մը մէջ, եւ մեր եկեղեցիի կարեւոր ուխտատեղիներէն մէկն է:

Ապա Տրդատ հալածանք հանեց քրիստոնեաներու դէմ, որու ընթացքին նահատակուեցան Հռիփսիմեանց Կոյսերը, ինչ որ Տրդատի եւ իր պալատականներէն շատերուն ջղապարտութեան կամ խելագարութեան պատճառ եղաւ: Տրդատի քոյրը՝ Խոսրովիդուխտ, երազ կը տեսնէ, ուր կը թելադրուի իրեն, որ Գրիգոր միայն պիտի կրնար բուժել իր եղբայրը: Ոչ ոք կարեւորութիւն կուտայ երազին, որովհետեւ ամէն մարդ այնպէս համոզուած էր, որ Գրիգոր շատոնց մեռած էր արդէն վիրապին մէջ: Երազը բազմիցս կրկնուելուն, մարդ կը զրկեն Արտաշատ եւ ի մեծ զարմացումն ամենքին, ողջ կը գտնեն զայն խոր վիրապին մէջ: Կը բերեն Վաղարշապատ, ուր Տրդատ եւ միւս հարուածեալները մասամբ մը զգաստութեան կը բերուին Գրիգորի աղօթքով: Ապա հաւաքել կուտայ Հռիփսիմեանց անթաղ մնացած մարմինները եւ կը զետեղէ զանոնք յատուկ սնտուկներու մէջ, ի վերջոյ թաղելու համար անոնց նահատակութեան վայրերուն վրայ կառուցուած մատուռներուն մէջ: Գրիգոր կը սահմանէ Հինգօրեայ խիստ ծոմապահութիւն, ըստ Տէրունական խօսքին, թէ կարգ մը «Դեւեր», որոնք պատճառ կ'ըլլան մարդոց հոգեւոր հիւանդութիւններուն, «կ'ելլեն միայն պահքով եւ աղօթքով»: Որմէ յետոյ կրկին կ'աղօթէ Գրիգոր, ու ամենքն ալ կը բուժուին բոլորովին: Այս խիստ պահեցողութեան յիշատակն ալ կը պահուի մեր եկեղեցիին մէջ մինչեւ այսօր Առաջատրոսց պահք անունով, որ կը հանդիպի Մեծ Պահքէն երկու շաբաթներ առաջ: Տրդատի, պալատականներու եւ ամբողջ բանակի ապաշխարութեան շրջանը կը շարունակուի երկու ամիսներ եւս, որուն ընթացքին Գրիգոր անընդհատ կը քարոզէ եւ կը սովորեցնէ ամենքին քրիստոնէական կրօնքին

բոլոր հիմնական սկզբունքները: Այս քարոզութիւնը պահուած է անոր վարքը գրող Ագաթանգեղոս Պատմիչի գրքին մէջ՝ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ անուան տակ (ԻԳ-ՂԸ [§ 259-713] հատուածներ), որ կը գրաւէ գրքին պարունակութեան աւելի քան կէսը:

Վիրապէն ելքը տեղի ունեցաւ 301ին վերջերը, իսկ քարոզութիւնը կը շարունակուի միչեւ 302ի սկիզբները: Այս ատեն է, որ Ս. Գրիգոր կ'ուենայ իր նշանաւոր տեսիլքը, ուր Աստուծոյ Միածին Որդին կ'իջնէ Արարատեան դաշտը ու կը յայտնէ չորս սրբատեղիներու կառուցման վայրերը եւ շինուելիք եկեղեցիներու ձեւերը: Կը շինուին արդարեւ երեք վկայարաններ. մէկը Հռիփսիմէի եւ իր 33 ընկերներու նահատակութեան վայրը, երկրորդը՝ Գայիանէի եւ երկու ընկերներու մարտիրոսացած տեղը եւ երրորդը՝ կոյսերու բնակավայր եղած Հնձանին վրայ, ուրկէ տեսած էր Գրիգոր այս տեսիլքը: Այս վկայարաններուն մէջ կը թաղուին նահատակ կոյսերու մարմինները: Այս վկայարան՝ եկեղեցիներն ալ կը պահեն իրենց գոյութիւնը մինչեւ այսօր էջ՝ միածին քաղաքի շրջակայքը: Իսկ Միածին իջման վայրը շրջապատեց յատուկ որմով, որուն մէջտեղը բարձրացոյց մեծ խաչ մը եւ իր ձեռնադրութենէն յետոյ միայն, 303ին, կառուցանել տուաւ Հայոց Մայր Տաճարը եւ համայն Քրիստոնէութեան առաջին պաշտօնական աղօթավայրը, որ երբեկիցէ շինուած ըլլայ Հողին մակերեսը: Իսկ 302ին է, որ Տրդատ յատուկ հրովարտակով Քրիստոնէութիւնը պետական կրօնք հռչակեց Հայաստանի մէջ:

Ծարդ կատարուած բոլոր գործերը Գրիգոր ի գլուխ հանած էր աշխարհական վիճակի մէջ: Սակայն երբ ապաշխարած արքունիքը, բանակը եւ ժողովուրդը պատրաստ էին մկրտութեան համար եւ պէտքը զգացուեցաւ եկեղեցին օժտելու յատուկ ժամապաշտութեամբ եւ այլ կարգ կանոններով, այն ատեն անհրաժեշտ տեսնուեցաւ կարիքը կարգաւոր հոգեւորականներու: Ամենքի փափաքով Գրիգոր զրկուեցաւ Կեսարիա ձեռնադրութեան համար ու արդարեւ ստացաւ եկեղեցական բոլոր կարգերը, մանրնեղէն մինչեւ բարձրագոյն Եպիսկոպոսական աստիճանը եւ ճանչցուեցաւ Արքեպիսկոպոս կամ Կաթողիկոս Հայոց աշխարհին: Կեսարիայէն մեկնելու ատեն ստացաւ նաեւ Յովհաննէս Մկրտչի նշխարներէն մեծ մաս մը, ապա հանդիպելով Աբաստիա՝ այնտեղէն ալ վերցուց իր ազգական Աթանաղինէս նահատակեալ

Եպիսկոպոսի մարմինը եւ երկու քաղաքներէն ու շրջանակներէն Հաւաքած Հոգեւորականներու մեծ խումբով վերադարձաւ Հայաստան:

Ճամբուն վրայ առաջին անգամ Հանդիպեցաւ Տարօն գաւառը՝ այսօրուան Մուշ քաղաքը եւ շրջակայ երկրամասը, ուր չէր Հանդիպած առաջին քարոզութեան ընթացքին եւ ուր տակաւին կը շարունակուէր կուսակազմութիւնը, կործանեց կուռքերը, եւ անոնց մեհանները նորոգելէ յետոյ սրբագործելով՝ վերածեց քրիստոնէական աղօթավայրերու: Երեսնց յատուկ վանք, որ կոչուեցաւ Ս. Կարապետ, որովհետեւ անոր մէջ դրաւ Ս. Յովհաննէս Կարապետի նշխարները, եւ որ դարձաւ Հայ եկեղեցիի ամէնէն նշանաւոր ուխտատեղին: Այս պատմական վանքը այսօր Հիմնադրամակ կործանած է:

Ուրեմն՝ Տարօն գաւառին մէջ շինուեցան եւ նուիրագործեցան մեր առաջին եկեղեցիները, եւ այստեղէն սկսաւ Հայ ժողովուրդին մկրտութիւնը մեծամեծ զանգուածներով, տասնեակ հազարներով, Հարիւր հազարներով:

Տարօնի մէջ եկեղեցին ամուր Հիմքերու վրայ դնելէ եւ Հոգեւորականներ նշանակելէ յետոյ Ս. Գրիգոր շարունակեց իր ճամբան դէպի երկրին մայրաքաղաքը՝ Վաղարշապատ: Տրդատ, իմանալով Գրիգորի գալուստը, ածապարեց ու ընդառաջ եկաւ Լուսաւորչին, Հետն ունենալով իր Աշխէն Թագուհին եւ Խոսրովիդուխտ քոյրը եւ պալատական իշխանները՝ ի գլուխ հսկայ բանակի մը, մինչեւ Բագաւան, որ կրնար կէս ճամբան նկատուիլ Տարօնի եւ Վաղարշապատի միջեւ: Այստեղ է՛ր կատարուեցաւ Տրդատի, իր Հետեւորդներուն, բանակին եւ ժողովրդի հսկայ զանգուածին մկրտութիւնը, Եփրատի արեւելեան կամ Հարաւային ճիւղը կազմող Արածանի գետի ափուքներուն մէջ: Արածանի այսօր կը կոչուի Մուրատ սու:

Երբ Հասան Վաղարշապատ, Գրիգորի առաջին գործը եղաւ Պատարագի քարէ սեղաններ կանգնել Լուսաւորչի կոյսերու նահատակութեանց վայրերուն վրայ նախապէս իր կառուցանել տուած վկայարաններուն մէջ: Ապա ձեռնարկեց շինելու էջմիածնի մայր Տաճարը, որ Թագաւորի, իշխաններու եւ Հայ ժողովուրդի սերտ Համագործակցութեամբը աւարտեցաւ նոյն տարին՝ 303ի ամառը, եւ օծումը կատարուեցաւ Վերափոխման տօնի նախօրեակին: Ասկէ յետոյ կրկին ձեռնարկեց Գրիգոր ընդարձակ եւ ընդհանուր քարոզութեան, Աւետարա-

նի լոյսը եւ ճշմարտութիւնը տանելով ոչ միայն Հայաստան աշխարհի ամէն կողմերը, այլեւ նաեւ անոր սահմաններէն դուրս շրջակայ երկիրները, Հիւսիսէն՝ Վրացիներուն, Հիւսիս-արեւելքէն՝ Աղուաններուն եւ այլ Կովկասեան ցեղերուն, Հարաւ-արեւելքէն՝ Ատրպատականցիներուն եւ Կորդուքներուն (քիւրտներուն) եւ այլ շատ մը ցեղախումբերուն, որոնցմէ 7-8 Հատին անունները կուտայ Պատմիչը, եւ որոնք այսօր գոյութիւն չունին այդ անուններով: Այնպէս որ՝ Լուսաւորչի քարոզութիւնը եւ գործունէութիւնը կը տարածուէր Կովկասէն մինչեւ Միջագետք, Եփրատէն մինչեւ Կասպից ծով: Կովկասի բարբարոսներուն իրեն վարդապետը եւ Աղուանից իրեն Կաթողիկոս զրկեց իր թոռը՝ Գրիգորիսը: Ձեռնադրեց նախ 12 Եպիսկոպոսներ, որոնք կազմեցին Հայրապետանոցի «Երկուտասանից ժողովը»: Եւ ապա բազմաթիւ ուրիշ եկեղեցականներ ու Եպիսկոպոսներ՝ երկրի ամէն կողմերուն Համար: Հաստատեց դպրոցներ, երկրի Հարաւը՝ ասորական լեզուով, իսկ միւս մասերուն մէջ՝ Հելլենական դպրութեամբ: Միսական ու պաշտամունքային դրութիւն կազմակերպեց: Սահմանեց նաեւ բարեկարգական զանազան կանոններ, որոնք ետքէն ի մի Հաւաքուեցան, Հաւանաբար յաւելելով ձեւի տակ եւ կոչուեցան «Կանոնք Սրբոյն Գրիգորի Առաքելոյ Հայոց»:

Գրիգոր ձերութեան տարիներուն յատուկ հակամիտութիւն ցոյց տուաւ առանձնական ու ճգնողական կեանքի: Բայց իր առանձնացումի ընթացքին ալ չէր մոռնար իր ժողովուրդը, այլ Հոգեկան ու Ֆիզիքական նոր ոյժեր ամբարելով՝ կրկին կ'ելլէր քարոզչական շրջապայութեան՝ իր աշակերտներով միասին, եւ կը Հաստատէր ամէնքը Հաւատքի մէջ: Տրդատ, նկատի ունենալով Լուսաւորչի այս պարբերական մեկուսացումները, Կեսարիայէն բերել տուաւ անոր որդիները՝ Արիստակէսը, որ արդէն իսկ կուսակրօն կեանք ընտրած էր, եւ Վրթանէսը, որ ամուսնացած եւ երկուրեակ զաւակներու Հայր եղած էր: Ասոնք եւս Եպիսկոպոս ձեռնադրուեցան իրենց Հօրմէն եւ օգնական կարգուեցան անոր Հայրապետանոցի եւ արքունիքին մէջ:

Գրիգորի վերջին տարիներուն, 325ին գումարուեցաւ Նիկիոյ տիեզերական ժողովը, որուն Հրաւիրուեցաւ նաեւ ինք, բայց ձերութեան պատճառով չկրցաւ երթալ, իր տեղ զրկեց իր որդին՝ Արիստակէսը: Երբ բերաւ ան Նիկիոյ հանգանակը, Լուսաւորչի կնքեց զայն

իր կողմէ աւելցնելով. «Իսկ մեք փառաւորեացուք» փառատրական վերջաբանը, որ միջեւ օրս կը կրկնուի Ս. Պատարագի ընթացքին, հաւատամքի վերջաւորութեան:

Ս. Գր. Լուսաւորիչ՝ Ս. Թադէոս եւ Ս. Բարթողիմէոս Առաքեալներու կողմէ հաստատուած Հայոց Եկեղեցին հիմնովին վերանորոգեց ու վերակենդանացուց: Ժամանակակից Պատմիչին բառերով՝ «զՀայաստան երկիրն պայծառացեալ՝ Հանդերձ արքայիւն Տրդատաւ՝ զամենայն աւուրս կենաց իւրոց ԼՈՒՍԱՒՈՐԷՐ... առ ի սթափել, զուարթացուցանել, եւ հաստահիմն առ խոստացեալ աւետիսն քաջալերել» (Ագաթ. էջ 654 [§ 885]):

Ս. Գրիգոր, լման քառորդ դար մը մեծ արդիւնաւորութեամբ կառավարել է եւ ամրացնել է յետոյ Հայոց Եկեղեցին, առ Աստուած փոխեցաւ 326ին իր առանձնացումի շրջաններէն մէկի ընթացքին, եւ ոչ ոք լուր ունեցաւ իր մահէն: Հովիւներ, գտնելով անոր մարմինը, Թադեցին գայն, առանց գիտնալու, թէ որո՞ւն մարմինն էր: Տարիներ յետոյ յայտնուեցաւ անոր թաղման տեղը եւ նշխարները, եւ մեծ հանդէսով փոխադրուեցաւ ու թաղուեցաւ Թորդան աւանը:

Հայաստանեայց Եկեղեցին ներկայիս երեք անգամ կը կատարէ Սուրբին յիշատակը. առաջինը ՉԱՐՉԱՐԱՆԱՑ ԵՒ ՄՈՒՏՆ Ի ՎԻՐԱՊ անուանով՝ Մեծ Պահոց Զ. Կիրակիի նախընթաց շաբաթ օրը, երկրորդը՝ ԵԼՆ Ի ՎԻՐԱՊէն՝ Տօն Կաթողիկէ Ս. Էջմիածնի նախորդ շաբաթ օրը, երրորդը՝ ԳԻՒՏ ՆՇԽԱՐԱՑ՝ զկնի Հոգեգալստեան Դ. Կիրակիի նախորդ շաբաթ օրը: Երեք տօներն ալ ունին իրենց նախընթաց շաբաթապահները: Օտար եկեղեցիներ կը տօնեն գայն Սեպտ. 30ին: Ս. Գրիգոր Լուսաւորիչ անցած է գրեթէ բոլոր համայնագիտարաններու մէջ, օրինակ՝ Բրիտանական ու Կաթողիկեան, ինչպէս նաեւ Լարուսներու մէջ: Յիշուած է նաեւ մեր ձեռքը գտնուած Օքսֆորդեան եւ Սրբոց բառարաններու մէջ:

Գալով իր նշխարներուն՝ այս մասին ընդարձակօրէն կը խօսուի ԼԻԱԿԱՏԱՐ Վարք Սրբոցի մէջ (էջ 299-302): Ըստ այսմ բացայայտ է, որ Ե. դարուն արդէն իսկ Լուսաւորչի նշխարը կայ նաեւ Էջմիածին, աջի ձեւին տակ միշտ պահուած Հայոց Կաթողիկոսներու մօտ: Փոխադրուած է Կիլիկիա ԺԱ դարուն, երբ Կաթողիկոսական Աթոռը այնտեղ հաստատուած էր: Գաղտնօրէն կրկին Էջմիածին վերադարձուե-

ցաւ 1440-ական թուականներուն, երբ Աթոռը Էջմիածին վերադարձնելու ծրագրերն էր մշակուէին, եւ մինչեւ օրս կը պահուի Էջմիածնի մէջ իբրեւ Հայ Եկեղեցիի կարեւոր սրբութիւններէն մէկը, որ կը գործածուի Ս. Միլուոնի օրհնութեան ընթացքին: Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնն ալ ունի իր «Ս. Գրիգոր Լուսաւորչի աջը»: Երուսաղէմ կայ շուրջ բթամատի մը մեծութեամբ Ս. Լուսաւորչի մասունք մը:

Իսկ այստեղ, Իսթամպուլի մեր եկեղեցիներէն ոմանք ալ ունին Ս. Լուսաւորչի մանր մասունքներ: Ասոնք եւ տակաւին չյիշուածներ ազգային շրջանակներու մէջ եղած մասունքներ են: Իսկ օտար շրջանակներու մէջ եւս կան Ս. Լուսաւորչի կարեւոր մասունքներ: Ըստ ԼԻԱԿԱՏԱՐ հաւաստումին, Բիւզանդիոնի կայսրերէն Զենոն (471-491) ուզած է Հայոց Բաբգէն Կաթողիկոսէն Ս. Գրիգորի նշխարներէն մաս մը եւ Բիւզանդիոն տանելով՝ մեծ եկեղեցի մը շինած է յանուն Ս. Գրիգորի: Իսկ ներկայիս Նաբոլիի մէջ կը գտնուի Ս. Գր. Լուսաւորչի գլուխը, որ ըստ իրենց աւանդութեան, պատկերամարտութեան շրջանին (Ը. դար Ս. Բարսեղի կարգին պատկանող կարգ մը կոյսեր, երբ հարկադրուեցան Հեռանալ Բիւզանդիոնէն, հալածանքերու պատճառով, իրենց հետ տարին Ս. Գրիգորի գլուխը՝ քանի մը յարակից մասունքներով եւ անոր չարչարանաց գործիքներով: Երբ հասան Հարաւ՝ Իտալիա, անոր նշխարներէն մաս մը դրած են այդ շրջանի Ներետոն քաղաքը, իսկ անոր գլուխը բերած են մինչեւ Նաբոլի եւ դարձ երեւելի կուսաստանի մը մէջ, ուր ապա շինուած է հոյակապ եկեղեցի մը յանուն Ս. Գր. Լուսաւորչի, ուր կը մնայ եւ կը յարգուի անոր դանկը մինչեւ այսօր: Նաբոլի քաղաքը կը ճանչնայ գայն իբրեւ իր պաշտպաններէն մէկը: ԼԻԱԿԱՏԱՐ-ը միաժամանակ կը հաստատէ, որ Նաբոլիի մէջ կը գտնուի նաեւ Ս. Գրիգորի արծաթեայ կիսարձանը, զոր ուրիշ արձաններու հետ թափօրի կը հանեն քաղաքին մէջ Ս. Գենարիոսի (Նաբոլիի պաշտպան սուրբը) տօնին օրը:

Իսկ մենք երբ 1955ին այցելեցինք Յունաստանի աշխարհահռչակ Աթոս Լեո (Այիօն Օրօս) կոչուած վանաստանը, այստեղ եւս մեզից տուին թանկագին մետաղեայ գլխածեւ անօթի մը մէջ պահուած գանգ մը, որուն գագաթի մասը միայն կ'երեւէր կափարիչի մը ներքեւ, եւ հաւաստիացուցին, թէ Հայոց Ս. Գրիգոր Լուսաւորչին գանգն է, Անիէն նախ Բիւզանդիոն բերուած, այնտեղէն ալ Աթոս Լեո փո-

խաղբուած:

Յովհ. Մկրտչի հետ առաւելագոյն շարական ունեցող Սուրբն է Լուսաւորիչ մեր մէջ: Երեք տօներն ալ ունին իրենց լրիւ «Կանոն»ները, այսինքն՝ շարականներու լրիւ կազմը՝ իրենց օրհնութիւններով, հարցերով եւ իւր սարօք: «Մուտն ի վիրապին» օրհնութիւնը՝ «Այսօր զուարճացեալ» բաղկացած է 36 տուներէ, որոնցմէ իւրաքանչիւր կը սկսի հայ այբուբենի մէկ տառով: Իբրեւ նմոշ այստեղ կը դնենք անոր նուիրեալ Մանկունք կոչուած շարականներէն ամենէն ծանօթը:

Հրաշափառ Աստուած, եւ միշտ բարեխնամող,

Որ յառաջ գիտութեամբ զփրկութիւն Հայաստանեայց սկզբնաւորեալ,

Ի Պարթեւական մեղապարտ ազգէն լուսաւորիչ մեզ շնորհեցեր. Վասն որոյ բարեխօսութեամբ սորա, Փրկիչ, կեցող զմեզ, այժմ եւ ի քո ահաւոր գալստեան:

Հրաշալի զարմացմամբ երանելին սուրբ Գրիգոր

Ջանտանելի զչարչարանս ի յանձն էառ.

Եւ երիւք հնօք ամօք ի մէջ թունաւորացն բնակէր

Անդնդային տանջանօք ի վիրապին: Վասն որոյ...

Հրաշագործ քո բանիւղ եւ մեծ ողորմութեամբ

Ելեալ բժշկէր զհարուծեալսն ի դիւաբախ սաստիցն.

Երկրպագուա առնելով զամենեանս Ս. Երրորդութեանդ: Վասն որոյ...

Թարգմանութիւն.

Մեծափառ Աստուած, եւ միշտ նախախնամող,

Քու Կանխագիտութեամբդ Հայոց ազգին փրկութեան սկիզբ դրիր

Ու Պարթեւական մեղաւոր ազգէն մեզի լուսաւորիչ շնորհեցիր.

Ուստի անոր բարեխօսութեամբ, ով Փրկիչ, կեանք տուր մեզի Այժմ եւ Քու ահաւոր գալուատիդ:

Ջարմանահրաշ կերպով երանելին Ս. Գրիգոր

Անտանելի չարչարանքներն յանձն առաւ.

Եւ տանհինգ տարիներ թունաւորներու մէջ բնակեցաւ,

Անդնդային վիրապին մէջ տանջանքով: Ուստի...

Հրաշագործ Քու խօսքովդ եւ մեծ ողորմութեամբդ

Ելաւ բժշկեց դեւերէն զարնուած հարուածեալները,

Երկրպագուներ ըրաւ ամենքն ալ Ս. Երրորդութեանդ:

Ուստի...

Ս. Գր. Լուսաւորչի պատմութեան սկզբնական եւ հիմնական աղբիւրն է ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ Հայոց պատմութիւնը:

Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց: Ի Վենետիկ, ի Սուրբն Ղազար, ՌՄԶԴ [1835]:

Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց: Աշխատասիրութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց: Տփղիս, 1909:

La version greque ancienne du Livre arme'nien d' Agathange. Edition critique par Guy Lafontaine. Louvain-la-Nouve, 1973.

Մկրտութիւն Հայոց, Վրաց, Աբխազաց եւ Ալանաց ի սրբոյն Գրիգորէ: Ի ռուս հրատարակութենէ, կատարելոյ ըստ արաբերէն օրինակի յուսուցչապետ Նիկողայոսէ Մառ թարգմանեաց ի հայ՝ միաբան Ս. էջմիածնի Յուսիկ Արքեպիսկոպոս (արտատպեալ «յԱրարատ» ամսագրէ): Վաղարշապատ, 1911:

Ge'rad Garitte, Documents pour l' e'tude du Livre d' Agathange. „Studia e Testi,, t. 127, Vaticano, 1946.

Ա. Տէր Ղեւոնդեան, Ագաթանգեղոսի արաբական նոր խմբագրութիւնը (արաբերէն բնագիր եւ ռուսամասիրութիւն): Երեւան, 1968:

Պարոյր Մուրադեան, Ագաթանգեղոսի հին վրացերէն խմբագրութիւնները: Երեւան, 1982:

Կարեւոր աղբիւրներ են նաեւ Ջենոք Գլալ եւ Մովսէս Խորենացի պատմիչները:

Ներբողեան գրած են Ս. Գրիգորի մասին Յովհ. Ոսկեբերան Հայրապետ [Երանելոյն Յովհաննու Ոսկեբերանի՝ Ներբողեան, ասացեալ

յաղագս վարուց եւ նահատակութեան Արքայն Գրիգորի՝ Հայոց Մեծաց Հայրապետի: Ի ս. Ղազար, 1878] եւ մերիններէն Սարկաւագ, Վարդան եւ Յովհաննէս Երզնկացի վարդապետներ եւ ուրիշներ:

2. ԱՐԻՍՏԱԿԷՍ ՀԱՅՐԱՊԵՏ 264-333

Կրտսեր որդին է Գր. Լուսաւորչին, ծնած Կեսարիոյ մէջ 264ին: Մանկութենէն իսկ, իր կենսագրին բառերով, «Ըստ աստուածագործ ծառայութեան սնեալ էր» (Ագաթ. 636, [§ 859]), այսինքն՝ աստուածաշտական ծառայութեան Համար դաստիարակուած էր: Կանուխ երիտասարդութենէն Հետեւեցաւ ճգնողական կեանքի. «Մենակեաց լեռնակեաց կրօնս մտեալ», այսինքն առանձինն՝ լեռնաբնակ կրօնաւորական կարգի մէջ մտած էր (նոյն անդ) ինքզինք ենթարկելով քաղցի, ծարաւի, տքնութեանց եւ «բանջարաճաշակ եւ խարազանազգեստ» կենցաղի, առաջնորդութեամբ Նիկոմաքոս անուն ճգնաւորի մը:

Երբ չափահաս եղաւ ու Հոգեւոր կատարելութեան բոլոր կանոններուն տիրացաւ, իր կարգին ունեցաւ աշակերտներու իւրայատուկ խումբը, զորս կը կրթէր թէ՛ կրօնական կատարելութեան կանոններու մէջ եւ թէ՛ «աւետարանական սպասաւորութեան» մէջ, ինչ որ կը նշանակէ թէ Աւետարանի քարոզչական գործով ալ կը զբաղուէին: Ամէն տեսակ փորձութիւնները եւ ինքնազրկանքները «կամայական քաջութեամբ տարեալ», այսինքն՝ սիրայօժար արիութեամբ յաղթահարելով ու տոկալով ամէն տեսակ փորձութեանց եւ նեղութեանց, «լուսաւորեալ եւ պայծառացեալ» Հոգեվիճակի մը Հասաւ, այսինքն՝ տիրացաւ բարձրագոյն միսթիկ կատարելութեան. «ձանօթական եւ Հաճոյ լեալ առաջի Աստուծոյ եւ ամենայն մարդկան»: Ուրեմն, Համաձայն իր կենսագիր Ագաթանգեղոսի ժուժկալ ներկայացման, Արիստակէս նախ քան եկեղեցական ասպարէզ մտնելը Հասած էր արդէն կրօնաւորական օրինակելի Հոգեւոր կատարելութեան: Այս բոլորը տեղի ունեցան Հայաստանէ դուրս՝ Կեսարիոյ շրջակայ «մենակեաց եւ լեռնակեաց» կեանքի ընթացքին եւ «աւետարանական սպասաւորութեան» մէջ եղած ժամանակ:

Ինչպէս տեսանք, Լուսաւորիչ յաճախ կը բացակայէր Հայրապետ

տանոցէն՝ երկրին Հեռաւոր մասերու մէջ աւետարանչութեամբ եւ թէ երբեմն գոհացում տալու Համար իր առանձնասիրութեան Հակումին:

Տրդատ Թագաւոր, անդրադառնալով այս կացութեան, միւս կողմէն աւելի Հանգամանօրէն իմանալով Լուսաւորչի որդիներու մասին, ի վերջոյ մարդ զրկեց իր մօտ՝ բերել տալու Համար զանոնք: Կենսագիրը կը պատմէ, որ գտան Արիստակէսը «բնակեալ յանապատի իւրում մենաւորաստանին», այսինքն՝ ամայի վայրի մէջ իր մենարանին մէջ բնակած ատեն: Երբ ներկայացուցին Հայոց Թագաւորին Հրաւէրը՝ Արիստակէս չէր ուզեր Հեռանալ իր «Մենաստանէն», մինչեւ որ «բազմութիւն քրիստոնէից» Համոզեցին զայն, որ ընդունի եղած առաջարկը, որովհետեւ, ըսին անոնք, «Աւելի լաւ է, որ Աստուծոյ մշակութեան գործին նուիրուիս, քան մենակեաց անապատական կեանքին»: Ուստի երկու եղբայրներ (Վրթանէս եւ Արիստակէս) Հետեւեցան Տրդատի պատուիրակներուն: Երբ Հայաստանի Հասան՝ Թագաւորին Հետ միասին փնտրեցին իրենց Հայրը եւ գտան զայն Դարանաղեաց գաւառի Մանեսայ Այր կոչուած ճգնարանը: Տրդատ խնդրեց Ս. Լուսաւորչէն, որ Եպիսկոպոս ձեռնադրէ իր երկու որդիները: Այս կապակցութեամբ կ'աւելցնէ Օրմանեան. «Ընդհանուր փափաքին վրայ, Արիստակէս, իբրեւ աւելի Հոգեւորական անձ, մեծ եղբորմէն առաջ եպիսկոպոսութեան կը կոչուէր եւ իր Հօր Հայրապետական պաշտօնին օգնական կը նշանակուէր» (Ագգ. Հտծ. 73): Այս կէտին կենսագիրը (Ագաթանգեղոս) կուտայ իր խտացեալ, բայց գերազանց գովեստը Արիստակէսի մասին, երբ կը Հաստատէ, որ ան ձեռնադրութենէ յետոյ ձեռնարկեց քարոզչական ու Հովուական աշխատանքի եւ իր Հօրմէն աւելի «գերազոյն երեւցուցանէր զիւր վարդապետութիւնն»: Այսինքն՝ Հօրմէն աւելի գերազանց էր ուսուցանելու մէջ:

Արիստակէսի մասին շատ դէպքեր կամ գործունէութեան դրուագներ չեն պատմուիր: Յարատեւ ու մշտական քարոզիչ եղած է Հայաստանի ամէն կողմերը, նահանգէ նահանգ, գաւառէ գաւառ: Յիշատակութեան արժանի գլխաւոր գործը եղաւ իր մասնակցութիւնը Առաջին Համաքրիստոնէական ժողովին՝ գումարած 325ին Նիկիոյ մէջ, իր Հօրը տեղ, իբրեւ Հայաստանեայց Եկեղեցիի ներկայացուցիչը: (Ագաթ. ձիւ [§ 884]): Նիկիոյ ժողովին երթալու ատեն իբեւ ուղեկից ունեցաւ Արեւելեան եպիսկոպոսները՝ Յովհաննէս Տիգրանի, Յակոբ Մծբնայ եւ

Եւթաղ Եղեւսիոյ եւ Ղեւոնդիոս Կեսարիոյ: Նիկիոյ մէջ իր մասին զրոյց մը կը պատմուի. խումբ մը արիտասականներ, տեսնելով Արիստակէսի նիւթար ու ճգնութիւններէ հալած-մաշած կերպարանքը, ծաղրելով կ'ըսէին, թէ Հայոց Եպիսկոպոսը աւելի մշակի կը նմանի, քան Հայրապետի, եւ հեղնելով առաջարկեցին, որ դիմացի արօրագիր եղները առնէ եւ ծովը հերկէ: Արիստակէս առանց վարանելու ընդունեց առաջարկը եւ հերկեց ծովը իբրեւ Հաստատ գետին: Վերագարձին զինք ծագրողներուն ըսաւ. «Եթէ դուք ալ ուղիղ հաւատք ունիք՝ գացէք հերկերուն վրայ սերմ ցանեցէք»: Մարդիկ ամօթահար եղան եւ իրենց յարգանքը եւ Համարումը աւելի մեծցաւ իր մասին. (Ազգ. հտծ. 82) (ՄԱՐԶՈՒԱՆՑԻ, էջ 219):

Արիստակէսի եպիսկոպոս ձեռնադրութենէն եւ հօրը փոխանորդ նշանակուելէն յետոյ Ս. Գր. Լուսաւորիչ աւելի հանդարտ սրտով հետեւեցաւ իր միայնութեան, վստահ ըլլալով, որ Հայրապետական պաշտօնը արթուն եւ կարող ձեռքի մէջ կը գտնուէր: Ու երբ Նիկիոյ ժողովի Հաւատոյ Հանգանակը ստանալէ յետոյ Գրիգոր այլեւս չերեւցաւ Հանրութեան, եւ չկրցան գտնել անոր հետքը, ինքնաբերաբար Արիստակէս ստանձնեց Հայրապետական պաշտօնը, զոր արդէն այնքան հեղինակօրէն եւ տիրաբար կը վարէր հօրը բացակայութեան ու եղաւ Հայ Եկեղեցիին երկրորդ Կաթողիկոսը 326ին, երբ աւելի քան 60 տարեկան հասուն եւ գործօն հոգեւորական մըն էր: Եօթը տարի կաթողիկոսութիւն ըրաւ եւ իր կեանքը կնքեց մարտիրոսական մահով:

Արիստակէս կոչուած է «Սուսեր Հոգեւոր» խորհնացի կողմէ եւ այս իսկ պատճառով «Թշնամի ամենայն անիրաւաց եւ զագրագործաց թուէր նա» (Խոր. II, ՂԱ): Այդ «անիրաւ եւ զագրագործներէն» մէկն ալ կ'թուի Հայոց նախարարներէն ամենէն ազդեցիկը Համարուած Մոփաց գաւառի Արքեպիսկոպոս մեծ իշխանը, որ յանդիմանուած, թերեւս մինչեւ իսկ բանադրուած ըլլալով Արիստակէսէն իր անբարոյ կամ անարդար գործերուն համար, թշնամացած էր անոր հետ եւ յարմար առիթի կը սպասէր իր վրէժը լուծելու համար: Ուստի երբ Հայրապետը անոր նահանգը (Չորրորդ Հայք) այցելած էր իր հովուապետական շրջապայտութեան ու քարոզչութեան ընթացքին «ի ճանապարհի ի Մոփաց» Արքեպիսկոպոս անձամբ «Պատահելով անոր, սպաննեց զայն սուրով» (Խորէն. անդ.): Նահատակեալ Հայրապետի մարմինը փոխա-

դրուեցաւ իր աշակերտներուն եւ հետեւորդներուն կողմէ իր հայրենի կալուածը, Թիւ աւանը եւ այնտեղ թաղուեցաւ: Անոր գերեզմանը կը ցուցուէր Երզնկայի շրջանի «Ջուխտակ Հայրապետ» վանքին մէջ, ասկէ 60-65 տարիներ առաջ:

Կը տօնուի Լուսաւորչի «ՈՐԴԻՈՑ ԵՒ ԹՈՒԱՆՑ» հետ, Մննդ. Գ. Կիրակիին յաջորդող շաբաթ օրը՝ տարեգիրը Ձ-Ք եղած ատեն: Իսկ Մեծ Պահոց եւ Մննդեան միջեւ եղած միջոցը ասկէ աւելի կարճ եղած պարագային կը փոխադրուի Վարդավառի Գ. Կիրակիի յաջորդող շաբաթ օրը: Այս կը պատահի, երբ տարեգիրը Ա-Ո է, իսկ նահանջ տարիներու համար տես Տօնացոյց Բ. Հատորի Վարդավառի Կիրակիին դրուած խրատները:

«Որդոց եւ թոռանց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի» ընդհանուր խորագրի տակ կայ «ԿԱՆՈՆ» մը շարականոցի մէջ, միայն «Հարց» եւ յարակից շարականներով: «Մանկունք» շարականի մէջ տօնելիներէն իւրաքանչիւրը յանուանէ կը յիշուի մէկական տունի մէջ: Առաջին տունը Արիստակէս Հայրապետի մասին է, որ ծանօթ է նաեւ Ռըւտակէս անուամբ: Ակնարկելով իր ձեռամբ Հայաստան բերուած Նիկիական Հանգանակին, հետեւեալն է շարականի այդ տունը.

Աստուածային հաւատոյ Հարցն Սրբոց դաւանումն ծագեցաւ քեւ ընդհանուր լոյս Հայաստանեայց, Ս. Ռըստակէս,

Անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց:

Թարգմանութիւն.

Սուրբ հայրերու աստուածային հաւատքի դաւանութիւնը՝ Բեզմով իբրեւ լոյս ծագեցաւ ամբողջ Հայոց վրայ, Ս. Ռըստակէս.

Անդադար բարեխօսէ մեր անձերուն համար:

Սկզբնաղբիւրներ. ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ 1835, Վենետիկ, ՃԻԳ հատուածին վերջին կէտը եւ ՃԻԳ հատուածը լման [=1909 թ. հրատ., § 854-866]: Մահը չէ պատմուած:

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ, 1827, Վենետիկ, փոքրակազմ: Տես սոյն գիրքի ետեւի անուանացանկի մէջ ԱՐԻՍՏԱԿԷՍ եւ ՌԸՍՏԱԿԷՍ անուանը: Իր մահը խորհնացիին կողմէ պատմուած է: [Մովսիսի խորհնացւոյ Պատմութիւն Հայոց: Աշխատութեամբ Մ. Արեղեան եւ Ս. Յարու-

ԹԻՆԱՆԱԳ, Տփղիս, 1913: Վերահրատարակութիւնը՝ Երեւան, 1991:

«Վկայութիւն սուրբ Հայրապետացն Հայոց Արիստակիսի, Վրթա-
նիսի, Յուսկան, Գրիգորի, Դանիէլի» (տե՛ս Ի. Աբուլաձէ, Վրաց եւ
Հայոց գրական փոխարարներութիւնները IX-X դարերու: Թբիլիսի,
1944, էջ 62-68.):

3. ՎՐԹԱՆԷՍ ՀԱՅՐԱՊԵՏ 262-341

Երէջ որդին Լուսաւորչի, ծնած Կեսարիա շուրջ 262ին: Մտաւ աշ-
խարհիկ կեանք, ամուսնացաւ եւ ունեցաւ երկուորեակ որդիներ Գրի-
գորիս եւ Յուսիկ: Հայաստան եկաւ իր զաւակներով՝ կրտսեր եղբոր Ա-
րիստակէսի հետ շուրջ 310ին:

Այստեղ միջանկեալ ըսենք, որ ոմանք Գր. Լուսաւորչի եւ իր որ-
դիներուն եւ թոռներուն զաւակ ունենալէն այնպէս կը հետեւցնեն, որ
հին ատեն եպիսկոպոսներ կամ կաթողիկոսներ ալ ամուսնացած կ'ըլ-
լային: Սակայն երկու կարեւոր կէտեր պէտք է յստակենք այս կա-
պակցութեամբ: Նախ՝ խնդրոյ առարկայ Հայրապետները ամուսնա-
ցած են իրենց աշխարհականութեան ատեն, երկրորդ՝ ոչ մէկ պատմա-
կան ապացոյց գոյութիւն ունի հաստատող, թէ երբ եկեղեցական ե-
զան՝ իրենց կիները իրենց հետ էին: Կա՛մ այն է, որ փոխադարձ հաս-
կացողութեամբ բաժնուած էին իրենց կիներէն, որոնք կուսանոց
մտած են, եւ կամ իրենց կիները վաղամեռիկ եղած են, ինչպէս եղած է
արդարեւ մեզի ժամանակակից նրիմեան Հայրիկին, որ աշխարհակա-
նութեան ամուսնացած էր, բայց կինը կորսնցնելէ յետոյ եկեղեցական
սուպարէզ մտաւ եւ բարձրացաւ Պատրիարքական ու Կաթողիկոսական
Աթոռներ:

Նոյն է պարագան Բարիզի Վուամշապուհ Եպիսկոպոսի, որ ա-
մուսնացեալ քահանայ եղած է եւ իր երէցկիներ կորսնցնելէ յետոյ
բարձրացած է վարդապետական եւ եպիսկոպոսական աստիճաննե-
րուն: Իր զաւակները դեռ ի կեանս են: Այնպէս որ՝ ինչպէս Գրիգոր
Լուսաւորիչ, այնպէս ալ Վրթանէս երբ Հայաստան եկաւ, իր կինը հե-
տը չէր. միասին բերաւ իր երկուորեակ զաւակները, որոնք 10-12 տա-
րեկան առողջ պատանիներ էին, եւ Տրդատ Թագաւոր ընդունեց զա-
նոնք իր պալատին մէջ, ու կրթուեցան միւս պալատական տղաքնե-

րուն հետ: Իսկ Վրթանէս Հաւանաբար պաշտօն ստանձնեց պալատի
մէջ, իբրեւ բարձր զարգացման տէր անձնաւորութիւն:

Վրթանէս ալ իր քահանայական ու եպիսկոպոսական ձեռնադրու-
թիւնը ստացաւ հորմէն, Հաւանաբար Արիստակէսի Նիկիոյ ժողովին
մեկնելէ յետոյ, եւ ստանձնեց Հայրապետանոցի գործերը իր եղբոր
բացակայութեան: Արիստակէսի վերադառնալէն յետոյ ալ շարունա-
կեց գործերը, քանի որ Արիստակէս առ հասարակ քարոզչական գոր-
ծերով զբաղուած էր: Այնպէս որ երբ իր եղբոր նահատակութեան լու-
րը հասաւ Վաղարշապատ, Վրթանէս ինքնաբերաբար յաջորդեց Ա-
րիստակէսին՝ իբրեւ երրորդ Կաթողիկոսը Հայ եկեղեցւոյ 333ին, երբ
70 տարեկան պատկառելի անձնաւորութիւն մըն էր:

Վրթանէսի Կաթողիկոսութեան առաջին տարիները խաղաղ ու
բարգաւաճ անցան: Ինք ալ նուիրուած էր խաղաղ եւ արդիւնաշատ
գործունէութեան. «Լուսաւորչի եւ առաջնորդէր նոցա սուրբն Վրթա-
նէս իբրեւ զհայր եւ իբրեւ զեղբայր իւր. իրաւունք եւ արդարութիւն
ծաղկեալ էին ի դարուն յայնմ»: (Բիւզանդ, էջ 7):

Հագիւ Կաթողիկոսական Աթոռ բարձրացած էր Վրթանէս, երբ
կուսպաշտութիւնն ալ կրկին գլուխ բարձրացուց եւ մինչեւ իսկ սպառ-
նաց Հայրապետի կեանքին: Սկզբնադրիւր Փաւստոս Բիւզանդ կը
պատմէ հետաքրքրական դրուագ մը, զոր կուտանք թարգմանաբար:

«Վրթանէս Եպիսկոպոսապետը գացած էր Հայոց եկեղեցիներ-
ուն մեծը, առաջինը եւ մայրը եղող տաճարը, Տարօնի երկրին
մէջ, ուր կատարուած հրաշքներով կործանեցան մեհաններու
բազինները Գրիգոր մեծ Քահանայապետի օրով: Այնտեղ, ըստ
հանապազ սովորութեան, կը կատարէր Տիրոջ խաչելութեամբ
իրականացած փրկութեան գոհութեան պատարագը, այսինքն՝
չարչարանաց յիշատակի հաղորդութիւնը, որ է կենդանաբար
եւ ազատիչ մարմինը եւ արիւնը Աստուածորդի Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի: Որովհետեւ Հայոց Եպիսկոպոսապետները,
Թագաւորներով եւ մեծամեծներով, նախարարներով եւ աշխար-
հախումբ բազմութեամբ սովոր էին պատուել այդ տեղերը, ո-
րոնք թէեւ առաջ կուռքերու պատկերներու տեղեր էին, սա-
կայն յետոյ յանուն Աստուածութեան սրբուեցան եւ աղօթքի
տուն եւ ուխտատեղի եղան ամենքի համար: Մանաւանդ սովոր

էին Հաւաքուիլ այն գլխաւոր եկեղեցին, այսինքն Ս. Կարապետի վանքը՝ ի յիշատակ սուրբերուն, որոնք հոն էին, տարին եօթն անգամ, յատկապէս մեծ մարգարէարան՝ Յովհաննու մատրան մէջ...: Այն ժամանակ, երբ Վրթանէս մեծ Քահանայապետը կը շրջէր այն կողմերը փոքրաթիւ հետեւորդներով՝ կատարելու համար օրհնութեան պատարագը, դէպք մը պատահեցաւ անոնք, որոնք Հին Հեթանոս կուսակաշտութեան սովորութիւնը մինչեւ այն ատեն դեռ գաղտնօրէն կը պահէին, շուրջ երկու հազար հոգիներ, միաբանեցան, Հաւաքուեցան ու Հասան այնտեղ՝ մտադրած ըլլալով սպաննել Աստուծոյ Քահանայապետ Վրթանէսը: Ասոնք այս գործին մէջ մասամբ մըն ալ համարձակութիւն առած էին թագաւորի կնոջմէն, վասնզի Սուրբը կը յանդիմանէր զայն՝ անոր գաղտնի շնութեան եւ պոռնկութեան պիտի բարքին համար: Ասոնք եկան ու պաշարեցին Աշտիշատի եկեղեցիին քաղաքորմը: Մինչ Վրթանէս ներսը պատարագ կը կատարէր, դուրսէն զօրաց այս բազմութիւնը ուզեց փակել ու պաշարել տեղը: Սակայն այս մարդոց բազուկները ետ դարձան իրենց կռնակներուն եւ առանց ոեւէ մէկէ կապուած ըլլալու հրաշքով կաշկանդուեցան: Այսպէս իրենք պաշարուած ու կծկուած կը մնային. ամենքն ալ առ Հասարակ գետին ինկած անձայն, անշարժ կը մնային իրենց տեղերը. ասոնք տոհմէն ու ցեղէն էին աշխարհակեր եւ աշխարհաւեր ժանտագործ քուրմերուն:

Արդ, երբ այսպէս պաշարուած ու դիզուած էին եկեղեցիի գաւիթը, ինքն իսկ Վրթանէս, պաշտամունքի աւարտին, մօտենալով կը հարցնէր անոնց. Ո՞վ էք դուք կամ ուրկէ՞ եկած էք, կամ ո՞վ կ'ուզէք, կամ ինչո՞ւ եկած էք: Իսկ անոնք շիտակը խօսեցան ու խոստովանեցան, թէ եկած էին այս տեղերը աւերելու եւ «Քեզ սպաննելու, հրաման ու համարձակութիւն ստացած էինք նաեւ Հայոց Մեծ տիկնոջմէն: Սակայն Տէր Աստուած իր զօրութիւնը յայտնեց եւ ցուցուց մեզի, թէ ինքն է միայն Աստուածը, եւ այժմ ճանչցանք եւ Հաւատացինք՝ Ան է միակ Աստուածը: Արդ, ահաւասիկ այսպէս կծկուած կը մնանք եւ նոյն իսկ չենք կրնար շարժիլ այստեղէն»: Իսկ երանելի Վրթանէս

սկսաւ երկարօրէն սորվեցնել անոնց Աստուծոյ խօսքը, Հաստատել զանոնք մէկ Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի վրայ: Ապա կ'աղօթէր ու կը խնդրէր Աստուծմէ, կը բժշկէր ու կարճակէր զանոնք այն աներեւոյթ կապանքէն եւ կծկուած վիճակի ծանր տանջանքներէն: Ու երբ անոնք ազատեցան, առ Հասարակ կ'իյնային անոր առջեւ եւ կը խնդրէին ապաշխարութեան դեղը: Ու ան անոնց համար ապաշխարանքի շրջան մը կը սահմանէր: Եւ երբ սովորեցան Ս. Երրորդութեան Հաւատքը, կը մկրտէր զանոնք, որոնք շուրջ երկու հազար հոգիներ էին, բացի իրենց կիներէն եւ մանուկներէն, ու այսպէս Հաւատացեալներու գունդին կը խառնէր զանոնք, որոնք սրբուած ու արձակուած էին իբրեւ Հաւատացեալներ» (Փ. Բիւզանդ, էջ 7-8):

Իր օրով վախճանեցաւ Տրդատ Թագաւոր: Անոր յաջորդեց իր որդին Խոսրով, որ հակապատկերն էր հօրը. Ֆիզիքապէս փոքրակազմ, որուն համար ալ կոչուած է «Կոտակ», եւ զուրկ՝ հօրը կարողութիւններէն: Ուստի Վրթանէս աջակից եւ առաջնորդը եղաւ անոր ոչ միայն կրօնական ու պալատական գործերու մէջ, այլ նաեւ քաղաքական ու զինուորական գործողութիւններու ընթացքին: Հայ բանակը իր քաջալիբուծեամբ մեծամեծ յաղթանակներ կը տանէր պարսկական բանակի վրայ, որ սկսած էր վերստին յարձակիլ Հայաստանին տիրելու համար: Սակայն վերջին պատերազմներէ մէկի ընթացքին կ'իյնայ Հայոց սպարապետը՝ Վաչէ Մամիկոնեան.

«Ամբողջ Հայոց աշխարհին մէջ սաստիկ սուգ տիրեց, որովհետեւ շատ անգամ Տէրը փրկած էր Հայոց աշխարհը անոր ձեռքով: Իսկ Վրթանէս Եպիսկոպոսապետը կը ժողովէր եւ կը մխիթարէր ամենքը, ներառեալ Խոսրով Թագաւորը եւ ամբողջ զօրքը, որոնք ծանրաթախիծ տրտմութեան մատնուած էին...» (Բիւզանդ, Գլ. ԺԱ. էջ 26):

Այս կապակցութեամբ կը տրուի Վրթանէս Հայրապետի մխիթարութեան ճառին ամփոփումը «Մխիթարեցուք ի Քրիստոս» սկզբնաւորութեամբ: Այս ճառը սքանչելի խառնուրդ մըն է Հայրենասիրական ու կրօնասիրական զգացումներու, որ ասկէ յետոյ հիմնական յատկանիշներէն մէկը պիտի կազմէր Հայ Եկեղեցիի մեծ եւ իրաւ առաջնորդներուն դարերու ընթացքին: Կ'ըսէ երանելի Հայրապետը

այդ ճառին մէջ ի միջի այլոց.

«Պատերազմի մէջ ինկողները մեռան Հայրենիքի եւ եկեղեցիի ու Աստուծոյ օրէնքներուն պահպանութեան համար... որպէսզի Հայոց աշխարհ գերի ըլլալով չքանդուի, եւ սուրբ եկեղեցիները չպղծուին...: Մեր բարեպաշտ նահատակները... պատերազմելով չարը հեռու պահեցին եւ Հալածեցին մեր աշխարհէն, մեռան որպէսզի այսպիսի աստուածապաշտ ու աստուածասէր աշխարհը անօրինելով չարի կամքին ծառայութեան ներքեւ չմտնէ... իրենց անձերը տուին Տիրոջ ճշմարտութեան փոխարէն, իրենց կեանքերը զոհեցին եկեղեցիներու, մարտիրոսներու, Օրէնքի, Սուրբ Ուխտին, Հաւատքի կարգերուն, քահանայութեան ուխտին, եւ ի Քրիստոս մկրտուած անթիւ Հաւատացեալներուն համար: Անոնք՝ որ այս բոլորին փոխարէն իրենց անձերուն չեն խնայեր, Քրիստոսի վկաներուն հետ է անոնց պատուոյ աստիճանը: Ուստի չողբանք զանոնք, այլ պատուենք ճշմարտութեան հետ. նահատակ նկատենք զանոնք յաւիտեանս յաւիտենից. թող ամէն ոք ասոնց քաջութեան յիշատակը անխափան կատարէ իբրեւ Քրիստոսի նահատակներու: Ու մենք տօն սարքենք եւ ուրախ ըլլանք, որովհետեւ մենք ասոնց շնորհիւ Հաճոյ պիտի ըլլանք Աստուծոյ, որ ասկէ յետոյ խաղաղութիւն պիտի շնորհէ մեզի»:

Ու կը շարունակէ Փաւստոս Բիւզանդ պատմագիրը:

«Մեծ քահանայապետը Վրթանէս օրէնք դրաւ երկրին մէջ՝ ասոնց յիշատակը կատարել տարուէ տարի: Տնօրինեց նոյն ատեն, որ ասոնց հետ յիշուին նաեւ բոլոր անոնք, որոնք իրենց Հայրենիքի փրկութեան համար կը մեռնին գալիք ժամանակներու մէջ, կանոն դրաւ յիշել ասոնք սուրբ սեղանին վրայ պատարագի ժամուն, երբ սուրբերու անունները կը կարդացուին, անոնցմէ յետոյ ասոնց անուններն ալ յիշել, որովհետեւ Մատթեան Յուդա Մակարէի եւ իր եղբայրներուն պէս ինկան պատերազմի մէջ»: Ի պաշտպանութիւն իրենց կրօնքին, ժողովուրդին եւ Հայրենիքին (Բիւզանդ, էջ 26. 28):

Վրթանէս Հայրապետ ինչինչ ծիսական ու եկեղեցա-վարչական խնդիրներու մասին հարցումներ ուղղած է Երուսաղէմի Մակար Հայ-

րապետին (314-334): Ի պատասխան այս հարցումներուն Մակար Հայրապետ գրած է պատշաճը, որ մեր Կանոնագրքին անցած է «ԿԱՆՈՆՔ ՄԱԿԱՐԱՅ» անուան տակ, բաղկացած 9 յօդուածներէ:

Վրթանէս 8 տարի կը մնայ Կաթողիկոսական պաշտօնի վրայ եւ կը վախճանի մօտ ութսնամեայ՝ միշտ մեծամեծ դժուարութեանց դէմ արիարար մաքառելով եւ փորձառու, շատ գործունեայ եւ սրբակեաց հովուապետի մը անուն ձգելով: Իր կեանքը լեցուն եղաւ տառապանքներով եւ իր շրջանը, Տրդատի մահէն յետոյ, ազգային դժուարութիւններով, որոնց բոլորին յաղթահարեց եւ թոյլ չտուաւ, որ Հայոց թագաւորութեան տկար դաճը տապալի կրակապաշտ Պարսիկներու յարձակումներով: Առնուազն երկիցս ազդու միջնորդութեամբ ապահովեց Արեւմուտքի զինուորական միջամտութիւնը եւ իրենց գահերուն վրայ վերահաստատեց իր ժամանակակից երկու Հայոց թագաւորները, որոնց միշտ առաջնորդ զօրակիզ եւ խորհրդատու եղաւ: Սակայն որչափ ինք կ'աշխատէր աստուածապաշտութեան մէջ պահել զանոնք, կարծես այնքան աւելի կը հեռանային անոնք Աստուծոյ ճանապարհէն:

Վրթանէս Հայրապետ վախճանեցաւ բնական մահով եւ թաղուեցաւ Դարանաղեաց գաւառի Թորդան աւանը: Այստեղ թաղուած էին նաեւ իր Հայրը Գր. Լուսաւորիչ եւ Տրդատ թագաւորը: Այստեղ կար ժամանակին «Իննսրբոց Ս. Փրկիչ վանքը», ուր կը ցուցուէին եւ կը յարգուէին ի մէջ այլոց վերոյիշեալ երեք մեծ սուրբերուն եւ գործիչներուն գերեզմանները:

Կը յիշատակուի ի տօնին «ՈՐԴԻՈՑ ԵՒ ԹՈՌՈՒՆՑ», որոնց «Մանկունք» շարականին մէջ Վրթանէսի վերաբերեալ տունը հետեւեալն է:

«Բանաւոր Հօտին Քրիստոսի ընտրեալ Հովիւ քաջ,

Ի Հօրէն Լուսոյ բըղխեալ շառաւիղ բարի, Տէր Վրթանէս,

Անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց»:

Թարգմանութիւն.

Քրիստոսի բանաւոր Հօտին քաջ Հովիւ ընտրուեցար,

Լոյս Հօրմէն ծաղկեցար իբրեւ բարի շառաւիղ, Տէր Վրթանէս,

Անդադար բարեխօսէ մեր անձերուն համար:

Սկզբնաղբիւր. *ՓԱԽՍՏՈՍ ԲԻԻԶԱՆԴ, Վենետիկ, 1832, Գրուէք Գ. Ե. ԺԱ.*: [*«Վկայութիւն սուրբ Հայրապետացն Հայոց...»*: *«The Epic Histories Attributed to Pawstos (Buzandaran Patmutiwnk). Translation and Commentary by Nina G. Garsoian. Cambridge, Massachusetts, 1989»*].

4. ԳՐԻԳՈՐԻՍ - Աղոսանից Կաթողիկոս 295-337

Երէցն է Վրթանէս Կաթողիկոսի երկուորեակներուն, ծնած շուրջ 295ին Կեսարիոյ մէջ եւ Հօրը եւ եղբօր՝ Յուսիկի հետ Հայաստան եկած 310ին: Հակառակ Հայոց արքունիքին մէջ ապրած ըլլալուն եւ կրթուելուն, կուսակրօն կեանքի փափաքով լեցուած իր հօրեղբօր՝ Արիստակէսի մօտ եկեղեցական ծառայութեան մէջ մտաւ, կանուխ տարիքէն կուսակրօն քահանայ ձեռնադրուելով անկէ: «Վասն Հոգեկիր առաքինի արգասեացն, բարք, հասակ եւ զգիտութիւն Աստուծոյ յանձին կրելով» (Բիւզանդ, գլ. Ե. էջ 10): Թէեւ տարիքով դեռ շատ երիտասարդ կրնար համարուիլ, սակայն նկատի ունենալով իր արժանիքները, կարողութիւնը եւ հոգեւոր հասունութիւնը, եպիսկոպոս ձեռնադրուեցաւ «Կողմանց Աղոսանից եւ Վրաց, այսինքն է սահմանացն Մազքթաց»:

Կովկասեան այս ժողովուրդներուն մէջ քարոզած էր Ս. Գրիգոր Լուսաւորիչ, բայց կ'երեւի դեռ ամուր արմատ չէին բառնած Աւետարանի խօսքին սերմերը: Բաց աստի, հիւսիսային այս կողմերու բարեմիտ տարրերէն պատգամաւորութիւն մը եկած էր Տրդատ Թագաւորին՝ խնդրելու, որ Լուսաւորչի սերունդէն մէկը զրկէր քրիստոնէութիւնը աւելի զօրացնելու համար: Ուստի 320-ական թուականներուն, երբ Գրիգորիս հազիւ 25 տարեկան երիտասարդ մըն էր, սակայն արտաքինապէս անձնեայ եւ ներկայանալի անձնաւորութիւն մը, եպիսկոպոս ձեռնադրուեցաւ ու զրկուեցաւ Կովկաս: Սկիզբները իր գործերը յաջող ընթացան. «Գնաց ու նորոգեց այնտեղի եկեղեցիները լուսաւոր կարգադրութիւններով, առաջին Գրիգորին՝ մեծ Հօր գործերուն նման»: Իր գործունէութիւնը տարածեց նաեւ Ատրպատականի կողմերը: «Քրիստոսի ճշմարիտ հաւատքին քարոզիչը կ'ըլլար, ամէնքին առջեւ սքանչելի եւ զարմանալի տպաւորութիւն կը ձգէր»: Իսկ իր ներքին կեանքի խստութիւններէն երբեք չէր հրաժարէր յօգուտ իրեն

եւ այլոց.

«Դժուարագոյն, անհամար եւ ամենախիստ ինքնակրթանքներով, պահքով եւ սրբութեամբ, անքուն գիշերային հսկումներով եւ անձանձրոյթ աղօթքներով եւ ջերմութեամբ Աստուծոյ կը դիմէր բոլորին համար: Աւետարանական ընթացքը եւ սուրբ եկեղեցիի վերակացութիւնը Աստուծոյ շնորհիւ անպակաս առաջ կը տանէր: Փոյթեռանդն կը յորդորէր ամենքը ի քաջալերութիւն բարի կենցաղի, եւ գիշեր ու ցերեկ աղօթքով ու խնդրուածքով հաեռաւորներու եւ մերձաւորներու հոգեւոր եռանդը կ'արծարծէր (Բիւզանդ, գլ. Զ. էջ 13):

Երբ այսպէս երկրի միջին եւ հարաւային մասերուն մէջ «ուղղեց եւ նորոգեց եկեղեցին», դարձաւ դէպի հիւսիս եւ այցելեց Մազքութներու Թագաւորին բանակը, որ բաղկացած էր Կովկասեան ամէն տեսակ ցեղերէ, եւ «սկսաւ քարոզել եւ աւետարանել անոնց գՔրիստոս»: Նախ մտիկ ըրին եւ ընդունեցին հաւատալ ճշմարիտ Աստուծոյ: Երբ կարգը եկաւ ու սկսաւ քարոզել Քրիստոսի օրէնքները եւ պատգամները, վերահասու եղան, որ ճշմարիտ Աստուծոյ «ատելի է աւարառութիւնը, յափշտակութիւնը, սպանութիւնները, ազահութիւնը, ուրիշներ զրկելը, ուրիշներու ունեցածն ուտելը, անոնց ստացուածքներուն աչք տնկելը» եւլն., զայրացան այդ խօսքերուն վրայ եւ ըսին. «Եթէ չյափշտակենք, աւարառութիւն չընենք, ուրիշին ունեցածը չառնենք, ի՞նչպէս պիտի ապրեցնենք այսքան անթիւ զօրքի բազմութիւնը»: Թէեւ Գրիգորիս կը ջանար «բիւրաւոր բարի խօսքերով» զանոնք սիրաշահիլ եւ համոզել խաղաղ աշխատանքին համար, բայց «անոնք չուզեցին աւելին լսել» եւ ըսին իրարու. «Այս մարդը իր այս խօսքերով կ'ուզէ զմեզ զրկել մեր քաջութենէ... Եթէ լսենք ասոր եւ Քրիստոսեայ դառնանք, ի՞նչով պիտի ապրինք. ձի անգամ պիտի չկրնանք հեծնել ըստ մեր բնական սովորութեան»: Ու եզրակացուցին, որ ասիկա Հայոց Թագաւորին խաղն է, որպէսզի «այս վարդապետութեամբ առաջն առնէ մեր ասպատակութիւններուն», զորս սովոր էին կատարել անոնք իրենց անմիջական դրացնութեան մէջ եղող Հայոց աշխարհի վրայ:

Ուստի որոշեցին մէջտեղէն վերցնել երանելի քարոզիչը: Բռնեցին ամեհի ձի մը, կապեցին Գրիգորիսը չուանով մը անոր պոչէն եւ թող

տուհին զայն Կասպից ծովու եզերքի Վատնեան կոչուած դաշտը եւ այսպէս նահատակեցին Քրիստոսի առաքիւնի քարոզիչը: Անոր ընկերացողները վերցուցին անոր նշխարները եւ բերին Ամարաս կոչուած գիւղը եւ այնտեղի եկեղեցիին մէջ դրին: Ու կ'եզրակացնէ պատմիչը. «Տարուէ տարի այդ շրջանի ժողովուրդը կուգայ անոր տօնին օրը եւ անոր քաջութեան յիշատակը կը կատարէ» (Բիւզանդ, գլ. Զ. էջ 15): Այսպէս չարաչար նահատակուեցաւ երանելին Գրիգորիս 337ին, երբ դեռ հազիւ քառասուն տարեկան էր:

Իր գերեզմանը մինչեւ այսօր պահուած է Ղարաբաղի Ամարաս գիւղը իր անունը կրող եկեղեցիի մէջ:

Երկիցս կը տօնուի ան. նախ ՈՐԴԻՈՑ եւ ԹՈՒԱՆՑ հետ եւ ապա ի յիշատակ իր նշխարաց գիւտին, որ կը կատարուի Խաչի Ե Կիրակիի յաջորդ Բշ. ուրիշ 12 Հայ ճգնաւորներուն հետ:

«Որդւոց եւ Թո՞ռանց» «Մանկունք» շարականի իրեն վերաբերեալ տունն է հետեւեալը.

«Դասակցեալ անմարմնոցն մաքուր կուսութեամբ,
Ճշմարիտ քահանայապետ եւ վկայ Քրիստոսի, Ս. Գրիգորիս,
Անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց»:

Թարգմանութիւն.

Մաքուր Կուսութեամբ անմարմին Հրեշտակներուն հետ
դասուեցար,
Ճշմարիտ քահանայապետ եւ Քրիստոսի վկայ, Ս. Գրիգորիս,
Անդադար բարեխօսէ մեր անձերուն համար:

Սկզբնական աղբիւր. ՓԱԻՍՏՈՍ ԲԻԻՋԱՆԴ, ըստ վերնոյն. իր մասին տեսնել ցանկի «Գրիգորիս» անուան տակ: [«Վկայութիւն սուրբ Հայրապետացն Հայոց...» «The Epic Histories...». Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի: Քննական բնագիրը եւ ներածութիւնը Վարագ Առաքելեանի: Երեւան, 1983, էջ 36-49]:

Կրտսերը Վրթանէսի երկուորեակներուն, զոր գրեթէ բռնի ամուսնացնել տուած էին Տիրան թագաւորի աղջկան կամ քրոջ հետ: Ըստ Պատմիչի վկայութեան՝ առագաստ մտած գիշերը երազ տեսաւ, որ թէեւ պիտի ունենար երկուորեակ զաւակներ, «որոնք սակայն հաճոյ պիտի չըլլային Աստուծոյ» եւ եկեղեցական ասպարէզ պիտի չմտնէին, որուն համար Յուսիկ զղջաց ամուսնացած ըլլալուն: «Կուլար եւ կ'աղաչէր Աստուծոյ եւ կ'ապաշխարէր մեծ տառապանքներով»: Անկէ յետոյ ինքզինքը հեռու պահեց իր կնոջմէ եւ ինքզինքը տուաւ ամբողջութեամբ հոգեւորական կեանքին՝ «նման հայրերուն եւ իր եղբօր Գրիգորիսի»: Ատեն մը վերջ մեռաւ իր կինը, ինչ որ ազատեց զինքը դժուար կացութենէ մը: Սակայն չազատուեցաւ այն ցաւէն ու մտահոգութենէն, թէ իր զաւակները եկեղեցական ասպարէզ պիտի չմտնէին, քանի որ ինք համակերպած էր ամուսնանալու, պարզապէս սերունդ ունենալու եւ շարունակելու քահանայապետական պաշտօնը, որ այլեւս կերպով մը ժառանգական դարձած էր իրենց գերդաստանի վրայ, նման Հին Ուխտի Ահարոնեան քահանայապետութեան: Աստուած սակայն երկրորդ տեսիլքով մը զինք մխիթարեց, որ անոնցմէ մէկէն բարի զաւակ մը պիտի ծնանէր, եւ անկէ ալ ուրիշ զաւակ մը, որոնք նոր լուսաւորութեան պատճառ պիտի ըլլային իբրեւ «աղբիւրներ հոգեւոր իմաստութեան Հայաստան աշխարհի...», որոնք եկեղեցիի սիւներ պիտի ըլլային եւ մատակարարներ՝ Կենաց Բանին»: Ակնարկութիւնը ապագայ Մեծն Ներսէս եւ Սահակ Պարթեւ Հայրապետներուն էր, որուն վրայ «Յուսիկ մեծ մխիթարութեամբ Աստուծոյ գոհութիւն կը մատուցանէր, որ արժանի ըրաւ զինքը այսպիսի յայտնութեան եւ պատասխանին» (Բիւզանդ, գլ. Ե. էջ 11-13):

Յուսիկ, մատաղ տարիքին ամուսնացած ըլլալուն համար, եկեղեցական կարգ չէր ստացած: Ուստի երբ իր հայրը վախճանեցաւ եւ բնականօրէն հայրապետական պաշտօնը իրեն վիճակուեցաւ 341ին, երբ 40-45 տարեկան էր, օրուան Հայոց թագաւորը եւ իր խնամին Տիրան Կեսարիա զրկեց զայն ձեռնադրութեան համար մեծամեծ նախարարներով, որոնցմէ 13ին անունները եւ տոհմանունները կը յիշէ Պատմիչը (Բիւզանդ, գլ. ԺԲ. էջ 29), արքունական կառքերով:

«Եւ նստեցուցին Յուսիկը Թաղէտսի Առաքելական Աթոռը եւ իր մեծ Հօր Մեծն Գրիգորի Աթոռը»: Տիրան Թագաւոր մինչեւ Արտաշատ քաղաքը ընդ առաջ գնաց նոր ձեռնագրեալ Հայրապետին:

Գատմիչը Հետեւեալ վկայութիւնը ունի Յուսիկի ներքին կեանքի մասին.

«Յուսիկ իր Հօր՝ Վրթանէսէն յետոյ յաջորդեց Առաքելական աթոռին. ինքն որ Հօրը Համանման զաւակ եղաւ, ամբողջութեամբ եւ ամէն բանի մէջ Հրեշտակակրօն կենցաղ կը յայտնաբերէր. ամէն ինչ Աստուծոյ պարգեւներուն եւ շնորհաց Համաձայն կը կատարէր: Քրիստոսի բանաւոր Հօտը Հովուելով, աւետարանական պատգամներով կը խրատէր ամենքը: Թէեւ երիտասարդ, բայց տարիքով առոյգ էր ու բարձր Հասակով, դէմքի գեղեցկութեամբ սքանչելի եւ չքնաղ, ուստի իրեն նմանը չկար երկրի վրայ: Սուրբ ու պայծառ էր Հոգիով, երկրաւոր (աստեւոր) բաներով երբեք չէր զբաղուէր. իբրեւ Քրիստոսի քաջ սպառազէնը, դէմ կը դնէր եւ աներեւոյթ Թշնամիին վրայ յաղթանակ տանելով կը սպառնար: Մարդոց ակնառութիւն կամ աչառութիւն ընել չէր գիտեր երբեք: Այլ Ս. Հոգիին խօսքը իբրեւ սուր կը գործածէր իր մէջքին: Իսկ շնորհատուր Հոգին լեցուցած էր զայն գիտութեամբ, որ աղբւրի պէս կը Հոսէր բոլոր լսողներու ականջներուն եւ սիրտերուն մէջ»:

Հակառակ այս բոլորին, Տիրան Թագաւորը եւ միւս մեծամեծ իշխանները, եւ ասոնց վատ օրինակէն վարակուելով «ամբողջ երկիրը», Աստուծոյ կամքին Համաձայն չէին ապրեք. սպանութիւններ եւ արդար արիւն թափելը «եւ ուրիշ բազմաթիւ մեղքեր» սովորական երեւոյթներ էին: Այս բոլորին դէմ Յուսիկ «չարունակ վարժ ու Համեստ խօսքերով եւ քրիստոնէական յորդորներով կը յանդիմանէր, կը խրատէր ու կը կշտամբէր զանոնք՝ յիշեցնելով անոնց անմար կրակով իրենց յաւիտենական դատապարտութիւնը»: Այնքան լեցուած էր Յուսիկ Տիրոջ երկիւղով, որ Թագաւորին սէրը կամ երկիւղը ոչինչ կը Համարէր: Ընդհակառակը՝ լեցուած Աստուծոյ գիտութեամբ եւ Ս. Գրոց «Դպրութեամբ» կը պատուհասէր ու կը յանդիմանէր զանոնք, մինչեւ իսկ արգիլելով անոնց մուտքը եկեղեցի: «Մեծամեծ պատժական կապանքներ կը դնէր, քահանայական իշխանութեամբ կը

յանդիմանէր զանոնք իրենց անօրէնութեան, պոռնկութեան, արուագիտութեան, արիւնահեղութեան, զրկողութեան, յափշտակութեան, աղքատները ատելունն եւ այլ բազմաթիւ նման մեղքերուն Համար» (Բիւզանդ. գլ. ԺԲ. էջ 31):

Այս սաստերուն Համար Թագաւորը եւ մեծամեծները Թշնամացած էին կորովի Կաթողիկոսին Հետ: Այնպէս որ՝ երբ օր մը Տիրան Թագաւոր իր աւագանիով կը փորձէ եկեղեցի մը մտնել, Յուսիկ, որ պաշտամունք կը մատուցանէր այնտեղ, Համարձակօրէն անոնց դէմ կ'ելլէ եւ Թագաւորին ուղղելով իր խօսքը՝ կ'ըսէ. «Արժան չես, ինչո՞ւ կուգաս, ներս մի մտնե՛ր»: Տիրանին բարկութեան բաժակը յորդեցաւ տեղւոյն վրայ եւ Հրամայեց իր Հետեւորդներուն եկեղեցիին մէջ «բրածեծ ընել զայն, Զախջախելով Աստուծոյ Սուրբ Քահանայապետը, եւ կիսամահ վիճակի կը մատնեն զայն»: Դէպքը պատահեցաւ Մոփաց գաւառի Բնաբեղ բերդին մէջ: Եկեղեցւոյ պաշտօնեաները վերցուցին կիսամահ Հայրապետը եւ բերին Քորդան գիւղը, իր Հօրենական կալուածը, ուր կարճ ժամանակ յետոյ կը վախճանի երանելի Հայրապետը Հազիւ 6 տարի պատշտօնավարելէ յետոյ եւ կը Թաղուի իր Հօր եւ մեծ Հօր կողքին:

Մահուան ձեւը նոյն պահելով Հանդերձ, Խորենացիին այն տեսակէտը, թէ Յուլիանոս կայսեր պատկերը Զախջախած ըլլալուն Համար բրածեծ եղաւ Յուսիկ, չդիմանար ժամանակագրութեան, քանի որ Յուլիանոս Ուրացոյ կայսր եղաւ 360-363, մինչ Յուսիկ Հայրապետը վախճանած կը նկատուի 350-էն առաջ:

«Որդւոց եւ Թոռանց» շարականաց կանոնի «Մանկունք» շարականի մէջ Յուսիկին վերապահեալ տունին մէջի ակնարկութիւնը Խորենացիի կողմէ պատմուած աւանդութեան կը վերաբերի:

Գովեալդ ի վկայս Հօրըն մեծի Համանման,

Քաջութեամբ զանօրինաց խորտակեալ զպատկերն, Տէր Ա. Յուսիկ,

Անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց:

Թարգմանութիւն.

Վկաներու մէջ գովեալ ես դուն յարեւմտան մեծ Հօրդ,

Քաջուկեամբ՝ անօրէններու պատկերը խորտակեցիր, Տէր Ա.
Յուսիկ,

Անդադար բարեխօսէ մեր անձերուն համար:

Սկզբնադիրք. ՓԱՒՍՏՈՍ ԲԻԻԶԱՆԴ, Վենետիկ. 1832. էջ 29-32:
[«Վկայութիւն սուրբ Հայրապետացն Հայոց...»]:

6. ԴԱՆԻԷԼ ԱՍՈՐԻ ՔՈՐԵՊԻՍՎՈՊՈՍ 347

Հայացած եւ Հայոց մէջ գործող Ասորի մը, որ հոգեւոր զաւակը կը նկատուի Ս. Լուսաւորչին եւ որ նահատակուեցաւ Հայ եկեղեցւոյ եւ Հայոց Հայրապետութեան պաշտպան եւ ախոյեան հանդիսացած ըլլալուն համար՝ Հայ Թագաւորի մը ձեռամբ: Փաւստոս Բիւզանդ երկար գլուխ մը յատկացուցած է անոր (ԺԴ): Աշակերտած է Ս. Գրիգորին, որմէ ձեռնադրուած էր իբրեւ Քորեպիսկոպոս, այսինքն՝ գիւղի եպիսկոպոս. ուրիշ եպիսկոպոսի մը իշխանութեան ներքեւ: Կոչուած է «այր սքանչելի», եւ վերակացու կարգուած էր Տարօն նահանգի եկեղեցիներուն: Փաւստոս Բիւզանդ պատմիչը անոր կը վերագրէ նաեւ «գործակալութիւն մեծի դատաւարութեան»: Խորենացիի մօտ «Հիւպերէտ» կոչուած՝ զոր Օրմանեան կը մեկնաբանէ իբրեւ «Մատակարարական տեսչութիւն Գրիգորի ազգատոհմին կամ Հայրապետական աթոռին կալուածներուն վրայ, որուն գլխաւորն էր Տարօնի Աշտիշատը, որ Դանիէլի գործունէութեան ալ կեդրոնն էր» (Ազգ. հատ. 107): Սակայն Բիւզանդի մօտ աւելի ընդարձակ է այս պաշտօնին տարողութիւնը իբրեւ «վերակացու եւ հրամանատար տեսուչ եւ հոգաբարձու ԱՄԵՆԱՅՆ ԵԿԵՂԵՑՆԱՅՆ Հայոց Մեծաց ընդ ամենայն տեղիս» (գլ. ԺԴ. էջ 36): Նոյն այս վերջին աղբիւրը իրեն կը վերագրէ նաեւ առաքելական ու աւետարանչական գործունէութիւն. «Պարսից կողմերը, օտար տեղեր քարոզեց ան ու անթիւ մարդիկ մոլորութենէ դարձուց» ճշմարիտ աստուածապաշտութեան: «Հաւատարիմ» էր, կ'ըսէ Բիւզանդ, ոչ միայն իր պաշտօնին մէջ, այլ նաեւ «իշխանութեան Աթոռոյն հայրապետացն եւ հաստատութեան ուխտին Կաթողիկէ եկեղեցւոյ» Հայոց:

Իրեն կը վերագրուի, աւետարանական քարոզչութեան կողքին՝ նաեւ հրաշագործութիւններ. «Եւ սքանչելի մարդ մըն էր ան, որ

հրաշքներ եւ մեծամեծ զօրաւոր գործեր կը կատարէր մեր Տէր Յիսուս Քրիստոսի անունով»: Տաքը կամ պաղը, հեռաւորութիւնը եւ մօտաւորութիւնը տարբերութիւն չունէին իրեն համար, քանի որ ձմեռ ատեն «յանկարծ ձիւնը կը հալէր իր առջեւ»: Իսկ ճամբորդութեան ատեն «փայլակի պէս կը սլանար եւ թռչունի պէս յանկարծօրէն կը հասնէր իր երթալիք տեղերը: Մեռելներ կը յարուցանէր, հիւանդներ կը բժշկէր, եւ այնքան շատ մեծամեծ հրաշքներ ու զօրաւոր գործեր կը կատարէր, որ կարելի չէ գիրով նշանակել»:

Հակառակ անմարդաբնակ տեղեր ապրելուն, ճգնաւորական կեանքով, մարդոց կարիքներուն եւ հոգածութեան մէջ անտարբեր չէր: Հանդերձով պարզ էր, զաւազան անգամ չէր գործածէր: Իսկ կերակուրը «բանջարի արմատներ էին»: Եւ Աստուծոյ մօտ իր խօսքը շատ զօրաւոր էր. ինչ որ կը խնդրէր՝ կը ստանար զայն, եւ ինչ որ ըսէր, կ'ըլլար այդ»: Իրեն աշակերտած են չորս նշանաւոր սրբակենցաղ ճգնաւորներ, որոնց յատուկ մանր գլուխներ յատկացուած են Փաւստոս Բիւզանդի գործին մէջ: ՇԱՂԻՏԱ, «որուն հետ կը շրջէին աւելի քան 20 առիւծներ... շատ մը հիւանդներ բժշկած է» (Բիւզ. էջ 219-20): ԵՊԻՓԱՆ «շատերը հեթանոսութենէ քրիստոնէութեան կը դարձնէր... Մոփաց երկրին լոյսն էր»: ԱՐՏԻԹ Եպս. Բասենայ՝ սրբութեամբ եւ Ս. Հոգևով լեցուած անձ մը, որ «մեծ զօրութեամբ կը շրջէր եւ մեծամեծ հրաշքներ կը գործէր» (անդ. էջ 265): ԳԻՆԴ ՏԱՐՕՆԵՑԻ՝ առաքինի մարդ մը, որ գլխաւորն էր իր ժամանակի Հայոց բոլոր անապատական արեղաներուն եւ «վարդապետ միանձանց», այսինքն՝ վերակացու Հայոց վանքերու եւ ուսուցիչ բոլոր վանականներու (անդ. էջ 271. վերջին գլուխ):

Յուսիկի մահէն յետոյ պէտք էր նոր Կաթողիկոս մը նշանակել: Յուսիկի որդիները զինուորական ու աշխարհիկ կեանք ընտրած էին եւ չէին կամենար եկեղեցական ըլլալ: Ուստի ամենքի ուշադրութիւնը կեդրոնացաւ Դանիէլի վրայ՝ իբրեւ առաքինի եւ ուսեալ անձ, մանաւանդ իբրեւ հոգեւոր ժառանգորդը Լուսաւորչին: Մարդ զրկեցին թիւ աւանը, ուր կը գտնուէր այդ միջոցին, եւ բերին զայն Տիրանի առջեւ: Պատկառելի ձերուսին, որ գիտէր, թէ ինչու հրաւիրուած էր, նախ քան Թագաւորին խօսիլը ինք բերանը բացաւ եւ ամենախիստ կերպով յանդիմանեց զայն եւ բոլոր ներկաները: Բիւզանդ աւելի քան

երեք էջեր կը յատկացնէ այս մարգարէական յանդիմանութեան.

«Ինչո՞ւ մոռցաք դուք ձեր Արարիչ Աստուածը, ձեր հանդէպ Անոր ունեցած գութը եւ սքանչելիքները. դուք վերստին դարձաք ձեր նախնիքներու կռապաշտութեան մոլորութեան եւ ձեր անձերը տուիք ատելութեանց, ազահութեանց, աղքատներու զրկողութեանց, պոռակութեանց, նենգութեանց եւ իրար զրկելու եւ սպաննութեանց...»:

Դուք նմանեցաք Հրէից ազգին, որոնք ոչ միայն չլսեցին իրենց զրկուած առաքեալներուն եւ մարգարէներուն, այլ սպաննեցին զանոնք: Դուք ալ նոյնը ըրիք...»:

Ապա կը մարգարէանայ.

«Տէրը պիտի վերցնէ ձեր թագաւորութիւնը եւ քահանայապետութիւնը, եւ պիտի ցրուիք ու բաժնուիք աշխարհի ամէն կողմերը Իսրայէլի պէս, անտէր ու անխնամ պիտի մնաք նման ոչխարներու, որոնք հովիւ չունին...»:

Ու կ'եզրակացնէ արդար ծերունին.

«Զիս կանչեր էք, որ գլուխ եւ առաջնորդ ըլլամ ձեզի: Ի՞նչպէս կրնամ առաջնորդ ըլլալ անոնց, որոնք Տիրոջ չեն դառնար. կամ ի՞նչպէս կրնամ գլուխ ըլլալ ազգի մը, զոր Տէրը ձեռքէ թողուց, կամ ի՞նչպէս կրնամ բարձրացնել ձեռքերս առ Աստուած աղօթելու անոնց համար, որոնց ձեռքերը շաղախուած են իրենց սուրբ տէրերուն արիւնով...»:

Նախ «զարմացեալ» եւ լուութեամբ մտիկ ըրաւ թագաւորը: Ապա բարկութեան նոպայի բռնուած հրամայեց «խեղզամահ» ընել զայն: Անոր հետեւորդները եւ աշակերտները վերցուցին երանելի նահատակին անշնչացեալ մարմինը եւ տարին թաղեցին «Հացեաց Դրախտ» կոչուած տեղը, որ միաժամանակ իր ճգնութեան գլխաւոր վայրն էր, եւ ուր կը գտնուէր դեռ մինչեւ վերջերս Ս. Դանիէլի վանքը, որուն մէջ էր սուրբին գերեզմանը:

Տօնելի է Որդուց եւ Թոռանց հետ, որոնց ընծայեալ «Մանկուռ» շարականի վերջին տունը իրեն յատկացեալ է:

Երկնայնոցն ի յերկրի հաղորդ ճգնութեամբ.

Յանդիմանելով զթագաւորն՝ կատարեցար վասն անուան Տեառն, Ս. Դանիէլ,

Անդադար բարեխօսեա վասն անձանց մերոց:

Թարգմանութիւն.

Ճգնութեամբը երկնայիններուն հաղորդ եղար երկրի վրայ.

Յանդիմանելով թագաւորը՝ նահատակուեցար Տիրոջ Անուան համար, Ս. Դանիէլ,

Անդադար բարեխօսէ մեր անձերուն համար:

Սկզբնաղբիւր. ՓԱԽՍՏՈՍ ԲԻԻԶԱՆԴ: Վենետիկ, 1832, էջք 36-42: [«Վկայութիւն սուրբ Հայրապետացն Հայոց...»]:

7. ՄԵԾԸ ՆԵՐՍԷՍ ՀԱԹՐԱՊԵՏ 330-373

Թոռն է Յուսիկ Հայրապետի, զաւակն ըլլալով անոր երկուորեակ որդիներէն Աթանազիւնէի, որ իր եղբոր հետ եկեղեցական ասպարէզ չուղեցին մտնել, անառակ կեանք ունեցան, ի վերջոյ շանթահար մահացան միասին: Ներսէս Լուսաւորչի սերունդէն միակ Հայրապետն է, որ ծնաւ Հայաստան, միւսները ամենքն ալ ծնան Կեսարիա: Իսկ ինք իր կրթութիւնը միայն ստացաւ այս քաղաքին մէջ: Կանուխ տարիքէն ամուսնացած էր Մամիկոնեանց տունէն Սանդուխտ ազնուագարմ օրիորդին հետ, որմէ ունեցաւ միակ մանչ զաւակ մը, որ պիտի ըլլար ապագայ Սահակ Հայրապետը: Իրենց միակ զաւակի ծնունդէն յետոյ երկար չապրեցաւ մայրը եւ մեռաւ Կեսարիոյ մէջ. հարսին հայրը եւ ներսէս բերին եւ թաղեցին զայն Թիլ աւանը, որ Լուսաւորչի գերդաստանին կալուածն էր, եւ ուր թաղուած էր նաեւ Արիստակէս Հայրապետը: Իսկ ներսէս շարունակեց իր ուսմունքը Կեսարիոյ մէջ, ուր իրեն դասընկեր ունեցաւ Կապադովկեան եկեղեցական Մեծ Հայրերը՝ Գրիգոր Նազիանզացի, Բարսեղ Կեսարացի եւ Գրիգոր Նիւսացի, որոնք ծնած էին 328, 329, 330 թուականներուն եւ հետեւաբար տարեկից էին իրեն: Ուսմունքը աւարտելէն յետոյ վերադարձաւ Հայաստան ու Հայոց արքունիքին մէջ բարձր պաշտօնի կան-

չուեցաւ Արշակ Բ Թագաւորին կողմէ, որ իր մօրեղբայրն էր:

Յուսիկի յաջորդ եւ Լուսաւորչի տունէն դուրս ընտրուած Փառէն Կաթողիկոսի վարձանուծէն յետոյ անհրաժեշտութիւն ծագած էր նոր Կաթողիկոսի ընտրութեան: Ամենքի փափաքն էր Լուսաւորչի տունէն ունենալ նոր Կաթողիկոսը, ուստի ամենքի նախընտրութիւնը կեդրոնացաւ Ներսէսի վրայ, որ Հակառակ իր կամքին՝ Արշակ Թագաւորի ազդու միջամտութեամբ ընտրուեցաւ Հայոց Կաթողիկոս 353ին, երբ դեռ Հազիւ քսանհինգ տարեկան գրեթէ երիտասարդ անձնաւորութիւն մըն էր: Փաւստոս Բիւզանդ, որ շատ ընդարձակ կը խօսի Ներսէսի կեանքին եւ գործունէութեան մասին, այս կէտին կը ներկայացնէ Ներսէսի նկարագիրը, զոր կուտանք ստորեւ Թարգմանաբար:

Նախ անոր Ֆիզիքական նկարագրութիւնը.

«Մեծանձնեայ մարդ մըն էր Ներսէս, բարձր եւ ցանկալի Հասակով, վայելուչ գեղեցկութեամբ, որուն նմանը կարելի չէր գտնել երկրին մէջ: Զինուորական կրթութեամբ նախանձելի էր ամենքին իր արիութեամբ»:

Ապա կը տրուի անոր բարոյական նկարագիրը, որ նոյնքան եւ աւելի գերազանց է.

«Երկիւղած էր Աստուծմէ, աւանդապաՀ Անոր պատուիրաններուն, մարդասէր, սուրբ, զգաստ, իմաստուն եւ անաչառ: Հաշտարար էր բարքով, խոնարհ, քաղցր եւ աղքատասէր:

Աստուծոյ սիրոյն մէջ՝ կատարեալ: Ըստ պատուիրանին՝ կը սիրէր ընկերը անձին պէս... Իր մանկութենէն իսկ կը պահէր պատուիրանները: Արդար էր; անարատ եւ ծառայասէր: Անձանձրոյթ էր աղօթքի մէջ եւ նախանձախնդիր՝ Աստուծոյ փառքին: Կ'եռար Սուրբ Հոգիով: Մէկ խօսքով՝ կատարեալ էր ամէն բանի մէջ: Աղքատները, տառապեալները շատ կը սիրէր եւ Հոգածու էր անոնց Համար. իր Հանդերձներէն եւ կերակուրէն բաժին կը Հանէր անոնց: Նեղեալներու եւ տագնապի մատնուածներու օգնական ու վերակացու էր եւ զրկուածներու իրաւանց պաշտպան» (Բիւզանդ, էջ 69):

Կաթողիկոսական ընտրութեան Համար պալատ Հաւաքուածներուն մէջ Ներսէս կանգնած էր Թագաւորի կողքին, զինուորական իր փայ-

լուն ու փառաւոր տարագով, գեղեցիկ պատմուճանով, «երկայն Հասակով», ազնուականներու յատուկ «չքնադատեալ» երկայն մագերով. բռնած էր արքայական «պողոճատիկ եւ ոսկեպատեան» սուրբ «ականակապ մարգարտազարդ» գօտիով: Ներկաները բարձրաձայն աղաղակեցին. «Ներսէս թող ըլլայ մեր Հովիւր»: Ներսէս աշխատեցաւ խոյս տալ՝ ինքզինքը մեղաւոր եւ անարժան յայտարարելով: Ոչ ոք լուրջի առաւ իր անձին վրայ բեռցուցած մեղադրանքները: Այն ատեն Ներսէս լրջութեամբ ըսաւ.

«Դուք Աստուծոյ օրէնքները չէք պահեր եւ պիղծ գործերու մէջ կը գտնուիք: Ես ձեզի Հովիւ չեմ կրնար ըլլալ, որովհետեւ չեմ կրնար աչառութիւն ընել կամ աչք գոցել ձեր մեղքերուն, ոչ ալ կրնամ Համբերել ձեր չար գործերուն Համար: Պարապ տեղ Հիմա սէր ու Համակրանք ցոյց կուտաք ինձի Հանդէպ. վաղը ատելի եւ թշնամի պիտի նկատէք զիս, ուստի ձգեցէք, որ ես իմ անհատական կեանքս ապրիմ՝ Աստուծոյ դատաստանը միշտ աչքի առաջ ունենալով»:

Այն ատեն Արշակ Թագաւորը, գրեթէ բռնի եւ պարտադրական միջոցներու դիմելով, նախ ձեռքէն առաւ անոր բռնած արքայական սուրբ, որ պաշտօնին խորհրդանշանն էր, եւ Հրամայեց Հանել վրայէն իր արքունական զարդերը եւ պատմուճանը, Հոգեւորականի զգեստ Հագցնել եւ կտրել անոր գանգրագեղ մագերը: Եւ տեղւոյն վրայ սարկաւազ ձեռնադրել տուաւ զայն: Ապա մեծ Հանդէսով ու մեծամեծ նախարարներու ընկերակցութեամբ Կեսարիա գրկեց Ներսէսը Եպիսկոպոս ձեռնագրուելու եւ Հայոց Կաթողիկոս ըլլալու Համար:

Կեսարիայէն վերադարձին Ներսէս անմիջապէս գործի ձեռնարկեց բուռն թափով եւ մեծ եռանդով: Սկսաւ քարոզչական ու Աւետարանչական գործով.

«Սկսեալ վերակացութեան Հովուութեան, անկարօտ (անպակաս) կը մատակարարէր օգտակար բառերը՝ Հոգեւոր սնունդ Չամբելով ամենքին: Եւ խօսքի քարոզութեամբ ամենքը Հաւատքի կը բերէր...: Գիշեր-ցերեկ չէր դադրէր խրատելէ եւ քարոզելէ իբրեւ բազմագութ Հայր եւ իբրեւ գթած մայր...: Ապաշխարութեամբ կը Հաստատէր թերահաւատները, կը մխիթարէր Հաւատացեալները, չարախօսները կ'ըմբերանէր, ճշմարտութեան Հա-

մար մինչև վերջը կը մարտնչէր, արդարութեան հետամուտ եղողները կը քաջալերէր, իր ուսուցման անձրեւով կը պարարէր, անուցանէր ամբողջ Հայոց աշխարհը: Նախ ինք կը գործադրէր Աստուծոյ պատուիրանները եւ ապա ամենքին կը սորվեցնէր զանոնք...: Թաղէական Աթոռը կրկին լեցուեցաւ իր հայրերուն նմանող սրբիով մը»:

Ապա ձեռնարկեց բարեկարգական աշխատանքներու:

Նախ իր գերդաստանի կալուածը եղող եւ հինէն ի վեր կարեւոր կրօնական կեդրոն ճանչուած Աշտիշատի մէջ ժողովի հրաւիրեց Հայոց աշխարհի բոլոր եպիսկոպոսները: Այնտեղ Ներսէս պարգեց ամենքին իր ապագայ շինարարական ու բարեկարգական ծրագիրները: Օրինակ, Աղքատանոցներ հաստատելու երկրին ամէն կողմերը, որպէսզի աղքատները ազատուէին մուրացկանութենէ, հիւանդանոցներ կառուցանելու՝ կարօտ եւ թշուառ հիւանդներուն համար: Մանաւանդ՝ ընկերութենէն վտարուած բորոտներու եւ այլ փոխանցիկ հիւանդութիւններով վարակուած խեղճերու համար ուրկանոցներ շինելու: Ծամբորդներու համար կայարաններ հաստատելու եւ այլն: Այս բոլոր բարեսիրական հաստատութեանց համար ամենքի աջակցութիւնը պահանջեց եւ զանոնք կանգուն պահելու համար անհրաժեշտ նկատեց օժտելու զանոնք եկամտաբեր կալուածներով, գիւղերով ու ագարակներով:

Պարգեց նաեւ իր ծրագիրները եկեղեցականաց կենցաղը աւելի կանոնաւորելու եւ բարեկարգելու օրինակ՝ կուսակրօններուն համար եղբայրանոցներ կամ վանքեր հաստատելու անհրաժեշտութիւնը, որպէսզի անոնք հեռու պահուէին աշխարհիկ կեանքէ, մենակեացներու համար՝ հիւղախումբեր, եպիսկոպոսներու համար՝ յատուկ կեդրոններ կամ առաջնորդարաններ:

Այս ժողովին մէջ, միշտ Ներսէսի թելադրանքով, սահմանեցին նաեւ բարեկարգական կանոններ ամուսնութեան վերաբերեալ՝ արգելելով մերձաւոր ազգականներու ամուսնութիւնը, մանաւանդ խիստ օրէնքներ դնելով շնութեանց, պոռնկութեանց եւ ամէն տեսակ սեռային ախտերու դէմ, ինչպէս նաեւ գողութեանց, յափշտակութեանց եւ ամէն տեսակ զրկողութեանց դէմ: Արգելեցին հեթանոսական սուգի բարբարոս սովորութիւնները ննջեցնելներու վրայ, կամ յուզարկաւոր

ութեանց ընթացքին:

Կանոններ սահմանեցին նաեւ, որ բոլոր իշխանաւորներ եւ մեծաւորներ գութ եւ կարեկցութիւն ունենան իրենց ստորադասներու հանդէպ. մարդավայել վերաբերմունք ունենան անոնց նկատմամբ եւ չափազանց տուրքերով չնեղեն զանոնք:

Ներսէս մեծագոյն եռանդով նուիրուեցաւ այս բարեկարգութեանց իրագործումին եւ տարածումին երկրի ամէն կողմերը: Այս բոլոր բարեսիրական հաստատութեանց վրայ ընդհանուր հսկիչ կարգեց իր վստահութիւնը վայելող եւ իր ոգիով սոգորուած Խաղ Աւագ Սարկաւազը: Բարեսէր Հայրապետը իր հոգածութիւնը կը տարածէր ամենքի վրայ անխտիր՝ «մեծերուն եւ մանուկներուն, մեծայարգներուն եւ անարգներուն, հարուստին եւ աղքատին, ազատին եւ շինականին»: Իրմէ առաջուան Հայրապետները բնականօրէն աւելի հաւատքի քարոզիչ ու տարածիչ եղած էին. Ներսէս, այդ կողմը չանտեսելով հանդերձ, ինչպէս տեսանք, շեշտը դրած էր գործնական ու ընկերային բարեկարգութեան վրայ: Այն աստիճան նուիրեալ բարեկարգիչ եղաւ Ներսէս, որ իր պատմիչի բառերով «Հայաստան աշխարհի մէջ իրեն նման ոչ ոք եղաւ»: (Բիւզ. Դ. դպրութիւն, Գ. գլուխ):

Զարկ տուաւ ուսմունքի եւ կրթութեան: Դպրոցներ բացաւ ասորերէն եւ յունարէն լեզուներով, քանի որ դեռ Հայկական դպրութիւն գոյութիւն չունէր: Այս դպրոցներու աշակերտները Ս. Գիրքը կը կարդային վերոյիշեալ լեզուներով, ապա միաժամանակ հայերէնի կը վերածէին՝ ուղղակի գրուածքին վրայէն թարգմանելով: Այսպէս յառաջ եկան եկեղեցիի մէջ «վերծանող» եւ «թարգմանող» պաշտօնեաներու կարգերը:

Այս դպրոցներէն հասած աշակերտներու մէջ էին իր որդին՝ Սահակը, եւ վստահելին Մեսրոպը, որոնք Հայ գիրին գտիչները եւ Հայ դպրութեան նախահայրերը պիտի ըլլային:

Ուրեմն՝ Ներսէսի պաշտօնավարութեան սկզբնական շրջանը խաղաղութիւն եւ նորոգութիւն եղած էր: Եկեղեցիներ պայծառացան ու ընդհանուր նոր հոգեւոր կեանքի վերազարթում մը զգալի դարձաւ երկրի ամէն կողմերը: Օրուան թագաւորին հետ իր յարաբերութիւնները լաւ էին սկիզբէն, սակայն ատեն մը յետոյ Արշակ փոխեց իր ընթացքը եւ աններելի ոճիրներով եւ անիրաւութիւններով իր կեանքը ա-

դարտեց, եւ սկսաւ կարեւորութիւն չտալ Հայրապետի յորդորներուն: Որուն Հետեւանքով Ներսէս ատեն մը քաշուեցաւ պալատի գործէն ու քաղաքական կեանքէն եւ զուտ կրօնական գործերով զբաղեցաւ: Այս շրջանին Պարսիկներ սաստկացուցին իրենց արշաւանքները դէպի Հայաստան, Հայ բանակը, սպարապետութեամբ Վասակ Մամիկոնեանի, շատ յաջող դիմադրութիւն ցոյց տուաւ սկիզբները: Ի վերջոյ՝ Պարսից Շապուհ Թագաւորը նենգութեամբ իր մօտ կանչեց Արշակը, իբր թէ Հաշտութեան Համար, բանտարկեց զայն, ուր անձնասպան եղաւ Արշակ, որուն տեղ ի վերջոյ Թագաւորեց որդին՝ Պապ: Այս վերջինս ատեն մը անսաց Ներսէսի առաջնորդութեան եւ խրատներուն: Այս գործակցութեան արդիւնքը եղաւ Զիրաւի ճակատամարտին մէջ Հայոց բանակի տարած փառաւոր յաղթանակը ընդդէմ պարսից, երբ Ներսէս մօտակայ Նպատ լեռան վրայ բազկատարած կ'աղօթէր Հայոց բանակի յաղթութեան Համար:

Երբ երկիրը խաղաղութիւն դտաւ, Պապն ալ ինքզինքը տուաւ զեղիս եւ անառակ կեանքի: Ներսէս ի զուր կը խրատէր զայն, մինչեւ իսկ «կշտամբալ յանդիմանէր» զայն: Երբ տեսաւ, որ կը շարունակէ անուղղայ մնալ, արգիլեց անոր մուտքը եկեղեցիէ ներս, որուն պատճառաւ Պապ թշնամացաւ Ներսէսին Հետ եւ անոր մահուան պատճառ գարձաւ ուղղակի կամ անուղղակի կերպով: Ըստ սկզբնագիր աղբիւրներու Պապ թունաւորեց Ներսէսը: Սակայն Օրմանեան Պատրիարք Հաւանական չի նկատեր ասիկա, «այդ պատմութեան մէջ շատ մը իրարու անյարիր պարագաներ» տեսնելով. եւ կ'ենթադրէ, որ Ներսէս արգէն իսկ ունէր «Սիրտի կամ թոքերու անբուժելի» Հիւանդութիւն մը, «Ինչ որ իր գործելու ոճէն ու թափէն ալ կը մակաբերուի» (Ազգ. էջ 219): Հետեւաբար յոգնութիւններ, յուզումներ, յատկապէս Պապի անսրբագրելի անառակութիւնները, պատճառ եղան սրտի վերահաս տագնապի մը, որ վերագրուեցաւ թունաւորման: Ներսէսի մահը տեղի ունեցաւ 373ին, երբ դեռ Հազիւ 45 տարեկան էր, եւ թաղուեցաւ Թիլ աւանը, ուր թաղուած էր բացի Արիստակէս Հայրապետէն նաեւ իր վաղամեռիկ կողակիցը՝ Սանդուխտ: Այս երկու Հայրապետներու գերեզմանները իր մէջ պարունակող վանքը, Երզնկայի մօտ, ժամանակի ընթացքին կոչուեցաւ «Ջուխտակ Հայրապետ»: Թիլի այս եկեղեցին կործանուած է է. դարուն, եւ Ներսէսի գերեզմանը անյայտացած՝ եր-

կար դարեր, մինչեւ որ 1275ին յայտնուած է Պատուական անուն սարկաւագի մը: Նշխարներէն մաս մը փոխադրուած է Երզնկայի եկեղեցին, իսկ մաս մըն ալ գրուած է Տիրաշէնի վանքը, նոյն շրջանի մէջ, որ անկէ յետոյ իր վրայ առած է Ս. Ներսէսի անունը:

Ներսէսի գործունէութիւնը եւ արդիւնքները արժանացուցած են զայն ՄեծՆ անուանակոչութեան, որով կը ճանչցուի պատմութեան մէջ: Իւր գլխաւոր արժանիքը կը կազմեն եկեղեցական, բարոյական եւ քաղաքական բարեկարգիչ ըլլալը եւ Լուսաւորչէն ետքը երկրին կենցաղական կերպարանը փոփոխելը, որով «ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՄՐՏԻԾ» կոչուելու արժանացաւ (Ազգ. էջ 220):

Ներսէսի յիշատակը կը տօնուի Ոսոք Եպիսկոպոսի Հետ, Տօն Կաթողիկէի յաջորդող Շաբաթ օրը: Եիշուած է ան Կաթողիկ Բամայնագիտարանի, Օքսֆորդեան եւ Սրբոց բառարաններու մէջ, ուր իր օտնը նշանակուած է Նոյեմբեր 19ին:

Ներսէս մեր Շարահնոցի մէջ ունի լման «Կանոն» մը, օրհնութեամբ, Հարցով եւ իւր սարօք, գրուած Յովհ. Երզնկացի Վարդապետի կողմէ: Մենք այստեղ կը դնենք «Տէր յերկնից» պատկերին միջին տունը:

Այսօր վերստին նորոգեցաւ քահանայական գաւազան.

Քանզի շնորհեցաւ հովիւըն քաջ բանաւոր հօտի՝

Յարմատոյ Լուսաւորչին բողբոջ բուսեալ Սուրբն
Ներսէս:

Բարեխօսութեամբ սորա, Տէր, Հաստատեա զիշխանութիւն
Հայրապետական աթոռոյ:

Թարգմանութիւն.

Այսօր վերստին նորոգուեցաւ քահանայապետական
գաւազանը.

Որովհետեւ բանաւոր հօտի քաջ հովիւ մը շնորհուեցաւ՝
Լուսաւորչի արմատէն իբրեւ բողբոջ բուսած Սուրբ
Ներսէսը:

Ասոր բարեխօսութեամբ, Տէր, Հաստատէ իշխանութիւն
Հայրապետական աթոռին:

Սկզբնադիր. ՓԱԻՍՏՈՍ ԲԻՒՋԱՆԴ Վենետիկ 1832, էջ 67-95-108-114 եւ այլ տեղեր (տես ցանկին մէջ իր անուան դիմաց նշանակուած էջերը): [*Պատմութիւն սրբոյն Ներսիսի Հայրապետին եւ Խաղայ եպիսկոպոսին*» (տե՛ս Ի. Արուսաձէ, նշւ. աշխ., էջ 69-79)]:

8. ԽԱԴ ԵՊԻՍԿՈՊՈՍ 370

Խաղ Ներսիսի գործակալը եւ գրեթէ անբաժան գործակիցն էր առ Հասարակ աշխարհիկ կամ ընկերային գործերու մէջ, ինչպէս Դանիէլ Ասորին էր Գր. Լուսաւորչին ժամանակ: Կարին գաւառի Մարագայ գիւղէն էր, ձեռնասունը Ներսիսի, զոր «սնուցած էր իր առջեւ»: Միտքով յաջողակ անձ մըն էր եւ յառաջադէմ եղաւ Հաւատքի մէջ, եւ Հաւատարիմ բոլոր գործերու մէջ, որոնք իրեն յանձնուած էին: Յատուկ սէր ունէր Աստուծոյ Եկեղեցիին եւ աղքատաց հանդէպ, անոր համար Ներսիս Հայրապետ Աղքատաց տեսչութիւնը ասոր վստահեցաւ:

Ներսիս երբ հարկադրուած էր հեռանալ Հայաստանէն, Խաղը ձեռնադրեց իբրեւ Եպիսկոպոս Բագրեւանդ նահանգի եւ Արշարունեանց կամ Կամսարականաց նախարարութեան, եւ իրեն փոխանորդ կարգեց. Պատմիչի բառերով՝ «Եթող զսա իւր փոխանակ ԵՏԵՂԱՊԱՀ»: Երբ ամբողջ երկիրը «սուգի եւ տխրութեան մէջ ընկղմած էր իրենց հօտապետ գլխաւորին երկրէն հեռացած ըլլալուն համար, Ա. Խաղ Եպիսկոպոսը առհասարակ ամբողջ երկրին (Հայաստանին) հրահանգ կը հանէր, որ պահեցողութիւն եւ ազօթք ընեն եւ խնդրանք մատուցանեն առ Աստուած, որպէսզի շուտով վերադառնայ Ներսիս»: Որչափ ատեն բացակայ էր Ներսիս, «Խաղը կ'առաջնորդէր» Հայոց ժողովուրդին, «ոչինչ պակաս քան իրենց բուն Հովուապետը՝ Ներսիս»:

Արշակ Թագաւոր իր «մատաղութեան Հասակին» թէեւ Աստուծոյ իմաստութեամբ եւ օրէնքով կ'առաջնորդուէր, բայց երբ «աւագութեան» Հասաւ, շեղեցաւ Աստուծոյ ճանապարհէն եւ ինքզինքը անաւակութեան տուաւ, որուն համար Խաղ շատ անգամ «կը կշտամբէր եւ կը յանդիմանէր Թագաւորը եւ բոլոր մեծամեծները եւ իշխանները», որոնք կամակից էին Արշակին հետ եւ անոր չար ճանապարհին կը հե-

տեւէին: Արշակ փորձեց կաշառել զայն՝ ազատելու համար անոր շարունակական յանդիմանութիւններէն, իսկ Խաղ ստացած նուէրները Թագաւորին ներկայութեան աղքատներուն կը բաժնէր եւ «Իր յանդիմանութիւնը չէր թուցնէր»: Ի վերջոյ Թագաւորը հրամայեց «Հալածել զայն բանակէն», այսինքն՝ արքունիքէն:

Խաղ այն ատեն սկսաւ շրջիլ երկրին ամէն կողմերը, «բարեկարգել եւ խրատել, ուսուցանել եւ դարմանել աղքատները, ինչպէս իրեն յանձնարարած էր Սուրբ Ներսիս...: Շատ մը նշաններ, հրաշքներ, զօրութիւններ եւ բժշկութիւններ կը կատարուէին իր ձեռքով Հիւանդներուն վրայ»: Կը Հաստատէ Փաւստոս պատմիչը, թէ երբ ամէն ինչ կը գործածէր եւ կը բաշխէր աղքատներու, ըլլայ կերակուր, ըլլայ գինի կամ որեւէ ուտելիք կամ խմելիք, յաջորդ օրը կը տեսնէր, որ այդ բոլորը վերստին «չեցուած էին կարասներու մէջ Աստուծոյ հրամանով»: Կ'աւելցնէ ու կ'եզրակացնէ կենսագիր Պատմիչը. «Այս մարդը զարմանալիօրէն անուանի եւ Հոյակապ էր Հայոց մէջ»: Կը շրջէր ամենուրեք, կը խրատէր եւ կ'ուսուցանէր ամէն տեղ իր վարդապետ Ներսիսին պէս:

Իր մասին կը պատմուի միջադէպ մը, որ կը յիշեցնէ եւ աւելի քան 1500 տարիով կը կանխէ Վիքթոր Հիւկոյի «Թշուառներ» գիրքին մէջ յիշուած Միրիէլ Եպիսկոպոսի մեծանձնութիւնը: Օր մը գողեր Խաղ Եպիսկոպոսի եկեղեցիին եզները կը գողնան: Ապա գողերուն աչքերը կը կուրանան, ու ասոնք առանց գիտնալու՝ եզները ինքնաբերաբար վերստին կ'ուղղուին դէպի Խաղ Եպիսկոպոսի ապարանքը: Եպիսկոպոսը կ'աղօթէ, եւ գողերուն աչքերը կը բացուին, ապա կը հրամայէ լուալ զանոնք, ճոխ սեղան կը դնէ անոնց առջեւ եւ մեծապէս կ'ուրախացնէ զանոնք: Ապա իր օրհնութիւնը կուտայ, եզներն ալ կը յանձնէ գողերուն եւ կ'արձակէ զանոնք խաղաղութեամբ: Ինչ որ բնականաբար առիթ ու պատճառ կ'ըլլայ գողերու դարձին եւ ապաշխարանքին:

Ամուսնացած էր Խաղ եւ ունէր երկու աղջիկներ, որոնցմէ մէկը կուտայ Աստիկ անուն մէկու մը, որ իր մահուանէ յետոյ կը յաջորդէ իրեն իբրեւ Եպ. Արշարունեաց:

Ինչպէս տեսանք, Ներսիս իր բարեսիրական Հաստատութեանց վերակացութիւնը յանձնած էր Խաղին, «Իր սարկաւազին»: Կաւելցնէ Խորենացի Պատմիչը՝ «յամենայնի նմանեալ մեծին Ներսիսի» (էջ

417), իսկ Փ. Բիւզանդ կոչած է զայն Ներսէսի «աթոռակիրը» (էջ 118):

Խաղին մէկ թերութիւն կը վերագրուի, այսինքն՝ «զգեստի մէջ պճնասէր էր եւ ձիասէր» (Խորենացի, էջ 442). Հետեւաբար այս պարագան իր երեսը կուտային անոնք, որ իւրմէ կը յանդիմանուէին: Ասոր վրայ Խաղ Հրաժարեցաւ իր «պերճագոյն» հանդերձներէն եւ «խարազանագգեստ եղաւ» եւ սկսաւ իշով ճամբորդել անկէ յետոյ ամբողջ իր կեանքի ընթացքին:

Խաղ խստորէն յանդիմանեց Արշակը իր մարդասպանութիւններուն համար: Արշակ Հրամայեց քաշկուտել զայն ու քարկոծել. այն ատեն Խաղի աղջկա տագրները՝ «մեծ նախարարութեան է եւ կորովի ու քաջ Ապահուենաց տոհմէն», յարձակեցան քարկոծողներուն վրայ, զանոնք «կիսախողխող» ըրին եւ ազատեցին Խաղը անոնց ձեռքէն: Այնուհետեւ որքան ապրեցաւ Խաղ՝ յայտնի չէ, բայց կ'ենթադրուի, որ Ներսէս Հայրապետէն առաջ վախճանած է:

Օրմանեան Հետեւեալ կերպով կ'արտայայտուի անոր մասին. «Խաղին տրուած պաշտօնին ընդարձակութիւնը եւ Ներսէսի՝ անոր վրայ դրած վստահութիւնը Խաղին կատարեալ զովեստը կը կազմեն: Պատմութիւնը զայն կը ներկայացնէ իբրեւ միւս այլ Ներսէս՝ Թէ բարեգործական աշխատութեամբ եւ Թէ վարչական հանճարով» (Ազգ. էջ 171):

Խաղ ինչպէս որ երկրի վրայ անբաժան էր կեանքով ու գործով Ներսէսէն, անբաժան մնաց նաեւ տօնակատարութեամբ: Ինչպէս յիշեցինք վերեւ, կը տօնուի Ներսէս Հայրապետի հետ միասին Տօն Կաթողիկէի յաջորդող Շաբաթ օրը:

Սկզբնաղբիւր. ՓԱԻՍՏՈՍ ԲԻԻՉԱՆ Դ, Վենետիկ. 1832. էջ 105-109: [«Պատմութիւն սրբոյն Ներսիսի Հայրապետին եւ Խաղայ եպիսկոպոսին»]:

9. Ս. ՍԱՀԱԿ ՀԱՅՐԱՊԵՏ 348-438

Երկար է Ս. Սահակի կեանքը եւ գործը, լեցուն դէպքերով ու դրուագներով. պիտի աշխատինք կարելի եղածին չափ կարճ կապել՝ ծանրանալով իր սրբազան անձին եւ արդիւնաշատ գործին վրայ:

Որդի Ներսէս Հայրապետի եւ Սանդուխտ Մամիկոնեանի, 5-րդ եւ վերջին արու շառաւիղը Ս. Գր. Լուսաւորչին, ծնաւ Կեսարիոյ մէջ 348ին, երբ իր ծնողքը միասնաբար կ'ուսանէին այդ քաղաքը: 2-3 տարեկանին որբացաւ իր մօրմէն, սնաւ ու մեծցաւ իր մօրենական մեծ հօր՝ Մամիկոնեանց տունը, Տարօնի մէջ, երբ իր հայրը Հետամուտ էր բարձրագոյն ուսման Կեսարիա եւ Բիւզանդիոն: Ինք եւս Հետեւեցաւ հօրը՝ իր ուսմունքը ստանալով նոյն քաղաքներուն մէջ: Տիրապէս հմատացաւ յուսական լեզուի եւ դպրութեան: Իր նախապատմիչը՝ Փարպեցին, կը գրէ.

«Շատ յոյն գիտնականներու մօտ երկար ժամանակ կ'անցընէր ուսանելու համար: Կատարելապէս հմտացաւ երգողական տառերուն (այսինքն՝ երաժշտական արուեստին), Հուստորական յորդ ատենաբանութեան, մանաւանդ փիլիսոփայութեան արուեստին»:

Սահակ տիրացած էր նաեւ ստորական լեզուին, որ Հայաստանի մէջ գործածական երկրորդ լեզուն էր կրօնական գիտութեան եւ ծէսերու, ինչպէս նաեւ պարսկերէնին, որ Հայաստանի արեւելեան եւ մեծագոյն բաժնի մէջ տիրող պետական պաշտօնական լեզուն էր:

Սահակ ալ ամուսնացած էր եւ ունեցած միակ աղջիկ զաւակ մը՝ Սահականոյշ, զոր ապա հարսնացուց Համագասպ Մամիկոնեանին եւ ունեցաւ երեք մանչ թոռնիկներ, որոնց նշանաւորագոյնն է Վարդան Մամիկոնեան՝ ապագայ մեծ նահատակը եւ հերոսը:

Կ'երեւի թէ Սահակ ալ կանուխէն այրիացաւ կամ փոխադարձ հակացողութեամբ բաժնուեցաւ իր կնոջմէն, որովհետեւ Խորենացին կը հաստատէ, որ կը հետեւէր խստակրօն ճգնողական կեանքին եւ կազմած էր իր շուրջը «աշակերտս վաթսուն», որոնք իբրեւ «արք կրօնաւորք, խարագնագգեստ, երկաթապատք բոկագնացք» իր հետ կը պտտէին ու կ'ապրէին «մշտնջենաւոր պաշտամունքով» եւ անպատական կեանքով (Խոր. Գ, գլխ. ԽԹ. էջ 485):

387ին ընտրուեցաւ Հայոց Կաթողիկոս Խոսրով Գ Թագաւորի նախաձեռնութեամբ: Երբ վերջինս գահընկեց եղաւ Պարսից Թագաւորին կողմէ, իր հաստատած Կաթողիկոսն ալ պաշտօնանկ համարուեցաւ: Սահակ հարկադրուեցաւ անձամբ ներկայանալ Տիգրան. արժանացաւ բացառիկ ընդունելութեան եւ վերադարձաւ մեծ յաջողութեամբ, ո-

րոնց մէջն էր նաեւ իր պաշտօնին պետական ճանաչումը եւ գահընկէց թագաւորի եղբօր՝ Վառձապուհի իբրեւ թագաւոր հաստատուիլը:

Յաջորդեց 15 տարիներու խաղաղ շրջան մը, երբ տեղի ունեցաւ մեր պատմութեան կարեւորագոյն դէպքերէն մէկը՝ Հայ գիրերուէն գիւտը եւ Հայ դպրութեան սկզբնաւորութիւնը երկու մեծ հոգիներու անբաժան լծակցութեամբ՝ Սահակ Հայրապետի եւ Մեսրոպ Վարդապետի: Որքան ալ Մեսրոպին եղած ըլլայ սկզբնական դադափարը Հայ ԱյրուքնԱք մը ունենալու եւ գործականապէս գայն գտնելու, Ս. Սահակ ալ ունեցաւ իր կարեւոր դերը անոր յօրինման եւ կազմաւորութեան մէջ: Խորհնացիին կը վկայէ, որ «Մեսրոպ Սահակին եկաւ Հայ նշանագրերու խնդրին կապակցութեամբ ու գայն գտաւ շատ աւելի փափաքող», որ օր առաջ գտնուէին Հայ գիրերը (էջ 485): Իսկ Փարպեցիին կը հաստատէ, որ Մեսրոպ «յաճախ հարցումներով շատ բան կը սորվէր Սահակ Սուրբ Կաթողիկոսէն, աթութաներու (գիրերու) գաղափարի մասին, ըստ «անսայթաքութեան» յունական գիրերու» (էջ 46): Իսկ Օրմանեան կ'եզրակացնէ. «Մեսրոպ իր շրջագայութեանց մէջ [ինչ որ] կրցաւ ձեռք ձգել... ամենքն ալ ժողովեց բերաւ եւ Սահակի գերագոյն դատաստանին ենթարկեց, եւ Սահակի ցցուցած ուղղութիւններով եւ տուած կատարելագործութիւններովն է, որ Հայերէն այբուբենը իր վերջնական թիւն ու կարգը, ձեւն ու հեզնան (ձայնական արժէքը) ստացաւ եւ գերագոյն հեղինակութեամբ հաստատուեցաւ» (Ազգ. էջ 276):

Սահակի կազմած 60 հոգիէ բաղկացեալ աշակերտութիւնը եւ Մեսրոպի 40 աշակերտները եղան Հայ այբուբենըով դաս առնող առաջին խումբերը, երբ արդէն իսկ չափահաս եւ ուսեալ մարդիկ էին Յոյն եւ Ասորի դպրութեանց մէջ: Ասոնք եղան նաեւ առաջին Հայ ուսուցիչները, որոնք Հայ գրի ուսուցումը տարածեցին Հայաստանի ամէն կողմերը Սահակի եւ Մեսրոպի ուսուցչապետութեամբ, առաջնորդութեամբ եւ ցուցմունքներով, սկսեալ երկրի մայրաքաղաք Վաղարշապատէն (այսօրուան Էջմիածինէն), որ այսպէս Հայերէն լեզուով ու գիրով կատարուած կրթութեան առաջին օրօրանն ըլլալու պատիւին ալ արժանացաւ:

Ս. Գիրքը Հայերէն լեզուով կարգաւոր փափաքը եւ գաղափարը՝ առաջին շարժիչ պատճառը եղած էր Հայ գիրի գիւտին, եւ հետեւա-

բար՝ թարգմանութեան առաջին ձեռնարկն ալ անով սկսաւ: Ստոյգ է, որ թարգմանչական առաջին փորձը կատարուեցաւ Մեսրոպի ձեռամբ, Ասորական Ս. Գիրքին վրայէն, բայց Ղազար Փարպեցիին անոր ամբողջական թարգմանութիւնը կը վերագրէ Ս. Սահակին: Ըստ անոր հաւաստումին, Մեսրոպի գլխաւորութեամբ պատգամաւորութիւն մը կը ներկայանայ Սահակին՝ խնդրելու համար, որ հաճի «ինքզինքը հոգեւոր աշխատանքի ենթարկել եւ թարգմանել Աստուածաշունչ Կտակարանները յոյն լեզուէն ի Հայ բարբառ» (էջ 48): Սահակ հաւանութիւն յայտնեց եղած առաջարկին «եւ անվեհեր ջանալով գիշեր ու ցերեկ թարգմանեց ամբողջ Կտակարանները»: Ու կ'եզրակացնէ Օրմանեան. «Ս. Գրոց թարգմանութեան առաջին կտորները կամ փորձերը Մեսրոպէ կատարուեցան ասորերէնի վրայ, սակայն արդիւնքը գոհացուցիչ չսեպուեցաւ, եւ յունականին գերազանցութիւնը ընդունուած ըլլալով, Սահակ պարտաւորուեցաւ կամ առաջին թարգմանութիւնը ուղղել յոյնի վրայ, կամ թէ նորէն թարգմանել յոյնէն՝ ասորերէնն ալ առջեւն ունենալով, եւ այսպէս առաջ եկաւ Ս. Գրոց ամբողջական Հայ թարգմանութիւնը Սահակէ կատարուած եւ անոր թէ՛ կաթողիկոսական եւ թէ՛ գիտական հեղինակութեամբը հաստատուած» (Ազգ. էջ 280):

Ապա ձեռնարկեցին ծիսական եւ այլ կրօնական գիրքերու թարգմանութեան, «բոլոր յունական եւ ասորական Հայերու գիրքերը Հայերէնի վերածուած են Սահակի կենդանութեան եւ անոր մերձաւոր տարիներուն մէջ» (Ազգ. էջ 282):

Մեր ԿԱՆՈՆԱԳԻՐՔԻՆ մէջ կայ Սահակի անունով կանոնախումբ մը, որ ընդհանրապէս եկեղեցւոյ պաշտօնից պարտաւորութեան եւ եկեղեցական հասոյթներու գործածութեան եղանակի մասին է: Ասոնցմէ կը հետեւցուի, որ «կարգի-կանոնի նախանձախնդիր հոգի մը ունեցած է Ս. Սահակ եւ ուզած է, որ ամէն բան օրէնքի ուժով կարգադրուի» (Ազգ. էջ 284):

Ամէն պարագային՝ Սահակի ջանքերով եւ տնօրինութեամբ ոչ միայն Արեւելեան (Պարսկական) Հայաստանի, այլ նաեւ Արեւմտեան (Բիւզանդական) Հայաստանի մէջ ալ Հայ լեզուի եւ դպրութեան ուսուցումը տարածուեցաւ, արարողութիւններու Հայ լեզուով կատարուած ընդհանրացաւ, «Նրկիրը նոր ոգի եւ նոր պայծառութիւն ստա-

ցաւ»։ Այնպէս որ՝ սկզբնազիր պատմիչը Յսայիի (ԺԱ 9) պատգամը նոյնութեամբ կը կիրարկէ Հայոց աշխարհին համար. «Հայոց ամբողջ երկիրը լեցուեցաւ Տիրոջ դիտութեամբ, Սահակ Սուրբ Հայրապետի վտակներէն, նման շատ ջուրերու, որոնք կը լեցնեն ծովը (Փար. 53)։

Սահակ բախտաւոր եղաւ, որ իր օրով Հայաստանի արքայական գահին վրայ կը գտնուէր առաքինի եւ խաղաղասէր, կրթասէր եւ իմաստուն Վառձապուհ թագաւորը, որ մեծապէս զօրավիգ եղաւ իրեն եւ Ս. Մեսրոպին՝ իրենց կրօնական ու կրթական ձեռնարկներուն մէջ, աւելի քան քառորդ դար մը։ Սակայն դժբախտ եղաւ, որ անոր որդին՝ Արտաշէսը, անառակ եւ անպատասխանատու մէկը եղաւ եւ պատճառ տուաւ Հայ նախարարներուն, որ անոր գահընկեցութիւնը խնդրեն Պարսից թագաւորէն։ Նախարարները ստիպեցին, մինչեւ իսկ ճշուժ բանեցուցին Սահակի վրայ, որ իրենց միանայ։ Սակայն արիասիրտ եւ հեռատես ծերունի Հայրապետը ընդդիմացաւ անոնց առաջարկին՝ ըսելով. «Ձեռ կրնար փոխել հիւանդ ոչխարս ուրիշին առողջ գաղանին հետ»։ Ասոր վրայ նախարարները ամբաստանեցին նաեւ Կաթողիկոսը՝ իբրեւ յուշասէր քաղաքականութեան հետեւող։ Թէ՛ Կաթողիկոսը եւ Թէ՛ թագաւորը Տիգրան կանչուեցան։ Թագաւորը գահընկեց եղաւ ու բանտարկուեցաւ։ Այս կերպով վերջ գտաւ Հայոց Արշակունեաց թագաւորութիւնը 428ին։ Իսկ Ս. Սահակ պաշտօնանկ եղաւ եւ մնաց Տիգրան իբրեւ աքսորական շուրջ 4 տարի։ Իր տեղ ուրիշ կաթողիկոս մը ընտրուեցաւ, որ շուտով ամենքին զզուելի դարձաւ իր շահամուլ ընթացքով, նոյնիսկ իր կողմնակիցներու կողմէ Բրքիշօ կոչուած Ասորի Նպաւը, որ նոյնպէս զզուեցուց ամենքը իր նիւթամուլ եւ անժոյժ ընթացքով։ Հայ նախարարներէն մէկ մասը ուրիշ կաթողիկոս մը խնդրեցին Տիգրանէն, ուրիշ մաս մըն ալ Ս. Սահակը։ Պարսից թագաւորը երկուքին ալ խնդրանքին ընթացք տուաւ։ Եւ մէկ Ասորի մը նշանակեց իբրեւ պաշտօնական Կաթողիկոս քաղաքական ու նիւթական գործերու համար։ Իսկ Սահակին արտօնեց վերադառնալ Հայաստան եւ զբաղուիլ լուկ կրօնական գործերով։ Այսպէս Կաթողիկոսութիւնը երկնեցաւ օտար այլակրօն թագաւորի մը տնօրէնութեամբ, բայց Հայ նախարարներու բաժանեալ խնդրանքով։ Իր ժամանակակից Հայ ժողովուրդը եւ պատմութիւնը Սահակը ճանչցան ու կը ճանչնան իբրեւ օրինաւոր Կաթողիկոս, մինչեւ իսկ աքսորի մէջ եղած միջոցին,

իբր Մեսրոպ իր անպաշտօն, բայց իրական տեղակալն էր։ Իսկ միւսնեւոր հակաթոռ ճանչցուեցան, որոնք եկեղեցին կողոպտելէ եւ նսեմացնելէ զատ ուրիշ նպատակի չեն ծառայած։

Ս. Սահակ Տիգրանէն մեկնելէ առաջ Պարսից թագաւորը կրկին զգուշացուց զայն հաւատարիմ մնալ Պարսից եւ չհակիլ Յունաց կողմը։ 84 տարեկան արի ծերունին ատենաբանութեամբ մը բացատրեց Պարսից պետութեան հանդէպ ցարդ ունեցած անկեղծ հաւատարմութիւնը եւ ծառայութիւնը, ինչ որ խոր եւ դրական տպաւորութիւն ձգեց ներկաներուն եւ թագաւորին վրայ, որ հրամայեց «արծաթ բազում տալ նմա, իբրեւ քաջաբանի ու ուժգնասիրտ առն համարձակախօսի»։ Սահակ մերժեց դրամը, շնորհներ ուզեց Հայ նախարարներուն եւ իր Հայրենիքին համար, ինչ որ տրուեցաւ։

Վերադարձին, 432ին, հաստատեցաւ ԲԱԳՐԵՒԱՆԴ, ուր կար Լուսաւորչի կողմէ շինուած նշանաւոր տաճար, եւ ուր «երկինքէն լոյս իջած էր, երբ Ս. Գրիգոր կը մկրտէր Տրդատը»։ Ս. Մեսրոպ ալ հաստատուեցաւ Վաղարշապատ, Եմուէլի մօտ, իբրեւ պաշտօնական տեղակալը Ս. Սահակին՝ հոգեւոր գործերու կապակցութեամբ (Ազգ. էջ 310)։

Որքան ալ Եմուէլ, եկեղեցին ու թեմբը կողոպտելով, ամենքին զզուելի դարձած էր, սակայն ոչ ոք կը համարձակէր նոր մը ուզել, աւելի դէշէն վախճալով։ Ընդհակառակը՝ եպիսկոպոսներ, նախարարներ եւ Հայ ժողովուրդը իրենց մխիթարութիւնը կը գտնէին Սահակի անձին մէջ, «որ ոչ միայն Բագրեւանդի կեդրոնէն իր հսկողութիւնը կը տարածէր եւ իր աշակերտներով պէտք եղած հոգածութիւնը կը կատարէր, այլեւ ձեռացած տարիքի ներելուն չափ զանազան կողմեր կը շրջագայէր եւ ժողովուրդը կը մխիթարէր» (անդ.)։

431ին գումարեցաւ երրորդ Տիեզերական ժողովը Եփեսոսի մէջ ընդդէմ «մարգաղաւան» Նեստորի, որուն տեսութիւնները եւ անձը նզովուեցաւ, եւ ժողովականներէն որդեգրուեցաւ Աղեքսանդրացի Կիւրեղ Հայրապետի «Մի Բնութիւն Բանին Մարմնացելոյ» բանաձեւը, եւ կարգ մը կանոններ ալ սահմանուեցան։ Ժողովին վճիռները Հայաստան բերին Բիւզանդիոնի մէջ բարձրագոյն ուսմունք ընող Հայ աշակերտները եւ յանձնեցին Սահակ Հայրապետին, որ նոյնութեամբ ընդունեց յանուն ամբողջ Հայոց եկեղեցւոյ։ Յարդ Հայ եկեղեցին ա-

մուր կը մնայ այս ժողովի որդեգրած «Մի Բնութիւն» բանաձեւին վրայ: Հայ աշակերտներ իրենց հետ բերին նաեւ Ս. Գրքի յուճարէն ընտրելագոյն օրինակ մը, որուն հետեւողութեամբ կատարեցին վերջին սրբազրուութիւնը Հայ Աստուածաշունչի Թարգմանութեան վրայ:

Իր կեանքի վերջին տարիները այսպէս նկարագրուած են Ղազար Փարպեցի պատմիչին կողմէ.

«Առաքինի Հայրապետը, բոլորովին Հրաժարելով աշխարհածուփ գրադմունքներէ, աղօթքի եւ ուսուցման միայն նուիրած էր ինքզինքը: Որովհետեւ շատ մը եպիսկոպոսներ եւ պատուական քահանաներ չէին ուզեր հեռանալ սուրբ Հայրապետին ուսուցանելու մշտաբուլղի աղբիւրներէն, ուր որ ալ ըլլար ան՝ ուստանի կամ օղափոխութեան վայրերուն մէջ: Ու շատ տարիներ ապրելէ եւ խոր ծերութեան հասնելէ յետոյ խաղաղ ու հանգիստ պայմաններու մէջ վախճանեցաւ Բաղբիւրանդ գաւառին մէջ, Բլուր գիւղը, Գարսից Թագաւոր Վուսնի որդին Յազկերտի երկրորդ տարիին սկիզբը, Նաւասարդ 30ին, ճիշդ իր ծննդեան օրը» (Ղ. Փարպեցի, էջ 113):

Նախ քան շունչն աւանդելը «Զեռքերը բարձրացուց՝ օրհնեց ներկաները. եւ պատուիրեց անոնց պահել Ս. Գրիգորի ուսուցած պատուիրանները, զորս աւանդեց ամբողջ Հայոց աշխարհին, ծառայել ու պաշտել միակ ճշմարիտ Աստուածը՝ մեր Տէրը եւ Փրկիչը՝ Յիսուս Բրիստոսը»:

Իսկ Օրմանեան հետեւեալ եզրակացուցիչ բառերով կը խտացնէ Սուրբին կեանքը եւ նկարագիրը «Ազգապատուամի» մէջ Ս. Սահակին նուիրուած ընդարձակ գլուխին մէջ (հատուած 223):

«Սահակի վրայ որչափ ներբողներ գրուին, միշտ իւր արժանիքէն վար մնացած կ'ըլլան. մենք ալ եղելութեանց միայն հետամուտ խորհրդածութիւններու եւ զնահատումներու մտնել չենք ուզեր: Գրական արդիւնքին համար քանի մը խօսք ըրինք (հատ. 199), բայց Սահակ գրականին հաւասար ունեցաւ սրբութեան, հայրապետութեան, քաղաքագիտութեան եւ ժողովրդասիրութեան արդիւնքները այնպիսի առաւելութեամբ, որ անմբռցելի կրնան ըսուիլ: Իւր ազգասիրական զգացումները, երկրին չվնասելու համար ինքզինք վտանգելը, Թագաւորութեան շա-

րունակելուն համար անխոնջ եւ արի ջանքերը որչափ ալ իրենց պտուղը ունեցած չըլլան, Սահակի համար խոստովանողական (չարչարանքի) պատկ մը կազմեցին: Այդ կողմէն ծանր ցաւեր ալ կրեց նա, ազգին դժբախտութիւնը տեսնելով, եւ աւելի կարեւոր վշտացաւ՝ նոյնիսկ ազգին զաւակներուն ձեռքով պատրաստուած տաղնապները նշմարելով: Իրեն մեծ ցաւ ալ եղաւ, որ իրմէ ետքը իւր ազգատոհմին արու ժառանգ չկրցաւ թողուլ: Իւր մահուան ատեն արդէն մեռած էր իւր փեսան՝ Համազասպ Մամիկոնեան սպարապետը, կ'երեւի թէ Սահականոյ ալ արդէն վախճանուած էր, որով իբր անմիջական ժառանգները կը նշանակուին իւր թոռները՝ Վարդան, Հմայեակ եւ Համազասպ Մամիկոնեան եղբայրները, որոնց թողած է «զստացուածս գեղեցի իւրոց եւ ազարակաց եւ որ ինչ միանգամ էր իւր յորդուց յորդի վայելելու համար մինչեւ ցյաւիտեան» (Փար. 114): Ըստ այսմ Լուսաւորչին ազգատոհմը ուղիղ գիծով բոլորովին մարեցաւ, եւ իզական կողմէ Մամիկոնեանց խառնուեցաւ»:

438ին վախճանեցաւ Ս. Սահակ 90 տարեկանին, Բլուր կոչուած գիւղը, որ փոխադրուած էր գերծ մնալու համար արշաւող Գարսիկ բանակի ոտնձգութիւններէն: Մարմինը տարին եւ Թաղեցին Աշտիշատ գիւղը, որ իր կալուածը եւ սիրելի վայրն էր: Վրան ետքէն շինուեցաւ մեծապայծառ եկեղեցի, որ իր կարգին աւերակի վերածուելէ յետոյ՝ անշուք եւ աննշան մատրան մէջ կը մնար յետ Լուսաւորչի մեր Եկեղեցիի մեծագոյն անձին գերեզմանը: Այսօր թէ՛ մատրան, թէ՛ գերեզմանին եւ թէ՛ գիւղին հետքն իսկ յայտնի չէ:

Ս. Սահակ անցած է Կաթողիկ համայնագիտարանի մէջ, ինչպէս նաեւ մեր ձեռքին տակ գտնուած Օքսաֆորդեան եւ Սրբոց քառարաններում մէջ Մեծ ՆԱԿԱԿ անուան տակ, իսկ տօնը նշանակուած է թէ՛ մեր Յայամատրքներում մէջ եւ թէ՛ վերոյիշեալ օտար աղբիւրներուն մէջ Սեպտեմբեր 9ին առանձինն, իսկ Սեպտ. 17ին՝ Ս. Մեսրոպի հետ:

Ս. Սահակ ներկայիս երկիցս կը տօնախմբուի մեր մէջ: Առաջինը՝ առանձինն Մեծ Բարեկենդանի նախորդ Կիրակիի նախընթաց Շաբաթ օրը. իսկ երկրորդը՝ Ս. Մեսրոպի հետ զկնի Հոգեգալստեան Դ. Կիրակիի յաջորդող Եջ օրը:

Ս. Սահակի Համար Ծարակնոցի մէջ ունինք յատուկ լման կանոն, կարճ Մանկուճը շարականով մը, զոր կը դնենք ստորեւ: Իսկ Ս. Մեսրոպի Հետ տօնակատարութեան առթիւ կ'երգուի «Որք զարդարեցի» ծանօթ Թարգմանչաց շարականը, իւր սարօք:

Որ յարմատոց Հարցըն սրբոց մեզ գաւազան բղխեցեր
Ըզիսահակ Սուրբ Հայրապետի Հովել ըզհօտ քո, Քրիստոս:

Որ ըզխաւարն անգիտութեան Հայաստաննայցս լուծեր.

Զիմաստութեան ծագեալ ըզլոյս սովաւ որդւոց
Թորգոմայ:

Որ զՀանդերձեալ խորհուրդ քո Տէր տեսլեամք սրբոյն
Ժանուցեր.

Յիշատակի սորա ընկալ ըզտօնողացս աղաչանս:

Թարգմանութիւն:

Որ սուրբ Հայրերու արմատէն մեզի գաւազան մը (Հովիւ)
Հանեցիր

Իսահակ Սուրբ Հայրապետը, Հովուելու քո Հօտը, Քրիստոս:

Որ Հայերու գիտութեան խաւարը փարատեցիր անով

Իմաստութեան լոյսը ծագելով Թորգոմի որդիներու:

Որ քու գալիք խորհուրդդ, Տէր, տեսիլքով Սուրբին
յայտնեցիր.

Ասոր յիշատակին տօն կատարողներուս աղաչանքն ընդունէ:

Սկիզբնադրիր. ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ - Պատմութիւն Հայոցիենե-
տիկ, 1891 փոքրակազմ: Տե՛ս գրքին վերջաւորութեան գրուած
ցանկին մէջ «ՍԱՀԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ» անունը: [Գիտական Հրատ.
Տփղիս, 1904, նաեւ՝ Վենետիկ, 1933]:

ԿՈՐԻԻՆ, Վարք Մաշտոցի, Հրատարակութիւն Ստեփան Թ.
Բանեան, Պոստոն, 1951: [Բազմալեզու Հրատ. տե՛ս Երեւան, 1981:
«Կատարումն սրբոյն Սահակայ Պարթևի», տե՛ս Ի. Արուստի, ԵՂ.
աշխ., էջ 80-84]:

10. ՄԵՍՐՈՊ-ՄԱՇՏՈՑ ՎԱՐՊԱՊԵՏ 353-439

Շատ բան ըսուած, գրուած ու խօսուած է Ս. Մեսրոպի մասին. պի-
տի չուզենք ըսուածները կրկնել կամ մեր ձեւով՝ ներկայացնել: Փոփո-
խութեան մը Համար կ'ուզենք այստեղ Թարգմանաբար առաջ բերել իր
մասին գրուածը Կաթողիկ Համայնագիտարանի մէջ՝ իբրեւ աւելի
աւարկայական եւ ոչ-ջատագովական ներկայացումը Ս. Մեսրոպի
վարքին եւ գործին: Ս. Մեսրոպ յիշուած է նաեւ ՍՐԲՈՑ եւ ՕՔՍՏՈՐ-
ԴԵԱՆ բառարաններուն մէջ աւելի Համառօտ գրութիւններով, մինչ
Կաթողիկ Համայնագիտարանը յատկացուցած է լման երկսիւնակ էջ
մը:

Իր Մենդեան ճշգրիտ թուականին մասին Համաձայնութիւն չկայ.
Օրմանեան կը դնէ 353ին, Կաթողիկ Համայնագիտարանը՝ 361. Իսկ
վերոյիշեալ բառարանները 345ին:

Հետեւեալն է Կաթողիկ Համայնագիտարանին գրութիւնը:

«Նաեւ կոչուած Մաշտոց, մեծագոյն դէմքերէն մէկը Հայոց
պատմութեան մէջ, ծնած է շուրջ 361ին Տարօն գաւառի Հացիկ
գիւղին մէջ, վախճանած՝ Վաղարշապատ 441ին: Որդին էր Վարդանի,
Մամիկոնեանց տունէն: Կորիւն, իր աշակերտը եւ կենսագիրը, կը
պատմէ մեզի թէ Մեսրոպ ստացաւ բարձր եւ ընդհանուր դաստիարա-
կութիւն եւ Հմուտ էր յունարէն, ասորերէն եւ պարսկերէն լեզուներու:
Իր բարեպաշտութեան եւ բարձր դաստիարակութեան Համար Մեսրոպ
գիւնանադպիր նշանակուեցաւ Խոսրով Գ թագաւորին: Իր պարտակա-
նութիւնն էր արքայական Հրամանագիրները եւ Հրովարտակները գրել
յունարէն, պարսկերէն եւ ասորերէն տառերով, որովՀետեւ այս ատեն
Հայերէն այբուբեն չկար:

Մեսրոպ աւելի կատարեալ կեանքի մը կոչումը զգաց իր մէջ:
Զգեց արքունիքը՝ Աստուծոյ ծառայութեան Համար եկեղեցական
կարգ ստացաւ, քաշուեցաւ վանք մը քանի մը ընտիր ընկերներով:
Հոն, կ'ըսէ Կորիւն, մեծ ճգնողական խստութիւններ ի գործ դրաւ,
ենթարկելով ինքզինքը քաղցի եւ ծարաւի, ցուրտի եւ աղքատութեան:
Ապրեցաւ բանջարակերութեամբ, մազեղէն շապիկ մը Հագաւ, գետնի
վրայ քնացաւ եւ յաճախ ամբողջ գիշեր անցուց աղօթքով եւ Ս. Գիրքի
ուսումնասիրութեամբ: Այս կեանքը վարեց քանի մը տարիներ՝ պատ-

րաստելով ինքզինքը այն մեծ գործին, որուն շուտով պիտի կանչէր զինքը նախախնամութիւնը: Արդարեւ՝ թէ՛ պետութիւնը եւ թէ՛ եկեղեցին պէտք ունէին իր ծառայութեանց:

Հայաստան, որ եղած էր երկար ժամանակ պատերազմի դաշտ Հռովմայեցիներու եւ Պարսիկներու միջեւ, կորսնցուց իր անկախութիւնը. 387ին բաժնուեցաւ Բիւզանդական կայսրութեան եւ Պարսկաստանի միջեւ, շուրջ չորս հինգերորդը գրաւուած ըլլալով վերջինէն: Արեւմտեան Հայաստանը կը կառավարուէր Յոյն զօրավարներով, իսկ Հայ թագաւոր մը կ'իշխէր Պարսկական Հայաստանի վրայ, թէ իսկ հարկատու ըլլար Պարսից: Եկեղեցին բնականաբար ազդուած էր քաղաքական այս բռնի փոփոխութիւններով, սակայն քաղաքական անկախութեան կորուստը եւ երկրին բաժանումը չէր կրնար խորտակել անոր կազմակերպութիւնը կամ նուաճել անոր ոգին: Հալածանքը աւելի կը կենդանացնէր զայն եւ աւելի գործունէութեան կը մղէր ու աւելի սերտօրէն իրարու կը մօտեցնէր հոգեւորականութիւնը, ազնուականները եւ հասարակ ժողովուրդը:

Այս շրջանին գլխաւոր դէպքերն են այբուբենի գիւտը, ծիսական պաշտամունքի վերատեսուցութիւնը, եկեղեցական ու ազգային գրականութեան ստեղծումը եւ նուիրապետական յարաբերութեան վերճշգումը: Երեք մարդեր կարկառուն կերպով կապուած են այս հրաշալի գործին հետ. Մեսրոպ, Իսահակ Հայրապետ եւ Վուսմապուհ թագաւոր, որ յաջորդած էր իր եղբոր, Խոսրով Գ.- ին, 394ին: Մեսրոպ, ինչպէս տեսանք, ատեն մը ապրեցաւ վանքի մը մէջ՝ պատրաստուելով քարոզչական կեանքի համար: Եամպիթ Իշխանի պաշտպանութեամբ Աւետարանը քարոզեց Գողթն գաւառի մէջ, Արաքսի մերձակայքը, դարձի բերելով շատ մը հերետիկոսներ եւ հեթանոսներ: Սակայն մեծ դժուարութիւն զգաց ժողովուրդը ուսուցանելու եւ զանոնք դաստիարակելու գործին մէջ, որովհետեւ Հայեր սեպհական այբուբենը չունէին, այլ կը գործածէին յունական, պարսկական գիրերը, որոնցմէ ոչ մէկը յարմար էր ներկայացնելու իրենց բնիկ լեզուի շատ մը բարդ ձայները: Ասկէ գատ, Ս. Գիրքը եւ պաշտամունքային գիրքերը ասորերէն գրուած ըլլալով, մեծագոյն չափով անհասկանալի էին հաւատացեալներուն: Ասկէ կը ծագէր շարունակական պահանջը թարգմանիչներու եւ մեկնիչներու՝ բացատրելու համար Աստուծոյ խօսքը

ժողովուրդին: Մեսրոպ, փափաքելով դարմանել իրաց այս կացութիւնը, որոշեց հնարել ազգային այբուբենը մը. այս ձեռնարկին մէջ Իսահակ Հայրապետը եւ Վուսմապուհ թագաւորը խոստացան օգնել իրեն: Դժուար է ճշգրել, թէ նոր այբուբենքի յօրինման մէջ իրապէս ի՞նչ դեր ունեցաւ Մեսրոպ: Ըստ իր Հայ կենսագիրներուն, խորհրդակցեցաւ Դանիէլի հետ, Միջագետացի եպիսկոպոս մը, եւ Ռուֆինոսի (Հուսիսոսի) հետ, Սամոսատցի վանական մը, այս նիւթի մասին: Անոնց եւ Սահակի ու թագաւորի օգնութեամբ, կարողացաւ որոշ ձեւ տալ այբուբենքին, որ հաւանաբար յարմարեցուց յունարէնի վրայ: Ուրիշներ, օրինակ Լընորման, կը խորհին որ զենդերէնէն առնուած է: Մեսրոպի այբուբենքը կը բաղկանար 36 գիրերէ. երկու հատ ալ (Օ եւ Ֆ) աւելցուեցան 12-րդ դարուն:

Այբուբենքի գիւտը 406ին սկիզբը եղաւ Հայկական գրականութեան եւ դարձաւ զօրաւոր ազգակ մը ազգային ոգիի կերտումին մէջ: «Սահակի եւ Մեսրոպի գործին արդիւնքը, կ'ըսէ Սէն Մարտին (իր պատմական մէկ գործին մէջ), պատճառ եղաւ միանգամ ընդ միշտ անջատելու Հայերը Արեւելքի միւս ժողովուրդներէն, վերածելու համար զանոնք տարբեր ազգի մը, եւ զօրացնելով զանոնք Քրիստոնէական հաւատքի մէջ, արգիլելով գործածութիւնը կամ պիղծ նկատելով բոլոր օտար գիրերը, որոնք կը գործածուէին Զրադաշտի հետեւորդներու եւ հեթանոսներու գիրքերը ընդօրինակելու համար: Մեսրոպին կը պարտինք Հայաստանի գրականութեան եւ լեզուի պահպանութիւնը: Առանց իր գործին, Հայերը պիտի ձուլուէին Պարսիկներու եւ Ասորիներու կողմէ եւ պիտի անհետանային՝ Արեւելքի շատ մը ազգերու նման»:

Ուժգին փափաքելով, որ ուրիշներ ալ օգտուին իր գիւտէն եւ միւս կողմէ՝ քաջալերուած Հայրապետի եւ թագաւորին կողմէ, Մեսրոպ հաստատեց բազմաթիւ դպրոցներ երկրի զանազան մասերուն մէջ, ուր երիտասարդներուն սորվեցուցին նոր այբուբենքը: Իր գործունէութիւնը Արեւելեան Հայաստանի մէջ միայն սահմանափակուած չմնաց: Իսահակ Հայրապետի նամակներով Կոստանդնուպոլիս գնաց եւ Փոքր Թէոդոս կայսրէն արտօնութիւն ձեռք ձգեց քարոզելու եւ ուսուցանելու նաեւ անոր հպատակ Հայերու մէջ:

Մեսրոպ յաջողապէս աւետարանեց նաեւ Վրացիներու եւ

Ազուաններուն, յարմարցնելով իր այբուբենը անոնց լեզուներուն. ուր որ Աւետարանը քարոզեց՝ շինեց նաեւ դպրոցներ եւ նշանակեց ուսուցիչներ եւ Հոգեւորականներ՝ շարունակելու իր գործը: Վերադարձաւ Արեւելեան Հայաստան տեղեակ պահելու համար Հայրապետը իր առաքելութեանց մասին: Ուրեմն իր առաջին մտածումն էր իր ժողովուրդին տալ կրօնական գրականութիւնը: Իր շուրջը հաւաքած ըլլալով բազմաթիւ աշակերտներ, անոնցմէ շատեր զրկեց Եդեսիա, Կոստանդնուպոլիս, Աթէնք, Անտիոք, Աղեքսանդրիա եւ ուսման ուրիշ կեդրոններ՝ ուսանելու համար յունարէն լեզուն եւ իրենց հետ բերելու Յոյն գրականութեան գլուխգործոցները: Իր աշակերտներուն ամէնէն նշանաւորներն էին Յովհան Եկեղեցացի, Յովսէփ Պաղնացի, Եղիշիկ, Կորիւն, Մովսէս Խորենացի եւ Յովհան Մանդակունի:

Առաջին յուշարձանը Հայ գրականութեան Ա. Գրքի թարգմանութիւնն է: Իսահակ Հայրապետը, կ'ըսէ Մովսէս Խորենացի, Ա. Գրքի թարգմանութիւն մը կատարեց Ասորական բնագրէն 2. 411ին: Այս գործը անկատար նկատուեցաւ, որովհետեւ ասիկէ քիչ յետոյ Յովհան Եկեղեցացի եւ Յովսէփ Պաղնացի Եդեսիա զրկուեցան Ա. Գրոց թարգմանութեան համար: Անոնք ճամբորդեցին մինչեւ Կոստանդնուպոլիս եւ իրենց հետը բերին Յունական բնագրին աւելի հարազատ օրինակներ: Աղեքսանդրիայէ բերուած ուրիշ օրինակներու օժանդակութեամբ Ա. Գիրքը կրկին թարգմանուեցաւ յունարէնէն ըստ Եօթանասնից բնագրին եւ Որոզինէսի Վեցիջեանին: Այս թարգմանութիւնը, որ այժմ ի գործածութեան է Հայ Եկեղեցիի մէջ, աւարտեցաւ 434ին: Առաջին երեք ժողովներու որոշումները (Նիկիոյ, Կ. Պոլսոյ եւ Եփեսոսի) եւ ազգային Պատարագը, որ ցարդ ասորերէն գրուած էր, նաեւ թարգմանուեցաւ Հայերէնի, վերջինս վերատեսութեան ենթարկուեցաւ Ա. Բարսեղի յօրինած Պատարագին վրայ՝ պահելով հանդերձ իր սեպհական մասնայատկութիւնները: Յոյն Հայերու շատ մը գործերն ալ Հայերէնի վերածուեցան: Յոյն սկզբնագրերէն ոմանց կորուստը այս թարգմանութիւններէն ոմանց մասնաւոր կարեւորութիւն մը տուած են: Այսպէս, Եւսեբիոսի «Ժամանակագրութեան» երկրորդ մասը, որ մէկ լոկ քանի մը հասուկտորներ գոյութիւն ունին յունարէնով, լրիւ պահուած է Հայերէնով: Մեսրոպ. իր գրական աշխատանքներուն մէջ չէր իր ժողովուրդին Հոգեւոր կարիքները: Վերստին կ'այցելէր այն

գաւառները, ուր Աւետարանը քարոզած էր իր աւելի կանուխ տարիներուն: Իսկ Իսահակ Հայրապետին մահէն յետոյ՝ 440ին, Հայրապետանոցի Հոգեւոր վարչութեան վերահսկողութիւնը ստանձնած էր: Իր բարեկամին ու վարդապետին (Ս. Սահակին) մահէն յետոյ վեց ամիս ապրեցաւ: Հայեր իր անունը կը յիշատակեն Ա. Պատարագի կանոնին մէջ եւ իր յիշատակը կը տօնեն Փետրուար 19ին»: (Կաթողիկոս Համայնագիտարան, հատոր 10-րդ, էջ 24):

Քանի մը մանր հատուածներ՝ իր կենսագիր Կորիւնի գիրքէն:

«Մաշթոց տեղեակ եւ հմուտ էր աշխարհական կարգերուն: Սիրելի եղաւ իր զինուորական արուեստով իր զօրականներուն: Միաժամանակ ուշադիր եւ փութաշան էր Աստուածաշունչի ընթերցանութեան, որով կարճ ժամանակի մէջ լուսաւորուելով ու Աստուծոյ տրուած պատուէրներուն անսալով՝ ամենայն պատրաստութեամբ իր անձը կը զարդարէր եւ իշխաններուն կը ծառայէր:

Սակայն ժամանակ մը յետոյ Աւետարանին դրած չափին համաձայն (ամէն բան թողուլ եւ Յիսուսի հետեւիլ)՝ մարդասէր Աստուծոյ ծառայութեան կը դառնար, հետեւաբար կը մերկանար իշխաններու յատուկ նշաններ կրելու ցանկութենէն եւ, պանծալի Խաչին նշանն առնելով, կը հետեւէր ամենքին կեանք պարգեւող Խաչեալին: Եւ աւետարանական հրամաններուն անսալով, Քրիստոսի Խաչակիր գունդին կը խառնուէր եւ իսկոյն միայնակեացներուն յատուկ կարգը կը մտնէր...: Ու այսպէս ամէն վերահաս փորձութիւններուն կամաւոր քաջութեամբ տակալով՝ կը պայծառանար. ծանօթ ու հաճոյ կ'ըլլար Աստուծոյ եւ մարդոց» («ՎԱՐՔ ՄԵՍՐՈՊԱՅ». Ստ. ԲԱՆԵԱՆ. Դ. էջ 9):

Մեսրոպի գործունէութեան երկու փոքր նմոյշներ.

Սիւնեաց նահանգին մէջ «ժողովեց մանուկներ իբրեւ ատաղձ վարդապետութեան, աւելի գազանամիտ, վայրենագոյն եւ ճիւղաղաբարոյ կողմերէն, այնքան փոյթ եւ հոգ տարաւ անոնց վրայ, եւ դայեակի պէս սնունդ եւ խրատ ջամբեց անոնց, որ մինչեւ իսկ այդ վայրենիներէն Սիւնեաց եկեղեցիին Եպիսկոպոս-տեսուչ մը կարգեց՝ Անանիաս անունով, որ սուրբ եւ երեւելի մարդ մը եղաւ եւ իր կարգին Հայրաբար կը հոգար եկե-

դեցի ժառանգորդները, հոգեւորական ըլլալու պատրաստուողները: Սիւնեաց երկիրը վանականներով լեցուց» (անդ, ԺԴ. էջ 21):

«Եւ այսպէս Հայոց, Վրաց եւ Աղուանից ամէն կողմերը, իր կեանքի բոլոր ժամանակը, ամառ եւ ձմեռ, գիշեր եւ ցերեկ, անվիհեր եւ անյապաղ, իր իսկ աւետարանական ողջամիտ ընթացքով, թագաւորներու, իշխաններու եւ բոլոր հեթանոսներու առջեւ (առանց հակառակութեան հանդիպելու) Ամենափրկչին Յիսուսին անուներ կրեց իր անձին վրայ: Եւ ամենքին Քրիստոսը հագցուց եւ հոգեղէն շնորհներով զարդարեց. եւ բռնակալներու կողմէ շատ մը բանտարկեալներու, կալանաւորներու, ազնւապալներու ներում շնորհել տուաւ՝ կորզելով (ազատելով) զանոնք Քրիստոսի ահաւոր զօրութեամբ: Շատ մը անիրաւ մուրհակներ պատուեց եւ շատ մը սգաւորներու եւ կարճամիտներու մխիթարական խօսքերով յոյսի ակնկալութիւն ներշնչեց՝ մեր Փրկչին Յիսուսի Քրիստոսի եւ Մեծին Աստուծոյ փառքին յայտնութեան համաձայն: Եւ ամենքը միանգամայն աստուածպաշտութեան պահանջած պայմանին համաձայն փոխակերպեց» (անդ. ԻԱ. էջ 32):

Ս. Մեսրոպի կը վերագրուի իր կենսագիր Կորիւնի կողմէ հետեւեալ գրական գործունէութիւնը.

«Սկսաւ երանելին Մաշտոց գրել եւ յօրինել բազմաթիւ ճառեր, որոնք դիւրին եւ հասկնալի ոճով ներկայացուած են, շնորհքով լեցուն գրութիւններ, ներշնչուելով մարգարէական գիրքերու նիւթերէն, լեցուն աւետարանական հաւատքի ճշմարտութեան սնունդով, որոնց մէջ շատ մը նմանութիւններ եւ օրինակներ կան այս աշխարհէն առնուած. մանաւանդ հանդերձեալ յարութեան յոյսին առընչութեամբ կազմուած, որպէսզի դիւրութեամբ իւրացուին եւ հասկնալի դառնան մինչեւ իսկ տխմարներուն եւ մարմնական իրերով զբաղողներուն, սթափեցնելու, արթնցնելու եւ քաջալերելու համար զանոնք եւ հաստատ հիմքերու վրայ դնելու համար աւանդուած բարի լուրերու խոստումը»:

Ապաշխարութեան շարականները, որոնք ամենէն պարզ ու սրտառուչներն են մեր Շարականոցին մէջ, իբրեւ գրութիւն ու եղանակ, կը վերագրուին Ս. Մեսրոպին:

Կ'արժէ Ս. Մեսրոպի ընդարձակ վարքը փակել Խորենացիի հետեւեալ սեղմ տողերով:

«Գերազանցեց իր ժամանակի բոլոր առաքինի մարդերը, որովհետեւ ամբարտաւանութիւնը եւ մարդահաճութիւնը չկրցան երբեք տեղ գրաւել անոր վարքին մէջ, այլ միշտ եղաւ բարեխորհուրդ, հեզ, լաւակամ, երկնայիններուն սովորութեամբ զարդարած էր ինքզինքը եւ այդպէս կը ներկայանար բոլորին: Որովհետեւ տեսքով հրեշտականման էր, մտքով՝ ծննդական, խօսքով՝ պայծառ, գործքով՝ ժուժկալ, մարմինով՝ արտափայլեալ (արտաքին կերպարանքին վրայ փայլ մը, վիհութիւն մը ունէր): Խորհրդակցութեամբ՝ մեծ, հաւատքով՝ ուղիղ, յոյսով՝ համբերող, սիրով՝ անկեղծաւոր, ուսուցմունքի մէջ՝ անձանձորոյթ» (գիրք Գ. գլ. 67):

Աստուած արժանի ընէ յատկապէս իր բոլոր աշակերտները, Հայաստանեայց Եկեղեցիի բոլոր վարդապետները՝ գիծեր ունենալ այս գեղեցիկ եւ հոյակապ նկարագիրէն: ԼԻԱԿԱՏԱՐԸ Հետեւեալ ձեւով կը ներկայացնէ Սուրբին վերջին վայրկեանները.

«Երբ Աստուծոյ մարդը՝ Սուրբն Մեսրոպ, զգաց, թէ հասած է իր կանչուելու ժամը բաժնուելու իրեններէն եւ խառնուելու Քրիստոսի գունդին, թեթեւանալով եւ ազատելով իր ցաւերէն, կանգնեցաւ ու նստաւ իր շուրջը ժողովուածներուն մէջ. բացաւ իր հանապազատարած ձեռքերը դէպի երկինք, Աստուծոյ շնորհքին յանձնեց բոլոր մնացորդները՝ օգնականութիւն խընդրելով Տիրոջմէ անոնց համար: Մինչդեռ Սուրբին ձեռքերը դէպի երկինք բարձրացած էին, խաչանման եւ լուսաւոր սքանչելի տեսիլք մը երեւցաւ այն ապարանքին վրայ, ուր կը գտնուէր երանելին: Ու ասիկա այնքան յայտնի եւ ակներեւ էր, որ ամէն մարդ անձամբ տեսաւ եւ ոչ թէ ընկերէն լսեց, եւ խուռն բազմութեամբ կը դիմէին այնտեղ: Նոյն տեղը, Սուրբը, իր վերջին ողջոյնը տալով իր քով հաւաքուածներուն, ե՛ւ Սէրը, ե՛ւ Միաբանութիւնը իբրեւ անփոփոխելի կտակ աւանդեց անոնց, իր

խօսքերը վերջապահված են բերաւ օրհնութեամբ, օրհնելով քովը եղողները եւ Հեռաւորները եւ այնպէս հաճելի աղօթք մատուցանելով «Բրիստոսի, նոյն ժամին աւանդեց իր սուրբ Հոգին Փրկչին ձեռքը» (էջ 491, առաջին սիւնակ: Տե՛ս նաեւ ԿՈՐԻՒՆ, ԻԶ. էջ 39):

Ս. Մեսրոպ վախճանեցաւ շուրջ 80-85 տարեկան, 439ին՝ ըստ Օրմանեանի. 440ին՝ ըստ Բառարաններուն, 441ին՝ ըստ ԼԻԱԿԱՏԱՐԻն: Թաղուեցաւ Օշական գիւղը, ուր ցայսօր կը մնայ Սուրբին գերեզմանը, որուն վրայ միշտ եղած է փառաւոր եկեղեցի մը: Մեսրոպ այն երանելին է, որուն գերեզմանը անշարժ մնացած է, միշտ առարկայ Հայ ժողովուրդի յարգանքին: Մինչդեռ Ս. Լուսաւորչին եւ ամբողջ իր սերունդին, ինչպէս նաեւ Թարգմանչաց պանծալի խումբին գերեզմանները դժբախտաբար քանդուած ու անյայտացած են այսօր:

Կը տօնուի երկիրս մեր եկեղեցիի մէջ. նախ Ս. Սահակին Հետ զկնի Հոգ. Դ. Կիրակիին յաջորդող Հինգշաբթի օրը. իսկ երկրորդը՝ ի գլուխ Սրբոց Թարգմանչաց Վարդապետաց՝ Հոկոս. ի երկրորդ Եաբաթ օրը:

ՓԵՇՏԻՄԱԼԸՃԵԱՆԻ Յայնմատուրքը անոր վարքը կը դնէ Սեպտ. 17ին: Իսկ ՄԱՐԶՈՒԱՆՑԻԻՆը՝ երկիրս, Սեպտ. 17 եւ Փետր. 19ին: ԼԻԱԿԱՏԱՐը՝ Սեպտ. 19ին եւ Փետր. 19ին կը նշանակէ: Երեքն ալ կը հաստատեն, որ մահէն յետոյ ալ Լուսեղէն Խաչ մը երկար ատեն մնացած է անոր գերեզմանին վրայ:

Մեր Եարակնոցի մէջ ունինք Թարգմանչաց լման կանոնը: Օրհնութեան երկու պատկերները յոգնակի են եւ կրնան պատշաճիլ բոլոր Թարգմանչաց: Միայն երկրորդ պատկերին երկրորդ տունը կը վերաբերի լրիւ Ս. Մեսրոպին, որուն անունն ալ յիշուած է, իսկ վերջին տունի «ՈՐ ԵՐԿՈՒՔՈՒՄՐ Սուրբ լուսաւորչօք» բառերէն կարելի է հետեւցնել, որ ամբողջ օրհնութեան շարականը յօրինուած է ի պատիւ Ս. Սահակայ եւ Մեսրոպայ: Իսկ Հարցը իւր սարօք եզակի է, թէեւ Ս. Մեսրոպի անունը չէ յիշուած, բայց գրուած է ի մտի ունենալով «Երանելի Վարդապետ»ը կամ «Սուրբ Վարդապետը», որ Ս. Մեսրոպը կրնար ըլլալ: Անոր ուղղուած կրնանք նկատել յայտնապէս «ՄԱՆԿՈՒԱՐ» շարականը, որուն առաջին եւ վերջին տունները կուտանք ստորեւ:

Նմանեալ Մովսէսի, տէր Վարդապետ,
Բերելով զԳիր օրինաց ի Հայաստան աշխարհ,
Որով լուսաւորեցան ազգ որդւոց Թորգոմայ:

Արդ աղաչեմք զքոյին Հեղութիւնդ, տէր Վարդապետ,
Բարեխօսեա առ Հայր ի յերկինս վասն քո տօնողացս.
Քանզի քեւ լուսաւորեցան մանկունք Սուրբ Եկեղեցւոյ:

Թարգմանութիւն.

Նմանեցար Մովսէս մարգարէի, տէր Վարդապետ,
Երբ Օրէնքի գիրը բերիր Հայաստան աշխարհ,
Որով լուսաւորուեցան Թորգոմի որդիները.

Արդ կ'աղաչենք քու Հեղութենէդ, տէր Վարդապետ,
Բարեխօսէ մեր երկնաւոր Հօր քու տօնողներուդ Համար,
Որով հետեւ քեզմով լուսաւորուեցան Ս. Եկեղեցւոյ
որդիները:

Սկզբնաղբիւրներ. ԿՈՐԻՒՆ, Վարք Մաշթոցի, մեր ձեռքին տակ ունեցանք Ստեփան Յ. Բանեանի հրատարակածը, բնագրով, Թարգմանութեամբ եւ բաղդատութիւններով. 1951, Պոստոն: ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ. Պատմութիւն Հայոց, Վենետիկ 1891: [Գիտական հրատ. տե՛ս Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան: Աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Մալխասեան, Տփղիս, 1904]:

11. ՂԵՒՈՆԴԵԱՆՔ

Վարդանանց կրօնական ազատութեան շարժումին առաջնորդները, հրահրիչները եւ ոգին են ասոնք:

Թէեւ Տօնացոյցի մէջ «Քահանայ» տիտղոսով յիշուած են 9 հոգիներէ բաղկացեալ նահատակներու այս խումբը, սակայն անոնց մէջ ներկայացուցիչներ կան մեր եկեղեցիի բոլոր կարգերէն՝ Կաթողիկոս, Եպսկ., Քահանայ ու Սարկաւազ: Ընդարձակ է ասոնց վկայաբանութիւնը, որ մանրամասնօրէն տրուած է ժամանակակից Եղիշէ եւ Ղազար Փարպեցի պատմիչներէ: Մենք պիտի համառօտենք զայն՝ քաղե-

լով այս սկզբնական աղբյուրներէն ու Ազգայատումէն: Նախ ճանչնանք ասոնցմէ իւրաքանչիւրը:

1. ՅՈՎՍԷՓ ԿԱԹՈՂԻԿՈՍ - Հոգեւոր գլուխը (Կաթողիկոսը) Հայց. եկեղեցիին եւ խումբին: Մնունդով Սիւնեաց նահանգին Վայոց Ձոր գաւառի ձեռներէց աշակերտներէն մէկը, որ օգնական նշանակուած էր իր Վարդապետին եւ գործնականին մէջ անոր տեղակալն էր, եւ իր այդ հանգամանքով ալ քովն էր Ս. Մեսրոպի մահուան ատեն եւ գրեթէ ինքնաբերաբար եւ ամենքի համաձայնութեամբ յաջորդեց անոր, 440ին, վարելու համար Կաթողիկոսարանի Հոգեւոր ու եկեղեցական գործերը: Երբ քանի մը տարիներ յետոյ մեռաւ նաեւ Սուրմակ, որ կը վարէր Կաթողիկոսարանի աշխարհիկ ու քաղաքական գործերը՝ իբրեւ պետութենէն ճանչցուած կրօնապետ, օրուան Հայոց Մարզպան Վասակ Սիւնիի միջնորդութեամբ, կաթողիկոսարանի երկու տեսակ գործերն ալ միացուեցաւ Յովսէփի անձին վրայ, եւ եղաւ պետութենէն եւ ազգէն ճանչցուած Ամենայն Հայոց Կաթողիկոսը 444ին: Յովսէփ եղաւ առաջինը մեր այն կաթողիկոսներուն, որոնք ժողովրդային խոնարհ խաւարէն բարձրացած են այդ դիրքին: Իրմէ առաջուան կաթողիկոսները առ հասարակ եկած էին Ս. Լուսաւորչի կամ իր աշակերտ Աղբիանոսի ազնուական տուններէն: Յովսէփ եղած է աւելի վարչական ու գործնական կարողութեան տէր անձ մը, քան՝ մեծ ուսումնական մը:

Իբրեւ Կաթողիկոս Յովսէփի առաջին եւ կարեւորագոյն գործերէն մէկը եղաւ գումարել եկեղեցական ժողով մը, Շահապիվան քաղաքին մէջ 444ին, որ մեր առաջին Ազգային եկեղեցական ժողովն է, որուն կանոնները լրիւ պահուած են մեր ԿԱՆՈՆԱԳԻՐՔԻՆ մէջ: Ներկայ եղած են շուրջ 20 եպիսկոպոսներ, ինչպէս նաեւ շատ մը «երէցներ եւ սարկաւազներ եւ բոլոր իշխանները»: Այս ժողովէն կը մնան 20 կանոններ, առ հասարակ եկեղեցականներու եւ աշխարհականներու բարքերու բարեկարգութեան վերաբերեալ: Յովսէփ Կաթողիկոս շուրջ տասը տարիներու խաղաղ եւ լռիկ գործունէութեան շրջան մը բոլորեց: Անկէ յետոյ կրօնական հալածանքներ սկսան, որուն զոհ գնաց նաեւ ինք, ինչպէս պիտի տեսնենք քիչ յետոյ:

2. ՍԱՀԱԿ ԵՊՍ. ՌՇՏՈՒՆԵԱՅ - Առանց ծննդեան գաւառի կամ գիւղի յիշատակութեան՝ պարզապէս «Ռշտունեաց» Եպս. կոչուելէն

Օրմանեան կ'ենթադրէ «անոր նախարարական կամ ազնուական տունէ լինելը»: Ամենայն հաւանականութեամբ ան ալ Սահակ-Մեսրոպեան աշակերտութենէն էր: Սահակ Եպս.ի գլխաւոր արժանիքներէն մէկը եղած է պարսկերէն լեզուին հմուտ ըլլալը, որով դատարանական հարցուփորձերու ընթացքին թարգմանի դեր կատարած է ատեաններու եւ իր ընկերակիցներու միջեւ: Տարիքով Յովսէփէն աւելի տարեց կը թուի ըլլալ, քանի որ վերջինս «ըստ կարգի ալեաց» իրմէ աւելի մեծ կը ներկայացնէ Սահակը:

3. ԹԱԹԻԿ ԵՊՍ. ԲԱՍԷՆԻ - Ս. Մեսրոպի աշակերտներէն, հաւանաբար դասընկեր կամ աշակերտակից Յովսէփին, որուն հետ ներկայներէն մէկն էր Ս. Մեսրոպի մահուան ատեն: Արտաշատի ժողովին մասնակցած Եպիսկոպոսներէն մէկն է, որոնք ժխտական պատասխան տուին Պարսից շահի հրովարտակին եւ հրաւէրին՝ կրակապաշտ դառնալու: «Կրօնական պայքարի միջոցին ամենէն բուռն գործողներէն մին եղած էր. ատրուշան մըն ալ ինք կործանած էր, անշուշտ իր վիճակին՝ Բասենի մէջ եւ իբրեւ աւելի աչքի զարնող մը, առանց Տիգրանի մէջ դատուելու, դատապարտուած եւ հեռաւոր Խուժաստան բանտարկութեան զրկուած էր» (Ազգ. էջ 393): Այսպէս՝ թէեւ Ղեւոնդեանց խումբին հետ չնահատակուեցաւ այս քաջարի եպիսկոպոսը, բայց որովհետեւ անոնց հետ նոյն գործունէութիւնը ունեցած եւ նոյն պայքարը մղած էր, եւ նոյն յանցանքով ալ ձերբակալուած, բանտարկուած ու դատարպարտուած էր, ուստի արժանապէս Ղեւոնդեանց նահատակներու խումբին մէջ կը գտնուի:

4. ՂԵՒՈՆԴ ԵՐԷՅ - Իրական ու գործնական գլուխը եւ ամենէն հեղինակաւոր անդամը նահատակներու այս խումբին եւ առաջնորդը կրօնական դիմադրական շարժումին: Այս իսկ պատճառով, հակառակ լոկ քահանայ մը եղած ըլլալուն, ամբողջ խումբը կոչուեցաւ իր անունով: Տարիքով ալ խումբին ամենէն տարեցն է, աւելի քան 70 տարեկան եղած ըլլալով իր նահատակութեան ատեն: Մննդեամբ Վանանդ գաւառի Իջլաւաք գիւղէն էր (այսօրուան Կարսի շրջանէն), բայց հաւանաբար պաշտօնի բերմամբ իր գործունէութեան դաշտը եղաւ դրացի Բագրեւանդ գաւառը (այսօրուան Տիատինի եւ Աղբի-Ըղտրբի շրջանը): Ղեւոնդ Ս. Սահակի ամենէն հին աշակերտներէն է, նոյնիսկ նկատուած է անոր աշակերտներուն «գլխաւորը»: Ամէն պարագային՝

գործունեայ եւ կարող անձնաւորութիւն մըն էր, լի խիզախութեան, նախանձախնդրութեան եւ արիութեան ոգիով. եռանդուն ու կորովի էր, Համարձակախօս եւ Հոռետոր, օժտուած առաջնորդելու առողջ ձիրքով: Ա. Սահակի վերջին տարիներուն, Բագրեւանդի մէջ, իբրեւ փոխանորդ միշտ անոր քով գտնուած է: Ինչ եղած էր Յովսէփ Մեսրոպի Համար, նոյնը եղած է Ղեւոնդ Սահակի Համար: Կեղծուրաց նախարարներու դէմ շարժում ստեղծելու մէջ, ինչպէս նաեւ Հայ Հողին վրայ Մազդէզական կրակապաշտութիւնը Հաստատելու փորձին դէմ ելլողներուն առաջինը եւ պարագլուխը եղաւ: Արդարեւ երբ մոզերը «եկին Հասին յաշխարհն Հայոց» եւ պարսկական կրօնքը Հայոց մէջ տարածելու գործին ձեռնարկեցին պարսկական սահմանի մօտ Անգղ գիւղին մէջ, այնտեղ էր Ղեւոնդ Երէց, որ գլուխը անցնելով դիմադրական շարժումին, փայտերով, քարերով եւ գիւղատնտեսական գործիքներով «մոզերու եւ մոզապետին գանգերը ջարդեցին» եւ Հալածեցին իրենց գիւղէն: Ղեւոնդ անկէ յետոյ եղաւ Յովսէփ Կաթողիկոսի անբաժան գործակիցը եւ գլխաւոր խորհրդատուն ամբողջ դիմադրական շարժումի ընթացքին: Հետեւեալ կերպով կը ներկայացնէ Օրմանեան Ղեւոնդին դերը այս դիմադրական շարժումին մէջ.

«Շնորհիւ իր զարգացման եւ ատենաբանելու յաջողակութեան թէ՛ Աւարայրի բանակին մէջ, թէ՛ Տիգրանի ատեանին առջեւ եւ թէ՛ Ռեւանի դատական Հարցուփորձի առթիւ, միշտ գլխաւոր խօսողը եղած էր: Մէկ խօսքով Ղեւոնդ կրնայ բոլոր այդ կրօնական շարժման Հոգին ըսուել, եւ այդ պատճառով է, որ իւր անունով կոչուած են իր գործակիցները» (Ազգ. էջ 402):

Իսկ ԼԻԱԿԱՏԱՐ վարք Սրբոցին մէջ աս բառերով կը մեծարուի եւ կը բացատրուի Ղեւոնդ.

«Ա. Հոգիով լեցուած մարդ մըն էր, առատ եւ լուսաւոր վարդապետութեամբ, որով մեր աշխարհին քահանաները եւ նախարարները կը սպառազինէր՝ քաջութեամբ մարտնչելու հաւատքի թշնամիներուն դէմ, եւ Բրիստոսի եկեղեցիի սիրոյն աներկիւղ կերպով զոհելու իրենց անձերը. անոր Համար Գարսիկները Հայոց աշխարհին մէջ պատահած դէպքերուն պատճառը կը նկատէին երանելի Ղեւոնդը եւ կ'աշխատէին իրենց ամբողջ բարկութիւնը անոր վրայ թափել» (էջ 155):

Ու նոյն ԼԻԱԿԱՏԱՐԸ կը պատմէ Հետեւեալ դրուագը անոր մասին.

«Շատ տարիներ առաջ, Հայաստան աշխարհի խաղաղութեան օրերուն, երբ միասին էին մեծ Վարդապետը Ա. Մեսրոպ եւ անոր աշակերտներէն Կորիւն եւ Արձան, տեսան, որ Ղեւոնդի քնացած մէկ ժամուն սաստիկ լոյս մը կը ճառագայթէր անոր շուրջը, որուն վրայ վերոյիշեալ երանելիները Հասկցան, թէ երանելի Ղեւոնդ Հանգերձեալ էր նահատակութեամբ կնքել իր կեանքը» (անդ):

5. ՄՈՒՇԷ կամ ՄՈՒՇԷՂ ՔԱՀԱՆԱՅ - Աղբակեցի. դրան երէց Արծրունեաց նախարարութեան, որոնք կարեւոր դեր կատարեցին Վարդանանց շարժումին մէջ, Մամիկոնեան նախարարութենէ յետոյ: Մուշէ ալ, իր դիրքին եւ Հանգամանքին բերումով, գլխաւոր դեր կատարողներէն մէկը եղաւ դիմադրական շարժումին մէջ: Հաւանաբար ինք ալ Սահակ-Մեսրոպեան աշակերտութենէն էր, որովհետեւ առանց զարգացման Արծրունեաց նման մեծ նախարարութեան մը հոգեւոր վարիչը չէր կրնար ըլլալ:

6. ԱՐՇԷՆ ԵՐԷՑ - Մենդավայրն է Բագրեւանդ գաւառի Եղեգիկ գիւղը: Ինք եւ ուրիշներ Վարդանանց պատերազմէն յետոյ ամբացած էին բերդի մը մէջ: Վասակի խոստումներէն խաբուելով՝ բերդէն դուրս ելաւ՝ ի գլուխ պատգամաւորութեան մը բանակեցելու Համար, սակայն շղթայի զարնուելով՝ պահուեցաւ դատուելու Համար: Արշէն Սահակ-Մեսրոպեան աշակերտութենէն չէր, այլ գեղջկական շրջանակէ կուգար եւ «տաքիտագոյն եւս էր Գրոց մխիթարութենէ» (Եղիշէ): Իր ընկերակիցները ոչ միայն չէին արհամարհեր Աստուծոյ խոնարհ ու հաւատաւոր այս պաշտօնեան «այլ մանաւանդ առաւելագոյն պատիւներով քաջալիւրել եւ զօրացնել կ'աշխատէին» (Օրմանեան):

7. ՍԱՄՈՒԷԼ ՔԱՀԱՆԱՅ, 8. ԱԲՐԱՀԱՄ ՍԱՐԿԱԻԱԳ - Իրարմէ անբաժան երկու հաւատաւոր եւ աներկիւղ պաշտօնեաներ եկեղեցիի յԱրածոյ գեղջէ քահանան ու սարկաւագը, որոնք ատրուշան մը քանդած ու արգիլած էին կրակապաշտութեան մուտքը Լուսաւորչի Խոր Վիրապայտին չարչարանքներով սրբացած եւ Վարդանանց դիմադրութեան օրօրանը եղած այս քաղաքը [Արտաշատը]: Գատերազմի ճախող վերջաւորութենէ յետոյ միասնաբար ձերբակալուած ու

միւս եկեղեցականներէն դատուելով՝ Պարոկական բանակին մէջ բանտարկեալ կը մնային: Եկեղեցականները մահացնելու Յազկերտի որոշումը ասոնցմէ սկսաւ, ինչպէս պիտի տեսնենք ստորեւ:

9. **ՔԱՋԱՋՆ ՍԱՐԿԱՒԱԳ-** Ռշտունեանց գաւառէն էր, փոքրաւորը կամ աւագ սարկաւազը Սահակ Ռշտունի Եպս.ին: Իր այդ Հանգամանքով իսկ կարեւոր դեր կատարած էր դիմադրական շարժումին մէջ եւ կալանաւորուած ու դատապարտուելու արժանի նկատուած էր:

Ասոնց շարքին կարելի է դասել նաեւ Արրաֆաւ եւ Խորէն երէցները, որոնք արձակ կերպով կը հետեւէին Ղեւոնդեանց եւ կը սպասաւորէին անոնց, իսկ վերջին պահուն, երբ Ղեւոնդեանք նահատակուելու կը տարուէին, արգիլուեցան անոնց հետեւելէ: Ասոնց եւս ի վերջոյ հրամայուեցաւ ուրանալ իրենց հաւատքը, ինչ որ բացարձակապէս մերժեցին եւ որովհետեւ մասնաւոր յանցանքներով մը չէին ամբաստանուած, ուստի անոնց ականջները միայն կտրելով՝ զրկեցին արքունի ազարակներու մէջ աշխատելու: Երջանի քրիստոնեաներու կողմէ իբրեւ կենդանի նահատակներ կամ խոստովանողներ մեծ յարգանքի արժանացան եւ մեծամեծ նուէրներ կը ստանային, զորս Աբրահամ երէց, երկար ճամբորդութեամբ, կը տանէր եւ կը յանձնէր բանտարկեալ Հայ նախարարներուն: Իսկ Խորէն, ընկճուած ճամբու նեղութիւններէն եւ անտանելի տաքերէն, վախճանեցաւ գերութեան մէջ: Աբրահամ ի վերջոյ ներման արժանացաւ ու հայրենիք վերադարձաւ, ուր, ի պատիւ իր կենդանի նահատակի հանգամանքին, Բզնունեաց գաւառի Եպիսկոպոս կարգուեցաւ եւ այդ դիրքին մէջ խաղաղ մահուամբ կնքեց իր երկրաւոր կեանքը:

* *

Յովսէփ եւ Ղեւոնդ բերդ մը ապաւինած էին պատերազմէն յետոյ, սակայն ասոնք ալ Վասակի նենգ խոստովանողով անձնատուր եղան եւ անմիջապէս շղթայի զարնուած ու բանտարկուած էին իբրեւ պարագլուխները ըմբոստութեանց: Իսկ Սահակ Ռշտունեանց Եպիսկոպոսը եւ իր սարկաւազը, ինչպէս նաեւ Արծրունեաց դրան երէց Մուշէ Բահանան յատկապէս հրաւիրեցան Հայաստանի Պարսիկ Մարզպանին կողմէ: Քննութիւն բացուեցաւ ասոնց դէմ եւ հաստատուեցաւ, որ Սահակ Եպս. ալ ատրուշան մը քանդած էր եւ որպէս թէ

«բազում չարչարանօք» մոգեր սպաննած էր: Իսկ Մուշեղ քահանան եւս կրակատուն մը աւերած էր, որպէս թէ մոգեր սպաննած էր «կիապանօք եւ տանջանօք»: Եւ որովհետեւ չուրացան ամբաստանութիւնը, ասոնք ալ խառնուեցան միւս ձերբակալեալ եկեղեցականներուն: Այսպէս կազմուեցաւ (բացի Թաթիկ Եպս.է) ութը եկեղեցականներու խումբ մը, որոնք իբրեւ գլխաւորները եւ հրահրիչները ապստամբութեան Պարսիկ մայրաքաղաքը՝ Տիզրոն, զրկուեցան դատուելու համար, Աւարայրի ճակատամարտէն երկու ամիսներ յետոյ, 37 նախարարներու հետ: Ասոնց նահատակութեան մանրամասնութիւնը ժամանակակից սերունդին եւ անոնց միջոցաւ մեզի հասած է «Խուժիկ» կոչեցեալ Պարսիկ գաղտնի քրիստոնեայի մը միջոցաւ, որ յատուկ դիտաւորութեամբ հետեւած է մարտիրոսներու կարաւանին, ծպտեալ իբրեւ վաճառական, վստահութիւնը շահելով ասոնց դատաւոր նշանակուած Դենշապուհին, ականատես եղած է ասոնց սպանման եւ ականջաւոր՝ անոնց վերջին խօսքերուն: Եւ ապա նոյն յարատեւութեամբ տիրացած է անոնց նշխարներուն (սուկորներուն) եւ բերած ու յանձնած է բանտարկեալ Հայ նախարարներուն եւ այլոց՝ միաժամանակ պատմելով մանրամասնօրէն անոնց նահատակութեան բոլոր պարագաները:

Տիզրոն հասնելէ անմիջապէս յետոյ ձեռնարկուեցաւ հարցաքննութիւններու, որոնք ընդարձակօրէն կը տրուին Ղազար Փարպեցի եւ Եղիշէ պատմիչներու կողմէ: Անոնց գլխաւոր յանցանքները նկատուեցան ատրուշան քանդած՝ եւ «կրակը սպաննած» ըլլալը, զորոչուրացան կապեալները: Ընդհակառակը, ոմանք հեզնականօրէն, ու Ղեւոնդ Երէց գիտական Հմտութեամբ յայտարարեցին ու հաստատեցին, որ կրակը պարզ տարր մըն էր եւ հետեւաբար Աստուած չէր կրնար ըլլալ եւ արժանի չէր պաշտամունքի: Միհրնբասէհ, որ իբրեւ գատաւոր բազմած էր Տիզրոնի մէջ, զայրանալով անոնց աներկիւզ պատասխաններէն, հրամայեց շղթաներով զարնել անոնց բերաններուն, մինչեւ որ արիւնով լեցուեցան անոնց բերանները: Ի վերջոյ դատապարտեց զանոնք եւ ծանր շղթաներով բանտարկել տուաւ «մինչեւ որ արքայական վճիռով որոշուի անոնց վերջնական ճակատագիրը»:

Ի վերջոյ՝ այս 8 եկեղեցականները եւ 37 նախարարները աքս-

րուհեցան Վրկաճ, այժմեան Մազանդարան գաւառը: Գարսկաստանի հիւսիսային կողմը, որպէսզի այնտեղ բանտարկուած պահուէին «խիստ կապանօք»: Վրկանի մէջ բանտարկուած եկեղեցականները դատաւարտուած էին իբրեւ «վատախրատ, աշխարհակորուստ եւ աստուածասպան մարդիկ»: Հետեւաբար իրենց համար պատրաստուած շղթաները սովորական երկաթներէն աւելի «ծանր եւ ստուար» էին. մանաւանդ Ա. Յովսէփինը «շատ աւելի ստուար եւ անհեղեղ» էին: Յարաբերութենէ բոլորովին կտրուած էին, որովհետեւ «կապուած երէցներու փոքրաւորները», մասնաւորաբար խորէն եւ Աբրահամ անուն երկու շատ անձնուէր եւ հաւատարիմ երէցներ, միշտ կը հետեւէին կապեալ եկեղեցականներուն եւ անոնց խնամք կը տանէին: «Գատմագիրներ (Նիշիւ եւ Փարպեցի) երկարօրէն կը բացատրեն, թէ ինչպէս բոլոր այդ խոստովանողներ, (այսինքն՝ բանտարկեալ եկեղեցականներ եւ նախարարներ - Շ. Գ.) ներքին ուրախութեամբ եւ յարատեւ աղօթքով կ'անցընէին ժամանակը Վրկանի բանտին մէջ, որովհետեւ վասն հաւատոյ եւ վասն Քրիստոսի էր իրենց քաշած չարչարանքը» (Ազգ. էջ 391):

Եկեղեցականներ ու նախարարներ Տիգրան ղրկուած էին 451ի վերջերը: Վրկան աքսորուեցան 452ի սկիզբները եւ այնտեղ բանտարկուած մնացին երկու տարիներ, մինչեւ 454ի ամառը: Յագկերտ երբ Քուշանաց դէմ պատերազմին կ'երթար ու կ'անցնէր Վրկանէն, «հրամայեց որ խոստովանողներուն խումբն ալ ետեւէն բերեն... եւ ամէնը տարուեցան Ալպար աշխարհ, այժմեան Խորասան գաւառը, եւ փակուեցան Նիւշապուհ բերդին մէջ» (Ազգ. էջ 392): Դատաւարտեալ 8 եկեղեցականներէն երկուքը, այսինքն Արտաշատի տարուշանը աւերողները՝ Սամուէլ Երէցը եւ Աբրահամ Սրկ.ը, զատեցին եւ բանակին հետ միասին տարին, ուր «չարաչար վշտով եւ զօրաւոր կապանքներով եւ ծեծելով կը նեղէին զանոնք, իբրեւ իրենց կրօնքը հեղնողներ եւ կրակը սպաննողներ» (Փարպեցի):

Քուշանաց պատերազմին մէջ Յագկերտի ձախողութիւնը մոգեր վերագրեցին «կրակ սպաննող»ներուն դեռ ողջ մնալուն: Ուստի որոշեց վերջ տալ անոնց կեանքին: Առաջին հերթին հրամայեց բանակին մէջ գտնուող երկու կապեալները առանձին տեղ մը տանիլ ու գլխատել: Նախապէս երկուքին ալ աջ ձեռքերը կտրեցին, որոնցմով

յանդգնած էին ատրուշան կործանել եւ ապա գլխատեցին: Այսպէս նահատակուեցան Արտաշատի եկեղեցւոյն պաշտօնեաները՝ Սամուէլ Քահանայ եւ Աբրահամ Սրկ., որոնք եղան առաջին նահատակները Ղեւոնդեանց Քահանայից:

Նոյն օրերուն, այսինքն 454ի Յուլիսի սկիզբները, յատուկ սուրհանդակ ղրկուեցաւ Խոսթաստանի կուսակալին, որպէսզի «չարալլուկ տանջանօք» սպաննել տայ այնտեղ բանտարկուած Թաթիկ Եպիսկոպոսը: Նախապէս «զաւուրս բազումս տանջեցին զայն եւ քերեցին զմարմին սրբոյն յոսկերաց» եւ ի վերջոյ գլխատեցին:

Այս երեք մարտիրոսներէն ետքը ուշադրութիւնը կեդրոնացուցին մնացեալ վեցին վրայ, որոնք միասնաբար եւ աքսորեալ նախարարաց հետ բանտարկուած էին Նիւշապուհ քաղաքի մէջ: Ասոնց համար յատուկ դատաւոր նշանակուեցաւ Դենշապուհ անուն իշխանաւոր մը, որուն յանձնարարուեցաւ ուրիշ երկու ընկերակիցներով եւ դահիճներով անմիջապէս մեկնիլ «եւ անկոխ ու անսպաստ տեղ մը սպաննել վեց եկեղեցականները» (Փարպեցի, Ծ.):

Այս բոլոր գործողութիւնները պէտք է գաղտնի կատարուէին, եւ ոչ ոք իմանար անոնց դացած տեղը, որպէսզի քրիստոնեաները ձեռք չձգէին անոնց ոսկորները եւ յարգանքի առարկայ չդարձնէին:

Յուզիչ եղաւ ձերբակալեալ նախարարաց եւ քահանայից բաժանումը: Յետ երեկոյեան պաշտամունքի միասնաբար վերջին ընթրիք ըրին: Քահանաներ սրտապնդեցին զանոնք, որ չյուզուին իրենց բաժանումին համար, քանի որ իրենց երկնաւոր տունը կը վերադառնային. կը մաղթեն որ

«Քրիստոս լինի ձեզ մխիթարիչ եւ Փրկիչ եւ արձակէ ձեզ երեւելի կապանքներէն, որուն մէջն էք, եւ ամէցնէ ձեր նախանձորդները եւ թշնամիները: Տայ Աստուած, որ շուտով տեսնէք Հայոց աշխարհը եւ ձեր ընտանիքները, եւ ձեզմէ իւրաքանչիւրը թաղուի իր հայրերուն գերեզմանը, եւ սատանայի աներեւոյթ կապանքներէն արձակելով՝ ձեր հոգիները անվնաս պահէ Աստուած մինչեւ Տէր Յիսուս Քրիստոսի գալստեան օրը» (աճ):

Վերջին անգամ ամենքը միասին աղօթեցին եւ, Աստուծոյ յանձնելով նախարարները, օրհնեցին զանոնք, երբ ներս խուժեցին դահիճնե-

ըր գործիքներով եւ «խարտելով կտրեցին եւ հանեցին երկաթները սուրբերուն ձեռքերէն, ոտքերէն եւ պարանոցներէն», չարաչար կտտրտելով եւ վիրաւորելով անոնց մարմինները (Փարպնցի. ԺԲ.): Նախարարները մի առ մի ողջագուրեցին զանոնք՝ ըսելով «Յիշեցէք զմեզ շարունակ երկինքի Արքայութեան ձեր ուրախութեան մէջ»: Խորէն եւ Արքահամ քահանաներ, որոնք սիրալոյսով հետեւած էին Ղեւոնդ Երէցին եւ ուրիշներ, կը փափաքէին քահանաներուն ընկերանալ կամաւորապէս, սակայն խստիւ արգելուեցան Դենշապուհէն: Բռնեցին Վրկանի ճամբան:

Տարին զանոնք մինչեւ Ռեւան քաղաքը: Յաջորդ առաւօտ կանուխ եւ խիստ գաղտնի ճամբաներէ առաջնորդեցին երանելիները քաղաքէն բաւական հեռու «Ընդ անկոխ անապատ... եւ հասան քարուտ եւ աւազուտ տեղ մը, ուր ոչ արածուելու համար անասուն կը տարուէր եւ ոչ ալ սեւէ ուղեւոր կ'անցնէր՝ այնտեղ ճամբայ չգտնուելուն համար» (Փարպ. ՄԵ.): Օտարական ըլլալով՝ կար միայն իբրեւ վաճառական ծպտեալ քրիստոնեայ «Խուժիկը» (Պարսիկ), որ բարեկամացած եւ վստահութիւնը շահած էր Դենշապուհ ղատաւորին, որմէ հրաւիրուած էր ներկայ ըլլալ կրակի սպաննիչներու չարաչար մահուան:

Դենշապուհ ղատաստանական ատեան մը կազմեց իր երկու պաշտօնակիցներով եւ վերջին անգամ ըլլալով ուրացութեան հրաւիրեց երանելիները.

«Անթիւ անհամար չարիք գործած էք դուք.՝ ըսաւ,՝ շատ մը Պարսիկերու կոտորածին պատճառ եղած էք: Եթէ մինչեւ իսկ մէկ-երկու անձի կորուստին պատճառ եղած ըլլայիք, դարձեալ ապրելու արժանի չէիք, մինչդեռ դուք այնչափ շատ արեան թափուելուն պատճառ եղած էք... սակայն հակառակ ձեր այսքան յանցանքներուն եւ մահապարտութեան՝ Արքայից արքան ձեզի հանդէպ մեծ բարերարութիւն կ'ընէ, երբ ձեզի կը հրամայէ՝ ըսելով. Եթէ կը հաւանին արեգակի եւ կրակի երկրպագել եւ մեր օրէնքին ծառայել յանձն կ'առնեն, անոնց մահապարտութիւնը կը ներեմ եւ նախարարները, որոնք բանտարկուած են, կ'արձակեմ Հայաստան, եւ անոնցմէ իւրաքանչիւրին իր տանուտէրութիւնը, գահը եւ պատիւը կը վերադարձնեմ: Արդ, յիշեցէք նաեւ ձեր անձերը,՝ շարունակեց Դենշա-

պուհ,՝ եւ ապա հոգիներն անոնց, որոնք բանտարկուած են, եւ սիրալոյսով ընդունեցէք արքայից արքային հրամանը, եւ ինչպէս պատճառ եղաք շատերու արեան՝ այժմ ալ պատճառ եղէք շատերու կեանքին: Իսկ եթէ տակաւին յամառիք, նախ դուք կը մեռնիք, եւ ապա կը հրամայենք զանոնք սպաննել. եւ այն բոլոր արիւնները, որոնք նախապէս թափուեցան եւ այժմ պիտի թափուին, ձեզմէ պիտի պահանջեն աստուածները»:

Երկընտրանքը, որուն առջեւ դրուեցան Ղեւոնդեանք, ահաւոր էր եւ փորձիչ. կա՛մ ազատուիլ եւ բանտարկուած նախարարաց ազատուելուն պատճառ ըլլալ, եւ կա՛մ մեռնիլ եւ անոնց մահուան պատասխանատու դառնալ...: Այն ատեն խորհրդակցեցան, եւ Յովսէփ Կաթողիկոս խնդրեց Սահակ Եպիսկոպոսէն, որ պարսկերէնով թարգման հանգիստանայ իրենց մտածումներուն եւ որոշումին հետեւեալ բառերով.

«Այդ առաջարկը եղաւ արդէն մեզի Տիգրանի արքունիքի դատաւարութեան ընթացքին. թագաւորն ալ ծանօթ է այդ առթիւ տրուած մեր պատասխանին: Նոյն են մեր ամենքին կամքը եւ խօսքը. չենք փոխեր մեր որոշումը: Այն հաւատքը, զոր ունինք, կ'ուզենք անով մնալ, անով ապրիլ ու անոր մէջ ալ վախճանիլ՝ միասնաբար: Չենք ուրանար ճշմարտութիւնը, չենք ծառայեր ստանուն աստուածներուն, որոնք աստուած չեն: Մեր ուրացութեամբը չենք ուզեր հաւատացեալ կապեալներուն արձակուիլը, որովհետեւ այդ կը նշանակէ զանոնք յաւիտեանական անլոյծ կապանքի ներքեւ դնել: Անոնք մեզմէ աւելի կ'ուզեն մեր մեռնիլ մեր Աստուծոյն համար, քան ուրացութեամբ մեր ապրիլը... ուստի ինչ որ կ'ուզէք՝ ըրէք շուտով»:

Զայրացաւ Դենշապուհ եւ ըսաւ ի միջի այլոց՝ խօսքը ուղղելով Յովսէփ Կաթողիկոսին.

«Գիտցած եղիր, որ քու դատավճիռդ դուն ինքնին տուիր. ասկէ յետոյ քեզի համար ապրիլը անհնար է»: Ապա միւսներուն դառնալով ըսաւ. «Կարեւորութիւն մի՛ տաք անոր ըսածներուն եւ մի՛ ազդուիք անոր խօս խրատներէն. մարդկաբար ընդունեցէք կեանքը քան մահը. դուք ալ թէեւ ծանրապէս յանցաւոր էք, սակայն եթէ թագաւորին կամքը կատարէք ու արեգակի երկրպագէք, ձեր վնասակարութեանց ներում կը

շնորհ է եւ ողջանդամ կը վերադարձնէ ձեր տուները»:
Ղեւոնդ Երէց պատասխանեց ի դիմաց ամենքին.

«Մենք քու խօսքերուդ այնքան միայն պատասխան պէտք է տայինք՝ որքան տուաւ Փրկիչը Պիղատոսի ատեանին առջեւ: Բայց որպէսզի դուք ալ ճանչնաք մեր աներկիւղ ցանկութիւնը՝ լսեցէք ուրեմն... Ես իմ գիտցածս՝ Աստուծոյ սորված եմ եւ ոչ՝ մարդէ, Հետեւաբար չեմ կրնար փոխել զանոնք եւ իմ կորուստիս պատճառ դառնալ: Դուք մեզի փառք եւ պատիւ կը խոստանաք, եթէ ուրանանք. մենք արդէն իսկ փառք ու պատիւ Հագած ենք, որ շատ աւելի արժէքաւոր է, քան ամբողջ երկիրը եւ ասոնց մէջ եղած բոլոր թանկագին բաները: Մէկ բան միայն կը պակսի մեր երջանիկ փառաւորութենէն՝ մահուան բաժակը, զոր ծարաւահիւծ մարդերու պէս կը ցանկանք խմել: Խմցուցէք շուտով, թող ուրախութեամբ ազատինք այս երեքալից եւ խիտավարակ կեանքէն»:

Այն ատեն երանելի Մուշէ եւ Արշէն Երէցները եւ Քաջաջն Սարկաւազ խնդրեցին Սահակ Եպսկօնէն, որ թարգման Հանդիսանայ նաեւ իրենց մտածումներուն.

«Ինչպէս ըսին մեր Սուրբ Վարդապետները եւ Հոգեւոր Հայրերը՝ Տէր Յովսէփ եւ Տէր Ղեւոնդ, նոյնը կը կրկնենք մենք. կատարեցէք շուտով եւ մի ուշացնէք ձեր ընկիւղը: Մենք կը խնդրենք Աստուծոյ պարգեւել մեզի եւ արժանի ընել զմեզ յաւիտենական պատիւին եւ երկինքի արքայութեան»:

Դենշապուհ թէ եւ զայրացած, բայց կ'ուզեր դեռ շատ բաներ ըսել, խորհելով, որ կրնար թերեւս քակել անոնցմէ մէկը անքակ միաբանութեան գունդէն, ուստի ստիպեց Սահակ սուրբ Եպիսկոպոսը, որ թարգմանէ իր ըսելիքները: Սահակ պատասխանեց.

«Ինչ պէտք կայ պնդելու մարդոց, որոնց խելքը գլուխն է, եւ պարտադրելու ձեր բանդագուշանքները եւ լսելի դարձնելու ճիգ ընել այսպիսի իմաստուն եւ խոհական մարդոց: Արդիւնքը նոյն պիտի ըլլայ, այսինքն՝ ձեր տեսակէտներու յիմարութիւնը աւելի եւս երեւան պիտի գայ, իսկ մեր մօտ՝ աւելի պիտի Հաստատուի ճշմարտութիւնը եւ Աստուծոյ կողմէ սորվեցուած մեր կարողութեան եւ Հաստատեցին անշարժութիւնը»:

Այն ատեն Դենշապուհ ոտքի ելաւ եւ զարկաւ սուրով երանելի Սահակ Եպսկօնէի ուսին եւ մինչեւ դօտին խորացուց վէրքը: Եւ Սուրբ Եպիսկոպոսը Հարուածէն դրդուած, առանց գետին գլորելու կռօնեցաւ քարի մը, սկսաւ աղօթել արիւնաթաթախ վիճակի մէջ:

«Գոհութիւն քեզի, Քրիստոս, որ շատ անգամ իբրեւ կենդանարար Գառն Աստուծոյ, անմահական զենամբ մատակարարուելով, անսպառօրէն բաշխուեցար մեր ձեռքով: Իսկ արդ, զմեզ իսկ մարդասիրաբար արժանի կ'ընես զենուելու ընդունէ զմեզ ամենքս՝ սիրայօժար պատարագեալներս ի Հոտ անուշից»:

Ապա Հրամայեցին գլխատել Յովսէփ Կաթողիկոսը, որ նախ քան դահիճի սուրին իյնալը իր պարանոցին, աղօթեց. «Դարձ, անձն իմ ի Հող եւ ի Հանգիստ, զի Տէր բարի արար քեզ»:

Իսկ Ղեւոնդին Համար Հրամայեցին մերկացնել իր արտաքին զգեստներէն եւ քաշկուտել զայն քարածայուերուն վրայ, այն աստիճան, որ լանջքին եւ թիկունքին միսերը քերթուեցան մինչեւ ոսկորները: Երբ դահիճներէն ոմանք զբաղուած էին Ղեւոնդ Երէցը քաշկուտելով ծայուերուն վրայ, ուրիշներ գլխատեցին Մուշէ եւ Արշէն Երէցները եւ Քաջաջն Սարկաւազը, որոնք կը կրկնէին. «Տէր Յիսուս, ընդունէ մեր Հոգիները»: Իսկ Ս. Ղեւոնդը քաշկուտող դահիճները յօգնելով բերին զայն Հոն, ուր ընկերակիցները գլխատուած էին: Երբ դեռ կեանքը վրան էր, իր Հոգին աւանդելէ առաջ, ըսաւ «զուարթագին ձայնով». «Գոհութիւն քեզի, Քրիստոս, որ քու գթութեամբ օգնեցիր այս ժամին. արժանի ըրիր զիս քու սուրբերու բաժինին, քու ձեռքը կը յանձնեմ իմ Հոգիս, ով Փրկիչ». ի վերջոյ գլխատեցին նաեւ զայն:

Անդին Սահակ Եպս. դեռ կը շնչէր ճապաղիքներու մէջ ու կ'աղօթէր, ուստի անոր գլուխն ալ կտրեցին:

«Եւ այսպէս Յազկերտի թագաւորութեան 16-րդ տարին, Հրոտից ամսի 27ին պսակուեցան սուրբ վեցերը... Ապար աշխարհին մէջ, մօտ Ռեւան կոչուած գիւղին: Ու Արշալիր Կամսարական, Հարցափորձելով երանելի Խուժիկը եւ լսելով անկէ, պատմեց մեզի իւրաքանչիւրին խօսքը եւ սուրբերուն վախճանը, եւ մենք ալ գրեցինք ստուգութիւնը» (Փարպ. Մէ):

«Ղեւոնդեանք Հայ եկեղեցականութեան պարծանք սուր-

բերն են. իրենց վրայ կ'անձնաւորուի Հայրենիքի եւ Հաւատքի նուիրումին գաղափարը: Վարդանանց ընկեր եւ քաջալիրող, ժողովուրդին կեանքին մէջ բարձր պահեցին կրօնքի սրբութիւնը, եւ ամենէն ականաւոր գործիչները եղան անոնք Հայ Եկեղեցիով Հայ ազգութիւնը ապրեցնելու եւ պահպանելու սկզբունքին: Իրենց այդ ուղղութեան գաղտնիքը իրենց դաստիարակութեան մէջ պէտք է տեսնել: Գրեթէ ամէնքն ալ, բացի մէկէն, որ սակայն ամենուն սիրոյն առարկայ մնաց միշտ, աշակերտներն էին Սահակ-Մեսրոպեան դպրոցին, որ դիտցած էր անոնց մէջ զօրացնել որչափ ուսման եւ զարգացումի՝ նոյնքան սրտի եւ նուիրումի մարդեր» (ՍՈՒՐՔԻ ԵՆ ՏՕՆՔ: Երուսաղէմ, 1939, էջ 215):

Հայ Եկեղեցին Ղեւոնդեանց յիշատակը կը կատարէ Մեծ Բարեկենդանի նախորդ երեքշաբթի օրը: ՄԱՐՁՈՒԱՆՑԻ ԵՆ ԼԻԱԿԱՏԱՐ Յայսմաւուրքները կը նշանակեն անոնց տօնակատարութիւնը Յուլիս 31ին, իսկ Փետրուարի 28ին՝ Օգոստոս 2ին:

Ղեւոնդեանց յիշատակին կայ լման ԿԱՆՈՆ մը Ծարակնոցիմ մէջ, գրուած գրքին ամենէն վերջը: Յատկանշական եւ ընդարձակ է «Մանկունք» շարականը, որուն իւրաքանչիւր տողը կը սկսի Հայ այբուբենի մէջ մի գիրով՝ Ա-է մինչեւ Բ: Ստորեւ կուտանք մէկ տուն այդ շարականէն:

Լուսաւորիչն ամենեցուն Ղեւոնդէի Ս. Վարդապետ
Խոհական մեծ խորհրդով խրատեալ լցոյց զաշակերտեալն՝
Մաւախալ զլոյս գիտութեան Հոգիս արանց կատարելոց,
Կամաւոր յօժարութեամբ կատարեցան սիրով Փրկչին:

Թարգմանութիւն.

Լուսաւորիչն ամենքին Ղեւոնդիոս Ս. Վարդապետը
Խոհական մեծ խորհրդով խրատեց-լեցուց զինուորները.
Մաւախեց գիտութեան լոյսն նահատակուելիքներու
Հոգիներուն,
Կամաւոր յօժարութեամբ սիրով Փրկչին նահատակուեցան:

Սկզբնաղբիւրներ. Ղազար Փարպեցի. Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1891, [Տպրիս, 1904] Հատուածք ԽԷ-ՄԸ: ԵՂԻՇԷ, Պատմութիւն Վարդանանց պատերազմիմ, Երուսաղէմ, 1865. Յեղանակ Ը: [Եղիշէի վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին: Ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երեւան, 1957]:

12. ԹԱՐԳՄԱՆԻՉ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ

«Թարգմանիչ» Համեստ տիտղոսով ծանօթ են Սահակ-Մեսրոպեան ամբողջ աշակերտութիւնը, որոնք թիւը հարիւրի կը հասնի՝ 60 Ս. Սահակի աշակերտներ եւ 40 Ս. Մեսրոպի, չհաշուելով այն բազմաթիւ «կրտսեր թարգմանիչները», որոնք մատաղ տարիքէն աշակերտեցին Մեծ Վարդապետներուն կամ իրենց աշակերտներուն: Ասոնցմէ սակայն հազիւ 30 հատին անունները ծանօթ են պատմութեան, որոնցմէ Տօնացոյցի անցած են երեք հոգի միայն:

«ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆԻՉՍԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԱՑՆ ՄԵՐՈՑ» անուան տակ կը յիշատակուին 6 հոգի, գլխաւորութեամբ Ս. ՄԵՍՐՈՊԻ, զոր տեսանք արդէն: Իսկ վերջին երկուքը՝ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ ԵՆ ՆԵՐՍԷՍ ԵՆ ՈՐԶԱԼԻ, այս խումբէն չեն, եւ յետոյ պիտի տեսնենք իրենց կարգին:

Այս գլուխին ներքեւ պիտի անդրադառնանք միջանկեալ երեքին՝ Եղիշէ, Մովսէս Քերթող եւ Դաւիթ Անյաղթ Փիլիսոփայ:

Այս երեք երանելի վարդապետաց վարքագրութեան իբրեւ նախերգանք ԼԻԱԿԱՏԱՐ վարք Սրբոցը ունի գեղեցիկ յառաջաբան ներբողեան մը, զոր կ'ուզենք յառաջ բերել թարգմանաբար:

«Գեղեցիկ խորհրդով ընդ մեծի բարունապետի տանս Թորգոմական Ս. Մեսրոպին Հետ կը տօնախմբուի յիշատակը անոր գլխաւոր աշակերտներէն երեք վարդապետներուն, որոնք փայլեցան առաքիլի սրբութեամբ եւ աստուածագիտութեամբ եւ եղան լուսաւոր վարդապետներ Հայաստանեայց Եկեղեցւոյ: Թէեւ շատ եղան Սրբոց Թարգմանչաց Սահակայ եւ Մեսրոպայ աշակերտները, որոնք եւս Թարգմանիչ կոչուեցան իբրեւ գործակիցները իրենց վարդապետներուն, սակայն այս երեքը

աւելի նշանաւոր հանգիսացան իրենց գրութիւններով. խօսքով եւ օրինակով ու աշխարհի վրայ անմահ յիշատակ ձգեցին, անած ըլլալով իրենց փոքր տարիքէն հոգեկիրթ դաստիարակներու մօտ՝ կրթուեցան կատարեալ առաքինի վարքի մէջ եւ, լեցուելով իմաստութեան հոգիով եւ հանճարով, կատարեալ եղան թէ՛ արտաքին (աշխարհիկ) եւ թէ՛ աստուածային դպրութեան մէջ, ինչպէս նաեւ հմտութեամբ արեւելեան եւ արեւմտեան լեզուներու, Աթենական ուսմանց եւ փիլիսոփայական եւ աստուածաբանական իմաստութեան հրահանգութիւններով: Լրացուցին իրենց հոգեւոր հայրերուն պակաս ձգածը եւ շատ մը թարգմանութիւններ կատարեցին նախնի վարդապետներու եւ մեծանուն իմաստասէրներու գործերէն: Իրենք եւս յօրինեցին բազմաթիւ ճառեր, մեկնութիւններ եւ տեսակ-տեսակ գիրքեր եւ բանասիրական օգտակար գրութիւններ, քերթողական, վիպասանական, խրատական եւ կանոնական» [ԼԻԱԿԱՏԱՐ, Ե, էջ 309-310]:

ԵՂԻՕԷ ՎԱՐԴԱՊԵՏ

Վարդանանց շարժումին դիւցազներգակ եւ հոգեկից պատմագիրն է: Ըստ հնագոյն Տօնացոյցներու՝ Եղիշէ միակ տօնակիցն է Ս. Մեսրոպի. մնացեալները վերջէն աւելցուած են այս երկուքին վրայ. «ԺԴ դարու ձեռագիրներն ալ չունին Մովսէսի եւ Դաւիթի անունները, որք աւելի ուշ աւելցած են» (Ազգ. էջ 435): Մնած կը նկատուի Ե դարուն սկիզբները, այնպէս որ Հայ գիրքը յօրինուած միջոցին հազիւ 4-5 տարեկան մատաղ մանուկ մըն էր: Հաւանաբար կանուխ երիտասարդութեան է, որ մաս կազմած է Սահակ-Մեսրոպեան աշակերտութեան, եւ իր երկու մեծ վարդապետներու վախճանած միջոցին շուրջ 40 տարեկան հասուն անձնաւորութիւն մըն էր: Իր երիտասարդութեան կը կարծուի, որ զինակիր կամ քարտուղար եղած է Վարդանի:

«Հայաստանի մէջ իր ուսումը լրացնելէ ետք գացած է Աղեքսանդրիա (Եգիպտոս) Մովսէս Խորենացիի եւ ընկերներուն հետ: Այս առթիւ շրջած է Պաղեստինի տնօրինական սրբավայրերը, այցելած է յատկապէս Թաբոր Լեռը, զոր ճշդիւ կը նկարագրէ իր Այլակերպութեան ճառին մէջ» (Նորայր Եպս.

Պօղարեան, Հայ գրողներ, էջ 24):

444ին գումարուած Եահայիւանի ժողովին մէջ կը յիշուի «Եղիշէ Դրան երէց», իսկ 450ին գումարած Աշտիշատի ժողովին մէջ ալ յիշուած է «Եղիշէ Ամատունեաց Եպիսկ.»: Երկուքն ալ կը նոյնացուին Եղիշէ Պատմագիրին հետ: «Դրան երէց» ըլլալ կը կարծուի Մամիկոնեան նախարարութեան, ինչպէս Ղեւոնդեանց խումբէն տեսանք, թէ Մուշէ քահանան Դրան Երէցն էր Արծրունեաց նախարարութեան: «Հայ նախարարներու եւ զինուորներու հետ ժամանակ մը գտնուած է նաեւ Պարսկաստան, 442-9 տարիներու շրջանին: Դրան երէցի իր հանգամանքին շնորհիւ ծանօթացած է շատ մը Հայ նախարարներու եւ ազնուական տիկիներու» (անդ):

Ս. Յովսէփ Հողոցմեցիի յաջորդող երկու Մանազկերտացի կաթողիկոսները հետեւած են տիրող Պարսիկ պետութեան հաւատարիմ եւ Վարդանանց շարժումին հակառակ քաղաքականութեան եւ այդ իսկ պատճառով չեն քաջալիրուած, ընդհակառակը հալածած են Թարգմանչաց սերունդը: «Հալածուողներէն գլխաւորը եղած է Եղիշէ, իբրեւ Վարդանի եւ իր շարժումին փառաբանողը: Այս պատճառով պարտաւորուած է հրապարակէ քաշուիլ» (Ազգ. էջ 437) եւ զինքը նուիրած՝ ճգնութեան եւ գրական զբաղումներու: Իսկ իր ճգնութեան վայրը կը նկատուի Մոկաց եւ Ռշտունեաց լեռները, Վանայ ծովին հարաւային կողմը: Այս կողմերն ալ կը վախճանի սրբութեամբ, գրեթէ մոռցուած վիճակի մէջ: Իր գերեզմանը կը պահուէր Չարահան Ս. նշանի վանքը, Վանայ Մովի հարաւ-արեւելեան անկիւնը գտնուող Ոստան քաղաքին մէջ: Կը պատմուի, որ Մոկաց իշխանը, որուն երկրին մէջ եւս ճգնած էր Եղիշէ, եկած ու գերեզմանէն վերցուցած է անոր գլուխը եւ աջ ձեռքը եւ տարած թաղած է Մոկաց աշխարհի այն քարայրը, ուր ճգնած էր ան, եւ անոր վրայ շինած է «վայելուչ եկեղեցի»: Այնպէս որ, Եղիշէն ունեցած է երկու գերեզման եւ երկու վանք՝ իր անունով շինուած:

Ինչպէս ակնարկեցինք, բոլոր Թարգմանիչ Վարդապետներու մէջ Եղիշէն առաջին անգամ կ'արժանանայ իր մեծ Վարդապետին՝ Ս. Մեսրոպին տօնակից դառնալու «իբր Վարդանանց փառաբանող, իբր հալածեալ եւ իբր ճգնաւոր» (Ազգ. էջ 438): Վախճանած կը նկատուի 461ին, ըստ Օրմանեանի եւ 464ին՝ ըստ Պօղարեան Սրբազանի, որ իր

«ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ» գրքին մէջ Եղիշէի նուիրած գլուխի վերջաւորութեան կուտայ մի առ մի անոր գրական գործերը «ժամանակագրական մօտաւոր կարգով», որոնք են հետեւեալները առ Հասարակ լոյս տեսած տպագրութեամբ:

1. Յայտնութիւն Տեսուչի Թաբոր Լերին, գրուած 445ին:

2. Պատմութիւն Վարդանանց պատերազմին: Գրած է խնդրանքովը Մամիկոնեան Դաւիթ Երէցի, որ մին էր Արտաշատի ժողովականներէն: Գիրքը բաժնուած է եօթ եղանակներու, որոնց վրայ աւելցուած է ութերորդ մը, 454 եւ 464 թուականներուն: Վարդանանց Պատմութիւնը Եղիշէի գլուխ գործոցն է, գրական մեծ արժանիքով: Գրուած 451ին:

3. Բան խրատու յաղագս միանձանց: Գրած է գրական գեղեցիկ ոճով 455ին:

4. Վարդապետութիւն ի Չարչարանս, ի Խաչելութիւն, ի Թաղումն եւ ի Յարութիւնն Քրիստոսի, գրուած 456ին:

5. Մեկնութիւն Յեսուայ եւ Դատաւորաց գրքերու: Գրած է այլաբանական ոճով 460ին:

6. Վասն Հոգւոց մարդկան՝ 460ին:

7. Մեկնութիւն Մենդոց, ցարդ չէ գտնուած, բայց Վարդան Վարդապետի նոյն գիրքի Մեկնութեան մէջ պահուած են բազմաթիւ Հատուածներ:

8. Հարցմունք եւ պատասխանիք ի Գիրս Մենդոց:

Եղիշէ յիշուած է Կաթողիկ Համայնագիտարանի մէջ իբրեւ պատմագիր (Հատոր Ե. էջ 387), իր Պատմութիւնը թարգմանուած է անգլերէնի, ռուսերէնի, իտալերէնի եւ ֆրանսերէնի: Կը յիշուի երեք Յայնմաւորքներու մէջ ալ Փետրուար 27ին: Իւրայատուկ շարական չունի:

* * *

Նախքան յաջորդ դէմքի վարքագրութեան անցնիլը անհրաժեշտ կը տեսնենք միջանկեալ ընել հետեւեալ նկատողութիւնները.

«ՄՈՎՍԷՍ ԲԵՐԹՈՂ» անունով տօնացոյցի անցած Սուրբը կը նոյնացուէր անցեալին մէջ Ե դարուն ապրող Հռչակաւոր Մովսէս Խորենացի մեծ Պատմագիրին Հետ, ինչպէս արդարեւ ըրած են նաեւ

նոր ժամանակներու հանրածանօթ մեծ հեղինակներ Մ. Օրմանեան, Ե. Դուրեան եւ Թ. Գուշակեան Պատրիարքները եւ ուրիշներ: Սակայն Խորենացիի կեանքին եւ իր աշխարհահռչակ «Հայոց պատմութեան» գրութեան պարագաները մթին, տարտամ եւ վիճելի ըլլալուն պատճառով քննադատներ վերջին ժամանակներու մէջ անոր անձը եւ պատմագիրքը տարուբերեցին Զ-Թ դարերուն միջեւ: Ըստ երեւոյթին տարբեր ժամանակներու մէջ ապրող մէկէ աւելի Մովսէսներ իրարու Հետ շփոթուած են: Իսկ «իր գրած Պատմութեան մէջ Հետագային կատարուած են բազմաթիւ ընդմիջարկութիւններ, որոնք ստեղծեցին բանասիրական խրթին Հարցեր եւ պատճառ դարձան կրքոտ եւ երկարատեւ քննադատութեանց» (Հայ գրողներ, էջ 16):

Մովսէս Բերթողի եւ կամ Մովսէս Խորենացի Պատմիչին անունը չէ յիշուած Յայնմաւորքներում մէջ. կայ միայն ԼԻԱԿԱՏԱՐԻ մէջ (էջ 492): Չէ յիշուած նաեւ Ե դարու հեղինակներու մօտ: Ըստ Փարպեցի, Ե դարու գլխաւոր պատմիչը, իր գրածը կը նկատէ «եւրոպոյ պատմութիւն» Ազաթանգեղոսի եւ Փաւստոսի Պատմութիւններէն յետոյ եւ կ'անդիտանայ Խորենացիի ծանօթ Պատմութեան գոյութիւնը: Մինչդեռ Խորենացիի անունով ճանչցուած Պատմութեան հեղինակը ինքզինքը կը նկատէ Ե դարու գրող եւ Սահակ-Մեսրոպեան աշակերտութենէն. «Վասն որոյ առեալ մեծին Սահակայ եւ Մեսրոպայ զՄԵՁ առաքեցին յԱղեքսանդրիայ» (Խորենացի, գիրք Գ. ԿԱ գլուխի վերջը: Իսկ յաջորդ ԿԲ. գլուխին մէջ կը նկարագրէ իր ճամբորդութիւնը): Խարդախող հեղինակ մը կամ կեղակարծ դէմք մը չէր կրնար Սուրբերու կարգ անցնիլ: Լատին եկեղեցին վերջերս շատ մը կասկածելի սուրբեր հանած է իր Տօնացոյցէն: Այս խրթին Հարցին լուծումը գտած ըլլալ կ'երեւի Նորայր Եպս. (այժմ Արք.) Պողարեան ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ արժէքաւոր իր գործին մէջ՝ ճանչնալով գոյութիւնը երկու Մովսէսներու. մէկը Ե դարու եւ միւսը Զ դարու դէմքեր: Մենք կ'որդեգրենք այս լուծումը եւ կը ներկայացնենք երկուքին ալ Համառօտ կենսագրականները, որովհետեւ Համոզուած ենք, որ երկուքն ալ արժանի են Տօնացոյցի անցնելու, թէ՛ իրենց վարքով եւ թէ՛ իրենց գրական գործերուն մէջ արտայայտուած ոգիով եւ թէ՛ մանաւանդ իրենց մշակած արժէքաւոր կրօնական, աստուածաբանական եւ իմաստասիրական գրականութեամբ:

Այս երկու Մովսէսներէն մին ծանօթ է «ՊԱՏՄԱՀԱՅՐ» եւ միւր «ՔՆՐԹՈՂԱՀԱՅՐ» տիտղոսներով: Որքան ալ Հանրածանօթը Պատմահայրն է, մենք կ'ենթադրենք, որ բուն տօնելին «ՔՆՐԹՈՂԱՀԱՅՐ» է, ինչպէս Տօնացոյցն ալ կը հաստատէ Մովսէսի Համար իր կիրարկած «ՔՆՐԹՈՂ» մականորով: Արդարեւ «ՔՆՐԹՈՂ» է, որ մշակած է առաւելաբար կրօնական խոր գրականութիւն, ինչ որ կարեւոր դեր կը կատարէ անձի մը սրբացման մէջ: Այս երկու Մովսէսները ներկայացնելու ատեն կը հետեւինք (երբեմն բառ առ բառ) Նորայր Արք. Ի վերոյիշեալ գրքին* :

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ ՊԱՏՄԱՀԱՅՐ

Մնած կը նկատուի Դ. դարու վերջերը, Հաւանաբար 390ին, ըստ ոմանց Տարօն գաւառի Խորնի կամ Խորօնք գիւղը եւ ըստ այլոց՝ Սիւնեաց նահանգի Խորեան գիւղը, որոնց մէկէն կամ միւսէն ստացած է Խորեանցի մականունը: Իր նախնական ուսումը ստացած կը նկատուի Սահակ Հայրապետի մօտ եւ հետեւաբար անոր 60 աշակերտներէն մին կարելի է նկատել: Ապա զրկուած է Աղեքսանդրիա բարձրագոյն ուսման Համար Հաւանաբար 435ին: Մովսէս Խորենացի ճամբան նախ կը Հանդիպի Եղեսիա եւ կը ծանօթանայ տեղւոյն նշանաւոր դիւանին: Անկէ կ'անցնի Անտիոքի վրայով Պաղեստին, երկրպագելու Ս. Տեղերուն եւ կարճ ուսումնասիրութիւններ կատարելու: Ապա կը մտնէ Եգիպտոս եւ Հոն մի քանի տարի ուսանելէ եւ յունարէնի եւ իմաստասիրութեան լաւ Հմտանալէ ետք ճամբայ կ'ելլէ դէպի Ելլադա: Բայց Հովերուն բռնութեամբ կը ջշուի Իտալիա, որ կ'այցելէ Հռոմ, Ս. Պետրոսի եւ Ս. Պօղոսի գերեզմաններուն: Կարճ ժամանակ Հռոմի մէջ մնալէ ետք կ'անցնի Ելլադա: Պահ մը կը կենայ Աթէնք եւ ձմեռուան վերջնաւուն կ'ուղղուի դէպի Բիւզանդիոն եւ անկէ Հայրենիք:

Հայրենիք Հասնելուն (440) ցաւով կը տեսնէ, որ Մեծն Սահակ եւ Մեծն Վախագանած են, եւ ազգն եւ եկեղեցին մատնուած տխուր

* [Մովսէս Քնրթողար եւ Մովսէս Խորենացի ինքնութեան խնդիրը վերջերս քննութեան առած է Հ. Պօղոս Անանեան եւ ըստ էութեան լուծած: Տե՛ս «Բազմավէպ», 1991, N1-2, էջ 7-24]:

կացութեան: Մովսէս կը նուիրուի գրական աշխատանքներու եւ կը կատարէ զանազան Թարգմանութիւններ, որոնց կարգէն են Հաւանաբար Փիլոնի քանի մը գործերը. 1. Յաղագս Աստուծոյ ճանաչումը: 2. Յաղագս բան ունել եւ անասուն կենդանացոյ: 3. Որ յԵլւն է խնորոյ, Իրեմէոսի գրուածքները, Գրիգոր Նազիանզացիի ճառերը եւ Մեծն Աղեքսանդրի Պատմութիւնը:

Այդ միջոցին կը կանչուի Բագրեւանդի եպիսկոպոսութեան (446), բայց կարճ կը տևէ իր պաշտօնավարութիւնը, վասնզի Հակոբակորդներու իր դէմ Հանած Հալածանքը կը սաստկանայ, եւ շուտով մահը վերջ կը դնէ իր Հայրենանուէր կեանքին: Մովսէսի գերեզմանը կը ցուցուէր Տարօնի Առաքելոց վանքի մէջ, ուրիշ Թարգմանիչներու շիրիմներուն շարքին:

Խորենացիի զուգի գործոցն է Հայոց պատմութիւնը, զոր գրած է Սահակ Բագրատունի երիտասարդ եւ ուսումնասէր իշխանին խնդրանքով, երբ ինքը արդէն ծերացած էր եւ Հիւանդոտ (482):

Այդ գիրքին շնորհիւ Մ. Խորենացի արժանացած է «Պատմահայր Հայոց» փառաւոր տիտղոսին: Ան ի յայտ կը բերէ ոչ միայն պատկառելի Հմտութիւն, այլ նաեւ Հարեհապետի քարճր ոգի: Իր ազգասիրութեամբ ան կը նայ օրինակ ըլլալ իր բոլոր արեւակիցներուն:

Խորենացիին կը վերադրուի նաեւ «Պատմութիւն Սրբոց Հռիփսիմեանց» (Ն. Եպս. Պօղարեան, ՀԱՅ ԳՐՈՂ ՆԵՐ, էջ 14-15):

Ոմանք Խորենացիին կը նոյնացնեն Ղազար Փարպեցիի առ Վահան Մամիկոնեան Թուղթին մէջ յիշուած «ՄՈՎՍԷՍ ՓԻԼԻՍՈՓՈՍ»ին հետ:

«Երանելի Փիլիսոփան Մովսէս, որ արդարեւ երբ մարմնի մէջ էր, շարունակ երկնային զօրքերու (հրեշտակներու) քաղաքացի էր: Հայոց (յետադիմական) արեղանները Հալածական ըրին զայն տեղէ տեղ: Անոր լուսաւորող եւ տգիտութիւնը Հալածող գիրքերը տգիտաբար Փաթաղիկէս (ճակատագրապա՞շտ կամ մոլորակա՞ն - Շ. Գ.) կը կոչէին եւ տակաւին շատ մը կերպերով թշնամանք ցոյց տուին եւ ի վերջոյ ամօթալի եւ խաբէական միջոցներով վար առին զայն Եպիսկոպոսական աթոռէն եւ թոյն խմցնելով՝ խեղդամահ ըրին սուրբը» (Փարպեցի, Թուղթ առ Վահան, էջ 686):

Մովսէս Խորենացի յիշուած է Կաթողիկ Համայնագիտարանի եւ Օքսֆորդեան բառարանի մէջ: Իր պատմութիւնը բազմաթիւ լեզուներու թարգմանուած է: Չէ յիշուած մեր Յայսմատորքանքում մէջ: Լայնօրէն յիշուած է ԼԻԱԿԱՏԱՐԻ մէջ, ուր ի միջի այլոց ըսուած է իր մասին:

«Այն ժամանակներու մէջ քաջափայլեցաւ առաջինութեամբ եւ կատարեալ իմաստութեամբ Աստուծոյ մարդը՝ Սուրբն Մովսէս Խորենացի, մականուանեալն Քերթող կամ Քերթողահայր, այսինքն՝ բանահիւս եւ բանաստեղծներուն գլուխը, որ գրական գործերու կողմէ լոկ ափկա կուգայ իր վարդապետներէն՝ Սահակէն եւ Մեսրոպէն յետոյ... նոյնպէս սուրբ կենցաղավարութեամբ եւ Հոգեւոր վարդապետութեամբ սքանչելի էր» (էջ 493):

Իսկ ուսմունքի մասին կըսուի.

«Ամէն տեսակ հմտութեանց տիրացաւ եւ ամէն տեսակ հնութեանց լաւ խելահաս եղաւ. զօրաւոր էր գրիչով եւ հզօր խօսքով, սրբակրօն վարքով շատերէն աւելի գերազանցապէս փայլեցաւ: Որուն արժանաւոր գովութեան մասին քիչ բառերով, բայց տիրապէս կ'անդրադառնայ Սահակ Արծրունի երեւելի Հայ իշխանը Վասպուրական նահանգին, երբ զայն կը կոչէ իր թուղթին մէջ «Դեսպան եւ սպասաւոր Քրիստոսի մեծութեանց, երկրի վրայ երկնակենցաղ մէկը եղար եւ՝ լուսաւորիչ խաւարեալներու... որ մեզի տրուեցար իբրեւ երկրորդ Սահակ եւ Մեսրոպ, անոնց առ Աստուած երթալէ յետոյ» (անդ):

Այս ներբողականը կրնայ արժանաւորապէս պատշաճել երկու Մովսէսներուն ալ:

ՄՈՎՍԷՍ ՔԵՐԹՈՂԱՆԿ (470?-530?)

Մովսէս Քերթողի մասին կենսագրական վստահելի տեղեկութիւններ կը պակսին: Իր ծնունդը կը դնենք 470ին, իսկ մահը շուրջ 530ին, երկուքն ալ ենթադրաբար: Ասողիկ պատմիչի համաձայն՝ ան եպիսկոպոս էր Բաղրեւանդ գաւառի (ինչպէս եղած էր Մովսէս Խորենացի):

Իր երկերէն դասելով՝ Մովսէս հմուտ էր յոյն լեզուին, եւ մասնաւորաբար երբեակ ուսմանց, այսինքն՝ Քերականութեան, Հոնտորութեան եւ Իմաստութեան:

Մովսէս Քերթողի աշակերտներէն յիշուած են Թէոդորոս Քերթող, Պետրոս Քերթող (557) եւ Եզրաս Անգեղացի, որ Զ Դարու երկրորդ քառորդին (529-557) նշանաւոր եղած է ճարտասանութեան իր դասերով եւ բազմաթիւ աշակերտներ ունեցած է:

Մովսէս Քերթողահայր, որ մեծապէս համբաւուած է իբրեւ իմաստասէր եւ բանաստեղծ, բացի իր ուսուցչական արդիւնաւոր գործունէութենէն, ունեցած է նաեւ գրական կարեւոր աշխատանք՝ իբրեւ թարգմանիչ եւ հեղինակ թողած է բաւական հարուստ ժառանգութիւն: Կրնանք յիշել հետեւեալները.

1. Քերականութիւն Դիոնեսիոս Թրակացիի (Բ դար, Ք. ա.), զոր թարգմանաբար պատշաճեցուցած է մեր լեզուին:

2. Մեկնութիւն Դ. Թրակացիի Քերականութեան:

Հաւանաբար ինքն է թարգմանիչը Փիլոն Եբրայեցիի ճառերէն ոմանց, ինչպէս.

3. Յաղագս վարուց կենաց տեսականի, կամ՝ Յաղագս Հեսեայց:

4. Յաղագս Աստուածային աւրինացն այլաբանութեան:

5. Կեանք Իմաստնոց:

6. Առանց պատրաստութեան ի Սամփոն:

7. Գիրք Պիտոյից, զոր Ափթոնիոս անունով Յոյն Հոնտորի մը (Գ դար, Ք. յ.) գործին հետեւողութեամբ յօրինուած է իբրեւ դասագիրք Հոնտորութեան:

8. Յաղագս միոյ բնութեան Բանին Մարմնացելոյ: Յաղագս ի յուովից կատարեալ կենդանի, ընդէ՞ր մի բնութիւն:

9. Շարականք, Աստուածայայտնութեան ծրագալոյցին, Մննդեան կամ Աստուածայայտնութեան Ա-Ը Աւուրցն, Կարգ Յարութեան, ԱԶ-ԴԿ, Հանդերձ Մեծացուցէներով, Տեսունընդառաջին եւ Վերափոխման Ա. Աւուրն:

Մովսէս Քերթողի շարականներէն ոմանք, իբրեւ բանաստեղծութիւն, լաւագոյններէն են իրենց գեղեցիկ եւ մասնայատուկ եղանակ-

ներով: Յարութեան շարականներուն մէջ ալ կը Հանդիպինք աստուածաբանական բանաձևեր, որոնք ճարտարօրէն կը տարագեն Հայոց եկեղեցիին դաւանութեան եւ վարդապետութեան վերաբերող բազմաթիւ կէտեր (Ն. Եպս. Պողարեան, Հայ գրողներ, էջ 39-41):

ԴԱԻԻԹ ԱՆՅԱՂԹ ՓԻԼԻՍՈՓԱՅ

Այս նշանաւոր մատենագիրն ալ շփոթուած է իր Համանուն այլ Դաւիթներու հետ, օրինակ է դարուն ապրող եւ «Հարքացի» կոչեցեալ Դաւիթի մը հետ, որ իրեն պէս «կը զարգանայ իմաստասիրական եւ աստուածաբանական ուսմանց մէջ» («Հայ գրողներ, էջ 86): Ե. Դարու հեղինակներէն չէ յիշուած, ոչ մահն յայտնի է եւ ոչ ալ ստոյգ ժամանակը, ուր ապրած է: Աւանդութիւնը կը նկատէ զայն քեռորդի Մովսէս Խորենացիի, որուն աշակերտած կը համարուի: Ըստ Պօղարեան Արբազանի՝ ծնած կը նկատուի Զ դարու վերջերը՝ 590ին եւ վախճանած՝ 660ին. երկու թուականներն ալ հարցականով նշանակուած են: Ծնած է Տարօն գաւառի Ներգիմ գիւղը եւ կոչուած՝ Ներգիմացի կամ Տարօնացի:

«Դաւիթ իմաստասիրական ուսմանց հետեւած է Աղեքսանդրիոյ մէջ, աշակերտներով նոր Պղատնական» (ի ձայնէ) Դաւիթ Փիլիսոփային (550?-620?): Դաւիթ Ներգիմացի իր իմաստասիրական եւ Հոեաբրական հզօր տաղանդին շնորհիւ շահած է ԱՆՅԱՂԹ մակդիրը» (Հայ գրողներ, էջ 73): Այս մասին Օրմանեան կ'ըսէ. «Անյաղթ փիլիսոփայ կամ պարզապէս Անյաղթ մականունն ալ ստացած է յատկապէս եւ գրեթէ բացառապէս յունական իմաստասիրութեանց պարագած ըլլալուն համար» (Ազգ. էջ 440): Իսկ Գուշակեան կ'ըսէ. «Փիլիսոփայական գիտութեանց մէջ ստացած մեծ հմտութիւնը անմրցելի նկատել տուած է զինքը. ա՛յդ է իր ԱՆՅԱՂԹ տիտղոսին բացատրութիւնը» (Սուրբք եւ Տօնք, էջ 219):

«Մեր մեծագոյն թարգմանիչներէն մին եղած է» Դաւիթ «եւ գլուխ հանած է իմաստասիրական ամբողջ մատենաշարի մը թարգմանութիւնը: Իր լեզուն սակայն երբեմն չափազանց յունաբան է եւ կը կորսնցնէ Հայերէնի բնիկ վայելչութիւնն ու ճաշակը» (Հայ գրողներ, էջ 73):

Տօնելի եղած ըլլալէն Օրմանեան կ'ուզէ հետեւցնել, թէ «Հալածեալ մը եղած է»: Այս մասին սակայն որեւէ յիշատակութիւն չկայ*: Մենք կ'ենթադրենք, որ տօնելի դարձած է իբրեւ «բարձր մատենագիր մը եւ մաքուր հաւատացեալ մը, որ արժեցուց իր անձն ու գրիչը Աւետարանի ծառայութեան դաշտին մէջ», - ինչպէս կը հաստատէ Գուշակեան Պատրիարքը (Սուրբք եւ տօնք, էջ 219): Իր գերեզմանը կը ցուցուէր «Տերինկատարի Ս. Առաքելոց վանքին պարսպին ներքեւ», ուրիշ թարգմանիչ վարդապետներու հետ: Եկեղեցական-վարչական պաշտօն վարած ըլլալու ոչ մէկ յիշատակութիւն կայ:

Թէեւ մեր Յայսմատուրքներուն մէջ չէ յիշուած, բայց լիովին ներկայացուած է ԼԻԱԿԱՏԱՐԻ մէջ, ուր կ'ըսուի իր մասին ի մէջ այլոց. «Հելլենական ուսմամբ գերազանցեալ ամենքը»: Անխտիր փայլեցաւ թէ՛ Հայոց եւ թէ՛ Հելլենացուց մէջ իմաստասիրութեամբ եւ աստուածասիրութեամբ: Հաւաստապէս յաջող էր թէ՛ Հայերէն եւ թէ՛ յունարէն գրելու մէջ: Գրած է շատ մը ճառեր վսեմ ոճով, որոնցմէ կը յիշուին երկու ներբողեաններ, մին Ա. Մննդեան մասին, իսկ միւսը խաչի մասին, «Բարձրացուցէք» սկզբնաւորութեամբ: Վերջինս գրուած կը նկատուի Գիւտ Կաթողիկոսի խնդրանքով: Այս վերջին ներբողեանը իր ամենէն նշանաւոր եւ ամենէն ծանօթ գործն է, զոր տաղաչափեալ ձևի վերածած է Ներսէս Ենքուզալի:

Պօղարեան Արբազան կը յիշատակէ իր թարգմանչական գործը «կարգով» ըստ հետեւեալին:

Ա.- Իր ուսուցիչ Դաւիթ Փիլիսոփայի երկերէն թարգմանած է, չափատրապէս յունքան լեզուով.

1. Սահմանք իմաստասիրութեան:
 2. Վերլուծութիւն Ներածութեան Պորփիրի:
 3. Մեկնութիւն ի Վերլուծական Արիստոտէլի:
- Բ.- Արիստոտէլի (384-321) երկերէն.

1. Ստորագութիւնք.
2. Յաղագս Մեկնութեան - Պերիարմէնիաս: Երկուքն ալ չափա-

* [Հալածական լինելը կը փաստուի վիճաբար տղերքներով (Գարեշա) եւ Առաքել Միւնեցու յիշատակարանով]:

զանց յունարան:

3. Պատմութիւն Յաղագս աշխարհի:

4.- Յաղագս առաքինութեանց:

9. Պորփիրի (233-304) երկերէն:

Ներածութիւն Ստորագութեանց Արիստոտէլի:

7. Յամբղիքոսի (շ. 283- շ. 333) երկերէն:

1. Մեկնութիւն Ստորագութեանց Արիստոտէլի (Թերի):

2. Մեկնութիւն Պերիարմէնիասի:

Այս երկուքն ալ թարգմանուած են չափազանց յունարան լեզուով:

Ե. Ոլիմպիոդորոսի երկերէն:

Մեկնութիւն Ստորագութեանց Արիստոտէլի:

Ասոնցմէ զատ ունի նաեւ:

1. Մեկնութիւն Բերականին Դ. Թրակացւոյ:

2. Ճառ ի Մնուեղ Փրկչին Ս. Բարսղի, թարգմանած է Դամասկոսի մէջ, հրամանաւ Մամիկոնեան Համագասպ Կիւրապաղատի (656-9), որ «ընթերցասէր եւ ուսումասէր» իշխան մըն էր ըստ Սեբէոսի:

3. Հարցմունք Ս. Բարսղի, թարգմանած է Մամիկոնեան Համագասպ Կիւրապաղատի հրամանով:

4. Ներբողեան Ս. Խաչն աստուածընկալ.- Բարձրացուցէք զՏէր Աստուած մեր:

5. Գովեստ ներբողական ի Սուրբ Կաթողիկէ եկեղեցի.- Վասն որոյ մեր ի մաղթանս Հայցեալ: (Հայ գրողներ, էջ 14-15):

ՇԱՐԱԿԱՆ ՍՐՐՈՑ ԹԱՐԳՄԱՆՁԱՑՆ, առաջին տուն:

Որք զարդարեցին տնօրինարար զիմաստս Անեղին:

Հաստատելով յերկրի զԳիր Կենդանի:

Հովուել զՀօտ Նոր Իսրայէլի:

Երգով քաղցրութեան Հնչմամբ զԱստուած օրհնեսցուք:

13. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՕԶՆԵՑԻ ՀԱՅՐԱՊԵՏ (650?-728)

Նահատակեալ Յովսէփ Հողոցմեցի Կաթողիկոսէն յետոյ առաջին Հայրապետն է, որ արժանաւորապէս տօնելի Սրբոց կարգը կ'անցնի: Իրմէ յետոյ ալ լոկ մէկ Կաթողիկոս ունեցանք տօնելի՝ Ներսէս Շնորհալի:

Յովհաննէս Օձնեցի Հայրապետը արդարեւ Հայց. եկեղեցիի փառքերէն է՝ ըլլալով մեր ամենէն պատկառելի եւ արդիւնաշատ հոգեւոր պետերէն մէկը: Մնած է Տաշիրք գաւառի Օձուն գիւղը՝ այսօրուան Սանահինի մօտ, 650-ական թուականներուն, ազնուական ընտանիքէ: Ազնուական մնացած է կենցաղով, գործքով եւ գրականութեամբ: Աշակերտած է Թէոդորոս Բռթենաւոր վարդապետին 675ին, որ աշակերտած էր Դաւիթ Անյաղթի, որ աշակերտած էր Մովսէս Խորենացիի, որ աշակերտած էր Սահակի եւ Մեսրոպի: Բռթենաւորի «մօտ Հմտացած է մասնաւորաբար Աստուածաշունչ Գրոց, իմաստասիրութեան, քերականութեան եւ հոստորութեան» (Հայ գրողներ, էջ 98): Ձէ յիշուած, թէ կաթողիկոսանալէ առաջ որեւէ պաշտօն վարած է: Կաթողիկոս ընտրուած է 717ին եւ 11 տարի պաշտօնավարած Դուին քաղաքի մէջ, որ Հայոց նոր հոգեւոր կեդրոնը դարձած էր 485 թուականէն սկսեալ: Իր մասին խօսող պատմիչները բոլորն ալ վկայած են ոչ միայն իր բարձր ուսմունքին եւ հոգեկան ու մտաւոր կատարելութեանց մասին, այլ նաեւ արտաքին կերպարանքով ալ փառայեղ եւ վայելուչ անձ մը լինելուն: «Յոյժ գեղեցիկ տեսեամբ» (Ասողիկ), «Վայելուչ Հասակաւ մարմնոյն» (Կիրակոս), «Գունեան (պայծառ դէմքով) թիկնաւէտ եւ աւարտահասակ», Մաղկեալ այեօք մօրուս (Յովհաննէս Պատմաբան): Հակառակ իր այս արտաքին վայելչութեան՝ մարմնի եւ զգեստի, ներքնապէս այժի մազէ շինուած կոշտ զգեստներ Հագնել սովորութիւն ըրած է, իսկ կենցաղին մէջ անպակաս մնացած են «Գաւթը, աղօթքը եւ գիշերային անքնութիւնը»:

Հայրապետին առաջին գործերէն մէկը եղաւ օրուան իսլամ խալիֆային կամ Ամիրապետին ներկայանալը Դամասկոսի մէջ: Կը պատմուի, թէ Հայոց վրայ իբրեւ կառավարիչ նշանակուած Մարգպանը (Արաբ Ոստիկանը)՝ երբ Դամասկոս կը վերադառնայ, ի միջի

այլոց մեծ գովեստով կը խօսի իր Ամիրապետին Հայոց Կաթողիկոսի բացառիկ վայելչութեան մասին, ինչ որ Ամիրապետին Հետաքրքրութիւնը կը շարժէ եւ Դամասկոս կը հրաւիրէ գայն: Կը ներկայանայ Յովհաննէս Կաթողիկոս իր ամբողջ փառքովը, «փայլուն եւ պաղպաղուն զգեստներով, սպիտակի զարնոզ մօրուքը ոսկեփունջ կազմած եւ ոսկեզարդ գաւազան, որ ապանոզ փայտէն շինուած էր, առած» (Յովհ. Պատմաբան, 131): Արդարեւ Ամիրապետը «Հիացած ու զարմացած մնաց» Օձնեցիի արտասովոր գեղեցկութեան վրայ, սակայն դիտել տուած, է թէ ինքը իմացած է, որ Յիսուս Մարգարէն Հեզ ու պարզ մէկը եղած է, եւ թէ Հին առաջնորդներն ալ այդպէս եղած են. ինչպէ՞ս կ'ըլլայ, որ ինք անոնց Հետեւողը, այսպէս շքեզ կը զգեստաւորուի: Կաթողիկոսը պատասխանեց, որ իր ըսածները շիտակ էին, միայն թէ անոնք ժողովուրդին վրայ ազդելու համար հրաշագործութեան զօրութիւն ունէին, իսկ մենք, կ'ըսէ սուրբ Հայրապետը, այդ գերբնական կարողութենէ զուրկ ենք, մարդոց վրայ ազդելու կամ մեր խօսքը դարձնելու համար պարտաւոր ենք դիմել այդ արտաքին միջոցներուն. իսկ եթէ իմ ներքին կեանքիս մասին կ'ուզես գաղափար կազմել, հրամայէ, որ ներկաները Հեռանան, ու ես քեզի առանձին բացատրեմ: Երբ մինակ կը մնան, Հայրապետը կը ցուցնէ անոր այժէ կոշտ ու կարծր զգեստները (ցփսի եւ խարազները), որ Հագած էր ներքնապէս:

Ամիրապետը այս անգամ կը զարմանայ, թէ «ինչպէ՞ս կրնայ մարդկային մարմինը տոկալ այսպիսի դժոխային քուրճի»: Յարգանքը եւ համարումը կ'աւելնայ Հայոց Հայրապետի մասին եւ ըստ արեւելեան թագաւորներու սովորութեան կ'ըսէ. «Ուզէ՞ ինչ որ կը կամենաս եւ պիտի տամ քեզի»: Կաթողիկոսը, առիթը յարմար նկատելով, կը խնդրէ երեք բաներ՝ ոչ թէ իր անձին կամ իր Եկեղեցիին համար միայն, այլ իր տէրութեան մէջ ապրող համայն քրիստոնեաներու համար.

1. Քրիստոնեաներ չքոնադաստուիմ իրենց հաւատքն ու բանալ:
2. Եկեղեցիներէ եւ Հոգեւորականներէն տուրք չպահանջորի:
3. Քրիստոնեաներ համարձակ եւ անարգել կատարեմ իրենց պաշտամունքները:

Ու կը խնդրէ, որ այս երեք կէտերը պաշտօնական հրովարտակով

հաստատուի: Այդ բոլորին դէմ ինք ալ կը խոստանայ, որ բոլոր քրիստոնեաներ հաւատարմօրէն իրեն պիտի ծառայեն: Ամիրապետը, որ նոյնինքն էօմէրն է, որ ճանչցուած է պատմութեան մէջ իբրեւ բարեսէր եւ արդար անձ մը, կը շնորհէ բոլոր խնդրուածները: Աւելի ըլլալով զինքն ալ «ուսկի եւ արծաթի դանձերով» մեծարելէ յետոյ «մեծ պատուով» կը վերադարձնէ իր երկիրը, Հայաստան: Էօմեր Խալիֆան մինչեւ իսկ արձակեց բոլոր գերի ըռնուած քրիստոնեաները, որոնց մեծ մասը հայեր էին:

Վերադարձին Օձնեցիի գլխաւոր ձեռնարկը եղաւ ժողով մը գումարել Դուրին մէջ 726ին Հայ եկեղեցին բարեկարգելու համար: Այս ժողովին 32 կանոնները անցած են մեր Կանոնագրքին: Այս ժողովին մէջ Օձնեցի խօսած է Հոյակապ ատենաբանութիւն մը, ժամանակին պէտքը եւ պահանջները բացատրելով եւ կարեւորագոյն հարցերը ժողովականներու նկատաւման յանձնելով: «Պարունակութիւնն ալ կ'արդարացնէ Օձնեցիին վերագրուած վեհ ու վսեմ հոգին եւ իմաստասիրական եւ աստուածաբանական եւ ծիսական կէտերու խորին հմտութիւնը՝ թափանցելով նոյնիսկ արարողական պաշտամանց թաքուն նշանակութիւնները» (Ազգ. էջ 829):

Օձնեցիի մեծագործութիւններէն մէկն ալ եղաւ Հայ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԻՆ կազմութիւնը: Այսինքն՝ ի մի հաւաքեց աստ ու անդ ցրուած եկեղեցական կանոնները, իր իսկ բառերով. «Գեղեցկագործ մատենիւ ի Հայրապետանոցի արձանացուցանել»: Այս Կանոնագիրքը հասած է մեզի՝ ժամանակի ընթացքին յաջորդ ժողովներու կանոններն ալ ասոր վրայ աւելցնելով: Հայց. Եկեղեցին դեռ պաշտօնապէս չէ հրատարակած իր ԿԱՆՈՆԱԳԻՐՔԻ: Մելիք-Թանգեան արք. ի «ԻՐԱՒՈՒՆՔ ՀԱՅՈՑ» կանոնական հրատարակութիւնը անհատական ձեռնարկ մըն է, իսկ Վազգէն Յակոբեանի շատ գովելի աշխատասիրութիւնը, երկու հատոր ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ-ը, քննական հրատարակութիւն մըն է, Հայաստանի Գիտութիւններու ակադեմիայ Պատմութեան ինստիտուտի կողմէ (Ա հատորը լոյս տեսաւ 1964ին, Բ հատորը՝ 1971ին, Երեւան):

Օրմանեան «ԳԻՐՔ ԹՂՈՑ»-ին կազմութիւնն ալ կը վերադրէ Օձնեցիին: Այս գիրքն ալ (ԿԱՆՈՆԱԳԻՐՔԻՆ պէս) «Հայրապետանոցի պաշտօնական ձեռնարկ արձանագրութեան» ընոյթն ունեցող կարեւոր

ձեռնարկ մըն էր, որ պիտի ծառայէր Հայց. Եկեղեցիի դաւանութեան իբրեւ ուղեցոյց:

Օձնեցի ունի նաեւ երկու կարեւոր ճառեր ընդդէմ ՊԱՒՂԻԿՅԱՆՑ եւ ընդդէմ ԵՐԵՒՈՒԹԱԿԱՆԱՑ, որոնցով կը պայքարի եւ կը հերքէ տեսութիւնները երկու աղանդներու, որոնք իր ժամանակին բաւական տարածում գտած են Հայաստանի մէջ:

Գրած է նաեւ Յաղագս կարգաց եկեղեցւոյ, որ կը հետապնդէ Հայ եկեղեցիի ժամապաշտութեան բարեկարգութիւնը:

Իրեն կը վերագրուին Աւագ Տօներու (Տեառն եղբօր, Ստեփանոսի, Պօղոս-Պետրոսի եւ Որդւոց Որոտման) շարականները:

Տակաւին իրեն կը վերագրուին շուրջ 10 կտոր ուրիշ գրական գործեր, որոնք սակայն երկբայելի կամ անհարազատ կը նկատուին:

Յովհաննէս Իմաստասէր Հայրապետի կարեւոր գործերէն մէկն է նաեւ գումարումը Մանազկերտի ժողովին 726ին՝ ամրապնդելու Համար Հայ եւ Ասորի եկեղեցիներու միութիւնը:

Այս ժողովէն յետոյ Օձնեցին ծերացած ու յոգնած քաշուեցաւ իր գիւղը՝ Օձուն, ինքզինքը տուաւ ազօթական կեանքի «Խաչաչարչար ճգնութեամբ»՝ ընկերակից ունենալով Գէորգ Աքանչեւագործ եւ Մատթէոս Խոտաճարակ վրդ.ները եւ այլ բազում «խստակրօնք եւ երկնաթռիչք»: 728ին կնքեց իր բազմաշխատ եւ բազմարդիւն կեանքը՝ թէ՛ կարողութեան եւ թէ՛ սրբութեան մեծ հուշակ ձգելով իր ետին:

«Օձնեցիի գերեզմանը իբր ուխտատեղի կը պատուի այժմեան Արդուի գիւղը, Հին ՕՉՈՒՆԻ արեւմտակողմը: Օձնեցին կաթողիկոսական գաւազանագիրքին լուսաւոր պարծանքներէն մէկն է իւր ուսումնական զարգացմամբ, եկեղեցական նախանձայուզութեամբ եւ վարչական կարողութեամբ, որով նոր կեանքի նուիրագործումը կատարեց ազգին մէջ՝ խաղաղ կենցաղ մը պատրաստելով քաղաքականապէս եւ անխառն եկեղեցական կացութիւն մը՝ եկեղեցականապէս: Օձնեցիին անունը թէպէտ միշտ պատուով եւ յարգանք պահուած է յետիններէն եւ նոյնիսկ գովութեամբ յիշատակուած Գրիգոր Տղայէ եւ Ներսէս Համբրոնացիէ, սակայն անոր անունին տօնելի սրբոց կարգն անցնելը՝ վերջին ժամանակներու որոշում մըն է,

եւ Սիմէոն Երեւանեցիի 1774ին հրատարակած Տօնացոյցէ հնագոյն փաստ մը չունինք այդ մասին, թէպէտեւ ընդհանրապէս իբր սուրբ յարգուած լինելուն եւ Յայամաւուրքի անցած լինելուն յիշատակները կան» (Ազգ. էջ 843):

Յիշուած է Ա. Հայրապետն մեր կրկնակ Յայամաւուրքներու մէջ Ապրիլ 17ին, հրաշապատում մանրավէպերով, չէ յիշուած ԼԻԱԿԱՏԱՐԻ մէջ:

Օձնեցին կը տօնուի Մեծ Պահոց Դ. Կիրակիի նախընթաց Շաբաթ օրը իր անուանակից Յովհ. Երուսաղէմացի Հայրապետի եւ Յովհ. Որոտնեցիի եւ Գր. Տաթեւացի վարդապետներուն հետ: Յատուկ շարական չունի. իր տօնին կ'երգուին Թարգմանչաց եւ Հայրապետաց շարականները:

Սկզբնաղբիւրներ. Իր երկերուն ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ-ը, ժամանակակից պատմիչներ, բայց յատկապէս Ժ դարու Յովհ. Կաթողիկոս Պատմաբան: [Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոց Պատմութիւն Հայոց: Թիֆլիս, 1912]:

14. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ 950?-1003

Հրեշտակային Վարդապետը Հյց. Եկեղեցիին եւ մեծանուն եւ սիրելի Սուրբը Հայ ժողովուրդին, ծնած է 950-ական թուականներուն Վասպուրական նահանգի (Վանի շրջան) Անձեւացեաց գաւառի մէջ, Վանայ ծովի հարաւ-արեւելեան կողմը: Այս գաւառը մանր թագաւորութիւն մըն էր այդ օրերուն: Կրտսեր որդին էր Խոսրով Անձեւացիի, որ իր կնոջ մահէն յետոյ եղած է վարդապետ Եկեղեցւոյ եւ ապա եպիսկոպոս իր գաւառին: Մեր կարեւոր եւ գիտնական մատենագիրներէն մէկն է Անձեւացին, որ գրած է Ս. Պատարագի եւ ժամակարգութեան մեկնութիւնը: Գրիգոր ունեցած է իրմէ մեծ երկու եղբայրներ՝ Յովհաննէս եւ Սահակ, որոնք եւս ուսանած են Նարեկի վանքը եւ ընդգրկած եկեղեցական ասպարէզ, առաջինը իր հետ միասին մնացած է Նարեկայ վանքին մէջ, որուն ապա եղած է վանահայրը: Իսկ երկրորդը եղած է Տօր օգնական՝ կատարելով յատկապէս անոր աւատ գրական գործերու ընթրիւնակութիւնը: Այսպէս Գրիգորի ընտանիքը տուած է եզակի օրինակը, ուր տան բոլոր անդամները (Հայրը եւ որ-

գիններ) մտած են եկեղեցական ծառայութեան սրբազան ասպարէզը:

Մանուկ Հասակէն աշակերտեցաւ իր հանգուցեալ մօրը մօտիկ ազգական Անանիա Նարեկացի վարդապետին, որ Նարեկայ վանքին պայծառացնողը եւ Նարեկեան դպրոցի հիմնադիր եղաւ ժ դարու սկզբները: Եւրջ 25 տարեկանին կուսակրօն քահանայ ձեռնադրուեցաւ: Եկեղեցավարչական կամ քարոզչական որեւէ պաշտօն ստանձնած ըլլալու ոչ մէկ յիշատակութիւն կայ: Իր ամբողջ կեանքը անցաւ Նարեկայ վանքին մէջ, աղօթքով, առաքինական եւ ճգնողական կեանքով ուսանելով եւ ուսուցանելով, ինչպէս նաեւ գրական գործեր յօրինելով եւ վերջապէս անելով եւ յառաջդիմելով սրբութեան եւ իմաստութեան մէջ: «Գրիգոր շատ ընթերցասէր էր եւ խորապէս հմտացաւ Ս. Գրքին, ինչպէս նաեւ Հայոց հին մատենագրութեան» (Հայ Գրողներ, էջ 157):

Նարեկացիի հանրածանօթ գրական գլուխգործոցը իր Աղօթափորքն է, կամ ինչպէս ինքն կ'անուանէ «ԴՐՈՒԹԻՒՆՔ ՅՈԳՆԱԹԱԽԱՆՁ ԲԱՆԻԾ ՕԳՏԱԿԱՐԱՑ», զոր պատրաստուած է «ի խնդրոյ Հարանց միանձանց եւ բազմաց անապատականաց»: Օրմանեան հետեւեալ կերպով կ'արտայայտուի սոյն Աղօթամատենացի մասին:

«Աքանչելի Աղօթագիրքը... եթէ մէկ կողմէն իր քերթողական աւիւնին, գրական յաջողութեան եւ բարեպաշտ գգացմանց մեծութիւնը կը հաստատէ, միւս կողմէն կը ցուցնէ այն սրբութեան եւ կարողութեան համբաւը, զոր կը վայելէր Գրիգոր Նարեկայ վանքին համեստ վանականը...: Ազգին մէջ գրեթէ Սուրբ Գիրքին համահասար պատիւ ընծայուած է այդ գիրքին, եւ սքանչելագործ յատուկ զօրութիւններ կը վերագրուին անոր ամէն մի գլուխներուն: Այդ Աղօթագիրքն եղած է նաեւ մեծ փաստը, որ Գրիգորին առաքինազարդ կեանքը ցոլացնելով, անոր անունը տօնելի սուրբերու կարգը անցուցած է» (Ազգ. էջ 1181):

Իսկ Թորգոմ Պատրիարք սա բառերով կ'արժեւորէ Նարեկացիին անձը եւ տաղանդը. «Իբրեւ միտք տիեզերական հանճարներէն մին է Նարեկացի, առաջին միսթիքական իմացականութիւնը Հայոց մէջ եւ մեծագոյն բանաստեղծը» (Սուրբ եւ Տօնք, էջ 259):

Իր մասին հիւսուած են ժողովրդային քնքոյշ զրոյցներ, որոնք

առնուազն կը ծառայեն Հաստատելու իր սրտին սրբութիւնը եւ ժողովուրդէն սիրուած եւ յարգուած անձ մը լինելը: Ինչպէս առհասարակ ամէն մեծարժէք մարդոց կը պատահի, այնպէս ալ Նարեկացի ազատ չէ մնացած նախանձոտներու եւ զրպարտիչներու յարձակումներէն: Բայց ի վերջոյ ճշմարտութիւնը Հրաշալի յայտնութիւններով երեւան եկած է՝ աւելի բարձրացնելով ամենքի աչքին իր սրբութեան եւ մեծութեան համբաւը:

«Ու նա այսպիսի սքանչելագործութիւններով եւ ճշմարտասէր միտքով, խստակրօն վարքով եւ աստուածաբան քարոզութեամբ փայլեցաւ մեր աշխարհին մէջ, արեգակի պէս: Ըստ ազգային աւանգութեան մը, արժանի եղաւ տեսնելու Մանկացեալ Աստուածը բազմած՝ ամենօրհնեալ Աստուածածնի գրկին մէջ, Վանայ ծովուն Առտեր կղզիին մէջ, որ Նարեկի վանքին գիմացն էր: Այս մասին քօղարկեալ ակնարկութիւն կայ իր Աղօթագրքին գլուխներէն մէկին մէջ» (ԼԻԱԿԱՏԱՐ, էջ 496):

Վախճանած կը նկատուի 1003ին՝ 52 տարեկանին, «եւ խառնուեցաւ երկրաւոր Հրեշտակը երկնաւոր զուարթուններուն հետ»: Մարմինը Թաղուած է Նարեկայ վանքին մէջ, որուն բուն անունը եղած է Ս. ՍԱՆԴՈՒՅՏ, որուն գերեզմանը եւս կը ցուցուի այն վանքին մէջ: 1021ին Արծրունեաց Սենեքերիմ Թագաւորին հետ Վասպուրականի ժողովուրդէն կարեւոր մաս մը գաղթեց Փոքր Հայք, Սեբաստիոյ շրջանը: Ասոնց հետ էին նաեւ Նարեկի վանքին միաբաններէն շատեր, որոնք իրենց հետ առին նաեւ մաս մը Սուրբին նշխարներէն, հաստատուեցան Ակնայ մօտ գիւղ մը, ուր շինեցին վանք մը, զոր կոչեցին Նարեկ, որ ապա դարձաւ մեծ ուխտատեղի եւ անունը ազաւաղուելով կոչուեցաւ «Արեկայ» կամ «Արակայ» վանք:

Նարեկացիի ծանօթ գրութիւններն են հետեւեալները, իրենց յօրինման թուականներով, ըստ Նորայր Արք. Պօղարեանի.

1. 977- Մեկնութիւն Երգոց Երգոյն, զոր գրած է Անձեւացեաց Գուրգէն Թագաւորին (968-1003) խնդրանքով:
2. Ներբողեան Ս. Առաքելոց: Գրած է Աղօթագիրքէն առաջ:
3. շ. 1000 - Պատմութիւն Ապարանից Խաչին (Ներբող Սրբոյ Խաչին): Գովեստ Ս. Աստուածածնի: Գրած է Մոկաց Ստեփանոս Եպիսկոպոսին խնդրանքով: Ասոնց, ինչպէս նաեւ միւս ներբողներուն եւ գան-

ձերուն աշխարհաբար թարգմանութիւնը տպուեցաւ Գոլիա 1955ին:

4. 1002- Աղօթագիրք (ՆԱՐԵԿ): Կը բաղկանայ 95 դուխներէ, բաժնուած 367 հատուածներու: Արձանացուած է գործակցութեամբը իր անդրանիկ եղբօրը Յովհաննէսի, «Նարեկայ մեծափառ եւ բարձրապատիւ ուխտի վանականի»: Անոր մասին կ'ըսէ ուրիշ տեղ մը. «որ գիտնականն է եւ հանճարեղ իմաստասէր՝ քան զիս առաւել յամենայնի»: Նարեկը կը համարուի Հայոց հոգեւոր գրականութեան բարձրակէտը: Միջազգային չափանիշով առաջնակարգ եւ անմրցելի Աղօթագիրք մըն է այն: Նարեկը ունեցած է բազում աշխարհաբար թարգմանութիւններ, որոնցմէ ծանօթ են Բասիմի, Թորգոմ Արք. Գուշակեանի եւ Գարեգին Արք. Տրապիզոնի կատարածները, որոնց մէջ լաւագոյնը կը նկատուի Թորգոմ Արքեպօս. Գուշակեանի հրատարակուածը: Արեւելեան աշխարհաբարի ալ վերածուած է: [Լաւագոյնը Վազգէն Գէորգեանի թարգմանութիւնն է, Երևան, 1979]:

5. Ներբող Ա. Յակոբայ Մծբնայ Հայրապետին:

6. Թուղթ, զոր գրեաց ի հոյակապ եւ յականաւոր Ուխտն

Կճաւայ: Թոնդրակեցիներու աղանդին մոլորութեանց դէմ

զգուշացուցիչ խրատական մը:

7. Գանձեր, երեք հատ: Ա. Ի Գալուստ Սրբոյ Հոգւոյն: Բ. Ի Սուրբ Եկեղեցի: Գ. Ի Սուրբ Խաչն Աստուածընկալ:

8. Տաղեր եւ մեղեդիներ, մօտ երկու տասնեակ: Ասոնցմէ մէկ քանին յօրինուած են ժողովրդական արուեստով եւ կը ներկայացնեն բանաստեղծական բարձր արժէք: Արեւելեան աշխարհաբարի վերածուած են Արշաւիր Մխիթարեանի կողմէ եւ տպուած Երևան, 1957ին (Հայ Գրողներ, էջ 158-159):

Կը տօնախմբուի ԹԱՐԳՄԱՆԻՉ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐՈՒ Հետ, Հոկտ. Ի երկրորդ Շաբաթ օրը: Իսկ Յայսմատուրքներու մէջ կը յիշատակուի Փետրուար 27ին:

Սկզբնաղբիւրներ. Իր գրութեանց ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ: ՍԱՄՈՒԷԼ ԱՆԵՑԻ եւ այլն: [Թիշատակարանների նորագոյն հրատարակութիւն տե՛ս «Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ», Ե-ժԲ դարեր, աշխատասիրութեամբ Ա. Մաթեւոսեանի: Երևան, 1983, էջ 63-65]:

15. ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱԼԻ 1102-1173

Ս. Ներսէս ԾնորՀալի մեր եկեղեցիի ամենէն հոգեւից Հայրապետներէն եւ մեծագոյն մատենագիրներէն մէկն է: Կուգայ նոր ՊԱՀԼԱ-ԻՈՒՆԻՔ կոչուած ազնուական ընտանիքէ, որ ինքզինքը Ս. Գր. Լուսաւորչէն սերած կը նկատէր: Այս ազնուական գերդաստանը, որ մեր պատմութեան թատերաբեմին վրայ կ'երեւի Ժ-ԺԱ դարերուն, մեր եկեղեցիին կուտայ եօթը կաթողիկոսներ, որոնց կեդրոնը կը գրաւէ ԾնորՀալի Հայրապետը: Այս կաթողիկոսներէն առաջինը՝ Գրիգոր Բ ՎԿԱՅԱՍԷՐ (1065-1105), երջանկութիւնը կ'ունենայ ողջունելու Հայ պետականութեան վերջին շրջանի արշալոյսը 1080ին Ռուբէն իշխանի կողմէ Տաւրոս լեռներու բարձունքներուն վրայ հիմնուած իշխանապետութեամբ, իսկ վերջինը՝ Գրիգոր Զ. Ապիրատ (1119-1203), երջանկութիւնը կ'ունենայ իր իսկ ձեռքով օծելու այս իշխանութեան առաջին թագաւորը յանձին Լեւոն Մեծագործ արքային, 1198ին Սիսի մէջ, որ այնուհետեւ կը դառնայ Կիլիկեան Հայոց թագաւորութեան մայրաքաղաք եւ ապա Հայոց Կաթողիկոսութեան կեդրոնը:

Գրիգոր Նարեկացիին այս կեանքին աչքերը փակելէն շուրջ Հարիւր տարի յետոյ՝ մեր աշխարհի լոյսին կը բանայ իր աչքերը Ներսէս. 1102ին Մովսէս ղղեակին մէջ, որ իրենց փոքր իշխանապետութեան կեդրոնն էր, հիւսիս-արեւելեան Կիլիկիոյ մէջ: Իր Հայրը՝ Ապիրատ իշխանը, սպաննուեցաւ պատերազմի մը մէջ, երբ Ներսէս տակաւին մանուկ կամ մատաղ պատանի մըն էր: Ունեցած է երեք եղբայրներ, որոնցմէ երկուքը՝ Վասիլ եւ Շահան կամ Զօրավար, ընդգրկած են աշխարհիկ եւ զինուորական ասպարէզ, իսկ իր անմիջական մեծ եղբայրը՝ Գրիգոր, եւ ինք կը պատրաստուին եկեղեցական ասպարէզի համար՝ հոգածութեամբ եւ հոգեւոր Հայրութեամբ առաջին երկու Պահլաւունի կաթողիկոսներու՝ Գրիգոր Վկայասէրին եւ անոր յաջորդող Բարսեղ Անեցիին (1105-1113): Երկու եղբայրներ իրենց դաստիարակութիւնը կը ստանան Ստեփանոս Մանուկ կոչեցեալ գիտնական վարդապետի մօտ, Տաւրոս լեռներու վրայ գտնուող Կարմիր վանքին մէջ: Բարսեղ կաթողիկոսի անակնկալ ու արկածահար մահէն յետոյ Հայոց Կաթողիկոս կ'ըլլայ նոյնինքն Ներսէսի մեծ եղբայրը Գրիգոր իր երիտասարդ Հասակին մէջ, երբ Հազիւ 20 տարեկան էր, եւ կը բուրբէրեկարագոյն պաշտօնավարութեան շրջանը

մեր բոլոր կաթողիկոսներուն մէջ (1113-1166): Ներսէս իր եկեղեցական բոլոր կարգերը (սարկաւազութիւն, քահանայութիւն՝ երբ 18 տարեկան էր ու եպիսկոպոսութիւն՝ 30 տարեկանին) կը ստանայ իր կաթողիկոս եղբորէն, որուն ուժեղ աջակիցը կամ փոխանորդը կ'ըլլայ Հայրապետական բոլոր գործերուն մէջ:

Իր պապեանական դղեակէն դուրս առաջին ճամբորդութիւնը կը կատարէ երբ իր եղբոր հետ ներկայ կը գտնուի 1141ին Անտիոքի մէջ գումարուած Լատին եկեղեցիի մէկ ժողովին, որուն պաշտօնապէս հրաւիրուած էր իր Կաթողիկոս եղբայրը: Գրիգոր Կաթողիկոս կը շարունակէ իր ճամբան դէպի Երուսաղէմ, իսկ Ներսէս կը վերադառնայ Մովք, շարունակելու համար Հայրապետանոցի գործերուն ընդհանուր հսկողութեան իր պաշտօնը:

1150-ական թուականներուն հախախնամական տնօրինութեամբ մը իրենց գերդաստանի ձեռքը կ'անցնի Հոռմկլայի ամուր բերդը, Կիլիկիան Եփրատին վրայ, ոչ շատ հեռու արեւելեան կողմէն Ուրֆայէն եւ արեւմուտքէն՝ Այնթափէն: Ներսէսի անունը սերտօրէն կապուեցաւ այս դղեակին, եւ այս իսկ պատճառով պատմութեան մէջ ծանօթ է նաեւ ԿԼԱՅԵԹի մականունով: Այստեղ փոխադրուելէ յետոյ, նախ մահացու կերպով հիւանդացաւ Ներսէս, բայց ողորմութեամբն Աստուծոյ առողջացաւ: Կեանքին մնացեալ մասը (գրեթէ քառորդ դար) անցուց այս տաք եւ դժուար տանելի բերդին մէջ: Անգամ մը միայն առիթն ունեցաւ դուրս գալու այս «բերդարգելութենէ» կարեւոր առաքելութեամբ մը. Կիլիկիոյ երկու մեծ Հայ իշխանները՝ Թորոս Լեւոնի Ռուբէնեան եւ Լամբրոնի բերդին տէր Օշինը, իրարու դէմ զէնք վերցուցած էին 1164ին: Ենորհալի զրկուեցաւ Հաշտեցնելու զանոնք, որոնք հեռուէն կամ մօտէն խնամիական կապեր ալ ունէին իրենց գերդաստանի հետ: Ենորհալիին առաքելութիւնը յաջողութեամբ պսակուեցաւ. Հաշտուեցան երկու իշխաններ եւ վերջ տրուեցաւ եղբայրական կռուի:

Վերադարձի ճամբուն վրայ Մամեստիա քաղաքին մէջ՝ Ենորհալիին հանդիպեցաւ Բիւզանդիոնի կայսեր փեսային եւ ներկայացուցիչին՝ Ալէքս Դուքսին, որ հետաքրքրուեցաւ Հայոց դաւանութեամբ եւ երկու եկեղեցիներուն բաժանման պատճառներով, ինչ որ Ներսէս գրաւոր ձեւով բացատրեց: Ասկէ սկսաւ միաբարական բանակցու-

թիւնը Հայոց Հայրապետութեան եւ Բիւզանդիոնի կայսեր եւ Յոյն պատրիարքին միջեւ թղթակցութիւններով եւ կայսեր կողմէ զրկուած պատգամաւորներով: Բանակցութիւնը տեւեց Ներսէսի մնացեալ կեանքին ամբողջ տեւողութեան ընթացքին: Այս բանակցութեան թղթակցութիւնները պահուած են թէ՛ մեր եւ թէ՛ Յունաց մօտ: Ասոնց հայերէնը հրատարակուած է Ենորհալիի ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹՔ կոչեցեալ գործին երկրորդ մասի մէջ 1871ին, Երուսաղէմի Հայոց տպարանէն:

Գրիգոր Կաթողիկոս, ծերութեամբ ինքզինքը անկարողութեան մատնուած զգալով՝ Ներսէսը իր տեղ Կաթողիկոս օծեց 1166ին եւ ժամանակ մը վերջ վախճանեցաւ: Ներսէս ունեցաւ 7-8 տարիներու խաղաղ պաշտօնավարութիւն ու վախճանեցաւ 1173ին ու թաղուեցաւ իր եղբոր քով Հոռմկլայ բերդին մէջ: Իր գերեզմանը մեծ ուխտատեղի մըն էր, մինչեւ առաջին աշխարհամարտ:

Ներսէս Ենորհալի Հայրապետը սակայն աւելի նշանաւոր է իր առատ գրականութեամբ, որ օծուել է կրօնական ազնիւ ոգիով եւ ժողովրդանուէր բարձր տրամադրութեամբ: Որքան մեծ աստուածաբան է Ենորհալիին, նոյնքան ալ ընտիր բանաստեղծ մըն է: Որքան շատ եւ բովանդակալից են իր արձակ գրութիւնները, նոյնքան առատ եւ սքանչելի են իր քերթողական երկերը:

Մեր ժամագիրքը եւ Եարակնոցը ամէնէն աւելի ճոխացնողը եղաւ Ս. Ներսէս Ենորհալի: Եարակնոցին մէջ ամէնէն շատ շարական ներգնողը եղաւ ան, թիւով աւելի քան 30 կտոր: Հայ ժամագրքի գրեթէ բոլոր երգերը (աւելի քան 15 կտոր) իր գրչէն ելած են:

Աւելի նշանաւոր է 24 տուներէ բաղկացեալ իր ՀԱԻԱՏՈՎ ԽՈՍՏՈՎ ԱՆԻՄ սկզբնաւորութեամբ ազօթաշարքը, որ մեր ժամագրքին մէջ մտած է իբրեւ մասը հսկումի ժամերգութեան եւ որ թարգմանուած է Վենետիկեան Հայրերու Հոգածութեամբ 36 լեզուներու, ինչպէս նաեւ ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ աղօթագիրքը, որ բազմիցս հրատարակուած է եւ թարգմանուած անգլերէնի, ֆրանսերէնի, ինչպէս նաեւ աշխարհաբարի մեր կողմէ 1974ին: Իր ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹՔ, որ իր անդրանիկ կոնդակն է, եւ միւս ԹՈՒՂԹԵՐԸ անսպառ շտեմարան են հայեցի դաւանութեան եւ իմաստուն խորհուրդներու: Նշանաւոր է նաեւ իր ԱՏՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ, զոր կարդացած է իր Կաթողիկոս

ընտրութեան անթիւ հաւաքուած եպիսկոպոսներու ժողովին: Զեռնարկած է նաեւ Մատթէոսի Աւետարանի ՄԵԿԵՈՒԹԵԱՆ, սակայն հազիւ կրցած է աւարտել անոր առաջին հինգ գլուխները:

Բացի անոնցմէ, Ներսէս Ենորհալիի ունի նաեւ բազմաթիւ այլ գործեր, միշտ կրօնաբոյր ոճով, բայց ոչ անպատճառ կրօնական բովանդակութեամբ: Օրինակ, ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆԸ, որ իր գրական գործերու անդրանիկն է, կը պարունակէ իր ազգոտհմին պատմութիւնը քերթողական ոճով: ՈՂԲ ԵՂԵՍԻՈՅ, գրուած այս քաղաքի Քրիստոնէից ջարդին առիթով այլազգիներէն: Ունի Հայ այրուածներ տառերով խրատականներ, հանելուկներ եւլն: ՅԱՂԱԳՍ ԵՐԿԵՒԻՑ ԵՒ ԶԱՐԴՈՒՑ գրական գործը, ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՆԲ, ներբողներ եւ այլ գրութիւններ:

1973 թուին նշուեցաւ Ենորհալիի մահուան ութնարիւրամեակը, երբ Վատիկանն անգամ մասնակցեցաւ այս դարադարձային հանդիսութեանց՝ հրատարակելով յիշատակի դրոշմաթուղթերու շարք մը Ենորհալիի պատկերով: Իսկ Թուրքիոյ Հայոց Պատրիարքութիւնը հրատարակեց գունաւոր տպագրութեամբ Յուշագրքով մը, ուր խտացեալ ձեւի տակ արուած է Ենորհալիի անձին ու վաստակի մասին անհրաժեշտ գրեթէ ամէն բան: Մեր այս վարքագրութիւնը կը կնքենք Ենորհալիի «ՀԵԶԱՀԱՄԲՈՅ ԱՆՁԻ» մասին մեր պատրաստած գրութենէն առնուած երեք փոքր հատուածներով:

«Ենորհալի Հայրապետը մեզի կտակած է կրօնական, բարոյական ու մշակութային հսկայ հարստութիւն: Այդ կտակին կարեւորագոյն եւ սրբազնագոյն մասը, ըստ մեզի նոյնինքն անոր շնորհաշատ ԱՆՁՆ է: Այո, անձեր ալ կրնան ժառանգ ձգուիլ գալիք սերունդներուն, երբ մանաւանդ վեհ ու ցանկալի գաղափարականի մը մարմնացումը եղած են անոնք: Ներսէս մարդկային ազնուականութեան, Աւետարանական կատարելութեան եւ ժողովրդանուէր ողջակիզումի անգերազանցելի տիպարը եղաւ: Ու այդ իսկ պատճառներով, իբրեւ անկործանելի բարոյական կոթող, միշտ կանգուն մնաց որքան մեր պատմութեան ու մասնազրուցեան էջերուն մէջ, նոյնքան եւ իր ժողովուրդի զգացումներուն եւ երախտիքին մէջ: Ու Հայց. եկեղեցին եւ մեր ժողովուրդը այդ անմեռ անձով ինքզինքը աւելի հարուստ, աւելի հզօր ու աւելի հպարտ զգացած է, այս բառերուն բարոյական ու ազնուական առումով»:

«Մեր եկեղեցական պատմութեան մէջ, Ս. Գր. Լուսաւորչին, Ս. Սահակին, Ս. Մեսրոպին եւ Ս. Գր. Նարեկացիին հետ ոչ ոք այնքան մեծարանք ու սէր վայելած է իր ժամանակակիցներէն եւ յաջորդ սերունդներէն, որքան Ներսէս Ենորհալի Հայրապետը, իբրեւ Սուրբ եւ իբրեւ մատենագիր: Իր սրբութեան եւ շնորհաց համբաւը տարածուած էր մինչեւ Բիւզանդական արքունիքը, ուր երբ իմացան անոր մահը, օրուան կայսրը հառաչանքով ըսած է. «Մեծ եւ արթուն զգայարանք մը վերացաւ Աստուծոյ եկեղեցիէն: Հայեր զրկուեցան իրենց երկրորդ Լուսաւորչին: Ով երանելի Հայրապետ, ինչպէ՛ս իմ փափաքս անկատար ձգելով առ Քրիստոս ժամանեցիր: Սակայն մենք քու անուող առաջին սուրբերու հետ՝ յիշատակութեան արժանի տնօրինութիւնը պիտի ընենք, սօսելով ուրախութեամբ ի Քրիստոս»:

«Երախտիք պարտինք Աստուծոյ, որ մեր պատմութեան գրեթէ ամենէն տազնապալի մէկ շրջանին՝ մեզի ընծայեց Ներսէսը, որ կատարեց ճակատագրական դեր մը մեր պատմութեան մէջ, ինչպէս կը հաստատէ իր կենսագիրը. «Երանելի Հայրս նուազեալ ժամանակի՝ յորում ձմեռն մեղաց տիրէր ի վերայ աշխարհիս եւ մէզ թշուառութեան պաշարէր զմեզ՝ սրոյ եւ գերութեան, երեւցաւ ջահաւորեալ վարդապետութեամբ եւ լուսակրօն վարուք, եւ փարատեաց յաշխարհէ զմերիկ մեղացն, եւ վերստին կանաչացոյց զմեզ ձմեռային մեռելութենէն՝ յաճումն Հոգեւոր չափ ու Հասակի կատարմանն Քրիստոսի»:

Ենորհալիի Մարգուանցի Թայմաւուրքի մէջ յիշատակուած է երկիցս, գրեթէ նոյն բառերով, մէկ սիւնակէն քիչ մը աւելի խտացեալ գրութեամբ, Յունիս 13ին եւ Օգոստոս 5ին: Իսկ Փեշտիմալճեանի մէջ՝ Օգոստոս 13ին: Ներսէս յիշուած է նաեւ ՍՐԲՈՅ ԲԱՌԱՐԱՆԻՆ մէջ համառօտակի, իբրեւ «Հայաստանի Ֆենելօնը եւ առաջնակարգ գրողը եւ բանաստեղծը ԺԲ դարուն. լուրջ ջանքեր թափեց իր եկեղեցին մեկուսացումէ դուրս բերելու համար»: Յիշուած է նաեւ Կաթողիկ Համայնագիտարանի մէջ:

Կը սօսուի Թարգմանչաց հետ: Խաչի Ե Կիրակիի նախընթաց Ետաթօ օրը:

Քանի որ իր մասին գրուած շարական չկայ՝ առաջ կը բերենք գէթ տուն մը իր գրած բազմաթիւ շարականներէն Հրեշտակաց մասին յօրինածը.

Որ յանէից ստեղծեր զպաշտօնեայս քո
Ի հուր կիզելոյ, հուրդ անեղական,
Ընդ նոսին օրհնեմք զՔեզ եւ մեք հողեղէնքս:

Թարգմանութիւն.

Որ ոչինչէն ստեղծեցիր պաշտօնեաներդ
Վերածելով այրող կրակի, ով անեղ կրակ,
Անոնց հետ կ'օրհնենք Քեզ մենք ալ՝ հողեղէններս:

Սկզբնադրիւրներ: Ենորհալիի անձնական երկերը, յատկապէս՝
ԸՆԴՀԱՆՐԱՒԱԿԱՆՆԵՐ: Ներսէս Լամբրոնացիի Ներբողը եւ այլ ժամանակակից կամ յաջորդ դարու պատմիչներ. Կիրակոս Գանձակեցի, Սմբատ Գուճապարկապետ եւլն:

[Ն. Ղեւոնդ Մ. Ալիշան, Ենորհալի եւ պարագայ իւր: Վենետիկ, Ս. Ղազար, 1873: Գր. Յակոբնան, Ներսէս Ենորհալի, Երևան, 1964: «Ներսէս Ենորհալի» (Յօդուածների ժողովածու): Երևան, 1977]:

16. ՅՈՎՀԱՆՆԵՍ ՈՐՈՏՆԵՑԻ 1315-1387

Իմաստասէր եւ աստուածաբան մեծ վարդապետ, որ հիմնադիր եղաւ Տաթևի նշանաւոր դպրոցին եւ պայքար կազմակերպեց ընդդէմ Ունիթոսական (միարարական) շարժումին, որ սկսուած էր Հայոց մէջ լատին Դոմինիկեան միաբանութեան կողմէ... եւ որ կը փորձէր խաթարել Հայց. եկեղեցւոյ ինքնուրոյն նկարագիրը՝ լատինական կաղապարին մէջ թափելով զայն:

Յովհաննէս ծնաւ 1315ին Սիւնեաց աշխարհի Որոտն գաւառի Վաղաղի կամ Վաղաղին գիւղը, որդի «Մեծ եւ փառաւոր իշխանի» Իւանէի, Օրբելեան ազնուական տոհմէ: Կանուխ տարիքէն մտաւ եկեղեցական ասպարէզ եւ ամբողջութեամբ նուիրեց ինքզինքը գիտութեան եւ ուսուցչութեան: Իր օրով ամբողջ հին Հայաստանը կը դտնուի թաթարական ծանր լուծին տակ, սակայն Սիւնեաց նահանգին Հայ իշխանները լեզու գտած են տիրող պետական շրջանակներու հետ՝ ուզուած տուրքը իրենց ժողովուրդէն իրենք գանձելով եւ վճարելով, փոխանակ ասպարէզը ձգելու անողորմ եւ ընչաքաղց

Թաթար հարկահաւաքներու: Այնպէս որ ժԳ եւ ժԴ դարերուն համեմատաբար աւելի խաղաղութիւն կը տիրապետէ այս շրջանին մէջ եւ հետեւաբար աւելի տնտեսական ու մշակութային յառաջացում կ'արձանագրուի այս նահանգին մէջ:

Այս շրջանին կը ծաղկի Գլաճորի կամ Գալլաճորի մեծ ուսումնարանը ԵՍԱՅԻ ՆՉԵՑԻ մեծանուն Վրդ.ի ուսուցչապետութեան ներքեւ: Յովհաննէս Որոտնեցի իր բարձրագոյն ուսմանը կը ստանայ այստեղ: Իր վարդապետի (Եսայի Նչեցիի) մահէն յետոյ, 1338ին, դեռ երիտասարդ հասակին մէջ, փոխադրուեցաւ Տաթևի վանքը եւ այնտեղ հիմնեց իր վարժարանը, ուր շուտով հաւաքուեցաւ մեծ թիւով աշակերտութիւն եւ կարճ ժամանակի մէջ գերազանցեց Գլաճորը: Որոտնեցի սորված էր նաեւ լատիներէն եւ տեղեակ էր «սքոլաստիկ» ուսուցման մեթոտին:

Հասցուց մեծ թիւով աշակերտութիւն, որոնցմէ նշանաւոր Հանդիսացան Մաղաքիա Ղրիմեցի եւ Գրիգոր Տաթևացի, որ յաջորդեց իրեն եւ Տաթևի դպրոցը իր զարգացումի բարձրագոյն գագաթին հասցուց: Իսկ Մաղաքիա Ղրիմեցի՝ մեծահարուստ ազգատոհմէ, ազդեցիկ, նախանձայոյզ եւ ազգասէր անձնաւորութիւն մըն էր, որ իր հարստութիւնը եւ յանդուգն ու նախաձեռնող ոգին ամբողջութեամբ որամագրեց գործնականապէս պայքարելու Ունիթոսութեան դէմ: Որոտնեցին որդեգրած էր թշնամիին դէմ իր իսկ զէնքերով պայքարելու սկզբունքը, ուստի երբ ինք եւ իր աշակերտները մտաւորական զէնքերով կը պայքարէին Ունիթոսներու դէմ, Մաղաքիա Ղրիմեցին որդեգրեց գործնական եւ օրինական զէնքերը, հակադրելու համար Ունիթոսներու համապատասխան ահաբեկչական ու բռնութեան մեթոտներուն: Սկսաւ բռնութեամբ վանել բռնութիւն գործածողները» (Ազգ. էջ 1960):

Այս շրջանին կը ծաղկի նաեւ Ապրակուճեաց վանքը, դարձեալ Սիւնեաց աշխարհի մէջ, Սարգիս Վարդապետի ուսուցչապետութեան ներքեւ: Այս Վարդապետը, սակայն, «ԱԻԵԼԻ ՓԱՓԱՔՈՂ ԷՐ ՄԻԱԲԱՆԵԼՈՒ ԿԷՏ ՄԸ ԳՏԵԵԼ» Ունիթոսներու հետ, անոնց ուսմունքէն եւ գիրքերէն օգտուելու նպատակով, ուստի սկսած էր դասախօսել լատին հեղինակի մը (Գետրոս Արագոնացիի) պատրաստած ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՅ ՈՒ ՄՈԼՈՒԹԵԱՆՅ գիրքէն, ինչ որ պատճառ

կ'ըլլայ Ապրակունեանց վանքի աշակերտութեան Ունիթոուութենէ վարակուելուն: Ղրիմեցիները կ'իմանայ ասիկա, կը խնդրէ իր վարդապետէն՝ Որոտնեցիէն, այնտեղ փոխադրուիլ առաջքն առնելու այս «չար գայթակղութեան», նախ քան անոր տարածուիլը ուրիշ հայկական վանքեր: Այս փոխադրութիւնը տեղի ունեցաւ 1380ին: Որոտնեցիին ազդու եւ շատ խիստ միջոցներով առաջքը կ'առնէ ստեղծուած գայթակղութեան: Իսկ Սարգիս վարդապետը, որ թէեւ ուղղափառութենէ չէր չեղած, բայց գայթակղութիւնը զսպելու ի զօրու չէր եղած, Մաղաքիա Ղրիմեցիի կողմէ կը փոխադրուի նախիջեւանի մօտ Աստապատի վանքը, հոն նոր աշակերտութիւն պատրաստելու համար: Օրմանեան կ'եզրակացնէ այս կապակցութեամբ:

«Ապրակունեանց եւ Աստապատի վանքերը երկու նշանաւոր մեծ վարդապետներուն ձեռքին տակ շուտով յառաջացան եւ փայլեցան՝ Ղրիմեցիին կատարած պահպանութեան եւ պաշտպանութեան շնորհիւ: Ամէն կողմէ ուսման ծարաւի եւ երկեղեցւոյն հաւատարիմ արեղաներ եւ քահանաներ եւ դպիրներ՝ խուռն դիմեցին սոյն վանքերը, եւ բազմաթիւ աշակերտութիւն մը կազմուեցաւ, որ նոյն իսկ Ունիթոուութեան կեդրոնին ուղղափառութեան համար աշխատեցաւ ու արդիւնաւորութեան եւ զօրաւոր թուճք եղաւ օտարամուտ նորութեանց եւս քան եւս տարածուելուն: Մաղաքիա Ղրիմեցի, ամէն տեսակ դիւրութիւններ պատրաստեց եւ դժուարութիւններու յաղթեց, մինչեւ իւր կեանքին վերջը, որ դժբախտաբար շատ շուտ հասաւ» (Ազգ. էջ 1967):

Արդարեւ Մաղաքիա Վրդ. Ղրիմեցի Ունիթոուներու բռնական շահատականութիւններէ զրգուուած, ամենախիստ միջոցներով գտնոճ զսպելու հետամուտ կ'ըլլայ: Ասոր վրայ Ունիթոուներ թուեաւորեցին զայն իր սանամօր միջոցաւ, որ վարակուած էր իրենց մոլորութենէն:

Որոտնեցիին Ապրակունեանց վանքի մէջ աւելի քան եօթը տարիներ յառաջ տարաւ իր վանական եւ կրթական գործունէութիւնը, բազմաթիւ զարգացեալ աշակերտներ պատրաստելով ազգային եկեղեցւոյ պաշտպանութեան համար: Իր 73-րդ տարին թեւակոխելէն ետք Ֆիզիքապէս շատ տկարացաւ Որոտնեցիին. «Մանր աշխատութիւնները

եւ ժամանակին եկեղեցականներուն սովորական եղող կենցաղական խտութիւնները տկարացուցած էին անոր մարմինը: Նա իւր արդիւնաւոր կեանքը կնքեց 73-րդ տարին լրացուցած օրը... 1388 Յունուար 13ին» (Ազգ. էջ 1979) եւ թաղուեցաւ Ապրակունեանց վանքը իր նախանձայոյց աշակերտին՝ Մաղաքիա Ղրիմեցիին քովը: Յայսմաւուրքը կը դնէ անոր մահը Յունուար 6ին հետեւեալ խտացեալ գնահատանքներով:

«Էր նա այր հոգելից, իմաստուն եւ բանիբուն, հանճարեղ եւ աստուածաբան, քարոզ ուղղափառութեան եւ ջատագով ճշմարտութեան: Յանդիմանող կեղծաւորաց եւ կարկիչ (լուեցնող) հերձուածողաց: Ուսուցիչ ուղղափառաց եւ խրատիչ ստահակաց: Մխիթարիչ սգաւորաց եւ դարմանիչ աղքատաց: Որպէս արեգակն զաշխարհս լուսաւորէր, այսպէս եւ նա յայտնէր դիմաստս գրող ուղղափառաց եւ ի միտ ամէր զխրթնածածուկ (դժուար հասկնալի) բանս իմաստասիրաց: Էր նա յոյժ գրասէր եւ ընթերցասէր, հեղ բարուք եւ քաղցր դիմօք: Մեծահասակ եւ բարետեսիլ, շքեղ եւ փառահեղ: Զուարթամիտ եւ ողորմած, մեծապարգեւ եւ առատատուր, ամենիմաստ եւ հանճարեղ: Անձանձիր ուսուցանող եւ անվեհեր ի պատասխանիս: Հեղ եւ քաղցր յաչս ուղղափառ դաւանողաց եւ սաստիկ ահարկու ընդդէմ չարափառ երկաբնակաց: Ամենեւին լցեալ շնորհօքն Աստուծոյ, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի» (ՄԱՐԶՈՒԱՆՑԻ, էջ 302):

Որոտնեցիին ձգած է հսկայ գրական աշխատանք, որուն մեծ մասը կորուստէ փրկուած է գլխաւորաբար Գրիգոր Տաթեւացիի «գրառումներու շնորհիւ», եւ որոնցմէ 17 կտոր կամ հատոր կը յիշատակէ Գողարեան Արք. (Հայ Գրողներ, էջ 392) եւ որոնք գրեթէ ամբողջութեամբ ձեռագիր վիճակի մէջ կը մնան: Այս երկերը մեծագոյն մասամբ մեկնութիւններ եւ քարոզներ են, ինչպէս նաեւ իմաստասիրական բացատրութիւններ՝ Արիստոտելի, Գորգիլիի եւ Փիլոնի գիրքերուն վրայ: Փիլիսոփայական գիտութիւններու գոկտոր Ս. Արեւշատեան վրելուծական կարեւոր գրութիւն մը ունի Որոտնեցիի իմաստասիրական տեսութեանց վրայ (Տե՛ս Հայ մշակոյթի նշանաւոր գործիչներ Ե-ԺԸ գրքերէ, էջ 397-405): Այստեղէն յայտնի կ'ըլլայ, որ

Որոտնեցիի առնուազն երկու իմաստասիրական գործերը լոյս տեսած են Երեւան 1956ին:

Իսկ Օրմանեան Պատրիարք Որոտնեցիի մահուան առիթով Հետեւեալ խորհրդածութիւնները կ'ընէ.

Որոտնեցիին գլխաւոր արդիւնքն ու փառքն եղած է գլուխ ու նախահայր նկատուիլ այն բուռն պայքարին, զոր ազգային եկեղեցւոյ վարդապետները մղեցին Ունիթոսներու լատինամու ճիգերուն դէմ, ամուր թումբ մը կազմելով Հոսանքին Հանդէպ, որ Հակառակ զօրաւոր ջանքերու՝ պարտաւորուեցան յետս ընկրկիլ, օտարը տկարացաւ եւ Հայ եկեղեցին իւր ինքնութիւնն ու իսկութիւնը պահեց: Այդ բազմերախտ վարդապետներ ամէնքն ալ Որոտնեցիին աշակերտներուն կամ աշակերտներուն աշակերտներն են, այնպէս որ առաջին եւ մեծ արդիւնքը աներկբայ կերպով պիտի վերագրուի Յովհաննէս Որոտնեցիի: Ուստի իրաւամբ ըսուած է, թէ «Պայծառացոյց զազգս Հայոց վարդապետօք եւ քաճանայիք, գեղեցիկ կարգաւորութեամբ եւ ուղղափառ դաւանութեամբ, մանաւանդ տիւ եւ գիշեր մաքառելով ընդդէմ քրիստոսատեաց աղտարմայիցն գաւառից Երմըակու»: Մեծոփեցին անոր մահը յիշած ատեն կ'աւելցնէ, թէ «խաւարումս եղաւ աշխարհիս Հայոց» (ՄԵՄ. 15), սակայն մենք պիտի ըսենք, որ թէպէտ ինքն պակսեցաւ, այլ իւր վառած ջահը բաւական ատեն լուսաւոր մնաց իւր աշակերտներուն ձեռքով, եւ անշէջ մնաց ազգային եկեղեցւոյ աւանդութեան մէջ: (Ազգ. էջ 1980):

Տրուած ըլլալով, որ Յովհ. Որոտնեցիին 1730ին տպուած Յայսմաւուրքին մէջ անցած է, ներելի է ենթադրել, որ արդէն իսկ տօնելի դարձած էր մեր մէջ այդ թուականէն առաջ, բայց իր տօնը վերջնական ձեւ առաւ Սիմէոն Երեւանցի Կաթողիկոսի 1775ին ի լոյս ընծայած նոր Տօնացոյցով: Ներկայիս կը յիշատակուի Մեծ Պահոյ Դ. Կիրակիի նախընթաց Եարաթ օրը իր անուանակից Յովհ. Երուսաղէժ-մացի եւ Յովհ. Օձնեցի Հայրապետներու եւ իր աշակերտ Գր. Տաթեւացիին Հետ:

Անոր տօնը Գր. Տաթեւացիին Հետ, «պահ մը ընդհատուեցաւ ԺԹ դարուն սկիզբները տեղի ունեցած Հայ կաթողիկէներու Հետ միաբա-

նական ջանքերու ատեն եւ այս պատճառով Յայսմաւուրքի վերջին տպագրութիւնն ալ զանց ըրած է անոր յիշատակը Գր. Տաթեւացիին Հետ (Ազգ. էջ 1981): Ակնարկութիւնը Փեշտիմալճեանի խմբագրած Յայսմաւուրքից է, ուր արդարեւ կը պակսին այս երկու մեծանուն վարդապետներու յիշատակութիւնը:

Սկզբնադիրք: Թովմաս Վրդ. Մեծոփեցի. Պատմութիւն Լանկթա-մուրայ: Տպ. Փարիզ 1860: [Գրիգոր Խլաթեցի, Յիշատակարան աղե-տից, Վաղարշապատ, 1891: «ԺԴ դարի Հայերէն ձեռագրերի յիշա-տակարաններ», կազմեց՝ Լ. Խաչիկեան: Երեւան, 1950]:

17. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ 1346-1410

Մեր Տօնացոյցին անցած վերջին սուրբն է եւ մեր Եկեղեցիի վեր-ջին «Եռամեծ» վարդապետը: Իրմէ ասդին, իր կաղապարով, իր ոգիով, իր գործունէութեամբ եւ իր արդիւնաւորութեամբ կրօնական գործիչ չէ ունեցած Հայց. Եկեղեցին: Տաթեւացիին կը Համարուի Հայ-րը եւ Հիմնադիրը մեր ներկայ վարդապետական դրութեան եւ դասա-կարգին, «Որով ներկայիս,- կըսէ Օրմանեան,- մեր եկեղեցիին բոլոր վարդապետները Գրիգոր Տաթեւացիին սերունդը կը նկատուին»: (Ազգ. էջ 1982):

Ասկէ առաջ յիշուած մեծանուն Հայրապետներ ու վարդապետներ առ Հասարակ եկած էին ազնուական ընտանիքներէ. Գրիգոր Տաթեւացի կուգայ ժողովուրդի խոնարհ խաւերէն: Իր Հայրը Սարգիս, արհես-տաւոր մըն է, որ, գաղթելով Վանայ լճի Հիւսիսը գտնուող Արճէշ քա-ղաքէն, Հաստատուած էր Վայոց Ձոր, Սիւնեաց աշխարհին մէջ, եւ ամուսնացած Փարպեցի բարեպաշտ գեղջուկ կնոջ մը Հետ: Ի Թմուկ ծնաւ Գրիգոր 1346ին: Իր ծնողքը քանի մը վաղամեռ որդիներէ յետոյ ունեցան Գրիգորը իբրեւ ուխտի զաւակ: Ետո կանուխէն նկատե-լի եղած է իր բացառիկ Հակումը դէպի ուսմունք, այնպէս որ Հազիւ նախակրթութիւն մը ստացած իր շրջանի գրակարդացներէն, 14 տա-րեկանին կը զրկուի Տաթեւի վանքը ու կ'աշակերտէ Յովհաննէս Որոտ-նեցիի 28 տարիներ՝ դառնալով անոր Հասցուցած բազմաթիւ աշա-կերտներուն ամենէն նշանաւորը: Կ'ընկերանայ իր Վարդապետին Երուսաղէժ ուխտագնացութեան եւ այնտեղ Սրբոց Յակոբեանց տա-

ճարին մէջ կը ստանայ իր կուսակրօն քահանայական կարգը 25 տարեկանին: Երզնկայի մէջ կը ստանայ իր վարդապետական գաւազանը 2-3 տարիներ յետոյ: Իսկ ծայրագոյն վարդապետութիւնը կը տրուի իրեն իր մեծ Վարդապետի վերջին տարին, Ապրակունեաց վանքին մէջ, երբ արդէն աւելի քան 40 տարեկան հասուն անձնաւորութիւն մըն էր: Ասկէ քիչ յետոյ կը վախճանի Յովհ. Ա Որոտնեցին, որուն նշանակումով եւ ընդհանուր հաւանութեամբ կը յաջորդէ անոր իբրեւ աւագ վարդապետ:

Հազիւ երկու տարի կը մնայ Ապրակունեաց վանքը եւ կը փոխադրուի Տաթեւ 1390ին, եւ այստեղ մնաց կեանքին մնացեալ 20-22 տարիները, բացի վերջին 1-2 տարիներէն, զորս անցուց իր հօրենական ծննդավայր Արճէշի շրջանին Մեծոփայ վանքը:

Տաթեւի մէջ, բացի Ապրակունեաց վանքէն իր հետ բերած աշակերտներէն, հաւաքեց նոր աշակերտութիւն եւ նոր զարկ տուաւ վանքի ուսումնարանին եւ հանեց իր պատմութեան բարձրագոյն դագաթին, եւ իր աշակերտ Մեծոփեցիի բառերով. «Լուսաւորեաց զազգս մեր ճշմարիտ եւ ուղղափառ դաւանութեամբ եւ հաւատով»... իբրեւ «Քրիստոսածաւալ աղբիւր, անմուտ արեգակն եւ երկրորդ լուսաւորիչ» (Ազգ. էջ 1982): Տաթեւացիի հմուտ եղած է նաեւ լատիներէն լեզուի եւ սքօլաստիկ ուսուցման մեթոտին:

Իր կեանքի վերջաւորութեան մօտ, հաւանաբար նեղուելով թշնամիներու ասպատակութիւններէ կամ իր ուսուցողական աշխատանքները այլ տեղեր ալ տարածելու միտքով, հարկադրուեցաւ փոխադրուիլ Վասպուրականի Մեծոփայ վանքը: Իր հետ վերադարձան նաեւ այն 10-12 վասպուրականցի վարդապետները, որոնք քանի մը տարի առաջ Տաթեւ եկած էին իրենց բարձրագոյն ուսմունքը այնտեղ կատարելու համար:

Մեծոփայ վանքին մէջ կային արդէն շուրջ ութսուն կրօնաւորներ, զորս Տաթեւացիին «Պայծառապէս լուսաւորեաց աստուածային վարդապետութեամբ»: Այստեղ դժբախտաբար ժամավաճառ եղաւ եւ իր գլխուն փորձանք հանեց, երբ բարեմտօրէն փորձեց, յատկապէս թելադրուելով իր շուրջիներէն, վերցնել Աղթամարի Կաթողիկոսութեան վրայ ծանրացող բանադրանքը, զոր ժամանակին դրած էին Կիլիկիոյ մէջ պաշտօնավարող Ամենայն Հայոց Կաթողիկոսները, երբ

ինքնազուլու մէջտեղ ելած էր Աղթամարի Կաթողիկոսութիւնը՝ 12-րդ դարուն: Այդ բանադրանքի վերացման առաջին պայմանն էր գահընկէց յայտարարել օրուան Աղթամարի Դաւիթ Կաթողիկոսը «եւ ապա մեծահանդէս ժողով գումարելով՝ արձակել ամենքը մեր հին կաթողիկոսներու դրած բանադրանքէն»: Օրուան Հայոց Հայրապետ Յակոբ Գ Սեպի կաթողիկոսէն ալ արձակման պաշտօնական գիր բերել տուաւ: Աղթամարի անկեալ Կաթողիկոսը սակայն չուզեց ճանչնալ այս տնօրինութիւնը եւ Հալածեց իր սահմաններէն Գրիգորը, որ արդէն հիւանդկախ, հազիւ կրցաւ վերադառնալ Տաթեւ եւ շաքաթ մը յետոյ Հոգին աւանդեց առ Աստուած 1410ին: Եւ թաղուեցաւ իր սիրելի վանքին մէջ, ու մինչեւ օրս կը պատուուի իր գերեզմանը իբրեւ ուխտատեղի:

Թէեւ Տաթեւացիին վախճանած է Դեկտ. 25ին, Ս. Ստեփանոսի տօնին, բայց Մարզուկացիի Յայսմաւորքիմ մէջ անոր յիշատակը դրուած է Ապրիլ 27ին ընդարձակ (աւելի քան ութ մեծ սիւնակներ) վարձագրութեամբ մը, ուր ի մէջ այլոց ըսուած է Տաթեւացիի անձնական կենցաղի մասին. «Որ Հրեշտակները զարմանքի կը մատնէր իր անտանելի ճգնութեամբ, գերազանց իմաստութեամբ եւ յորդառատ վարդապետութեամբ, յոյժ պահեցող էր եւ սիրող սրբութեան»: Նայն Յայսմաւորքը, չենք գիտեր թէ ուրկէ՞ տեղեկանալով, հետեւեալ նկարագրականը կուտայ անոր արտաքին տեսքին ու կերպարանքին. դէմքով սքանչելի էր, հասակով երկայնածեւ, այնքան գեղեցիկ ու շնորհալի էր, որ իր աշակերտները իրենց Վարդապետը կը նմանցնէին նոյնինքն Տէր Յիսուս Քրիստոսի: Ամբողջութեամբ լեցուած էր Ս. Հոգիի Եօթնարփեան շնորհներով մեծ Գրիգորիոսը՝ Ամենայն Հայոց Վարդապետը, որ գերազանց էր հին եւ նոր բոլոր իմաստաւէրներէն ու վարդապետներէն»:

Հետաքրքրական է յիշատակել նաեւ, որ Յայսմաւորքը Տաթեւացիին կը վերագրէ նաեւ քարոզչութիւն «այլասերիցն», այսինքն՝ օտարազգիներուն, մինչեւ իսկ կ'ըսէ.

«Շատ բան արարացոց գիրով կը հաստատէր անոնց առջեւ եւ կը պարզաբանէր, թէ Քրիստոս Աստուած էր. եւ շատեր կը հաւատային եւ կը մկրտուէին: Իր կեանքի ամբողջ ընթացքին կը քարոզէր Քրիստոսի Աւետարանը անվախ կերպով»՝ յաճախ մին-

չեւ իսկ մատնանշելով դիմացիներուն հաւատքին «սուտ եւ խաբեբայ ըլլալը»: Եւ ոչ ոք, եւ ոչ իսկ իշխանները կը համարձակին ձեռք զարնել անոր, որովհետեւ յայտնապէս կը տեսնէին այն սքանչելի նշանները, զորս Աստուած կը գործէր անոր ձեռքովը: Հիւանդները կը բժշկէր ձեռք դնելով, տեսակ տեսակ ցաւագարութիւնները Աւետարանի ընթերցումով նոյն ժամուն Բրիստոսի անունով կը մաքրէր ու կը փարատէր. եւ դեւերը կը հալածէր»:

Եւ մինչեւ իսկ «այլասերները» (օտարները) կը սիրէին եւ կը յարգէին զայն իբրեւ սուրբ անձնաւորութիւն (Մարգուևնցի, էջ 534):

«Ողջ-ողջ կը նահատակէր իր մարմինը պահճով ու աղօթքով: Ամէն տեսակ մաքուր առաքինութիւններով կը զարդարէր ինքզինքը: Անոր զգեստը մազեղէն էր, թէ ներսէն եւ թէ դուրսէն չուանէ գօտիով մը ամրապնդուած: Ինք եւ իր աշակերտները արծաթ կամ ոսկի չէին ստանար» իբրեւ փոխարինութիւն իրենց քարոզութեան կամ հոգեւոր ծառայութեան համար: «Կրկնակ հանդերձ ալ չուենէին. իրենց ստացած ողորմութիւնները նոյն ժամուն աղքատներուն կը բաժնէին: Բորբոքեալ էին աստուածային Ա. Գրոց սէրով» (անդ):

Անոր կեանքին վերջին ժամերը այսպէս կը նկարագրուի Յայսմատուրքի մէջ:

«Կանչեց իր աշակերտները իր մօտ եւ մեծահանդէս օրհնութեամբ անոնց տուաւ գաւազանի իշխանութիւն եւ հրահանգեց երթալ «յուրոտս տիեզերաց» (աշխարհքի ամէն կողմերը), քարոզել Բրիստոսի Աւետարանը առաքեալներու նման. ոչ միայն քրիստոնեաներուն՝ այլ նաեւ օտարներուն: Պատուէր տուաւ անոնց երբեք չվախնալ թեւէ մէկէ: Չպահել Ա. Գրքի խօսքերը, այլ յայտնի կերպով քարոզել ճշմարտութիւնը: Չեր կեանքի բոլոր ընթացքին միշտ կիրարկեցէք պահքը եւ աղօթքը: Հեզ եւ խոնարհ եղէք ձեր առօրեայ կենցաղին մէջ: Եւ (Հարկը պահանջած պարագային) պարտիք մեռնիլ ճշմարտութեան համար: Չեր բերանէն երբեք ստութիւն չելլէ: Եւ տակաւին շատ բաներ պատուիրեց անոնց՝ ընելու եւ չընելու: Կրկնեց. յայտնի քարոզեցէք սուրբ նախահայրերու ուղիղ վարդապետութիւնը, յատ-

կապէս անոնց, որոնք կը հակառակին անոր»: Ապա կատարուեցաւ պաշտամունք եւ Ա. Պատարագ: Իր խօսքն ուղղելով իր աշակերտներուն՝ եզրակացուց. «Ժամանակը եկած է, որ մեռնիմ եւ երթամ առ իմ միջնորդս՝ մեր Ա. Գրիգոր Լուսաւորիչը, եւ առ մեր բոլոր վարդապետներու խումբին, որ Աստուծոյ միածին Որդիին Յիսուս Բրիստոսի աջ կողմը կեցած են: Երբ այս խօսքերը իր բերանն էին, գլուխը դրաւ բարձին վրայ եւ ըսաւ. Գոհութիւն Քեզի Յիսուս Բրիստոս Հօր Բանը, որ սա պահուն իմ բազում աշխատանքներէս ինձի հանդիստ կը պարգեւես: Երբ այս ըսաւ, աւանդեց իր պատուական հոգին առ Աստուած երանելի Գրիգոր Վարդապետ Տաթեւացին» (անդ, էջ 535):

Վիթխարի ըսուելու չափ շատ ու մեծ է Տաթեւացիի գրական վաստակը: Պողարեան Արք. կը թուէ անոնցմէ 25 հատ, որոնցմէ նշանաւոր է ԳԻՐՔ ՀԱՐՑԱՆՑ կոթողական գործը, ինչպէս նաեւ ԱՄԱՐԱՆ եւ ՁՄԵՐԱՆ քարոզագիրքերը, ինչ որ ոչ միայն կը հաստատէ իր առատաբան քարոզութիւնը, այլ նաեւ այն կարեւորութիւնը, որ կ'ընծայէր Տաթեւացի քարոզխօսութեան եւ բեմբասացութեան իր աշակերտներու դաստիարակութեան մէջ: Զարկ տուած է նաեւ ամուսնացեալ քահանայական դասու զարգացման. իր ձեռքէն անցած են ոչ միայն հարիւրաւոր վարդապետներ եւ արեղաններ, այլ նաեւ, ըստ Մեծոփեցի Պատմիչին, «Քահանայա բազումս աւելի քան զվաթսուն ոգի»: Զարկ տուած է նաեւ գրչագրական արուեստին եւ գրեանց ընդօրինակութեան:

Դոկտոր Ա. Արեւշատեան Տաթեւացիի կեանքին ու իմաստասիրական տեսութեանց մասին ունի իր կարեւոր գրութիւնը «Հայ Մշակոյթի նշանաւոր գործիչները. Ե-ԺԸ դարեր» (Երեւան 1976) գրքին մէջ (էջ 406), ուր կը կատարէ նաեւ հետեւեալ կարեւոր հաւաստումները.

«Գրիգոր Տաթեւացի եղև է բացառիկ աշխատասիրութեան եւ մեծ եռանդի տէր մարդ: Գիտնական եւ գասախօս, նկարիչ եւ գեղագիր, աստուածաբան եւ եկեղեցական գործիչ: Մանրաբեռնուած համալսարանի ղեկավարի յոգնատանջ պարտականութիւններով, նա զեկավարում էր նաեւ Ապրակունիսի վանքի դպրոցը, շրջագայում Հայաստանի քաղաքներում եւ վանքե-

բում, քարոզներով հանդէս գալիս աշխարհականների ու հոգե-
ւորականների առջեւ, դասախօսութիւններ կարդում Մեծօփի,
Երեւանի եւ Սաղմոսավանքի դպրոցներում՝ ամենուր իր շուրջը
հաւաքելով աշակերտների հոծ բազմութիւն: Նա Յովհան Որոտ-
նեցու հետեւորդն էր նաեւ միարարական շարժման, կաթողիզմի
գաղափարական ոտնձգութիւնների դէմ մղուող պայքարում:
...Տաթեւացին, որպէս հեռատես քաղաքագէտ, բուռն գործու-
նէութիւն ծաւալեց Հայոց հոգեւոր կենտրոնը՝ Կաթողիկոսական
աթոռը, հեռուոր եւ պապական խարդավանքների ցանցերով
խճճուած Կիլիկիայից Հայաստան տեղափոխելու համար: Երկար
պայքարը, որը շարունակուեց նրա աշակերտների կողմից,
նպաստեց Հայկական եկեղեցու ինքնուրոյնութեան պահպանու-
մին, Կաթողիկոսի աթոռանիստը Կիլիկիայից տեղափոխուեց
էջմիածին եւ օտարերկրեայ լծի պայմաններում դարձաւ իւրա-
տեսակ հոգեւոր-քաղաքական կենտրոն»:

Կը տօնախմբուի իր Վարդապետին՝ Յովհաննէս Որոտնեցիի,
Օձնեցիի եւ Երուսաղէմի Յովհաննէս Հայրապետներու հետ Մեծ
պահքի Դ. Կիրակիի նախընթաց Շաբաթ օրը:

ՕՐՄԱՆԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԻԻ ԽՈՐՀՐԴԱՍՈՒԹԻՒՆԸ
ՏԱԹԵՒԱՑԻՒ ԱՐԴԻՒՆՔԻՆ ԵՒ ՅՕՐԻՆՈՒԱՍ
ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՄԱՆ ՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

«Գրիգոր Տաթեւացի Հայ եկեղեցւոյ երանաշնորհ վարդապետնե-
րուն շարքին վերջինն է, փառաբանուած եւ տօնուած յատուկ յիշա-
տակով եւ գովուած ԵՌԱՄԵՄ կոչմամբ, որ գրեթէ մակդիր անուռն մը
դարձած է: Այդ արտասովոր փառքին բուն պատճառը հաստատուած
է իւր անխոնջ աշխատութեան վրայ, որով դէմ դրաւ Ունիթոսական
հոսանքին եւ աղթարմայական վարակման, որոնք, օգուտ քաղելով
Հայ ազգի եւ Հայ եկեղեցւոյ անկած եւ տկարացած կացութենէն, կը
յուսային զայն ընկուզանել եւ ազգային եկեղեցւոյ գոյութիւնը
վտանգել:

Գրիգոր, հետեւելով նոյն ուղիղ շաւիղին, զոր ուսած էր իւր
արժանաւոր Վարդապետէն՝ Որոտնեցի Յովհաննէսէն, եւ իր կողմանէ
աւելցնելով ինչ որ հանճար եւ սիրտ իրեն կը թելագրէին, ինքզինքը

նուիրեց սոսկ ուսուցման ճիւղին, կամ պաշտօնական բառով՝
վարդապետական ընթացքին. գրեց եւ քարոզեց, սորվեցուց եւ աւան-
գեց, եւ Տաթեւական աշակերտութեամբ տէր կանգնեցաւ Հայադաւան
ուղղափառութեան եւ զայն ազատեց իր վտանգեալ վիճակէն: Այդ
անդու ջանքին եւ պայծառ արդիւնքին հանդէպ երախտագիտական
պարտք մըն է, զոր կը կատարէ Եկեղեցին անոր յիշատակը տօնելով,
որուն սկզբնաւորութեան թուականը ճշդուած չենք գտնել: ... ԺԸ
գարուն սկիզբները, միաբանական նպատակի հետեւողութեամբ, պահ
մը ընդհատած կը գտնենք անոր տօնը, եւ այն պարագային
հետեւանքը եղած է՝ Յայսմաւորքի վերջին տպագրութեան մէջ
յիշատակին ալ զանց ըլլալը, ինչպէս Որոտնեցիի համար ալ յիշեցինք:

Տաթեւացին անկասկած պէտք է դասել ժամանակին գիտնական-
ներուն շարքը: ՀԱՐՑՄԱՆՑ ԳԻՐԲԸ Թէ՛ ոճով եւ թէ՛ պարունակու-
թեամբ համահասարակ կերպարան եւ արժէք ունի միջին դարու հռչա-
կեալ լատին աստուածաբաններուն, Թովմաս Ակուինացիի, Ալբերտոս
Սուաբեցիի եւ Սկոպտոս Երինացիի գործերուն հետ, հանգիտակշիռ
առաւելութիւններով եւ համանման թերութիւններով: Ասկէ կը հե-
տեւցնենք, թէ ոչ միայն լատիներէնի հմտութեամբ, այլ եւ Լատիններ-
ուն ընդունած ձեւերով ուզած է մաքառիլ անոնց դէմ: Մինչեւ իսկ
կրնանք աւելցնել, թէ ՀԱՐՑՄԱՆՑ ԳԻՐԲԸ միջին բացատրութիւններ
կրնան լուսաբանուիլ Սկոլաստիկեաններուն լատիներէն դարձուածնե-
րուն համեմատութեամբ:

Իրաւ ներկայ դարուս մէջ հետեւելի չեն այլեւս Տաթեւացիին ձեւն
ու ոճը, ինչպէս գործածելի չեն Արեւմտեան սկոլաստիկական ոճերը,
սակայն ժամանակին Լատիններուն դէմ իրենց գէնքերով մաքառելու
հարկը ստիպած է Տաթեւացին, ՀԱՐՑՄԱՆՑ ԳԻՐԲԸ մէջ իւրացնել եւ
Հայոց սեփականել տալ նաեւ այնպիսի վարդապետութիւններ, որոնք
Լատիններէն առջեւ կը դրուէին, եւ թէպէտ Հայ եկեղեցւոյ սեփական
չէին, բայց խնդրի նիւթ եղող կէտերէն ալ դուրս կը մնային: Կ'երեւի
թէ՛ Տաթեւացին ուզած է այնպէս իմն ցուցանել, թէ Հայ եկեղեցին
թերի բան մը չունի իւր ընդհանուր վարդապետութեան մէջ: Այսպէս
են եկեղեցւոյ խորհուրդներուն եօթը թիւը եւ վերջիմ օծումը, մեղ-
քերու տեսակները եւ աստիճանները, Հաղորդութեան բացատրութիւ-
նը, ազգաբանական ճիւղահամարը եւ այլ նմաններ: ՀԱՐՑՄԱՆՑ

ԳԻՐՔԷՆ ԽԱՔՐ ԳԼԽԱԼՈՐ ԳՐԹԻՆ Է ԱՄՌԱՆ ՀԱՏՈՐ ԵՆ ԶՄՌԱՆ ՀԱՏՈՐ
անուններով երկուքի բաժնուած քարոզչիրքը, վարդապետական տե-
սութիւններով ճոխացած... Եւ որոնցմէ Հնար է այսօր ալ օգտուիլ,
որչափ ալ ոճը ընտել չըլլայ այլ Եւս մեր գործածական կերպին: Այդ
գրուածներն են, որ անմահացուցած են Տաթևացիին անունը Եւ աւելի
փառաւորած, քան թէ Հայրապետական աթոռ բարձրացած ըլլար:

Գրական երկատիրութեանցը Հետ արդիւնաշատ եղած է Տաթևա-
ցին իւր ընդարձակ ուսուցչութեամբը Եւ բազմաթիւ աշակերտներովը,
որ, ինչպէս ըսինք, ներկայիս գտնուող Հայ վարդապետութեան Հիմն
ու աղբերակն է: Վերել քիչ մը բան ըսած ենք իւր աշակերտներուն
վրայ. բոլորն ալ Տաթևացիին գործունէութեան արգասիք պէտք է
Համարուին: Վարդապետական աշխատութեան մասին ունեցած ջան-
քին Եւ անոր արդիւնաւորութեան մասին սնուցած զգացումին արտա-
յայտութիւնն եղած է Վարդապետական աստիճանի մտաւորութեան
Համար կազմած ծիսական կարգը, զոր ՅՕՐԻՆԵԱԼ Է Տաթևացիին,
ինչպէս Մաշտոցիին մակագրութեան մէջ գրուած կայ: ԅօրինուած կա-
նոնը երկար է իւր կազմութեամբ Եւ ծանր է իւր պարունակութեամբը,
Եւ, ուրիշ ազգերու մէջ գործածուած ձեւերէն տարբեր ըլլալուն, պէտք
է ընդունիլ, թէ Տաթևացիին միտքին ստեղծումն է: Ուրիշ ազգերու
մէջ վարդապետական աստիճանը իւր ուսումնական կերպարանը կը
պահէ, Եւ Պապաւորի (պաշելիէ) Արտօնաւորի (լիսանսիէ) ու
Մագիստրոսի (դոկտոր) երեք աստիճաններով կը լրանայ: Հայ
վարդապետութիւնը, որ աստուածաբանութեան մագիստրոսի աստի-
ճանին կը պատասխանէ, Տաթևացիին գրութեամբ ամբողջապէս
եկեղեցական կերպարանի վերածուած է, 14 աստիճաններու դասաւօ-
րութեամբ, թէպէտեւ ամէն աստիճաններ իրենց յատուկ գոյութիւն Եւ
նշանակութիւն չունին, այլ միայն երկու բաժանումներ կան՝ մէկը 4 Եւ
միւսը 10 աստիճաններով, որ ՓՈՔՐ Եւ ՄԵԾ, կամ ՄԱՍՆԱՒՈՐ Եւ
ԾԱՅՐԱԳՈՅՆ անուններով կ'որոշուին: Հին Եւ Նոր Կտակարանէ
քաղուած ընթերցումներ Եւ շարականներէ Հաւաքուած յարմար
պատկերներ կը կազմեն արարողական մասը, իսկ գաւազանին
աստիճաններուն թուով կրկին Եւ կրկին տուչութիւնները՝ կը պատկե-
րացնեն վարդապետութեան նիւթ եղող կէտերուն տարբերութիւնները
Եւ պաշտօնին ընդարձակութիւնը ցոյց կուտան: Ուսմանց ընթացքը

լրացողներուն տրուած աստիճանը՝ մասնաւորն էր, իսկ ծայրագոյնը
պահուած էր վարդապետաց վարդապետներուն, որոնք վանքերու
կամ վանական դպրանոցներու կամ վարդապետանոցներու մէջ իրենց
յատուկ աշակերտութիւն մը կը կազմէին:

Ձեռք ուզեր պատմութիւննիս ընդհատելով Համեմատութեան դնել
այդ սկզբունքը Եւ այժմ... ընդհանրացած սովորութեան Հետ, ուր
անուաներու անգամ ծայրագոյն աստիճան կը տրուի, մինչ եթէ
պէտք էր ունայնամիտ ակնկալութիւններ գոհացնել, Հնար էր Հինգե-
րորդէն մինչեւ չորեքտասաներորդ աստիճաններուն մէջէն տարբեր
բաժանում ալ կազմել, Եւ օրինակ իմն ԱԻԱԳ ՎԱՐԴԱՊԵՏԻ աստիճան
մըն ալ ստեղծելով աստիճանաւոր բարձրացման ձգտումներու յա-
գուրդ տալ:

Տաթևացիին կազմած արարողական ձեւը իւր ընդարձակու-
թեամբը նպատակ ունեցած է ուսումնականութեան գերակշռութիւնը
բարձրացնել Եւ կերպով մը անոր այնպիսի դիրք մը տալ, որ նոյն իսկ
եպիսկոպոսականէն աւելի փայլ մը ունենայ: Այս միտքը այնչափ
գօրացաւ, որր մինչեւ վերջին դարուն սկիզբները ծայրագոյն աստի-
ճան ունեցող եպիսկոպոսներ վարդապետի պատուանունով կը
կոչուէին, իբրեւ աւելի փառաւոր կոչում մը:

Արդէն Մաշտոցի խորագիրն ալ ծայրագոյնները կ'արտօնէ
եկեղեցւոյ մէջ ՆՍՏԻԼ Ի ՎԵՐԱՅ ԱԹՈՌՈՅ Եւ ԾԱԳԷ Ի ԾԱԳ ԹԱՐՑ
ԱՐԳԵԼՄԱՆ ՔԱՐՈՉԵԼ, Հրամայելով լինել ԻԲՐԵԻ ԶՎԷՄՍ ԱՆՇԱՐ-
ԺԵԼԻՍ Եւ ոչ մի թերութիւն ունենալ Ի ՀԱԻԱՍՍ, Ի ԿԱՐԳՍ Ի ԿՐՕՆՍ
ԻԻՐԵԱՆՅ, Եւ ինչ որ կը քարոզեն՝ ԶՆՈՅ ԻՆՔՆ ԿԱՏԱՐԵԼ ՆԱԽ:

Արտօնութիւնները կիրառութեան դադրած են, անշուշտ անոր
Համար, որ ծայրագոյն վարդապետները տարապայման աճած Եւ
իրենց նշանակութիւնը կորուսած են, պարտաւորիչ պայմաններուն
չեն պատասխաներ Եւ պէտք եղած ձիրքերով ճոխացած չեն: Շատ
նշանակալից է, նոյն իսկ Տաթևացիին, Որտեղեցիի մահուան մօտ
ծայրագոյն գաւազան ընդունիլը» (Ազգ. էջ 2028-2032):

Սկզբնաղբիր. Թովմաս Վրդ. Մեծոփեցի, Պատմութիւն Հանկթա-
մուրայ. Տպ. Փարիզ 1860: [Տե՛ս նաեւ՝ Ս. Արեւշատեան, Տաթևի
Փիլիսոփայական դպրոցը Եւ Գրիգոր Տաթևացու աշխարհայեցողքը,
«Բանբեր Մատենադարանի», N. 4 (1958), էջ 121-137]:

ՀԱՅ ԸԳՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

[ՆԵՐԱՇՈՒԹԻՒՆ]

Հայ ճգնաւորութիւնը, մանաւանդ անոր աւելի կազմակերպեալ ձեւը եղող վանականութիւնը, մէկ խօսքով Հայ ԿՐՕՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ շահեկան նիւթ մըն է, որ կ'արժէ յատուկ ուսումնասիրութեան առարկայ դարձնել: Մենք սա պահուս չենք կրնար յիշել այս մասին կատարուած լայնաշունչ ուսումնասիրութիւն մը: Մինչդեռ իսկ կը պակտի մեզի անհրաժեշտ ժամանակը այդ մասին պրպտում եւ Հարցուփորձ կատարելու*: Ուստի պիտի պարտաւորուինք գոհանալ այն մանր նիւթերով, որոնք կը գտնուին մեր տրամադրութեան ներքեւ, իբրեւ յառաջաբան կամ ներածական գործածելու մեր տօնելի սակաւթիւ ճգնաւորներուն ընծայուած այս դիուխին:

Տարբեր կենցաղային Հոգեւոր դրութիւններ ըլլալով Հանգերձ՝ պէտք է Հաստատենք, թէ սերտ, գրեթէ անբաժանելի միութիւն կայ ճգնաւորութեան ու վանականութեան միջեւ: Երկուքին Համար ալ Հաւասարապէս գործածուող բառն է ԿՐՕՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ: ԾԳՈՒՊՈՒԹԻՒՆԸ մէկ Հոգիի կամ առ առաւելն փոքր խումբի մը կրօնաւորական կենցաղն է բացարձակ ՄԵՆՈՒԹԵԱՆ ՄԷՁ, Հեռու՝ մարդկային ընկերութենէ, եւ կիրարկուած ամայի բնութեան ծոցին մէջ: Իսկ վանականութիւնը նոյն կրօնաւորական կենցաղն է, որ կը գործադրուի Հաւաքարար՝ վանքի մը մէջ, վանահօր մը Հոգեւոր իշխանութեան եւ առաջնորդութեան ներքեւ, յատուկ ԿԱՆՈՆԻ մը Համաձայն: Երկուքին ալ Հետապնդած նպատակը նոյն է, այսինքն՝ ապրիլ Բոզետր կատարելութեան վեանք մը աւելի ապահով պայմաններու մէջ, քան ինչ որ սովորաբար կարելի է ձեռք ձգել «աշխարհիկ»

* [Այդ Հարցին վերաբերող ուսումնասիրութիւն ան՝ Յուսիկ Եպիսկոպոս, Անապատականներ եւ վանականութիւն, Վաղարշապատ, 1906]:

կոչուած կեանքի եւ ընկերութեան մէջ: Երկուքն ալ կը Հետապնդեն Հոգեկան սրբացումի կեանք մը, Հրաժարելով աշխարհի Հաճոյքներէն եւ տաղտուկներէն, տակաւ առ տակաւ մեռուցանելով իրենց մէջ մարմնական ցանկութիւնները ժուժկալութեամբ, խստամբեր կեանքով, ինքնազրկանքով եւ ներքին մաքառումներով մարմնական ու գիւական փորձութիւններու դէմ:

Մենք Քրիստոնէական ճգնաւորութեան ու վանականութեան մասին Համառօտ գրութեամբ մը անդրադարձած ենք մեր նախորդ գրքին մէջ (ՀԱՄԱՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՍՈՒՐԲԵՐ, էջ 18), ցոյց տալով զայն իբրեւ «իր ժամանակին ամենէն տրամաբանական Հոգեւոր ուղին, եւ բարոյապէս ու Ֆիզիքապէս ամենէն առողջ կենցաղային դրութիւնը»: Հայկական ճգնաւորութիւնը եւ վանականութիւնը անշուշտ իր սկզբնաւորութեան մէջ ուրիշ բան չէր կրնար ըլլալ, եթէ ոչ Համայն Քրիստոնէական Եկեղեցիի մէջ ի յայտ եկած Հոգեւոր կենցաղային այս նոր դրութեան փոխադրուիլը եւ արմատանալը Հայ Հոգին վրայ: Տրուած ըլլալով, որ մեր մէջ սկսուած ճգնաւորութեան ու վանականութեան ռահվիրաները կուգային մեզի դրացի քոյր եկեղեցիէ մը (Կապադոկիան Կեսարիայէն), որուն Հետ մեր եկեղեցին Հոգեւորապէս եւ գործնականապէս գրեթէ խնամիացած էր այլեւս, Հետեւաբար ոչինչով պիտի տարբերէր մերինը քոյր եկեղեցիներու մէջ կիրարկուող կրօնական դրութենէն:

Մեր մէջ կրօնաւորական կեանքը, իր կրկնակ թեւերով, մասնաւոր ԿԱՆՈՆ-ներով Կարգաւորուած էր արդեօք, այսինքն՝ գոյութիւն ունեցած է արդեօք, բացի սրբութեան եւ կատարելութեան աւետարանական ընդհանուր սկզբունքներէն եւ պատուէրներէն, յատուկ ԿԱՆՈՆ մը, որով ճշդուած ըլլար վանականին կամ ճգնաւորին առօրեայ կեանքը, ինչպէս այդ գոյութիւն ունի Արեւմտեան ԲՈՂՈՐ վանական կամ միանձնական դրութեանց մէջ: Մենք տարակոյս չունինք, որ այդպիսի Հաստատ ԿԱՆՈՆԱԿԱՆ դրութիւն մը գոյութիւն ունեցած պէտք է ըլլայ նաեւ մեր մէջ, ինչպէս գոյութիւն ունեցած է, այս կամ այն ձեւի տակ, Արեւելեան բոլոր վանական կամ միանձնական դրութեանց մէջ: Ի՞նչ է ին անոնք: Գէթ մեզի անյայտ կը մնան: Մեր ներկայ կամ մօտիկ անցեալի վանական կամ միաբանական դրութիւններ ալ լոյս չեն սփռեր այս Հարցին վրայ:

Մեր երբեմնի բազմաթիւ վանքերու միաբանական կազմերէն ներկայիս մնացած են լոկ երեք հատը, մեր երեք բարձրագոյն նուիրապետական Աթոռներուն մէջ - Էջմիածին, Անթիլիսա եւ Երուսաղէմ: Որքան որ մենք գիտենք, երեքն ալ չունին յատուկ ներքին ԿԱՆՈՆ մը, որ մի առ մի յատակէ եւ սորվեցնէ, թէ ինչ ԸՆԴՀԱՆՈՒՐ սկզբունքներու վրայ հիմնուած պիտի ըլլայ կրօնաւորական կեանքը եւ ինչ մասնաւոր ԿԱՆՈՆ-ներով պիտի կառավարուի վանական առօրեայ կեանքը. ուրիշ խօսքով՝ ի՞նչ կերպով պիտի իրադրօժուի միանձնական կատարելութեան եւ սրբութեան կեանքը, որուն համար ստեղծուած են վանքերը եւ որուն համար կ'ընէ ենթական գերագոյն զոհողութիւնը՝ Հրաժարելով ամուսնական եւ ընկերային սովորական կենցաղէն եւ մտնելով մշտական ԿՈՒՍԱԿՐՕՆՈՒԹԵԱՆ ծանր լուծին տակ:

Բացայայտ է, թէ երեք մայրավանքերու միաբանութիւններն ալ կ'ապրին առանց որեւէ գրաւոր ԿԱՆՈՆի, մինչեւ իսկ չտրուի անոնց յատուկ ԿՐՕՆԱԻՈՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ՝ առնուազն ըստ անգիր սովորութեանց: Անոնց ունեցած գրաւոր ԿԱՆՈՆները կամ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆները լոկ կազմական ու վարչական են եւ ոչ թէ կրօնաւորական կատարելութեան համար պատրաստուած ուղեցոյցներ: Բայց աստի, ստոյգ է, թէ երեք վանքերու մէջ ալ, յատկապէս Երուսաղէմ, գոյութիւն ունի (աւելի շիտակը՝ գոյութիւն ունէր) շատ անորոշ եւ ընդհանուր կրօնաւորական կենցաղային ԿԱՂԱՊԱՐ մը, որուն մէջ ինքնաբերաբար (յաճախ անգիտակցաբար) կուգար թափուիլ միաբանական նոր սերունդներու առօրեայ կենցաղը: Ներկայիս այդ ԿԱՂԱՊԱՐն ալ վերցուած է, եւ միաբաններ պարտաւոր չեն զգար հետեւելու եւ ենթարկուելու մինչեւ իսկ ցարդ կիրարկուող վանական ամենէն տարրական սովորութեանց: Օրինակ՝ այդ սովորութիւններէն գրեթէ ամենէն անխափանը, հիմնականը եւ պարտականը, առնուազն Երուսաղէմի մէջ, մայրավանքի զանգակին առաու եւ երեկոյ հնչելն է՝ հրաւիրելով միաբանութիւնը Առաւօտեան եւ Երեկոյեան պաշտամունքի: Հին սերունդը գրեթէ անխափան կը պատասխանէր կոչնակի հրաւերին. 1925-էն յետոյ կազմուած նոր սերունդը՝ գոհացուցիչ հասնամատութեամբ, իսկ արդի սերունդը, կազմուած 1960-էն յետոյ, բացի թերեւ Շաբաթ երեկոյի եւ Կիրակի

առաւօտեան ժամերգութիւններէն, երեք խղճահարութիւն չզգար, եթէ վանական հիմնական այս կարգ-կանոնին դէմ գործէ...: Ուրեմն ճգնողական կեանքէն յետոյ, որ շատոնց չքացած էր արդէն Հայ եկեղեցիէն, անհետացումի ճամբան մտած է նաեւ վանականութիւնը, որ ներկայիս կ'ապրի թմբիրի մէջ մտած իր բուսական կեանքը...: Հակառակ այս իրողութեան, սակայն, մենք փորձ մը պիտի ընենք անդրադառնալու, թէ ի՞նչ սկզբունքներու վրայ կառուցուած էր հին ատեն Հայկական միանձնական ու վանական կեանքը, հիմնուելով մեր ի ձեռին ունեցած ինչիւնչ ընդհանուր տուեալներու վրայ:

Մասօթ է, թէ ճգնողական ու վանական կեանքը իր սկիզբը կ'առնէ եւ կարգ-կանոնի կը մտնէ Ս. Անտոնով (250-355) Եգիպտոսի մէջ: Անկէ կը տարածուէր նախ Միջին Արեւելքի երկիրները (Պաղեստին, Սուրիա, Միջագետք ու Փոքր Ասիա), ապա կ'անցնէր Արեւմուտք, հասնելու համար իր բարձրագոյն կատարելագործումին:

Ս. Անտոնի մահէն քանի մը տարիներ յետոյ, 360-ական թուականներուն, Բարսեղ Կեսարացի Հայրապետը կը կազմէ իր վանական կանոնները եւ կը հիմնէ բազմաթիւ վանքեր ու ճգնողական կեդրոններ Կապադովկիոյ նահանգին ամէն կողմերը, յատկապէս Իրիս գետի (Եջիլ-ըրմաքի) հովիտներուն մէջ: Ներկայիս Օրթոդոքս վանքերուն մէջ կիրարկութեան մէջ եղողը, գէթ ձեւապէս ու պաշտօնապէս, Բարսեղ Հայրապետի ԿԱՆՈՆՆԵՐՆ են: Մենք այնպէս կ'ենթադրենք, որ մեր մէջ ալ կիրարկութեան մէջ եղող առաջին ճգնողական ու վանական ԿԱՆՈՆը Բարսեղ Հայրապետինը եղած պիտի ըլլայ, քանի որ այնքան սերտ էր Հայոց եկեղեցիին յարաբերութիւնը Կեսարիոյ եկեղեցիին հետ:՝ Ու դեռ կ'ենթադրենք, որ անոր ԿԱՆՈՆը կանուխ ժամանակներէն, մինչեւ իսկ Ե դարէն, թարգմանուած պէտք է ըլլայ Հայերէնի: Աչքէ անցնելէ յետոյ Հ. Գարեգին Զարբհանելեանի «ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԽՆԵԱՑ» արժէքաւոր գործի Ս. Բարսեղի գործերուն թարգմանութեան բաժինը (էջք 325-344) կը տեսնենք արդարեւ, թէ անկէ կատարուած աւելի քան 60 կտոր թարգմանութեանց մէջ կան նաեւ կրօնաւորներու վերաբերեալ գրեթէ

* [Հեղինակի կառուածն իրաւացի է. այդ մասին տեղեկութիւն են տալիս Ասողկէն ու Ստ. Օրբելեանը]:

բոլոր գործերը, «Թարգմանութեամբ նախնեաց ըստ մեծի մասին յոսկեղէն դարու մեր մատենագրութեան եւ այլք կրտսերագոյնք ժամանակաւ»: Թուեմք անոնցմէ գլխաւորները եւ բացայայտները:

1. Սրբոյն Բարսղի Եպիսկոպոսապետի Կեսարու Կապաղովկեցուց ՃԳԵՈՂԱԿԱՆԱՑ ԿՐՕՆԱԻՈՐԱՑ:

2. Նորին՝ ՍԱՀՄԱՆՔ ԿՐՕՆԱԻՈՐԱԿԱՆՔ:

3. Նորին՝ ԽՐԱՏ ՅԱՂԱԳՍ ԿՐՕՆԱԻՈՐԱՑ առ միաբանակեացս եւ որ առանձին ճգնին:

4. ՀԱՐՑՈՒՄԸ ՃԳՆԱԻՈՐԱՑ- Պատասխանի սրբոյն Բարսղի: Երեք Հարիւր վաթսուէն եւ մի ի ճգնաւորաց, եւ պատասխանիք սրբոյն Բարսղի: Այս պատճառաւ ամբողջ գիրքն ՀԱՐՑՈՂԱՑ կոչուած է իր գրչագիրս...: Ի ցուցակի գրչագրին որ յերուսաղէմ այս ծանօթութիւնը կը գտնենք. «Թարգմանեալ ի յունականէն ի Հայս՝ ի ձեռն ճշմարտաբանից Թարգմանչաց մերոց»: Այս գործի ուրիշ գրչագրի մը յիշատակարանին մէջ ըսուած է. «Գիրք Բարսղի Կեսարացւոյն ՎԱՄՆ ՃԳՆԱԻՈՐԱՑ»*:

5. ԿԱՆՈՆԱԿԱՆՔ եւ որչափ պատուհաս: Ասկէ գրչագիր մը կը գտնուի եղբր Հովովի մատենադարանին մէջ Հետեւեալ յիշատակարանով. «Ռէշ (1074-551=1625) գրեցաւ ԿԱՆՈՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ուղղութեանցս յուսուամ խրատու կարգաւորութեան ՎԱՆԱԿԱՆԱՑ, յարմարեալ եւ շարակարգեալ ի հոգիապայծառ եւ ի տիեզերալոյս վարդապետէ եւ ի մեծէ Եպիսկոպոսապետէն Կեսարու Կապաղովկացուց սրբոյն Բարսղի, որ կոչի ՀԱՐՑՈՂԱՑ... եւ է սա յիշատակ ԼՄԱՑ ԱՆԱՊԱՏԻ» (այսինքն՝ Վանայ Լիմ կղզիի մենաստանի, որ նշանաւոր եղած է իբրեւ կեդրոն խստակեաց եւ ճգնաւոր կրօնաւորներու) ու կ'աւելցնէ յիշատակարանը. «Ուր կան այժմ վաթսուէն եղբայր միակեց, Հաստատ կարգօք ի փառս Աստուծոյ» (ամր, էջ 336-338):

Ասոնցմէ ոչ մէկը ունինք ի ձեռին օգտագործելու համար: Ուստի մենք պիտի Հարկադրուինք Թարգմանաբար եւ ընտրովի ներկայացնել

* [Կեսարացու աշխատութիւնն այժմ հրատարակուած է՝ Basilio di Cesarea, Il Libro delle Domande (Le Regole). Edito da Gabriella Uluhogian, Lovanii, 1993]:

կրօնաւորներու վերաբերեալ երեք Հայկական աղբիւրներ, զորս ունինք մեր ձեռքին տակ եւ որոնք եթէ Հանգամանօրէն չեն պատկերացներ մեզի Հայ կրօնաւորութեան առօրեայ կենցաղական ԿԱՆՈՆՆԵՐԸ, գէթ գաղափար մը կուտան այն հիմքերուն մասին, որոնց վրայ կը կենայ Հայ կրօնաւորութեան կեանքի շէնքը:

Ա. ԲԱՆ ԽՐԱՏՈՒ ԵՂԻԾԷԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՅԱՂԱԳՍ ԿՐՕՆԱԻՈՐԱՑ

Դիւցազներգակ Եղիշէ Վարդապետի ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ գրքին վերջաւորութեան՝ վերեւի տիտղոսով գրութիւն մը գոյութիւն ունի: Ուրեմն գրուած է Ե դարու կէսերուն եւ Հետեւաբար այդ դարու Հայ եկեղեցիի մտայնութիւնը կ'արտայայտէ կրօնաւորութեան մասին:

Ուստի առաջ կը բերենք զայն Թարգմանաբար.

«Մարդիկ, որոնք մարմնաւոր են եւ յօժարակամ իրենց անձերը աստուածաշատութեան կուտան, տղայութենէն սկսեալ, կը խորհին կրթել իրենք զիրենք դժուարութեանց ու նեղութեանց մէջ: Կը հեռանան իրենց Հայրենի բնակութենէն, կը քշուին անապատ-անշէն վայրեր... որովհետեւ կը տեսնեն, որ աշխարհ լեցուն է չարիքներով, հետեւաբար խոյս կուտան մեկուսացեալ, անշէն ու անբնակ տեղեր...: Ասոնք կը հաւաքուին եւ բնակութիւն կը հաստատեն երկու-երկու կամ երեք-երեք եւ կամ աւելի թիւով: Եւ իրարմէ զատուած խցիկներ կը շինեն, խեղճ պատերով՝ պարզապէս ցուրտին դէմ պաշտպանուելու համար, եւ ձեղունով՝ արեգակէն պահպանուելու համար. յատակը՝ շատ պարզ. կը բաւականան խոտեղէն անկողիններով... կը շինեն նաեւ անպաճոյճ շատ խեղճ հագուստներ, ամառ ատեն՝ կողոր (անթեւ կարճ զգեստ), ձմեռ ատեն՝ թեզանաւոր (թեւով երկայն զգեստ), վրանին կ'առնեն նաեւ աղաբողոմ մեկեմաւոր (պարզ վերարկու մը): Մանաւանդ անդադրում պաշտամունքով՝ հոգեւոր երգեր կը մատուցանեն բոլորին Հօր՝ զուարթ Հոգով: Իրարու դէմ-յանդիման կը կենան, իրենց աչքերը վար կախած՝ ոտքի մատներուն յառած, իբրեւ թէ ամենքն ալ մէկ տեսակէտի վրայ կը նային: Իրենց աջ ձեռքը ծնօտին դրած եւ ձախը՝ կուրծքին, իբրեւ թէ իրենց բնական Հայրերէն սորված:

Մարմնի մէջ ամենէն պատուական բաները երկուք են... կեանքը եւ խորհուրդը. երկուքը իրարու օգտակար կ'ըլլան. կեանքին կը վնասէ բարկանալու կիրքը, իսկ խորհուրդին՝ բերնէն դուրս եկած խօսքը: Արդ՝ կրօնաւորը իր վերոյիշեալ դիրքով՝ ձախ ձեռքով բարկութեան կիրքը կը սանձահարէ եւ ծնօտին դրուած աջ ձեռքով՝ մտածումը կը պաշտպանէ խօսքի դրան քով (բերնին մօտ) պաշտպան կեցած, որպէսզի ուղիղ փառատրութեան տարբեր բաներ չխառնուին: Եւ այս երկու կերպերով հակակշռի տակ կը պահուին բոլոր զգայարանքները: Աչքերը ուղիղ բաները կը տեսնեն, ականջները զգաստ բաները կը լսեն, միտքը սուրբ իմաստութեան կը հակի, եւ այսպէս իւրաքանչիւր զգայարանք սանձի տակ կը պահուի:

Երբ այսպէս կարգաւորեալ ամենքը միասին՝ վեցթեւեան սերովբէներու պէս շրջանակ կազմած՝ անդադար կը հնչեցնեն դէպի վեր, եւ ուշափ օրհնութիւն կը մատուցանեն իրենց Արարչին: Ամբողջ օրը կը պարապին քաղցր երգերով, կը յագնան ու կը զմայլին երկնային կերակուրներով, կուշտ ու կուռ կը հասնին իրիկուան: Եւ որովհետեւ մարմին ունին՝ ստիպեալ կերակուր կուտեն, որ չանօթեան, եւ ջուր կը խմեն՝ որպէսզի չծարաւնան:

Արդ, երբ ուտելու մասին է խօսքը, մեր սովորական ուտելու մասին չմտածես, որովհետեւ անոնց կերածը պարզ հաց է եւ վայրի բանջար, զոր աղով կը համեմեն, եւ կը գործածեն մաքուր ջուր, զոր ամպերէն ստանալով կը հաւաքեն հորերու մէջ: Սակայն ցերեկին երբեք չեն ուտեր, այլ ամբողջ օրը պահեցողութիւն կ'ընեն եւ կը սպասեն մինչեւ արեգակի մտնելուն. անկէ յետոյ ալ երեկոն կերկնցնեն մինչեւ աստղերը ծագին եւ ապա կը գոհանան միաբերան ըսելով. «խաւար ժամուն» խաւարային կերակուրը «խաւար մարմինին տանք»:

Ու ասիկա ըսելով՝ բարձրաձայն փառք կուտան Ս. Երրորդութեան եւ ուրախութեամբ կը հաւաքուին իրենց տեղերը, ինչպէս ըսինք, կուտեն լոկ հաց եւ զոպա (ծոթրին) եւ պաղ ջուր կը խմեն: Եւ որովհետեւ տկարակազմ ծերեր ալ կան անոնց մէջ՝ ասոնց ալ բարեխառն կամ գաղջ ջուր կուտան, իսկ գինի կամ որեւէ տեսակ ըմպելի երբեք չի գտնուիր անոնց սուրբ մենաստաններուն մէջ:

Եւ պարզ ընթրիքէն ելնելով՝ միաբանութեամբ կ'ըսեն. «Փառք քեզ Տէր, փառք քեզ թագաւոր մեր, որ մեզի ուրախարար կերակուր

սուիր, լեցուր այժմ զմեզ Սուրբ Հոգիով, որպէսզի հաճոյ ըլլանք Քուներկայութեանդ եւ չամչնանք, քանզի Դուն իւրաքանչիւրին կը հատուցանես ըստ իրենց գործերուն»: Ու ապա խաչակնքելով իրենք զիրենք, քչիկ մը թեթեւ քուն կ'առնեն, որպէսզի չհալած կերակուրով մարմինին գեղեցիկ շինուածքը չխանգարուի: Եթէ մինչեւ իսկ երկար են իրենց քունը, հոգեկան երազներ կը տեսնեն, եւ անմիջապէս կը մեկնեն զանոնք իբրեւ սուրբ մարգարէներու խօսքեր-յայտնութիւններ:

Արթննալով՝ կրկին կը հաւաքուին, շրջանակ կը կազմեն ոչ հակառակելով իրարու, ոչ ալ ընդդիմանալով, այլ՝ քաղցր հաւանութեամբ եւ հեղ հանդարտութեամբ: Դասերու առաջնորդները կը հնչեցնեն հոգեւոր քաղցրանուագ երգեր, իսկ միւսները, ձայներու ուշադրութիւն ընելով, կը հետեւին երգեցողութեան ձայնակցելով, եւ այսպէս ներգառնակ ու միաբան ամբողջ բազմութեան ձայնը կը հնչէ: Այսպէս երկարօրէն կը շարունակեն ձայնաւոր պաշտամունքը: Ապա կը ծնրագրեն ամենքն ալ. կ'աղօթեն լուսութեամբ, եւ աղօթքի առաջնորդին միջոցաւ ամենքն ալ ոտքի կը կանգնին եւ փառաբանութիւնը կը շարունակեն:

Յերեկեայ պաշտամունքը կատարած ըլլալով հանդերձ՝ պատշաճ կը նկատեն գիշերն ալ կանուխ ելնել եւ մինչեւ առաւօտ աղօթքով պարապիլ, Ս. Գրք կը կարդան, անոնք որ ուսուցանելու շնորհք ունին կը մեկնաբանեն կարդացուածը ի մխիթարութիւն լսողներու: Կը պատմեն աշխարհի ստեղծագործութիւնը ոչինչէ, ապա բարի խրատներ կուտան, զորս կը հաստատեն Ս. Գրքի վկայութիւններով: Այնպէս մը կ'ուսուցանեն, որ լսողներ կը մոռնան աշխարհի բաները եւ երբեք չեն յիշեր անհրաժեշտ կերակուրը եւ խմելիքը: Այնպէս մը խոր ուրախութեամբ կը լեցուին Աստուծոյ սէրով, որ իրենք զիրենք մարմնի մէջ չեն զգար, այլ՝ երկինքի մէջ: Ու այսպէս դիւրութեամբ կ'անցնեն գիշերուան երկայնութիւնը մինչեւ առաւօտ: Քանզի ասոնք սոսկացած են աշխարհէն եւ իրենք զիրենք երկնքի մէջ կը զգան, կ'ամչնայ մահը անոնց դրան առջեւ, կը դառնանայ դժոխքը (չարութիւնը) անոնց մօտեցած ատեն: Անոնց կենդանութիւնը աշխարհքի համար աղօթքի գորութիւն եւ պաշտպանութիւն է, եւ անոնց ոսկորները զանձեր են բոլոր ապաւինեալներուն համար: Անոնց մասին լսելը ինքնին յորդոր

մըն է բոլոր կամեցողներուն. դասակից են Հրեշտակներու եւ օրհեւան Ս. Երրորդութեան:

Արդ, այս բոլորը գիտնալով, եղբայրներ, պարտինք սրբութեան նոյն նախանձախնդրութիւնը յառաջ բերել մեր մէջ եւ նմանող ըլլանք այդ բազմազունդ աշխարհէն մեկուսացեալներու եւ դիմողներու վերին մայրաքաղաքը, որ ազատ է երկրաւոր արտերէ, եւ որովհետեւ անոնք ալ մեզի պէս նոյն բնութիւնը ունին, ասիկա ոյժ կը ներշնչէ մեզի՝ տկարներու: Միայն թէ կամեցի՛ր, Հաւատա՛, յուսա՛, սիրէ՛, այն ատեն դուն ալ կրնաս ունենալ նոյն կարիճութիւնը: Որովհետեւ երբեք չեն Համեմատեր այս կեանքի մէջ եղած ժամանակաւոր չարչարանքները՝ երջանկութեան Հետ այն կեանքին, որ պարաստուած է այդպիսի ճշնողներու:

Ուստի ես ալ շատ կը վախնամ մեր անտարբերութենէն. որովհետեւ կը տեսնեմ, որ ամէն մարդ երկրաւոր ստացուածքներու շատ կապուած է: Արդ՝ իմ բնութիւնս չի՞ յանդիմաներ զիս՝ երբ մերկ ծնայ, մերկ դրուեցայ դրախտի մէջ, անկէ մերկ ելայ եւ նորէն երկիր մերկանդամ վերադառնամ: Եթէ այստեղէն ոչինչ կրնանք տանիլ, այլեւս ինչո՞ւ այս աշխարհին վրայ նիւթական բաներու ետեւէ կ'ըլլանք: Մերկացիւր, աւելորդ բեռներդ նետէ վրայդ, ո՛վ միայնակեաց, նենգաւոր թշնամին իր մէջ ընդունող ամբողջ մի ըլլար. թերեւս դարանի մտնելով քու վրադ արշաւէ եւ կողոպտէ քեզ, զրկելով քեզ քու երկնաւոր գանձերէդ: Բաւական Համարէ քեզի տէրունական կանոնը. երկրաւորներէն ոչ ոք երկու տիրոջ կրնայ ծառայել... չէք կրնար դուք ալ թէ՛ Աստուծոյ եւ թէ՛ մամոնայի Հաճոյ ըլլալ:

Եւ արդ, մեր աշխարհին մէջ ոչ ոք ազատ կը տեսնեմ այս աղէտներէն: Իմաստին ճիշդ Հակառակը կարդացիք գեղեցիկ գրուածքները. ուխտաւորութեան պատճառանքով սուրբ ծնողքէ Հեռացանք եւ շատ մը օտարտի Հայրեր ունեցանք: Անոնք, որոնք պատուի արժանի էին՝ անարգեցինք... Ազատուեցանք պետական տուրքերէ եւ մտանք ստացուածքի տուրքի ներքեւ, որ լեցուն է անառակ ազահութեամբ: Սուրբ պսակի անկողինները չմտանք եւ սակայն մեզի Համար շատ աւելի բարձր գահեր շինեցինք, քան ինչ որ կայ աշխարհի մէջ: Գեղեցկայարմար անկողիններուն մէջ կը Հեշտանանք, եւ մեր միտքերը կը թափառին աղտեղի երեւակայութիւններուն մէջ ամբողջ գիշերը:

Մեր ոտքերուն կօշիկներն անգամ կը յանդիմանեն մեզ, որ մեր ճամբաները սուրբ չեն: Մեր Հանդերձները գործնականապէս կ'աղաղակեն, որ մերկ ենք երկնաւոր զգեստներէն: Մեր երիվարները կը մատնեն զմեզ, թէ յափշտակուած չենք օդին մէջ Տէրը դիմաւորելու Համար: Մեր ապարանքները կը յայտնեն, որ չունինք անձեռագործ տաճար երկինքին մէջ, ուր պիտի մտնեն բոլոր անոնք, որոնք երկրաւոր արտերէն կը մեկուսանան: Մեր անդաստաններու կալուածները կը կշտամբեն մեզ, թէ մենք բաժին չունինք երկնաւոր վիճակներու մէջ:

Անկուշտ անպիտաններ եղանք ուտելու մէջ, չափէն աւելի գինի խմեցինք, ինչ որ կը պղտորէ մեր խորհուրդները եւ միտքերը: Ամենքս ալ խոր քունի մէջ մտած ենք, եւ ճշմարտութիւնը մեզի երազ կը թուի ըլլալ: Գոցուած են մեր մտքին աչքերը իմանալի խորհուրդներէն, եւ անյադ պաղշոտութեամբ աշխարհի կեանքին կը նայինք: Արգիլեցինք մեր լսելիքները սուրբ ընթերցուածներէն եւ ունկնդիր դարձած ենք մեր ոչխարներու եւ արջառներու բառաչմունքներուն: Ս. Հոգիէն չեկաւ մեզի անուշ բուրմունքներ, որովհետեւ սիրեցինք արտալից աշխարհի իւրը: Մեր Հոգիի քիմքերը չճաշակեցին երկնային կերակուրը, որովհետեւ մեր անձերը պարարտացուցինք զանազան խորտիկներով: Մութ է մեր գէմքին գոյնը, որովհետեւ չզուարթացան մեր երեսները սրբութեան խորհուրդներով: Մեր մարմնի անդամները ցաւերով լեցուն են՝ վասնզի մեր մարմինէն առաջ մեր Հոգին Հիւանդացուցինք: Ծերմկցուած գերեզմաններու նմանեցանք, որովհետեւ պարպուած ենք Ս. Հոգիի շնորհներէն:

Ասոր Համար ամէն տեսակ չարիք Հասաւ մեր օրերուն: Մեր ողջ եղած ատեն տեսանք արդէն մեր անձերուն դիակները: Մեր քաջ նահատակները ինկան պատերազմի մէջ, եւ մեր սուրբ քահանաները խղիխղուեցան անօրէններու ձեռքով: Գեղեցիկ երիտասարդներ զոհ գացին մահուան, եւ շատ մը կոյսեր գերի տարուեցան: Փափկասուն կիներ այրիութեան տառապանքի մէջ ինկան, եւ բազմաթիւ որբեր դառնապէս կուլան: Ազատ եկեղեցին ինկաւ Հեթանոսներու ծառայութեան ներքեւ, եւ անոր սուրբ քահանաները անօրէն Հարկահաններէն չարաչար կը ծեծուին: Վերցուած է ողորմութիւնը աշխարհէ, եւ Հեռացած է գութը ամէն խղճմտանքէ: Երկինքը վերէն բարկացած է, եւ

երկիրը ներքեւէն կը տատանի:

Մեր շինուածքները գերեզմաններ եղան մեր դիակներուն, եւ մեր ձեռքերուն վաստակները մեր վրայ տապալեցան: Պայթեցաւ պատառեցաւ թանձր երկիրը, եւ շատ մարդիկ վար հոսեցան: Չսպասեց որ դին հօրը, ոչ ալ ջոյրը՝ իր եղբոր: Չկրցան լալ կիներ իրենց զաւակներուն վրայ, վասնզի սովը փակեց անոնց բերանները: Զօրաւորներ խորտակուեցան յանկարծակի Լիբանանի բարձր մայրիներու պէս եւ բարկութեան հնձան եղան. ճմլուեցան ամենքն ալ ողկոյզներու պէս ոտքերու տակ, գինիի տեղ անմեղներու արիւնը ցայտեցաւ մեր հանդերձներուն վրայ: Լեզիէն աւելի դառն եղաւ մեր կերակուրը մեր քիմքերուն, քացախ դարձան մեր սուրբ ըմպելիները: Զարնուածներու հետ զարնուեցանք ամենքս ալ՝ թէ հոգիով եւ թէ մարմինով, եւ մեռեալներու հետ մահը ճաշակեցինք: Արդ, մեր անտարբերութեան հետեւանքով չէ՞, որ այս չարչարանքները պատահեցան մեզի:

Ուրեմն հեռու կեցիր աշխարհէ, որ վաղը պիտի երթաս ազատիս անոր աղէտներէն, թօթափէ եւ նետէ վրայէդ ախտալից աշխարհի կեղեւանքները: Մերկացիր ըմբիշամարտի մը պէս, օծուէ Բրիտանոսի իւղով, որպէսզի ախոյեանին ձեռքերը չկարենան փակելի քեզի:

Արդ, եթէ հեթանոս իմաստասէրներէն ոմանք ոչ միայն ստացուածքներէ հեռացան, այլ նաեւ օրինաւոր կերակուրներէ հրաժարեցան ու պարզ ըմպելիքով բաւականացան եւ առաքինի մահով վախճանեցան, որչափ աւելի մենք պարտինք նմանող ըլլալ Բրիտանոսի սիրելիներու, որոնք հրեշտակներու պէս վարք ունեցան՝ խառնուելով վերին գունդերու:

Եկէք, ով մենակեացներ, մենք ալ թշնամիի պէս մտնենք մեր կալուածներէն ներս, թշնամիին մեր մէջ տնկած ծառերը արմատախիլ ընենք եւ կոտորենք, իբրեւ աւար առնելով՝ մեր ինչքերը յատկացնենք նեղեալներուն, ոչ թէ մեր ազգականները ատած ըլլալնուս համար, այլ՝ աղքատները սիրելնուս համար, որոնք Բրիտանոսի զօրականներն են եւ ճշմարիտ բարեխօսներ: Ապա եթէ հիմակուրնէ այս աշխարհին վրայ ինչքերու կապուիս, ինքզինքդ այնպիսի անդարձ գերութեան մը մատնած կ'ըլլաս, որ այլեւս քեզ ազատելու փրկանք չի գտնուիր: Ուրեմն փութա, աճապարէ, եղբայր, ազատուիլ այդպիսի անողորմ գեհնէն, որպէսզի կարենաս հասնիլ ամրափակ քաղաքը,

ուր այլեւս կասկած կամ վախ չունիս գերի վարուելու:

Ու եթէ հետեւիս Հայրերու գեղեցիկ վարդապետութեանց, զորս ներկայացուցի վերեւ կենցաղը միայնակեացներու, այն ատեն պիտի կրնաս բարձրացնել մտքիդ աչքերը առանց չարչարանքի եւ տեսնել զքեզ բոլոր երկինքներէն ալ վեր: Երանի պիտի տաս դուն քեզի, որ քաջի պէս ազատեցար աշխարհի վշտալից կեանքէն, եւ խառնուեցար միայնակեացներու երամին, սուրբերու եւ արդարներու գունդին, արժանացար առաքեալներու վիճակին, մարգարէներու խումբին, մարտիրոսներուն կաճառին, հրեշտակներու բանակին եւ անդրանիկներու ժողովին, երկինքի մեծ քաղաքը, Աբրահամի հետ բազմողներու եւ երկնային կերակուրներու եւ անկարօտ ըմպելիներու: Ուրեմն այլեւս դուն այն մարգարէն ես, որ չպատուեցար մարմնական աշխարհի վրայ, այլ թեւերդ բացած թռար անմարմին աշխարհը, եւ հանգչեցար անապական ուրախութեան մէջ: Այդ ուրախութիւնը վայելելու արժանի ըլլանք նաեւ մենք՝ վերջին գրութեան աշխատողներս, սուրբ ուխտիս հետ միասին, շնորհօքն Տեառն մերոյ Յիսուսի Բրիտանոսի, որուն փառք յաւիտեանս ամէն» (Միլիշէ, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին. Երուսաղէմ, 1865, էջ 401-418): [Խրատականս յայտնի է նաեւ «Յաղագս միանձանց» խորագրով, տե՛ս Սրբոյ Հօրն մերոյ եղիշէի Վարդպետի մատենագրութիւնք, Վենետիկ, 1859, էջ 159-165]:

Բ. ԹԱԹՈՒԼԻ ԽՐԱՏՆԵՐԸ ԻՐ ԱՇԱԿԵՐՏ ԹՈՒՄԱՍԻ

Մեր մէջ կիրարկուող կրօնաւորական կամ ճգնողական կենցաղի մասին կարեւոր լոյս կը սփռեն նաեւ այն խրատները եւ յորդորները, զորս Թաթուլ ճգնաւորը կուտայ իր աշակերտ եւ յաջորդ Թուճասին: Այս յորդորականը պահուած է ԼԻԱԿԱՏԱՐ վարք սրբոցի մէջ, Թաթուլի, Վարոսի եւ Թուճասի յատկացուած վարքագրութեան 642-644 էջերուն մէջ:

Ինչպէս պիտի տեսնենք յաջորդ էջերուն մէջ դրուած վերոյիշեալներու վարքին մէջ, Թաթուլ եւ Վարոս երկու հարազատ եղբայրներ են ըստ մարմնոյ եւ ըստ հոգւոյ: Վարդանանց պատերազմին յաջորդող խառնաշփոթութեանց ընթացքին, երբ ուրիշներ բերդեր կ'ապաւինին, ասոնք Հայոց աշխարհի բնական ամրոցները, այսինքն՝

լեռները քաշուեցան եւ «Իբրեւ լուսափայլ աստղեր» այնտեղ բնակեցան: Այն աստիճան փայլեցան, որ «Մեծն Անտոնի առաքինութիւնները իրենց վրայ իրականացուցին. շարունակ պայքարելով դեւերու հետ՝ կը յաղթէին անոնց եւ բարի հատուցում կ'ընդունէին Քրիստոսէ»: Յատկապէս Թաթուլի առաքինութեան համբաւը ամբողջ իր բնակած գաւառին մէջ տարածուեցաւ, ուստի բազմաթիւ մարդեր համախմբուեցան իր շուրջը եւ «աշակերտեցան անոր շատեր սիրով»: Շուտով եկեղեցի մը շինեցին եւ «պատշաճաւոր խուցեր» ճգնաւորներուն համար եւ միաբաններու վանք կազմեցին՝ իրենց հայր եւ առաջնորդ կարգելով «Աստուծոյ մարդ Թաթուլը»: Ասոր անունէն վանքն ալ կոչուեցաւ «Թաթուլոյ վանք», ուր այս սուրբ Հօր հոգեբուխ խրատներով եւ աստուածահաճոյ կարգաւորութեամբ դաստիարակուեցան առաքինիներու խումբեր գեղեցիկ կրօնաւորութեան բոլոր բարեպաշտութեան մէջ: Այս աշակերտներուն մէջ աչքի զարկաւ Թումաս՝ «անմեկնելի պաշտօնեայ վարդապետին իւրոյ»: «Հատ բարեսէր, աստուածապաշտ եւ երկիւզած, հեզ, խոնարհ, հանգարտ եւ հնազանդ, ամենքին հլու եւ կամարար ամէն բանի մէջ», միանգամայն հետեւող Թաթուլի դրած ճգնողական կարգաց եւ կրօնից «խաչակրօն խստութեամբ»: Թաթուլ շատ գոհ մնաց Թումասի յառաջդիմութենէն «եւ խորհեցաւ հաստատել զայն վանքին իբրեւ առաջնորդ, իր տեղը, որովհետեւ ինք կը ցանկար միայնութեամբ աւարտել իր կեանքը»:

«Ուստի եղբայրները ժողովի կանչեց եւ յայտնեց անոնց, թէ այսուհետեւ մեր սիրելի եղբայրը Թումասը ճանչցէք ձեզի իբրեւ հասարակաց հայր եւ անոր ձեռքին տակ հնազանդ եղէք ամեն բանի մէջ անվեհեր փոյթով... Ապա առջեւ կանչելով Թումասը սկսաւ սուրբն Թաթուլ աւանդել անոր անվրէպ կանոններ եւ ազգու խրատներ, որոնք անհրաժեշտ են ըստ Աստուծոյ առաջնորդին, թելադրութեամբ Սուրբ Հոգւոյն»: Հետեւեալներն են ահաւաստիկ այդ «ազգու խրատականները» եւ «անվրէպ կանոնները», որոնք արդարեւ Հիմնական օրէնքները կրնան նկատուիլ մեր վանական, կրօնաւորական ու միաբանական կեանքի:

«Որդեակ իմ Թումաս, այսօր Ս. Հոգին իբրեւ առաջնորդ կանչեց քեզ եղբայրներուդ: Արդ՝ երկայնամիտ եւ ողորմած եղիւր երկնաւոր Հօր նման, որպէսզի կարենաս շահիլ եղբայրներ, եւ պսակուիս Քրիս-

տոսէ: Ինչպէս անունով առաջնորդ կարգուած ես, գործովդ ալ առաջնորդ եղիւր: Մտիկ ըրէ Ս. Գողոս Առաքեալին, թէ ինչպէս ան կը խրատէր իր սիրելի աշակերտները. ամենքի հիւանդութեամբը ինքն ալ կը տառապէր:

Երկնաւոր Հօր աշակերտ ես, Անոր նման եղիւր:

Հայր հասարակաց ես, գործին մէջ վերջինը մի ըլլար:

Ամէն բարեկարգութեան ինքզինքդ օրինակ ցոյց տուր եղբայրներու:

Վարդապետութեամբ խրատէ, սիրով մխիթարէ, յոյսով դարմանէ:

Վարդապետի մը վկան իր գործն է, իսկ առաջնորդինը՝ իր հաստատամտութիւնը:

Հաստատ եղիւր, երկայնամիտ եղիւր եղբայրներուդ խօսքով կամ գործով սխալներուն: Ասկայն կամապաշտներուն երբեք մի անսար. ոչ իսկ քչիկ մը, որովհետեւ բոլորովին օտար է կամապաշտը Քրիստոսի մարմինէն, եւ Աստուծոյ գործին կապուած չէ: Որդեակ, ինչ որ քու եղբայրներէդ կը պահանջես, զայն քու վրադ ցոյց տուր: Քիչ խօսէ եւ շատ եղիւր արդիւնքովդ: Իբրեւ քարոզ՝ գործդ ցոյց տուր:

Առաջնորդը թէ՛ ծնողք է եւ թէ՛ բժիշկ, իսկ հիւանդը կարօտ է սիրոյ եւ առաջնորդութեան:

Որդեակ, ան որ կ'իյնայ սխալի մը մէջ, որ դեռ սովորութեան չէ վերածուած, մի պատժեր, այլ հոգեւոր ցաւակցութեամբ բժշկէ զայն:

Կրտսերները հնազանդութեան աշխատութեան մէջ կրթէ:

Մերերը՝ սաղմոսերգութեան, ձեռքով աշխատանքի եւ կրտսերները խրատելու մէջ վարժեցուր:

Հոգեւոր առաջնորդը աստուածային կրակ է՝ թէ՛ լուսաւորող, թէ՛ մաքրող եւ թէ՛ տաքցնող. ապականող ախտը կ'այրէ, դէժուութիւնը (խոնաւութիւնը) կը չորցնէ, կրօնաւորական փորձով կը քննէ, բովին մէջ աղտերէ մաքրուած ոսկիին պէս՝ եղբայրները Աստուծոյ կը նուիրէ սրբութեամբ, իսկ ինք կը թագաւորէ (բարի եւ հաւատարիմ ծառային պէս) տասը քաղաքներու վրայ:

Միս ու գինի կրօնաւորաց ոչ է ուտելի, այլ ճաշակելի է անոնցմէ, որոնք պէտք ունին այդ ուտելիքներուն:

Ով որ կը հիւանդանայ, կրօնաւորական բնական կեանքը թուլցուր եւ սովորական դարմանը ըստ պահանջքի առատացուր: Աւելորդին, այսինքն՝ կրօնաւորներուն անհրաժեշտ չեղածին ականջ մի կախեր:

Պէտք է հետեւիլ ժուժկալութեան՝ որչափ որ հնարաւոր է: Յոյսով աղօթիլ: Հաւատքով աշխատիլ: Գոհութեամբ ճաշակիլ:

Որդեակ, չըլլայ որ անէծքի խօսքեր ելլեն բերանէդ:

Եթէ մինչև իսկ իրարու եղբայր ըլլան կամ հայր ու որդի, մէկ մահիճի մէջ չի քնանան:

Ով որ խէթ (քէն) ունի սրտին մէջ, պէտք չէ աղօթէ, պէտք չէ ուտէ, պէտք չէ ննջէ մինչև հաշտուիլը:

Երդում ընելը օրէնք չէ, ուստի ով որ երդում կ'ընէ՝ սրբութիւններէն հեռու պահուի կարելի եղածին չափ:

Խրատի մէջ բարկութիւն մը խառնել, որպէսզի սխալած եղբայրդ չընկճուի բարկութեան ծանրութեան ներքեւ:

Աստուածասէրը իր անձնական միտքերէն, խորհուրդներէն եւ կամքէն զգուշանայ, ինչպէս կը զգուշանայ թշնամիէն:

Որդեակ, երբ ննջելու համար անկողին կը մտնես, այնպէս համարէ, թէ գերեզման կ'իջնես:

Հալածէ այն խորհուրդները եւ գործերը, որոնք սնտոի (պարագ) բաներու շուրջ կը դառնան:

Ինքզինքդ Աստուծոյ երկիւղին դամէ եւ միտքդ բեր դատաստանի երկիւղը:

Երկիւղածութեամբ ննջէ, երբ կ'արթննաս, Աստուծոյ օրհնութիւն կարդա՛, գոհութիւն տուր Աստուծոյ, որ պահեց քեզ գիշերուան խաւարասէր չարէն:

Փութա՛ աղօթքի վայրը. երեք անգամ ծերադրէ, ի հարկին՝ աւելի, ապա ծունկի դալով, երեսդ գետին խոնարհած՝ քեզի համար օգնութիւն խնդրէ Տէր Աստուծմէ եւ ապա սկսի՛ր կանոնական սաղմոսը ըսել:

Աղաչէ Աստուծոյ, որ բանայ բերանդ եւ խօսէ, ինչ որ Աստուծոյ հաճոյ է:

Մի պղտորեր խորհուրդներդ եւ խօսքերդ մի երկարեր: Մի

թուլցնիր աղօթքի համար բացուած կամ բարձրացած բազուկներդ: Արեւմուտք մի դառնար, որ մեզի վերապահուած սահմանը կամ ուղղութիւնը չէ, աչքերդ աջ ու ձախ մի պտտցնիր աղօթքի ատեն:

Բոլոր զգայարանքներդ պնդակազմ քաջութեամբ պինդ կերպով գրահաւարէ, իսկ բովանդակ եղբայրութիւնդ քաջալերութեամբ դինէ:

Հաւ բան է պատերազմիլը. յաղթողները կը պսակուին, թոյլերը եւ անարիները (վախկոտները) չեն յաղթեր եւ չեն պսակուիր, որովհետեւ երբեք չեն պատերազմիր:

Որդեակ, չափազանցեալ իշխանութեամբ մի վարուէր եղբայրներուդ հետ. ինչ որ դուն չես կրնար կատարել, զայն եղբայրներէդ մի պահանջիր:

Վանքէն դուրս որեւէ գործի համար մարդ զրկելու պարագային առանձինն մի՛ զրկեր, այլ՝ երկու: Մէկը կրնայ ճամբան վտանգի հանդիպիլ, եթէ զլորի (Ֆիզիքապէս ու բարոյապէս), ո՞վ պիտի վերականգնէ զայն. արդարեւ շատ վնասներ կրնան պատահիլ մէկին:

Եթէ եղբայր մը հոգևով հիւանդանայ, եթէ մինչև իսկ շատ բժշկութեան պէտք ունենայ, սրբութենէն (Ս. Հաղորդութենէն) միայն արգիլէ, իսկ միւս բոլոր կարգերը կատարելու ատեն՝ եղբայրներուն հետ ըլլայ:

Երկիւղածը սէրէն աւելի կ'ազգուի քան պատիժէն:

Ինչ որ դուն եղբայրներէն կը պահանջես, նոյնը ծերերուն տուր, որպէսզի չըլլայ թէ երկնաւոր շնորհներէն զրկուին՝ քու կամքդ պաշտելով:

Երբ պատարագ պիտի մատուցանես կամ երեկոյին աղօթքները պիտի ընես, ձեռքերդ դադրեցուր աշխատութենէ:

Անոնք, որոնք գոհութեամբ կ'աշխատին, արժանի են: Որդեակ, երբ եղբայր մը անկարգ ընթացքի մը մէջ իյնայ, անփոյթ վերաբերմունք ցոյց մի տար անոր կորուստին հանդէպ: Համբերէ անոր չար վարքին եւ ատելի գործին դիմաց՝ ինչպէս քու պարզ հոգիդ ցաւակից կ'ըլլայ մարմնոյդ նկատմամբ: Համբերիլը բաւական մի համարեր, այլ ձեռք տուր եւ ջանա ոտքի հանել զայն, եւ երբ կ'աղօթես՝ արցունք թափէ անոր համար: Առանձինն՝ յանդիմանէ, ծերերու առջեւ՝ աղաչէ, եղբայրներու մէջ՝ խրատէ. յիշեցուր անոր արդարներուն փառքը եւ

մեղաւորներուն տանջանքը, անոր առջեւ դիր ահեղ դատաստանը եւ զարհուրեցուր զայն գեհննի տանջանքներով: Թերեւս Հնար ըլլայ, որ դառնայ իր անկարգ ընթացքէն: Քրիստոս ալ այսպէս ըրաւ եւ այսպէս սորվեցուց մեզի. եւ այն առաջնորդը, որ այսքան երկայնամիտ է, Քրիստոսի նման է, իսկ եթէ անփոյթ եւ անհով գտնուի՝ պիտի չազատի գալիք պատուհասէ:

Երկիւղածը մեծարէ, որովհետեւ արժանի է, իսկ ստահակը (անկարգը) սիրով խրատէ, որովհետեւ հիւանդ է:

Առտու եւ իրիկուն խոստովանութիւն պահանջէ:

Մաղրանքը, կատակը եւ ցոփաբանութիւնը (թեթեւօլիկ խօսակցութիւնը) արգիւէ:

Անհատական փափաքները ատէ, եթէ մինչեւ իսկ բարի ըլլան: Մանուկները գլուխդ մի ժողովեր, ապա թէ ոչ՝ դիւրաւ կը յաղթուիս:

Ով որ իր անձը ուրացեր է եւ պատուիրաններու լուծին ներքեւ մտած է, պարտի բառնալ (կրել) Քրիստոսի ինչը:

Առաջնորդի պատուիրաններու մէջ ընտրութիւն պէտք չէ ընել (այս մէկը կը կատարեմ, այն միւսը՝ ոչ ըսելով) այլ՝ ամենքը կատարել երկիւղածութեամբ: Յիշէ, որ Պետրոս օգուտ մը չքաղեց, երբ ոտնալը: ային չուզեց Հնազանդուիլ Յիսուսի ոտք լուալու արարքին:

Ինչ որ լսեցիր ինձմէ եւ տեսար իմ վրաս, ինչ որ սորված ես Ս. Գիրքէն եւ իբրեւ կեանքի կանոն կը գործադրես, այս բոլորին վրայ Հաստատուն կեցիր, ամէն ինչ բարեձեւութեամբ պահէ՝ չափին եւ սահմանին մէջ:

Ով որ պատուիրանը կը պահէ, Աստուծոյ առջեւ Համարձակ կը կենայ:

Աշխարհիկ գորութենէ Հեռի կեցիր:

Մարմնաւոր գիտութիւնը եւ զօրութիւնը Հակառակ է Աստուծոյ կամքին: Մարդուն կամքը եւ յօժարութիւնը կը կատարէ Պատուիրանը, եւ ոչ թէ գիտութիւնը եւ զօրութիւնը: Ով որ կ'ըսէ թէ ինք խրատի պէտք չունի, անոր Համար գաւազանը աւելի լաւ է, քան խրատը: Մեղըր աւելի շատ լաւ սնունդ է, բայց հիւանդին վնասակար է. այնպէս ալ օգտակար է խրատը, բայց այն, որ դէմքը արեւմուտք դարձուցած է (այսինքն՝ չուզեր զանոնք լսել), անոր Համար ոչ մէկ

օգուտ կրնայ ունենալ:

Որդեակ, ըսածներս Համառօտ խօսքով մը իր աւարտին բերեմ. Սէրը եւ երկայնամտութիւնը (Համբերութիւնը) քեզի բնութիւն ըրէ. այն ատեն բոլոր առաքիչութիւնները դիւրաւ կը կատարես:

Առաջնորդը անփոյթ պիտի չըլլայ, երբ աշակերտեալ եղբայր մը Հոգեւոր կամ մարմնաւոր վտանգի մէջ ինկած է, որովհետեւ Հաշիւ պիտի տայ անոնցմէ իւրաքանչիւրին Համար:

Կրօնաւորական կարգին նպատակն է մեռնիլ աշխարհի Համար եւ ապրիլ Քրիստոսի Համար: Այն կրօնաւորը, որ աշխարհիկ գործերուն կապուած է եւ Հոգեւոր գործերուն կարեւորութիւն չի տար կամ ի Հարկէ ստիպեալ կամ մարդոց երեւնալու Համար կրօնաւորութիւն կ'ընէ, իր վարձքը պիտի չառնէ:

Աշխատանքը անհրաժեշտ է կրօնաւորին Համար: Դատարկութիւնը դատապարտելի է: «Ով որ չաշխատիր, պէտք չէ ուտէ» կ'ըսէ Պօղոս Առաքեալ: Բայց մարմնաւոր գործի Համար Հոգեւոր գործերը անտեսելը շատ վտանգաւոր է Հոգեւոր կեանքի աշակերտողներու Համար:

Մարմինը երկրորդական դիժի վրայ կուգայ բաղդատմամբ Հոգիին, ուստի նախ պէտք է Հոգ տանիլ Հոգիի սնունդի, այսինքն՝ աղօթքի ու կեանքի բարեկարգութեան:

Առաջնորդը երբեք կողմնակալութիւն պէտք չէ ընէ, այլ սէրը Հաւասար ըլլայ ամենքին վրայ, իսկ պատիւը՝ որոնց որ վայել է:

Մերացած կամ հիւանդկախ կրօնաւորները, որոնք իրենց երիտասարդութեան ոյժը եւ ժամանակը եկեղեցիի աշխատութեանց մէջ սպառած են, անտես պէտք չէ ըլլան, իբրեւ ներկայիս ոչ պիտանացու տարրեր: Ուստի ձերերը պէտք է պատուել եւ խնամք ունենալ անոնց վրայ:

Եկեղեցիին կամ վանքին նուիրուած բաները առաջնորդը պիտի չիւրացնէ իր անձին Համար, այլ եկեղեցիի կամ վանքի կարիքներուն պիտի գործածէ զանոնք:

Ոչ ոք յանդգնի կաշառքով յափշտակել վանքի մը առաջնորդութիւնը կամ որեւէ ուրիշ պաշտօն:

Երկու իրաւացի պատճառներ կան փոխելու վանքի մը առաջնորդը. կամ Աստուծոյ օրէնքին Հակառակ անարժան գործ մը ըրած

ըլլալը եւ կամ՝ եկեղեցիի ոչ թէ շինութեան, այլ աւերման պատճառ եղած ըլլալը:

Ինչ որ կանոնադրուած է Սուրբ Հայրերու խօսքերուն մէջ առաջնորդներու համար՝ իբրեւ խրատ եւ իբրեւ ուղղութիւն խօսքի, գործքի եւ ամէն տեսակ բարեկարգութեան համար, այդ բոլորը՝ իբրեւ կենդանի օրինակ պիտի մարմնանան առաջնորդի անձին մէջ:

Գ ՆԵՐՍԷՍ ԾՆՈՐՀԱԼԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՐԱՏՆԵՐԸ ԿՐՕՆԱԻՈՐՆԵՐՈՒՆ ԵՒ ԱՆՈՆՑ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Ներսէս Ծնորհալի Հայրապետի ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹԸ, ինչպէս ծանօթ է, նախաբան է եւ Հայց. եկեղեցիի դաւանութիւնը ներկայացնելէ յետոյ, խրատներ կը պարունակէ իր ժամանակի մեր ժողովուրդի զանազան զանգուածներուն ու դասակարգերուն: Ասոնց մէջ առաջին գծին վրայ կուգան «ՎԱՆՔԵՐՈՒ ՄԷՋ ԱՊՐՈՂ ԿՐՕՆԱԻՈՐՆԵՐԸ»: «Ընդհանրական Թուղթի» յայ գլուխն ալ, նախապէս յիշուած երկու աղբիւրներու պէս, կարեւոր տեղեկանք ու խրատական կը պարունակէ ՀԱՅ կրօնաւորութեան վերաբերեալ, ուստի իբրեւ երրորդ աղբիւր պիտի գործածենք վերոյիշեալ գրութիւնը, որ լայն լոյս կը սփռէ մեր կրօնաւորութեան մասին: Միայն թէ նկատի ունենալով այս աղբիւրին երկարութիւնը եւ գրուելու ընդհանրական ձեւը՝ մենք ընտրովի եւ ամփոփելով պիտի կատարենք մեր մէջբերումները կամ բացատրականները: Ուրեմն, Ծնորհալի Հայրապետը, իր խօսքն ուղղելով կրօնաւորներուն, կ'ըսէ.

Կրօնաւորութեան նպատակն է գերաշխարհիկ վարք ունենալ, իսկ կրօնաւորը պարտի բնակիլ վանքերու եւ մենաստաններու մէջ: Կրօնաւորները կը նկատուին սիւները աշխարհին եւ պարտապ թշնամիին դէմ, իրենց աղօթքով եւ բարի վարքով մարմնաւոր հրեշտակներ եւ լուսաւոր աստղեր են երկրի վրայ:

Կրօնաւորներ նախ պէտք է սերտած ըլլան Աստուածաշունչը:

Մշտապառ առաքինութեամբ օժտեն իրենց անձերը:

Մշտապառ առաքինութեամբ միայն կարելի է անշիջանելի պահել Աստուծոյ լոյսը:

Ծանկութեան կրակին տեղ չտալ սիրտերու մէջ:

Կրօնաւորութեան բոժը առնելէ յետոյ պէտք է վերադառնալ աշխարհական կեանքի, այսինքն՝ հշտանքի եւ նիւթական բարիքներու ցանկութեան: Ան, որ կը դառնայ աշխարհասիրութեան, այդպիսին, իբրեւ կրօնաւոր, իր համը կորսնցուցած աղի կը նմանի:

Կրօնաւորը անպատշաճ լեզուով կամ վատթար գործով իր վրայ պէտք է հրաւիրէ օտարներու անարգանքը եւ քրիստոնեաներու արհամարհանքը: Ոչ ոքին գայթակղութեան պատճառ դառնայ: Կրօնաւորը միայնակեաց գառնալու համար թէեւ արտօնուած է վանքերէ հեռու ապրիլ, բայց ոչ իր անձնական աշխատութեան արդիւնքը իրեն միայն վերապահելու նպատակով: Առանձին ապրելէ հոգիներու մեծ վնաս կուգայ, իսկ միաբանութեամբ ապրելէն՝ մեծ օգտակարութիւն:

Ներելի է կրօնաւորներուն աշխարհականներու հետ բնակիլը գիւղերու եւ քաղաքներու մէջ: Ասոնք աշխարհասէր եւ մեղկ կրօնաւորներ են առհասարակ, որոնք գարշելի խօսքերու, վատթար գործերու, որովայնամոլութեան, արքեցութեան եւ ամէն տեսակ անկարգութեանց մէջ յաճախ կը գերազանցեն աշխարհականները: Այդպիսիներ, ըստ կանոնական օրէնքի, ետ իրենց վանքերը պէտք է վերադառնան եւ իրենց կեանքին մինչեւ վերջը ապաշխարութեամբ եւ պարկեշտութեամբ անցնեն: Անոնք, որ չեն հեռանար աշխարհիկ կեանքէն, իրենք կը մնան պատասխանատու իրենց յաւիտենական կորուստին:

Իսկ եթէ բանաւոր պատճառներով կրօնաւոր մը բնակի աշխարհականներու մէջ, պարտի բարի օրինակ հանդիսանալ աստուածահաճոյ եւ ուղիղ վարքով:

Երբ կրօնաւոր մը աշխարհիկ կենցաղին մէջ կը վախճանի՝ ոչ հազորդութեան արժանի ընել զայն եւ ոչ ալ օրինաւոր թաղման:

Իսկ եթէ այդպիսիներէն մէկը մահամերձ վիճակի մէջ անկեղծօրէն զղջայ ու եթէ հաստատուի, որ մահուան օրհասը եթէ եկած չըլլար՝ մտադրած էր վանք վերադառնալ, եթէ արցունքով Ս. Հաղորդութիւն խնդրէ, տալ իրեն վերջին ճաշակը եւ կատարել օրինաւոր թաղում, բայց ոչ կրօնաւորի, այլ՝ աշխարհականի: Իսկ եթէ կրօնաւոր մը գործով կամ արտօնեալ ձեւով եկած էր աշխարհ, երբ մահը վրայ հասաւ, կամ ուրիշներ ծերութեան եւ հիւանդութեան պատճառով աշխարհականներու մէջ կը բնակէին անբամբասելի կեանքով, երբ վախճանին, պատուով թաղուին իբրեւ Աստուծոյ ծառաներ:

Քրիստոսի առաջին հրամանը եւ կամքը այն է, որ կրօնաւորը ստացուածքի տէր չլլայ, որպէսզի նիւթական բաներու մասին Հոգւնելով՝ աստուածային առաքինութիւններու աննիւթական Հոգերէն չխափանուի: Ըստ այսմ՝ կրօնաւորի մը չի վայելիր այգեգործ լլլալը: Լակառակ ասոր սակայն, նկատի ունենալով մարդկային տկարութիւնը, կ'աւելցնէ Ծնորհալի Հայրապետը:

«Մենք տնկագործութենէ հրաժարելու, ամէն տեսակ ստացուածք չունենալու օրէնք մը չենք դնել կրօնաւորներու համար», թէեւ այսպէս ընչազուրկ լլլալ կը վայելէր Քրիստոսի ճշմարիտ աշակերտներուն, բայց որպէսզի բոլորովին չհեռանան կրօնաւորական կարգէ, Հետեւեալ օրէնքները կը դնենք:

- 1) Ձեր ամէն ունեցածէն ազաւթեան ախար Հեռացուցէք:
- 2) Ձեր քաղած պտուղներէն աղքատներու եւ կարօտեալներու բաժին Հանեցէք:
- 3) Երբ կուտաք՝ չլլայ, որ չուզելով տաք, այլ՝ զուարթառատ սիրտով:
- 4) Եթէ պէտք լլլայ ծախել ձեռք ձգուած արդիւնքը, գոյացած գումարէն բաժին Հանել տառապողներու, գերեալներու եւ կարօտեալներու:

Նոյնը ընել նաեւ կտակներու պարագային:

Աշխարհին կապուած կրօնաւորը նման է երկակենցաղ կենդանիին:

Կրօնաւորական կատարելութիւնը կը կայանայ ոչ միայն աւելորդ կերակուրներէ, ըմպելիներէ, զգեստներէ եւ ստացուածքէ հրաժարելուն մէջ, այլ նաեւ մինչեւ իսկ հարկաւորներէն:

Այն կրօնաւորը, որ ինքզինքը որկրամոլութեան եւ արբեցողութեան տուած է, թէ իսկ շնութեան ախտին մէջ ինկած չլլայ, բայց որկրամոլութեան ցանկութիւնը ի վերջոյ զայն պիտի առաջնորդէ նաեւ շնութեամբ մեղանչելու:

Ինչ որ կը պակսեցնէ կրօնաւորը իրմէ ուրիշներուն տալով, կրկին բարիքի պատճառ կ'լլայ իր Հոգիին. նախ կ'ազատէ ինքզինքը ազաւթեանէն, ապա կարօտեալներուն ողորմութիւն ըրած կ'լլայ:

Չլլայ որ կրօնաւոր մը գերի դառնայ արբեցութեան: Եթէ մինչեւ իսկ ան մասամբ անբամբասելի լլլայ, սակայն լուր արբեցութեամբ դուրս պիտի ելլէ Աստուծոյ արքայութենէն:

Կրօնաւոր մը, որ կը յամառի եւ կը շարունակէ իր թոյլ եւ մեղկ կեանքը, պէտք է կտրել ու նետել զայն եկեղեցիի մարմինէն՝ իբրեւ անբժշկելի անդամ, որպէսզի չլլայ, թէ պզտիկ խմոր մը արէ ամբողջ զանգուածը՝ չարերուն չար օրինակ լլլալով:

Իսկ եթէ եղբայրներէն ոեւէ մէկը պաշտպանէ այդպիսի անուղղոյ մը, ազգականութեան կամ բարեկամութեան պատճառներով, պատասխանատու պիտի լլլայ Քրիստոսի առջեւ: Քանի որ Տէրն ալ կը հրամայէ, որ գայթակղութեան պատճառ եղող մեր անդամը, ձեռքը կամ աչքը կամ ոտքը, կտրել ու նետել:

Եթէ վտարեալ անդամը Աստուծոյ շնորհօք զղջայ եւ ուղղութեան դայ եւ առողջանայ ապաշխարութեամբ, վերստին ընդունիլ զայն առողջ անդամներու միաբանութեան մէջ:

Վանքէ վանք փոխադրուելու սովորութեան վերջ տալ, զի անհաստատ բնաւորութեան փաստ է սա:

Կը տեսնուի, որ մեր ազգին մէջ շատ մը կրօնաւորներ, գրեթէ ամենքը, քիչ բացառութեամբ, անկիրթ, անխրատ եւ մեծերուն անհնազանդ կը մնան: Օրինակ, երբ կրօնաւորներու վրայ անվայել եւ անպատշաճ գործ մը կամ խօսք մը նշմարէ առաջնորդը կամ վարդապետը, կամ ծերերէն մէկը եւ սաստէ զայն, դժբախտաբար յանդիմանուողը յաճախ կը Հեռանայ վանքէն: Առաջնորդն ալ, չուզելով եղբայրներու Հեռացումը վանքէն, ներող կ'լլայ ամէն ստահակ եղբօր, որով անոնք ալ անբժշկելի կը մնան մինչեւ վերջը:

Բարսեղ Հայրապետ կ'ըսէ. «Առաջնորդին անհնազանդ կրօնաւորին ամէն տեսակ ժուժկալութիւնը եւ առաքինութիւնները անօգուտ են եւ ոչինչ կ'արժեն»:

Կրօնաւորը տրտունջ պէտք չէ յայտնէ իր առաջնորդին դէմ որեւէ պատճառով:

Կրօնաւորը պարտի ձեռքը մաքուր պահել ամէն տեսակ գողութենէ: Ոչ ոք թող կարծէ, որ մեծագոյն բաներու յափշտակու-

Թիւնը միայն գողութիւն է եւ փոքրիկներուն՝ ոչ: Գատի կ'են-
թարկուի թէ՛ շատ եւ թէ՛ քիչ կամ պզտիկ բաներ գողցողը:

Ամէն, ով որ ձեռք կ'երկարէ առնելու համար որեւէ բան, որ
իրեն չի պատկանիր, եւ առնելու ատեն աչքերը այս կամ այն
կողմ կը դարձնէ, որ տեսնող չըլլայ, գող մըն է, այնպիսին թող
զգաստանայ Անանիայի եւ Սափիրայի օրնակէն:

Կրօնաւորը հեռու պիտի մնայ, իբրեւ վարակիչ հիւանդու-
թիւններէ, ստախօսութիւններէ, զրպարտողութենէ, չարախօսու-
թենէ, ուրիշները դատապարտելէ, բամբասանքէ, ծուլութենէ, ա-
նէծք կարդալէ, կոռւազանութենէ եւ վիճաբանութենէ, դատարկա-
բանութենէ, խեղկատակութենէ, ծաղրանքէ, քրքջանքէ եւ ասոնց
նմաններէ:

Կրօնաւորին խօսքերը անհամ եւ առանց ազի չըլլան, այ-
սինքն՝ շահ եւ օգուտ բերեն լսողներուն, քան գայթակղութեան
պատճառ դառնան:

Կրօնաւորի խօսքերը քիչ ըլլան, բայց միշտ հեզութեամբ եւ
հանդարտութեամբ:

Կրօնաւորին խորհուրդները, խօսքերը, գործերը եւ շարժումնե-
րը պարկեշտ ու վայելուչ ըլլան: Չըլլայ, որ իր պատճառով
«Աստուծոյ անունը հայհոյութի հեթանոսներու մէջ», ընդհակա-
ռակը «Թող այնպէս լուսաւորէ ձեր լոյսը մարդոց առջեւ, որպէս-
զի տեսնեն ձեր բարի գործերը եւ փառաւորեն ձեր երկնաւոր Հայ-
րը»:

Առաջնորդները հաւատարապէս գիտութեան եւ առաքինու-
թեան տէր պիտի ըլլան: Առաքինութիւնը առանց գիտութեան թե-
րի է եւ փոխադարձաբար: Իսկ անոնք, որ տգէտ են աստուածա-
յին գիտութեան եւ թոյլ են առաքինութեան մէջ, եւ դեռ կը
յանդգնին Առաջնորդ ըլլալ, սատանայէն դրդուելով՝ այդ պաշտօ-
նը կը ստանձնեն՝ կորուստի մատնելով թէ՛ իրենց անձերը եւ թէ՛ ի-
րենցմէ առաջնորդողները: Անոնք պարտին Աստուծոյ օրէնքով
վարել իրենց ստանձնած առաջնորդութիւնը. Աստուծով սկսին եւ
Աստուծով աւարտեն:

ՃԳՆԱԻՈՐՆԵՐ

1. ՈՍԿԵԱՆՔ † 100 ?

Ասոնք թէեւ յիշուած են մեր պատմութեան եւ Տօնացոյցին մէջ
իբրեւ «Քահանայք», սակայն իրականութեան մէջ ապրած են իբրեւ
ճգնաւորներ, հետեւաբար մենք ալ կը բանանք հայ ճգնաւորներու
յատկացուած այս գլուխը Ոսկեան Անկեանքով, իբրեւ մեր եկեղեցիին հնա-
գոյն մարտիրոսներէն ոմանք եւ իբրեւ մեր առաջին ճգնաւորները:

Ըստ ազգային ականդութեան, ասոնք հինգ Հոովմայեցի պատգա-
մաւորներ են, որոնք զրկուած էին Հոովմի կայսեր կողմէ Հայոց
Սանատրուկ թագաւորին, առաջին դարու կէսերուն: Հայաստանի մէջ
ասոնք հանդիպեցան Թադէոս Առաքեալին. մտիկ ըրին անոր
քարոզութիւնը եւ հաւատքի եկան ու մկրտուեցան անկէ: Ասոնց
գլխաւորը Քրիւսի կը կոչուէր, որ ոսկի կը նշանակէ, եւ հաւանաբար
ասոնք ալ պատմութեան մէջ հայացան ու կոչուեցան Ոսկեանք:
Թադէոս Առաքեալ ասոնց գլխաւորը՝ Ոսկին, քահանայ ձեռնադրեց:
Ասոնք հրաժարեցան իրենց աշխարհիկ առաքելութենէն, իրենց գէն-
քերը եւ ձիերը վաճառեցին եւ իրենց մօտ գտնուած միւս հարստու-
թեանց հետ աղքատներու բաժնեցին եւ հետեւեցան Թադէոսի՝ անոր
քարոզութեան ընթացքին, ինչ որ առիթ եղաւ, որ աւելի հարստանան
հոգեւոր գիտութեան մէջ եւ աւելի հաստատուին իրենց նոր կրօնքին
մէջ:

Թադէոս Առաքեալի նահատակութենէն յետոյ ասոնք քաշուեցան
Մաղկաւէտ կոչուած լեռները, Եփրատի հարաւ-արեւելեան մեծ ճիւղը
կազմող Արածանի գետի ակունքներուն մօտ, այսօրուան Տիատինէն
ոչ շատ հեռի, Աղըը նահանգին մէջ:

«Այստեղ իրենք զիրենք խիստ ճգնողութեան ընծայեցին եւ
մշտամրմունջ աղօթքով փայլեցան հրեշտակային վարքով,
զտուելով ու փորձուելով իբրեւ ընտիր ոսկի աստուածային
մաքրող կրակով, Աստուծոյ Ս. Հոգիին տաճար եղան» (ԼԻԱ-
ԿԱՏԱՐ, էջ 136ա):

Վկայաբանութիւնը կ'աւելցնէ, որ այստեղ աւելի քան քառասուն
տարիներ ճգնելէ յետոյ, «Աստուածային ազգումով» իջան լեռնէ եւ

գացին Հայոց արքունիքը՝ Աւետարանը քարոզելու համար օրուան Հայոց Արտաշէս թագաւորին եւ Սաթենիկ թագուհիին: Ասոնք թէեւ անտարբեր մնացին, բայց միւս կողմէ արգելք չեղան անոնց քարոզութեան: Ի վերջոյ Սաթենիկ թագուհիին պալատականները, որոնք իր հետ եկած էին Ալանաց աշխարհէն, հաւատացին ու հետեւեցան Ոսկեաններուն դէպի լեռները եւ այստեղ մկրտուեցան Եփրատի ափունքներուն մէջ: Ասոնք թիւով 17 հոգիներ էին, եւ իրենց գլխաւորին անունն ալ Սուրիաս կոչուելուն խումբն ալ ծանօթ է Սուրիասանք անունով:

Պալատի մէջ երբ իմացան ասոնց փախուստը, արքայորդիները՝ Վնոյն եւ Վրոյն, փնտրեցին եւ ի վերջոյ գտան զանոնք Ծաղկաւէտ լեռներու մէջ: Իբրեւ ազգականներ, խնդրեցին, որ պալատ վերադառնան: Սուքիասանք յանձնառու չեղան: Արքայորդիները, տեսնելով անոնց անդրդուելի հաւատքը, այն ատեն դիմեցին Ոսկեաններուն, որպէսզի թելադրեն անոնց, որ պալատ վերադառնան, անշուշտ հրաժարելով իրենց նոր կրօնքէն: Ասոնք ընդհակառակը աւելի հաստատեցին զանոնք իրենց հաւատքին մէջ: Եւ որովհետեւ արքայորդիներ չհամարձակեցան վնաս հասցնել Սուքիասանց, իբրեւ իրենց ազգականներուն եւ մեծերուն, իրենց ամբողջ զայրոյթը թափեցին Ոսկեաններու վրայ: Սպաննեցին զանոնք մի առ մի տեղւոյն վրայ, առաջի դարու վերջերը կամ երկրորդին սկիզբը: Փախստեամբ կենդանի մնացած երկու մանուկներ գտան եւ պատուով թողեցին զանոնք:

Մեր Յայսմատօրքներուն մէջ յիշուած են Սեպտ. 19ին: Իսկ ներկայիս կը տօնուին առանձինն Առաջաւորաց պահաճին յաջորդող Հինգշաբթի օրը: Իսկ եթէ այդ օրը գրաւուի Տեսունընդառաջով, որ կը պատահի երբ Գիր Տարւոյն Ո ըլլայ, այն ատեն կը տօնուին նախընթաց Երեքշաբթի օրը Սուքիասանց հետ:

Ունին յարգանս իրենց գրուած ՄԱՆԿՈՒՆՔ շարական մը, ու խտացեալ ձեւով կը ներկայացուի իրենց պատմութիւնը: Ծառաջ կը բերենք զայն նոյնութեամբ:

Որք արժանաւորեցայք կոչիլ

յաշակերտութիւն առաքելոյն Թադէոսի.

եւ աստուածային հրով մաքրութեան

սկի փորձեալ գրտայք ի բնակարանս հրեշտակաց.

ով երանելի սուրբ Ոսկեանք,

բարեխօսեցէք առ Տէր մաքրել զմեզ ի մեղաց մերոց:

Որք անհրաժեշտ դաւանութեամբ

քարոզեցիք զՔրիստոս ի դրունըս թագուհւոյն,

մկրտելով զքաջ նահատակն ի յակունս Եփրատայ

ի ծաղկազարդ վայելչութիւնս.

Ով երանելի սուրբ Ոսկեանք,

բարեխօսեցէք առ Տէր մաքրել զմեզ ի մեղաց մերոց:

Որք անպատմելի մնացիք ի հրապուրանաց որդւոյ թագաւորին,

Չարչարեալք վասըն Քրիստոսի,

արագապէս խողխողեցայք պատարագ ընդունելի.

Ով երանելի սուրբ Ոսկեանք,

բարեխօսեցէք առ Տէր մաքրել զմեզ ի մեղաց մերոց:

Թարգմանութիւն.

Դուք արժանի եղաք Թադէոս Առաքեալի

աշակերտութեան կանչուելու.

եւ աստուածային մաքուր կրակով փորձուեցաք,

ու ձեր սկի ըլլալը Հաստատուեցաւ

հրեշտակներու բնակարաններու մէջ:

Ով երանելի սուրբ Ոսկեանք,

բարեխօսեցէք Տիրոջ, մաքրել զմեզ մեր մեղքերէն:

Դուք անհրաժեշտ դաւանութեամբ

քարոզեցիք Քրիստոսը թագուհիին պալատին մէջ,

Մկրտեցիք քաջ նահատակները Եփրատի ափունքներուն

ծաղկազարդ վայելուչ վայրերու մէջ:

Ով երանելի սուրբ Ոսկեանք,

բարեխօսեցէք Տիրոջ, մաքրել զմեզ մեր մեղքերէն:

Դուք անպարտելի մնացիք թագաւորի որդիի հրապուրանքներէն,

չարչարուեցաք Քրիստոսի Համար.

արագապէս խողխողուեցաք իբրեւ ընդունելի պատարագ:

Երանելի սուրբ Ոսկեանք,

բարեխօս եղէք Տիրոջ՝ մաքրել զմեզ մեր մեղքերէն:

[Սկզբնաղբիւր. Վկայաբանութիւն Արքայն Ոսկեայ եւ ընկերաց նորա (տե՛ս Ի. Արուածէ, նշւ աշխ., էջ 9-21): Նաեւ՝ Ղևոնդ Ալիշան, Արշալոյս քրիստոնէութեան Հայոց, Վեներտիկ, 1920, էջ 61-73]:

2. ՍՈՒՔԻԱՍԱՆՔ } †150 ?

Ինչպէս տեսանք նախորդ գլխուն մէջ, ասոնք Հայոց Արտաշէս Թագաւորին պալատականներէն 17 հոգիներ էին, որոնք Սաթենիկ Թագուհիին հետ միասին եկած էին Կովկասեան Ալանաց երկրէն, երբ Սաթենիկ Հարսնացաւ Հայոց Թագաւորին: ԼԻԱԿԱՏԱՐը զանոնք կը ներկայացնէ իբրեւ «արք փառաւորք եւ երեւելիք, Թագաւորագունք եւ գլխաւորք ի պալատական եւ ի գինուորական կարգէ ի դուռն արքային Ալանաց, ազգականք Սաթենկայ, դստեր Թագաւորին Ալանաց» (էջ 130):

Ինչպէս տեսանք, Ոսկեան ճգնաւորները «Աստուծոյ ազգեցութեամբ» Հայոց արքունիքը այցելեցին եւ Աւետարանը քարոզեցին: Թէեւ Թագաւորը եւ Թագուհին անտարբեր եղան, բայց իրենց խօսքերը պարարտ հող գտան Ալան պալատականներու մօտ, որոնք հետաքրքրութեամբ մտիկ ըրին անոնց խօսքերուն եւ սիրով ու սրտով Հաւատացին Աւետարանին ու մկրտուեցան Ոսկեաններէն: Զգեցին պալատը եւ հետեւեցան իրենց քարոզիչներուն, եւ անոնց հետ միասին իրենք ալ նուիրեցան ճգնաւորական կեանքի: Ասոնց գլխաւորն ալ նախապէս կը կոչուէր Բահադրաս կամ Բարաքադա, մկրտութենէն յետոյ կոչուեցաւ Սուրխաս, որ յունարէն Հիւսիքոս անուան աղաւաղեալ ձեւը կը նկատուի: Մնացեալ 16 ընկերներուն ալ անունները պահած է պատմութիւնը, որոնք կ'երեւին ԼԻԱԿԱՏԱՐի (անդ) եւ Ազգապատմի մէջ (էջ 52): Ասոնք մը մնացին Ոսկեանց հետ՝ աւելի լրիւ սորվելով անոնցմէ Աւետարանի ճշմարտութիւնը եւ ճգնողական կեանքի կանոնները:

Իսկ Թագաւորին որդիներէն երկու կրտսերները, որոնք աւելի

սերտօրէն կապուած էին իրենց «քեռի»ներուն, երբ նկատեցին, որ անոնք այլեւս չեն երեւիր պալատի մէջ եւ, իմանալով պատճառը, խնդրեցին իրենց երէց եղբայր Արտաւազդէն, որ միասին երթան զտանելու եւ տեսնելու իրենց մօր կողմէ ազգականները: Խուճաբ մը արքունի զօրքերով ճամբայ ելան, ի վերջոյ գտան զանոնք լեռներու մէջ: Խնդրեցին անոնցմէ, որ միասին պալատ վերադառնան: Երբ անոնք յանձն չառին վերադառնալ, կանչեցին անոնց դարձին պատճառ եղող Ոսկեանները, որպէսզի ինչպէս Համոզեցին զանոնք պալատէն հեռանալու, այնպէս ալ Համոզեն պալատ վերադառնալու: Ոսկեանք ըսին, որ թէեւ իրենք դարձի բերած էին զանոնք, բայց չեն ստիպած պալատէն հեռանալու, ոչ ալ հիմայ կը ստիպեն պալատ վերադառնալու. թող իրենք որոշեն իրենց օգտակար եղածը: Ասոր վրայ արքայորդիներ Հրամայեցին իրենց հետեւող զօրքերուն սպաննել բոլոր Ոսկեանները, բայց չՀամարձակեցան չարիք Հասցնել Սուքիասեանց, որոնք իրենց մեծերը եւ մօրը ազգակիցներն էին, եւ ապարդիւն վերադարձան պալատ:

Սուքիասանք, պատուով Թաղելէ յետոյ իրենց առաջնորդները, խորհեցան, որ եթէ նոյն տեղը մնան, կրկին նեղութեանց եւ ճնշումներու պիտի ենթարկուին, ուստի հեռացան այնտեղէն ու եկան Բագրեւանդ գաւառի Զրաբաշխ կոչուած լեռները, որոնք աւելի ամայի էին եւ որոնք ապա կոչուեցան իրենց անունով Սուրխասան կամ Սուկաւէտ լեռներ: 44 տարի ապրեցան այստեղ. վայրի խոտերով կը կերակրուէին, մինչեւ որ անոնց Հագուստները մաշեցան, փոսեցան ու Թափուեցան, եւ անոնց մորթը քարի վրայ փակած մամուռներու պէս եղան օդի խստութենէն: Մազ բուսաւ ամբողջ իրենց մարմինին վրայ, որ խառնուելով անոնց մօրուքին եւ գլխուն մազերուն հետ՝ ծածկեց անոնց ամբողջ մարմինը: Այնպէս որ՝ վայրի քօշերու երեւոյթը առին եւ այս իսկ պատճառով «Քօշ» կոչուեցան:

Ու այնպէս մնացին՝ հեռու ամէն տեսակ հիւանդութենէ եւ այլ պատահարներէն Աստուծոյ նախախնամութեամբ: Թէեւ մարմնաւոր էին, բայց իրենց վարքը անմարմիններուն նմանեցաւ՝ մշտամրմունջ աղօթքով եւ հոգեւոր ճգնութիւններով (ԼԻԱԿԱՏԱՐ, անդ):

Արտաշէսի, Սաթենիկի եւ իրենց որդիներուն մահէն տարիներ յետոյ, Ալանաց աշխարհէն նոր պատգամաւորութիւն մը եկաւ

Հայաստան աշխարհ: Աստուծոյ իրենց առաքելութիւնը ի դուրս Հանելէ յետոյ իմացան նաեւ իրենց Հայրենակիցներու մասին, որոնք լեռնե-րու վրայ արտասովոր կեանք մը կ'ապրէին: Հետաքրքրութենէ մղեալ ուզեցին տեսնել զանոնք: Երբ նշմարեցին երանելիները, զարմացան եւ Հետեւեալ խօսակցութիւնը անցաւ իրենց մէջ: Ալանաց պատգամաւորութեան գլխաւորը, որ զօրավար մըն էր, Հարցուց.

-Ո՞վ էք դուք եւ ի՞նչ կ'ընէք այստեղ: Ձեր երեւոյթով թեւ մարդու կը նմանիք, բայց ոչխարներու պէս խոտաճարակ կը տեսնեմ ձեզ: Սուքիաս պատասխանեց.

- Բնութեամբ մարդ ենք, ազգով՝ Ալանաց արքունի պալատէն ենք: Փախչելով աշխարհի ամբարշտութենէն եւ անաստուածութենէն, այս լեռներու վրայ առանձինն եւ խաղաղ կ'ապրինք Աստուծոյ զօրութեամբ:

Զօրավարը դիտել տուաւ.

- Այստեղը ամայի եւ ձիւնապատ է, ի՞նչպէս կ'ապրիք հոս:

Պատասխանեց Սուքիաս.

- Լսէ, որդի, ով որ կը Հաւատայ երկինքի եւ երկրի Արարիչ Աստուծոյ՝ ամէն բան անոր Համաձայն փոփոխութեան կ'ենթարկուի: Արդ, մենք Աստուծմէ ողորմութիւն գտանք, զԱյն մեր ամբողջ սիրտով եւ մեր յոյսը Տէր Աստուծոյ վրայ դրած ենք:

Զօրավարը առանց մեծ բան մը Հասկնալու վրայ բերաւ.

- Եկէք ձեզեցէք այս խնդրութիւն, վերադարձէք Հայրենիք՝ ձեր նախկին պատուոյ դիրքին, փառքով եւ Հանգիստով անցուցէք ձեր ծերութեան օրերը:

Որուն Սուքիաս պատասխանեց.

- Մենք Տիրոջ մշակներն ենք. մեր ժամանակ ալ մօտեցած է վարձք առնելու ի՞նչպէս կրնանք վերջին ժամուն Հրաժարիլ մեր վարձքէն եւ մեր Աստուծմէն:

- Այդ ձեր Աստուածը մեր լսած Խաչեալը չէ՞... Իսկ դուք, պալատական ազնուականներդ, ձեր ազատութիւնը ձգած մշակութեան գործի՞ մտած էք:

Երանելի Սուքիաս պատասխանեց.

- Այո, մեր Տէրը եւ Աստուածը Քրիստոս է: Եթէ ճանչնայիք մեր Տէրը, դուք ալ մշակի այս գործին մէջ պիտի մտնէիք, որպէսզի տիրանայիք յաւիտենական անմահ կեանքին, զոր իբրեւ վարձք պիտի տայ Ան իր բոլոր Հաւատարիմ Հպատակներուն:

Ի վերջոյ՝ ի զուր անցան Ալան զօրավարին բոլոր Համոզիչ կարծած խօսքերը եւ խոստումները, որոնց բոլորովին դէմ ըսին երանելի Սուքիասանք, թէ իրենց պարգեւատուն Աստուած է, որ ազատած է զիրենք սատանայական գործերէն եւ արժանի ըրած է անմահական երջանկութեան:

Ի վերջոյ զօրավարին Համբերութիւնը Հատաւ: Նախ Հարչարել տուաւ զանոնք, դարձի բերելու յոյսով, բայց, տեսնելով անոնց Համբերութիւնը եւ անդդուելիութիւնը, Հրամայեց բոլորն ալ գլխատել, բացի երկուքէն, որոնք խուճրին չէին կրցած ընկերանալ վախէն եւ կամ Հիւանդութեան պատճառով:

Ու կ'աւելցնէ ԼԻԱԿԱՏԱՐԻ մէջ ներկայացուած ընդարձակ վարքագրութիւնը (11 խոշոր սիւնակ), թէ աւելի քան 150 տարիներ յետոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ, իմացած ըլլալով անոնց նահատակութեան մասին, վկայարան վանք մը շինեց անոնց նահատակութեան վայրին վրայ, ուր կ'ըսուի, թէ «Հրաշագործ աղբիւր մը բղխեցաւ ի բժշկութիւն ամէն տեսակ Հիւանդութեանց, մանաւանդ բորոտութեան» (անդ. վարքագրութեան վերջաւորութեան):

Մեր Յայնամարտըները ասոնց յիշատակութիւնը կը դնեն Օգոստ. 27ին: Իսկ ներկայիս կը տօնենք զանոնք Առաջաւորաց պահքին յաջորդող Երեքաբթի օրը, բացի այն պարագայէն, երբ Տեառն-ընդառաջը այն օրուան կ'իյնայ. այն ատեն միացեալ կը տօնուի Ատոյմեանց Հետ: Այո կը պատահի երբ տարեգիրը 9 է:

Աստուք ալ ունին յատուկ ՄԱՆԿՈՒՆՔ շարական մը, որ ստեղծ է եւ գրուած հեծտորական ոճով՝ բաղկացեալ Հինգ տուներէ, որոնցմէ կրորդն է Հետեւեալը.

Որք բարձին գիտաչս իւրեանց՝

Խաչեցելոյն խաչակցեցան.

Դիմելով յօժարութեամբ առ սատակիչսն՝

Որպէս զգառիսն ի մէջ գայլոց:

Թարգմանութիւն

Ասոնք վերցուցին իրենց խաչերը,

Խաչեալին հետ ի խաչ ելան.

Դիմեցին յօժարութեամբ սպաննիչներուն,

Իբրև գառներ՝ գայլերու մէջ:

[Սկզբնադրիւր. Տե՛ս նախորդը]:

3-4. ԱՆՏՈՆ ԵՒ ԿՐԾՆԻԴԷՍ †355

Հետաքրքրական է անդրադառնալ, որ Հայ ճգնաւորութեան առաջին մեծ դէմքը համանուն եւ ժամանակակից է Քրիստոնէութեան ճգնաւորութեան հիմնադիր Հայր Անտոնին: Որքան ալ մենք Հայ ճգնաւորներու յատկացեալ այս գլուխը սկսանք Ոսկեաններով ու Սուքիասաններով, ասոնք սակայն պատահական երեւոյթներ են, եւ որքան ալ մէկը միւսին յաջորդած ըլլան ճգնողական կեանքի մէջ՝ յայտնի չէ, թէ իրենց կենցաղը շարունակողներ կամ հետեւորդներ ունեցա՞ն: Մինչդեռ Հայ ճգնաւորութեան հիմնադիրները հանդիսացող զոյգ Հայրերը, Անտոն եւ Կրօնիդէս, ունեցան անընդհատ կերպով իրենց յաջորդները եւ հետեւողները: Ասոնք, կ'ըսէ Օրմանեան, «կրնան կրօնաւորական կեանքի (այսինքն՝ ճգնողական կենցաղի) նախատիպերը ըսուիլ մեր ազգին մէջ» (Ազգ. էջ 154):

Անտոն եւ Կրօնիդէս նախ քան Հայաստան գալը արդէն իսկ անուն հանած ճգնաւորներ էին Կապադոկիան Կեսարիոյ մէջ: Ս. Գրիգոր Լուսաւորիչ, ձեռնադրութենէ յետոյ Կեսարիայէ վերադարձի ճամբու վրայ, երբ Հայաստանի համար հոգեւորականներ կը հաւաքէր, ընտրեց նախ այս երկուքը. «որպէսզի գործակից ըլլան իրեն՝ ծաղկեցնելու համար միանձնական կեանքը Հայաստանի մէջ, եւ իբրև փորձառու եւ վարժ անձեր վարժապետ ըլլան (Հայաստանի մէջ կազմուելիք) կրօնաւորներու հոգեւոր գասուն» (ԼԻԱԿԱՏԱՐ, էջ 645 ա):

Երբ Ս. Լուսաւորիչ Տարօնի մէջ, Իննակնեան բարձունքին վրայ, Գիսանէի մեհեանին տեղը հիմնեց Ս. Կարապետի վանքը, այնտեղ դրաւ այս երկուքը: Ասոնք միաբանական ուխտ մը հաստատեցին այս

վանքին մէջ եւ այսպէս հիմքը դրած եղան մեր մէջ միանձնական կազմակերպեալ կրօնաւորական կեանքին: «Եւ օրէ օր բազմացան այնտեղ ընտիր մարդեր, որոնք աշակերտեցան Սուրբերուն, բացի այն 44 կրօնաւորներէն, զորս սկիզբէն բերած էր Կեսարիայէն ու այնտեղ դրած էր նոյնինքն Ս. Գրիգոր»: (ԼԻԱԿԱՏԱՐ, անդ): Ասոնց վրայ վանահայր նշանակուեցաւ Անտոնի եւ Կրօնիդէսի աշակերտներէն Եպիփանը, որ միաժամանակ օգնականը կամ տեղապահն էր Ջենոբ Գլակի, որ առաջնորդ նշանակուած էր ամբողջ Տարօն գաւառի, եւ իր կեդրոնատեղին էր նոյնինքն Ս. Կարապետ վանքը: Վերջնոյ մահէն յետոյ Եպիփան եղաւ Տարօնի երկրորդ առաջնորդը: Ուրեմն պատմական իրողութիւն է, որ մեր վանական դրութեան առաջին կեդրոնը եղաւ Տարօնի Ս. Կարապետ վանքը:

«Երանելի Անտոն եւ Կրօնիդէս հոգեւոր վերակացութեան եւ դաստիարակութեան միայն ուշադրութիւն կ'ընծայէին, ինչպէս նաեւ ամենօրեայ աղօթքի եւ պաշտամունքին՝ Աստուծոյ տան մէջ, եւ տքնութեան եւ ժուժկալութեան հետամուտ էին, եւ իրենց օրինակով քան թէ խօսքով կը կրթէին ուրիշները ճգնողական կեանքին մէջ: Երբեմն-երբեմն կ'առանձնանային մերձակայ անտառը եւ կը ճգնէին առանձին խուցերու մէջ» (ԼԻԱԿԱՏԱՐ, անդ):

Տրդատ եւ Գրիգոր անգամ մը այցելութեան եկան Ս. Կարապետ վանքը:

Տրդատ ուզեց տեսնել այս երկու սրբակենցաղ անձերը: Վանքէն ըսին, որ տարի մըն է, որ տեսած չեն զանոնք: Այն ատեն Ս. Գրիգոր իր ձեռնասուռներէն Ալբիանոս Եպսկի եւ երկու սակաւազներու միջոցաւ ամէն կողմ փնտրել տուաւ զանոնք շրջակայ լեռներուն մէջ: Քանի մը օրերու փնտրտուքէ վերջ, օր մըն ալ վաղ առաւօտեան լսեցին սաղմոսերգութեան ձայներ. «Լսելի արա ինձ առաւօտուց զողորմութիւնս քոյ, զի ես ի Քեզ, Տէր, յուսացայ»: Ալբիանոս Եպսկ. իբրև պատասխան կցեց Սաղմոսին յաջորդ տունը. «Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիդ»: Այն ատեն կը գտնեն զիրար եւ կը շարունակեն սաղմոսերգութիւնը եւ առաւօտեան ժամերգութիւնը Արեւու Բլուրին վրայ, լեռներու մենութեան մէջ: Պաշտամունքէ յետոյ Ալբիանոս աւետեց, թէ Գրիգոր եւ Տրդատ իրենց վանքը եկած են եւ զիրենք կ'ուզեն տեսնել: Երբ վանք մտան, դիմաւորուեցան Գրի-

գորէն եւ Տրգատէն, ողջագործեցան. «Ու անոնք բազում վարդապետութեամբ կը խօսէին թագաւորին եւ անոր նախարարներուն հետ, գովելով անոնց աստուածապաշտութեան եռանդը եւ յորդորելով, որ աւելի ու աւելի աճին սրբութեան կրօնքի մէջ» (ԼԻԱԿԱՏԱՐ, անդ):

Ասոնց ճշնողական կեանքը երկար տարիներ տեւեց՝ սկսելով 302-էն: Օրմանեան ասոնց մահը կը դնէ 342ին, իսկ ԼԻԱԿԱՏԱՐը՝ 355ին, որ նոյն ատեն Մեծն Անտոն Աբբա՛հօր մահուան թուականն է: Վերջինս 15 տարի կուտայ ասոնց Ս. Կարապետի վանքի մէջ մնալուն, իսկ 40 տարի ալ շրջակայ անտառներու մէջ ճշնութեան: Ասոնց գերեզմանները կը ցուցուէին «Ս. Կարապետի վանքին մօտ պղտիկ մատուռի մը մէջ» (Ազգ. էջ 154): Իսկ իրենց յիշատակը կը տօնուի Խաչի Ե Կիրակիի յաջորդող Բշ. օրը, ատենիէ միւս հայ ճշնաւորներու հետ: Յայսմատորքը ասոնց յիշատակը կը նշանակէ Սեպտ. 30ին:

Ասոնք թէեւ իրենց անուսով շարական չունին, բայց «Ծօթանց խոտաճարակաց» վերնագրեալ համբարձի շարականի մէջ երկու տուն իրենց կը վերաբերի, զորս առաջ կը բերենք նոյնութեամբ, առանց թարգմանութեան, քանի որ այնքան պարզ ու հասկնալի են.

«Սուրբ երջանիկ երկնահամդէս,

Ճգնող Անտոն Կրօնիդէս.

Ի հողանիւթ ծնեալ զարմէս՝

Գերեզանցեալք ի բնութենէս:

Ջճեզ պարգեւեաց Սուրբ Ղեւոնդէս:*

Մեզ երկնային Հրեշտակք յերկրէս,

Ի վշտալից մարմնոյ ախաէս,

Փարատեցէք ի խոցմանէս:

Ի միջերկրէ տանէն Յուճաց

Հայոց տուեալ պարգեւ փառաց.

Վարժիչ կարգաց կրօնաւորաց,

* Կեսարիոյ Ղեւոնդիոս Աբքեպիսիոպոսը, որ ձեռնագրեց Ս. Գրիգորը, եւ որմէ ուղեց Լուսաւորիչ այս կրօնաւորները:

Հարք միանձանց ճշնաւորաց.

Մաղիկ բուսոյ բանաւորաց,

Բժշկական դեղք Հիւանդաց.

Ի դիւական այսոց չարաց

Ջճեզ փրկեցէք ի փորձանաց:

5-7. ԹԱԹՈՒԼ, ՎԱՐՈՍ, ԹՈՒՄԱՍ † Ե. ԴԱՐՈՒ ՎԵՐՁԵՐԸ

Թաթուլ եւ Վարոս եղբայրներ են ըստ մարմնոյ եւ ըստ հոգւոյ, իսկ Թուճա՛ս՝ իրենց աշակերտը: Երկու եղբայրները Սահակ-Մեսրոպեան աշակերտութենէն են եւ հետեւաբար սնած ու լիցուած էին մեծ վարդապետներու ջամբած գիտութեամբ եւ առաքինութեամբ: Երբ իրենց վարդապետները վախճանեցան եւ ապա Վարդանանց շարժումը սկսաւ, իրենք ալ շարժումին գործօն մասնակիցներէն էին, «ձեռնասու լինելով ուխտապահներուն եւ խրատիչ՝ ստահակներու»: Սակայն Վարդանանց նահատակութենէն յետոյ, երբ ուխտապահներուն մնացորդները ամուր բերդեր կ'ապաւինէին, ասոնք նախընտրեցին Հայոց աշխարհի բնական ու ազատ ամբուլթիւնները, այսինքն քաջուցեցան անծանօթ ու ամայի լեռները եւ իրենք զիրենք տուին միաժամանակ խոտաճեր ճգնութեան: Առանձնացան ասոնք Գաբղեանց նախարարութեան գաւառը, հաւանաբար իրենք ալ նոյն գաւառէն լինելով, այժմու Կաղզուան քաղաքին մերձակայքը բնակութիւն հաստատեցին Վիշապաճոր կաշուած վայրը: Այդ տեղը իրենց համար Աստուծմէ նշանակուած համարելով, եւ մերձակայ հովիտներու մէջ անհրաժեշտ բանջարը եւ վայրի միրգերը գտնելով՝ անոնցմէ կը սնանէին: Ու մենութեան ընձեռած աղօթանուէր կեանքով կը յառաջագիմէին հոգեւոր կատարելութեան մէջ:

«Իրենց սրբանուէր աղօթքները, հոգեղէն զուարթուններու պէս, ամէն օր երկինք կ'ուղարկէին իրբււ բանական պատարագ, անմարմին զոհ, ողջակէզ անկիզկի եւ զենուճն անվախճան»: (ԼԻԱԿԱՏԱՐ, էջ 642 բ):

Ժամանակ մը ապրելէ յետոյ այս «գեղեցիկ միաբանութեամբ», երկու եղբայրներ տեսան, որ շատ երջանիկ են այսպէս, ուստի իրարու տեսութենէն ալ զրկուելու նպատակով բաժնուցեցան իրարմէ:

Վարոս, որ երէց եղայրն է, Հեռացաւ ու առանձնացաւ Դիցամայրի քարայր կոչուած տեղը:

«Որպէսզի աւելի ծանր ըլլայ այն պայքարը, զոր կը մղէին ընդդէմ դեւերու գունդին, եւ որպէսզի աւելի վարձքի արժանի ըլլան Քրիստոս Աստուծոյ, եւ որպէսզի Աստուած միայն ըլլայ իրենց մխիթարարը եւ զօրավիգը, որոշեցին զրկուիլ իրարու տեսութեամբ վայելած իրենց սիտիանքէն»:

«Այնպէս որ, Մեծն ու Երանելի Անտոնի առաքինութիւնները իրենց անձերուն վրայ կը փայլէին, շարունակ կը մարտնչէին դեւերու հետ եւ կը յաղթէին անոնց, եւ բարի Հաստուցումներ կ'ընդունէին Քրիստոսէ, որոնց կարգին էր «տեսութիւնս անճառելիս», այսինքն՝ գերբնական տեսիլքներ» (ԼԻԱԿԱՏԱՐ, անդ.):

Սակայն ըստ Աւետարանի Հաւատարմին՝ «լիբան վրայ կեցող քաղաքը չի կրնար ծածուկ մնալ», այնպէս ալ թէեւ «բազմա-ժամանակեայ անյայտ կ'ապրէին մարդերէ», մինչեւ որ Աստուծոյ անօրինութեամբ որսորդներու կողմէ գտնուեցաւ նախ Թաթուլի ճգնարանը, եւ կարճ ժամանակին ամբողջ գաւառին մէջ Հռչակուեցաւ անոր «սքանչելի առաքինութեան Համբարը», եւ գունդագունդ Հոն կը դիմէին մարդիկ՝ սրտապնդուելու եւ մխիթարութիւն գտնելու Համար վատ ժամանակներու, կրակապաշտութեան եւ օտար լուծի մը բերած անմխիթար կացութենէն: Եստ շատեր «ի նախանձ բարի բերեալ» չուզեցին Հեռանալ անոր քովէն եւ ուզեցին աշակերտիլ իրենց ճգնողական վարքի մէջ:

«Եւ շուտով տեղւոյն վրայ, վայելուչ վայրի մը մէջ, Հիմքը դրին եւ եկեղեցի մը շինեցին, ինչպէս նաեւ պատշաճ խոցեր՝ ճգնաւորներու Համար. ու վանք կազմեցին միաբանական կենցաղի Համար, իրենց Հայր ու առաջնորդ կարգելով Աստուծոյ մարդ Թաթուլը, որմէ այդ տեղը կոչուեցաւ Թաթուլի վանք: Ու այստեղ, Սուրբ Հօր (Թաթուլի) Հոգեբուխ խրատներով եւ աստուածահաճոյ կարգաւորութեամբ դաստիարակուեցան առաքինի անձերու գունդեր՝ բարեպաշտութեան գեղեցիկ կրօնքին մէջ» (ԼԻԱԿԱՏԱՐ, էջ 643):

Ուրեմն՝ Հոն ուր բացարձակ մենակեցութիւն կը տիրապետէր,

կարճ ժամանակին մէջ ծաղկեցաւ վանական ու միաբանական յատուկ կենցաղ:

Թաթուլի աշակերտներուն մէջ աչքի զարկաւ մէկը իւրայատուկ ուշիմութեամբ ու կատարելութեան մէջ իր արձանագրած յառաջ-գիմութեամբ, որուն անունն էր Թուճաս, «անմեկնելի պաշտօնեայ», այսինքն անբաժան օգնական ու աշակից իր վարդապետի, «յոյժ բարեսէր, աստուածապաշտ եւ երկիւղած, Հեղ ու խոնարհ, Հանդարտ եւ Հնազանդ, ամենքին մտիկ ընող եւ ամենքին կամքը կատարող, միաժամանակ Հետեւող ճգնողական կարգաց եւ կանոնաց Մեծն Թաթուլի, եւ գործադրող անոր խաչակրօն խոստամբերութեանց»:

Երանելի Թաթուլ, որ արդէն իսկ տարիքով ալ շատ առաջացած էր, տեսնելով Թուճասի յառաջդիմութիւնը, շատ ուրախացաւ, իր տեղ վանահայր կարգեց այս երիտասարդ ոյժը եւ ինք առանձնացաւ Մայրաձորի մենարանը իր վերջին տարիները միայնակեցութեամբ աւարտելու Համար:

«Ու այնտեղ անմարմին Հրեշտակի մը պէս իր մենակեաց կեանքը կը կնքէր, մինչեւ որ խոր ծերութիւն Հասնելով փոխադրուեցաւ յաշխարհէ նոյն այդ Մայրաձորի մենարանին մէջ: Այստեղէն վերցուցին Երանելիի Սուրբ մարմինը եւ տարին ու Հանդէցեցուցին իր վանքին մէջ մեծ պատուով՝ ըստ իր արժանիքին» (ԼԻԱԿԱՏԱՐ, էջ 644 բ):

Իսկ Թաթուլի երէց եղբայրը, Վարոս իր Հարազատէն բաժնուելէ յետոյ, ինք ալ երկար տարիներ առանձինն ճգնեցաւ Դիցամայր լեռնային քարանձաւին մէջ, բոլորովին մեկուսացած մարդերէ, մինչեւ որ կարգ մը մարդեր «Աստուծոյ նախախնամութեամբ» գտան նաեւ զայն: Այնքան ուրախացան այս «գիւտին» Համար, որ Հաւանաբար անծանօթ ըլլալով իր յատուկ անունին, սկսան զայն կոչել Գիւտի: Անոր ճգնավայրին մէջ ալ վանք շինեցին եւ կոչեցին իր նոր անունով «Գիւտի վանք»: Այստեղ ալ շուտով բազմացան կրօնաւորներ եւ «Աստուծոյ փառաբանիչներ» Հայր Վարոսի առաջնորդութեան ներքեւ եւ իր դրած աստուածահաճոյ վանական կարգերով: Ի վերջոյ ան կատարեց իր ընթացքը՝ խոր ծերութեամբ եւ լի արդիւնքներով անցաւոր աշխարհէն փոխադրուեցաւ անանց կեանքի:

Իսկ երանելի Թուճաս, արժանաւոր յաջորդը Թաթուլին «կ'ընթա-

նար Աստուծոյ կամքին Համաձայն ամէն առաքինութեամբ: Եւ կը Հետեւէր սուրբ Հօրն Թաթուլի խրատներուն եւ վարքին, եւ ամէն տեսակ բարեկարգութեամբ կը զարդարէր իր ուխտաւոր միաբանութիւնը, եւ կը բնակեցնէր իր վանքին մէջ Աստուծոյ կամքին Համաձայն միաբանեալ եղբայրներ: Երկար տարիներ ապրեցաւ Հրեշտակակրօն վարքով, Հասաւ խոր ու բարի ծերութեան եւ խաղաղութեամբ Հանգչեցաւ ի Քրիստոսու եւ Թաղուեցաւ Հայր Թաթուլի մօտ»:

Այս երեք ճշնաւորներն ալ թէեւ ՅայսմաւորքԱնրուճ մէջ կը յիշուին Սեպտ. 30ին, բայց ներկայիս անխախտ կը տօնուին վերոյշեալ Անտոնի եւ Կրօնիդէսի Հետ Խաչի Ե Կիրակիի յաջորդող Երկուշաբթին. իւրայատուկ շարական չունին:

Սկզբնաղբիր. ՍՈՓԷՐ-Ք, ԺԱ, էջ 50-59:

8. ԵՕԹԸ ԽՈՏԱԾԱՐԱԿՆԵՐ Դ 604

Ձ դարուն վերջերը Հայոց աշխարհը Համեմատաբար խաղաղութիւն կը վայելէ Սմբատ Բագմայաղթ կոչեցեալ Բագրատունի իշխանի մարզպանութեան օրով, իսկ Տարօնի աշխարհին մէջ ալ կ'իշխէր Մուշեղ Մամիկոնեան՝ իրեն գործակից ունենալով Գայլ Վահանը: Ասոնց օրով «շատ պայծառացաւ» Մշոյ Ս. Կարապետի վանքը, մանաւանդ Թողիկ կամ Թաղիկ կոչեցեալ վանահօր օրով. «սուրբ եւ ճշնաւոր մարդ մը, որդի մեծաՀարուստ ազնուականի», որ վանքը վերանորոգեց եւ ընդարձակեց եւ շատ մը ընտիր մարդեր, որոնք Հոգեւոր Հակում ունէին, սկսան այնտեղ Հաւաքուիլ «Թըւով իբրեւ 398»-կ'ըսուի ԼԻԱԿԱՏԱՐԻ մէջ (էջ 647 ա):

Այնչափ Հոչակուեցաւ վանքին անունը իբրեւ Հոգեւոր կեանքի կեդրոն, որ շատեր մինչեւ իսկ Հեռաւոր տեղերէն կուգային օգտուելու Համար այստեղ սկսուած բարեկարգութեան: Ասոնց կարգին են այն չորս «Խոտաճարակ անուանի ճշնաւորները», որոնք Յունական Հայաստանէն (արեւմուտքէն) եկան, եւ այն միւս երեքը, որոնք եկան Գարսկական Հայաստանէն, եւ շատ սիրալիր ընդունելութեան արժանացան Թողիկ վանահայրէն:

Շատ Հաւնեցան նախ վանքին մէջ տիրող բարեկարգութիւնը եւ սիրեցին նաեւ շրջապատը իբրեւ յարմարագոյն ճշնութեան: Այս

երկու խումբերը միացան իրարու եւ կազմեցին խստամբեր ճշնութեան եղբայրութիւն եւ քաշուեցան մօտակա անտառը. «մեծ ճշնութեամբ եւ խոտարուտ կենօք» Հրաժարեցան ամէն տեսակ դիւրակեցութենէ եւ իրենք զիրենք ընծայեցին ճշնողական կատարելութեան: Երբեմն-երբեմն վանք կուգային Ս. Հաղորդութիւն ստանալու եւ օգտուելու Համար Հ. Թողիկի առաջնորդական խրատներէն, միաժամանակ օգտակար Հանդիսանալով վանքի միաբանութեան իրենց Հոգեւոր խօսքերով եւ օրինակով: Ապա կը վերադառնային իրենց ճշնողական կենցաղին: Այսպէս ապրեցան շուրջ 20 տարիներ:

Սակայն 604ին Գարսից Թագաւորը պատերազմ յայտարարեց Յունաց դէմ: Իր բանակին մէկ թեւը պէտք էր անցնէր Տարօնէն: «Ս. Կարապետի վանքն ալ աւարտուներուն ախորժակը սրեց»: Միաբաններ, նախատեսելով ասիկա, վանքին զանձը Հեռաւոր տեղեր պահեցին, իրենք ալ ցրուեցան զանազան տեղեր: Որպէսզի վանքը բոլորովին ամայացած չնկատուի եւ չքանդուի, Եօթը խոտաճարակներ յանձն առին վանքին պահպանութիւնը, դիտնալով Հոգեւոր, թէ լուրջ վտանգի կ'ենթարկէին իրենց անձերը: Արդարեւ եկաւ պարսկական բանակը, որ վանքը մերկացած գտնելով՝ իրենց յուսախաբուութեան զայրոյթը թափեցին ճշնաւորներուն վրայ:

Նախ գլխատեցին իրենց գլխաւորը Գողիկարպոս անուանեալ եւ ապա մնացեալ վեցերը, որոնց անունները եւս պահած է պատմութիւնը՝ Թէոփնաս, Սիմէոն, Յովհաննէս, Եպիփան, Դեմարիոս եւ Նարկիսոս:

Երեք օր յետոյ, երբ Գարսիկ բանակը քաշուած էր, վերադարձան փախստական միաբաններ եւ պատուով թաղեցին զանոնք Անտոն եւ Կրօնիդէս ճշնաւորներու գերեզմաններուն քով, ուր կը պատուուէին մինչեւ առաջին աշխարհամարտը:

ՅայսմաւորքԱնրու մէջ յիշուած են Սեպտ. 30ին: Իսկ ներկայիս կը տօնուին անոնք զիրենք կանխող Հինգ ճշնաւորներու Հետ խաչի Ե Կիրակիի յաջորդող Բշ. օրը: Որով երեք խումբերէ բաղկացեալ բուռ մը ճշնաւորները միասնաբար կը յիշատակուին, մինչդեռ կ'արժէր առանձին երեք խումբերով երեք տարբեր օրերուն յիշատակել զանոնք:

Խոտաճարակներ ունին իւրայատուկ երկայնկեկ շարական մը,

որուն տուններուն սկզբնատառերը երբ իրար կապենք՝ կը կարդացուի ՅՈՎՀԱՆՆԻՍԻ Է ԵՐԳ: Ասոր առաջին վեց տունները Հայոց դարձի տաղաչափեալ պատկերացումն է, իսկ յաջորդ երկու տունները, ինչպէս տեսանք, Անտոնի եւ Կրօնիդէսի վերաբերեալ էին: Վերջին երեք տունները միայն խոտաճարակներու մասին է: Յառաջ կը բերենք անոնցմէ երկու տունները, առանց թարգմանութեան, ինքնին պարզ ու Հասկնալի լինելով.

Եօթն աստեղան երկնից կամարք.

Աստուածութեանըն կամարարք.

Ճրգնողք մարմնով խոտաճարակք.

Մաքուրք հոգևով լուսով տաճարք.

Եկեղեցւոյ բարձր աշտարակք.

Տանըս Հայոց ամուր պատուարք.

Ջձեզ աղաչեմք, ճրգնողք սուրբ հարք.

Լինել անձանց մեր բարեբարք:

Գոչեմք առ ձեզ սուրբ նահատակք՝

Հողանիւթեայ մարմնով հրեշտակք.

Մարտիրոսք սուրբք եւ վրկայք.

Որք սրոյ մահուամբ կատարեցայք:

Յորդոր տօնիս ձեր յիշատակ

Արեան սրբոյ Հեղման վրտակ՝

Առ Տէր լիցի սուրբ պատարագ-

Գահել ըզմեզ միշտ անվրտանգ:

Սկզբնաղբիւրներ. Յովհաննու Մամիկոնէից Եպիսկոպոսի
ԳԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՐՕՆՈՅ, Վենետիկ, 1860

ԳԼՈՒԽ Գ.

ԹԱԳԱՒՈՐՆԵՐ, ԻՇԽԱՆՆԵՐ ԵՒ ԶՕՐԱԿԱՆՆԵՐ

ԱՐԳԱՐ ԹԱԳԱՒՈՐ - Ն. Բ. † 50?

Մեր պատմահայր Մովսէս Խորենացին Արգարը կը ներկայացնէ իբրեւ Հայոց թագաւոր: Ասոր վրայ հիմնուելով՝ Սիմէոն Կաթողիկոս մեր տօնացոյցի վերակազմութեան եւ առաջի տպագրութեան առեն հետեւեալ ձեւով նշանակեց անոր յիշատակը. «Նախավկայ եւ ի Քրիստոս անդրանիկ Հաւատացեալ թագաւորին սրբոյն Արգարու», եւ ցայսօր այդ անուան ներքեւ կը տօնուի ան մեր եկեղեցիին մէջ: Բայց ներկայիս առհասարակ այնպէս ընդունուած է, որ Արգար թագաւորն էր Ուրոյէն կոչուած երկրամասի մը, որուն մայրաքաղաքն էր Եղեւսա, որ մեր մէջ ծանօթ է աւելի Եղեսիա ձեւով, եւ այսօր կը կոչուի Ուրֆա կամ Ուրֆա: Արգար Հայոց թագաւոր նկատուելուն զլիսաւոր պատճառը այն է, որ իր թագաւորութեան մէջ, առնուազն Եղեսիոյ մէջ, այնքան Հայ կար, որքան Ասորի: Այն աստիճան շատ էին հայեր այս շրջանի մէջ, որ Տիգրիս եւ Եփրատ գետերու միջեւ ինկող այս երկրամասը պատմութեան մէջ ծանօթ է իբրեւ «Միջագետք Հայոց»: Մեծն Տիգրան այս երկրամասը կցած էր Հայաստանի, եւ իր նոր մայրաքաղաքը՝ Տիգրանակերտը, շինած էր այս երկրամասին մէջ:

Հետեւեալն է Արգարի գրոյցը ըստ Մովսէս Խորենացիի:

Արգար թագաւոր բռնուած էր մորթային անբուժելի հիւանդութեամբ մը: Քաղաքական ինչինչ հարցերու կարգադրութեան համար երբ պատգամաւորութիւն մը ղրկած էր Հռոմ, պատգամաւորներ վերադարձած էին Գաղեստինի վրայով: Այս մարդիկը Երուսաղէմի մէջ ականջալուր եւ ականատես եղած էին Յիսուսի հրաշագործութեանց եւ իրենց տեսածն ու լսածը պատմած էին իրենց թագաւորին: Արգար Հաւատաց ըսուածներուն եւ այն համոզումը գոյացուց, որ Յիսուս գերբնական էակ մըն էր, մինչեւ իսկ Աստուծոյ յայտնութիւնը

երկրի վրայ, եւ Հետեւաբար Ան միայն կրնար բուժել իր Հիւանդութիւնը: Ուստի նամակ մը գրեց Յիսուսին սա սկզբնաւորութեամբ.

«Աբգար Արշամայ [որդի], իշխան աշխարհի, առ Յիսուս Փրկիչ եւ բարերար, որ երեւեցաւ աշխարհի Երուսաղէմացոց, ողջոյն»:

Այս նամակին մէջ Աբգար կ'ըսէ, թէ լսած է Յիսուսի եւ իր բժշկութեանց մասին եւ եկած է այն եզրակացութեան, թէ այսպիսի հրաշագործութիւններ կատարողը նոյնինքն Աստուած է եւ կամ Աստուծոյ Որդի: Ուստի կը խնդրէ, որ յոգնութիւնը յանձն առնէ իր երկիրը գալու եւ գինք բժշկելու: Իմացած է նաեւ, որ Հրեաներ նեղութիւն կուտան իրեն, ուստի կը հրաւիրէ Յիսուսը իր փոքրիկ, բայց գեղեցիկ քաղաքը Եդեսիա, որ երկուքին համար աւելի քան բաւարար է:

Աբգարի թղթատարը կը գտնէ Յիսուսը Երուսաղէմի մէջ եւ կը յանձնէ նամակը: Յիսուս ալ, ըստ Խորենացի Գատմիչի, գրաւոր կը պատասխանէ Աբգարի նամակին Հետեւեալ սկզբնաւորութեամբ.

«Երանի անոր, որ կը Հաւատայ ինձի առանց տեսնելու, որովհետեւ գրուած է իմ մասիս. Զիս տեսնողները պիտի չհաւատան ինձի, բայց անոնք, որ չեն տեսներ զիս՝ պիտի Հաւատան եւ յաւիտեան պիտի ապրին»:

Ապա նամակի շարունակութեան մէջ Յիսուս կը Հաստատէր, որ ինք չէր կրնար գալ, բայց իր Համբարձումէն յետոյ պիտի զրկէր մէկը իր աշակերտներէն, որ պիտի բուժէր զայն իր Հիւանդութենէն:

Կը շարունակէ Խորենացին. այս նամակը Աբգարին բերաւ իր Անան պատգամաւորը, որ միաժամանակ բերած է նաեւ Փրկչի մէկ պատկերը, որ, կ'ըսէ Գատմիչը, «Եդեսացոց քաղաքին մէջ է մինչեւ այսօր»: Այս պատկերը մեր պատմութեան մէջ ծանօթ է «Դաստառակ» անունով:

Աբգարեւ, ըստ նամակին մէջ տրուած խոստումին, Քրիստոսի Համբառնալէն յետոյ Եդեսիա կուգայ Թադէոս Առաքեալը, որ կ'իջեւանի Տուբիա կոչուած Հրեայ իշխանի մը տունը, ուրկէ կը հրաւիրուի Աբգարի մօտ, որ կ'ընդունի զայն յարգանքով՝ իբրեւ Քրիստոսի պատգամաւորը: Թադէոս կ'ըսէ անոր. Եթէ կը Հաւատաս Յիսուս Քրիստոսի՝ Աստուծոյ Որդիին, պիտի բուժուիս: Աբգար պատաս-

խանց, որ ինք Հաւատացած է արդէն Անոր եւ իր Հօրը: Ասոր վրայ Թադէոս ձեռք դրաւ Աբգարի վրայ եւ բժշկեց զայն, ինչպէս նաեւ քաղաքին մէջ եղած բոլոր Հիւանդները:

Ապա Թադէոս ազատօրէն քարոզեց Աւետարանը Աբգարին եւ իր քաղաքի ամբողջ բնակչութեան: Ամենքն ալ Հաւատքի եկան եւ մկրտուեցան, թէ Աբգար թագաւորը եւ թէ քաղաքի բնակիչները: Կուռքերու տաճարներու դռները փակեցին: Այսպէս առանց բռնութեան կամ դժուարութեան Հաւատացեալներու թիւը կը բազմանար օրէ օր:

Դարձի բերուած ու մկրտուածներուն մէջ կար Ադդէ անունով խոյր շինող անձ մը, որ քիչ-շատ զարգացում ունենալուն եւ Հաւատքի մէջ աւելի եռանդ ցոյց տալուն համար Թադէոս Առաքեալ զայն երէց կամ եպիսկոպոս ձեռնադրեց Եդեսիայի վրայ, եւ ինք Հեռացաւ քաղաքէն իր քարոզութիւնը շարունակելու համար բուն Հայաստանի վրայ իշխող Հայոց Սանատրուկ իշխանի՝ պալատին ու ժողովուրդին մէջ:

Ապա Աբգար նամակներ կը գրէ Հոովմի Տիբերիոս կայսեր, որուն իշխանութեան ներքեւ էր ինք ալ, ըսելու համար, թէ Քրիստոսի կատարած գործերը կը Հաստատեն, որ Ան Աստուած է, եւ Հետեւաբար անհրաժեշտ է, որ Անոր անունը եւ Աւետարանը քարոզուի ամէն տեղ իր աշակերտներուն կողմէ, որոնց ձեռքով եւս մեծամեծ Հրաշքներ կը կատարուին, ինչպէս արդարեւ պատահեցաւ նաեւ իր վրայ: Ուստի նախ կը խնդրէ, որ պատժէ Հրեայ ժողովուրդը, որ զԱյն խաչեց, եւ ապա արտօնէ եւ տնօրինէ, որպէսզի ամէն տեղ պաշտուի Քրիստոս իբրեւ ճշմարիտ Աստուած:

Տիբերիոս կը պատասխանէ դրականօրէն, թէ ինք ալ լսած է Յիսուսի մասին ուղղակի Գաղեստինի կառավարիչ Գիդատոսէն, որ նոյն Համոզումը ունէր Քրիստոսի մասին: Բայց Հոովմայեցոց օրէնքով մէկու մը աստուածացումը կը կատարուի միայն ձեռակոյտի որոշումով: Այսուհանդերձ, կը շարունակէ Տիբերոս կայսրը, ինք արտօնած է, որ ուզողը Հաւատայ եւ Հետեւի Յիսուսի Հաստատած կրօնքին, եւ ոչ ոք կրնայ արգելք Հանդիսանալ կամ նեղել այս Հաւատացողները: Իսկ Հրեաները պատժելու Հարցը նկատի պիտի ունենայ, երբ աւարտի ներկայ սպանական պատերազմը:

Աբգար ի պատասխան այս նամակին գրեց, որ պաշտօնանկ ընէ Պիղատոսը, որ տեղի տուաւ Հրեաներուն եւ կատարեց անոնց պահանջը՝ հրամայելով, որ խաչեն Յիսուսը: Նամակներ գրեց նաեւ «Առ ներսեզ մանուկ արքայ Ասորեստանի ի Բաբելոն», ինչպէս նաեւ «Առ Արտաշէս արքայ Պարսից»: Երկուքին ալ վկայելով Յիսուս Քրիստոսի մասին իբրեւ Աստուծոյ Որդի՝ յանձնարարեց անոնց Սիմոն կամ Ծմաւոն նախանձայոյզ Առաքելը, որ իրենց կողմերը կը քարոզէր, աւելցնելով որ ան պիտի բուժէր իրենց հիւանդները եւ յաւիտենական կեանքի ճանապարհը ցոյց պիտի տար իրենց: Այս նամակներուն պատասխանը չստացած մեռաւ Աբգար 38 տարի թագաւորելէ յետոյ, 50-ական թուականներուն:

Մովսէս Խորենացի Պատմիչին աւանդածը հիմնուած է ասորական աղբիւրներու վրայ, որոնցմէ մէկն է «Վարդապետութիւն Արդէի» կոչուած գրութիւնը, իսկ միւսը՝ «Լաբուրանայ Դիւանագրի Եգեսիոյ Թուղթ Աբգարու», ասորերէնէ հայերէնի թարգմանեալ «ի ձեռն սրբոց թարգմանչաց» (Վենետիկ, 1868): Այս նոյն աղբիւրներէն առնելով՝ Արեւմտեան աշխարհի սեպհականութիւն դարձուց այս պատմութիւնը նոյնինքն Եւսեբիոս եկեղեցական ծանօթ պատմիչը (260-340):

Աբգար լրիւ կերպով յիշուած է Կաթողիկ Համայնագիտարանի մէջ «Աբգարի գրոյց» անուան տակ, բայց ոչ իբրեւ սուրբ: Յոյն եւ Լատին եկեղեցիներու մէջ տօնուած ըլլալու հետքին չհանդիպեցանք: Չէ յիշուած նաեւ ՓեՇՏԻՄԱԼՃԵԱՆԻ հրատարակած Յայսմատուրքի մէջ: Լայնօրէն յիշուած է ՄԱՐՁՈՒԱՆՅԻԻ եւ ԼԻԱԿԱՏԱՐ Յայսմատուրքներու մէջ, Դեկտ. 31ին: Հայ եկեղեցին նախապէս կը կատարէր անոր յիշատակը Ադդէին հետ, Յիսնակի Դ Կիրակիին յաջորդող Եջ. օրը: Ինչպէս յիշեցինք, Սիմէոն Կաթողիկոսն է, որ տնօրինեց անոր աւանձին տօնակատարութիւնը, վերոյիշեալ Եջ. յաջորդող Եր. օրը: Սակայն տարւոյն գիրերուն համաձայն կը տեղափոխուի նաեւ Յիսն. Բ եւ Դ կիրակիներու յաջորդող Գջ. օրերուն: Մեր ամէնէն աւելի փոփոխական տօներէն մէկն է:

Սկզբնաղբիւրները յիշուած են գրութեանս մէջ: Իւրայատուկ շարական չունի: Իր տօնին կ'երգուի ԹԱԳԱՒՈՐԱՅ յատուկ կանոնը:

Մեր իսկական ու պատմական «Ի Քրիստոս անդրանիկ Հաւատացեալ թագաւորը» Տրդատն է: Կրնայ ըլլալ, որ իրմէ առաջ իշխանաւորներ քրիստոնեայ եղած ըլլան անհատաբար եւ ի ծածուկ, սակայն Տրդատի կը պատկանի անկապտելի փառքը աշխարհիկ իշխանաւորներուն մէջ ԱՌԱՋԻՆՆ ըլլալու, որ պաշտօնապէս եւ բացէ ի բաց Քրիստոսի Հաւատաց եւ պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով քրիստոնէութիւնը երկրի մը եւ ժողովուրդի մը պաշտօնական կրօնքը յայտարարեց:

Տրդատ որդին է Հայոց Մեծն Խոսրով թագաւորին, որ 240-ական թուականներուն սպաննուեցաւ Անակ Պարթեւ իշխանի կողմէ, սադրանքով Պարսից թագաւորին: Իբրեւ հետեւանք այս սպաննութեան, երբ պարսիկներ կ'արշաւէին Հայաստան, Հայ իշխաններէն Օտաւ Ամատունի տէր կանգնեցաւ Խոսրովի դատեր՝ Խոսրովիդուխտին եւ ամրացաւ Անի (այժմ Կամախ) բերդին մէջ:

Իսկ Արտաւազդ Մանգակունի Արեւմուտք փախցուց արքայորդին՝ Տրդատը:

Տրդատ իր երիտասարդութիւնը անցուց Հռովմէական բանակի մէջ, կրթուեցաւ զինուորական ասպարէզի մէջ եւ մեծ անուն հանեց քաջագործութիւններով, որոնցմէ մէկն է Հռովմէական կայսեր տեղ իր գուպարը Գոթաց թագաւորին հետ, որուն յաղթեց եւ ձերբակալելով Կայսեր բերաւ: Իբրեւ վարձատրութիւն՝ օրուան կայսրը թագ գրաւ իր գլուխը (Հաւանաբար 274ին) եւ զօրք տուաւ իրեն, որպէսզի երթայ եւ տիրանայ իր հօրենական գահին, որուն վրայ վերջնականապէս հաստատուեցաւ 287 թուին: Սկզբնաղբիւր Ագաթանգեղոս պատմիչը ըստ հետեւեալի կը ներկայացնէ Տրդատի արտաքինը. «Ուժով եւ պնդակազմ էր, Հաստատ եւ ամուր ոսկորներով, յաղթանդամ էր մարմինով եւ քաջ ու հզօր պատերազմիկ, բարձր եւ լայն էր հասակով»: Ամուսնացաւ Ալանաց թագաւորի դստեր իշխանուհի Աշխէնին հետ:

Պատմեցինք իր տեղը (Գլուխ Ա. 1.) իր դիւանադպիր Գրիգորին տուած չարչարանքները եւ Խոր Վիրապ նետելը: Որմէ յետոյ հրովարտակ Հանեց, որ քրիստոնեաներ հալածուին ամէն տեղ եւ կռա-

պաշտութեան չդարձողներ մահուամբ պատժուին, եւ անոնց գոյքերը պետական գանձին անցնին: Այս միջոցներուն է, որ մէջտեղ կ'ելլեն խումբ մը քրիստոնեայ կիներ (Հռիփսիմեանք) զորս անխնայ եւ անգթօրէն սպաննել կուտայ: Անմեղ կիներու այս սպաննութիւնը եւ անոնցմէ Հռիփսիմէն իրեն կին առնելու փափաքին մէջ ամօթալի կերպով ձախողելը իր վրայ Հոգեկան մոայլութիւն մը կ'իջեցնէ, որ կը մղէ դինքը մոլեգնութեան եւ կենդանակերպ վարմունքի: Իր սկզբնադիր աղբիւրը բացայայտօրէն խոզի վերածուած կը ներկայացնէ զայն եւ իր կարգ մը պալատականները՝ «վեց օր անտանելի տխրութեան մատնուեցաւ թագաւորը»: Երբ եօթներորդ օր պալատականներ անոր տրամադրութիւնը փոխելու միտքով որսի Հանեցին, ինքզինքը բոլորովին կորսնցուց թագաւորը, «կառքէն վար ցատկեց եւ սկսաւ մոլեգնել եւ ինքզինքը խածատել եւ նման Նաբուգոդոնոսոր թագաւորին (Դան. Դ 25) մարդկային բնութենէն դուրս ելաւ, վայրի խոզի կերպարանք ստացաւ եւ անոնց ընկերակցութիւնը կը փնտռէր» (Ագաթ. էջ 160 [§ 212]): Դարձած էր անզսպելի. «Նախ՝ որովհետեւ բնականէն ուժով էր եւ երկրորդ՝ դեւերու ուժն ալ իրենին վրայ աւելցած էր» (Նոյն անդ): Շատեր ալ բռնուեցան մոլեգնութեան այս ախտէն, նախարարներ եւ Վաղարշապատի քաղաքացիներ, որոնք մասնակցած էին կոյսերու վրայ դրուած խժողութեանց:

Այս անմխիթար կացութեան մէջ Տրդատի քոյրը՝ Խոսրովիդուխտ, երազ կը տեսնէ եւ կը պատմէ պալատականներուն. «Լոյսի նման մարդ մը ըսաւ ինձի. Հարուածեալները ուրիշ ոչ ոք կրնայ բուժել՝ բացի Գրիգորէն, որ պիտի գայ եւ պիտի սորվեցնէ ձեզի ձեր ցաւերէն բժշկելու դեղը» (անդ. էջ 162, §214): Ոչ ոք լուրջի առաւ երազը, մինչեւ որ ան կրկնուեցաւ Հինգ անգամ, որուն վրայ Արտաշատ զրկեցին Նոյնինքն Խոսրովիդուխտի խնամակալը՝ Օտա Ամատունին, որ արդարեւ Վաղարշապատ բերաւ Գրիգորը, որուն աղօթքով զգաստացան նախ մասամբ մը Տրդատ եւ միւս մոլեգնեալները, եւ Գրիգոր սկսաւ քարոզել անոնց Աւետարանը. «Հարուածեալները գիշեր եւ ցերեկ անոր մօտ կը մնային... քուրճ Հագած եւ մոխրի վրայ նստած պահեցողութիւն կ'ընէին 66 օրեր» (անդ, էջ 541): Սիրայօժար կ'ուռնկեզրէին անոր քարոզները. «Թագաւորը եւ իշխաններ յանձնառու կ'ըլլային կատարել ամէն ինչ, որ Գրիգորը կը Հրամայէր» (անդ, էջ 544):

Քարոզութեան եւ ապաշխարանքի «վաթսուևիցեհորդ օրը լրացաւ, առաւօտ կանուխ մօտեցան Գրիգորին թագաւորը, իշխանները, նախարարները եւ խառն ամբոխը, ինչպէս նաեւ կիներ եւ անմեղ երեսներ. երամ-երամ, դաս-դաս կ'աղաչէին Գրիգորին, որ ազատէր ու վերջնականօրէն բժշկէր զանոնք իրենց վրայ եկած Հարուածներէն» (անդ, 544 [§ 225]): Այն ատեն Գրիգոր ըսաւ. «Մուռնի եկէք, եւ Տէրը բժշկութիւն պիտի տայ. ու արցունքով խնդրեց Աստուծմէ, որ բժշկութիւն տայ թագաւորին եւ ամենքին» (անդ, էջ 576): Ամենքը բժշկուեցան իրենց ախտերէն եւ մտքով լուսաւորուեցան՝ ճանչնալով Քրիստոսը իբրեւ իրենց ազատարարը, ինչ որ ամենքը լեցուց կրկնային մխիթարութեամբ ու երջանկութեամբ:

Այս Հոգեկան նորոգութենէն յետոյ Լուսաւորիչ.

«Խորհուրդ տուաւ եւ Հաւանութիւնը ապահովեց թագաւորին, իշխաններուն, նախարարներուն եւ ամբողջ բանակին, որ Հասարակաց խաղաղութեան Համար քակել, կործանել եւ մէջտեղէն վերցնել պէտք է կուպաշտութեան դայթակղութիւնը, որպէսզի այլեւ ոչ ոքի խոչընդոտ Հանդիսանան կուռքերը եւ չխափանեն ձեռք ձգուած երկնային ազատութիւնը» (անդ, 579): Թագաւորն ինքնիշխան Հրամանով, եւ ամենքի Հաւանութեամբ, ձեռնտու կ'ըլլար երանելի Գրիգորին, որպէսզի Հայրենական Հին աստուածներու յիշատակը վերցուի եւ ջնջուի մէջտեղէն» (անդ, 580):

Արդարեւ, որոշուած դործի վերածուելով՝ «ինքն իսկ թագաւորը ամբողջ զօրքովը» ճամբայ կ'ելլէր Վաղարշապատէն եւ մի առ մի կը փշրէին կուռքերը եւ կը քանդէին անոնց բազմինները եւ անոնց տեղերը խաչեր կը տնկէին: Անոնց «մթերուած գանձերը աղքատներուն, տառապեալներուն եւ չքաւորներուն կը բաշխէին»: Իսկ կալուածները եւ սպասաւորները նոր կրօնքին սեպհականութիւնը կը դարձնէին (անդ, 583):

«Այսպէս շատ տեղերէն վերցուցին դայթակղեցուցիչ, անմուռնչ, ձուլածոյ, կոփուած, քանդակուած, անպէտ, անօգուտ եւ վնասակար կուռքերը, որոնք շինուած էին ցնորած մարդերու անմտութեամբ» (անդ, 588 [§ 787]):

«Թագաւորն Տրդատ մեծասաստ իշխանութեամբ կը Հրամայէր

սատանային ծախուած դիւամու ժողովուրդներուն, որպէսզի ազատուին ու հեռանան անտի գործ եղող, հինցած ու պարապ հեթանոսական պաշտամունքէ, եւ հնազանդին Քրիստոսի ամենահեշտ ծառայութեան»:

Ամէն տեղ թագաւորն ալ, Գրիգորի քարոզութենէն յետոյ կուտար իր անձնական վկայութիւնը, խոստովանելով իր ամբարշտութիւնները, եւ կը պատմէր իր վրայ կատարուած Աստուծոյ սքանչելիքները, բժշկութիւնը եւ ողորմութիւնը:

Այս բոլորը կ'ընէին «կոշտ ու կոպիտ հեթանոսական բարքերը փոխելու եւ Աստուծոյ շնորհուած իմաստութեան եւ զգաստութեան ծանօթացնելու եւ Աւետարանի խոստումին ընտանի դարձնելու համար զանոնք» (անդ, 589):

Ապա Տրդատ ժողով կը գումարէ մեծամեծներու հետ եւ կ'ըսէ. «Եկէք, Աստուծոյ մեզի կեանքի առաջնորդ շնորհուած Գրիգորը հովիւ կարգենք մեր վրայ, որպէսզի Լուսաւորէ զմեզ ՄԿԸՏՈՒԹԵԱՄԲ եւ նորոգէ Արարչին օրէնքներով եւ խորհուրդով» (անդ, 591): Ուրեմն իր նախաձեռնութեամբ եւ իշխանական մեծ շքախումբով մը Գրիգոր Կեսարիա կը ղրկուի ձեռնադրութեան համար: Վերադարձին, Տարօնի քարոզութենէն յետոյ, երբ կ'ուղղուի դէպի Վաղարշապատ, Տրդատ ընդառաջ կուգայ անոր մինչեւ Բազաւան կամ Բագրեւանդ: Այստեղ է, որ Եփրատի արեւելեան ճիւղը եղող Արածաւնի գետի ակունքներուն մօտ կը կատարուի Տրդատի, Աշխէնի, Խորովի գոլխտի, բոլոր պալատականներու բանակի եւ անթիւ ժողովուրդի մկրտութիւնը, յետ ամօրեայ քարոզութեան եւ ասպշխարանքի, 303 թուի Յունուար 6ին, ճիշդ մեր Փրկչի Աստուածայայտնութեան (Մկրտութեան) օրը: Ըստ աւանդութեան՝ մկրտութենէն յետոյ իր անունն ալ փոխուելով կը կոչուի Յովհաննէս, յանուն Յովհ. Մկրտչի, որուն նշխարներէն մաս մըն ալ Բագրեւանդ բերած էր Լուսաւորիչ, եւ ուր ապա կառուցուեցաւ պատմական Յովհաննավանքը: Մկրտուած բանակին թիւը 15 բիւր կը նկատէ Ագաթանգեղոս, իսկ Լուսաւորչի ձեռքով մկրտուածներու ամբողջութիւնը՝ 40 բիւր, որ հաւասար է չորս միլիոնի:

«Իսկ թագաւորն Տրդատ, իր տէրութեան մէջ գտնուող ամէն մարդու վրայ այս ուխտը (կրօնական պարտականութիւնը) կը

դնէր, որ ամէն մարդ առանց երկմտութեան Աստուծոյ՝ Հրամաններուն հնազանդ մնայ եւ հաւատայ Անոր արարչութեան ամբողջ սրտով» (անդ. 634):

Տրդատի մեծազորութիւններէն մէկը եղաւ իր անձամբ եւ զործնական մասնակցութիւնը Հռիփսիմեանց վկայարաններու եւ էջմիածնի տաճարի կառուցման մէջ: Կ'ըսէ Ագաթանգեղոս, թէ Տրդատ Մասիս լեռնէն բերաւ «անտաշ, խոշոր, ծանր, երկայն, ստուար եւ մեծամեծ ութ քարեր, իր կռնակին վրայ» (անդ, 572), որոնք զործածուեցան նորակառոյց եկեղեցիներու համար:

Տրդատ իր թագաւորական իշխանութեամբ Քրիստոնէութիւնը արքունիքին եւ հետեւաբար նաեւ ամբողջ իր տէրութեան պաշտօնական կրօնքը կը հռչակէր, հեթանոս կուսապաշտութեան խափանուիլը կը հրամայէր...: Իսկ Տրդատի քաջագործութիւններէն մէկն ալ իր պատերազմն է Մաքսիմիանոս Դաժ կայսեր հետ: Այս ժամանակներ Հռոմէական կայսրութեան Արեւելեան բաժնին մէջ կ'իշխէր Մաքսիմիանոս Գաղերիոս Դաժ, հակառակ Արեւմուտքի մէջ Կոստանդիանոսի հանած Միլանի հրովարտակին՝ դադրեցնելու քրիստոնէից հալածանքը, այս վերջինս կը շարունակէր իր հալածանքները Արեւելքի մէջ: Իմանալով, որ քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ մեծ յաջողութիւն գտած է, Հայոց դէմ պատերազմի ելաւ: Բայց ձախողեցաւ իր նպատակին մէջ, որովհետեւ Հայեր, իրենց վրայ եկած բանակը պարտութեան մատնելով, դուրս վտարեցին իրենց երկրէն:

Սկզբնաղբիւր Ագաթանգեղոս, առանց պատմելու Տրդատի մահը, հետեւեալ ձեւով վերջաւորութեան կը բերէ Տրդատի վարքը.

«Աստուածասէր թագաւորը Տրդատիոս Քրիստոսի հաւատացող աշակերտի մը ոգիով ծառայեց բարեպաշտութեամբ եւ դարձաւ երկիւղած անձ մը. տեղեկացաւ ու վարժուեցաւ աստուածային հրամաններուն եւ հաճելի եղաւ իր օրինապահ վարքով եւ բարի օրինակ դարձաւ ամբողջ երկրի համար... ընդունեց նաեւ երկնային պարգեւներու շնորհը, որով անմիջապէս լուսաւորուեցաւ եւ թափանցեց աստուածատուր հրամաններու իմաստին եւ ամեն պատրաստութեամբ ինքզինք զարդարելով, ըստ աւետարանական կանոններու, դարձաւ մարդասէր անձ մը Աստուծոյ ծառայութեան մէջ: Մերկացաւ հեթանոսական ցանկութիւն-

ներէ. պարծանքի նշան խաչը յանձն առնելով՝ ամենքին կեանք պարգեւող Խաչեալին հետեւեացաւ եւ Քրիստոսի խաչակիր գունդին խառնուեցաւ: Իր անձը պաշտօնով եւ աղօթքով սանձեց, մշտամրմունջ աղօթք եւ բազկատարած պաղատանքներ կ'ուղղէր առ Աստուած եւ շարունակ կ'արտասուէր իր երկրին համար: Նմանապէս իր անձին համար ալ շարունակ խնդրանք կը մատուցանէր, որպէսզի չյիշուին իր նախկին անգիտութեան մէջ գործած մեղքերը:

Մեծապէս նպաստեց Աւետարանի քարոզութեան եւ տարածման գործին. վայելչութեամբ ծառայեց Աւետարանին: Այսպէս խրատուելով եւ զգաստացած՝ իր կրօնաւորական վարքով կը յառաջադիմէր ամէն ուղղութեամբ՝ ամէն տեսակ բարեգործութիւններուն մէջ: Առաւել եւս կը զօրանար եւ կը սատարէր աւետարանչական գործին» (անդ, էջ 635 [§ 863-865]):

Օրմանեան հետեւեալ խորհրդածութեամբ վերջաւորութեան կը բերէ Տրդատի պատմութիւնը (Ազգ. էջ 120).

«Հայոց դարձին պատմութեան մէջ, որչափ գործ եւ արդիւնք կը վերագրուի Գրիգորի, նոյնչափ մըն ալ պէտք է տալ Տրդատի, որ իրօք եւ ճշմարտութեամբ առաքելակիրք եւ լուսաւորչակիրք մը եղաւ Հայաստանի համար: Տրդատ իւր եռանդոս եւ նախանձայոյզ բնութեամբ, որչափ բուռն ու սաստիկ էր քրիստոնէութեան դէմ հալածանքներ մղած ատեն, նոյնչափ եւ աւելի սաստիկ եղաւ կռապաշտութեան դէմ վարած հալածանքներովը: Նա ոչ միայն ճշմարիտ քրիստոնէի, անկեղծ ապաշխարողի եւ գրեթէ ճգնաւորի կենցաղ մը կազմեց իրեն համար, «զի մի յիշեսցին մեղքն որ յառաջին տգիտութեանն, յայնժամ զոր ի հեթանոսութեան անդ գործէր» (Ա. Գ.Թ. 454), այլ եւ աշխատեցաւ, որպէսզի նորահաւատ Հայերուն, թէ մեծամեծներուն եւ թէ ռամիկ բազմութեան, ոչ միայն կրօնքն ու դաւանութիւնը փոխուած ըլլայ, այլ եւ «զի վկայեսցեն հաւատոյն ամենեցուն եւ գործքն» (ԽՈՐ. 181):

Տրդատ Թագաւոր ապրեցաւ շուրջ 90 տարի եւ Թագաւորեց շուրջ 56 տարի՝ հանդիսանալով այսպէս Հայոց ամենէն երկարակեաց եւ ամենէն երկայն ժամանակ իշխող Թագաւորը: Վախճանեցաւ 330ին,

Թունաւորուելով Հայ նախարարներուն կողմէ, ըստ Խորենացի պատմիչի, եւ Թագուեցաւ Թորդան գիւղը, Ա. Գրիգոր Լուսաւորչի կողքին:

Տրդատ Թագաւոր շատ հինէն անցած է սոսկի սուրբերու կարգը: Երեք Յայնմաւորքներու մէջ ալ յիշատակը նշանակուած է Սեպտ. 29ին: Իսկ ներկայիս մեր եկեղեցիին մէջ կը տօնուի Ե. զկնի Հոգ. նախորդ Շարաթ օրը իր Թագուհի Աշխէնի եւ քրոջ Խորովիդուխտի հետ:

Իր սօնին կ'երգուի ԹԱԳԱԻՈՐԱՅ յատուկ շարականի կանոնը. ունի իւրայատուկ ՄԱՆԿՈՒՆՔ շարական մը ըստ հետեւեալի.

Որ գերագոյն քան զբնութիւնս Հրաշագործեցեր, Որդի Աստուծոյ,

առ Թագաւորն Հայաստանեայց,

Գաւազանաւ քո բարկութեան գլխարկութիւնն յիմաստ փոխարկեալ,

վասն որոյ մանկունք եկեղեցւոյ յիշատակի սորա օրհնեն գՔեզ, Տէր:

Որ համանրման Բաբելացւոցն բռնաւորին

ի յանբանից փոխեալ կերպարան՝

յանբնական բռնութենէն նուաճելով զարքայն Տրդատ,

վասն որոյ մանկունք եկեղեցւոյ յիշատակի սորա օրհնեն գՔեզ, Տէր:

Որ ի ձեռքն մաղթանաց սրբոյն Գրիգորի

ի մարդկային բնութիւնս դարձուցեր

Յանասնեղէն ի բնութենէն նորաստեղծեալ զարքայն մեծ Տրդատ,

վասն որոյ մանկունք եկեղեցւոյ յիշատակի սորա օրհնեն գՔեզ, Տէր:

Թարգմանութիւն.

Որդի Աստուծոյ, դուն գերբնականօրէն

Հրաշք գործեցիր Հայոց Թագաւորին վրայ.

Քու բարկութեանդ գաւազանով
Անոր յիմարութիւնը իմաստութեան փոխեցիր,
Որուն համար Եկեղեցիի պաշտօնեաները
Կ'օրհնեն զքեզ, Տէր, ասոր յիշատակի օրը:

Բարեւացւոց բռնաւորին յար եւ նման
Անբաններու կերպարանքին փոխեցիր
Մեծն Տրդատ Թագաւորը.

Անասնական բռնութեամբ նուաճելով զայն,
որուն համար...

Սուրբ Գրիգորի մաղթանքներուն շնորհիւ
Մարդկային բնութեան վերածեցիր մեծն Տրդատ Թագաւորը.
Անասնեղէն բնութենէն վերստեղծելով զայն,
Որուն համար...

ՍԱՐԳԻՍ ԶՕՐԱՎԱՐ, ՈՐԴԻՆ ՄԱՐՏԻՐՈՍ ԵՒ 14 ԶԻՆՈՒՈՐՆԵՐ † 365 ?

Ս. Սարգիս ազգով Հայ չէ, ոչ ալ նահատակուած է Հայաստանի մէջ: Միւս եկեղեցիները մեծ կարեւորութիւն չեն տուած անոր յիշատակին եւ եթէ մինչեւ իսկ ի հնումն յիշատակած են զայն, այսօր գրեթէ մոռացութեան տուած են: Իսկ միւս կողմէն՝ նկատի ունենալով, որ մեր մէջ, ընդհակառակը, ամենէն մեծ ժողովրդականութիւն շահած սուրբերէն մէկն է, ուստի մենք կը դասենք զայն Հայազգի սուրբերու շարքին:

Յոյնը Ս. Սարգսի տօնը կանխող Առաջատրաց պահքի համապատասխան պահեցողութիւն մը չունին, ուստի Հայերէն պակաս բան մը ունեցած ըլլալու նուաստութիւնը իրենց վրայէն նետելու համար անարգական պատմութիւններ յօրինուած էին այս պահքի եւ Ս. Սարգսի մասին: Ասոր կ'ակնարկէ մեր Ծնորհալի Հայրապետը իր «Գիր Հաւատոյ խոստովանութեան» ընդարձակ գրութեան մէջ (ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ, էջ 105-106), ուր կը ներկայացնէ եւ կը պաշտպանէ Հայ եկեղեցիի դաւանանքը եւ սովորութիւնները, որոնց կարգին

նաեւ Առաջաւորաց պահքը, «զոր կը հայհոյէք դուք տգիտաբար»՝ կ'ըսէ Ս. Հայրապետը, եւ ինք համառօտիւ նախ կը բացատրէ Առաջաւորացը եւ ապա կը ներկայացնէ Ս. Սարգսի համառօտ պատմութիւնը՝ ըստ հետեւեալի:

«Մեր տօնած Սարգիսը բարեպաշտ իշխան մըն էր Կապադովկիոյ մէջ Մեծն Կոստանդիանոսի եւ անոր որդիին օրով, որուն յաջորդեց ամբարիշտ Յուլիանոսը: Սարգիս, Հալածուելով այս վերջինէն, անցաւ Պարսկաստան՝ Շապուհ Թագաւորի մօտ: Այնտեղ շատ մը զինուորներ քրիստոնէութեան դարձուցած ըլլալուն համար մարտիրոսութեան վճիռ ընդունեց իր որդիին հետ, նոյն Շապուհ Թագաւորէն: Եւ որովհետեւ իր վախճանման օրը հանդիպեցաւ Յունուար ամսուան 30ին, հետեւաբար անոր յիշատակը տօնել որոշեցին այն շաբաթ օրը, որ կը յաջորդէ Առաջաւորաց պահքին»:

Յայսմատրքները, սակայն, շատ ընդարձակ ձեւով կը ներկայացնեն Սուրբին վարքը, յատկապէս ԼԻԱԿԱՏԱՐը, որ տասը խոշոր երկհիւնակ էջեր տուած է անոր: Ըստ անոնց յաւելուածական տուեալներուն՝ Սարգիս ազգով «Հռովմ» էր եւ Մեծն Կոստանդիանոսէն «իշխան եւ սորատելաւտ» կարգուած էր Հայաստանի կից Կապադովկեան աշխարհին, որուն մայրաքաղաքն էր այսօրուան Գեւարիան: Օգտուելով Կոստանդիանոսի քրիստոնեայ կրօնքի հանդէպ ցոյց տուած պաշտպանութենէն՝ կը քանդէր հեթանոսական մեհնիւնները եւ կը շինէր եկեղեցիներ եւ կը շատցնէր քահանաները, իր ինչքերը սիրալոյսով կը բաշխէր աղքատներուն եւ կարօտեալներուն: Երբ Յուլիանոս Ուրացող Թագաւորեց, 360-363, աստուածային յայտնութեամբ Ս. Սարգիսին թելադրուեցաւ հեռանալ Հռովմէական կայսրութեան սահմաններէն: Նախ ապաստանեցաւ Հայաստան իր Մարտիրոս Որդիին հետ միասին: Սակայն Հայոց Թագաւորը, վախնալով Յուլիանոսէն, թելադրեց անոր անցնիլ Պարսկաստան եւ մտնել Շապուհ Թագաւորի (310-379) ծառայութեան մէջ: Ու արդարեւ մեծ անուն հասնեց իբր քաջ զօրավար:

Երբ Թագաւորը իմացաւ, որ Սարգիս իր բանակի զինուորները քրիստոնեայ կ'ընէ, իր մօտ կանչեց եւ հրամայեց, որ զոհ մատուցանէ կրակին: Սարգիս ըսաւ, որ ինք կը հաւատայ մէկ Աստուծոյ, Ամենա-

սուրբ Երրորդութեան, որ ստեղծած է երկինքն ու երկիրը: Իսկ կրակը կամ կուռքերը ի բնէ աստուած չեն. ինք իբրեւ Հողեղէն մարդ կրնայ փճացնել զանոնք: Նոսքէն գործի անցնելով՝ կործանեց կրակի բազինը եւ մարեց զայն: Զայրացան մոգերը եւ ամբողջ եւ յարձակելով Սարգսի եւ Որդւոյն վրայ՝ քարով, փայտով, աքացիով եւ բուռնցքով սկսան ծեծել ու չարչարել զանոնք: Այս խառնիճաղանճին զոհ գնաց Մարտիրոս, որ կոխկռտուելով ընդունեց մարտիրոսական պսակը հօրմէն առաջ:

Իսկ Սարգիս ազատուեցաւ Թագաւորի հրամանով եւ բանտ առաջնորդուեցաւ այն յոյսով, որ կրնար զղջալ եւ կրակապաշտ դառնալ, եւ Թագաւորը կը շարունակէր օգտուել անոր զինուորական կարողութիւններէն: Բայց Սարգիս Զօրավար Հաստատ մնաց իր հաւատքին մէջ, ուստի գլխատման վճիռ արձակուեցաւ: Երբ գլխատման տեղը Հասաւ, այսպէս աղօթեց.

«Ով Տէր, Քրիստոս Աստուած իմ, անոնք որ կը յիշեն իմ անունս իրենց նեղութեան մէջ եւ կը կատարեն իմ նահատակութեանս յիշատակը ուխտով եւ պատարագով, ինչ որ ուզեն քեզմէ, լսէ անոնց եւ շնորհէ անոնց խնդրանքը: Այն ատեն երկինքէն ձայն մը եկաւ, որ կ'ըսէր. Պիտի տամ քու խնդրածդ եւ պիտի կատարեմ աղաչանքդ, իսկ դուն եկար՝ վայելէ քեզի Համար պատրաստուած բարիքներ» (ՄԱՐԶՈՒԱՆՑԻ, էջ ԳՃԽԷ: ԼԻԱՎԱՏԱՐԻ մէջ շատ աւելի ընդարձակ է Ս. Սարգսի խնդրանքը, էջ 123 Բ. սիւնակ):

Ապա դահիճը կտրեց անոր գլուխը, եւ անմիջապէս լոյս ծագեցաւ անոր վրայ, զոր տեսնելով իր Պարսիկ զօրականներէն 14 Հոգի, որոնք հաւատարմօրէն իրեն կը հետեւէին, աւելի Հաստատուեցան իրենց քրիստոնէական հաւատքին մէջ: Ասոնք վերցուցին անոր մարմինը եւ պատեցին մաքուր կտաւներու մէջ պատուով Թաղելու Համար: Թագաւորը երբ իմացաւ, հրամայեց զանոնք ալ նահատակել: Երբ բոլորովին փճացնել կ'ուզէր բոլոր նահատակներուն մարմինները, լուր եկաւ, որ Թշնամին իր երկիրը մտած է. մոռցաւ մարմինները եւ պատերազմի դնաց: Այն ատեն հաւատացեալներ գիշերանց եկան վերցուցին բոլոր նահատակներու մարմինները եւ պատուով Թաղեցին Համիան կոչուած քաղաքը:

Մեր Յայսմաւորքները ունին նաեւ հետեւեալ յաւելուածական ծանօթագրութիւնը. «Նահատակուեցաւ Ս. Սարգիս Մազընդարան (Պարսկաստան), Դաղման կոչուած քաղաքի մօտ: Հաւատացեալներ, վերցնելով անոր մարմինը, տարին ու պատուով դրին Համիան քաղաքը: Եւ յետոյ Մեսրոպ մեծ վարդապետը վերցուց Ս. Սարգսի մարմինը եւ տարաւ Կարբի եւ պատուով Թաղեց ու այնտեղ շինեց Հռչակաւոր վանք մը: Եւ անոր ակռաներէն մէկն առնելով՝ տարաւ Վրաստան «ի դաշտն Գագայ եւ դրաւ» խաչափայտի մէջ ու խաչն ալ օծելով կանգնեց Գագայ բլուրին գագաթը, որ մինչեւ օրս կը կոչուի Գագայ Ս. Սարգիս, որ մեծամեծ սքանչելիքներ եւ հրաշքներ կը գործէ դերեալներուն, բանտեալներու եւ հիւանդներուն վրայ»: Այս դէպքերը Շնորհալիի յօրինած Ս. Սարգսի շարականին մէջ ալ յիշուած են: Մինչեւ իսկ կրակապաշտ Պարսիկներ կը կոչէին զայն «Անյաղթ վկայ եւ կատարիչ ամենայն խնդրուածոց»:

Արեւմուտքի մէջ Ս. Սարգիսը տօնած են իբրեւ Կեսարացի սուրբ Փետր. 24ին: Իսկ յոյներ՝ Յունուար 20ին: Մեր Յայսմաւորքները կը նաշանակեն Յունուար 31ին: Իսկ ներկայիս կը տօնենք Առաջաւորաց պահքին յաջորդող Շաբաթ օրը. այս պատճառով այդ պահքը յաճախ եւ սխալմամբ կը կոչուի նաեւ Ս. Սարգսի պահք: Իսկ երբ Տեառնընդառաջը այդ օրը կը հանդիպի, այն ատեն Ս. Սարգիսի տօնը կը միանայ Ատոմեանց հետ եւ կը փոխադրուի յաջորդ Բշին: Այս կը պատահի Ս տարեգիրին, ինչպէս արդարեւ պատահեցաւ այս տարի 1981ին: Տարեգիրը Ա-Դ եղած ատեն կը տօնուի Յովհ. Կարապետի տօնին յաջորդող Երկուշաբթի օրը, Առաջաւորաց պահքէն առաջ:

Ունի լման կանոն մը Ծարակնոցի մէջ, որմէ Օրհնութեան առաջին տունը կը դնենք այստեղ.

ԾԱՐԱԿԱՆ Ս. ՍԱՐԳՍԻ

Ամենասուրբ Երրորդութեանն ընտրեալ ծառայ եւ
Հաւատարիմ,

Յաղթող սպառազէն եւ քաջ նահատակ.

Արագահաս Սուրբ Սարգիս, շնորհաց օրհնան,

Քրիստոսի բարեխօսէ ամենքիս Համար:

Թարգմանութիւն.

Ամենասուրբ Երրորդութեան ընտրեալ եւ հաւատարիմ ծառայ,
Յաղթող զինաւոր եւ քաջ նահատակ,

Աբազահաս Սուրբդ Սարգիս, շնորհաց օրհուան,

Քրիստոսի բարեխօսէ ամենքիս համար:

ԱՏՈՄԵԱՆՔ 449

Երբ նահատակեալ Հայ զօրականներու մասին կը սկսինք խօսիլ, ամենէն առաջ պարտինք յիշել ՎԱԶԷՆԱՆԵՆԵՐԸ, նախարարազուն զօրավարներ, եւ բազմաթիւ Հայազգի զօրականներ, որոնք ՎԱԶԷ Մամիկոնեան զօրապետի առաջնորդութեամբ բազմաթիւ յաղթանակներ տանելէ եւ ներքին ու արտաքին թշնամիները հայրենիքէն վանելէ յետոյ օրուան Կաթողիկոսը՝ Վրթանէս Հայրապետ, տարեկան յիշատակութեան արժանի ըրաւ զանոնք, որովհետեւ ինկած էին «յաղագս [Հայաստան] աշխարհի, եկեղեցւոյ եւ աստուածագործ օրինաց», ուստի ըսաւ ազգասէր Հայրապետը. «Օրէնք պիտի դնենք մեր երկրի մէջ, որ անոնք մշտական յիշատակութեան արժանանան, իբրեւ Քրիստոսի նահատակեալները տարուէ տարի»: Եւ աւելցուց Ս. Հայրապետը. ոչ միայն Վաչէեանք, այլ նաեւ բոլոր անոնք, «որոնք հայրենիքի փրկութեան համար կը մեռնին անոնց նման», անոնք ալ ասոնց հետ յիշատակուին:

Այսօր Վաչէեանց անունով տօն չկայ: Կը կարծուի, որ սկզբնապէս Վարդանանց յիշատակն ալ ասոնց հետ խառնուած էր, որոնք սակայն Նիշիւի եւ Փարպեցիի ծանօթ պատմական գիրքերու շնորհիւ աւելի փառաւոր տեղ գրաւեցին ազգին մէջ, եւ Վաչէեանց յիշատակը ընկղմեցաւ ասոնց մէջ:

Պէտք էր յիշատակէինք նաեւ այն քաջարի եւ բարձրաստիճան չորս զօրականները, որոնց անունները դժբախտաբար չեն յիշուած պատմութեան մէջ, որոնք, սակայն տանջանքներու ենթարկուելով, նահատակուեցան Վարդանանց շարժումի նախընթաց հալածանքի օրերուն: Յիշատակութեան արժանի էր նաեւ «այրն երանելի, որում անուն էր ԳԱՐԵԳԻՆ», որ համարձակեցաւ Յաղկերտը յանդիմանել, երբ սա կը հեգնէր Քրիստոսը, իբրեւ Խաչի անարգական մահուամբ

մեռած մէկը: Գարեգին ըսաւ. «Ինչո՞ւ չես յիշեր անոր Յարուսթիւնը, Համբարձումը եւ վերստին Գալուստը իբրեւ ընդհանուր դատաւոր մարդկութեան»: Յաղկերտ կատողած հրամայեց զայն տանջանքի ենթարկել ու նահատակել: Այս ալ խառնուած պէտք էր ըլլար Վարդանանց զօրավարաց մէջ, եւ հաւանաբար «Յատաշաղէմն» կոչեցեալ այս Գարեգինը միաձուլուած ըլլայ Գարեգին Սրուանձտեան նախարարին հետ, որ ինկաւ Աւարայրի ճակատամարտին մէջ:

Մենք այժմ անդրադառնանք ԱՏՈՄԵԱՆՔ ԶՕՐԱՎԱՐԱՑ, որոնք ցայսօր կը յիշատակուին մեր Տօնացոյցի մէջ եւ անցած են Յայսմաւուրքի: Ասոնց գլխաւորներն են Ատոմ Գնունի եւ Մանաճիհր Ռշտունի նախարարները, որոնք Վարդանանց շարժումէն առաջ կը ծառայէին Պարսիկ հրամատարութեան ներքեւ իրենց գունդերով. հրաման ստացան Պարսից Թագաւորէն Պարսկաստանի խորերը երթալ: Ասոնց միտքերը պղտորեցան եւ փոխանակ որոշեալ տեղը երթալու, Հայրենիք վերադարձան: Սակայն ճամբան Պարսկական հսկայ բանակի մը դէմ առ դէմ եկան, դիմադրելը անօգուտ տեսան, ուստի իրենց զէնքերը վար դրին եւ կամաւոր նահատակութեան յանձնառու եղան, քանի որ Պարսիկները հրաման առած էին ուրացութեան մղել զանոնք, եւ հակառակ պարագային՝ նահատակել: Ասոնք նահատակուեցան Վանի հարաւային կողմը գտնուող Անձեւացեաց եւ Ռշտունեաց գաւառներու մէջ: Ասոնց մէջ բացի վերոյիշեալներէն անունով ծանօթ են նաեւ Ատոմի որդին՝ Վարս Գնուհի, ինչպէս նաեւ Վարս Ուտաւհիկ, Ներսէհ Երուանդուհի եւ Վարձաւոր Արծրուհի, «սուրբ ընկերներու բազմութեամբ»: Ուրեմն՝ ասոնք երկու նախարարական հեծեալ գունդեր էին, միասնաբար շուրջ հազար հոգի:

Կը տօնուին բուն բարեկենդանը կանխող երկրորդ շաբթուան Երկուշաբթի օրը:

Իսկ Յայսմաւուրքներ կը նշանակեն Օգոստոս 19ին:

Սկզբնաղբիւրք. Սոփերք [ԺԹ. էջ 69-82] եւ Վարք Սրբոցներ:

[Տե՛ս նաեւ՝ Ի. Արուլաձէ, նշւ. աշխ., էջ 95-113: Յովհ. Թորոսեան, Ատոմեանց նահատակութեան ժամանակն ու այլ Հանգամանք, «Բազմավէպ», 1988, էջ 396-400]:

Ունին իւրայատուկ ՄԱՆԿՈՒՆՔ շարական մը, որուն առաջին

տաւնը կը դնենք այստեղ.

Աղաչեմք զքեզ, Տէր, բարեխօսութեամբ Սրբոց Ատովմեանց,

Որք նահատակեցան ճակատամարտ պատերազմի,

Յաղթողք գտան ընդդէմ թշնամւոյն.

Բարեխօսութեամբ սոցա, Քրիստոս, խնայեա ի մեզ:

Թարգմանութիւն.

Կ'աղաչենք քեզ, Տէր, բարեխօսութեամբ Ա. Ատոմեանց,

Որոնք նահատակեցան պատերազմի ճակատին մէջ,

Յաղթական եղան թշնամիին դէմ.

Ասոնց բարեխօսութեամբ խնայէ՛ մեզի, Քրիստոս:

ԵՐԿՐՈՐԴ ԿԱՄ ՆՈՐ ԱՏՈՄԵԱՆՔ † 853

Նահատակուեցան թ զարու կէսերուն, Հայոց Յովհաննէս Ովայեցի (833-855) Կաթողիկոսի օրով, երբ երկիրը կը գտնուէր Արաբական իշխանութեան ներքեւ: Այս ժամանակները Բուղա անուն արիւնարբու եւ անգութ կառավարիչ մը ղրկուած էր Հայաստան բազմաթիւ արաբ զօրքերով, որոնք ամենուրեք կ'աւերէին, կը թալանէին եւ դերի կը վարէին երկրի բնակիչները: Ասոնց մէջ վայելուչ եւ ճարտար երիտասարդ կը զատէին եւ կառավարիչին կը բերէին: Բուղա կոչ ուղղեց այս երիտասարդներուն ուրանալ Քրիստոսը եւ ընդունիլ մահմէտականութիւնը եւ խոստացաւ անոնց մեծամեծ պատիւներ:

Ասոնք քաջաբար պատասխանեցին. «Անհնար է մեզի համար փոխանակել լոյսը խաւարին հետ»: Ասոր վրայ բանտ զրկեց զանոնք եւ չարչարանքի ենթարկեց: Ասոնք սակայն իրենց միտքը դրած էին նահատակուիլ իրենց հաւատքին համար, հետեւաբար շարչարանքները եւ Բուղայի սպառնալիքները արհամարհանքով կը դիմաւորէին: Ի վերջոյ՝ անգութ կառավարիչը հրամայեց չարաչար սպաննել զանոնք: Արդարեւ, դահիճները կա՛մ դիտմամբ, կա՛մ անվարժութեամբ փոխանակ մէկ հարուածով անոնց գլուխները կտրելու, բազմաթիւ հարուածներով եւ կտրատելով տառապալից մահուամբ վերջ կուտային անոնց կեանքին:

Նահատակուողները թիւով աւելի քան 150 էին, որոնց մէջ ամենէն նշանաւորն է Ատոմ Աճճեւացի, զոր վեց ընկերներով ամենէն վերջը պահեց բռնաւորը՝ այն յոյսով, որ տեսնէին ահաւոր կոտորածը իրենց միւս ընկերներուն եւ թերեւս փոխէին իրենց միտքը: Սակայն ասոնք անդրդուելի մնացին հաւատքին մէջ եւ մի առ մի նահատակուեցան 853ին Դուին քաղաքին մէջ: Անձեւացի Ատոմի եօթը ընկերներէն անունով կը յիշուին, Մլեմ Վարաժնուցի, Գէորգ Բողկացի եւ Վասակ Ակեացի: Ուրեմն անոնք ալ իրենց գլխաւորին ԱՏՈՄԻ անունով կոչուած են ԱՏՈՄԵԱՆ ՆՈՐ ՎԿԱՆԵՐ: Օրուան Կաթողիկոսը յատուկ տօն նշանակած է այս նահատակներուն համար՝ Նոյեմբեր 17ին: Ներկայիս այս տօնախմբութիւնը խափանուած է, թերեւս միացած ըլլալով Առաջին Ատոմեանց հետ: Յայսմատրքները ասոնց նահատակութիւնը կը դնեն Մարտ 3ին:

Սկզբնաղբիւր. Յովհ. Պատմաբան Կաթողիկոս:

ՎԱՐԴԱՆԱՆՔ † 451

Հինգերորդ զարու կիսուն Պարսից Յազկերտ Բ. թագաւորը, ուզելով իր կայսրութեան ներքեւ գտնուող Քրիստոնեայ ազգերը անջատել Բիւզանդական կայսրութենէն, հրահանգ հանեց, որ անոնք ընդունին Պարսկական կրօնքը, որուն պաշտամունքի գլխաւոր առարկան կրակն էր, եւ այդ իսկ պատճառով ծանօթ էր իբրեւ կրակապաշտութիւն: Հայեր պաշտօնական ժողով մը գումարեցին Աշտիշատ քաղաքին մէջ, մերժեցին այս հրահանգը: Այս ժողովին կը մասնակցէին երկրին գրեթէ բոլոր Եպիսկոպոսները, օրուան Կաթողիկոս Յովսէփ Հողոցմեցիի գլխաւորութեամբ, ինչպէս նաեւ «Քորեպիսկոպոսներ, պատուական երէցներ, աւագ վանականներ, եկեղեցիի Ս. Ուխտով միասին», ինչպէս նաեւ անունով յիշուած 18 հայ իշխաններ: Ասոնք հաստատելով հանդերձ, որ հպատակ ժողովուրդի մը բոլոր պարտականութիւնները լրիւ պիտի շարունակեն կատարել, սակայն միաժամանակ պատասխանեցին, որ վճուած են իրենց կրօնքէն չի հրաժարիլ եւ կրակի պաշտամունք չմատուցանել, ոչ ալ՝ բնութեան տարրերուն ծառայել:

Ժխտական այս պատասխանին վրայ Հայ նախարարներու գլխա-

և որններէն 10 հոգի, ինչպէս նաեւ դրացի Քրիստոնեայ ազգերու իշխանները, Պարսից մայրաքաղաք Տիզբոն կանչուեցան: Այնտեղ ամենախիստ սպառնալիքներով երկընտրանքի առջեւ դրուեցան՝ կամ ընդունելու Պարսկական կրօնքը եւ կամ յանձն առնելու աքսոր, բանտ, մինչեւ իսկ՝ մահը: Ծանր տագնապի մատուցեցան քրիստոնեայ իշխանները. մեծամասնութիւնը կեղծուրացութեամբ այս թակարդէն դուրս գալու կողմնակից էր: Այս գաղափարին դէմ երկար դիմադրեց Վարդան, բայց ի վերջոյ ինքն ալ տեղի տուաւ, եւ ամենքն ալ երեսանց ընդունելով կրակապաշտութիւնը, ազատ արձակուեցան:

Ոմանք կ'արդարացնեն այս ուրացումը, սակայն արդարանալի ոչ մէկ պատճառ ունի աւետարանական չափանիշներով: Ուրացումը ուրացում է, ինչ պատճառներով ալ նեղած ըլլայ: Վարդան երբեք ինքզինքին չներեց նման նուաստացում մը: Ասկէ ազատուելու միակ միջոցը գտաւ քրիստոնէական դատին համար նահատակուելուն մէջ:

Հայաստանի մէջ երբ իմացան ուրացութեան այս լուրը, եկեղեցականներ գործի լծուեցան եւ ամէն կողմ ջրուելով՝ ժողովուրդը դիմադրութեան դրդեցին թէ՛ մոգերու եւ թէ՛ ուրացող նախարարներու դէմ՝ «Աստուածային Օրէնքը թագաւոր պիտի ըլլայ ամենքիս վրայ» կարգախօսով:

Ուրացեալ նախարարներ եւ մոգեր Հայաստան մտան երկրին արեւելեան կողմէն, Արարատ լեռան հարաւէն, Անգղ անունով լաւ պաշտպանուած գիւղաքաղաք մը, ուր հաւաքուած էին դիմադրելու տրամադիր եռանդուն խմբակներ Ղեւոնդ Երէցի գլխաւորութեամբ: Կիրակի օր մը, երբ մոգեր փորձեցին այս գիւղին եկեղեցին քանդել, կրակի պաշտամունքը հաստատուելու համար, Ղեւոնդ Երէց եւ իր մարդերը ուժգնօրէն դիմադրեցին ու հալածեցին մոգերը իրենց սահմաններէն: Ասիկա նախանշանը եղաւ ապստամբական շարժումի մը, որով վարակուեցաւ գրեթէ ամբողջ ժողովուրդը եւ երկրէն դուրս քշեցին Պարսիկ պետութեան բոլոր ներկայացուցիչները:

Յաջորդ տարին, 451ին դարնան, պարսկական հսկայ բանակը (աւելի քան 200.000 հոգի) Հայաստան մտաւ ջախջախելու համար ապստամբութիւնը եւ պարտադրելու համար կրակապաշտութիւնը: Վարդան Մամիկոնեան իրեն համախոհ իշխաններով եւ եկեղեցականներու թեւ-թիկունքով այս բանակին դէմ ելաւ 66.000 կամաւորներով,

որոնք բաղդատմամբ պարսկական բանակին ո՛չ պահանջուած գինուորական պատրաստութիւնը, ո՛չ ալ անհրաժեշտ զէնքերն ունէին: Պատերազմի նախօրեակը, աւելի շիտակ՝ նախագիշերը հոգեւոր պատրաստութեամբ անցաւ: Ամբողջ բանակը հաղորդուեցաւ Ս. Պատարագին: Յաջորդ օրը Վարդան եւ իր զինակիցները յարձակումի անցան՝ աւելի մարտիրոսանալու եռանդով, քան յաղթանակ շահելու նպատակով: Վասակ իր գունդով թշնամիին կողմը անցաւ՝ ժառանգելով ուրացողի եւ դաւաճանի տիտղոսները: Վարդան եւ իր զէնքի ընկերներէն 9 զօրավար եւ 287 մարդ ինկան այդ պատերազմի մէջ իբրեւ հերոս ու նահատակ: Իսկ Պարսիկներ կորսնցուցին 3544 մարդ եւ 10 զօրավար: Թէեւ պատերազմը մէկ օր տեւեց, բայց շարունակուեցաւ դիմադրական շարժումը, որու ընթացքին եւս բազմաթիւ նահատակուողներ եղան, որոնց ընդհանուր թիւը բարձրացաւ 1036 հոգիի:

Նահատակ 9 զօրավարներու անունները եւ իրենց հետ Աւարայրի դաշտին մէջ ինկող գինուորներուն թիւը պահուած է պատմութեան մէջ՝ ըստ հետեւեալի.

- | | |
|--------------------------|------------------|
| 1.- Վարդան Մամիկոնեան | 133 զինակիցներով |
| 2.- Խորէն Խորխոռունի | 19 զինակիցներով |
| 3.- Արտակ Պալունի | 57 զինակիցներով |
| 4.- Տաճատ Գնթունի | 19 զինակիցներով |
| 5.- Հմայեակ Դիմաքսեան | 22 զինակիցներով |
| 6.- Ներսէս Քաջբերունի | 7 զինակիցներով |
| 7.- Վահան Գնունի | 3 զինակիցներով |
| 8.- Արսէն Ընծայեցի | 7 զինակիցներով |
| 9.- Գարեգին Սրուանձտեանց | 10 զինակիցներով |

Պատմութիւնը կը հաստատէ, որ Աւարայրի ճակատամարտը եւ հետեւաբար Վարդանանց նահատակութիւնը տեղի ունեցած է (451 թուի) Մայիս 26ին: Սակայն ՅայսմաւորքԱնդր ասոնց տօնը կը նշանակեն Օգոստ. 7ին: Իսկ ներկայիս մենք Վարդանանց տօնը կը կատարենք Բուն Բարեկենդանը կանխող Հինգշաբթիին: Իսկ Տեառն-ընդառաջը, որ անփոփոխ կերպով Փետր. 14ին կը կատարուի, եթէ հանդիպի վերոյիշեալ Հինգշաբթիին, այն ատեն Վարդանանց տօնը կը փոխադրուի նախընթաց Բշին:

Սկզբնադիրներ. Եղիշէ եւ Ղազար Փարպեցի պատմագիրներ:

Վարդանանք ունին շարականաց լրիւ կանոն մը, որուն Օրհնութեան շարականէն յառաջ կը բերենք հետեւեալ երկու տունները.

Նորահրաշ պսակաւոր եւ զօրագլուխ առաքինեաց,

Վառեցար զինու հոգւոյն արիաբար ընդդէմ մահու

ՎԱՐԴԱՆ, քաջ նահատակ, որ վանեցեր զԹշնամին,

Վարդագոյն արեամբդ քով պսակեցեր զեկեղեցի:

Ռամկական խոմբ հազարաց եւ երեսնից թիւ ընդ վեցից,

Որք ընդ նոսին նահատակեալք արիաբար պատերազմաւ

Եւ հեղին զարիւնս իւրեանց նորոգումն եկեղեցոյ.

Ընդ նոսին պսակուելով ի յերկնաւոր հանդիսադրէն:

Թարգմանութիւն.

Հրաշալի պսակաւոր եւ զօրապետ արիներու,

Քաջաբար դուն զինուեցար հոգւոյն զէնքով մահուան դիմաց.

Վարդան, քաջնահատակ, որ վանեցիր չար թըշնամին,

Վարդագոյն քու արիւնովդ պսակեցիր եկեղեցին:

Ռամկական դասք զինուորաց թիւով հազար երեսունվեց,

Որոնք ինկան արիաբար նահատակուած պատերազմին,

Ու թափեցին իրենց արիւնն եկեղեցին նորոգելու

Ասոնց հետ պսակուեցան մեր երկնաւոր թագաւորէն:

ՎԱՀԱՆ ԳՈՂԹՆԱՑԻ 700-737

Արտառուէ է Վահանի վկայաբանութիւնը եւ անոր կեանքը, Հայ ոգիի, հաւատքի, պարկեշտութեան եւ մտայնութեան բարացուցական մէկ արտայայտութիւնն է:

Իր օրով Արաքներ կը տիրեն Հայաստանին. օրուան իշխանաւորն է Ոկրայ կոչուած Արաք նշանաւոր զօրավարը, որուն գլխաւոր նպատակը կ'ըլլայ ջնջել նախարարական տունները, որոնք Հայոց քաղաքական ու աշխարհիկ առաջնորդներն էին, իւրաքանչիւրը իր գաւառին եւ շրջանակին մէջ: Արդարեւ Ոկրայ 704 թուին, նենգութեամբ

Նախիջեւան քաղաքին մէջ հաւաքելով Հայ նախարարները, եկեղեցիի մէջ այրել կուտայ զանոնք ամբողջութեամբ: Իսկ անոնց ընտանիքներն ալ գերի կը զրկէ Դամասկոս, որ Հայաստանի տիրող ամիրապետներուն մայրաքաղաքն էր: Այս գերեւալներուն մէջ էր չորս տարեկան Վահան մանուկը, որ Նախիջեւանի մէջ այրած Գողթնեաց գաւառի Խոսրով իշխանին որդին էր: Դամասկոսի մէջ իսլամական կրթութիւն կը ստանան այս անչափահաս տղաքները, որոնց մէջ աչքի կը զարնէր Վահան իր ուշիմութեամբ եւ յառաջդիմութեամբ, եւ որուն անունը փոխուած էր Վահապի: Իր դաստիարակութիւնը աւարտելէն յետոյ կը կարգուի Ամիրապետի դիւանագիր: Վահապ թէեւ բարոյսով իսլամացած եւ գրեթէ արաբացած՝ բայց տեղեակ էր իր հայկական ծագումին եւ քրիստոնեայ մկրտուած ըլլալուն եւ իշխանական տունէ սերելուն:

Յովհաննէս Օձնեցի մեծանուն կաթողիկոսի միջնորդութեամբ երբ ընդհանուր ներում եւ վերադարձ շնորհուեցաւ Քրիստոնէից 719ին հօմէր Ամիրապետի կողմէ, Վահան փափաքեցաւ օգտուիլ այս ներումէն:

«Հօմէր ամիրապետ յատուկ սէր մը ունէր իր երիտասարդ դիւանագիրին (Վահապին) վրայ եւ չուզեց զայն հեռացնել [իր քովէն.] (Ազգ. էջ 848):

Ի վերջոյ Վահան խոստացաւ վերադառնալ Դամասկոս, միայն խնդրեց, որ երթայ անգամ մը տեսնէ իր հայրենիքը, տիրանայ իր հօրենական ժառանգութեան, գործակալներ նշանակէ իր կալուածներուն վրայ:

Ամիրապետը ի վերջոյ կը զիջանի, եւ Վահան հայրենիք կը վերադառնայ 719ին: Յաջորդ տարին կը մեռնի հօմէր: Վահան վերադառնալու իր խոստումէն ազատ կը զգայ ինքզինքը եւ կը մնայ հայրենիք եւ կ'ամուսնանայ Սիւնեաց իշխանի աղջկան հետ: Վերստին կը քրիստոնէանայ եւ սրտանց կը կապուի իր նոր հաւատքին եւ իբրեւ Գողթնեաց գաւառի իշխան՝ երկար տարիներ խաղաղ կերպով կը կառավարէ իր երկիրը, միաժամանակ ապաշխարողի կեանք վարելով իր անգիրտակից եւ ակամայ ուրացումին համար:

Ի վերջոյ Վահան կը փնտռուի Դամասկոսի արքունիքէն, եւ անոր վերադարձը կը պահանջուի: Ասոր վրայ Վահան կ'որոշէ, մինչեւ իսկ

իր ընտանիքէն դադարեմ, հեռանալ Հայաստանէն՝ անցնիլ Յունական բաժինը եւ այնտեղ ազատաբար պաշտել իր վերադատած կրօնքը, որուն կապուած էր հոգեւին: Իր մտադրութիւնը գործի վերածելով՝ գիշեր մը կը հեռանայ իր տունէն 20 ձիաւորներու ընկերակցութեամբ: Իր կինը իր հօր՝ Սիւնեաց իշխանին, լուր կը ղրկէ եւ Վահանին անյայտանալը կը հաղորդէ: Սիւնեաց իշխանը կը գտնէ զայն Վայոց ձորին մէջ եւ իր քաղաքը կը վերադարձնէ:

Վահան ի վերջոյ կը յայտնէ բոլորին, թէ ինք ակամայ իսլամացած էր եւ վտանգաւոր էր թէ՛ իր անձին եւ թէ՛ զինք պահողներուն համար: Հետեւաբար կը խնդրէ, որ ազատ արձակեն զինքը ընտանեկան կապերէ, որպէսզի ինք առանձինն իր գլխուն ճարը մտածէ: Կը համոզուին ամենքն ալ: Ուստի Վահան կը հեռանայ իրեններէն եւ կը սկսի թափառական կեանքի մը, որ կը տեւէ շուրջ 5 տարիներ, որու ընթացքին կ'այցելէ Վրաստան ու Հայաստանի գանազան վանքերը, սւրբանոցեր տարիէ մը աւելի երկար չի կրնար մնալ, միշտ վախճալով, որ ոչ միայն ինք իր օձիքը ձեռք կուտայ, այլ նաեւ պատճառ կը դառնայ իր հիւրընկալներու նեղութեանց ենթարկուելուն: Աշխարհէ հրաժարած էր բոլորովին, աղքատի կերպարանք ստացած էր ազնուական այս իշխանը ու կապրէր անհաստատ ու անորոշ կեանք մը, «միով հանդերձիւ եւ բոկոտն»:

Միանգամ ընդմիշտ վերջ տալու համար այս թափառական կեանքին, ի վերջոյ կ'որոշէ անձամբ ներկայանալ օրուան Ամիրապետին, պարզել իր կացութիւնը եւ խնդրել անկէ շնորհը, որպէսզի ազատ կերպով պաշտէ իր հայրենի կրօնը իր հարազատ հայրենիքի մէջ:

Այս միտքով արդարեւ 737ին կը մեկնի Ռուծափ կամ Սերգիոնապոլիս քաղաքը, հիւսիսային Սիւրիոյ մէջ, ուր կը գտնուէր Հեշամ Ամիրապետը այն օրերուն: Կը ներկայանայ նախ արքունիքի իր երեսմէի ծանօթներուն եւ բարեկամներուն եւ անոնց միջնորդութիւնը կը խնդրէ Ամիրապետին մօտ իրեն համար: Վահան անոնց կը հաղորդէ նախ իր հաստատամիտ Քրիստոնէութիւնը, անգիտակցաբար իսլամացած ըլլալը եւ քրիստոնեայ մնալու իրաւունքը. «Նոյնը Ամիրապետին առջեւ ալ պաշտպանելու համար եկած եմ», - կ'ըսէ: Սակայն երբ կը տեսնէ, որ ոչ ոք այս պայմաններով միջնորդել կ'ուզէ Ամիրապետին մօտ, ի վերջոյ իր ըսելիքը զրի կ'առնէ եւ գահճապետին միջոցաւ

Ամիրապետին յանձնել կուտայ:

«Հեշամ [Ամիրապետը] գիրը կարդալէն ետքը կը հրամայէ, որ Վահապը իր առջեւը հանեն: Նախ ողորջանօք, յետոյ խոստովանելով, վերջէն սպառնալիքներով կ'աշխատի Վահանի միտքը փոխել տալ, բայց անօգուտ: Վահան իր քրիստոնէութեան իրաւունքը կը պաշտպանէ. գանձ ու հարստութիւն կը մերժէ, նոյնիսկ Գողթնեաց իշխանութիւնն ալ վրայ տալ չի վարանիր, միայն կը խնդրէ. «Տուր ինձ համարձակութիւն ըստ քրիստոնէից սովորութեան համարձակ ունել ինձ գաւանդութիւն կարգաւորութեան իմոյ» (ՍՈՓ. ԺԳ 35-42): Հեշամ կը բարկանայ եւ կը հրամայէ արկանել ի բանտ» (Ազգ. էջ 860):

«Վահան զգացած էր այլեւս, թէ քրիստոնէութեան համարձակութիւն ստանալու յոյս մնացած չէ, եւ թէ գործը վերջին կէտին հասած է (իսլամութենէ ետ դարձող մը նկատուելով՝ մահուան պիտի դատապարտուէր): Ուստի աղօթքով ինքզինք մարտիրոսութեան կը պատրաստէր... Հեշամ... նորէն ատեան կը հանէ Վահանը եւ հարցուփորձէ, խոստովանէ եւ սպառնալիքէ ետքը մահուան վճիռը կ'արձակէ, մանաւանդ որ Վահանի համարձակ պատասխաններուն վրայ ունկնդիրներն ալ կաղաղակէին «զի անյապաղ գրաւեսցի նա ի կենցաղոյս» (Ազգ. հտժ. 589):

Սակայն Հեշամ տակաւին կը յուսար, Վահանը վախցնելով, միտքը փոխել տալ, ուստի դահճապետին կը հրահանագէր, որ սուրը շողացնելով եւ անոր պարանոցը քչիկ-քչիկ վերաւորելով արիւն հանէր. թերեւս ցաւին չգիմանալով՝ վերադառնայ իրենց հաւատքին:

Վահան դուրս հանուեցաւ քաղքէն: Դահճապետին սպառնալիքները անօգուտ անցան եւ տեսնելով Վահանի հաստատամտութիւնը՝ ի վերջոյ գործադրեց վճիռը, անոր գլուխը կտրելով, 737 թուականին: Սուրբ նահատակին մարմինը կը մնայ նոյն գիշերը իր նահատակութեան վայրը, եւ միւս առտու հրաման կ'ելլէ արքունիքէն, որ քրիստոնեաներ, եթէ փափաքին, կրնան վերցնել մարմինը: Քանի որ Հայեր չկային քաղաքին մէջ, ուստի տեղւոյն քրիստոնեաները նախ կը վիճին, թէ ո՞վ պիտի վերցնէ սուրբին մարմինը: Ի վերջոյ բոլորը միանալով՝ «Յակոբիկ, Նեստորական եւ Հոռոմ հաւաքուեցին

Օտարաց գերեզման ըստած տեղը՝ Թաղեցիին սուրբին մարմինը»:
Սերգիոպոլիտի Ասորի եպիսկոպոսը յատուկ վկայարան կանգնեց
վրան:

Իսկ Հայաստանէն Արտաւազդ Վարդապետը, որ ատեն մը հիւրըն-
կալած էր Վահան իր Երաշխաւոր վանքը, ուխտի եկաւ Ռուծափ
քաղաքը 744 թուին:

«Եւ քննութիւններ ընելով եւ գրաւոր վկայութիւններ հաւաքե-
լով... եւ Հայաստանի մէջ քաղած լուրերուն եւ կանուխէն Վահանէ
լսածներուն միացնելով՝ մանրամասն կերպով վկայաբանութիւնը կազ-
մեց» (Ազգ. էջ 861-862):

Վահան Գողթնացիին տօնն ալ «Ապայից» կոչուածներէն է, ուս-
տի երբ տարեգիրները Ա-Մ են, Գողթնացիի տօնը կը կատարուի
Վարդապետին յաջորդող Գ կամ Դ կիրակիէն յետոյ եկող Բշ. Գշ. Եշ.
օրերուն: Իսկ տարեգիրը Կ-Ք եղած ատեն կը տօնուի Ութօրէքէն
յետոյ Ա կամ Բ կիրակիին յաջորդող Բշ. կամ Գշ. կամ Եշ. օրերուն,
երբեմն առանձինն եւ երբեմն միացեալ իր դրացի սուրբերուն հետ:

Ունի իւրայատուկ սրտառուչ ՄԱՆԿՈՒՆՔ ստեղծի շարական մը,
գոր ոմանք կ'ըսեն, թէ յօրինուած է նոյնինքն Վահանի քրոջ կողմէ
իրբնւ հոգեւոր եղբերից:

Հետեւեալն է այդ շարականի առաջին եւ վերջին տուները.

Ջարմանալի է ինձ քան զերգս երաժշտականաց ձայնս՝
ողորոց քոց հնչմունք,

ով երանելի տէր Վահան, ընտրեալ յԱստուծոյ:

Որպէս ըզքաջ նահատակ պատրաստեալ ի պատերազմ,
կատարեցիր զընթացս քո արիաբար յազգացն հարաւայնոյ.

դասաւորեալ ընդ անմարմնականսն,

ով երանելի տէր Վահան, Գողթնեացն իշխեցող:

Թարգմանութիւն.

Աւելի քան երգերու եղանակները

գարմանալի եղաւ ինձի համար

քու ողբերուդ հնչմունքները.

Ով երանելի տէր Վահան, Աստուծոյ ընտրեալը:

Քաջ նահատակի պէս պատերազմի պատրաստուեցար.

կատարեցիր ընթացքդ արիաբար հարաւայնի ազգերէն...

դասաւորուեցար անմարմնական հրեշտակներու հետ,

Ով երանելի Վահան, Գողթնեաց իշխանաւոր:

Սկզբնաղբիւր. [Ողբ վասն չարեացն աշխարհիս Հայոց եւ
վկայաբանութիւն սրբոյն Վահանայ Գողթնացոյ, «Աստուծոյ Հայկա-
կանք» ԺԳ]:

ՍԱՀԱԿ ԵՒ ՀԱՄԱԶԱՍՊ ԻԾՆԱՆՆԵՐ

Հարազատ եղբայրներ են ասոնք Արծրունեաց իշխանական մեծ
տոհմէն, որոնք ապրեցան ու նահատակուեցան Ը դարու վերջին քա-
ռորդին, երբ Հայոց երկիրը կը գտնուէր Արաբական տիրակալութեան
ներքեւ:

Երկուքէն երէցը Համազասպն է, որ կարելի է ըսել, թէ իր ժամա-
նակի Հայ իշխաններուն մէջ բարձրագոյն դիրքը կը գրաւէր: Ունէին
չափահաս կրտսեր եղբայր մը եւս՝ Մերուժան անունով: Երեքը միա-
սին Տանուտէրութիւն կ'ընէին Արծրունեաց տան կամ Վասպուրական
աշխարհի վրայ: Երեքն ալ ոչ միայն քաջ եւ անուանի էին պատերազ-
մի մէջ, այլ նաեւ բարեպաշտ եւ իրենց կրօնքին սիրով կապուած իշ-
խաններ էին: 785ին օրուան Ամիրապետը Հայաստանի կառավարիչ
նշանակեց Սազմ անունով մէկը, որ դաժան բնաւորութեան տէր անձ
մըն էր:

Ըստ պատշաճութեան պահանջքին՝ Հայոց իշխանները բարի գա-
լուստի այցելութիւն կուտան նոր կառավարիչին: Ասոնց կարգին կը
ներկայանան նաեւ Արծրունի երեք նախարարները՝ Վանի բերդին
պահպանութիւնը Դաւիթ Մամիկոնեանի յանձնելէ յետոյ: Արաբ կա-
ռավարիչը կը ձերբակալէ եւ կը բանտարկէ զանոնք այն ամբաստա-
նութեամբ, թէ 10 տարիներ առաջ Արաբներու դէմ կազմակերպուած
ապստամբութեան մը իրենց կարեւոր մասնակցութիւնը բերած էին:
Խնդիրը տեղեկագրեց Ամիրապետին եւ հրահանգի սպասեց: Երեք ա-

միսներ խիստ եւ տանջալից բանտարհութենէ յետոյ Հրաման եկաւ Ամիրապետէն, որ մէջտեղէն վերցնէ զանոնք: Այն օրերուն թէեւ Արար կառավարիչներուն կեդրոնը Դուին քաղաքն էր, բայց Յայսմաուրք-Անըը կը հաստատեն, որ կառավարիչը այս երեք իշխանները իր հետ փոխադրել տուած էր Հայոց Պարտաւ քաղաքը: Նախ քան Ամիրապետի հրահանգին գործադրութիւնը կառավարիչը առաջարկեց երեք եղբայրներուն ուրանալ քրիստոնէութիւնը եւ ընդունիլ մահմէտականութիւնը՝ իրենց կեանքը ազատելու եւ պատուով իրենց երկիրը վերադառնալու համար, այլապէս, ըսաւ, սաստիկ պատիժներու պիտի ենթարկէ զիրենք եւ ի վերջոյ պիտի սպաննէ:

Մեհրուժան, միտք բերելով երեք ամիսներու տաժանագին կեանքը բանտին մէջ եւ տեսնելով չարչարանքի գործիքները եւ դահիճները ու կռահելով գլխուն գալիքը, վախցաւ եւ ընդունեց իսլամութիւնը եւ արգարեւ մեծ պատուով եւ իշխանութեամբ զրկուեցաւ Վան: Սակայն Դաւիթ Մամիկոնեան, իմանալով պատահածը, զիմացը ելաւ եւ նախ քան քաղաք մտնելը սպաննեց զայն իբրեւ ուրացող: Խեղճը այսպէս զրկուեցաւ թէ երկրաւոր եւ թէ երկնաւոր կեանքէն: Միւս երկու եղբայրները հաստատ մնացին իրենց կրօնքին վրայ: Խազմ կառավարիչը փորձեց կոտրել անոնց հաստատակամութիւնը նախ ողորջի խօսքերով եւ խոստովանելով. երբ անոնք անօգուտ անցան, ենթարկեց զանոնք անտանելի չարչարանքներու: Սակայն հոգևով եւ մարմնով ազնուական երկու իշխանները քաջութեամբ տոկացին այդ բոլորին, մինչեւ որ ի վերջոյ մահուան վճիռ արձակուեցաւ անոնց վրայ: Նախ միասնաբար աղօթեցին, ապա երէց երբայրը Համազասպ ուզեց մարտիրոսանալու անդրանկութիւնը իր կրտսեր եղբօր տալ՝ ըսելով. «Մինչեւ հիմա անդրանիկը ես էի: Այժմ մարտիրոսութեան մէջ առաջնութեան պատիւը քեզի կուտամ, մի վախնար, առաջ մօտեցիր եւ ինձմէ առաջ ստացիր մարտիրոսութեան պսակը, եւ թող Տիրոջ անունը փառաւորուի նախ քու նահատակութեամբդ»: Սահակ սիրով ընդունեց այս պատիւը, առաջ անցաւ արիաբար, խաչակնքեց եւ Աստուծոյ յանձնելով ինքզինքը՝ խոնարհեցուց իր պարանոցը: Դահիճի սուրը անգթօրէն իջաւ առաքինի իշխանի վզին:

Ապա Համազասպ, իր բազուկները երկինք բարձրացնելով, աղօթեց. «Գոհութիւն քեզի ամենակալ Աստուած որ արժանի ըրիր զմեզ

մեռելի Քու անուանիդ եւ փառքիդ համար»: Դահիճի սուրը իջաւ նաեւ անոր պարանոցին:

Կառավարիչը մարմինները նախ կախել տուաւ փայտի վրայ, ապա այրել ու փռշի վերածել Հրամայեց, որպէսզի քրիստոնեաները, անոնց ոսկորները հաւաքելով, յարգանքի առարկայ չընեն: Մոխիրներն ալ ցրուեց չորս հովերուն:

Հաւանաբար ասոնք տօնելի սուրբեր յայտարարուեցան իրենց մարտիրոսական մահէն անմիջապէս յետոյ: Տօնացոյցը, յարգելով Համազասպի փափաքը, արգարեւ ասոնց յիշատակութեան մէջ նախապատուութիւնը տուած է Սահակին: Կը տօնուին Վարազայ Խաչին յաջորդող Հինգշաբթի օրը, թէեւ Յայսմաուրք-Անըը Ապրիլ 8ին կը դնեն ասոնց մարտիրոսութիւնը: Իսկ ըստ ժամանակակից պատմիչին՝ նահատակուած են Մենգեան Ութօրէքին, 785 թուին:

Սկզբնական աղբիւրք. Ղեւոնդ Գառմիչ եւ Ասողիկ:

Ս Ր Բ ՈՒ Յ Ի Ն Ե Ր

Ս. ՍԱՆԴՈՒՆՏ 50 ?

Հայ եկեղեցիին պարծանքը եւ նախամարտիրոսուհուին: Ինչ որ է Ս. Ստեփանոս Բրիստոնէական եկեղեցիի համար, նոյն է Ս. Սանդուխտը Հայ եկեղեցիի համար:

Դուստրն է Հայոց աւանդական պատմութեան մէջ յիշուած Սանատրուկ Թագաւորին, որ իշխած է 38-68 ին: Սանդուխտ քրիստոնեայ եղած էր Թադէոս Առաքեալի քարոզութեամբ: Հայրը երբ իմացաւ եղելութիւնը, փորձեց տարհամոզել զայն, բայց երբ Սանդուխտ անդրդուելի մնաց իր նոր հաւատքին մէջ՝ սաստիկ զայրացած հրամայեց բանտարկել զայն, ուրիշ նորահաւատներու հետ: Թադէոս Առաքեալ գաղտնի բանտ այցելեց, մխիթարեց եւ սրտապնդեց զանոնք, եւ իր աղօթքով անոնց շղթաները քակուեցան: Այս տեսնելով բանտապահները եւ այլ բանտարկեալներ հաւատքի եկան, որոնց թիւը 33 կը նկատէ Վկայաբանութիւնը:

Ի վերջոյ Թագաւորը կրկին մարդ զրկեց բանտ եւ իր ներկայութեան կանչեց իր դուստրը՝ վերջին փորձն ընելու, որ ան վերստին իր հայրենի եւ հեթանոս կրօնքին վերադառնայ: Երբ բանտ դացող պատգամաւորը տեսաւ, որ բանտարկեալներու շղթաները քակուած են, եւ անոնք զուարթ տրամադրութեամբ Թադէոս Առաքեալի քարոզութիւնը մտիկ կ'ընեն, ինք եւս սքանչացաւ եւ դարձի եկաւ: Ասոր վրայ Թագաւորը հրամայեց սպաննել բոլոր նորադարձները՝ բացի Թադէոս Առաքեալէն եւ իր աղջիկէն:

Ս. Սանդուխտ երբ ներկայացաւ իր հօրը, վերջինս յանդիմանական ու հայրական շեշտով ըսաւ. «Ուրացար զիս, քու հայրդ, եւ կապուեցար այդ մոլորեցուցիչին»՝ ակնարկելով Թադէոսին: «Սակայն այդ քու մոլորեցուցիչ կոչած մարդը իմ հոգին լուսաւորեց»,- պատասխանեց Սանդուխտ: «Ամէն պարագային, քեզի վերջին խօսքս այս է. ան-

պայման հայրենի կրօնքիդ պիտի վերադառնաս, այլապէս չարաչար պիտի սպաննուիս»,- ըսաւ Սանատրուկ: Ու խօսքէն գործի անցնելով՝ հրամայեց կապել զայն ու չարչարանքի ենթարկել, որոնց մէջ Սանդուխտ շարունակ կը կրկնէր. «Քրիստոս Փրկիչ իմ, օգնէ ինձի»:

Այն ատեն, կը շարունակէ Վկայաբանութիւնը, երկինքէն զօրաւոր լոյս մը ծագեցաւ, երկիր շարժեցաւ, եւ Սանդուխտի կապանքները քակուեցան՝ ամենքը ապշանքի եւ զարհուրանքի մատնելով: Այս առթիւ քրիստոնեայ դարձաւ, շատ մը ուրիշներու կարգին, նաեւ Զարմանդուխտ իշխանուհին, Թագաւորին մերձաւորներէն մէկը: Այս ալ Թագաւորին հրամանով նահատակուեցաւ, վրան լոյս իջաւ, եւ շատեր հաւատքի եկան:

Ի վերջոյ՝ Սանդուխտ կրկին բանտ առաջնորդուեցաւ: Նոյն գիշերը տեսիլք մը ունեցաւ, ըստ որուն Փառաւոր անձնաւորութիւն մը իրեն լուսեղէն պատմուճան մը կը հազցնէր եւ իր գլուխը կը դնէր սքանչելի թագը: Սանդուխտ հասկցաւ, որ շուտով պիտի նահատակուի: Արդարեւ յաջորդ օրը դահիճը բանտ գալով, հանեց ու տարաւ նահատակութեան վայրը: Երբ հասան նշանակուած տեղը, Սրբուհին նախ աղօթեց «վասն աշխարհիս Հայոց» եւ գլուխը խոնարհեցուց դահիճի սուրին: Վերջինս փոխանակ գլխատելու՝ սուրը մխեց անոր սրտին, եւ Հայոց հողը ոռոգուեցաւ անոր անարատ սրտէն հոսող Թանկագին արիւնով:

Ս. Սանդուխտին գերեզմանը անյայտ մնացած է երկար ատեն: Բայց ի վերջոյ յայտնուած է Կիրակոս անուն միայնակեացի մը, յատուկ տեսիլքով (տե՛ս մանրամասնութիւնը ՍՈՒՐԲԲ եւ ՏՕՆՔ, Ա. տպ. էջ 172 եւ ԼԻԱԿԱՏԱՐ, էջ 343): Անոր գերեզմանը, ըստ վկայութեան Օրմանեանի, մինչեւ 60-65 տարիներ առաջ կը ցուցուէր Նարեկի վանքին մէջ, որուն բուն անունն ալ Ս. Սանդուխտի վանք էր (Ազգ. էջ 35): Օրմանեան կ'աւելցնէ նաեւ, որ Սանդուխտ կոյսի յիշատակը, ըստ նախնական Տօնացոյցերու, առանձինն կը կատարուէր. յետ ժամանակաց սակայն Թադէոս Առաքեալի հետ միացուեցաւ:

Յայսմատարքներ անհամաձայն են անոր նահատակութեան կամ տօնակատարութեան օրուան մասին: Մարզուանցիները կը դնէ Դեկտ. 23ին, Փէշտիմալճեանները՝ Դեկտ. 15ին: Իսկ ներկայիս մենք կը կատարենք զայն, Ս. Թադէոս Առաքեալին հետ, Վարդավառի տօնին յա-

Նորգող շարաթ օրը:

Մեր Շարականոցին մէջ կայ ՄԱՆԿՈՒՆՔ շարական մը ի յարգանս Ա. Սանուխտին՝ ըստ հետեւեալի.

**Քեւ պարծի այսօր Ա. Եկեղեցի,
ով վկայուհի Ա. Սանդուխտ,
որ զհայրականն թողեր զպաշտօն.
վասն Քրիստոսի հեղեր զարիւն քո սուրբ:**

**Աշակերտեցար Առաքելոյն Թաղէտսի,
եւ ի Հաւատս ճշմարիտս Հաստատեցար,
ոչ խառնակելով ընդ հեթանոսական պաշտօնսն
արժանի եղեր վերանալ առ Հայր:**

**Որ գտիկնութեանն* քու թողեր զփառս
եւ աստուածային փառօքն զարդարեցար.
այսօր դասակցեալ ընդ գուարթունս երկնից
վասն մեր առ Տէր բարեխօսեա:**

Թարգմանութիւն.

**Կը պարծենայ քեզմով այսօր Ա. Եկեղեցի,
ով վկայուհի Սուրբ Սանդուխտ,
որ հօրենական պաշտամունքը ձգեցիր.
Քրիստոսի Համար քու սուրբ արիւնդ թափեցիր:**

**Աշակերտեցար Թաղէտս Առաքեալին
ու ճշմարիտ Հաւատքին մէջ Հաստատ մնացիր.
չխառնակուեցար հեթանոսական պաշտամունքին,
արժանի եղար առ Հայր վերանալ:**

* Հին Հայերէն լեզուի մէջ տի-ար կամ տի-արտ կը նշանակէ յարգարժան այր մարդ. իշխանաւոր: Նոյն ձեւով տի-կիմ բառն ալ կը նշանակէ ազնուական կին, իշխանուհի, անկախաբար իր ամուսնացած կամ ամուրի վիճակէն: Հայոց Թաղուհիները հին ատեն կոչուած են «Մեծ տիկինն Հայոց»:

**Ազնուական կնոջ փառքէն հրաժարեցար,
եւ աստուածային փառքով զարդարուեցար.
այսօր դասակցեցար երկինքի հրեշտակներու հետ,
բարեխօսէ մեզի Համար առ Տէր:**

**Սկզբնադրիր. [Վկայաբանութիւն սրբոյն Թաղէտսի առաքելոյ
եւ Սանդուխտոյ կուսին եւ գիւտ նշխարաց, «Սոփերք Հայկականք»,
Ը]:**

ՀՌԻՓՍԻՄԵԱՆ ԵՒ ԳԱՅԻԱՆԵԱՆ ԿՈՅՍԵՐ Դ301

**Ասոնք թէեւ 37 հոգինոց նահատակներու մէկ խումբ մըն են, բայց
երկու օրուան ընթացքին եւ իրարմէ անջատաբար նահատակուած
ըլլալնուն, Յայմաւուրքի եւ Տօնացոյցի անցած են վերոյիշեալ երկու
անուններով եւ երկու գատ տօնախմբութիւններով:**

**Ըստ պատմական աւանդութեան, ասոնք ազգով Հռովմայեցի կը
նկատուին. բայց Հայաստանի մէջ նահատակուած ըլլալնուն եւ մեր
երկրի քրիստոնէացման նախօրեակին իրենց անարատ արիւնը թափած
ըլլալնուն Հայ հողի վրայ՝ իւրացուած են Հայց. եկեղեցիի կողմէ
իրբեւ իր ամենահարազատ սուրբերը:**

**Ըստ Ագաթանգեղոս սկզբնական պատմիչի՝ Հռովմի Դիոկղե-
տիանոս կայսրը (284-305) կ'ուզէ ամուսնանալ իր երկրին գեղեցկա-
գոյն աղջկան հետ: Երկրին ամէն կողմերը զրկուած իր խուզարկու-
ները կը գտնեն զայն յանձին Հոփփսիմէ անուն ազնուական օրիորդի
մը, որ կը գտնուէր Հռովմի մէջ քրիստոնեայ Կուսանոց մը, որուն
մայրապետն էր Գայիանէ:**

**Կոյսեր երբ իմացան կայսեր մտադրութիւնը, գիշերանց ու
զաղտնի հեռացան Հռովմէն: Նաւ առնելով՝ նախ եկան Եգիպտոսի
Աղեքսանդրիա քաղաքը, ուրկէ անցան Երուսաղէմ եւ Եգիպտոյ վրա-
յով հասան Վան եւ Հաստատուեցան ատենուան մը Համար Վարազայ
լերան վրայ: Այստեղ ալ իրենք զիրենք անապահով զգացին եւ դէպի
հիւսիս յառաջանալով՝ ի վերջոյ Հաստատուեցան Հայոց այն օրերու
մայրաքաղաք Վաղարշապատի շրջակայքը Ընձաւք կոչուած տեղը:**

Հայաստանի մէջ իրենց գոյուլթեան մէջտեղ Հանուիլն ալ կը

վերագրուի Դիոկղետիանոս կայսեր առ Տրդատ Թագաւոր ըրած թելադրութեան, որ իր երկիրը փախած կոյսը գտնէ եւ իրեն ղրկէ: Արդարեւ Տրդատի խուզարկուները դիւրաւ կը գտնեն Հռիփսիմէն Վաղարշապատի շրջանակին մէջ եւ կը Հանեն անոր ներկայութեան: Տրդատ ալ, հմայուելով Հռիփսիմէի գեղեցկութենէն, կ'որոշէ ինք իւրացնել զայն: Հռիփսիմէ կը մերժէ եւ կ'ընդդիմանայ: Կը կանչեն Գայիանէն, որպէսզի համոզէ իր սանուհին, որ ընդունի Թագաւորին առաջարկը: Գայիանէն, ընդհակառակը, կը քաջալերէ, որ ամուր մնայ իր մերժումին մէջ եւ չփոխանակէ երկիրնքի երջանկութիւնը երկրաւոր փառքին ու վայելքին հետ: Գայիանէն ծանր չարչարանքի կ'ենթարկուի Թագաւորի հրահանգին հակառակ խրատ տուած ըլլալուն համար եւ կը բանտարկուի իր երկու ընկերուհիներով արքունիքին մէջ: Հռիփսիմէ ի վերջոյ կը զօրանայ եւ կը փախչի իր ընկերուհիներուն մօտ: Իսկ Տրդատ, որ հսկայ եւ հզօր անձ մըն էր, Հռիփսիմեանց շարականի բացատրութեամբ՝ «ի մանուկ ի կուսէն պարտեալ ամաչէր», ուստի կատղեցաւ եւ դահիճներ ղրկելով՝ հրամայեց սպաննել Հռիփսիմէն: Ձեռքերէն ու ոտքերէն ցիցերու կը կապեն գետնի վրայ եւ կը պրկեն ամբողջ մարմինը եւ ապա ջահերով կը խանձեն զայն: Տեսնելով, որ դեռ կենդանի կը մնայ, աչքերը կը փորեն եւ անդամ առ անդամ յօշոտուելով կը նահատակեն Գրիստոսի հրաշալի վկայուհին: Երբ միւս ընկերները կը մօտենան անոր մարմինը հաւաքելու եւ պատուով թաղելու, անոնցմէ ալ 32 հոգի սուրով կը նահատակեն:

Ապա դահիճներ, խուժելով անոնց բնակութեան վայրը, եւ այնտեղ մնացած միակ հիւանդ կուսան մը գտնելով, զայն ալ կը նահատակեն: Յաջորդ օրը Տրդատ կը հրամայէ, որ սպաննեն նաեւ խուժքին դաստիարակը եւ մայրապետը՝ Գայիանէն, իր երկու ընկերուհիներով: Նախ կը կտրեն անոր լեզուն, որով համարձակած էր սրտայնդել եւ քաջալերել Հռիփսիմէն, որ ընդդիմանայ Թագաւորին: Ապա զանոնք ալ Հռիփսիմէի պէս չորս ցիցերու կը կապեն գետնի վրայ, մորթազերծ կ'ընեն. ի վերջոյ սուրով կը մահացնեն: Գայիանէի եւ իր երկու ընկերուհիներուն մարտիրոսութիւնը տեղի կ'ունենայ քաղաքէն դուրս հարաւային կողմը:

Այս նահատակութիւնները պատահեցան, երբ Ա. Գրիգոր դեռ Խոր

Վիրապին մէջ բանտարկուած էր: 9 օր կոյսերուն մարմինները անթաղ մնացին, ոչ մէկ գազան կամ գիշակեր թռչուն մօտեցաւ անոնց:

Իբրեւ հետեւանք անմեղ կոյսերու այս անխիղճ սպանութեան՝ Տրդատ խելագարեցաւ զայն բուժելու համար Գրիգոր հանուեցաւ վիրապէն, որուն առաջին գործը եղաւ անթաղ մնացած կոյսերու մարմինները յատուկ տապաններու մէջ ամփոփել ու թաղել իրենց նահատակուած վայրերուն մէջ: Երեսն քաջ վկայարաններ՝ մին Հռիփսիմէի եւ իր 32 ընկերներուն նահատակուած վայրին մէջ, միւսը՝ իրենց բնակութեան տեղոյն՝ Հնձանքի վրայ, ուր նահատակուած էր հիւանդ կոյսը եւ երրորդը՝ Ա. Գայիանէի եւ իր երկու ընկերուհիներուն նահատակուած վայրը: Կոյսերու մարմինները պարունակող տապանները կնքուեցան Լուսաւորչի կնիքով: Դար մը յետոյ անշքացած կամ գրեթէ անյայտացած էին ասոնց վկայարանները: Ուստի Ա. Սահակ Կաթողիկոս (387-438) փնտռել տուաւ, մէջտեղ հանեց տապանները եւ ինքն ալ իր կնիք աւելցնելով Լուսաւորչի կնիքին վրայ՝ կրկին պատուով թաղեց զանոնք եւ նոր վկայարաններ շինել տուաւ անոնց վրայ: Երկու դար յետոյ Կոմիտաս Կաթողիկոսի օրով (615-628) գարձեալ անշքացած էին այս վկայարան-մատուռները: Ասոնցմէ Հռիփսիմեանցը բոլորովին քակեց, երբ մէջտեղ ելաւ Հռիփսիմէի տապանը, Կոմիտաս Կաթողիկոս, իր կնիքն ալ աւելցնելով, վերստին թաղեց եւ անոր վրայ շինեց հաշակաւոր եկեղեցի մը 618ին, «Հրաշատես եւ վայելուչ եւ նազելի եւ պայծառ»: Այս տաճարի խորանին գետնայարկ մատուռի մը մէջ գետեղեց Սրբուհիին տապանը, որ ցայսօր կը մնայ նոյն տեղը: Կը մնայ նաեւ եկեղեցին նոյնութեամբ, բացի զանգակատան մը յաւելումէն մուտքին կողմը: Իսկ Եղբ Կաթողիկոսն ալ (630-641) քակեց Գայիանեանց անշուք մատուռը եւ նոր փառաւոր եկեղեցի մը շինեց «ընդարձակագոյն եւ պայծառագոյն կոփածոյ քարամբ եւ կրով ձուլելով»: Այս եկեղեցին ալ գրեթէ նոյնութեամբ կը մնայ ցայսօր: Իսկ երրորդ մատուռին ալ վերջին վերաշինող եղաւ Նահապետ Կաթողիկոս (1691-1705) Շողակաթ անուան տակ:

Օրմանեան կը վկայէ, որ Հռիփսիմեանց եւ Գայիանեանց տաճարներուն ներքեւ գետնափորներ կան մեծամեծ քարերով շինուած եւ ասոնց մէջն են կուսանաց սակորները: Ասոնց գոյութիւնը վերջին ժա-

մանակներու մէջ ստուգուեցաւ, Հռիփսիմեանցը՝ լատին կրօնաւորներու փորձած գողութեան առթիւ, իսկ Գայիանեանցը՝ Յովհաննէս Աբեղայի հետաքրքիր խուզարկութեամբ, երկուքն ալ ըստ Առաքել Դավրիժեցիի պատմածին:

Իսկ 1978ին Ս. Հռիփսիմէի եկեղեցիին հիւսիս-արեւելեան պարըսպի մօտ կատարուող նորոգչական աշխատանքներու ընթացքին «յայտնաբերուել էր վաղ Բրիստոնէական շրջանի բազիլիկ տիպի փոքր մի եկեղեցի-մատուռ»: Իսկ 1979ին նոյն մատրան մէջ կատարուած պեղումները յայտնաբերեցին «մի շարք գերեզմաններ (գլխատուած) մարմինների աճիւններով»: Ասոնք կը նկատուին Ս. Հռիփսիմէի 32 ընկերուհիներու աճիւնները: Այս մասին Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Հայրապետը եւ Մայր Աթոռի Դիւանը յատուկ հաղորդագրութիւն հանած են, որով կ'եզրակացուի. «Սոյն նորագոյն յայտնաբերումը մի նոր նիւթական վկայութիւն է Հայոց քրիստոնէական հաւատքի պատմական վաւերականութեան» (ԷՁՄԻԱՄԻ նամագիր, 1979, Մայիսի թիւ):

Ըստ Ագաթանգեղոսի՝ ասոնք նահատակուեցան Ս. Գրիգորի վիրապէն ելնելու տարին, այսինքն 301ին, Հայոց Հոռի ամսուան 26ին եւ 27ին, որ ըստ Օրմանեանի կը համապատասխանէ Նոյեմբեր 6 եւ 7ին, բայց մեր ՅայսմաւուրքԱնտուն մէջ նշանակուած են Հոկտեմբեր 5ին եւ 6ին: Իսկ ներկայիս անխափան կը տօնուին Յարութեան Կիրակէից սկիզբը նկատուած Կիրակիի յաջորդող Երկուշաբթին՝ Հռիփսիմեանք, իսկ Երեքշաբթին Գայեանեանք: Յունաց մօտ յիշատակուած են Սեպտեմբեր 30ին»։ «Մարտիրոլոգիում Ռոմանում»ի, «Վի տէ սէն»ի եւ «Սրբոց բառարանի»ի մէջ կը յիշատակուին Սեպտեմբեր 29ին:

Հռիփսիմեանց կոյսերը շատ կարեւոր տեղ կը զբաւեն Հայ վկայաբանութեան մէջ եւ ընդարձակօրէն ներկայացուած են սկզբնագիր Ագաթանգեղոսի եւ Մովսէս Խորենացիի կողմէ:

Հայկական Յայսմաւուրքներն ալ, հետեւով վերոյիշեալ պատմիչներուն, լայն տեղ կուտան Հռիփսիմեանց վարքին, յատկապէս ԼԻԱԿԱՏԱՐը՝ աւելի քան 10 մեծադիր էջեր: Իւրաքանչիւր Յայսմաւուրք Հռիփսիմեանց վկայաբանութեան վերջաւորութեան փոքր ներբողներ ունի, որոնցմէ մասեր մը կ'ուզենք մէջբերել աշխարհաբար

Թարգմանութեամբ:

Խօսքն ուղղելով Ս. Հռիփսիմէին՝ ՓԵՇՏԻՄԱԼՃԵԱՆԻ Հրատարակած Յայսմաւուրքի մէջ ըսուած է.

«Հարս Բրիստոսի, որ այսօր երկինք փոխադրուեցար վկայական արիւնովդ, իբրեւ զարդարեալ թագուհի նստար երկնաւոր Թագաւորին աջ կողմը, ընդունէ քու երկնաւոր առագաստիդ պարախումբին մէջ նաեւ զմեզ, քու կուսական երկունքէդ ծնածներս՝ Հայոց եկեղեցիի հաւատացեալներս, որոնք քեզ կը պատուեն տօնախմբութեամբ, որպէսզի մենք ալ քեզի հետ փառաւորենք Հայրը, Որդին եւ Ս. Հոգին յաւիտեանս. ամէն»:

Աւելի երկար է ՄԱՐԶՈՒԱՆՅԻԻ Հրատարակած Յայսմաւուրքի ներբողը, ուր ի միջի այլոց ըսուած է.

«Հռիփսիմէ, որ իբրեւ արեգակ՝ Արեւմուտքէն ծագեցար Արեւելեան աշխարհին մէջ, այն լուսափայլ աստղերով, որոնք անոր հետ էին: Հռիփսիմէ, կուսանաց վայելչութիւն, մարտիրոսաց պարծանք, հրեշտակաց ուրախութիւն, դեւերու վախ ազդող...: Հռիփսիմէ, երկնաւոր փեսային հարսնացեալը, Աստուծոյ ինքնանուէր ընծան...»:

Ապա կը շարունակուի ներբողը՝ փոխ ի փոխ ուղղուելով երբեմն Գայիանէի եւ երբեմն Հռիփսիմէի:

«Գայիանէ, ամենամաքուր խորհուրդ. առաքինասէր հոգի, արիական պատերազմող, հակառակամարտերու յաղթող: Հռիփսիմէ, պայծառագոյն շառաւիղ, պողաբեր ձիթենի, քաղցրապտուղ արմաւենի: Գայիանէ, նախանձելի վարքով, պարկեշտութեամբ օրինակելի, աղամանդեայ պնդութիւն, Աստուածահաճոյ դաստիարակ, ողջախոհ մայր, ամենիմաստ ուսուցիչ...» եւլն. եւլն.:

ԼԻԱԿԱՏԱՐ վարք Սրբոցը այսպէս վերջաւորութեան կը բերէ Հռիփսիմեանց վարքազրուութիւնը.

«Արժան է, որ սքանչանանք Փրկչին անբաւ մարդասիրութեան եւ վերին իմաստութեան անքննելի տեսչութեան վրայ, որ սուրբ կոյսերու արեան հեղումով եւ անոնց բարեխօսութեամբ՝ Հայաստան աշխարհի հրաշալի լուսաւորութիւն պարգեւեց,

ինչպէս բազմիցս Հաստատեց նոյն ինքն երիցս երանելի մեր Ա. Լուսաւորիչը իր վարդապետական քարոզութեան ընթացքին»:

Ա. Հռիփսիմեանց կոյսերու Հանդէպ Հայ ժողովուրդին զգացումները այնքան բարախուսն եղած են, որ մեր մշակոյթին համար երկուերեք արուեստի գեղեցիկ գործեր շահեցուցած է: Առաջինը նոյնինքն Ա. Հռիփսիմեանց տաճարն է, որ արգարեւ Հայ ճարտարապետութեան զլուսի գործոց մըն է եւ անոր լաւագոյն արտայայտութիւնը, իր զուսպ, ծանրանիստ եւ բացառաբար գեղեցիկ կառուցուածքով: Իսկ երկրորդը նոյնինքն Հռիփսիմեանց ի յարգանս յօրինուած «Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի» գեղեցիկահիւս շարականը: Երկուքն ալ հոգածութեամբ եւ հեղինակութեամբ մեր Կոմիտաս Կաթողիկոսին, որ նախ քան կաթողիկոսանալը եղած է Փակակալը - Լուսարարապետը Ա. Հռիփսիմեանց սրբավայրին:

«Աճձիճք Առիւթալք» շարականը գրուած է Հայ այբուբենքի գիրերու կարգով եւ թիւով եւ հետեւաբար կը բաղկանայ 36 տուներէ (Օ եւ Ֆ գիրերը մեր այբուբենքի մաս կազմեցին 12րդ դարէն յետոյ): Լաւագոյն եւ առաջին նմոյշն է Հայ այբուբենքի կարգով գրուած շարականներու, որոնցմէ բաւական մեծ թիւով յօրինուեցան յաջորդ դարերուն եւ որոնք այս շարականի անունով «Անձինք» կոչուեցան:

«Անձինք նուիրեալք» միաժամանակ մեր առաջին շարականն է, որուն հեղինակը բացայայտօրէն ստոյգ է: Օրմանեան հետեւեալ գնահատականը ունի այս շարականի մասին.

«Այս շարականը հայկական հին չափով տաղասացութեան տիպարն է. բառերու եւ ոճերու ճոխութեամբ ընտիր հայկաբանութեան օրինակ է, բանաստեղծական արուեստի գերազանցութեամբ նշանաւոր է, պատմական յիշատակաց անխաղախ հետեւող է եւ եկեղեցական ու հոգեւոր օծութեամբ՝ անզուգական քերթուած մըն է»:

Նղանակն ալ որչափ ալ միօրինակ ըլլայ, դարձեալ սրտին դաշնող եւ գրաւիչ է, աշխոյժ եւ անուշ գնացքով: Այնպէս որ՝ երաժշտական մարզի մէջ ալ մեր կարեւոր շարականներէն մէկն է: Մինք այստեղ առաջ կը բերենք երեք տուներ միայն.

ՕԱՐԱԿԱՆ ՀՌԻՓՍԻՄԵԱՆՑ

ԱՆՁԻՆՔ նուիրեալք սիրոյն Քրիստոսի,
երկնաւոր նահատակք եւ կուսանք իմաստունք,
ի պարծանս ձեր բարձրացեալ տօնէ
մայր Սիոն, դասերօքն իւրովք:

Հռիփսիմէ՝ մեծ խորհուրդ եւ անուն ցանկալի,
ընտրեալ ի յերկրի եւ դասեալ ընդ հրեշտակս.
եզեր օրինակ սրբութեան կուսանաց,
վարդապետութիւն արանց արդարոց:

Փառաց ի փառքս բարձրացեալ պարծին,
ի պատիւ եւ ի փառս երեսուն եւ եօթնեանքն.
քանզի այս է թիւ երանեալ կուսանաց,
որք անթառամ պըսակեցան յանվախճան յաւիտեան:

Թարգմանութիւն

Անձեր՝ նուիրուած Քրիստոսի սիրոյն,
երկնաւոր նահատակք եւ կոյսեր իմաստուն
ի պարծանքս ձեր ցնծալով կը տօնէ
մայր Սիոն իր գաւակներով:

Հռիփսիմէ՝ մեծ խորհուրդ ցանկալի անունով,
ընտրուած երկրէն, հրեշտակաց հետ դասուած.
օրինակ եղար կոյսերու սրբութեան,
վարդապետ դարձար արդար այրերու:

Փառքերու կատարը բարձրացած կը դովուին
պատուով ու փառքով երեսուն եօթըներ,
քանզի այս է թիւը երանեալ կոյսերու,
որ անթառամ պսակուեցան անվախճան յաւիտեան:

Սկզբնաղբիւր. [Ագաթանգեղայ Գատմութիւն Հայոց, 1909, § 137-210]:

ԱՕԽԷՆ ԹԱԳՈՒՀԻ ԵՒ ԽՈՍՐՈՎԻԴՈՒՍ

Անբաժան են ասոնք Տրդատ Թագաւորէն՝ իբրեւ անոր շուքերը եւ շնորհները, եւ միշտ միասին կը յիշուին մեր ժողովուրդի համախումբ եւ պաշտօնական քրիստոնէացման բոլոր պատմական պահերուն, մին իբրեւ անոր Թագուհին եւ միւսը՝ իբրեւ քոյրը:

Բացի Տրդատի Հետ միասնաբար իրենց անուններուն յիշատակութիւններէն պատմութիւնը շատ քիչ բան պահած է անոնցմէ իւրաքանչիւրի կեանքի մասին:

Աշխէն Թագուհիի մասին մեր միակ գիտցածն այն է, որ Կովկասեան Ալաններու Թագաւոր Աշխարազի դուստրն է, որուն ձեռքը կը խնդրէ Տրդատ՝ Հայոց Սմբատ Բագրատունի իշխանը իբրեւ դեսպան զրկելով Ալաններու Թագաւորին մօտ: Բարձրահասակ եւ գեղանի օրիորդ մը կը ներկայացուի Աշխէն, ըստ ամենայնի համանման հսկայազօր Տրդատի, որ զայն նախ Արշակունի իշխանուհի կը յայտարարէ՝ ծիրանի հագնելով ու Թագ կապելով անոր գլխին, ապա կ'ամուսնանայ անոր Հետ եւ Հայոց Թագուհի կը հռչակէ զայն: Կ'ունենան մէկ մանչ զաւակ միայն:

Իսկ Խոսրովիդուխտի մասին մեր գիտցածը այն է, որ իր հօր՝ Խոսրով Թագաւորի սպանութենէն յետոյ, երբ Գարսիկներ տիրեցին Հայոց աշխարհին, եւ Տրդատ փախցուեցաւ Հռովմ, ինք՝ Խոսրովիդուխտն ալ Օտա Ամատունի Հայ նախարարի խնամակալութեամբ փախցուեցաւ Անի ամրոցը (այժմ Կամախ կամ Քէմազ), ուր ապահով մնաց մինչեւ Տրդատի դարձը եւ հօրենական գահին տիրանալը, երբ Խոսրովիդուխտ, Վաղարշապատ բերուելով, յանձնուեցաւ Տրդատին, որուն արքունիքին մէջ ապրեցաւ կուսական կեանքով իր ամբողջ կեանքի ընթացքին:

Խոսրովիդուխտ կարեւոր դեր կատարեց Գրիգոր Լուսաւորիչը իր վերապային բանտէն ազատելուն մէջ: Տեսած ըլլալով Գրիգորի ահաւոր չարչարանքներէն ոմանք եւ լսած՝ անոր քարոզչական վկայութիւնները այդ առիթով՝ համակրանքով եւ հիացումով տոգորուած պէտք է ըլլար Գրիգորի եւ իր քարոզած կրօնքին հանդէպ: Այնպէս որ՝ երբ Գրիգոր Արտաշատի Խոր Վերապը նետուեցաւ, կարգադրած պէտք է ըլլայ անհրաժեշտը, որ Գրիգոր ողջ մնար այդ անտանելի

բանտարկութեան ընթացքին: Ու երբ Հռիփսիմեանց կոյսերու նահատակութենէն յետոյ խելակորոյս դարձաւ Տրդատ, ամենէն աւելի մտահոգուողը, հաւանաբար նաեւ ազօթողը, եղաւ նոյնինքն Խոսրովիդուխտ: Ուստի աստուածային նախախնամութիւնը ընտրեց զայն, որպէսզի միջնորդ դառնայ Գրիգորի ազատումին եւ անոր միջոցաւ Հայոց աշխարհին կրօնական լուսաւորման: Երազ տեսաւ Խոսրովիդուխտ, երբ Աստուծոյ հրեշտակը կ'ըսէր իրեն, թէ Տրդատ կրնար փրկուիլ միայն Գրիգորի ձեռամբ: Երբ պատմեց իր երազը, պալատականներ խորհեցան, որ ան խելագարուած էր, որովհետեւ ամէն մարդ համոզում գոյացուցած էր, թէ Գրիգոր շատոնց մեռած էր վերապին մէջ: Երբ երազը հինգ անգամ կրկնուեցաւ, այն ատեն Խոսրովիդուխտ իբրեւ արքայաքոյր պնդեց, որ զրկուի Արտաշատ ստուգելու իրողութիւնը, եւ ընտրեց իր հաւատարիմ խնամակալը՝ Օտա Ամատունի նախարարը այս գործին համար: Արդարեւ ի զարմացումն ամենքին՝ Գրիգոր ողջ բերուեցաւ Վաղարշապատ եւ բժշկեց Հարուածեալները:

Երբ Գրիգոր նահատակեալ կոյսերու համար գերեզմաններ փորել հրահանգեց, Տրդատ խնդրեց, որ այդ ծանր գործը ինք անձամբ կատարէ, իբրեւ փոքր ապաշխարանք իր մեծամեծ չարագործութեանց: Պատմութիւնը կը հաստատէ, որ Աշխէն Թագուհի եւ Խոսրովիդուխտ ալ սիրալոյսով իրենց մասնակցութիւնը բերին ծառաներու կամ գեղջուկներու վերապահեալ այս գործին՝ իրենց իշխանակտն գողնոցներով պեղեալ հողը դուրս հանելով:

Թագուհին եւ Թագաւորաքոյրը կարեւոր դեր կատարած պէտք է ըլլան Գրիգորի Հայոց քահանայապետ ձեռնադրուելու համար Կեսարիա զրկուելու գործին մէջ, որ Կեսարիոյ Արքեպիսկոպոսին գրուած նամակին մէջ Տրդատի անուան կը կցուին նաեւ «Աշխէն Տիկին եւ Օրիորդ Խոսրովիդուխտ»: Ու երբ Ս. Գրիգոր կը վերադառնայ Կեսարիայէն, Տրդատի եւ իր բանակին Հետ ընդառաջ կ'երթան նաեւ Աշխէն եւ Խոսրովիդուխտ մինչեւ Բագաւան կամ Բագրեւանդ, Արածանի-Եփրատի ակունքներէն ոչ շատ Հեռի: Ու ամենքը միասին (Տրդատ, Աշխէն, Խոսրովիդուխտ եւ բանակը) կը մկրտուին այդ գետի մէջ Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռամբ 302 թուականին: Հետաքրքրական է Ագաթանգեղոս պատմիչի նկարագրականը մկրտութենէն յետոյ: «Մեծ ուրախութեամբ սպիտակ հանդերձներ հագած, սաղմոսերգու-

Թեամբ եւ օրհնեցողութեամբ, վառուած կանթեղներով, մոմերով ու ջահերով, մեծ լրջմտութեամբ եւ նոյնքան մեծ ուրախութեամբ, լուսաւորուած, հրեշտակացած, Աստուծոյ որդեգրութեան անուն առած եւ Ա. Աւետարանի ժառանգութեան մտած, սուրբերու դիրքին բարձրացած, ի Քրիստոս անուշ բուրմունքով ծաղկած, տէրունական տուն (եկեղեցի) կը դառնային: Ու այստեղ գոհարանական Ա. Գառարագ կը մատուցանէր, եւ ամենքն ալ կը հաղորդուէին Սուրբ Խորհուրդին: Ամենքին կը բաշխուէր սուրբ մարմինը եւ պատուական արիւնք ամենափրկիչ Քրիստոսի, որ նոր կեանք կուտայ բոլոր մարդերուն» (Ազաթ. ՃԺԸ):

Իրենց մկրտութենէն յետոյ այլեւս գրեթէ չեն յիշատակուիր Աշխէն եւ Խոսրովիդուխտ, որմէ կը հետեւցուի, որ կատարեալ քրիստոնեայ եղած՝ շարունակեցին իրենց կեանքը բարեպաշտութեամբ եւ բարեգործութեամբ: Հաւանաբար վախճանած պիտի ըլլան Տրդատէ առաջ, որ ապրած կը նկատուի 90 տարի: Իրենց վերջին տարիները անցուցած պիտի ըլլան Գառնիի ամբողջ խաղաղութեան եւ մենութեան մէջ, գրեթէ ճգնողական կեանքով՝ իսպառ հրամարած ըլլալով արքունիքի աշխարհիկ կենցաղէն եւ սրբութեամբ կնքած են իրենց կեանքը:

Հետեւեալ կերպով վերջաւորութեան կը բերէ ասոնց վարքը ԼԻԱԿԱՏԱՐ Յայսմաւորքը Տրդատի վարքագրութենէն յետոյ:

«Իսկ ինչ ըսել հայոց առաքինազարդ Թագուհի Աշխէն Տիկնոջ մասին, որ շատոնց արդէն հրամարած էր այս կեանքի վայելքներէն եւ առանձնացած կը բնակէր Գառնի քաղաքը, որուն ամբողջ վերանորոգած էր Տրդատ ընտիր քարերով, ու արդարեւ ապրեցաւ աստուածասէր Թագուհին ճգնողական վարքով մինչեւ երկրէ երկինք փոխուիլը: Նոյնպէս՝ Թագաւորին սքանչելի քոյրը, մեծ օրիորդը եւ սուրբ կուսանը Խոսրովիդուխտ, մաքրափայլ վարքով առանձնացած սրբութեամբ կ'ապրէր Գառնիի այն տան մէջ, զոր անոր համար յատկապէս շինել տուած էր իր եղբայրը, եւ ուրիշ փոխուեցաւ իր անձկալի Քրիստոսին» (էջ 323):

Անբաժան եղած էին երկրաւոր կեանքի ընթացքին Տրդատէն եւ անբաժան մնացին նաեւ յետոյ, նախ յերկինս իբրեւ արդար հոգիներ,

եւ ապա յերկրի, քանի որ իրենց յիշատակը միասին կը կատարուի եկեղեցիի մէջ Հոգեգալստեան յաջորդող Ե Կիրակիի նախորդ Շարաթ օրը: Իսկ Յայսմաւորքները կը դնեն երեքին միասնաբար տօնախմբութիւնը Նոյեմբեր 29ին:

ՄԱՆԷ ԿՈՅՍ †323

Կարճ է Մանէի վարքը: Հռիփսիմեանց կոյսերու խումբէն էր, որոնք երբ Հռովմէն ճամբայ ելան շուրջ 70 հոգի էին: Ծամբան ոմանք հաւանաբար մեռան, իսկ ուրիշներ զանազան տեղեր մնացին եւ Հագլիւ 37 հոգի հասան ի վերջոյ Վաղարշապատ, ու նահատակուեցան: Ծամբան ուրիշ տեղեր գացողներէն երկուքին անունները միայն պահուած են պատմութեան մէջ: Անոնցմէ մէկն է ՆՈՒՆԷ, որ Աստուծոյ նախախնամութենէն առաջնորդուեցաւ Վրաստան եւ եղաւ անոնց առաջելուհին եւ ամբողջական դարձի պատճառ, ինչպէս տեսանք մեր նախորդ Հատորին մէջ (ՀԱՄԱՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՍՈՒՐԲԵՐ. էջ 186): Իսկ միւսն է ՄԱՆԷ:

Երբ Հռիփսիմեան կոյսեր Հայաստան հասան, ասոնցմէ Մանէ աստուածային ազգումով զատուեցաւ իր ընկերուհիներէն եւ զնաց Եկեղեցաց գաւառը, որուն կեդրոնը Երզնկան էր: Այնտեղ Սեպուհ կոչուած լերան վրայ յարմար քարայր մը գտնելով՝ որոշեց այնտեղ ճգնողական կեանք ապրիլ: «Սա մտքով լուսաւորուած հոգեւոր ճանապարհին տեղեակ անձ մըն էր եւ Աստուծոյ հոգիին շնորհներով ամրացեալ էր» (ԼԻԱԿԱՏԱՐ, էջ 250): Այնտեղ հրեշտակային կեանք մը ապրեցաւ երկար ատեն, ենթակայ՝ ամառուան տաքին եւ ձմրան ցուրտին խստութեանց, զորս սիրով եւ համբերութեամբ կը կրէր: Սակայն աստուածային մխիթարութիւնը, որով լեցուած էր, մոռցնել կուտար բնութեան պատճառած նորութիւնները: Եւ այսպէս երկար ատեն աստուածամերձ կեանք մը կ'ապրէր աղօթքով եւ ճգնութեամբ:

Շատ տարիներ յետոյ, երբ Ա. Գրիգոր Լուսաւորիչ ալ առանձնութեան փափաք զգաց, իր քայլերը դինք առաջնորդեցին գէպի Դարանաղեաց լեռները, իր կարգին նշմարեց Սեպուհ լերան քարայրը, ուր կը ճգնէր Մանէ: Սակայն ծերացեալ կոյսը ձայնեց հեռուէն. «Այժմ մի մօտենար այրին, այլ երեք օր յետոյ եկուր»: Երբ արգարեւ

Հասարակ իրեր օր յետոյ վերադարձաւ այրը, արդէն վախճանեալ գտաւ սրբուհին, զոր սաղմոսով եւ օրհնութեամբ թաղեց նոյն այրին մէջ, ինչպէս ժամանակին թաղած էր անոր ընկերուհիները իրենց նահատակուած տեղերը, եւ ինք ճգնեցաւ այդ քարայրին մէջ, որ անկէ յետոյ կոչուեցաւ «Մանեայ այր»:

Կը տօնուի նուէն կոյսին Հետ Տօն Կաթողիկէի յաջորդող Երեք-շաբթի օրը: Իսկ Յայսմատորքները կը նշանակեն Հոկտեմբեր 29ին:

Ծանօթ. Տիրայր Մ. Վրդ. Տէրվիշեանի պատրաստուած ՅՐՈՒԱՑԱՆԿին մէջ Մանէ եւ Մարիանէ կոյսեր իրարու Հետ շփոթուած եւ նոյնացած են: Մարիանէ կը նկատուի Հոբփսիմեանց խումբէն այն կոյսը, որ Հիւանդ ըլլալուն մնացած էր «Հնձանքի» մէջ եւ ուր առանձինն նահատակուեցաւ:

ՇՈՒԾԱՆ - ՎԱՐՂԵՆԻ †475

Քաջ նահատակ Հօր՝ Վարդան Մամիկոնեանի նոյնքան արի եւ մարտիրոսացեալ դուստրն է Շուշանիկ: Իր բուն անունն է Վարդանի կամ Վարդանուհի, փաղաքշարար կը կոչէին զայն Օուշանիկ, որ մնայուն անուն դարձած էր իրեն համար: Ունէր կրտսեր քոյր մը եւս, որ երջանիկ ամուսնութիւն կնքած էր Արշաւիր Կամսարական իշխանին Հետ եւ ազգին պարգեւած էր երեք կորիւններ (Ներսէհ, Հրահատ ու Սահակ), որոնք, կարեւոր դեր կատարեցին այն ազատագրական շարժումին մէջ, որ յաջորդեց Վարդանանց պատերազմին՝ Վահան Մամիկոնեանի գլխաւորութեամբ: Իսկ Վարդանին դժբախտ ամուսնութիւն մը կնքեց Վրաց Վազգէն իշխանին Հետ, որ անոր կեանքի իրական փուշ պսակը եղաւ:

Մնածը կը նկատուի 409ին. իր հօրենական մեծ մայրն էր Սահականոյշ, դուստրը Սահակ Հայրապետի: Իր Հօր պէս ինք եւ իր քոյրն ալ ստացած էին շատ բարձր եւ մաքուր ընտանեկան դաստիարակութիւն. բարեպաշտ եւ եկեղեցասէր էին երկուքն ալ իրենց մանկութենէն սկսեալ: Շուշանիկի մասին Հետեւեալ դրուատիքը ունի Յայսմատորքը. «Ջարդարուած էր սա երկիւղածութեամբ եւ պարկեշտութեամբ, կատարեալ հաւատքով եւ սիրով կապուած էր Քրիստոսի. կրթուած աստուածապաշտութեան մէջ, փութաջան էր բարի գործերու

մէջ»: Վրաց իշխան Վազգէնի Հետ ամուսնութենէն ունեցաւ երեք մանչ եւ մէկ աղջիկ:

Վազգէն քրիստոնէական կրօնքի բարոյական պահանջներէն ինքզինքը ազատելու եւ Պարսից աչքին հաճելի երեւալու համար Տիգրան գնաց եւ կամաւորապէս ուրացաւ իր կրօնքը եւ ընդունեց Պարսկական կրահապաշտութիւնը եւ օրուան շահին Պէրոզին գոքանչին Հետ ամուսնացած վերադարձաւ: Թոստացած էր շահին իր առաջին կինը՝ Շուշանիկը, եւ զաւակներն ալ մոգութեան կրօնքին դարձնել:

Շուշան երբ լսեց, որ ամուսինը ուրացած կը վերադառնայ, իր զաւակներն առած ազատանեցաւ եկեղեցի, ուր կը մնար ամբողջ օրը, իսկ գիշերն ալ հսկումով կ'անցնէր մօտակայ խցիկ մը: Ի վերջոյ դժուարաւ համոզեցին զայն պալատ վերադառնալ: Պալատ վերադառնալէն յետոյ ալ չէր ուզեր որեւէ կապ ունենալ իր ամուսնուն Հետ, մինչեւ որ Վազգէն սկսաւ բրտօրէն ծեծել ու չարչարել եւ ի վերջոյ բանտ նետեց զայն՝ զարեղէն հացէն ու ջուրէն զատ ոչինչ տալով անոր: Վազգէն, պալատէն երկար բացակայութեան մը առիթով, յանձնած էր զայն քաղաքի եպիսկոպոսարանը, հսկողութեան տակ: Վերդարձին երբ Հրամայեց, որ պալատ վերադառնայ՝ Շուշանիկ մերժեց: Վազգէն բռնութեամբ եւ քաշկուտելով բերել տուաւ զայն, զլիսաբաց եւ հազուստները պատուելով:

Արքունիքին մէջ շղթայի զարնել տուաւ իր կինը ձեռքերէն, ոտքերէն եւ վիզէն: Այս վիճակի մէջ ամբողջ վեց տարի չարչարուեցաւ Աստուծոյ այս մեծ վկայուհին՝ անանելով լոկ հացով եւ պարզ ջուրով: Բանտին մէջ քուրճ մը միայն հագած էր գօտիով պնդուած, բոկոտն եւ բացազուլի. կենդանիի մորթ մը միայն ունէր իբրեւ անկողին: Անսասան մնաց իր հաւատքին վրայ, հակառակ իր բարբարոս ամուսնոյն պնդումներուն, որ ուրանայ իր կրօնքը եւ ազատի թշուառ կեանքէն:

Բանտարկութեան 7-րդ տարին Շուշանիկ կը Հիւանդանայ՝ իր կրած սաստիկ տանջանքներէն Հիւծած ու մաշած: Մարտիրոսական մահուամբ կը կնքէ իր առաքինի կեանքը նոյն այդ բանտին մէջ: Վերջին վայրկեաններուն բարեբախտաբար իր մօտ են քաղաքին Եպիսկոպոսը, իր դրան Երէցը եւ Ջոշիկ իշխանը՝ Վազգէնի եղբայրը, որ չէր ուրացած եւ կ'աշխատէր օգտակար ըլլալ իր հարսին առանց

մեծ յաջողութեան: Ասոնք իր փափաքին Համաձայն թաղեցին զայն
այն փոքրիկ խցիկը, ուր ապաստանած էր առաջին անգամ Վազգէնի
ուրացումէն յետոյ:

Շուշանիկի գերեզմանը ցայսօր կը ցուցուի Թիֆլիսի միջնաբերդի
բանտին մէջ: Շուշանիկ իր Հետ ունէր փոքր Աւետարան մը, Հաւանա-
բար մնացած իր մեծ մայրիկէն՝ Սահականոյշէն, որուն տրուած էր Ա.
Սահակէն: Իր մեծագոյն միւթարութիւնը այս Աւետարանի ընթեր-
ցումին մէջ կը գտնէր: Վախճանած կը նկատուի 475 թուականին,
չուրջ 60 տարեկանին:

ԼԻԱԿԱՏԱՐը Հետեւեալ ձևով կը ներկայացնէ անոր կեանքին
վերջին վայրկեանները:

«Պատրաստեց ինք զինքը արժանաւոր ընդունելութեան Ա.
Հաղորդութեան, արամութեան այս հովիտէն ելլելու ատեն: Եւ
իր միտքը առ Աստուած ուղղելով՝ աղօթեց, ըսելով. «Տէր
Յիսուս, ընդունէ աղախինիդ հոգին»: Եւ այսպէս բարի խոստո-
վանութեամբ Քրիստոսի ձեռքը աւանդեց իր հոգին Վարդուհի
Շուշան՝ ընդունելով կատարեալ նահատակութեան պատիւը՝ իր
երանելի հօր Վարդանէն յետոյ»:

Ինչպէս Հռիփսիմէի անունը կապուած է Վարազայ Խաչին Հետ,
այնպէս ալ Շուշանիկի անունը կապուած է ուրիշ նշանաւոր Խաչի մը
Հետ: Տեսնելով, որ կրակապաշտութիւնը կը տարածուի Վրաստանի
մէջ իր ուրացեալ ամուսնոյն պատճառով՝ կ'աշխատի փրկել «Նշանա-
գործ Ա. Խաչ Նունեսայ կուսի Վրաց լուսաւորչի» եւ Հայաստան՝ իր
գաւառը Տարօն զրկել կուտայ զայն, որպէսզի չաղծուի ուրացեալնե-
րու կողմէ: Այս Խաչը կը յանձնէ Անդրէաս անուն հոգեւորականի մը,
որ իր մեծ պապին՝ Ա. Սահակի աշակերտներէն էր: Երբ Անդրէաս իր
թանկագին աւանդով Սպեր կը հասնի, աւելի առաջ չի կրնար երթալ
եւ 5 տարի այնտեղ կը մնայ: Ապա լուր կը զրկէ օրուան Մամիկոնեան
նախարարութեան իշխանին, որ կուգայ Սպեր, կը ստանայ Խաչը եւ
կը տանի Տարօն եւ կը դնէ Մամիկոնեանց յատուկ Կապոյտ ամրոցին
մէջ, որմէ յետոյ այդ Խաչը կը կոչուի Շուշանիկի Խաչ: Այստեղէն
փոխադրուած է Վանանդ գաւառի Ա. Խաչ վանքը, ապա Կարս քաղա-
քը, անկէ ալ 164 տարի յետոյ՝ Անի, ուր կը մնայ 142 տարի: Երբ Անի
կը գրաւուի թաթարներէն, այս Խաչն ալ կ'անյայտանայ:

ՓԵՏՏԻՄԱԼՃՅԱՆԻ Յայտնաւորքը կը յիշատակէ Շուշանիկը
Դեկտեմբեր 29ին. իսկ ՄԱՐՁՈՒԱՆՅԻՆը՝ Դեկտեմբերի 25ին: Ներ-
կայիս մենք կը տօնենք Շուշանիկը Խաչի Բ Կիրակիին յաջորդող
Երեքշաբթիին Փերրոնէ եւ Մարիանէ կոյսերուն Հետ: Յատուկ շարա-
կան չունի:

Սկզբնաղբիւր [Վկայարանութիւն սրբոյ Շուշանկանն, որ կատա-
րեցաւ ի Վիրս յառնէ իւրմէ յանթիպատրէ Վրաց առաջնորդէ, որ էր
գուսար սրբոյն Վարդանայ... «Սոփերք Հայկականք», Թ: Պարոյր
Մորադեան, Սուրբ Շուշանիկի Վկայարանութիւնը. բնութագրեր եւ
ուսումնասիրութիւն, Երևան, 1996]:

Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս Ն Ե Ր

Յատկանշական է, որ այս գլուխի տակ յիշուած 5-6 մարտիրոսներուն մեծ մասը ազգով կամ դաւանանքով այլազգ են՝ Պարսիկ կամ Արար, Զրադաշտական կամ Իսլամ: Բայց որովհետեւ ամենքն ալ Հայ քրիստոնեայ մկրտուած են եւ Հայ անուն ստացած են, հետեւաբար գրեթէ ամբողջութեամբ Հայացած են:

Հայ եկեղեցին սիրով որդեգրած է զանոնք եւ տեղ տուած է անոնց իր Տօնացոյցից մէջ որպէս իր հարազատ զաւակները: Յատկանշական է նաեւ յիշել, թէ ամենքն ալ առհասարակ իշխանական կամ մեծատուն ընտանիքներէ կուգան եւ ամենքն ալ իրենց արիւնը թափած են Քրիստոսի սիրոյն համար Հայ Հողի վրայ, եւ իրենց գերեզմանները յարգուած են Հայ ժողովուրդէն իրբեւ ուխտատեղի:

1. ՍՏԵՓԱՆՈՍ ՈՒԼՆԵՑԻ † 363

Մնած էր Կոկիսոն քաղաքը Տաւրոս լեռներու վրայ: Մանօթ են իր Հօր եւ մօր անուները՝ Ղազար եւ Մարիամ: Ստեփանոս կը նկատուի ուխտի զաւակ եւ մեծցած է հոգածութեան եւ դաստիարակութեան ներքեւ զինք մկրտող քահանային, որուն համար ըսուած է, թէ «Ամէն օր Ս. Պատարագ կը մատուցանէր այդ պատուական քահանան եւ ամէն Կիրակի կը հաղորդէր միւս քրիստոնեաներու հետ նաեւ Ստեփանոս պատանին Տիրոջ մարմնի եւ արեան կենարար խորհուրդին: Եւ այսպէս կը մեծնար եւ կը զօրանար պատանին Ստեփանոս իմատութեամբ եւ Ս. Հոգիի շնորհներով: Երբ 15 տարեկան եղաւ, արդէն իսկ կրթուած էր աստուածային պատուիրաններով եւ գիտակ էր Աստուածաշունչ գրքին»: (ԼԻԱԿԱՏԱՐ, էջ 442):

Ժամանակ մը յետոյ Քահանան երբ զգաց, որ պիտի մեկնի աշխարհէն, իր մօտ կանչեց Ստեփանոսը եւ ըսաւ. «Որդեակ, այլեւս չափահաս եղար, նախ դուռն ամուր մնացիր հաւատքի մէջ եւ ապա

քաջալերէ փոքրիկ Հօտը, որպէսզի երկու մտքի վրայ տարակոյսի մէջ չմնան հաւատքի մասին, մինչեւ որ Աստուած իրենց նոր տեսուչ մը տայ»:

Յուլիանոս Ուրացող Պարսից դէմ պատերազմի երթալու ատեն երբ Կեսարիա հասաւ, Հալածիչներ զրկեց շրջակայ քաղաքները, որպէսզի վերստին կուսպաշտութեան հրաւիրեն քրիստոնեաները: Անոր մարդերէն մէկն ալ Կոկիսոն եկաւ եւ սարսափ կը տարածէր ամէն կողմ: Ստեփանոս երբ տեսաւ, որ Քրիստոնեաներ ահուգողի մատնուած են եւ վախնալով, որ ոմանք, հրապուրուելով չարին խոստովանութենէն կամ չգիմանալով չարչարանաց, կորսնցնեն իրենց հաւատքը եւ յաւիտեանական կեանքը, համոզեց զանոնք, որ հեռանան քաղաքէ եւ լեռ բարձրանան եւ այնտեղ աւելի ապահովութեան մէջ շարունակեն քրիստոնեայ մնալ: Եւ իր հետ առնելով իր ընտանիքը, բարեկամները եւ եօթը կոյսեր, ընդամէնը 33 Հոգի, լեռ բարձրացան: Ծամբան իր Հայրը Ղազար մեռաւ առաքիւնի մահուամբ, իսկ միւսները ապաստանեցան մեծկակ քարայր մը, որուն քով կար նաեւ անուշահամ աղբիւր մը: Աստուծոյ գոհութիւն մատուցին «եւ անդադար գիշեր-ցերեկ կ'օրհնէին զԱստուած սաղմոսներով եւ հոգեւոր երգերով Ստեփանոսի առաջնորդութեամբ»: Հովիւ մը, գտնելով անոնց թաքստոցը, մատնեց զանոնք նորեկ Հալածիչ դատաւորին, որ, գինուոր զրկելով, բերել տուաւ զանոնք ներկայութեան: Երբ ոմանք կուլային եւ տարակուսանքի մէջ էին, Ստեփանոս քաջալերեց զանոնք՝ ըսելով. «Մի վախնաք, երթանք. մինչեւ Հիմա միասին ապրեցանք, միասին ալ ստանանք նահատակութեան պսակը»:

Երբ ներկայացան դատաւորին, վերջինս ըսաւ. «Մէկ կողմ դրէք ձեր յամառութիւնը, Հնազանդեցէք կայսերական հրամանին, եւ ոչ ոք պիտի վնասէ ձեզի եւ խաղաղօրէն պիտի ապրիք ձեր քաղաքին մէջ»: Ստեփանոս ամենքի անունով ըսաւ, որ չեն կրնար հրաժարիլ իրենց կրօնքէն եւ պատրաստ են ենթարկուելու ամէն չարչարանքի եւ մինչեւ իսկ մահուան:

Այն ատեն դատաւորը Հրամայեց կիները բանտ նետել, իսկ այրերը կապել եւ ծանր ծեծի եւ զանազան չարչարանքներու ենթարկել: Այդ տանջանքներու ընթացքին Բագարատ անունով պատանին մահացաւ: Ապա բանտարկուած կիներն ալ հրաւիրուեցան ուրացու-

Քեան: Ստեփանոսի մայրը՝ Մարիամ, ամենքին ի դիմաց ըսաւ, որ պատրաստ են մեռնիլ յանուհի երկինքի եւ երկրի արարիչ իրենց Աստուծոյն, քան թէ կուռքերու երկրպագութիւն ընել: Այն ատեն Հանեցին զանոնք քաղաքէն դուրս եւ մի առ մի գլխատեցին:

Իսկ այրերը նախ կրակի դատապարտեցին, բայց երբ տեսան, որ կրակը չ'ազդեր անոնց, զանոնք եւս Հանեցին քաղաքէն եւ գլխատեցին ոչ շատ հեռի այն տեղէն, ուր կիները նահատակուած էին: Յայսմաւորքը մի առ մի կուտայ ամենքին ալ անուհիները: Հեթանոսներէն շատեր, տեսնելով անոնց արիութիւնը եւ խաղաղութիւնը, որով կը դիմաւորէին մահը, Հաւատացին եւ փոխան 33 նահատակներու աւելի քան 90 նորադարձներ եղան: Մինչ այդ Յուլիանոս սպաննուած էր արդէն Գարսից Հետ պատերազմելու ատեն, եւ նոր կայսրը վերջ տուած էր Հալածանքի:

Նահատակներու վրայ երեք եկեղեցիներ շինուեցան. մէկը կիներու նահատակուած տեղը՝ ոչ շատ հեռի այսօրուան Մարաշ քաղաքէն: Ստեփանոս Ուլնցի կոչուեցաւ պարզապէս իր անուհով շինուած եկեղեցիին այս քաղաքին մօտիկը ըլլալուն համար:

Յայսմաւորքներ կը դնեն Ստեփանոսի եւ ընկերներուն նահատակութիւնը Օգոստոս 1ին: Իսկ ներկայիս մենք կը տօնենք զկնի Վերափոխման Գ Կիրակիի յաջորդ Երկուշաբթի օրը:

Ունի իւրայատուկ ՄԱՆԿՈՒՆՔ շարական մը երկու պատկերներէ (7 տուն) բաղկացեալ:

ՇԱՐԱԿԱՆ Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ ՈՒԼ ՆԵՑԻՈՅԸ

Մարտիրոս եւ վկայ Քրիստոսի, Ստեփանոս,

որ ըզջարջարանս յանձն առեր

եւ երկնային դասուցն եղեր դասակից:

Ազաչեա զԱստուած շնորհել մեզ ըզկեանս անվախճան:

Ըստ անուան քո եղեր պսակ* եկեղեցւոյ

եւ Հետեւող լուսազարդ ճանապարհին.

* Ստեփանոս կը նշանակէ Պսակ:

եւ յորդորիչ գտար ընտրելոցն ընդ քեզ սրբոցն:

Ազաչեա զԱստուած շնորհել մեզ զկեանս անվախճան:

Յնծութիւն եկեղեցւոյ ընտրեցար ի Հոգւոյն

եւ լուսաւորեցեր զորդիս Թորգոմայ.*

այսօր բերկրին Հաւատացեալք

եւ տօնեն ըզճգնութեան քո զՀանդէս:

Ազաչեա՛ զԱստուած շնորհել մեզ զկեանս անվախճան:

Թարգմանութիւն.

Մարտիրոս եւ վկայ Քրիստոսի, Ս. Ստեփանոս,

որ չարչարանքները յանձն առիր

եւ երկնայիններուն դասակից եղար:

Ազաչէ Աստուծոյ, որ շնորհէ մեզի անվախճան կեանք:

Ըստ անուհիդ* եկեղեցիի Պսակ եղար,

եւ Հետեւող՝ լոյսով զարդարուած ճանապարհին:

Յորդորող եղար քեզի ընկերացող ընտրեալ սուրբերուն:

Ազաչէ Աստուծոյ, որ շնորհէ մեզի անվախճան կեանք:

Հոգիէն ընտրուեցար եկեղեցիի ուրախութիւն ըլլալու,

եւ լուսաւորեցիր Թորգոմի որդիները:*

Այսօր կը բերկրին Հաւատացեալներ

եւ կը տօնեն ճգնութեանդ յիշատակը:

Ազաչէ Աստուծոյ, որ շնորհէ մեզի անվախճան կեանք:

2. ԳՐԻԳՈՐԻՍ ՈՒԹԻԿ Կ549

Ազգով պարսիկ. Ռոմիկ ցեղէն, Մանածիւր անուհով, գաղթած էր Հայաստան եւ Հաստատուած Գուրի քաղաքը, ՄծԷԾ Գնունի Հայ Մարզպանի օրով Զ գարու առաջին կէսին: Այստեղ վերահասու եղաւ.

* Թորգոմի որդիներ - այսինքն՝ Հայեր:

քրիստոնէական կրօնքի ճշմարտութեան եւ վեհութեան, Հաւատաց ու մկրտուեցաւ Գրիգորիս անունով: «Ձուարթասիրտ մարդ մըն էր, լեցուն Ա. Հոգիով, կ'եռար աստուածապաշտութեամբ եւ իր առաքինի վարքով օրինակելի էր»: (ԼԻԱԿԱՏԱՐ, էջ 83):

Քրիստոնէական կատարելութեան մէջ աւելի յառաջդիմելու համար վանք մտաւ եւ կրօնաւորական կարգ ստացաւ: Այստեղ իրեն տուին հիւրընկալի պաշտօն: Ամենքին սրտանց ծառայելու պատրաստականութեամբ եւ բարութեամբ, բոլոր վանք այցելողներուն սիրտը գրաւեց. իր հոչակը ամէն կողմ տարածուեցաւ, այն աստիճան, որ վանքը սկսան կոչել իր անունով՝ Գրիգորիս Ռաթիկի վանք:

Որքան ատեն որ Հայոց Մարզպան էր Մժէժ Գնունի, երկիրը խաղաղութիւն կը վայելէր քաղաքականապէս եւ կրօնական գետնի վրայ: Սակայն 548ին անոր մահէն յետոյ պարսից շահը Հայաստանի Մարզպան դրկեց Դենշապուհ Պարսիկը՝ «այր ժանտ եւ կռամոլ», որ իր հետ բերած էր նաեւ մոզեր՝ Հայոց մէջ կրակապաշտութիւնը տարածելու համար, «Կը ստիպէր քրիստոնեաները կրակապաշտ դառնալ եւ շատեր Հաւատքի համար նահատակեց»:

Երբ իմացաւ, որ Գրիգորիս Ռաթիկ նախապէս Պարսիկ ու կրօնքով կրակապաշտ էր, իր մօտ հրաւիրեց եւ յորդորեց, որ իր նախկին կրօնքին դառնայ: Երբ Գրիգորիս մերժեց, ըստ սովորութեան, նախ սաստիկ տանջանքներու ենթարկեց՝ կոտորելու համար անոր արիական ու համարձակ դիմադրութիւնը, եւ ապա բանտարկեց: Երբ անկարելի եղաւ դարձի բերել զայն, սուրով գլխատման վճիռ արձակեց: Գրիգորիս զուարթ տրամադրութեամբ ընդունեց վճիռը եւ ուրախութեամբ նահատակուեցաւ 549ին՝ ըստ Օրմանեանի, կամ 551ին՝ ըստ ԼԻԱԿԱՏԱՐի, Յունուար 2ին Դուռնի մէջ:

Կը տօնուի միասնաբար Կիրակոս Մանկան եւ Յուդիտայի, Գորդիոսի եւ Պողիկտոսի հետ: Երբ տարւոյն գիրբը Ա-ն են, կը յիշատակուին Վարդավառի Դ Կիրակիին յաջորդող Բ2. Գ2. Ե2. օրերէն մէկը, ըստ տարեգրի: Իսկ եթէ տարւոյն գիրբը Ծ-Ք են, կը յիշատակուին Ութօրէքի յաջորդող Ա կամ Բ կիրակիներէ յետոյ եկող Բ2. Գ2. Ե2. օրերէն մէկը, ըստ տարեգրի: Այս բոլորը կը ճշգուռն Տօնացոյցի երկրորդ Հատորի ցուցմունքներու համաձայն:

3. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ - ՄԱՆՈՒԺ † 553

Ազգով պարսիկ, Քուներաստանցի, մոզպետի գաւակ, Մախոժ անունով, որ Դուռն հաստատուած էր Դենշապուհ Պարսիկ մարզպանի օրով: Ներկայ եղաւ Գրիգորիս Ռաթիկի նահատակութեան եւ մեծապէս տպաւորուեցաւ անոր ցոյց տուած արիութենէն եւ Հաստատակամութենէն, եւ քրիստոնէական կրօնքի հանդէպ հզօր համակրանք ստեղծուեցաւ իր մէջ:

Օր մը երբ միւս մոզպետով միասին կրակապաշտութեան արարողութիւն կը կատարէին, կրակ առաւ իրենց ապարանքը եւ անկարելի եղաւ մարել զայն: Այն ատեն տեղւոյն Հայ Հոգեւորականութիւնը, իրենց հետ առնելով Քրիստոսի Խաչափայտի մասունքը, փութացին այնտեղ եւ յաջողեցան Խաչի նշանով մարել կրակը: Ասիկա պատճառ եղաւ, որ բոլորովին խախտի Մախոժի Հաւատքը իրենց կրօնքին հանդէպ եւ յարի քրիստոնէութեան: Լուր տուին Դենշապուհ մարզպանին, որ կանչեց նախ ու խրատեց, որ դառնայ իր Հայրերու կրօնքին, իսկ անիկա համարձակութեամբ խոստովանեցաւ իր քրիստոնեայ ըլլալը եւ այլանոց կրակապաշտութիւնը:

Դենշապուհ գանակոծել տալով բանա նետեց զայն, ուր ան Հանդիպեցաւ Ներսէս եւ Սահակ կրօնաւորներուն եւ անոնցմէ աւելի հիմնականօրէն սորվեցաւ քրիստոնէական կրօնքը եւ մկրտուեցաւ՝ վերակոչուելով պարսկերէն լեզուով Յիզտիրուզիտ, որ կը նշանակէր Աստուածատուր եւ այս անունով ալ ճանչցուեցաւ Հայոց մէջ: Ոչ միայն Քրիստոնեայ եղաւ, այլ նաեւ իր վարժապետներուն՝ Ներսէսի եւ Սահակի պէս կրօնաւորական ուխտ ըրաւ: Երբ մարզպանը փոխուեցաւ, նորեկը վերանկատարութեան ենթարկեց գառապարտեալները, Ներսէսն ու Սահակը ազատ արձակուեցան իբրեւ ի բնէ քրիստոնեաներ, սակայն Մախոժը հրաւիրուեցաւ վերադառնալ իր նախկին կրօնքին: Երբ այս վերջինը մերժեց, այն ատեն Հրամայեց խաչել զայն: Խաչին վրայէն անգամ կը քարոզէր ամենքին «Հաստատ մնալ Քրիստոսի Հաւատքին վրայ եւ Համբերել ամէն նեղութեան, որուն կ'ենթարկուինք Անոր անունով»: Որպէսզի աւելի չքարոզէ եւ չվկայէ՝ նետահար սպաննեցին զայն Խաչին վրայ 553ին Փետրուար 25ին:

Օրուան Կաթողիկոսը, Ներսէս Բ Բագրեւանդացի, արտօնուեցաւ

տիրանալ նահատակի մարմինին եւ մեծահանդէս յուզարկավորութեամբ թաղեց զայն Դուրի կաթողիկէին արեւելակողմը եւ վրան վկայարան կանգնեց:

Կը տօնուի Յիսնակի Ե Կիրակիին յաջորդող Բշ. կամ Գշ. օրերուն, երբեմն առանձինն, երբեմն միասնաբար իր դրացի սուրբերուն հետ, համաձայն տարեգիրներու ցուցմունքին: Ասոր յիշատակութիւնը կը պակսի ՓեՇՏԻՄԱԼՃԵԱՆԻ Յայսմաւուրքին մէջ:

Սկզբնադիր. [«Վկայաբանութիւն սրբոյն Յիզտիրուգտեայ, տե՛ս «Վարք եւ վկայաբանութիւնք սրբոց», հատ. Բ, Վեներտիկ, 1874, էջ 124-130: Նաեւ Ասողիկ, Սամուէլ Անեցի, Վարդան Արեւելցի]:

4. ԴԱԻԻԹ ԴԸԻՆԵՑԻ † 701

Գարսիկ հօր եւ քրիստոնեայ մօր զաւակ, նախկին անուսով՝ Սուրհան, իշխանական սերունդէ, իսլամական կրօնքը ընդունած կը ծառայէր ի Հայաստան Արարական բանակին մէջ: Բրիտանացի հետ մօտիկ շփում ունենալով՝ ինքնաբերաբար տրամադրութիւն ստեղծուեցաւ իր մէջ քրիստոնեայ ըլլալու: Իր այս մտադրութիւնը յայտնեց Գրիգոր Մամիկոնեան իշխանին, որ քաջալերեց զայն, օրուան Անաստաս Կաթողիկոսին ներկայացուց, որ անհրաժեշտը ուսուցանելէն յետոյ անձամբ մկրտեց զայն Արուճի իր նորակառոյց Կաթողիկէին մէջ: Գրիգոր Մամիկոնեան կնքաւճայր եղաւ եւ իր հօր՝ Դաւթի անունը տուաւ նորահաւատ իշխանին: Ապա ամուսնացուց զայն եւ գիւղ մըն ալ յատկացուց իբրեւ ապրուստի միջոց: Դաւթի ապա փոխադրուեցաւ Դուրի եւ գրեթէ 30 տարի ապրեցաւ բարեպաշտ քրիստոնեայի կեանքով եւ այս պատճառով կոչուեցաւ Դըւնեցի:

Երբ արաբ Ապտուլլահ, «այր ժանտ, ժպիրհ եւ ապերասան», ոստիկան եղաւ Հայաստանի, սկսաւ հալածել քրիստոնեաները: Երբ իմացաւ, որ Դաւթի նախկին իսլամ մըն էր, հրաւիրեց զայն դառնալ իր նախկին կրօնքին: Դաւթի անխախտ մնաց իր հաւատքին մէջ: Վերջապէս խաչելու հրաման տրուեցաւ, որուն վրայ ան եւս նիզակահար սպաննուեցաւ, 701ին, գրեթէ 60-65 տարեկանին: Այս ալ թաղուեցաւ Դուրիի Ա. Գրիգոր Կաթողիկէի մօտիկը:

Կը տօնուի Խաչի Գ Կիրակիի յաջորդող Բշ. օրը: Երեք Յայսմա-

տուքներու մէջ ալ յիշուած է Մարտ 31ին: Օրմանեան կը նախընտրէ Ապրիլ 4-ը:

Ունի երեք տուներէ բաղկացեալ իւրայատուկ Մանկուճք շարահան մը, որուն առաջին տունը միայն կուտանք:

Լցեալ աստուածային շնորհիւ
երանելի սուրբ ճգնաւոր տէրդ Դաւթի,
եւ անուն քաջութեան քո ել յերկինս՝
յուրախութիւն հրեշտակաց
եւ ընդ աշխարհս ամենայն ցնծութիւն մարդկան:

Թարգմանութիւն

Աստուածային շնորհով լեցուեցար,
Ով երանելի սուրբ ճգնաւոր տէր Դաւթի,
Եւ քու քաջ անունդ մինչեւ երկինք ելաւ՝
Հրեշտակներու որպէս ուրախութիւն
եւ ամբողջ աշխարհ տարածուեցաւ՝
ի ցնծութիւն մարդերու:

Սկզբնադիր. [«Սոփերք», ԺԹ, էջ 85-96]: Յովհաննէս Կաթողիկոս Պատմաբան:

5. ՍԱՀԱԿ ԵՒ ՅՈՎՍԷՓ ԿԱՐՆԵՑԻՔ † 808

Զաւակներն են Արաբ իշխանագունի մը, որ կանուխէն Կարինի (էրզրում) մէջ հաստատուած ըլլալով ամուսնացած էր Հայ կնոջ մը հետ, որուն ոչ միայն արտօնած էր պահել իր քրիստոնէական կրօնքը, այլ իրենց զաւակներն ալ քրիստոնեայ մկրտել ու նոյն կրօնքին մէջ մեծցնել: Ասոնք երբ չափահաս եղան, Յովսէփ (Յուսուֆ) ամուսնացաւ քրիստոնէի հետ եւ զաւակներ ունեցաւ: Երկու եղբայրներ, իրենք զիրենք անապահով զգալով Արաբ տիրակալութեան ներքեւ եղող Կարինի մէջ, կ'որոշեն յուսակաւն բաժին անցնել եւ այնտեղ աւելի ազատ ու համարձակ պաշտել իրենց կրօնքը. բայց նախ քան երկրէն հեռանալը քաղաքին Արաբ իշխանին ականջը կը հասնի իրենց իսլամ հօր

մը զաւակներ եղած ըլլալը, ուստի կը հրաւիրուին դառնալ իրենց հօր կրօնքին: Ասոնց մերժելուն վրայ՝ կը բանտարկուին եւ տանջանքներու կ'ենթարկուին. բայց զանոնք ուրացումի առաջնորդելու համար կատարուած բոլոր ողորջանքները, խոստումները եւ սպառնալիքները անօգուտ կ'անցնին: Մինչեւ իսկ իրենց լայնախոհ իսլամ հայրը կը թելադրէ անոնց կեղծ ուրացութեամբ ազատիլ եւ ապա Յունական բաժին անցնելով՝ շարունակել քրիստոնեայ մնալը: Երկու եղբայրները, սակայն, սիրով յանձն կ'առնեն մահը, քան ուրացումը: Ուստի Կարնոյ իշխանը հրաման կ'արձակէ գլխատել զանոնք: Բոլոր վկայաբանութիւններ կը հաստատեն, որ «վերէն լոյս իջաւ սուրբերու մարմիններուն վրայ»: Քաղաքի իշխանը մեղմացած կ'արտօնէ, որ քրիստոնեաներ վերցնեն անոնց մարմինները եւ պատուով թաղեն:

ԼԻԱԿԱՏԱՐԸ կը վկայէ, որ ատեն մը վերջը վայելուչ վկայարան մը (մատուռ մը) շինուեցաւ անոնց գերեզմանին վրայ, ուր եւս շատ մը բժշկութիւններ կը կատարուէին սուրբերու բարեխօսութեամբ:

Իսկ Օրմանեան, որ Կարնոյ առաջնորդ ալ եղած է, կը հաստատէ, որ «քաղաքամիջի կեդրոնը իսլամներէ պատուուած զոյգ գերեզմաններ կան, զորս տեղացի քրիստոնեայք իբրեւ Յովսէփայ եւ Սահակայ գերեզման կը ճանչնան (Ազգ. էջ 921): Ասոնց նահատակութիւնը տեղի ունեցած է 808 Հոկտ. 19ին. Յայսմաւորքները սակայն կը դնեն Յունուար 22ին: Սահակ նախ նահատակուած ըլլալուն՝ Տօնացոյցի մէջ իր անունը նախապատիւ եղած է, այլապէս՝ երէցը Յովսէփն է:

Կը տօնուին ներկայիս Տօն Կաթողիկէի յաջորդող Հինգշաբթի օրը:

Սկզբնաղբիր: Սամուէլ եւ Կիրակոս Պատմիչներ:

ԳՈՀԱՐԻՆԵԱՆՔ 1156

Ասոնք չորս եղբայրներ են, որոիք Սեբաստացի Դաւիթ անուն հայ իշխանաւորի մը, որ գերի ինկած էր, որմէ կրցաւ ազատուիլ՝ իր անդրանիկ Արեգ որդիով իսլամութիւնը ընդունելով: Սակայն Դաւիթի կինը, ոչ միայն ինք, քրիստոնէութեան մէջ մեծցուց իր չորս կրտսեր մանչ զաւակները, որոնց անուններն են ԳՈՀԱՐԻՆՈՍ, ՌԱՏԻԿՈՍ, ԾԱՄԻԴՈՍ եւ ՏՈՒՔԻԿՈՍ: Ասոնք չափազանց ըլլալէ յետոյ Սեբաստիոյ իսլամական բանակը մտան եւ համարձակ կերպով կը պաշտէին

իրենց քրիստոնէական կրօնքը: Սակայն երբ իմացուեցաւ, որ իսլամական հօր զաւակներ են, իբրեւ իսլամութենէ դարձողներ ամբաստանուեցան եւ մատնուեցան քաղաքի իշխանին եւ հարցուփորձի ենթարկուեցան: Սակայն իրենց իսլամացած երէց եղբայրը՝ Արեգ, մի կերպ ազատեց զանոնք: Քրիստոնեայ եղբայրները գոհ չմնացին ասկէ, որովհետեւ իսլամացածի տեղ դրուեցան: Ուստի քաշուեցան զինուորութենէ, Ռատիկոս Ս. Նշանի վանքը մտաւ իբրեւ կրօնաւոր, իսկ միւսները շարունակեցին ազատ-համարձակ քրիստոնեայ մնալ:

Կրկին մատնուեցան Սեբաստիոյ իշխանին եւ, հարցուփորձելէ յետոյ, յայտարարեցին իրենց քրիստոնեայ ըլլալը: Սպառնալիքեր, խոստումներ եւ խոշտանգումներ անօգուտ անցան: Ի վերջոյ գլխատման հրահանգ հանուեցաւ, որ գործադրուեցաւ 1156 Յունուար 28ին: Չորս մարտիրոսներուն մարմինները եւ կտրուած գլուխները ամփոփուեցան գետակի մը եզրերքին, Քառակուսի կոչուած ճամբուն մօտերը:

Գոհարինոսի որդին՝ Թէոդորոսն ալ որ չափահասութեան թեւակոխած ըլլալով, կրօնաւոր եղած էր, ամբաստանուեցաւ, թէ կ'անարգէ իշխանը, որ իր հայրը եւ հօրեղբայրները սպաննել տուած էր: Չերբակալուեցաւ եւ ըստ սովորութեան ուրացութեան հրաւիրուեցաւ, ինչ որ ուժգին մերժեց եւ իբրեւ հետեւանք՝ ենթարկուեցաւ ծեծի եւ չարչարանքի եւ ի վերջոյ բանտարկուեցաւ: Բանտէն հանելով՝ բռնի մզկիթ մտցնել ուզեցին, չուզեց մտնել. սուրով եւ գաւազանով բռնադատեցին, որ մտնէ. անկարելի եղաւ, յուսահատած՝ կրկին բանտ դրին: Ի վերջոյ Թօտոս կոչուած ուրացեալ դատաւորին յանձնուեցաւ, որ քաղաքին մէջ չարաչար ծեծի ենթարկելէ յետոյ, մարմինը կտոր-կտոր ընելով, սպաննել տուաւ զայն իր հօր մահէն 5 ամիսներ յետոյ:

Գոհարինեանք կը տօնախմբուին զկնի Վերափոխման Կիրակիին յաջորդող Բշ. օրը Ստեփանոս Ուլնեցիին հետ:

ԼԻԱԿԱՏԱՐԻ մէջ թէեւ ցանկին համառօտիւ ներկայացուած է ասոնց նահատակութիւնը, բայց տօնելի չեն ներկայացուիր: Իսկ միւս երկու Յայսմաւորքներու մէջ գրեթէ համանման բառերով կը պատկերացուին. ՄԱՐԶՈՒԱՆՑԻ մէջ Յուլիս 28 նշանակուած է, իսկ ՓՇՇՏԻՄԱԼԾԵԱՆԻ մէջ՝ Յուլիս 30ին:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՏՕՆՈՒԵԼՈՒ ԱՐԺԱՆԻ
ՍՐԲԱԿԵՆՑԱՂ ԱՆՁԵՐ ԵՒ
ՄԵԾԱԳՈՐԾ ԴԷՄՔԵՐ

ՆԵՐԱԾՈՒՄՆ

Մեր պատմութեան մէջ կան բազմաթիւ ուրիշ դէմքեր եւս, որոնք իրենց բազմարդիւն եւ ժողովրդանուէր գործունէութեամբ եւ սուրբի մը վայել օրինակելի կենցաղով արժանի էին տարեկան յիշատակութեան. արդարեւ անոնցմէ շատեր յիշուած են ՅայսմատորքԱնրու մէջ: Բայ աստի, կան նաեւ բազմաթիւ ուրիշ մարտիրոսներ, որոնք նազատակուած են Քրիստոսի եւ Անոր քարոզած կրօնքի սիրոյն Համար, բայց անոնք ալ տարեկան տօնակատարութեան չեն արժանացած:

Ուստի տօնելի սուրբերու վկայաբանութիւնները իրենց աւարտին բերելէ յետոյ, կը ձեռնարկենք յաւելուածական ընդարձակ աշխատանքի մը, որ պիտի ունենայ երկու գլխաւոր բաժիններ:

Առաջին մասին մէջ աւելի Հանգամանաւոր ձեւով պիտի ներկայացնենք կեանքերը այն ազգային դէմքերուն, որոնք իրենց բազմօգուտ գործունէութեամբ ու մանաւանդ սրբակենցաղ կամ օրինակելի վարքով կարեւոր Հետք ձգած են մեր եկեղեցիի պատմութեան մէջ:

Երկրորդ յաւելուածով՝ մի առ մի պիտի աշխատինք յիշատակել Հայ եկեղեցիի այն բոլոր «Պանծալի նաՀատակները» եւ «Ծանկալի մարտիրոսները», որոնք թէեւ Տօնացոյցի չեն անցած, բայց իրենց արիւնը թափած եւ կեանքերը զոհած են Քրիստոնէական նաՀատակութեան ողջակիզման սեղանի վրայ: Այս բոլորը մենք պիտի կատարենք Հետեւողութեամբ Օրմանեան Պատրիարքի կոթողական եռաՀատոր գործին, ԱԶԳԱՊԱՏՈՒՄԻՆ՝ մի առ մի թուելով այնտեղ յիշուած բոլոր նաՀատակները սկիզբէն մինչեւ մեր դարասկիզբը:

ՍՈՐԲԱԿԵՆՅԱՂ ԱՆՁՆԱԴՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՄԵԾԱԳՈՐԾ ԴԷՄՔԵՐ

1. ԹԵՂՈՂՈՐՈՍ ՍԱԼԱՀՈՒՆԻ † 288

Որդի էր սա Սալահուդինայ նախարար Սուրէն իշխանին, որ կ'ապրէր Գ դարու վերջին կէսին, Տրդատ Թագաւորի իշխանութեան սկզբնական շրջանին, երբ ան դեռ Հեթանոս էր: Մօր անունն էր Աղուիթա, բնականէն բարեգործ եւ բարեպաշտ կին մը:

Կը բնակէին իրենց կալուածը եղող Սուրէճաշէճ աւանի մէջ Դերջանի եւ Հրզնկայի միջեւ: Ունէին ցաւագար տղայ մը, Աթենադորոս անունով, որուն բժշկութեան համար ամէն միջոցի դիմած էին՝ առանց արդիւնքի: Աղուիթա որդւոյն առողջութեան համար զանազան բարեգործութիւններ կ'ընէր, մինչեւ իսկ անտէր Հիւանդներուն համար ապաստարան մը կազմած էր: Այնտեղ պատուաբար տեղակայուած մէջ կար նաեւ Դասիոս անուն քահանայ մը, որ աւելի իր կեանքով, քան խօսքով քարոզութիւններ կ'ընէր եւ քրիստոնէական կրօնքի Հետեւողներ ալ կը շահէր:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ երբ կալանաւորեալ վիճակի մէջ Երզնկայէն Արտաշատ կը տարուէր խոր Վիրապ նետուելու համար, Դասիոս եւ ուրիշներ դիմաւորեցին զայն, եւ բժշկութիւններ ալ կատարուեցան: Աղուիթա ալ իր տղան՝ Աթենադորոսը, տարաւ, որ արդարեւ բժշկութիւն գտաւ Ս. Գր. Լուսաւորչի ձեռամբ: Ասոր վրայ մայր ու որդի հաւատքի եկան եւ մկրտուեցան Դասիոս քահանայէն եւ տղուն անունն ալ այս ատեն փոխուեցաւ ու եղաւ ԹէՂՈՂՈՐՈՍ: Բայց Հայրը՝ Սուրէն, չհետեւեցաւ իր կնոջ եւ զաւակին. ընդհակառակը, Տրդատի հանած Հալածանքի Հրովարտակին հաւատարիմ մնալով՝ քրիստոնէաներ Հալածելը իրեն համար պարտականութիւն համարեց: Յատկապէս իր տղուն վրայ բռնացաւ, նեղութիւններու եւ չարչարանքներու ենթարկեց, մինչեւ որ տղան Հարկադրուեցաւ Հեռանալ տունէն: Հայրը

Հետապնդեց զայն եւ, ի վերջոյ գտնելով, կրկին բռնադատեց վերագառնալ Հեթանոսութեան: ԹէՂոգորոս Հաստատ մնաց իր նոր հաւատքին վրայ, եւ անողորմ հայրը իր իսկ ձեռքով խողխողեց իր զաւակը: Դասիոս քահանայ, մարմինը գտնելով, պատուով Թաղեց: Գրիստոնէութիւնը երբ պետական կրօնք հռչակուեցաւ՝ վրան մատուց մը շինեցին, որուն մէջ ի վերջոյ Թաղուեցան նաեւ մայրը Աղուիթա եւ Դասիոս քահանայ:

Ժամանակ մը յետոյ այս մատուռին քով շինուեցաւ Գորոփու Ս. ԹէՂոգորոս վանքը, որ ապա ճանչցուեցաւ իբրեւ շրջանի ամենէն մեծ ուխտագնացութեան վայրերէն մէկը եւ ծանօթ էր ամենքին «ՍՄԸԸԲԸԸ» Ս. Թորոս անունով, Դերջանի ԴրուԱիկ գիւղին մօտերը, ուր դեռ 65 տարիներ առաջ, ըստ վկայութեան Օրմանեանի, կը ցուցուէին երեք գերեզմանները: «Ձող մըն ալ կը պատուէր իբր մատուց» ի յիշատակ այն ծառին, որուն ներքեւ սպաննուեցաւ ԹէՂոգորոս: Այս ձողէն կ'առնէր վանքը իր Թրքերէն անունը «ՍՄԸԸԲԸԸ»: Եղելութեան թուականը մերձաւորաբար կը դրուի 288ի Մայիս 11ին:

Ընդարձակօրէն դրուած է Սուրբին վկայաբանութիւնը ՄԱՐԶՈՒԱՆՑԻԻ Յայսմաւուրքի մէջ, չափաւոր է ՓԵՇՏԻՄԱԼՃԵԱՆԻ մէջ, յոյժ համառօտ է ԼԻԱԿԱՏԱՐԻ ցանկի բաժնին մէջ: Ընդարձակօրէն պատկերացուած է նաեւ Գարեգին Արք. Խաչատուրեանի ԱՇԽԱՐՀԻ ԼՈՅՍԸ Ի ՀԱՅՍ գրքին Ա. հատորին 112-119 էջերուն մէջ:

2. ՄԱՆՈՒԷԼ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ † 384

Մեր պատմութեան ուժեղ դէմքերէն մէկն է Մանուէլ Մամիկոնեան, որ կրցած է մարտական քաջութիւնը եւ իր իսկ բառերով՝ «Չերմ Գրիստոնէութիւնը» ներդաշնակել իր անձին ու կեանքին մէջ: Փաւստոս Բիւզանդ սկզբնապէս պատմիչը իր գրքին 20 էջերը յատկացուցած է ներկայացնելու համար Մանուէլի սխրագործութիւնները:

Մամիկոնեանները մեր պատմութեան մէջ կարեւորագոյն դեր կատարող իշխանական տունը կարելի է համարել, ինչպէս կը հաստատէ Ղազար Փարպեցի պատմիչը: Վարդանանց շարժումի սկզբնաւորութեան, երբ Տիգրան կանչուած Հայ նախարարներ կ'որոշեն երեսանց ուրանալ Գրիստոնէութիւնը՝ Հայրենիք վերագառնալու եւ

պաշտպանելու համար անգլուխ մնացած իրենց երկիրը, կը պնդեն, որ անպատճառ Վարդան Մամիկոնեանն ալ իրենց համամիտ ըլլայ: Վասնզի, կ'ըսէ պատմիչը, «Ամենքն ալ տեսած ու տեղեակ էին պատմութենէն, թէ այսպիսի (ազատագրական) գործեր ի բնէ Մամիկոնեաններու նախարարութեամբ եւ անոնց մասնակցութեամբ ի գլուխ կը հանուէին» (Փարս. 159):

Մամիկոնեաններու կալուածն էր Տարօն պատմական նահանգը, որուն գլխաւոր քաղաքն է Մուշ. իրենց նշանաւոր եւ անառիկ բերդն էր Ողոկան ամրոցը ոչ շատ հեռու Մուշէն: Անոնք մեր պատմութեան թատերաբեմին վրայ կ'երևին Գ դարուն Տրդատ թագաւորի օրով: Անոնք առ հասարակ եղած են Հայ բանակի սպարապետներ: Առաջին նշանաւոր Մամիկոնեանը, որ կը յիշուի մեր պատմութեան մէջ, է՝ «Վաչէ, որդի Արտաւազդի, նահապետ Մամիկոնեան տոհմին՝ ՅԱԶԳԷ ՍՊԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ, ՀԱՅՈՑ, մեծ զօրավար իւր զօրքերուն» (Բիւզ. Գլուխ Դ): Իր մասին անդրադարձանք արդէն զրքիս առաջին մասին մէջ, իբրեւ մեր պատմութեան մէջ ծանօթ առաջին տարեկան յիշատակութեան արժանացած նահատակը, որ իր կեանքը տուած էր Հայրենիքի եւ հաւատքի պաշտպանութեան՝ 333-ական թուականներուն, Վրթանէս Կաթողիկոսի օրով:

Երբ պատմութեան վարագոյրը կը բացուի Մանուէլի կեանքին վրայ, ան կը գտնուի Պարսկաստան, իր Կոն (Մամիկոն) եղբոր հետ՝ չենք դիտեր ինչ առիթով կամ ինչ պատճառով: Երբ Պարսիկներ պատերազմի կը բռնուին Քուշանաց հետ, երկու եղբայրներ ալ կը զրկուին ճակատ: Պարսիկներ կը պարտուին, եւ զրեթէ մարդ չազատիր իրենց բանակէն բացի այս երկու եղբայրներէն, որոնք թէեւ «չատ քաղութիւններ գործեցին», այսինքն՝ իրենց ձիերն անգամ կորսնցնելով: Երբ ասոնք ողջանդամ ներկայացան Պասից թագաւորին, այս վերջինը չափազանց ցաւելով իր բանակի կորուստին համար եւ զայրանալով ասոնց դէմ՝ վունտեց զանոնք իր ներկայութենէն: Ու երկու եղբայրներ, զրկուած երկար ճամբորդութեան մը զրեթէ բոլոր միջոցներէն, քալելով կտրեցին Պարսկաստանէն Հայաստան տանող ճամբան: Վերադարձին Մանուէլ, իբրեւ երէցը տոհմին, ստանձնեց տանուտիրութիւնը Մամիկոնեանց:

Օրուան Հայոց թագաւորն էր Վարազդատ (374-378), որ Մուշեղ

Մամիկոնեան սպարապետը սպաննել տուած էր քսութեան հաւատք ընծայելով Բատ նախարարին եւ անոր փոխանցած էր սպարապետութիւնը: Մանուէլի առաջի գործը կ'ըլլայ «առանց Վարազդատ թագաւորի հրամանին» ինքզինքը Հայոց սպարապետ յայտարարել. «քանի որ նախնիքներէն ի բնէ իրենց կը պատկանէր սպարապետութիւնը»: Ապա հետեւեալ պատգամը զրկեց թագաւորին.

«Մեր նախնիք (Մամիկոնեաններ) իրենց կեանքերը զոհած են ձեզի՝ Հայոց թագաւորներուդ համար, սակայն դուք փոխանակ զնահատելու կեանքէ զրկեցիք զանոնք: Մուշեղ, իմ քաջարի եղբայրս, որ իր կեանքը մաշեցուցած էր ձեզի համար իր մանկութենէն ի վեր, որ վանեց ու կոտորեց ձեր թշնամիները, եւ զոր չկրցան սպաննել թշնամիները, դուն խնճոյքի մը ընթացքին նենգութեամբ սպաննել տուիր: Արդ, ես քեզ Արշակունի չեմ ճանչնար, քանի որ պոռնկութենէ ծնած ես, անոր համար չճանչցար արժէքը Արշակունիներու համար վաստակողներուն» (Բիւզ. 240): Ու վերջացուց իր յանդուգն պատգամը՝ ըսելով. «Քանի որ Արշակունի չես, հեռացիր մեր երկրէն, նախ քան իմ ձեռքով մահանալը»:

Ի վերջոյ խնդիրը յանգեցաւ պատերազմի: Վարազդատի բանակը Մուշեղի սպաննիչ Բատի սպարապետութեամբ դէմ ելաւ Մանուէլի բանակին: Վարազդատի կողմը պարտուեցաւ, եւ ինք սկսաւ փախչիլ: Մանուէլի երկու որդիները հետապնդեցին զայն սպաննելու նպատակով, բայց Մանուէլ բարձրագոյ աղաղակեց. «Տիրասպան մի՛ ըլլաք»: Որդիները ձգեցին, որ փախչի ան Բիւզանդական հող, ուր ի վերջոյ կը մեռնի: Մանուէլ աւելի խիստ եղաւ Բատի հանդէպ, որ պատճառ եւ գործիք հանդիսացած էր իր երէց եղբոր՝ Մուշեղի մահուան. սպաննել տուաւ զայն:

Այս կերպով Մանուէլ տէր եղաւ ամբողջ Հայաստանին: Տէր ու պաշտպան կանգնեցաւ նախկին Հայոց թագաւոր Պասի անչափահաս երկու որդիներուն՝ Արշակի եւ Վաղարշակի. «Իսկ անոնց մայրը՝ Զարմանդուխտը, արքայամայրութեան բարձր շուքով կը պատուէր»: Իր մօտ հրաւիրեց ազգին մեծամեծները եւ նախարարները եւ յայտարարեց, թէ թագաւորացու են անչափահաս երկու Արշակունիները, ինք՝ իբրեւ անոնց խնամակալը, պիտի կառավարէ երկիրը անոնց անուանով մինչեւ անոնք հասնին չափահասութեան: Ու արդարեւ, ըստ

պատմիչի հաւաստումին, «կը կառավարէր երկիրը խաղաղութեամբ, շէնութեամբ, իմաստութեամբ եւ շատ յաջող կերպով»:

Մեհրուժան Արծրունի, որ հաւատքը ուրացած եւ ապստամբած էր Հայոց թագաւորէն եւ միացած Պարսիկներու հետ եւ մեծամեծ չարիքներ հասցուցած էր Հայոց երկրին, նախանձելով Մանուէլի դիրքին ու փառքին, ուզեց գրաւել անոր տեղը: Պարսկական հսկայ բանակով մը Մանուէլի դէմ ելաւ: Մանուէլ այդ բանակն ալ ջախջախեց եւ սպանեց Մեհրուժանը՝ մաքրելով երկիրը այս ուրացող հայրենադաւէն:

Երբ Արշակունի երկու պատանիներ չափահաս եղան, Արշակը ամուսնացուց իր աղջկան հետ եւ Վաղարշակը՝ Բագրատունեաց նախարարի դստեր հետ եւ, հեքիաթային հարսնիք մը սարքելէ յետոյ երկու արքայազուն իշխաններուն համար, Արշակը թագաւոր եւ Վաղարշակը փոխարքայ յայտարարեց. անկէ յետոյ եւս երկիրը կառավարեց 7 տարիներ ու մեռաւ բնական մահով 384ին:

Մանուէլի իսկական նկարագիրը եւ ոգին, իբրեւ բարեպաշտ եւ առաքինի անձ, երեւան կուգայ իր մահուան անկողինին մէջ: Կանչեց նախ իր Արտաշէս որդին եւ անոր յանձնեց Մամիկոնեանց տանուտիրութիւնը եւ Հայոց բանակի սպարապետութիւնը եւ անոր տուաւ հետեւեալ խրատները.

«Հնազանդ եւ հպատակ մնացիր Արշակ թագաւորին: Պատերազմիւր Հայոց աշխարհի պաշտպանութեան համար, ի հարկին կեանքդ զոհելով՝ ինչպէս ըրին քու քաջ նախնիքներդ, որովհետեւ քաջութիւնը եւ անձնագոհութիւնը Աստուծոյ համար հաճելի եւ ընդունելի առաքինութիւններ են: Այսպիսիները Աստուած ձեռքէ չի ձգեր: «Երկրի վրայ քաջութեան անուն ձգենք եւ արդարութեամբ երկիրքը ժառանգենք»:

Ապա իր խօսքը ուղղելով բոլոր ներկաներուն, որոնց մէջ էին նաեւ զոյգ արքաները, շարունակեց.

«Մահէն երբեք մի վախնաք, այլ ձեր յոյսը դրէք Անոր վրայ, որ ամէն բան ստեղծեց ու հաստատեց: Նենգութիւնը, պղծութիւնը եւ չարութիւնը ձեզմէ հեռու պահեցէք, եւ ձեր Աստուածը սրբութեամբ եւ միամտութեամբ պաշտեցէք: Հարկը պահանջած պարագային այս աստուածապաշտ հայրենիքի, անոր եկեղեցիներուն եւ ուխտին համար մեռնիլ դիտեցէք, որովհետեւ

այդ մահը իրականին մէջ Աստուծոյ սիրոյն եւ ձեր բնիկ Արշակունի տէրերուն համար եղած մահ է»:

Ապա մարմինը բանալով՝ ցոյց տուաւ ամենքին պատերազմի մէջ ստացած սպիւները, որոնք, կ'ըսէ պատմիչը, աւելի քան յիսուն հատ էին:

Ապա սկսաւ լալ՝ ըսելով.

«Ամբողջ մանկութենէն ի վեր պատերազմներու մէջ մեծցայ եւ մեծամեծ քաջագործութիւններով տէր եղայ այս սպիւներուն. ինչո՞ւ մահը չպատահեցաւ ինձի պատերազմներու մէջ, ինչո՞ւ այսպէս անկողինիս մէջ կը մեռնիմ. աւելի լաւ էր, որ հայրենիքիս եւ անոր եկեղեցիներուն եւ սրբութեանց պաշտպանութեան համար մղած մարտերէն մէկին մէջ մեռած ըլլայի: Ինչո՞ւ մահը չհասաւ ինձի, երբ կը պատերազմէի մեր աշխարհի բնիկ տէր Արշակունիներու, մեր կիներուն եւ մեր որդիներուն համար, աստուածապաշտ մարդերու եւ եղբայրութեան, ընկերութեան ու բարեկամութեան համար»:

Ապա գրեթէ աղաչանքով կ'ըսէ ամենքին.

«Ես Աստուածասիրութեամբ ու ջերմ քրիստոնէութեամբ ապրած եմ, ուստի հեթանոսներու պէս իմ վրաս լացուկոծ մի ընէք անյուսութեամբ, որովհետեւ ով որ յարութեան յոյսի ակնկալութիւն ունի, թէ վերստին պիտի կենդանանայ Քրիստոսի երկրորդ գալստեամբ, այնպիսին պէտք չէ ողբալ: Ես մինչեւ հիմա յոյսով եւ երկիւղածութեամբ ապրած եմ: Դուք ալ Աստուծոյ պատուիրանները մի խեղաթիւրէք, այլ՝ արդար ըլլալու ետեւէ եղէք, մանաւանդ ողորմութիւնը ձեռքէ մի ձգէք: Որովհետեւ Ներսէս մեծ Հայրապետը մեզի այսպէս պատուիրեց եւ այսպէս ալ կ'ուսուցանէր եւ կը գործադրէր կեանքին մէջ: Կ'ողորմէր աղքատներուն, տնանկներուն, գերիներուն, միւսակ մնացածներուն, օտարներուն եւ պանդուխտներուն. ու շարունակ կը կրկնէր, թէ ողորմութիւն ընելէ եւ նուէր տալէ աւելի մեծ ու թանկագին բան չկայ: Մեռեալներուն վրայ լացուկոծ ընելը մեծ մեղք կը համարէր եւ իր օրով առաջըր առաւ ու վերջ տուաւ այս հեթանոսական սովորութեան Հայոց երկրին մէջ, բայց իր մահէն յետոյ մարդիկ յանդգնեցան շարունակել այս

գէշ սովորութիւնը: Սակայն կը կրկնեմ, ինծի համար ոեւէ մէկը թող կոծ չընէ: Մահէս յետոյ այլեւս իշխանութիւն չեմ ունենար ձեզ սաստիչու, ուստի ինչ որ չեմ ուզեր՝ թող չընեն մարդիկ: Զիս սիրողը թող յիշէ զիս իր աղօթքներուն մէջ»:

Այսպէս խօսեցաւ պատկառելի զօրավարը. ապա հրաման ըրաւ, որ աղքատներուն ու կարօտեալներուն բաժին հանեն իր ինչքերէն: Եկեղեցիներուն եւ մատուռներուն, եպիսկոպոսներուն եւ վանքերուն շատ նուէրներ տուաւ, ապա խաղաղութեամբ վախճանեցաւ:

Մարդիկ անմիջապէս մոռցան իր տուած պատուէրները: Հայոց աշխարհի բոլոր մարդերը, ազատներ եւ շինականներ լացին իր մահը, որովհետեւ ամէն ոք հօր տեղ դրած էր զայն իր քաղցրութեան ու մարդասիրութեան համար, իր հեղութեան եւ հանգարութեան համար, բարեբարութեան եւ աշխարհաշէն ջանքերուն համար: Ամենքն ալ բերանաբաց կը հառաչէին եւ կ'աւաղէին իրենց քաջ զօրավարը, իրենց ազատարարը, իրենց յաղթական մեծանուն եւ արգիւնաշատ սպարապետը, որ այսպէս առ յաւէտ կը բաժնուէր իրենցմէ (Փառասոս Բիւզանդ, էջ 256-258):

3. ՎՈՒԱՄՇԱՊՈՒՆ ԹԱԳԱՒՈՐ 390-414

Վուամշապուհ, ինչպէս Տրդատ թագաւոր, մեր ԱՐՇԱԿՈՒՆԻ կոչուած արքայական տունէն էր եւ շատ կարեւոր գեր կատարեց Հայ գիրերու գիւտին եւ Հայ դպրութեան սկընաւորութեան ընթացքին:

Արշակունիները ծագումով Պարթեւ ազգին կը պատկանէին, որոնք, իբրեւ Գարսիկներու ցեղակից ժողովուրդ մը, կ'ապրէին ներկայ Գարսկաստանի հիւսիսային կողմը: Անոնք շուրջ 5 դար իշխեցին Գարսկաստանի վրայ՝ Բրիտանոսէ առաջ եւ վերջը մինչեւ 225 թուականը:

Անոնք Հռովմէական լեզուներու սարսափն էին իրենց լաւ մարդուած հեծելազօրքով եւ ջախջախիչ յաղթանակներ տարին անոնց դէմ: Գարսկաստանի վրայ իշխող Արշակունիներէն ճիւղ մը Հայաստանի թագաւոր եղաւ, սկսեալ առաջին դարու կէսէն մինչեւ Ե դարու առաջին քառորդին վերջը: Կատարելապէս Հայացան եւ չորս դարեր տէր մնացին Հայաստանի արքայական գահին ու թագին, երկրին

առաջ 25 թագաւորներ, որոնցմէ վերջընթերն է Վուամշապուհ:

Իր նախկին անունը Վաղարշ էր. երբ Գարսիկ շահը գահընկէց ըրաւ իր երէց եղբայրը՝ Խոսրով Գ Հայոց թագաւոր, եւ անոր տեղ գինք նշանակեց 390ին, իր Գարթեւական Վաղարշ անունը փոխեց Գարսկական Վուամշապուհ անունի: Մեր ամենէն բախտաւոր թագաւորներէն մէկը եղաւ ան երկու պատճառներով. նախ՝ իր գրեթէ քառորդ դարու իշխանութեան շրջանը խաղաղ անցաւ, գերծ՝ պատերազմական կամ այլ քաղաքական վերիվայրումներէ: Երկրորդ՝ երջանկութիւնը ունեցաւ Հայ դպրութեան արշալոյսը ողջունելու եւ օժանդակ հանդիսանալու անոր ծագումին եւ տարածումին:

Վուամշապուհ նոյնքան բախտաւոր եղաւ իրեն գործակից ունենալով Ս. Սահակի պէս իմաստուն, կարող եւ հզօր անձնաւորութիւն մը Հայրապետական աթոռին վրայ, եւ երկուքը ձեռք ձեռքի տուած կրցան երկիրը բարգաւաճման ու զարգացման մէջ պահել: Իրենց նախորդ շրջաններուն Հայաստան շարունակ պատերազմներու եւ աւերումներու թատր մը եղած էր: Իրենց օրով տիրեց մեծ խաղաղութիւն, եւ Հայ ժողովուրդը քչիկ մը ազատ շունչ քաշեց եւ առիթ ունեցաւ աւերեալները վերաշինելու: «Քաղաքական հաշտարար վարչութիւն մը եւ եկեղեցական ճշմարիտ հովուութիւն մը» գիրար գտած եւ իրար լրացուցած էին, ինչ որ աստուածային նախախնամութեամբ պատրաստեցին մեր ժողովուրդը իրագործուած տեսնելու, հրաշալի յաջողութեամբ, մեր պատմութեան մեծագոյն դէպքը՝ Հայ դպրութեան սկզբնաւորութիւնը:

Այս նախախնամական գործին առաջին շարժիչ ոյժը եղաւ Մեսրոպ Մաշտոց, վարիչը եւ գլուխը՝ Սահակ Հայրապետ, իսկ հովանաւորը եւ նիւթապէս նեցուկ կանգնողը՝ նոյնինքն Վուամշապուհ թագաւորը: Մեր պատմութեան մէջ գրեթէ համագօր կերպով մեր Մտաւորական, Կրօնական ու Քաղաքական գլուխները ստեղծեցին այնպիսի սերտ ու սիրալիք գործակցութիւն մը, որ մեր ժողովուրդին պարգեւեց իր դարաւոր պատմութեան մեծագոյն իրագործումը, որ պիտի փոխարինէր իյնալու վրայ եղող իր երկրաւոր թագաւորութիւնը յաւերժական ու անխախտելի նոր թարգմանութեամբ մը, որ մեր հոգեւոր ու իմացական մշակոյթը եւ դպրութիւնը եղաւ:

Վուամշապուհի օրով հաշտութիւն հաստատուած էր մեր Արեւել-

քէն ու Արեւմուտքէն դրացի երկու կայսրութիւններու՝ Բիւզանդականին եւ Պարսկաստանին միջեւ: Սակայն 402 թուականին, Կ. Պոստոյ Պատրիարք Յովհան Ոսկեբերան Հայրապետի գահընկէցութեամբ՝ շփոթութիւններ եւ բախումներ ծագած էին գահընկէց Հայրապետի եւ գահազրկող Կայսեր կողմնակիցներու միջեւ: Այս ներքին բռնկումներէն կայծեր ցատկած էին նաեւ երկու կայսրութեանց սահմաններուն վրայ գտնուող երկու բանակներու միջեւ: Ուստի Պարսից թագաւորը հրահանգեց Վաւաշապուհին իջնել Միջագետք, որ սահմանադիտային բախումներու վայրն էր երկու կայսրութեանց բանակներուն միջեւ, որ իր խոհականութեամբ վերահաստատէ խաղաղութիւնը. ինչ որ արդարեւ մեծ յաջողութեամբ ի գլուխ հանեց Հայոց թագաւորը:

Միջագետքի մէջ գտնուած միջոցին իրեն ներկայացած էր Հաբէլ անունով Ասորի քահանայ մը ըսելու համար, որ իր եպիսկոպոսը՝ Դանիէլ, իր տրամադրութեան տակ ունէր «Հայոց լեզուի այբուբենն քի նշանագրերը»: Վաւաշապուհ թէեւ շատ հետաքրքրական գտած էր լուրը, սակայն այնքան զբաղած էր իր քաղաքական փափուկ առաքելութեան յաջող ելքով, որ ժամանակ չէր ունեցած աւելի հանգամանորէն նկատի առնելու իրեն ներկայացուած խնդիրը: Սակայն Հայաստան դարձին անմիջապէս իրեն ներկայացած էին Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ՝ Հայ գիր ունենալու իրենց մտահոգութիւնները անոր ալ յայտնելու համար:

Վաւաշապուհ, որ միաժամանակ հարազատ Բրիտոննայ իշխանաւոր մըն էր, նախախնամութեան մատը նշմարեց Միջագետքի իրեն ներկայացող Հաբէլ քահանայի յայտնութեան ու իր երկրի այս երկու մեծ միտքերու մտահոգութեանց միջեւ: Պատմեց անոնց Միջագետքի դէպքը, եւ տեղւոյն վրայ որոշեցին մարդ զրկել այդ գիրերը բերել տալու համար: Թագաւորը այս նպատակի համար նշանակեց իր պաշտօնեաներէն «Պատուական ու հաւատարիմ» մէկը Վահրիճ անունով, որ իրեն ընկերացած էր Միջագետքի ճամբորդութեան եւ տեղեակ էր հարցին:

Ատեն մը յետոյ վերադարձաւ Վահրիճ Հաբէլ քահանային հետ, եւ բերուած գիրերը հիմք կազմեցին Հայ նշանագրերուն, որոնց վրայ աշխատելով՝ Ս. Մեսրոպ, վերամշակումի ենթարկելով եւ պահասները լրացնելով, յօրինեց Հայ լեզուի այբուբենը, որուն սկզբնա-

ւորութեան մէջ այսպէս, ուղղակի կամ անուղղակի կերպով, կարեւոր գեր ունեցաւ Վաւաշապուհ թագաւորը, եւ իր անունը յաւերժորէն կապուած մնաց Հայ գիւտին հետ: Այս կարեւոր դէպքէն յետոյ լման տասը տարիներ եւս ապրեցան Վաւաշապուհ եւ նիւթապէս հովանաւորեց ամբողջ շարժումը եւ հայթայթեց բոլոր ծախքերը Մեսրոպի ճամբորդութեանց, դպրոցներու հաստատման եւ մագաղաթներու հեկայ դէզին, որ անհրաժեշտ էր Ս. Գիրքը եւ այլ եկեղեցական ու ծիսական գիրքերը թարգմանելու, ընդօրինակելու եւ բազմագրելու մեծածախս, նուիրական գործին:

Վախճանեցաւ 414 թուականին, «Հասեալ յերկար ծերութիւն եւ խաղաղական հանգստիւ» հաւանաբար աւելի քան 70 ամեայ տարիքին:

Գարեգին Արք. Խաչատուրեան հետեւեալ գնահատականը ունի Վաւաշապուհի մասին իր «Աշխարհի լոյսն ի Հայս» գործին Բ Հատորին 66-րդ էջին վրայ. «Վաւաշապուհ Հայոց խոհեմ, իմաստուն, խաղաղարար, շինարար ու կրթասէր թագաւորներէն գերազանցն եղաւ: Բաց աչքով ու հրճուանքով տեսաւ մեր աշխարհի հոգեկանիմացական լուսաւորութեան եւ ազգային վերածնունդի բոլոր գեղեցիկ պտուղները: Մեծ եղաւ նաեւ իր դերը այս աննախընթաց վերելքին մէջ: Առանց իրեն՝ կարելի է ըսել անվարան, թէ Սահակ-Մեսրոպեան հանճարը գուցէ խամրէր մութին մէջ: Վաւաշապուհ գիտցաւ բարձրորէն գնահատել զոյգ տաղանդները եւ ոչինչ խնայեց տալու անոնց ամէն պատեհութիւնն՝ ի սպաս դնելու իրենց բովանդակ արժէքները նոր քաղաքականութեան մը ստեղծագործման Հայաստան աշխարհի մէջ: Հասած խոր ծերութեան՝ անկողնի մէջ փակեց իր աչքերը գոհունակութեամբ եւ խաղաղական հանգիստով՝ բեղմնաւոր կեանքի մը անմոռանալի յիշատակը թողլով Հայ երախտագէտ սերունդներու սրտերուն խորը»:

Սկզբնադիրք. Ղազար Փարպեցի եւ Մովսէս Խորենացիի Հայոց պատմութիւնները:

[Կորիւնի «Վարք Ա. Մաշտոցի»]:

Մեր եկեղեցիի այս պատուական Հայրապետը տօնելի սուրբերու կարգին անցնելու էր ոչ միայն իբրև մեր ժամագրքի բարեկարգիչներէն մէկը, այլ նաև իբրև սրբակենցաղ հոգեւորական եւ քաջ հովուապետ:

Իր կեանքի նախընթացի մասին գրեթէ ոչինչ գիտենք, բացի այն իրողութենէն, որ Սահակ-Մեսրոպեան աշակերտութեան կրտսեր խումբին կը պատկանի: Մնած է Տայք նահանգի Արաֆնդ գիւղը, Հաւանաբար Ե դարուն սկիզբը կամ Դ դարուն վերջերը: Եղած կը կարծուի Վանանդ գաւառի (Կարսի շրջանին) եպիսկոպոսը ԳԱԴ անուան տակ, եւ այդ անունով ալ մասնակցած է Եսահայիւանի (444) եւ Արտաշատի (450) կարեւոր Ազգային-եկեղեցական ժողովներուն:

Ինք իսկ կը վկայէ իր գրութիւններէն մէկին մէջ, թէ երիտասարդութեան «մեր դպրութեան գիտութիւնը» սորված է Հայրենի երկրին մէջ նոյնինքն Սահակ-Մեսրոպէն կամ անոնց երէց աշակերտներէն, իսկ «գլխամաստ բանաւոր ուսմանց»ը ձեռք ձգած է «Հոռոմոց աշխարհին մէջ» եւ Հմտացած է յունարէն լեզուի: Իր ժամանակակից պատմիչը՝ Ղազար Փարպեցի, բարձր Համարում ունի անոր մասին եւ կը վկայէ, թէ «Հայրենի գիտութեամբ լեցուած եւ յունականով ճոխացած՝ յորդառատ խօսքի եւ առատարուխ վարդապետութեան տէր անձ մըն էր» Գիւտ:

461 թուականին, երբ Գարսկաստան ներքին կռիւի մէջ էր, եւ Հետեւաբար Վարդանանց շարժումին յաջորդող կրօնական Հալածանքները եւ ճնշումները թեթեւացած էին, եւ ուխտապահները սկսած էին կրկին ասպարէզ իջնել, երբ օրուան ոչ-ժողովրդական Կաթողիկոսը վախճանեցաւ, ամենքին ուշադրութիւնը կրկին կեդրոնացաւ Սահակ-Մեսրոպեան աշակերտութեան վրայ, եւ օրուան ամենէն հեղինակաւոր ճանչցուած անձը՝ Գիւտ Եպիսկոպոսը Կաթողիկոս ընտրուեցաւ, երբ շուրջ 60 տարեկան Հասուն եւ փորձառու անձնաւորութիւն մըն էր:

«Գէտք է ընդունիլ, թէ Գիւտ նախընթացաբար գործունեայ եւ արդիւնաւոր դեր մը ունեցած էր, եւ ուխտապահներու Հետեւողներուն ուղղիչ եւ ղեկավար ճանչցուած էր, որ Հազիւ թէ ասոնք պատեհը կը

գտնեն, մէկէն Վանանդի եպիսկոպոսը Կաթողիկոսական աթոռ կը բարձրացնեն» (Ազգ. էջ 418):

Գիւտ Կաթողիկոսին վիճակուեցաւ երջանկութիւնը ողջունելու գերեզարձը 37 աքսորեալ Հայ նախարարներու, որոնք Աւարայրի ճակատամարտէն յետոյ ձերբակալուած էին Ղեւոնդեանց Հետ: Այս վերջիններու նահատակութենէն յետոյ 10 տարիներու տաժանագին աքսորանքի եւ բանտարկութեան շրջան մը անցուցած էին: Գիւտ Կաթողիկոս գերեզարձները ընդունեց էջմիածնի Մայր Տաճարին մէջ 462ին՝ փառաբանութեան եւ գոհարանութեան երգեցողութիւններով. «եւ ամենքը հոգեպարար խօսքերով մխիթարուած եւ օրհնեալք ի բերանոյ Սուրբ Կաթողիկոսն Գիւտոյ» կը ցրուէին եւ կ'երթային «ի տուես իւրաքանչիւրս» (Փարպ. 110: Ազգ. էջ 422):

Իր կաթողիկոսութեան սկզբնաւորութիւնը խազաղ եւ ոգեւորեալ շրջան մը եղաւ լման 10 տարիներ:

«Նոր կեանք մըն էր, որ կը սկսէր Հայաստանի մէջ: Երկրին մէջ գլխակոր մնացածներուն (Հալածանքներուն պատճառով) վրայ ալ նոր ոգեւորութիւն կը տիրէր, եւ ամէն կողմ եկեղեցւոյ պայծառութեան եւ ազգային զարգացման ջանքեր էին, որք գործնական կերպով կը քաջալիբրուէին՝ իրենց հովանաւոր եւ պաշտպան ունենալով քաջարթուն հովուապետը», նոյնինքն Գիւտ Կաթողիկոսը (Ազգ. էջ 422-423):

Գիւտ Կաթողիկոսի առաջին ձեռնարկներէն մէկը եղաւ յատուկ ուշադրութեան առարկայ դարձնել եկեղեցիի ժամապաշտութիւնը, որ կարեւոր չափով խանգարուած էր Վարդանանց պատերազմին յաջորդող շփոթ տարիներուն: Աշխատեցաւ վերակենդանացնել Սահակ-Մեսրոպեան ծիսական ու ժամապաշտական կարգաւորութիւնը, որով սնած ու աճած էր ինք:

«Ձեռք վարանիք զայն իբր ԵՐԿՐՈՐԴ կարգադրիչ եւ բարեկարգիչ ճանչնալ» մեր ժամագրքին, կ'ըսէ Օրմանեանը (Ազգ. էջ 423): Արդարեւ մեր ժամագրքի սկիզբը նշանակուած է նաև իր անունը՝ իբրև ժամագրքի կազմողերէն մէկը, Ա. Սահակի, Ա. Մեսրոպի եւ Յովհան Մանդակունիի Հետ:

Իր կաթողիկոսութեան շրջանին, Անտիոքի կողմերէն երեք ազանգաւորներ եկած էին, որոնք կ'ըսեն եղեր, թէ «Մարիամ Աստուածա-

ծին չէ, եւ ոչ ալ խաչը՝ Աստուծոյ խաչ», որ ըսել է Նեստորականութիւն կը քարոզէին: Գիւտ հակազդելու համար այս մոլորական ուսուցումներուն՝ «Դաւիթ Ներգիւնացիին կը դիմէ, որպէսզի իւր իմաստասիրական հանճարով ուղղափառ վարդապետութեան պաշտպանութիւն ընէ. եւ այս է ԲԱՂԶՐԱՑՈՒԾԷՔ սկզբնաւորութեան ծանօթ գեղեցիկ ներբողեանը» (Ազգ. էջ 424):

Հայաստանի խաղաղութիւնը կը խանգարուի, երբ վերջ կը գտնէ Պարսկաստանի ներքին պայքարը Պէրոզի միակ թագաւորութեամբը:

«Յոր որ երկրին մէջ ուխտապահներու կողմը կը սկսէր ոգեւորուիլ, եւ Գիւտի հովանաւորութեամբ քրիստոնէական կարգեր կը սկսէին զօրանալ, այդ բանը կրնար դիւր գալ այն նախարարներուն, որոնք Վասակի ժամանակէն Պարսից հաճելի ըլլալու ճամբուն հետեւած էին... Ուստի [ասոնք] սկսան ուխտապահները Պէրոզի առջեւ ամբաստանել իբր տէրութեան անհաւատարիմներ եւ յունական կուսակցութեան հետեւողներ, եւ նոյնիսկ Գիւտ Կաթողիկոսին վրայ ալ զրպարտութիւններ ընել» (Ազգ. էջ 425-426):

Գիւտ Կաթողիկոս Տիգրան կանչուեցաւ. եղած զրպարտութեանց դէմ համարձակ պատասխաններ տուաւ: Իսկ Պարսից կրօնքը ընդունելու առաջարկը բացարձակապէս մերժեց: Ասոր վրայ Պէրոզ զրկեց զայն Կաթողիկոսական պաշտօնէն: Գիւտ ատեն մը Տիգրան մնաց «ըստ իւրում կամելոյ»: Այստեղ ալ աշխատեցաւ օգտակար ըլլալ տեղւոյն քրիստոնեաներուն, իր «յորդառատ» քարոզութեամբ եւ ձեռնադրութիւններով, ինչ որ հաճելի չեղաւ Պարսից շահին, որ զայն վերստին Հայաստան զրկեց՝ առանց վերադարձնելու անկէ առած կաթողիկոսական պաշտօնը:

Գիւտ վերադարձին Հաստատուեցաւ Որմուս գիւղը եւ շարունակեց ճանչցուիլ ազգէն եւ եկեղեցիէն իբրեւ ՀՈԳԵՒՈՐ Կաթողիկոս Ամենայն Հայոց, ինչ որ եղած էր նաեւ Ա. Սահակի պարագային անոր վերջին տարիները:

«Գիւտ հարկաւ ուրախ էր այդ վիճակին մէջ, որովհետեւ ազատ էր շատ մը տաղտկալից (աշխարհիկ) գործերէ, բայց տրտում էր, կ'ըսէ Փարպեցին, խոստովանութեան (այսինքն՝ չարչարանքի) եւ մարտիրոսութեան փառքէն զրկուած ըլլալուն համար» (Ազգ. էջ 428):

Գիւտ թէեւ արքայական հրամանով զրկուած էր կիրարկելէ կաթողիկոսութեան պաշտօնական ու աշխարհիկ պարտաւորութիւնները, սակայն երբէք չկորսնցուց կաթողիկոսութեան հոգեւոր իրաւասութիւնները եւ ազգին լրութեանէն միշտ ճանչցուած ու յարգուած մնաց իբրեւ սուրբ մարդ եւ օրինաւոր Կաթողիկոս մինչեւ իր մահը, որ տեղի ունեցաւ բնականոն պայմաններու ներքեւ 478ին իր առանձնացած Ոթմուս գիւղին մէջ զրեթէ 80 ամեայ տարիքին:

Ու կ'եզրակացնէ Օրմանեան անոր կեանքը եւ գործունէութիւնը հետեւեալ գնահատականով.

«Գիւտի կեանքը իր ազգաշէն գործունէութեամբ, եկեղեցական բարեկարգութեամբ, հովուական արդիւնքներով եւ խոստովանողական տառապանքներով, կատարելապէս յար եւ նման է սրբազան Հայրապետներէն ընտրելագոյններուն եւ կատարեալ ընդօրինակութիւն մըն է Ա. Սահակի բազմավաստակ եւ բազմաչարչար կաթողիկոսութեան: Կը զարմանանք, թէ ինչո՞ւ եկեղեցին չէ փութացած անոր անունը անցընել իր տօնելի սուրբերու շարքին, որուն շնորհիւ հրաշքներ ալ գործուած ըլլալը կը յիշէ Փարպեցին՝ թէ շատեր ՍՈՒՐԲԻՆ աղօթքով իրենց ախտերուն բժշկութիւն կը գտնեն» (Փարպ. 116: Ազգ. էջ 434):

ՅայնաւուրքՅերմ անգամ զանց ըրած են անոր անուան յիշատակութիւնը: Մենք եւս արժանի կը նկատենք Գիւտ Կաթողիկոսը տարեկան տօնախմբութեան:

5. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ

410?-490

Այս Հայրապետին անունն ալ կ'երեւի մեր ժամագրքի սկիզբը, իբրեւ անոր յօրինողներէն մէկը. այս իրողութիւնը ինքնին կը Հաստատէ անոր հոգելից անձ մը եւ եկեղեցիի պայծառութեան ու բարեկարգութեան բժախնդիր հոգի մը ըլլալուն:

Գիւտ Կաթողիկոս իր ծերութեան շրջանին ընտիր օգնական մը գտած էր յանձին Յովհաննէս Մանդակունի Եպս.ին, որ հեղինակաբար եւ հմուտ կերպով կը տնօրինէր եկեղեցւոյ գործերը, երբ ինք շուրջ 80 ամեայ ծերունազարդ վիճակի մէջ զրեթէ անկարողութեան

մատնուած էր: Այնպէս որ Գիւտի մահէն յետոյ Յովհաննէս շարունակած էր Կաթողիկոսական գործերու տնօրինութիւնը եւ գրեթէ առանց ընտրութեան կամ պետական վաւերացումի բնականօրէն Կաթողիկոսի պաշտօնի անցած էր 478ին:

Յովհաննէսի նախընթացի մասին քիչ բան գիտենք: «Մանդակունի» կոչուելէն անվարան կարելի է հետեւցնել. թէ Համանուն նախարարական կամ իշխանական տունէն էր: Մնած կը նկատուի 410-420ի միջեւ Արշակունեաց գաւառի Մախնուտ գիւղը: Եղած է Սահակ Մեսրոպեան աշակերտութեան կրտսեր խումբէն, իր ուսմունքը կատարելագործած է յունական բարձր վարժարաններու մէջ, ինչ որ կը Հաստատուի իր անունով մեղի Հասած մատենագրութենէն:

Մանդակունին 12 տարի Կաթողիկոսութիւն ըրաւ 478-490: Այս շրջանին առաջին վեց տարիները անցուց պատերազմներու եւ մաքառումներու շփոթ կացութեան մէջ: Իսկ երկրորդ կէսը՝ խաղաղութեան եւ վերաշինութեան մէջ: Մեր բոլոր մեծագործ հոգեւոր առաջնորդներու նման՝ Մանդակունին ալ ինքզինք արժեցուցած է թէ՛ ազգային եւ թէ՛ կրօնական ու հոգեւոր գործունէութեանց մէջ: Իր ազգային գործունէութիւնը կատարեց մասնակցութեամբ Վահանեան ազատագրական շարժումին, որ սկսած էր 480ին: Այս պայքարներու ընթացքին գործօն դեր ունեցաւ Յովհաննէս Կաթողիկոս՝ «ազօթելով եւ օրհնելով, յորդորելով եւ քաջալերելով», մինչեւ իսկ վերաւերելու էր այդ պատերազմներէ մէկի ընթացքին: Առնուազն երկու-երեք անգամ ընդունեց Վահանը եւ իր յաղթական բանակը Վաղարշապատի Ա. էջմիածնի տաճարին մէջ գոհաբանական աղօթքներով եւ հոգեւոր ցնծութեան հանդէսներով ազգային յաղթանակներէ եւ Վահանի մարտական յաղողութիւններէ յետոյ:

Յովհաննէս Կաթողիկոս երջանկութիւնն ունեցաւ տեսնելու Ղեւոնդեանց եւ Վարդան Մամիկոնեանի սկսած, բայց մարտական մարզի մէջ ձախողած շարժումին յաղողութեամբ պսակուելը՝ հերոսական քաջութեամբ եւ հեռատես իմաստութեամբ Վարդանի եղբորորդի Վահան Մամիկոնեանի: Աւելի մեծ երջանկութիւնը ունեցաւ ի վերջոյ՝ ողջունելու Վահանը իբրեւ Հայաստանի Մարզպան, որով վերջ կը գտնէր 35 տարիներէ ի վեր տիրող նկուն եւ անփառունակ կացութիւնը, եւ Հայ ժողովուրդը վերստին կը կառավարուէր իր բնիկ իշխան-

ներով, հոգ չէ թէ պարսկական վերին տիրակալութեան ներքեւ ըլլար:

Մանդակունիի կաթողիկոսութեան օրով Հայրապետական աթոռը Վաղարշապատէն փոխադրուեցաւ Դուին՝ Հայաստանի նոր մայրաքաղաքը, 485ին: Այստեղ Վահան Մարզպան փառաւոր Մայր տաճար մը շինեց, յարակից վեհարանով, եւ իր մարզպանութեան գոհաբանական աղօթքը եւ հոգեւոր հանդէսը կատարուեցաւ այս տաճարին մէջ, որուն աւերակները մէջտեղ հանուած են վերջերս Դուինի մէջ կատարուած պեղումներու ընթացքին:

Մանդակունին սակայն ինքզինքը աւելի արժեցուց իբրեւ բարեկարգիչ եկեղեցւոյ եւ պայծառացուցիչ աստուածային պաշտամանց: Նախ հոգ տարաւ վերահաստատել խանգարուած կարգ-կանոնը եկեղեցիէն ներս:

Արդարեւ՝ իր անունով երեք կանոնախումբեր կան Հայոց ԿԱՆՈՆԱԳՐՔԻՆ մէջ: Առաջինը (Վաղգէն Յակոբեան, ԿԱՆՈՆԱԳՐՔ ԸՆԹՈՅ, Ա. Հատոր, Երեւան, 1964, էջ 491) կը բաղկանայ 9 կամ 11 կանոններէ եւ առհասարակ եկեղեցական պահքերու եւ տօներու կը վերաբերին: Հետաքրքրական է նշել, որ ըստ այս կանոններու Մեծ Պահքի Շաբաթ եւ Կիրակի օրերը «Ոչ հրամայի պահել... ոչ կանոնք հրամայեն եւ ոչ Վարդապետք» (Բ. կանոն): Իսկ Ա. Մենդեան տօնի մասին կ'ըսէ. «Անոնք, որ ծննդեան տօնը կը կատարեն Յայտնութեան տօնէն առաջ (այսինքն՝ Յունուար 6էն առաջ) ապօրէն է, որովհետեւ սխալ է, որովհետեւ Մնունդը եւ Յայտնութիւնը մէկ են» (Կանոն Թ):

Երկրորդը մէկ կանոն մըն է (Վաղգէն Յակոբեան, ԿԱՆՈՆԱԳՐՔ ԸՆԹՈՅ, Բ. Հատոր, Երեւան 1971, էջ 239-243), որ կ'արգիլէ անչափահասը եւ քահանայութեան կարգը չուսանած անձերը ԶԱՌԱՍԱյ ձեռնադրել:

Երրորդը կը բաղկանայ 7 կանոններէ (նոյն, Բ. Հատոր, էջ 264-266): Դարձեալ քահանաներու կատարելութեան մասին:

Կայ նաեւ չորրորդ գլուխ մը Մանդակունիի անունով նոյն ԿԱՆՈՆԱԳՐՔԻՆ մէջ (Բ. Հատոր, էջ 296), որ ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ իր ԿՈՉՈՒՄԸ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ գործը: 298 էջին վրայ կը թուուին խոստովանուելիք մեղքերու ցանկը: 302 էջէն կը սկսի խրատական մը քահանայից վերաբերեալ մինչեւ վերջ (էջ 304):

Ու կ'աւելցնէ Օրմանեան.

«Մեր այժմեան տօներուն ձեւը, եւ Հայոց Տօնացոյցին յատուկ հօթնեկական դրութիւնը Մանդակունիին ատենէն հաստատուած են եղեր, ոչ իբր Մանդակունիէ մուծուած նորութիւն մը, այլ աւելի կանուխէն հաստատուած դրութեան շարունակութիւնը, ինչ որ մեզ մինչեւ Լուսաւորիչ կը հասցնէ՝ Համաձայն ազգային ընդհանուր համոզման: Իսկ վերջին ընդարձակ Կանոնը խստիւ կ'արգելու անուաներու եւ անարժաններու ձեռնադրութիւնը, ինչ որ եկեղեցւոյ գլխաւոր օրէնքներուն կարգէն է» (Ազգ. հտժ. 322):

Սակայն Մանդակունիի գործունէութեան մեծագոյն արդիւնքները կ'երեւին ծիսական կարգարդութիւններու մէջ, «Այնպէս որ Հայաստաննայց եկեղեցւոյ այժմեան ծիսական կարգերը Մանդակունեան կարգադրութիւններ կրնան կոչուիլ» (Օրմանեան):

Սահակ-Մեսրոպեան ծիսական ու ժամապաշտական կարգադրութիւնները դեռ վերջնական ու ամրացեալ դրութեան չվերածուած՝ հալածանքի շրջանը վրայ հասաւ, որ տեւեց աւելի քան 35 տարիներ: Գիւտ Կաթողիկոս սկսած էր վերահաստատել կարգ-կանոնը, սակայն չէր կրցած իր աւարտին բերել: Մանդակունին ալ իր առաջին վեց տարիներուն տիրող շփոթին պատճառով գրեթէ ոչինչ կրցած էր ընել այս ուղղութեամբ: Վահան Մամիկոնեան Մարզպան ըլլալէն յետոյ, երբ երկիրը խաղաղութեան տիրացաւ, այն ատեն Մանդակունի Հայրապետը առիթ եւ ժամանակ ունեցաւ խանգարուած կարգը վերահաստատելու եւ պակասներն ալ լրացնելու: «Միսական կարգերու վերջնական ձեւը Մանդակունիի հաստատածը մնաց» (Օրմ.): Ժամագրքին սկիզբը դրուած «Ձարթուցեալք» սարկաւազի քարոզի եւ յաջորդող աղօթքի յօդոմը իրեն կը պատկանին, նոյնպէս ճաշու ժամերգութեանց Աղուհացից մեծ քարոզները: Ամենայն հաւանականութեամբ, սակայն, դեռ կան ուրիշ աղօթքներ ու քարոզներ, որոնց իր կողմէ յօդոմը ըլլալը չէ յիշատակուած: Շարականներ ալ գրած է Յովհաննէս Կաթողիկոս, սակայն չեն ճշդուած. Օրմանեան կը կարծէ, որ Մանդակունիին շատ աւելի ընդարձակ մասնակցութիւն ունեցած ըլլայ շարական յօդոմը ճիւղին մէջ, որ իրմէ առաջ այնքան ալ մշակուած չէր, առհասարակ Սաղմոսներու երգեցողութեամբ կը

բաւարարուէին:

Միսարանի Կանոններէն իրեն կը վերագրուի՝ Կարգ Մկրտութեան, Կարգ Ձեռնադրութեան, Օրհնութիւն եկեղեցւոյ, Պատարագամատոյց՝ Աթանասի Հեռեւողութեամբ, Հիմնարկէք եկեղեցւոյ, Ժամհարի օրհնութիւն, Սկիհ եւ մաղզմայի օրհնութիւն, Գիրքի օրհնութիւն, Խաչօրհնէք, Պսակի կանոն, Կանոն ապաշխարող առնելոյ: Այլապէր, որ յանուանէ յիշուած է, բաւական կըլլայ ըսել, թէ ամբողջ Մաշտոցը Մանդակունիին ձեռքէն ելած է, որուն մէջ գլխաւոր մաս մը կը կազմէ թաղման կարգը:

Մանդակունի ունեցաւ նաեւ զբական մեծ արդիւնք: Գրած է մասնաւորաբար ճառեր զանազան նիւթերու մասին. օրինակ՝ Մեծ Պահքի, Ս. Երրորդութեան, Քրիստոսի Մենդեան, Մարտիրոսներու եւ այլ նիւթերու շուրջ: Թարգմանած է նաեւ Կորնթացւոց ԵՐՐՈՐԴ պարականոն թուղթը եւ Յովհաննէս Աւետարանչի ՀԱՆԳԻՍՏԸ, որ կը կարգացուի Որդւոց Որոտման տօնին:

Օրմանեան շատ աւելի կ'ենթադրէ Մանդակունիի արդիւնաւորութիւնը վարչական մարզի մէջ.

«Որով կը յաջողէր աւերեալ երկիրը վերաշինել եւ գծտեալ հոգիները միաբանել... Յովհան իր կեանքը վերջացուց լի արդեամբ. առաջին շրջանին մէջ արիասիրտ դիմադրութեամբ, ճակատամարտի մէջ վիրաւորուելու աստիճան, եւ երկրորդ շրջանին մէջ ազգաշէն եւ եկեղեցաշէն աշխատութիւններով, երկրին կերպարանը բոլորովին փոփոխել յաջողելու չափ... Ձինք [պէտք է] ճանչնանք իբր հոյակապ դէմք մը... եւ իբր ազգի ու եկեղեցւոյ մեծ բարերար մը: Իր առաքինական ու հոգեւորական կեանքն ալ, իր ուղիղ զգացումներն ալ, իր յայտնի արդիւնքներն ալ զինքն արժանի կ'ընեն՝ սուրբ եւ սոճեւի անձերու շարքին մէջ դասուելու. ինչպէս մենք ալ իբրեւ ՍՈՒՐԲ մակաբերել չենք վարանած» (Ազգ. հտժ. 325):

Սկզբնաղբիւր. Ղազար Փարպեցի, ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ:

Մեր պատմութեան որքան հերոսական ու յանդուգն՝ նոյնքան ալ խոհական եւ իմաստուն դէմքերէն է Վահան Մամիկոնեան, որ Վարդանանց սկսած կրօնական ու ազատագրական շարժումը իր յաջող վերջաւորութեան բերաւ: Երկայն է Վահանին պատմութիւնը: Լազար Փարպեցի իր գրքին գրեթէ կէսը յատկացուցած է ներկայացնելու անոր գործունէութիւնը. մենք պիտի աշխատինք համառօտել զայն:

Վահան որդին է Հմայեակ Մամիկոնեանի, որ եղբայրն էր Աւարայրի հերոս Վարդանի: Աւարայրի պատերազմէն առաջ զրկուած էր ան Բիւզանդիոն, ի դուրս պատգամաւորութեան մը՝ Բրիտանոնեայ կայսեր օգնութիւնը ուզելու Հայոց մտադրած անհաւասար պայքարին համար ընդդէմ կրակապաշտ Գարսից: Կայսրը իր հասնելէն քիչ վերջ մեռած էր. յաջորդը (Մարկիանոս) չէր ուզած օգնել Հայոց: Ձեռնունայն վերագարձած էր Հմայեակ, երբ Աւարայրի ճակատամարտը՝ վերջացած, իր եղբայրը՝ նահատակուած, եւ Գարսիկներ տիրապետած էին Հայաստանին: Ինք ալ կ'ամրանայ երկրին Հիւսիս-արեւմտեան սահմանները, ուր Գարսից ազդեցութիւնը դեռ չէր տարածուած: Տակաւ առ տակաւ իր շուրջը հաւաքուած էին պատերազմէն նահանջողները: Այս լսելով՝ պարսիկ մարզպանը երկու դունդեր զրկեց այն կողմ. Հմայեակ ալ ինկաւ այս մարտին մէջ՝ նահատակակից դառնալով իր եղբոր Վարդանին:

Հմայեակ իր ետին ձգած էր իր այրին՝ Զուրիկ Տիկինը, որ ճարտար եւ ուսեալ կին մըն էր, եւ չորս մանչ կորիւններ, որոնց անդրանիկն էր Վահան եւ միւսներն էին Վասակ, Արտաշէս եւ Վարդ: Գատերազմէն յետոյ երբ Հայ նախարարներ դատուելու համար Տիգրան կանչուեցան, ասոնց հետ զրկուեցան նաեւ քանի մը նախարարագուն տղաքներ, Վասակ Սիւնիի գրդումով, յատկապէս Վարդանի հետ կապ ունեցողները, «որպէսզի մեռնին»: Ասոնց մէջ էին վերոյիշեալ Վարդանի եղբորորդիները, ինչպէս նաեւ թոռները՝ այսինքն երկու որդիները Արշաւիր Գամասրականի, որ ամուսնացած էր Վարդանի Վարդանոյշ աղջկան հետ:

Զուրիկ Տիկինը ամուսնին մահէն յետոյ փոխադրուեցաւ Վրաստանի Աշուշա Բղեշխի քով, որ ամուսնացած էր իր քրոջ Անուշովուամին

հետ, եւ Թախանձազին խնդրեց, որ մի կերպ ազատէ իր զաւակները եւ Վարդանի թոռները Գարսկաստանի պատանդութենէն: Այս գործը յաջողեցաւ 3-4 տարիներ յետոյ 455ին, երբ Աշուշա Բղեշխ «բազում եւ անհամար ծախքով» կրցաւ ազատել այս տղաքները եւ իր մօտ բերել: Ասոնք ուրեմն մեծցան ու դաստիարակուեցան Բղեշխի արքունիքին մէջ Զուրիկ Տիկինը ձեռքին տակ: Ասոնց հետ է նաեւ ապագայ կարեւոր պատմիչ Լազար Փարպեցի, որ մեծ գովութեամբ կը յիշատակէ Զուրիկը իբրեւ «անուանի կին, օժտուած ամէն տեսակ լաւ եւ մտաւոր շնորհներով»: Փարպեցի, որպէս ականատեսը, կը ներկայացնէ այս տղաքներու բացառիկ շնորհները. «Լաւագոյն էին գրեթէ ամէն մարդի մէջ. աչքառու՝ մտացիութեամբ եւ իմաստութեամբ. ճարտար՝ նպատակին զարնող նետաձգութեան մէջ, թեթեւաշարժ՝ որսորդութեան մէջ, ուղիղ եւ շնորհալի պատանիներ եւ երիտասարդներ» (Փարպ. 381): Յատկապէս կը ծանրանայ Փարպեցի Վահանի վրայ, իբրեւ «մտացի մարդ մը, ողջամիտ եւ բարեսէր. ինչ գործի որ ձեռնարկէր՝ Տէրը յաջողութեամբ կը պսակէր զայն. եւ օր ըստ օրէ կը զօրանար: Մինչեւ իսկ Գարսիկներ, հակառակ իրենց կամքին, կը սիրէին զայն ու կը պատուէին, որոնք Գարսից թագաւորի առջեւ կը գովէին Վահանի լաւութիւնը», ինչ որ նախանձը կը գրգռէր ուրացող նախարարներուն, որոնք առիթը չէին փախցնել Վահանը զրպարտելու Գարսից արքունիքին մօտ՝ թէ «անհնար է, որ սա առանց ապստամբութեամբ մնայ Հայոց մէջ»:

Վահան, տեսնելով որ այս զրպարտութիւնները կանգ պիտի չառնեն եւ ի վերջոյ պիտի յանդուգնէին զինք մէջտեղէն վերցնելու, ինք դիմեց կտրուկ եւ արմատական միջոցի այդ զրպարտութիւնները մէջտեղէն վերցնելու: Ի սէր ապագայ իր ծրագիրներուն եւ սրտին վրայ քար դնելով՝ «գնաց Գարսից արքունիքը եւ հաւատքին մէջ տկարացաւ», կ'ըսէ իր բարեկամ պատմիչը, այսինքն՝ ուրացաւ իր հաւատքը, որպէսզի միւս ուրացողներ դադրին զինք բամբասելէ: Օգուտ չունեցաւ: Նախանձը եւ բամբասանքը շարունակեցաւ: Գարսից արքունիքը, կ'երեւի վարձատրելու համար Վահանի ուրացումը, զինք Հայաստանի պետական տուրքին հաւաքիչ նշանակած է: Իր գործակիցներէն մէկը՝ Վրիւ Ասորին, Գարսկաստան երթալով, ամբաստանեց Վահանը, թէ «հաւաքած սոկիները իր մօտ կը պահէ եւ կը խորհի երթալ Յունաց

կայսրին կամ Հոնաց աշխարհը եւ այդ ոսկիներով կ'ուզէ գունդ կազմել եւ ապստամբիլ»:

Այս շատ վտանգաւոր ամբաստանութեան ալ առաջքն առնելու համար, իմաստախոհ Վահան իր մօտ եղած ոսկին առած Պարսկաստանի արքունիքը փութաց: Ոսկիին փայլը եւ տեսքը ուրախացուց Պարսից թագաւորը, իսկ Վահանի շատ իմաստուն եւ կշռուած խօսքերը, թէ՛ «Ի՞նչպէս կրնայի ապստամբութեան մասին մտածել, երբ Պարսից ոյժը չտեսնելու չափ կոյր չեմ, զիս ամբաստանողն ալ գիտէ, թէ ծառայ մը անգամ չունիմ ինծի կերակուր եփելու, ոչ ալ՝ երկու կամ երեք պատանիներ ձեռքիս տակ, որ ինծի սպասաւորեն: Յետոյ, եթէ արդարեւ օտար երկիր փախչելու միտք ունենայի այսքան ոսկին կը բերէ՞ի ձեզի...»: Այս եւ նման խելացի խօսքեր համոզեցին Պարսից թագաւորը եւ աւագանին, որոնք իրաւունք տուին Վահանի խօսքերուն, քան ամբաստանութեանց Վրիւհին, որ «արհամարհուած հեռացաւ ատեանէն, եւ Վահան վերադարձաւ Արքունիքէն մեծարանքով եւ մեծ շքեղութեամբ»: Հակառակ ասոր, սակայն, Վահանի խիղճը կը տանջէր զինքը իր ուրացութեան համար, «զոր նման նահատակեալ հայրերուն (Վարդանանց) երեսանց էր եւ ոչ ճշմարտութեամբ»: Սակայն կը խորհէր, որ «մի գուցէ աշխարհիս փառքերէն տարուելով եւ ուշացնելով իր դարձը՝ մոռնայ հանդերձեալ աշխարհի երկիւղը եւ իսպառ կորսուի»: Ուստի անդադար կը խնդրէր Քրիստոս Փրկիչէն, որպէսզի շնորհէ իրեն պատեհ ժամանակ մը դարձի գալու ու կ'աղօթէր. «Քեզի համար, Տէր Աստուած, ամէն ինչ հնարաւոր է, դունես իմ ապաւէնս, շնորհէ ինծի խոստովանութեան եւ դարձի ժամանակ սորվեցուր ինծի, որ կամքդ կատարեմ, որովհետեւ դունես իմ Աստուածս»:

Արդարեւ, այդ ժամանակը շնորհուեցաւ իրեն: Վրացիք ապստամբեցան Պարսիկներու դէմ: Ասիկա յոյս ներշնչեց Հայերուն, յատկապէս Աղուանից երկրին մէջ գտնուող Հայկական բանակին, որ մօտէն կը հետեւէր Վրաց շարժումներուն: Այնպէս պատահեցաւ, որ այս բանակը ետ Հայաստան կանչուեցաւ: Իրենց Հայրենի հողին վրայ գտնուելը աւելի ոյժ տուաւ «Քրիստոնեաներուն», որոնք կը հակադրուէին ուրացողներուն: Ասոնք իրենց մէջ գաղտնի ժողով ըրին եւ որոշեցին հետեւել Վրաց օրինակին: Այս նպատակով գիշեր մը իրենց

միաքը յայտնեցին Վահանի, որ ըսաւ. «Ձեզմէ ոմանք գիտեն, թէ որքան ահաւոր կերպով կը տագնապիմ «ուրացողի» սուտ անունին համար, զոր ատելութեամբ կը կրեմ. հակառակ այս կացութենէն ազատուիլ ուզելուս, չեմ կրնար ձեզի հետ միանալ շատ մը պատճառներով» (զորս կը թուէ մի առ մի), որոնցմէ մեծագոյնը սակայն այն է, որ դուք «ձեր անձերէն պէտք է վախնաք, վասն զի սուտ (կեղծ) եւ անվստահելի մարդիկ էք»:

Սակայն ներկաներ վերաւորուած ըսին. «Մեր յոյսը ոչ Հոռոմին, ոչ ալ Հոնաց վրայ է, այլ նախ Աստուծոյ ողորմութեան վրայ է, բարեխօսութեամբ Սուրբ Գրիգորի... եւ ապա մահը աչք առնելու մեր յանձնառութեան վրայ է. որովհետեւ աւելի լաւ է մեզի համար մէկ ժամէն մեռնիլ, քան թէ ամէն օր տեսնել, որ եկեղեցին եւ քրիստոնեաներ կ'արհամարհուին եւ կը քակուին»:

Վահան, համոզում գոյացնելով, որ այս մարդիկ անկեղծ են իրենց որոշումին մէջ, Աւետարան բերել տուաւ, ամենքին երգում ընել տալով՝ ցրուեցան: Ժողովի ներկաներէն մին նոյն գիշերն իսկ Հայոց միաբանութիւնը եւ որոշումը հաղորդեց պարսիկ Մարզպանին, որ վախնալով, թէ Վրաստան պատահածը այստեղ ալ պիտի պատահի, յաջորդ օրն իսկ փախաւ եւ ամբացաւ Արտաշատի բերդը: Վահանի մարդիկը փախչող բանակի ետեւէն հասան, անոնց ձգած աւարին տիրացան ու պաշարեցին Արտաշատի բերդը: Մարզպանը գիշեր ատեն գաղտնի փախաւ Ատրպատական: Սակայն ուրացող նախարարները խորհուրդ տուին վերադառնալ եւ ջախջախել ապստամբութիւնը, քանի Հայեր գեռ չէին կազմակերպուած պէտք եղած ձեւով:

Արդարեւ, վերադարձաւ Մարզպանը գունդով մը եւ ուրացող նախարարներով: Մինչ այդ Հայեր իբրեւ մարզպան ընտրած էին Սահակ Բագրատունին եւ սպարապետ՝ Վահան Մամիկոնեանը: Ասոնք Դուին մնացին՝ կեդրոնը պաշտպանելու համար, իսկ եկող Պարսից բանակի դէմ զրկեցին չորս հարիւր լաւ պատրաստուած զօրքեր՝ գլխաւորութեամբ Բաբգէն Սիւնիի, Վահանի եղբօր՝ Վասակ Մամիկոնեանի, Գարշոյլ Մաղխազի, Կամսարական երկու եղբայրներու՝ Ներսէհի եւ Հրահատի, եւ Ասոմ ու Առաստոմ Գնունի եղբայրներու: Ասոնք նախ «եկեղեցի մտան, Աստուծոյ երկրպագութիւն ըրին եւ խնդրեցին Անկէ, որ իր օգնութիւնը զրկէ այս ճգնաժամային պայքարին մէջ»:

Ստացան նաև օրհնութիւնը Յովհան Մանդակունի Կաթողիկոսին, որ իր օրհնութեան միացուց նաև ճամբու մեծ պաշար:

Այս գունդը ամրացաւ Մասիս լեռան լանջքին Ակոտի գիւղը. «ըստ սովորութեան առտու կանուխ ելան եւ կատարեցին Գիշերային ու Առաւօտեան պաշտամունքները. պատրաստուեցան պատերազմի հետեւեալ կրօնական ազադակով, «Օգնեա մեզ, Աստուած Փրկիչ մեր, վասն փառաց անուան թո. մի երբեք ասացնեն ի հեթանոսս, թէ ո՞ր է Աստուած նոցա»: Երբ ճակատամարտը սկսաւ, Գարջոյ գաւաճանեց եւ թշնամիի կողմը անցաւ իր հարիւր զօրականներով, մնացեալ երեք հարիւրը սակայն այնպիսի ուժգնութեամբ ինկան 7 հազար հոգիէ բաղկացեալ Գարսիկ բանակի վրայ, որ ցիրուցան եղաւ, ու Մարգպանը սկսաւ փախչիլ: Վասակ Մամիկոնեան եւ Բաբգէն Սիւնի հետապնդեցին եւ տեղւոյն վրայ սպանեցին զայն, ինչպէս նաև ուրացող նախարարներէն շատեր: «Ու այն օրը Քրիստոսի հաւատացողներուն համար նշանաւոր ուրախութեան օր եղաւ, իսկ ուրացողներուն համար՝ ամօթի ու կորանքի օր: Ծճմարտուեցաւ մարգարէիին այն խօսքը, թէ որոնց որ Աստուած կ'օգնէ՝ մէկը հազար կը հալածէ, եւ երկուքը տասը հազարը տեղէն կը շարժէ»:

Այս յաղթանակը տօնեցին Դուինի եկեղեցիի մէջ՝ Աստուծոյ գոհութիւն մատուցանելով Մարգպան Սահակ Բագրատունի, Վահան Սպարապետ եւ ամբողջ Հայ բանակը Յովհան Կաթողիկոսի գլխաւորութեամբ:

Յաջորդ տարին Գարսիկներ հսկայ բանակով եկան Հեր եւ Զարեանգ գաւառը, ուր տեղի ունեցած էր Վարդանանց պատերազմը: Ասոնց դէմ ելան օրուան բոլոր ուխտապահները՝ Սահակ Բագրատունի Մարգպանը, Վահան եւ եղբայրները, Կամարական եղբայրներ եւ բազմաթիւ ուրիշ նախարարներ եւ բանակեցան ներսհաստ գիւղը: Գատերազմը սաստիկ եղաւ. ողորմութեամբ Աստուծոյ Հայեր շատ փայլուն յաղթանակ մը տարին նաև այստեղ եւ հոգեւոր ուրախութիւն սարքեցին Յովհան Կաթողիկոսի գլխաւորութեամբ: Ուրախութիւնը կը կրկնապատկուի, երբ պատերազմէն յետոյ Վահանի կրտսեր եղբայրը՝ Վարդ, Գարսկաստանի իր պատանդութենէն փախչելով, հայրենիք կը վերադառնայ:

Վրաց թագաւորը, Գարսիկներէն նեղուելով, հայերը օգնութեան

կանչեց. Հայեր դժբախտաբար գացին: Հակառակ մերոնց քաջագործութեանց, վրացիներ նահանջեցին, որով ոչ միայն պատերազմը կորսնցուցին, այլ նաև Հայ բանակի կարեւորագոյն տարրերէն երկուքը՝ Սահակ Բագրատունի Մարգպանը եւ Վահանի եղբայր Վասակը նահատակուեցան պատերազմի ընթացքին: Վահան քաշուեցաւ Տայքի իր ամրութիւնները: Թէեւ Գարսիկ զօրավարը հետապնդեց զայն մինչեւ այն տեղերը, սակայն Արքունիք կանչուելով՝ Վահան ազատեցաւ անոր հետապնդումէն:

Վահան կրկին վերադարձաւ Դուին եւ ձմեռը անցուց այնտեղ: Գարնան հսկայ պարսկական նոր բանակ մը եկաւ Դուինի դրացի Արտաշատ քաղաքը: Վահան, տեսնելով, որ իր շուրջը կուռղ մեծ զօրք չունի, հեռացաւ Դուինէն: Գրեթէ տարի մը այսպէս աստանդական ու թափառական շրջեցաւ Հիւս. Հայաստանի լեռնային մասերը՝ հալածուած Գարսիկներէ: Յաճախ թշնամիին յանկարծական հարուածներ կուտար ու կը փախչէր: Իր շուրջի զօրքերը օրէ օր աւելի կը պակսէին, այնպէս որ նման ընդհարումներու վերջինի ընթացքին հազիւ 35-40 ձիաւոր զօրքով ճեղքեց 4 հազարանոց պարսկական բանակը եւ սպաննեց անոնց զինակից ուրացեալ Գոհհոն Սիւնին, եւ ցրուեց Սիւնեաց զօրքը, որ կը գործակցէր Գարսից:

Ծգնածամային այդ օրերուն, երբ Վահանի սկսած շարժումը ձախողութեամբ վերջանալու վտանգին ենթարկուած էր, լուր հասաւ Հայաստան, թէ Գարսից Գէրոզ թագաւորը՝ Վահանին եւ Հայ ժողովուրդին պատճառուած այս նեղութեանց եւ չարեաց պատճառը, Հեփթաղներու դէմ բացած պատերազմին մէջ մեռած էր: Ուստի Վահանը հետապնդող Շապուհ զօրավարը եւ իր բանակը արքունիք կանչուեցան: Վահան այսպէս, երկրորդ անգամ ըլլալով, փրկուեցաւ թշնամիի ճնշումներէն եւ ազատաբար վերադարձաւ նախ էջմիածին, ուր գոհարանական աղօթքներ եղան: Այս առթիւ հիմնովին նորոգեց էջմիածնի հնացեալ տաճարը: Ապա անցաւ օրուան մայրաքաղաքը՝ Դուին, եւ դարձեալ երկրին ղեկը իր ձեռքն առաւ:

Գէրոզի տեղ թագաւորեց իր եղբայրը Վաղարշ, որ աւելի մեղծ քաղաքականութեան հետեւեցաւ Հայոց հանդէպ: Այս նպատակով Հայաստան պատգամաւորութիւն մը ղրկեց ըսելու, թէ ինք հաշտութիւն եւ խաղաղութիւն կ'ուզէ հաստատել Հայոց հետ եւ պաշտօն

տրուած է նիխոր նախարարին, որ Հեր գաւառի Նուարասի գիւղին մէջ կը սպասէ բանակցութեան համար: Վահան նախ իր մօտ հրաւիրեց նախարարները, եւ օրուան Կաթողիկոսի մասնակցութեամբ խորհրդակցեցան: Ամէն ոք պատրաստ էր պատերազմական վիճակին վերջ տալու ու պատուաւոր հաշտութիւն կնքելու: Սակայն ամէն բանէ առաջ ուզեց, որ Պարսից արքունիքը բացարձակ խոստում եւ ապահովութիւն տայ Հետեւեալ երեք կէտերու մասին.

1. Քրիստոնէութիւնը բացարձակապէս ազատ ըլլայ Հայաստանի մէջ. ոչ ոքի ուրացութիւն պարտադրուի, ուրացութիւնը արժանիք չնկատուի: Կրակի պաշտամունքի վայրեր պէտք է փակուին Հայաստանի մէջ:

2. Պետական պաշտօններու համար լաւն ու վատը, պիտանին եւ անպիտանը, վաստակաւորը եւ անվաստակը, իմաստունը եւ անմիտը որոշուին եւ անարժաններ առաջ չքշուին:

3. Երկրին խնդիրները թագաւորը անձամբ տեսնէ եւ դատէ, ուրիշներու թելադրանքով չչարժի:

Վահան Պարսիկ պատգամաւորութեան ընկերացուց իր պատգամաւորները եւ զրկեց նիխորին, որ ընդունելի եւ գնահատելի գտաւ Վահանի առաջարկները եւ հրաւիրեց Վահանը, որ անձամբ ներկայանայ պաշտօնական հասկացողութեան գալու համար: Վահան ճամբայ ելաւ զօրագունդով մը եւ հասաւ այն Արտագու դաշտը, որ նշանաւոր է եղած Աւարայրի ճակատամարտով եւ իր մղած ներսեհապատի յաղթական պատերազմով: Նախ Պարսիկներէն պատանդներ ուզեց անհաճոյ անակնկալի չգալու համար: Նիխոր ութ բարձրաստիճան նախարարներ զրկեց: Վահան իր գունդով եւ փողեր Հնչեցնելով մտաւ Նիխորի բանակատեղին, որուն վրայ Նիխոր մեղմութեամբ յիշեցուց, որ փողեր Հնչեցնելով՝ միայն Սպարապետը կը մտնէ Արեաց բանակը: Վահան պատասխանեց. «Նախ զիս Պարսից թագաւորին հպատակ ըրէ, անկէ յետոյ ես գիտեմ յարգել պատշաճութիւնները»:

Տեսակցութիւնները շատ սիրալիր ու յարգալիր անցան: Պատուասիրութիւններ առատացան, անցեալ եղելութեանց անդրադարձներ եղան եւ ամբողջ յանցանքը եւ պատասխանատուութիւնը Պէրոզ թագաւորին վրայ բեռցուցին: Վահան կրկնեց իր երեք առաջարկները եւ անոնց՝ «թագաւորին գիրով եւ կնիքով շնորհուիլը» պահանջեց:

Նիխոր համաձայն եղաւ եւ քանի մը օր եւս պատուելով իր հիւրերը՝ բաժնուեցան, թելադրելով Վահանին, որ անձամբ ներկայանայ Պարսից Արքունիքը ստանալու համար թագաւորին ձեռքէն իր պայմաններուն շնորհումը:

Փառաւոր եղաւ Վահանի մուտքը Պարսից մայրաքաղաքը: Շքեղ ընդունելութիւն կատարուեցաւ ու երբ թագաւորին ներկայացաւ, փոխադարձ ատենաբանութիւններ եղան: Վահան ստացաւ իր առաջարկներուն պաշտօնագիրը թագաւորին գիրով եւ կնիքով: Ինք Սպարապետ նշանակուեցաւ Հայաստանի, պարսիկ մը, Անդեկան անուն, «այր խելացի եւ իմաստահայեաց», Հայոց մարզպան նշանակուեցաւ այսպէս փառքով, մեծ յաջողութեամբ եւ ուրախութեամբ դարձան Հայաստան 485ի գարնան:

Նախ գացին Վաղարշապատ, եւ «Կաթողիկէ Ս. Էջմիածնի եկեղեցիին մէջ եւ Կուսանաց նահատակեալ տեղերու մէջ ցնծութեամբ գոհաբանական աղօթքներ կատարեցին ու հանդէսներ սարքեցին, ուխտեր կատարեցին եւ նուէրներ բաշխեցին աղքատաց»: Քանի մը օրեր հանգչեցան ու վերադարձան Դուին, որ այլեւս Հայոց նոր քաղաքական կեդրոնը դարձեր էր: Ժամանակ մը վերջ Անդեկան Մարզպան, տեսնելով Վահանին հաւատարմութիւնը եւ յաջողակաւութիւնը նաեւ վարչական ու քաղաքական գործերու մէջ, վերադարձաւ Պարսից արքունիք եւ համոզեց թագաւորը եւ աւագանին, որ մարզպանութիւնն ալ Վահանին յանձնուի, ինչ որ արդարեւ եղաւ յատուկ արքայական հրովարտակով նոյն տարիին վերջերը, ի մեծ ուրախութիւն ամբողջ Հայ ժողովուրդին ու օրուան Հայոց Կաթողիկոսին, որ կրօնական հանդիսութեամբ եւ գեղեցիկ ճառով մը պսակեց Վահանի բացառիկ յաջողութիւնները, որոնց մէջ այնքան զգալի էին աստուածային միջամտութիւնները եւ օգնութիւնները:

Վահան շուրջ 20-25 տարիներ եւս ամենայն խաղաղութեամբ, աշխարհաշինութեամբ, հաշտութեամբ եւ համբարաշխութեամբ կառավարեց իր երկիրը եւ գնաց միանալ իր նահատակ նախնիքներուն, որոնց սկսած գործը, անոնց իսկ բարեխօսութեամբ, այսպէս պսակեց յաջողութեամբ եւ անմահ անուն մը ձգեց Հայոց ժողովուրդի պատմութեան մէջ եւ անջնջելի յիշատակ մը իր ժողովուրդի սրտին մէջ՝ իր մեծանուն Հօրեղբոր, իր բարեյիշատակ Հօր եւ այլ հազարավոր

Վարդանանց եւ Վահանեանց նահատակներու հետ:

Սկզբնաղբիր. [Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904]:

7. ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՒՆԵՑԻ 680?-735

Տօնելի սուրբերու կարգին անցնելու համար մեր եկեղեցիին ամենէն հասունցած անձն է Ստեփանոս Սիւնեցի, որովհետեւ կը լրացնէ կանոնական սուրբ մը ըլլալու գրեթէ բոլոր պայմանները՝ սրբակենցաղ անձ, ամբողջութեամբ Աստուծոյ ծառայութեան ընծայեալ մատենագիր, հուսկ ապա՝ մարտիրոսացեալ Քրիստոնէական կրօնքի բարոյական բարձրութիւնը պահելու հետամուտ եղած ըլլալուն համար: Մեր զոյգ Յայսմաւուրքներուն ալ անցած է:

Մնած կը նկատուի 680ական թուականներուն: Որդին է Դուինի Կաթողիկէի աւագերէցին: Իր նախնական ուսմունքը ստացած է Կաթողիկոսարանի (Դուինի) դպրանոցին մէջ, ապա յաջորդաբար աշակերտած է Մաքենացոց վանքի վանահայր Սողոմոնի եւ Սիւնեաց վարդապետանոցի պետ Մովսէս Սիւնեցի մեծ վարդապետին, որ միանգամայն Սիւնեաց նահանգի Արքեպիսկոպոսն էր: Ուրեմն՝ իր ժամանակի Հայաստանի մէջ կարելի բարձրագոյն ուսմունքը ստանալէ յետոյ, կը մտնէ Դուինի կաթողիկոսարանի ծառայութեան մէջ ու կը փայլի Ս. Գրոց մեկնաբանութեամբ եւ իր հռետորական ճառերով: Կը պատմուի, որ Ամբաստ Բագրատունի երկաբնակ իշխանի մը հետ կրօնական նիւթերուն շուրջ վիճաբանութեան մը ընթացքին Ստեփանոս կը զգայ անհրաժեշտութիւնը յունական ուսմանց հետեւելու, ուստի գրեթէ յանկարծական որոշումով եւ ծպտեալ կը հեռանայ Հայաստանէն իր քաղաքացի եւ դասընկեր՝ Այրի վանքի միաբաններէն Գրիգորի հետ: Նախ կ'երթան Աթէնք, շուրջ 710ին, ուր կը մնան քանի մը տարիներ. կը հմտանան Հելլէն եւ Լատին լեզուներու, ինչպէս նաեւ արտաքին գիտութեանց, փիլիսոփայութեան, Ս. Գրոց ուսման եւ մեկնաբանութեան: Ապա կուգան Կ. Պոլիս, ուր կը մնան շուրջ 15 տարիներ: Ստեփանոս այստեղ կը կատարէ թարգմանչական կարեւոր աշխատանք: Մօտէն կը ծանօթանայ օրուան Կ. Պոլսոյ Պատրիարք Գերմանոսին: Հայրենիք կը վերադառնայ

728ին, Օձնեցի Յովհաննէս կաթողիկոսի մահուան տարին:

Կ. Պոլիսէն ճամբայ ելնելէ առաջ Գերմանոս Պատրիարք իրեն կը յանձնէ Թուղթ մը, ուղղեալ Հայոց Հայրապետին՝ Հարց դնելով, թէ ինչո՞ւ Հայեր Քաղկեդոնի ժողովը չեն ընդունիր: Օրուան Հայոց կաթողիկոսը, Դաւիթ Արամոնացի (728-741), Ստեփանոսին յանձնեց պարտականութիւնը այդ նամակին պատասխանելու, ինչ որ կատարեց Ստեփանոս եւ եզրակացուց, որ Քաղկեդոնիկ դաւանութիւնը հեռացած է Հին Հայրերու ուսուցումներէն, օրինակ Կիւրեղ Հայրապետի «ՄԻ ԲՆՈՒԹԻՒՆ Բանին մարմնացելոյ» բանաձեւէն: Այս երկու նամակներն ալ ցարդ պահուած են ԳԻՐԲ ԹՂԹՈՑԻ մէջ:

735-ական թուականներուն կը վախճանի Սիւնեաց Եպիսկոպոսը: Նահանգին իշխանները Հայոց Կաթողիկոսէն կը խնդրեն Ստեփանոսը՝ իբրեւ իրենց նոր Առաջնորդը, ինչ որ կ'ընդունուի, եւ Ստեփանոս, եպիսկոպոս ձեռնադրուելով, կը ղրկուի իր Աթոռը, Սիւնեաց մեծ նահանգը: Կ'ըսէ Օրմանեան.

«Ստեփանոս ունեցած հմտութեամբ եւ ժրութեամբ կը ձեռնարկէ ամէն կերպ բարեկարգութիւններով ճոխացնել իւր վիճակը, մանաւանդ թէ բովանդակ Հայ եկեղեցին. քարոզելով եւ գրելով, անկարգութիւններ դարմանելով եւ եկեղեցական պաշտամունքը ճոխացնելով» (Ազգ. էջ 864):

Ստեփանոս անմիջապէս կը ձեռնարկէ հովուական ու քարոզչական այցելութեանց իր ընդարձակ թեմին զանազան գաւառները, բարոյական զանցառութիւնները կը յանդիմանէր եւ ամենուրեք կ'աշխատէր կարգ ու կանոն տիրապետել տալ: Ըսուած է ՄԱՐԶՈՒԱՆՑԻ Եւ Յայսմաւուրքի մէջ.

«Մաքրեց ճիւղաբարոյ Սիւնեաց երկիրը ամէն տեսակ պղծութենէ եւ լուսաւորեց զանոնք աստուածային օրինաց գիտութեամբ: Ինչ որ կ'ուսուցանէր՝ նախ ինք կը զործադրէր սուրբ Հայրապետն Ստեփանոս: Ինք շատ խիստ պահք պահող եւ առաքինասէր էր, նոյնը կը քարոզէր ամենքին՝ սրբութեամբ եւ պարկեշտութեամբ ապրել, ինչպէս կը վայելէ Քրիստոնեաներու» (էջ 668):

Ամառ ատեն մը կը հանդիպի Վայոց ձոր գաւառի Մոզ կամ Մոզան աւանը, ուր կը բնակէր բարձր գասու անբարոյ կինը, զոր

քանիցս խրատած, յանդիմանած եւ ի կարգ հրաւիրած էր: Սակայն կինը մնացած էր անզիղջ, որուն վրայ Ստեփանոս բանադրած էր զայն: Անզգա կինը փոխանակ ուղղութեան գալու, որոշեց վրէժ լուծել Սուրբ Եպիսկոպոսէն, որ ամառուան տաք օրերուն գիշերները կ'անցնէր ծառի մը վրայ շինուած ննջելու յարմարանքի մը վրայ: Կինը իր հոմանիին հետ կուգայ այստեղ գիշեր ատեն եւ կը թելադրէ անոր, որ սպաննէ Եպիսկոպոսը: Մարդը սակայն կը քաշուի այս վատ խորհուրդը գործադրելէ: Այն ատեն կինը անձամբ ծառ կը բարձրանայ եւ գանակը կը խրէ Սուրբ Եպիսկոպոսի կողորդը: Առտուն, երբ կ'իմացուի ոճիրը, Ստեփանոսի հետեւորդները եւ քաղաքին ժողովուրդը խոր սուգով, բայց մեծ հանդիսաւորութեամբ ու յարգանքով կը վերցնեն նահատակեալ Եպիսկոպոսի մարմինը եւ կը թաղեն Արկազացի գիւղի Ս. Բրիստափոր եկեղեցին, ուրկէ ժամանակ մը յետոյ կը փոխադրուի Թանահատից վանքը: Օրմանեան կ'աւելցնէ. «Նոյ ճգնաւորը տեսիլքի մէջ կը տեսնէ Ստեփանոսի երկնային փառաւորութիւնը, եւ թերեւս այս պատճառով անոր յիշատակը Յայսմաւորքի անցած է, թէպէտ տօնելի եղած չէ» (Ազգ. էջ 866):

ՄԱՐԶՈՒԱՆՑԻ Յայսմաւորքը կ'ըսէ.

«Անոր գերեզմանին վրայ վկայարան մատուց մը շինեցին «բարձրաշէն եւ գեղեցկատիպ», որմէ շատ մը բժշկութեան շնորհներ կը բղխին հիւանդներուն համար ի փառս Բրիստոսի Աստուծոյ մերոյ եւ Սուրբ Հայրապետին Ստեփանոսի...»:

Սպանութենէն յետոյ ահաւոր երկրաշարժ մը տակնուվրայ կ'ընէ Վայոց ձորի գաւառը, հազարաւոր մարդիկ իրենց կեանքը կը կորսնցնեն, գիւղեր եւ գետեր կը թաղուին: Մարդասպան կինն ալ ի վերջոյ զղշումի կուգայ եւ ինքզինք խիստ ապաշխարանքի կ'ենթարկէ: Թանահատից վանքին մօտերը բացօթեայ քարայրածէւ փոսի մը մէջ կ'անցնէ ամբողջ իր մնացեալ կեանքը եւ այնտեղ ալ կը թաղուի:

ՄԱՐԶՈՒԱՆՑԻ Յայսմաւորքը մահուան օրը կը նկատէ Յուլիս 24:

Փետրուար 21ին կը գնէ Յուլիս 23ին: Իսկ Օրմանեան եւ Պօղարեան Յուլիս 21ին:

Հետաքրքրական է յիշել, որ Ստեփանոս ունեցած է քոյր մը

Սառակաճողիստ անունով, որ իրեն պէս կուսակրօն կեանք ընտրած է ու անուն ձգած է պատմութեան մէջ իբրեւ Հոգեւոր բանաստեղծուհի եւ երաժիշտ: Գառնի գիւղի ձորակին մէջ շինել տուած է իրեն յատուկ առանձնարան մը, ուր թէ՛ կաղօթէր, թէ՛ կը գրէր եւ թէ՛ երաժշտութիւն ու շարական կը սորվեցնէր դիմողներուն՝ վարագոյրի մը ետեւ նստած:

Գրած է ՄՐՐՈՒՀԻ ՄԱՐԻԱՄ Հոգեւոր երգը, զոր հրատարակած է Պօղարեան Արքեպսկ. իր ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ գործին մէջ (էջ 117): Քանի որ ժամանակակից եւ գաւառակից է Վահան Գողթնացիի, շատ հաւանական կը նկատեն ոմանք, որ անոր ի պատիւ յօրինուած ԶԱՐՄԱՆԱԼԻ է ԻնՁ շարականն ալ ինք գրած ըլլայ, որ ոմանց կողմէ Վահանի քրոջ կը վերագրուի: Սահականդուխտ վախճանած ու թաղուած է Գառնիի ձորակին առանձնարանին մէջ:

Ստեփանոս Սիւնեցի Ը դարու մեր մեծագոյն մատենագիրն է Յովհ. Օձնեցի կաթողիկոսի եւ Մովսէս Սիւնեցիի հետ: Եղած է Թարգմանիչ, մեկնիչ եւ բանաստեղծ գրիչ:

Թարգմանած է Դիոնիսիոս Արիոպագացիի վերագրուած «ՅԱՂԱԳՍ ԵՐԿԵԱՅԻՆ ՔԱՀԱՆԱՅԱ ՊԵՏՈՒԹԵԱՆ» անուն մեծահռչակ գիրքը եւ պատրաստած է անոր համառօտ մեկնաբանութիւնը:

Թարգմանած է նաեւ Կիւրեղ Աղեքսանդրացիի ԳԻՐԲ ՊԱՐԱԳՄԱՆՑը, Գր. Նիւսացիի՝ ՅԱՂԱԳՍ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՅ, Նեմեսիոս Եմեսացիի ՅԱՂԱԳՍ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՅ եւ այլ 4-5 համանման գործեր՝ առ հասարակ Կ. Պոլիս գտնուած միջոցին եւ ձեռնարկութեամբ յունազգի Դաւիթ Հիւպատի: Իսկ ինքնագիր գործերէն են՝ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՎԱՐԴԱՊԵՏԱՅԵԱՆ ԱՂՈՒԱՆԻՑ, ՎԱՍԵ ԱՆԱՊԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՐՄԵՆՈՅ ԲՐԻՍՏՈՍԻ, ՄԵԿԵՆՈՒԹԻՒՆ ԶՈՐԻՑ ԱԻԵՏԱՐԱՆԶԱՅԵԱՆ, ինչպէս նաեւ՝ ԵԶԵԿԷԼԻ, ԴԱՆԷԼԻ եւ ՅՈՐԱՅ, ՄԵԿԵՆՈՒԹԻՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ, ՄԵԿԵՆՈՒԹԻՒՆ ԲԵՐԱԿԱՆԻ: Սակայն իր գործերէն ամենէն ծանօթը եւ մինչեւ օրս գործածուողն է ԱԻԱԳ ՕՐՀՆՈՒԹԵԱՆՑ ութ կանոնները, որոնցմէ իւրաքանչիւրը բաղկացած է 10 պատկերներէ: Այս 10 պատկերներէ իւրաքանչիւրը բանաստեղծական համառօտագրութիւններն են Հին Կտակարանի յայտնի օրհներգութեանց, սկսեալ Մովսէսի Օրհնութենէն մինչեւ Ամբակուծ Մարգարէի Օրհնութիւնը: Շարակնոցին մէջ՝ այս 10

պատկերներէն իւրաքանչիւրին լուսանցքին վրայ համառօտադրեալ է վերոյիշեալ օրհնարգութեանց առաջին բառերը՝ ըստ հետեւեալի.

Օրհն. ՕՐՀՆԵՍՑՈՒՔ ԶՏԷՐ. օրհնութիւն Մովսէսի Կարմիր ծովը անցնելէ յետոյ. Ել. ԺԸ:

ՆԱՅ. ՆԱՅԵՑԱՐՈՒՔ ԵՐԿՈՒՆՔ դարձեալ օրհնութիւն Մովսէսի նախ քան իր մահը. Բ. Օրհնք. ԼԲ. 1-21:

ԶԻՀ. ԶԻ ՀՈՒՐ ԲՈՐԲՈՒՔԱԼ. երկրորդ մասը վերոյիշեալ երգին, Բ. Օրհնք ԼԲ. 22-38:

ԾԱՆ. ԾԱՆԵՑԱՐՈՒՔ ԵՒ ՏԵՍԷՔ. երրորդ եւ վերջին մասը վերոյիշեալ երգին. Բ. Օրհնք. ԼԲ. 39-43:

ՀԱՍ. ՀԱՍՍԱՏԵՑԱԻ ՍԻՐՏ ԻՄ. աղօթք Աննայի՝ Սամուէլի մօր. Ա. Թագ. Բ. 1-10:

ԳԻՇ. Ի ԳԻՇԵՐԱՑ ԿԱՆՔԷ ՀՈԳԻ ԻՄ. օրհնութիւն Մարգարէի. Ես. ԻԶ. 9-21:

ԵՍԱ. ԵՍ ԱՍԱՑԻ... Աղօթք Եզեկիայի արքայի Հրէից երբ ծանրապէս հիւանդացաւ. Ես. ԼԸ 10-20:

ՕՐՀ. ՕՐՀՆԵՑԷՔ ԶԱՍՏՈՒԱՄ... Օրհնութիւն Եսայի Մարգարէի. Ես. ԽԲ. 10-14:

ՆԵՂ. Ի ՆԵՂՈՒԹԵԱՆ ԻՄՈՒՄ... Յովնան Մարգարէի աղօթքը կէտ ձկան փորին մէջ. Յովնան Բ. 3-10:

ՏՐԼ. ՏԷՐ, ԶԼՈՒՐ ԲՈ ԼՈՒԱՑ. աղօթք Ամբակում Մարգարէի. Ամբ. Գ. գլուխ:

Սպրճադրոյ. Ժամանակակից կամ մերձակայ դարերու պատմիչներ մեծ բան մը չեն գրեր իր մասին: Ստեփանոս Օրբէլեան (1260-1304) է, որ իր ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆԱՀԱՆԳԻՆ ՍԻՍԱԿԱՆ գործին մէջ կարեւոր տեղ կուտայ Ստեփանոս Սիւնեցիի: [Մարտոյ վրդ. Գ. Գրիգորեան, Ստեփանոս Սիւնեցի (իւր երկու նորայայտ մեկնութիւններու Հրատարակութեան աւթթով.) Պեյրուք, 1958]:

8. ՄԱՇՏՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՂԻՎԱՐԴԵՑԻ 897-898

Անդրանիկ զաւակն էր Գրիգոր Քաւանային, ծնած շուրջ 836ին: Հօրը մահէն յետոյ կը մտնէ Մաքենացոց վանքը, ուր կը ստանայ իր հոգեւոր կրթութիւնը, քահանայական աստիճանը եւ արեղայական օրհնութիւնը:

Մաշտոց սրբադրօն եւ ուսումնասէր անձ մըն էր, եւ կարճ ժամանակին մէջ իր անունը ամենուրեք կը տարածուի իբրեւ գիտուն եւ խոսակեաց ճգնաւոր: Կը փոխադրուի Սեւանայ կղզին եւ այնտեղ ձեռնտուութեամբ Սիւնեաց Մարիամ Տիկնոջ կը կառուցանէ զոյգ մը «գեղապաճոյճ» եկեղեցիներ, մին յանուն Ս. Առաքելոց, իսկ միւսը՝ Ս. Աստուածածնին ընծայուած, 874 թուին: Երկար տարիներ կը վարէ մենաստանին վանահայրութիւնը (874-897):

«Մաշտոց Սեւանի միաբանութիւնն ալ կը ծաղկեցնէր եւ իրեն շուրջը կը ժողովէր եղբարց բազմութիւն, որք կարգաւոր վանականութեան մարմին մը կը կազմեն, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՄԲ ՍԱՀՄԱՆԱԻ ՍՐԲՈՅԵ ԲԱՐՍՂԻ, եւ ճգնաւորական կենցաղին մէջ ոյժ կուտային ուսմանց՝ ձեռք ձգելով բազմաթիւ հոգեւոր դիրքեր, «որպէսզի լուսաւորուին անոնց հոգիներուն աչքերը» (Ազգ. հտձ. 677):

Աշոտ Բագրատունի «իշխանաց իշխանը», որ հաստատեց Բագրատունեաց Թագաւորութիւնը 885ին, անձամբ այցելեց Սեւան «ի տեսութիւն սուրբ Հօրն Մաշտոցի» եւ ինչպիսիայսի աստուածընկալ մասունքը պարունակող նուիրական ու թանկարժէք ինչ մը ընծայ տուաւ, ինչպէս նաեւ վանքի նիւթական եւ տնտեսական պահպանութեան համար գիւղեր, այգիներ եւ Հողեր պարգեւեց: Ինչ որ կը հաստատէ Մաշտոցի համբաւին մեծութիւնը եւ ամենքին վստահութեան արժանացած ըլլալը: «Ամենեցուն աչք ի նա հայէին»: Կ'ըսէ ժամանակակից Յովհաննէս պատմաբանը:

Լայնախոհ մարդ էր Մաշտոց եւ Քրիստոնէական եկեղեցիներու մէջ տիրող անհամաձայնութիւնները եւ խտրել վերցնելու կողմնակից: Գաղափարէն գործի անցնելով՝ զբաւոր յայտարարութիւն հանեց, որ քաղկեդոնականներուն հետ կ'ուզէ հաղորդութեան մտնել եւ բաժանման գայթակղութիւնը մէջտեղէն վերցնել: Ասոր վրայ օրուան Հայոց

Կաթողիկոսը՝ Գէորգ Բ Գառնեցի, դիտողութիւն եւ յանդիմանութիւն ըրաւ իրեն, որ նման ծանրակշիռ եւ ամբողջ Հայ եկեղեցին շահագրգռող հարցերը ունէ մէկը իրաւունք չունի ինքնագլուխ լուծելու, ասոնք ժողովներով միայն կը կարգադրուին, ուստի հրամայեց յետս կոչել իր յայտարարութիւնը, այլապէս՝ սպառնալով նզովել զայն: Մաշտոց իրաւացի գտաւ Կաթողիկոսի նկատողութիւնը եւ ընդունեց իր բարեմիտօրէն «վերիպած ըլլալը եւ յայտարարեց. «Ճամբէ դուրս ելած եղայ՝ ինքնագլուխ վերցնելով սուրբ հայրերու դրած «խտրոցը» մեր եւ քաղկեդոնականներուն միջեւ, ուստի «աղօթահայեաց ապաշխարութեամբ եւ առաջի անկմամբ» պատառեցի իմ ձեռքովս գրուած եւ անձնական տեսակէտիս վրայ հիմնուած յայտարարութիւնս»:

Ատեն մը յետոյ Կարսի Հայոց թագաւոր Աբաս ուզած էր Հայոց կաթողիկոսը՝ Գէորգ Բ Գառնեցին, գահընկէց ընել՝ իր եւ եղբորորդւոյն միջեւ Բագրատունեաց թագաւորութեան յաջորդութեան մէջ իր հակառակորդին կողմը բռնած ըլլալուն համար: Ուստի կարծելով, որ Մաշտոց դառնացած պիտի ըլլայ Կաթողիկոսի դէմ վերեւ յիշուած նզովքի սպառնալիքին համար՝ ուզեց զայն իր կողմը շահիլ յատուկ նամակով մը: Մաշտոց սակայն շատ խոհական կերպով պատասխանեց, որ ինք չի հաւատար այն ամբաստանութեանց, զորս գրած էր Աբաս «մեծ Հայրապետի եւ Քրիստոսի փոխանորդի» մասին: Ապա կը խրատէ, որ ետ կենայ նման խորհուրդէ մը: Աբաս սկսեց կը համակերպի Մաշտոցի յորդորներուն եւ կը իրաւարի իր մտադրութենէն եւ կը հաշտուի նաեւ իր եղբորորդւոյն հետ, որ կ'արտօնէ իրեն Կարսի թագաւոր մնայ մինչեւ իր մահը:

893 թուականին սաստկագոյն երկրաշարժ մը պատահած էր Դուիւնի մէջ. հազարաւոր տուներ տապալած եւ տասնեակ հազարաւոր մարդեր մեռած էին: Ասոնց հոգեւոր մխիթարութեան համար Մաշտոց վարդապետ Սեւանէն գիր մը զրկեց, ուր Ս. Գիրքէն օրինակներով կը ջանայ բացատրել ահաւոր աղէտին իմաստը եւ մնացողները սրտապնդելով կը հրաւիրէ զիրենք աւելի զգաստ եւ աստուածամերձ կեանքի, քանի Դուիւնի պէս խառն բնակչութեամբ քաղաքի մէջ, Քրիստոսեաներ ալ «խառնակուած էին Հագարացիներուն հետ» եւ անոնց աշխարհիկ եւ սպաքարոյ գործերէն ազդուած էին:

897 թուին վախճանեցաւ օրուան «արդարամիտ եւ այր Աստու-

ծոյ» կոչուած Գէորգ Բ Գառնեցի Կաթողիկոսը: Յաջորդի ըտրութեան համար ամենքը համաձայնեցան Սեւանի վանքին առաջնորդ Մաշտոցի վրայ: Հակառակ որ խստակեաց ճգնաւորի մը կեանք կը վարէր Սեւանի մէջ, Մաշտոց ընդունած է ընտրութիւնը՝ նպատակ ունենալով «սքանչելագործ գովելի վարդապետութեամբ իւրով» եկեղեցիի բարեկարգութեան աշխատիլ, ինչ որ արդարեւ իրագործեց պաշտօնի ձեռնարկելէ յետոյ: Ժամանակակից պատմիչի բառերով «կը շինէր, կը հաստատէր եւ կը յորդորէր իր հաւատացեալ հօտը բարի գործերու եւ կենցաղի կարգ-կանոնի մէջ մնալ»: Սակայն իր պաշտօնավարութեան շրջանը շատ կարճատեւ եղաւ՝ Հազիւ եօթը ամիսներ, եւ վախճանեցաւ 60 տարեկան հասակին մէջ:

Մաշտոց անցած է Յայսմատուրքի «Յիշատակ ՍՈՒՐԲ Հայրապետին մերոյ Մաշտոց Վարդապետի» մակագրութեամբ, Հոկտ. 13ին: Թաղուած է Գառնի, հաւանաբար այստեղ վախճանած ըլլալուն համար: «Նոյնտեղ շինեցին ի վերայ նորա վայելուչ եկեղեցի», ինչ որ գործնականապէս կը հաստատէր անոր սրբութեան համբաւը:

Մաշտոց Վրդի եւ Կաթողիկոսի մեծագոյն գործը եղաւ Հայ եկեղեցւոյ ծիսարանը կարգաւորել եւ անոր ծիսական կանոնները մէկ հատորի մէջ համադրել: Պատմիչի բառերով՝ «Ժողովեց բոլոր կարգաւորեալ աղօթքները եւ ընթերցուածները իր կողմէ կատարուած յաւելուածներով միասին»: Այս գործը կազմած է ոչ թէ Կաթողիկոսութեան շրջանին, այլ անկէ առաջ Սեւանի առանձնութեան եւ գրական եւ ուսումնական աշխատանքներու ընթացքին: Հաւանաբար կաթողիկոսութեան շրջանին է, որ հրահանգած է անոր ընդհանրական գործադրութիւնը: Կը կարծուի, որ մեր Միսարաւը իր «ՄԱՇՏՈՑ» անունը ստացած է այս կաթողիկոսի անունէն:

Սկզբնաղբիր. Յովհաննէս Պատմաբան Կաթողիկոս:

9. ԱՇՈՏ Ա. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԹԱԳԱԽՈՐ 820-890

Նախ երկու խօսք Բագրատունիներու մասին: Ասոնք Հայաստանի բազմաթիւ աւատական իշխանական տուներէն մէկն էին, որոնք մեր պատմութեան մէջ Նախարարութիւններ անուանով ծանօթ են: Բագրատունիներ, իբրև մեր մեծագոյն իշխանական տուներէն մէկը, կարեւոր դեր կատարած են ամբողջ մեր պատմութեան ընթացքին: Անոնք Հայ Արշակունի թագաւորներու օրով (50-430) թագադիր ասպետներ էին, այսինքն՝ թագաւորի մը գահակալութեան ատեն անոր գլխուն թագ դնող իշխաններ: Այս կապակցութեամբ դրամատիկ դրուագ մըն ալ կայ մեր պատմութեան մէջ: 370ական թուականներուն պատերազմ կար Հայոց եւ Պարսից միջեւ: Մեհրուծան Արծրունի իշխանը, իր կրօնքը ուրացած՝ թշնամի բանակին հետ է եւ կը կռուի իր ժողովուրդին դէմ. Հայեր կը շահին պատերազմը: Սմբատ Բագրատունի զօրավարը կը ձերբակալէ Մեհրուծանը: Երկաթ մը կլորցնելով՝ կրակի վրայ հրաշէկ կը դարձնէ եւ Մեհրուծանի գլուխը դնելով՝ կ'ըսէ. «Հայոց թագաւոր ըլլալ կ'օւզէիր, ես իբրև թագադիր ասպետ այսու թագաւոր կը պսակեմ քեզ»:

Ուրիշ Սմբատ Բագրատունի մը, որ կ'ապրի վեցերորդ դարու վերջերը եւ եօթներորդին սկիզբները, արտասովոր ոյժի եւ պատերազմական բացառիկ կարողութեան տէր եղած է: Կը ծառայէ մեծ յաջողութեամբ նախ Բիւզանդական բանակի մէջ: Նախանձորդներ կը զբաւրտեն զայն, թէ օրուան կայսեր տեղ ինք կ'օւզէ անցնիլ. իբրև պատիժ կը նետուի գագաններու առջև: Իր վրայ արձակուած արջը բռունցքի հարուածով գետին կը փռէ, ցուլը, եղջիւրներէն բռնելով, գետին կը գամէ, առիւծին բերանը կը պատուէ: Ժողովրդային միահամուռ պահանջով կեանքը կը շնորհուի: Սմբատ սակայն կը հեռանայ ասպետարխտ Յոյներէն եւ կը մտնէ Պարսից արքայի ծառայութեան մէջ: Իր պատերազմական յաջողութիւններով այնքան սիրելի եւ վստահելի կ'ըլլայ Պարսից Շահին, որ զայն հսկայ երկրամասի մը մարզպան եւ իր երկրորդը կը նշանակէ: Իր այս դիրքին մէջ մեծամեծ բարիքներ կ'ընէ նաեւ Հայրենիքին եւ ժողովուրդին:

Բագրատունիք սկսան աւելի զօրանալ եօթներորդ դարուն. յաջորդ երկու դարերուն արարական տիրապետութեան օրերուն, արդէն

խիկ բարձրագոյն դիրքի տիրացած էին Հայ նախարարութեանց մէջ: Արաբ խալիֆաներ, գնահատելով Բագրատունիներու խոհական քաղաքականութիւնը եւ գինուորական յաջողականութիւնը, նշանակած էին զանոնք Հայաստանի սպարապետներ: Իններորդ դարու կէսին օրուան Բագրատունի սպարապետին նախ շնորհեցին «Իշխանաց իշխան» տիտղոսը եւ ապա՝ օտտեցին արքայական թագով: Այս իշխանը նոյնինքն ԱՇՈՏ Ան է, որուն մասին հանդերձեալ ենք գրել:

Աշոտ ծնած է շուրջ 820ին, հաւանաբար Ծիրակաւաւ քաղաքի մէջ, որ այժմու Կարսի նահանգին մէջ կը գտնուէր եւ Բագրատունաց մայրաքաղաքն էր: Իր հայրն ալ կը կոչուի Սմբատ Բագրատունի, որ իբրև սպարապետ Հայոց, հաւատարմօրէն կը ծառայէր Արաբներուն: Այդ օրերուն Պաղտատի խալիֆային կողմէ Հայաստան կը զրկուի Բուղա անուն անգութ զօրավար մը, որ ի վերջոյ Հայաստանը գրեթէ աւերելէն յետոյ, օրուան Հայ նախարարները, գրեթէ ամենքն ալ ձերբակալելով, Պաղտատ գերի տարաւ, որոնց մէջ էր նաեւ Սմբատ սպարապետ, որուն երախտիքի արժանի գործերը եւ մեծամեծ միամիտ ծառայութիւնները չյիշուեցան. կ'ըսէ ժամանակակից պատմիչը: Ասոնք բոլորն ալ հրաւիրուեցան ուրանալ իրենց կրօնքը մահէն ազատելու համար:

Նախարարներէն մեծ մասը տկարացան եւ ուրացան ու թլփատուելով իբրև աքսորական Պաղտատ մնացին: Չորս հոգի չուրացան. անոնցմէ մին գլխատուեցաւ՝ յօրինակ միւս երեքին, որոնք սակայն անդրդուելի մնացին ու բանտ նետուեցան, ուր խոստովանողական մահուամբ պսակուեցան:

Ուրացութեան չզիջողներէն եղաւ նաեւ Աշոտի Հայրը Սմբատ: Ամիրապետը, երբ տեսաւ, որ անօգուտ են սպառնալիքները եւ խոստումները, կ'որոշէ «դառն տանջանքներով» վերջ տալ անոր կեանքին: Նախ քան սակայն Ամիրապետի մտադրութեան իրագործումը, Սմբատ բնական մահով վախճանեցաւ բանտին մէջ: Որով պատմութեան մէջ կը յիշուի իբրև Սմբատ «խոստովանող»: Մարմինը վերցուելով բանտէն՝ պատուով թաղուեցաւ տեղացի քրիստոնեաներու կողմէ, Դանիէլ Մարգարէի նետուած առիւծներու գուբին վրայ շինուած եկեղեցւոյ մէջ, շուրջ 860ին:

Աշոտ, հօրը Պաղտատ տարուելէն յետոյ, անոր տեղ անցած էր

իրբեւ սպարապետ Հայոց, եւ օրուան Չաքարիա Կաթողիկոսի Հետ խոհականութեամբ կը ջանային բուժել երկրին ստացած վէրքերը եւ Հանդարտութիւնը պահել: Աստուծոյ ողորմութեամբ անկարելի կարելի եղաւ, եւ գերութեան գացած նախարարներ վերադարձան, եւ իւրաքանչիւր ոք վերատիրացաւ իր գաւառին, զոր կը կառավարէին աւատական դրութեամբ: Պաղտատի ամիրապետը պէտք տեսաւ Հայ իշխաններուն վրայ իշխանապետ մը կարգել, որ ուղղակի պատասխանատու ըլլար ամբողջ երկրին համար Ատրպատականի իր ներկայացուցիչին: Այդ պատիւը ընծայուեցաւ նոյնինքն Աշոտ Բագրատունիի, որ անկէ յետոյ սկսաւ կոչուիլ «Իշխանաց իշխան»: Իր պարտականութիւնն էր իշխաններուն վրայ հսկել, որ խլրտուաներ չունենան եւ իրենց տուրքերը լրիւ եւ ժամանակին վճարեն: Այս կերպով երկիրը օժտուեցաւ ներքին ամբողջական ինքնավարութեամբ: Արաբական տիրակալութեան միակ նշանը մնացած էր տուրքի վճարումը. իւրաքանչիւր նախարար պարտաւոր էր իր բաժինը յանձնել Իշխանաց իշխանին, որ տուրքը կը զրկէր Ատրպատականի Արաբ կառավարիչին, իր կարգին զրկելու համար Պաղտատի ամիրապետին:

Հետաքրքրական է յիշել, որ այս շրջանին Բիւզանդիոսի գահին վրայ բազմած է Վասիլ Ա Մակեդոնացի կայսրը (867-886), որ հայկական ծագում ունէր եւ ինքզինքը սերած կը նկատէր Հայ Արշակունի արքայական ցեղէն. եւ իմացած ըլլալով, որ Հայ Արշակունիներուն թագազիրները եղած են Բագրատունիներ, ուզած է ինքն ալ Աշոտ Բագրատունիի ձեռքէն թագ ստանալ: Աշոտ սիրով կատարեց այս փափաքը եւ 876ին թագ կը զրկէ Վասիլին տասը արծաթով՝ իբրեւ նուէր՝ Վասիլի կողմէ շինուելու վրայ եղող եկեղեցիի մը:

Աշոտին վրայ առատ են պատմիչներու գովեստները, որոնք կը ներկայացնեն զայն իբրեւ ամէն կատարելութիւններով օժտուած անձնաւորութիւն մը: Օրմանեան հետեւեալ ձեւով կը պատկերացնէ Աշոտի նկարագիրը.

«Լաւ կըթուփիւն ստացած, պատերազմական քաջութեամբ՝ նշանաւոր, վարչական յաջողակութեամբ՝ անզուգական, բնաւորութեամբ՝ հեզ եւ խոնարհամիտ, ներքին զգացմամբ՝ բարեսէր, սնտոի փառքերէ հեռու, անիրաւ շահերէ անմասն, ամենուն սիրտը գրաւող, բարեպաշտութեան մէջ՝ նշանաւոր, ազգասէր

եւ աշխարհաշէն եւ այլ ամէն տեսակ բարի ձիրքերով օժտուած: ... Գերազանց եւ բարձր ձիրքերու նշան մըն է, երեսուն տարի շարունակ պաշտօնի վրայ մնալ այսպիսի դառն ժամանակներու մէջ, եւ թէ՛ տիրապետող ինքնակալութեան եւ թէ՛ բովանդակ ենթարկեալ իշխաններուն համակրութիւնը այնպէս գրաւել, որ այս վերջինները աղաչաւոր ըլլան իրեն բարձրացման եւ պետութիւնն ալ հաճի անսովոր շնորհաբաշխութեամբ, թագաւոր վեհութեան բարձրացնել [զայն]» (Ազգ. հտժ. 665):

Արդարեւ, Աշոտ այնքան սիրալիկ յարաբերութիւն մշակած էր Հայ նախարարներուն հետ, որ գրեթէ ամենքը կապած էր իրեն: Ասոնք միասնաբար յատուկ դիմում կատարեցին Ամիրապետին, որպէսզի Աշոտին արքայական թագ շնորհուի եւ շարունակէ իշխել իբրեւ Հայոց թագաւոր, միշտ Արաբ խալիֆայութեան իշխանութեան ներքեւ: Ջորմանալիօրէն ընդունուեցաւ այս խնդրանքը, եւ Խալիֆան «արքայական թագ, թագաւորական զգեստներ, պարգեւներ եւ պատիւներ, օղապարիկ երիվարներ (արաբական ճոյգներ), գէնքեր եւ զարդեր» զրկեց Աշոտին 885 թուին: Ու այսպէս Արշակունեաց թագաւորութեան անկումէն շուրջ 350 տարիներ յետոյ Հայաստան վերստին ունեցաւ իր թագակիր իշխանը յանձին Աշոտ Բագրատունիի: Օրուան Հայոց կաթողիկոսի՝ Գէորգ Բ Գառնեցիի օրհնութեամբ եւ կրօնական մեծ Հանդիսութեամբ արքայական գահ բազմեցաւ Աշոտ: Բիւզանդիոսի Վասիլ կայսրն ալ, իմանալով եղելութիւնը, իր կարգին թագ ու արքայական նուէրներ զրկեց անոր:

Աշոտ իշխած էր իբրեւ սպարապետ 5 տարի, իբրեւ «Իշխանաց իշխան»՝ 25 տարիներ, թագաւորեց 5 տարի եւ վախճանեցաւ 890ին, 70 տարեկանին: Մահէն առաջ կանչեց օրուան Հայոց կաթողիկոսը, Գէորգ Բ Գառնեցին, եւ Ս. Հաղորդութիւն ստացաւ անոր ձեռքէն: Ապա անոր յանձնեց «գանձս ոսկւոյ եւ արծաթոյ», որպէսզի աղքատներուն եւ չքաւորներուն բաշխէ: Նոյն ատեն Հայրապետի տրամադրութեան ներքեւ դրաւ «ձիերու երամակներ, արջառներ ու ոչխարներ», ըստ պատշաճի բաշխելու համար զանազան եկեղեցիներուն, որպէսզի Հանգստեան պատարագներ ըլլան իրեն եւ իր գերդաստանին համար:

Կը կատարուի շքեղ յուղարկաւորութիւն կաթողիկոսի գլխաւորու-

Թեամբ: Իր անդրանիկ որդին՝ գահաժառանգը, եւ եղբայրը՝ Հայոց սպարապետը, բացակայ էին պետական կարեւոր գործերով: Ներկայ էին երեք միւս գաւակները, բազմաթիւ նախարարներ, անհամար բազմութիւն ժողովուրդի, հսկայ զօրախումբ մը զինուորական զէնքերով ու զարդերով թափօրին առջեւէն կը քալէր: Կը թաղուի Բազարան քաղաքը, Կարսի նահանգին մէջ, Արաքս եւ Ախուրեան գետերու իրար խառնումի կէտէն քչիկ մը հիւսիս:

Աշոտ իշխանութեան գլուխ եկած էր Բուզա անդուլթ զօրավարի գժբախտ օրերուն, երբ երկիրը գրեթէ աւերակ եղած ու անգլուխ մնացած էր՝ բոլոր իշխաններ, իր հօր գլխաւորութեամբ, գերի տարուած ըլլալով: Բայց 35 տարուան իր իշխանութեան օրերուն նախարարներ վերադարձած էին (բացի իր հօրմէն եւ քանի մը նահատակածներէն), երկիրը շէնացած էր, Հայաստանի վարկը բարձրացած էր, օրուան երկու հզօրագոյն կայսրութիւններէն թագ ու պատիւ ստանալով, եկեղեցին պայծառացած էր:

Աշոտ Ա Բագրատունի թագաւորը անցած է Յայսմատուրքի Մայիս 27ին, ուր իր մասին ի միջի այլոց ըսուած է.

«Հայոց ճոխ թագաւորը եղաւ. շատ շինութիւններ ըրաւ, ՍՏՈՒԳՎԱՄ խաղաղութիւն բերաւ երկրին, շատ մը փառաւոր եկեղեցիներ կառուցանել տուաւ, վախճանեցաւ աստուածապաշտութեամբ եւ լեցուն հաւատքով ու փոխուեցաւ անանց թագաւորութիւնը: Իր բազմապատիկ առաքինական գործերուն համար արժանացաւ յիշատակուելու Հայաստաննայց եկեղեցւոյ մէջ»:

Ազգնադրիւրներ. Թովմա Արծրունի եւ Յովհաննէս Պատմաբան Կաթողիկոս:

10. ԱՇՈՏ ՈՂՈՐՄԱՍ ԹԱԳԱՒՈՐ 953-977

Բագրատունեաց 5-րդ թագաւորն է Աշոտ Գ, որ պատմութեան մէջ ծանօթ է ՈՂՈՐՄԱՍ տիտղոսով, իր չափազանց գթասրտութեան եւ առատաձեռնութեան համար: Որդին է Աբաս թագաւորի, որ յաջորդած էր իր եղբոր՝ Աշոտ երկաթին, որոնք թոռներն էին Աշոտ Առաջին թագաւորին Բագրատունեաց:

Կ'ապրի եւ կը գործէ Անանիա Մոկացի Կաթողիկոսին օրով, որուն եկեղեցաշէն ձեռնարկներուն մեծազէս օժանդակ եղած է Աշոտ իր բարեպաշտական զգացումներէ թելադրեալ: Իրեն նման եւ գործակից եղած է նաեւ իր արժանաւոր թագուհին՝ ԽոսրովաԱնուշը, որ ի մէջ բազմաթիւ այլ շինութեանց եւ ձեռնարկներուն կանգնած է Հոյակապ եկեղեցիներ Հաղբատ եւ Սանահին նշանաւոր վանքերուն մէջ:

Աշոտի բարեպաշտական եւ գթասիրութեան գործերը առատ են պատմութեան մէջ: Իր ժամանակակից պատմիչը՝ Ասողիկ, կը հաստատէ, որ «խոնարհութեամբ եւ ողորմութեամբ գերազանցեց ամենքը»: Աշոտ եկեղեցիներու հետ շինած է նաեւ հիւանդանոցներ եւ բորոտանոցներ, որոնց մէջ «շատ անգամ ինք անձամբ կը սպասուորէր» այդ փոխանցիկ ախտերով վարակուած հիւանդներուն: Կը պատմուի նաեւ, որ «գոնջերը (քէլերը), կաղերը եւ կոյրերը կը հաւաքէր իր պալատը եւ իրեն սեղանակից կ'ընէր, իր արքայական բաժակով անոնց ըմպելի կը մատուցանէր եւ գաւաթին տակը մնացածն ալ ինք կը խմէր»: Իսկ իր առատաձեռնութեան չափ ու սահման չկար. այնպէս որ վերոյիշեալ պատմիչը կը հաստատէ, որ «իր մահէն յետոյ արքայական գանձին մէջ դրամ չէր մնացած. մինչեւ իսկ զարդերը դրամի վերածելով՝ բաշխած է կարօտեալներուն»:

Որքան բարի ու առաքինի՝ նոյնքան ալ քաջ, կորովի եւ վեհանձն թագաւոր էր Աշոտ Գ: Իր օրով կովկասեան լեռնականներ արշաւած էին Հայաստան: Աշոտ անոնց դէմ ելաւ 45.000 հոգինոց բանակով մը եւ երեք տարի յարատեւօրէն պայքարելով՝ երկիրը մաքրեց այս անգուսպ եւ անյադ ասպատակներէն: Նոյնպէս՝ զրացի երկիրներէն Արաբ իշխան մը, ասպտամբելով իր ամիրապետէն, աջ ու ձախ կ'ասպատակէր: Աշոտ ջախջախեց ասպտամբին բանակը եւ իր երկրէն դուրս վտարեց զայն:

Մեծագործ եւ շինարար էր Աշոտ: Օրմանեան կը հաստատէ, որ «Բագրատունեաց ժամանակէն մնացած նշանաւոր շինութեան մեծագոյն մասը իրեն՝ Աշոտին, ժամանակին գործերն են»: Ոչ միայն շինած ու նորոգած է բազմաթիւ վանքեր, այլ նաեւ Աճիճ Բագրատունեաց մայրաքաղաքին վերածողը ինք եղաւ: Այսօրուան Հոյակապ պարիսպները իր շինածներն են, աշտարակներով զօրացած, որոնք մէկական մարտկոցներ էին, եւ որոնց իւրաքանչիւրին մէջ, կ'ըսէ պատմիչը,

«եկեղեցիներ յարմարուց»։ Նախապէս իր մայրաքաղաքը Կարսն էր. 960ական թուականներուն Անի փոխադրուեցաւ :

Իր հարազատ կրտսեր եղբայրը՝ Մուշեղ, Կարս կը մնար Աշոտի Անի փոխադրուելէն յետոյ : Մուշեղ ալ ուզեց թագաւորական անուն եւ պատիւ ունենալ : Աշոտ վեհաճանութեամբ եւ խաղաղասէր զգացումներէ թելադրուած չուզեց պատերազմով իր եղբայրը իր չափին մէջ պահել. արտօնեց, որ թագ կրէ երկու պայմաններով. նախ իր դէմ թշնամական ընթացք չանուցանէ, երկրորդ՝ իրեն հետ գործակից ըլլայ հասարակաց թշնամիներու դէմ : Այս կերպով երկու հարազատներու եղբայրական կապը չխզուեցաւ, թէ իսկ թագաւորութեան մէջ նոր թագաւորութիւն մը ծնած ըլլար :

885էն մինչեւ Աշոտ թէեւ չորս թագաւորներ իշխած էին, որոնց գահակալութեան թերեւս ընկերացած էին նաեւ կրօնական արարողութիւնները, բայց ոչ մէկը արքայական օծում ունեցած էր : Այս Աշոտի վարմունքն ալ սիրաշահողական էր միւս իշխաններուն հետ. ամենքի սէրը եւ յարգանքը դրաւած էր, ուստի դարձեալ հրաշքի մը համազօր միաբանութեամբ եւ բարի կամեցողութեամբ «ամենայն իշխանքն աշխարհաց տանն Հայոց» դիմեցին օրուան Անանիա Մոկացի Կաթողիկոսին, որ Աշոտի վրայ կատարուի օծման հանդիսաւոր արարողութիւն : Արդարեւ, այդ նպատակով «մեծ ժողով եղաւ Անի քաղաքին մէջ», եւ բոլոր Հայ իշխաններ եւ արքայիկներ եւ հսկայ բազմութիւն Անի հաւաքուեցան, եւ Անանիա Կաթողիկոս հանդիսաւորապէս օծման արարողութիւն կատարեց Աշոտի վրայ, ի մեծ ուրախութիւն ամենքին : Այդ առթիւ շրջակայ ազգերու թագաւորներ ալ «Գարգեւներ եւ թանկագին ընծաներ զրկեցին ի փառաւորութիւն Հայոց թագաւորութեան» : Թագաւորական օծման թուական ցոյց կը տրուի 961 թուականը, որ միաժամանակ Անիի մայրաքաղաք նշանակելուն պաշտօնակաւնացման թուականը կարելի է նկատել :

Աշոտ յիշուած է Յայսմատուրքի մէջ, իբրեւ տօնելի սուրբ, Մայիս 20ին : Բազմաթիւ ներքողական արտայայտութեանց կարգին ըսուած է իր մասին. «Աշոտ զարդարուած էր հոգեւոր եւ մարմնաւոր ձիրքերով եւ ամենքին սիրելի էր իր առաքինի վարքովը : Եինեց հիմանէ բազմաթիւ եկեղեցիներ Անի քաղաքին մէջ եւ ուրիշ տեղեր : Հինցածները նորոգեց եւ վայելուչ վիճակի մէջ դրաւ, բազմաթիւ հիւանդանոցներ

եւ անկելանոցներ հաստատեց մշտնջենաւոր եկամուտներով...» : (ՓեՇՏ. Ա. հատոր էջ 226) :

Այս Աշոտն ալ իր մեծ հօր՝ Աշոտ Առաջինի պէս ամէն մասամբ կատարեալ թագաւորի մը տիպարով կը ներկայանայ : Վախճանեցաւ լեցուն տարիքի մէջ 977ին, գրեթէ քառորդ դար թագաւորելէ յետոյ, երկիրը շէն ու խաղաղ վիճակի մէջ պահեց : Յայսմատուրքը իր մահուան թուականը կը դնէ Մայիս 20ին : Ետին ձգեց երեք որդիներ, որոնցմէ անդրանիկը՝ Սմբատ, անմիջապէս յաջորդեց իրեն, աւելի շէնցուց եւ ամրացուց Անի քաղաքը եւ շինեց անոր Մայր եկեղեցին, որ իբրեւ կառոյց մինչեւ այսօր կը տոկայ վեհաբար, հակառակ բազմաթիւ երկրաշարժներու բացած վէրքերուն իր մարմնի վրայ, եւ հակառակ բնական ու բանական այլ ազդակներու աւերումներուն. ներկայիս գմբէթը ինկած եւ սեղանները վերցուած են :

Աշոտի մահէն երեք տարի յետոյ վախճանեցաւ նաեւ իր արժանաւոր կողակիցը՝ բարեպաշտ ու մեծագործ Խոսրովանոյշ թագուհին Հայոց :

Սկզբնաղբիւր. Ստեփանոս Ասողիկ Գատմիչ :

* * *

Բազրատունեաց թագաւորութիւնը վերջաւորութեան բերելու համար պէտք է աւելցնենք, որ Սմբատին յաջորդեցին չորս եւս թագաւորներ մինչեւ 1045 թուականը, երբ Բիւզանդիոնի կայսրեր բռնի ու դաւաճանութեամբ տիրացան Անի մայրաքաղաքին եւ Բազրատունեաց տէրութեան փոխարէն՝ Բազրատունեաց վերջին թագաւորին, Գագիկ Բին տուին Կեսարիոյ շրջանը, ուր ապրեցաւ կիսանկախ վիճակի մէջ, մինչեւ 1079 : Ըստ այսմ՝ Բազրատունիներու թագաւորութիւնը տեւեց 160 տարի (885-1045)՝ ազգին պարգեւելով տասը կորովի եւ շինարար թագաւորներ, բացի մէկէն :

1. ԱՐԾՐՈՒՆԻԻՔ

Արծրունեաց նախարարութիւնը Հայաստանի Հնագոյն ու կարեւոր իշխանական մեծ տուններէն մէկն է: Իրենց աշխարհը կամ նահանգը կը տարածուէր Վանայ լճին հիւսիս եւ հարաւային կողմերը, բայց առաւելագոյն մասը կը գտնուէր լճին արեւելքը, մինչեւ Պարսկական սահմանը, եւ կը կոչուէր ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ: Անոնց իշխանութեան կեդրոնը սկիզբները ԱՂՐԱԿ քաղաքն էր, այսօրուան Պաշքալէն, ապա փոխադրուեցաւ Վան եւ անկէ ոչ շատ հեռի՝ Աղթամար կղզին:

Արծրունիք, Պարսկաստանի սահմանակից ըլլալով, յաճախ հետեւած են պարսկամէտ քաղաքականութեան, յատկապէս Մեհրուժան Արծրունիի օրով, որ ուրացաւ Քրիստոնէութիւնը եւ ընդունեց Պարսից կրօնքը եւ ուզեց Հայաստանը ամբողջապէս ենթարկել Պարսկաստանի, 370ական թուականներուն, եւ ինք ըլլաւ Հայոց թագաւոր Պարսիկ իշխանութեան տակ, բայց սպաննուելով Հայ նախարարներու կողմէ, չհասաւ իր նպատակին:

Վարդանանց շարժումի ընթացքին Արծրունիք ուխտապահներուն հետ էին, եւ օրուան իշխանաւորը՝ Ներշապուհ Արծրունի, Հայ բանակի կեդրոնական տեղը կը գրաւէր Աւարայրի ճակատամարտին: Թէեւ չի նկատուիր պատերազմին, սակայն կալանաւորուեցաւ պատերազմէն յետոյ եւ ուրիշ ինը կարեւոր նախարարներու հետ աքսոր զրկուեցաւ Պարսկաստան՝ իբրեւ պատասխանատուներէն մէկը Վարդանանց ապստամբական շարժումին: Եւ որովհետեւ այս տասը նախարարները չուրացան իրենց կրօնքը, 10-12 տարիներ աքսորանքի եւ բանտի տաժանագին կեանք վարեցին եւ ի վերջոյ ազատուելով՝ վերադարձան Հայրենիք եւ տէր եղան իրենց իշխանութեան:

Արծրունիներ ալ, Բագրատունիներու պէս, աւելի զօրացան Արաբական տիրակալութեան շրջանին եւ առ հասարակ մասնակցեցան Խալիֆայութեան տիրակալութեան դէմ Հայաստանի մէջ սկսուած ապստամբական շարժումներուն, որոնք սակայն մնայուն արդիւնք չտուին՝ կեդրոնական Հայկական իշխանութիւն մը գոյութիւն ունե-

ցած ըլլալուն պատճառով: Տեսանք ասկէ առաջ, թէ Սահակ եւ Համազասպ Արծրունի իշխաններ նահատակուեցան նման ապստամբական շարժումի մը մասնակցած ըլլալու յանցանքով: Սկիզբէն գործակցեցան Բագրատունեաց նախարարութեան միակ եւ մեծկակ կեդրոնական թագաւորութիւն մը ստեղծելու շարժումին: Սակայն յետոյ հետեւեցան անջատողական քաղաքականութեան եւ ունեցան իրենց ուրոյն թագաւորութիւնը 10րդ դարու սկիզբները, որ տեւեց մինչեւ 1021 թուականը, եւ օրուան թագաւորը՝ Սենեքերիմ, մէկ կողմէ նեղուելով Սելճուքներու արշաւանքներէն եւ միւս կողմէ՝ գրեթէ բոնի հրաւիրուելով Բիւզանդիոնի կայսրէն, ստիպուեցաւ գիջիլ իր երկիրը Բիւզանդական կայսրութեան եւ փոխարէն ստանալ Սեբաստիոյ (Սվասի) նահանգը եւ այնտեղ փոխադրուիլ իր ժողովուրդի կարեւոր մէկ մասին հետ: Արծրունի իշխանները շարունակեցին իրենց աւատական թագաւորութիւնը Բիւզանդիոնի հովանաւորութեան ներքեւ մինչեւ 1080 թուականը, երբ վերջ գտաւ այս մասնակի Հայկական թագաւորութիւնը, շուրջ 120 տարի տեւելէ յետոյ՝ վեց թագաւորներ տալով երկրին: Իսկ Սվասի մէջ իշխեցին 60 տարիներ՝ երեք թագակիրներով: Իրենցմէ ճիշդ մը անցած էր Վրաստան (Մահկանաբերդի Արծրունիներ անունով), ուր ազդեցիկ դեր ունեցան մինչեւ 13րդ դարու վերջերը, երբ այլեւս անյայտացան պատմութեան մէջ միւս նախարարութեանց կարգին:

Գաղափար մը տալու համար Արծրունեաց թագաւորութեան տարողութեան մասին, ժամանակակից պատմիչներ կը յիշեն, թէ Սենեքերիմ Արծրունի երբ Բիւզանդիոնի կը յանձնէր իր տէրութիւնը, այն օրերուն Վասպուրականի մէջ միայն կային ութ մեծկակ քաղաքներ, 72 ամրոցներ, չորս հազար գիւղաքաղաքներ եւ գիւղեր՝ շուրջ մէկ միլիոն բնակչութեամբ: Նոյն օրերուն կար նաեւ Բագրատունեաց թագաւորութիւնը, Վասպուրականի գրեթէ կրկին մեծութեամբ: Կար նաեւ Սիւնեաց թագաւորութիւնը քիչ փոքր Վասպուրականէն: Այլ չենք յիշեր Վանայ ծովին Արեւմուտքը տարածուած Վասպուրականի մեծութեամբ հողամասերը, Տարօն-Տուրուբերան նահանգները եւ յարակից գաւառները մինչեւ Եփրատ, որոնք գրեթէ ամբողջութեամբ հայերէ բնակուած էին, բայց տարբեր իշխանութիւններէ՝ յաճախ Բիւզանդացիներէ կը կառավարուէին:

Արծրունեաց ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ Հիմնադիրը եւ ամենէն նշանաւոր դէմքն է Գագիկ Արծրունի, որ ծնած կը նկատուի 880ին: Ունէր երկու եղբայրներ, երէցը՝ Աշոտ, կրտսերը՝ Գուրգէն: Գրեթէ 15 տարեկանէն սկսեալ՝ գործօն եւ կարեւոր դեր խաղաց այն օրերուն Վասպուրականի շատ խառնակ կացութեան մէջ: Ատեն մը բանտարկուեցան երեք եղբայրները գանազան բերդերու մէջ, Բագրատունեաց Սմբատ Ա թագաւորին կողմէ Վասպուրական զրկուած կուսակալին մեքենայութեամբ: Սակայն Գագիկ, կերպով մը ազատուելով իր բանտէն, սպաննեց զինք բանտարկող կուսակալը եւ ազատեց նաեւ երկու եղբայրները, որոնք եւս արգելափակուած էին տարբեր տեղեր: Իր աւագ եղբոր՝ Աշոտի մահէն յետոյ ինք եղաւ Վասպուրականի իշխանապետը 904ին եւ կրտսեր եղբոր՝ Գուրգէնի հետ, երկիրը երկու մասի բաժնելով, համերաշխաբար կառավարեցին Վասպուրականը իբրեւ անջատ իշխաններ:

Օգտուելով տիրող համեմատական խաղաղ պայմաններէն՝ Գագիկ ինքզինքը նուիրեց շինարարական աշխատանքի՝ շէնցնելով եւ ամրացնելով իր երկիրը եւ ընդարձակելով անոր սահմանները: Վերաշինեց, օրինակ, իրեն ենթակայ Ռշտունեաց գաւառի Ոստան քաղաքի միջնաբերդը եւ Ս. Աստուածածին եկեղեցին: Վանի Միջնաբերդին մէջ կառուցանել տուաւ յատուկ սանդուխք եւ ստորերկրայ ջրի ճամբայ եւ պալատ: Յաջողութեամբ ետ վանեց շրջակայ օտար ցեղերու յարձակումները եւ զսպեց իր երկրին մէջ գործող կեղրոնախոյս խլրտումները: Ռշտունեաց գաւառէն յետոյ Վասպուրականին միացուց նաեւ Մոկք նահանգը հարաւէն: Յաղթահարելով այլազգիներուն՝ անոնցմէ ետ խլեց ինչինչ ամրոցներ, բերդեր եւ գաւառներ:

Դժբախտաբար Գագիկ, տարուելով քինախնդրական ու փառասիրական զգացումներէ, ունեցաւ նաեւ անջատողական-ժխտական գործունէութիւն: Զորաւոր կերպով հակառակ դիրք բռնեց ընդդէմ Բագրատունեաց Սմբատ Ա թագաւորին, որ կուզէր ամբողջ Հայաստանը միացնել մէկ իշխանութեան ներքեւ: Այս վերջինը՝ ի վարձատրութիւն Սիւնեաց իշխանին իրեն հետ համագործակցութեան, նախիջեւան քաղաքը Վասպուրականէն առնելով, Սիւնեաց նահանգին կցած էր, ինչ որ, դժբախտաբար, աւելի սաստկացուց Գագիկի կեղրոնախոյս

գործունէութիւնը: Ամենէն վտանգաւոր եւ վնասակար ձեռնարկը թէ՛ Հայ ժողովուրդին եւ թէ՛ իրեն համար եղաւ գործակցութեան ձեռք երկարելը Ատրպատականի տիրակալ Յուսուֆ Արաբ մարզպանին, որ կ'աշխատէր ջախջախել Բագրատունեաց թագաւորութիւնը: Յուսուֆ Հայոց իշխանները բաժնելու միտքով 908ին Գագիկին արքայական թագ շնորհեց՝ «Հայոց թագաւոր» տիտղոսով՝ ի հեծուկս Սմբատ Ա թագաւորին: Այնուհետեւ, Գագիկ տեւականօրէն մասնակցեցաւ Սմբատ Ա.ի դէմ Յուսուֆին շղթայազերծած կռիւներուն: Մինչեւ իսկ անտարբեր մնաց օրուան Հայոց Յովհաննէս Գատմաբան կաթողիկոսի տառապանքներուն, երբ ան նենգութեամբ ձերբակալուած ու բանտարկուած էր Յուսուֆին կողմէ: Այս վերջինը շատ ճարպիկ քաղաքականութեամբ յաջողած էր Հայ իշխանները իրեն կապել եւ իրարու դէմ լարել ու Հայկական զօրագունդերով, Հայ իշխաններէ առաջնորդուած, Սմբատ Բագրատունիի վրայ յարձակել եւ շատ նեղ կացութեան մատնել զայն: Սակայն այս վերջինը, չուզելով որ Հայ արիւն թափուի, անձնատուր ըլլալու արիութիւնը ունեցաւ: Ուրիշներու փրկութեան համար իր փրկութիւնը անտեսեց եւ ձեռքը լոկ գաւազան մը առած դնաց եւ յանձնուեցաւ Յուսուֆին, որ ամենէն անյուր եւ ահաւոր չարչարանքներու ենթարկեց զայն եւ ի վերջոյ պահանջեց, որ ուրանայ իր հաւատքը՝ ազատուելու համար. սակայն Սմբատ յանձն չառաւ, որուն վրայ հրամայեց Յուսուֆ սուրով գլխատել 913ին այս քաջարի թագաւորը, որ ժառանգեց այսպէս նաեւ ՆԱՀԱՏԱԿԻ աւելի պանծալի տիտղոսը:

Յուսուֆ, իր գլխաւոր նպատակին հասած ըլլալով, տակաւ առ տակաւ մէջտեղէն կը վերցնէր կամաւ կամ ակամայ իրենց միացած Հայ իշխանները: Գագիկ, զգալով, որ կարգը իրեն ալ պիտի գար, ուստի օրին մէկը, «յանկարծակի ձի նստելով, փախաւ իր երկիրը» քանի մը հաւատարիմ զօրականներու հետ: Յուսուֆ ասպատակ գունդ մը զրկեց անոր հետեւէն: Գագիկ լեռները ապաւինեցաւ եւ ի վերջոյ, միանալով Անձեւացեաց եւ Մոկաց Հայ իշխաններուն հետ, երկրէն դուրս հալածեցին Յուսուֆին զրկած ասպատակ բանակը: Յուսուֆ ի վերջոյ կը ձերբակալուի ու կը բանտարկուի օրուան ամիրապետին կողմէ, որ ինք եւս թագ կը զրկէ Գագիկին՝ ի նշան իր գոհուեակութեան Յուսուֆին դէմ տարած իր պայքարին եւ իր հպատա-

կուլթան տակ պահելու համար զայն:

Այնուհետև Գագիկ, բոլորովին հրամարտելով իր տարած կեդրոնախոյս գործունեությունն, ինքզինքը նուիրեց շինարարական աշխատանքի եւ երկրի միացման եւ տնտեսական վերելքին: Մոլոմ տուաւ, օրինակ, Հոդադրծութեան, որ երեսի վրայ մնացած էր մեծ չափով պատերազմներու եւ անապահովութեան պատճառով: Հարկերը թեթեւցուց, զանազան տեսակ տուրքերը եւ պետական հարկահաւաքին չափը սահմանաւորեց: ՎԱՃ բերդաքաղաքը աւելի ծաղկեցուց, որ տակաւ առ տակաւ դարձաւ երկրին տնտեսական, վաճառանական, դատական, քաղաքական ու հոգեւոր կեդրոնը: Ուտաւն եւ Հադամակերտ քաղաքները վերանորոգեց եւ վերածեց աշխատանքային եւ շինարարական նիւթերու հայթայթման կեդրոնի: Զարկ տուաւ նաեւ հանրային հանգամանք ունեցող շինություննց եւ հաղորդակցութեան միջոցներու կառուցման: Օրինակ ճամբաներու, կամուրջներու, քարվանսարայններու, վանքերու եւ եկեղեցիներու, որոնց մէջ ամենէն նշանաւորը եղաւ Աղթամարի Ս. Պաշ եկեղեցին, որ մինչեւ այսօր կը պահէ իր գոյութիւնը:

Գագիկ ոչ միայն փառաւորութեամբ արքայական թագով եւ հոյակապ շինարարութիւններով, այլ նաեւ բախտաւոր եղաւ զանելու պատմիչ մը, յանձին թովմա Արծրունիին (կամ անոր պատմութեան շարունակողին), որ գրած է Արծրունեաց պատմութիւնը, որուն մէջ շատ ընդարձակ տեղ տրուած է Գագիկի անձին եւ գործին: Այստեղ Գագիկը կը ներկայացուի իբրեւ կատարեալ անձ եւ իշխան ամէն մարդի մէջ, մինչեւ իսկ իր մանկութենէն սկսեալ. «Տղայական տարիքին հրաշագարդ փառքով կը փայլէր իր եղբայրներուն մէջ, որ մանկական հասակէն իսկ բարի արմատ մը կը վերերեւցնէր... Անոր շրթունքներէն ընտիր ոսկիէն աւելի պատուական իմաստութիւն կը բղխէր»: Որքան համեստ ու քաղցր էր իր սովորական վարմունքին մէջ, նոյնքան ալ խիստ ու ահարկու էր թշնամիներուն հանդէպ: Որքան իմաստուն էր երկիր կառավարելու եւ շէնցնելու մէջ, նոյնքան կարող ու կորովի էր բանակները առաջնորդելու մէջ եւ քաջ՝ պատերազմի ընթացքին: Պատմիչը կ'աշխատի չքմեղել անոր անջատողական գործունեութիւնը՝ յանցանքին պատճառ ցոյց տալով Բագրատունի թագաւորը: Վերջաւորութեան կը բերէ անոր վարքը չափա-

զանցեալ ջատագովականով մը, որ կ'սկսի «Նա՛ խաղաղութեան եւ շինութեան առիթ, նա՛ աւազակաց խանձող եւ հերքիչ (հալածիչ): Նա՛ իբրաւանց եւ դատաստանաց արդարակորով կշռիչ» խօսքերով եւ կը շարունակուի լման էջ մը նոյն եղանակով ու կը վերջանայ սա վերագրումներով. «Անոր զօրութեան վախը կը տարածուէր ամբողջ հայաստանցիներու վրայ եւ պղինձէ պարիսպի պէս անմերձենալի կը պահէր թշնամիներու երկիւղէն եւ անոր դադտնի արձակուած նետերէն. նա իր գրացիներուն եւ իրեն հնազանդողներուն ամուր հովանաւոր մըն էր»... ու տակաւին պիտի շարունակուէին գովեստները, եթէ պատմութեան գրքի այս կէտին թուղթ մը ինչալով անհետ կորսուած չըլլար...:

Գագիկի յաջողութիւններէն մէկն ալ եղաւ Վասպուրական բերել տալ օրուան Հայոց կաթողիկոսը՝ Յովհաննէս Պատմաբանը, զոր չէր համարձակած իր երբեմնի բարեկամ Նուսուֆին ձեռքէն ազատել: Այժմ, տեսնելով անոր աստանդական թափառումները եւ անապահով վիճակը, սիրով իր մօտ հրաւիրեց զայն 927ին, եւ գէթ անոր վերջին տարիները խաղաղութեամբ եւ փառքով անցան իր հոգածութեան ներքեւ: Ինք Գագիկ ալ շուրջ 30 տարիներ Վասպուրականը կառավարելէ յետոյ մեռաւ 943 թուականին՝ իր ետին ծաղկեալ թագաւորութիւն մը ձգելով:

3. ԱՂԹԱՄԱՐԻ Ս. ԽԱՁ ԵԿԵՂԵՑԻՆ

Աղթամար Վանայ լճի մէջ ներկայիս գոյութիւն ունեցող չորս կղզիներէն մէկն է: Կը գտնուի լճի հարաւը՝ դէպի արեւելք, եզերքէն 3,5 քիլոմետր ներս: Իրմէ ոչ շատ հեռու դէպի արեւմուտք կայ Ատուէր կղզին: Մնացեալ երկուքը կը գտնուին լճի հիւսիս-արեւելքը, Լիմ եւ Կտուց, որոնք եղած են անապատային կամ խիստ կրօնաւորական կեանքի կեդրոններ միջին դարերուն: Իսկ լճի արեւմտեան եզերքներուն մօտ երեք կղզիներ եւս գոյութիւն ունեցած են, որոնք սակայն այսօր ջուրի տակ մնացած են, լճի ջուրերու բարձրացման հետեւանքով:

Աղթամար կղզիի տարածութիւնն է շուրջ 700 քառ. մետր: Զորբորդ դարուն եղած է արդէն ամրոցներէն մէկը Ռշտունեաց նախարարութեան, որուն կալուածները տարածուած էին Վանայ ծովի հարա-

ւային եզերքներուն: Կղզին սակայն իր համբաւը եւ ծաղկումը կը պարտի Արծրունեաց նախարարութեան Գագիկ իշխանապետին, որ 10-րդ դարի սկիզբները մեծամեծ եւ փառաւոր շինարարութիւններ կատարեց այնտեղ եւ վերածեց զայն իր իսկ կողմէ սկզբնաւորուած Արծրունեաց Թագաւորութեան քաղաքական ու կրօնական կեդրոնի: Նախ պարիսպով շրջանակեց զայն, որոնց կից կառուցուեցան մեծամեծ շտեմարաններ եւ զինանոցներ, մթերանոցներ ու այլ տնտեսական ու գործնական նպատակներու յատուկ շէնքեր: Այժմ պարիսպներ եւ յարակիցները մնացած են ջուրի տակ:

Կղզիի արեւմտեան բարձրադիր մասին վրայ կառուցուած էին արքունական եւ իշխանական պալատները՝ զբօսատեղիներով եւ պարտէզներով, որոնք եւս պարսպապատուած էին՝ ձեւացնելով կղզիին միջնաբերդը: Հազիւ հետքեր մնացած են աշխարհիկ այս շինութիւններէն:

Կղզիին աշխարհահռչակ դարձնողը անոր վրայ կառուցուած անկրկնելի Ս. Խաչ տաճարն է, որուն շինութիւնը սկսուած է 915ին եւ աւարտած 921ին, եւ զոր այնքան մեծ հիացումով կը նկարագրէ ժամանակակից պատմիչը՝ Թովմա Արծրունի: Այս բոլոր հայակերտ կառուցումները (պալատները եւ եկեղեցին) իրագործուած են հանճարեղ ՄԱՆՈՒԷԼ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ ձեռամբ, որ նոյնքան ճարտար ԲԱՆԴԱԿԱԳՈՐԾ ու ՆԿԱՐԻՉ եղած է:

Ս. Խաչ եկեղեցին Հայկական ճարտարապետութեան գոհարներէն մէկն է: Երկայնութիւնը՝ 17 մեթր, լայնքը՝ 14 մեթր, խաչաձեւ եկեղեցի մըն է իր յատկազոծային կառուցութեամբ կը մօտենայ Ս. Հռիփսիմէի տաճարին: Գմբէթի թմբուկը 16 անկիւնի է, որով հեռուէն կլորածեւ կ'երեւի: Ունի երկու մուտք՝ արեւմուտքէն եւ հարաւէն: Այս վերջին մուտքին վերեւ ներսէն շինուած էր արքայական օթեակը, ուր պաշտամունքի կը հետեւէին արքայական ընտանիքի անդամները: Դուրսէն յատուկ սանդուխք մը կ'առաջնորդէր այդ օթեակին, որ ներսէն պաշտպանուած էր քարէ զեղեցիկ բազրիկներով:

Այս տաճարին ամենէն յատկանշական կողմը այն է, որ դուրսէն պատերը ծածկուած են հոյակապ քանդակներով, իսկ ներսէն՝ նոյնքան տպաւորիչ Գկարներով: Դուրսէն նախ պատուհաններուն վերեւը յօնքերու դեր կատարող զեղեցիկ քանդակազարդ կամարներ կան:

Իսկ երեք հորիզոնական քանդակեալ գօտիներ կը շրջապատեն եկեղեցին ամէն կողմէն: Ամենէն վարինը կլոր օղակներէ բաղկացեալ միօրինակ շղթայ մըն է, որուն իւրաքանչիւր օղակին ներսը ոճաւորեալ տերեւներու մէջ ողկոյզներ դրուած են: Երկրորդ եւ ամենէն ճոխ գօտին կը գտնուի պատուհաններու կամարներուն վերեւ: Ասիկա որթատունկի միակտուր գօտի մըն է, որուն ճիւղերու օղակներուն մէջ պատկերացուած է առօրեայ կեանքի տեսարաններ, այգիի մշակում, բերքահաւաք, դինիի պատրաստութիւն, պայքար վայրի կենդանիներու դէմ, խնճոյքի տեսարան եւլն.: Արեւելեան ճակատի գօտիի կեդրոնը ծալապատիկ նստած է ինքը՝ Գագիկ Թագաւոր, որուն երկու կողմերը կանգնած են երիտասարդ իշխաններ: Երրորդ գօտին կը գտնուի շէնքի քիւերուն ներքեւ, ուր կան տոհմանշաններ, զինանշաններ եւ մանաւանդ կենդանիներու վազքի տեսարաններ: Նման քանդակներ կան նաեւ գմբէթի քիւերի ներքեւ, ուր կը նշմարուին սարսափահար եղնիկներ եւ եղջիւրներ եւ զանոնք հետապնդող կատաղի առիւծներ եւ յովազներ: Գմբէթի թմբուկին ներքեւ ալ գօտի մը կայ, որ կը բաղկանայ միօրինակ եւ նուրբ կամարիկներէ, նոյնքան մանր եւ սիրուն սիւններու վրայ կեցած: Ուրեմն, եթէ գմբէթի գօտիներն ալ հաշուենք, անոնց դումարը կը բարձրանայ հինգի:

Խաչաձեւ եկեղեցիի իւրաքանչիւր թեւի եռանկիւնաձեւ վերջացող ճակատին մէջտեղը չորս Աւետարանիչներ քանդակուած են իրենց ամբողջ Հասակով:

Սակայն ծանօթ է, թէ տաճարին ամենէն աչքառու քանդակները առաջին երկու գօտիներու միջեւ զետեղուած հոյակապ ու հսկայ պատկերացումներն են: Տաճարի հարաւ, Հիւսիս եւ արեւելեան պատերուն վրայ ներկայացուած են առհասարակ Հին Կտակարանէն դէմքեր ու դէպքեր (Ադամ եւ Եւա, Դաւիթ եւ Գողթաթ, Յովնան եւ կէտ ձուկը, Դանիէլ Մարգարէ եւ երեք մանկունք եւլն.):

Նոր Կտակարանէն կայ միայն Փրկիչը եւ Ս. Կոյսը, երկուքն ալ աթոռներուն վրայ բազմած: Մարգարէներու դիմանկարները առհասարակ մետալներու ձեւով կլոր շրջանակներու մէջ դրուած են: Արտաքոյ Աստուածաշունչին կան նաեւ Ս. Գրիգոր Լուսաւորչի եւ այլ Հայրերու եւ եպիսկոպոսներու դիմաքանդակներ, ինչպէս նաեւ վիշապառապան սուրբ զօրավարները, Արծրունեաց նախարարներ,

որոնց մէջ աչքի կը զարնեն յատկապէս Սահակ եւ Համազասպ նահատակեալ Արծրունի իշխանները: Արեւմտեան պատին վրայ կայ մեծադիր քանդակը Գագիկ Թագաւորին, որ ձեռքին մէջ բռնած եկեղեցիի մանրանկարը՝ կ'ընծայէ զայն Քրիստոսի, որ կեցած է անոր դիմացը իր ամբողջ Հասակով, մէկ ձեռքը՝ օրհնութիւն տալու դիրքով, իսկ միւս ձեռքով կրծքին սեղմած է Աւետարանը, որուն վրայ գրուած է. «ԵՍ ԵՄ ԼՈՅՍ ԱՇԽԱՐՀՔԻ»: Նուիրաբերումի այս քանդակին երկու կողմերը ինքնամոտի կանգնած են Գաբրիէլ եւ Միքայէլ հրեշտակապետները:

Այս մեծագիր պատկերներուն վերեւ եւ երկրորդ գոտիին ներքեւը կան շեշտակի դուրս ցցուած մեծամեծ գլուխները զանազան վայրի կենդանիներու՝ առիւծ, արջ, յովազ, քարայծ, եղջերու եւ այլ կենդանիներ ու թռչուններ:

Ինչպէս ակնարկեցինք, տաճարը նշանաւոր է նաեւ որմանկարներով: Հայաստանի մէջ շատ զարգացած չեղեւ իր մոզայիքի արուեստը, այլապէս կ'ենթադրենք, որ տաճարի ներքին զեղեցկացումը պիտի իրագործուէր մոզայիքով, որ աւելի մնայուն եւ տեւական արուեստ մըն է: Մանուէլ ճարտարապետ ուրեմն իր գլուխ գործոցը օժտած է իր երրորդ արուեստով՝ նկարչութեամբ, որուն մէջ եւս այնքան մեծ վարպետ եղած է, որքան ճարտարապետութեան ու քանդակագործութեան մէջ: Այստեղ առհասարակ բոլոր նիւթերը վերցուցած են Նոր Կտակարանէն, միայն գմբէթի ներքին մասերուն մէջ մնացած են Հետքերը ստեղծագործութեան եւ Ադամ-Եւայի պատմութիւններու: Ներսէն ալ բոլոր պատերը զարդարուած են երեք կարգ պատկերներու գոտիներով, որոնք առ հասարակ կը ներկայացնեն Քրիստոսի կեանքը, մանկութենէն մինչեւ Յարութիւն, Համբարձում եւ Վերջին դատաստանը: Սակայն «Ժամանակը եւ մարդը նպաստաւոր վերաբերում» ցոյց տուած չեն այս եկեղեցիի Հանդէպ ընդհանրապէս եւ այս նկարներուն նկատմամբ՝ մասնաւորաբար: Մեծ մասով եղծուած են անոնք այսօր: Եկեղեցիի վերնամասի նկարները անհետացած են այսօր գրեթէ ամբողջութեամբ: Շատ քիչ բան մնացած է պատերուն վարի մասին վրայ գտնուած նկարներէն: Միջին մասին վրայ մնացածներն են, որ գաղափար կուտան այս նկարներու Հոյակապ զեղեցկութեան մասին, որով ամբողջ եկեղեցիին կենդանացած եւ

խոսուն դարձած է ժամանակին:

Սիրարփի Տէր-Ներսէսեան, բիւզանդական ու հայկական արուեստի մեծ քննախօսը, Հետեւեալ բառերով կ'արտայայտուի այս նկարներու մասին.

«Որմանակարները Հայաստանի մէջ աւելի սահմանափակ տարածում ունեցան, քան թէ իր դրացի երկիրներու մէջ... Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին միակն է, որ լայն չափով պահպանած է որմանակարները, որոնք ատենօք կը գեղեցկացնէին պատերը: Ըլլայ ասոր, ըլլայ նաեւ եկեղեցիի արտաքին պատերը գեղազարդող քանդակներուն պատճառով, Աղթամարի եկեղեցին նկատուած է Հայկական արուեստի ամենէն արժէքաւոր յուշարձաններէն մին: Ասկէ զատ այն նպաստը, որ կը բերէ միջին դարու եկեղեցական զարդերու արուեստին ուսումնասիրութեան մէջ, իր նշանակութիւնը Հայաստանի նեղ սահմաններէն ալ աւելի անդին կ'անցնի»*:

Աւելի քան հազար յիսնամեայ տաճարը մեզի Հասեր էր առանց էական փոփոխութեան. ժամանակի ընթացքին կարգ մը աննշան յաւելումներ եւ նորոգութիւններ կրած է: Ըստ այնմ՝ 13րդ դարուն վերջերը Հիւսիս-արեւելեան կողմէն ատճարին կցուած է փոքր մատուռ մը: 14-րդ դարուն շինուած են Հիւսիսային կողմի աւանդատուները, որոնցմէ կը մտցուի վերոյիշեալ մատուռը: Նոյն դարուն վերստին կառուցուած է գմբէթին վեղարը (բրգածեւ) կոնաճեւ ծածքով: 1763ին արեւմտեան կողմը աւելցուած է մեծ գաւիթ մը, որ ցած շինուած է՝ չխափանելու Համար Քրիստոսի եւ Գագիկ Թագաւորի պատկերաքանդակները: Իսկ 18-րդ դարուն վերջուած են արքայական օթեակ տանող արտաքին սանդուխները եւ Հարաւային մուտքին վերեւ շինուած է զանգակատուն մը:

Աղթամարի եկեղեցին թէեւ կապ ու նմանութիւններ ունի իրմէ առաջ մեր մէջ գոյութիւն ունեցող ներքնապէս խաչաձեւ եկեղեցիներու Հետ, ամէն պարագային պէտք է նշել, որ եթէ մէկ կողմէն այս

* Աղթամար. Հայ ճարտարապետութեան «Տեղեւանները. Խաչերէն եւ անդլերէն, թիւ 8. 1974. էջ 111 երկրորդ սիւնակ Այս գործէն մեծապէս օգտուած ենք գրութեանս պատրաստութեան ընթացքին: Շ. Գ.:

կապը անժխտելի է, որ միևս կողմէ սակայն նոյնքան անուրանալի է Աղթամարի եկեղեցիին ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆԸ (այսինքն՝ իւրայատուկ բացառիկ նկարագիրը), որով ան կը դասուի վերոյիշեալ եկեղեցիներու կարգին՝ իր յատակագիծի ճարտարապետական եՁԱԿԱՆՈՒԹԵԱՄԲԸ, որ իրեն կու տայ «ՄԻԱԿ» ըլլալու յատկանիշը ոչ միայն հայկական, այլ նաև Միջագայիմ արուեստին մէջ (գլխազրումները մերին - Շ. Գ.): Նորութիւնը կը կայանայ ճարտարապետին իմաստութեան մէջ, որով ան կը յաջողի ԵՐԳԵԼ ՏԱԼ ՔԱՐԻՆ՝ տալով անոր արտայայտչական ամբողջ կարողութիւնը: Իրապէս ալ, արտաքին ամբողջ զարդարանքը կը դադրի գեղագիտական պարզ տարր մը ըլլալէ, դառնալու համար դերակատարը ճարտարապետական աւելի ընդարձակ ծրագրի մը, ուր քանդակագործութիւնն ու ճարտարապետութիւնը ներդաշնականորէն կը ձուլուին:

Մարդ իր խուսափուկ գոյութեան իբրև մնայուն վկայութիւն կեանք կուտայ քարին՝ ցցուն դարձնելով անոր վրայ աւելի կամ նուազ յստակութեամբ անգիտակից իմաստ մը, իր միտքերը, իր կեցուածքը, կամ հոգիին ամենէն վեհ ներշնչումները՝ գարձնելով զանոնք անբաժան մասը Յայտնութեան, կապը՝ իր եւ Աստուծոյ միջեւ:

Քարը լայնորէն գործածուած է իբրև շինութեան տարր միջնադարերուն մէջ ի Հայաստան՝ ճարտարապետական լեզուն վերածելու համար աղօթքի, որ կը գործածուի մարդու կողմէ փառաւորելու իր յաւիտենականութիւնը եւ միացնելու համար երկինքն ու երկիրը» (Ա.Ա.Գ., էջ 109 վերջին երկու սիւնակներ եւ 110 առաջին երկու սիւնակներ):

Որքան սերտորէն կը պատշաճի Հնդկի մեծ բանաստեղծ Ռապինդրանաթ Թակորի մէկ քերթուածը՝ ուղղեալ քանդակուած քարին, եթէ ուղղուի այդ՝ այս անգամ Աղթամարի քարակերտ յաւերժահարսին:

«Ով գեղեցկութիւն, որ քանդակուած ես քարին վրայ...

Դուն կը մնաս լուռ ու անշարժ.

Միս-մինակ եւ ինքզինքիդ մէջ խորասուզեալ:

Խօսէ, խօսէ ինձի, իմ սէրս, խօսէ ինձի իմ հարսնուկս.

Սակայն քու բառերդ կղպուած են քարին մէջ.

Ո՛վ անշարժ գեղեցկութիւն... »:

4. ԱՂԹԱՄԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ

Գագիկ Արծրունիի օրով առնուեցաւ բարեմիտ նախաքայլը, որ ի վերջոյ Հանգեցաւ Աղթամարի անջատեալ Կաթողիկոսութեան:

Մինչեւ 9-րդ դարու վերջերը Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան կեդրոնը Դուին քաղաքն էր, ուր փոխադրուած էր աթոռը 485ին, երբ Վահան Մամիկոնեան իբրև մարզպան Հայաստանի Դուինը ընտրած էր իրեն իբրև մայրաքաղաք: Մայր աթոռը այստեղ մնացած էր մինչեւ 893 թուականը, երբ ուժգին երկրաշարժ մը քարուքանդ ըրաւ քաղաքը, ներառեալ Դուինի Մայր տաճարը եւ կաթողիկոսարանը: Օրուան Հայրապետը՝ Գէորգ Գառնեցի, հազիւ ազատուած, եկաւ բնակելու էջմիածնի դրացի Զուարթնոց եկեղեցիի շրջանակի մէջ: Այնտեղէն ալ ինք եւ յաջորդ երկու կաթողիկոսներ թափառական պտտեցան, մինչեւ որ Յովհաննէս Գատմաբան Կաթողիկոսը, Գագիկի հրաւերով փոխադրուեցաւ Վասպուրական 927ին եւ այնտեղ ալ կնքեց իր կեանքը: Յաջորդ երեք Ամենայն Հայոց կաթողիկոսներն ալ ընտրուեցան եւ նստան Աղթամարի մէջ, մինչեւ որ Անանիա Մոկացի Կաթողիկոսը շուրջ 950ական թուականներուն հեռացաւ անկէ եւ մտաւ Բագրատունեաց թագաւորութեան հովանիին ներքեւ: Ուրիշ Ամենայն կաթողիկոս մը՝ Վահան Սիւնի, որ ամբաստանուած ու գահընկէց յայտարարուած էր իբրև քաղկեդոնական, փախած ու ապաստանած էր Աղթամար 969ին, ուր շարունակած էր իր հակաթոռ կաթողիկոսութիւնը եւ այնտեղ ալ մեռած էր: Անկէ ասդին Աղթամարին մէջ նստած էին օրինաւոր եպիսկոպոսներ կամ արքեպիսկոպոսներ, միշտ Ամենայն Հայոց կաթողիկոսներու իշխանութեան ներքեւ:

1113ին, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուեցաւ Գրիգոր Գահլաւունի, հազիւ 20 տարեկանին, Աղթամարի Եպիսկոպոսը՝ Դաւիթ Թոռնիկեան, որ ազգակցական կապ ունէր Արծրունեաց իշխանական տոհմին հետ, «արհամարհէ գտղայութիւն Գրիգորիսի եւ ապստամբեալ նստի կաթողիկոս», իրեն համախոս գտնելով Հինգ եպիսկոպոսներ, անոնց ձեռքով կաթողիկոս ձեռնադրուեցաւ: Ապստամբութեան բուն դրդապատճառը, սակայն, ոչ միայն ենթակային ծածկեալ փառասիրութիւնն էր, այլ նաև՝ Ամենայն Հայոց Հայրապետութեան Հայաստանէն դուրս գտնուիլը՝ Տաւրոս լեռներու վրայ Օուղրի կամ Քետուհի Կարմիր վանքը: Հոգեւորականներու մեծ ժողով մը գումար-

րեցաւ Քեսուքի լեռնային վանքը, բոլոր եկեղեցական դասակարգերէ բաղկացեալ՝ կաթողիկոսը, եպիսկոպոսներ, վարդապետներ ու այլ բազմաթիւ վանականներ եւ կրօնաւորներ, որոնք միաձայնութեամբ «նզովելով Քրիստոսի եկեղեցիէն դուրս նետեցին ասպտամբեալը եւ Հետեւորդները՝ սաստիկ անէծքներ կարդալով անոնց գլուխը»։ Սակայն Քոստանիկեան չենթարկուեցաւ ժողովի որոշումին եւ շարունակեց իր կաթողիկոսութիւնը Վասպուրականի մէկ մասին վրայ։

«Ըստ այսմ՝ Աղթամարցի Դաւիթին ձեռնարկը... եկեղեցւոյ մէջ բաժանում մը ստեղծելու պատճառ եղաւ, որ բաւական դարեր շարունակեց իբրեւ դատապարտեալ Հերձուած։ Իրաւ ետքէն գործին օրինաւորութեան կերպարան մը տրուեցաւ, սակայն միշտ նորաստեղծ աթոռ մը աւելցուց, առանց մեծ օգտակարութիւն մը ունենալու եւ առանց նկատողութեան արժանի արդիւնք մը պտղաբերելու» (Ազգ. էջ 1354)։

Ինչպէս Կիրիկիոյ մէջ Պաշտօնականներու պարագային, այնպէս ալ Աղթամարի մէջ Աթոռը կը ժառանգէին նոյն ընտանիքէ ներկայացուցիչներ։ 1272ին կաթողիկոս եղաւ Աղթամարի եւ անոր Հարաւային ափերու տիրացած աւատական ընտանիքի մը՝ Սեֆեդիեաններու մէկ ներկայացուցիչը։ Աթոռ ասոնց ձեռքը մնաց մինչեւ 16րդ դարու վերջերը իբրեւ ժառանգական ստացուածք։ Աղթամարի կաթողիկոսութիւնը 19րդ դարու վերջերը ունէր երկու թեմ, որոնք կընդգրկէին Վանայ լճին Հարաւային ափերը, շուրջ 100 Հազար բնակչութեամբ, 302 եկեղեցիով եւ 58 վանքերով։ Այս մասնաւոր կաթողիկոսութիւնը տեւեց շուրջ 780 տարի, 50 կաթողիկոսներով, որոնցմէ գրեթէ ոչ ոք մեծագործ եղած է։ Աղթամարի կաթողիկոսութեան աթոռակալութեան շուրջը ստեղծուած ներքին պայքարները, էջմիածնի կաթողիկոսութեան Հետ ունեցած վէճերը եւ վերջապէս՝ կաշառակերութիւններ, եւ կաթողիկոսներու թոյլ եւ անգործ կեանքի Հետեւանքով այս աթոռը գրեթէ կորսնցուց իր Հեղինակութիւնը եւ կարեւորութիւնը, այնպէս որ 1895ին, երբ վախճանեցաւ օրուան կաթողիկոսը, անոր տեղ նոր մը չընտրուեցաւ, եւ այսպէս վերջ գտաւ Հայ եկեղեցիի ծոցին մէջ գոյացած այս Հերձուածը, եւ թեմը միացաւ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան։

ԳԼՈՒՆ Գ.

ԿԻԼԻԿԵԱՆ ՇՈՋԱՆ

ԳՐԻԳՈՐԻՍԵԱՆԸ

Ս. Պատարագի ընթացքին, յայտնի սուրբերու յիշատակութեան կարգին՝ «Առաջնորդացն մերոց» բաժնին վերջաւորութեան, կը յիշուի նաեւ «ԳՐԻԳՈՐԻՍԵԱՆԸ» խմբական անունը։ Մենք ասոնց մասին է, որ կ'ուզենք խօսիլ։

Մեր եկեղեցական պատմութեան մէջ, բացի տօնելի կամ ոչ տօնելի շատ մը Գրիգոր եպիսկոպոսներէ եւ վարդապետներէ, ունինք 12 կաթողիկոսներ, որոնք այդ անունը կը կրեն։ Ասոնցմէ վերջին երկուքը, Վաղարշապատեցի եւ Բիզանդացի կոչեցեալ ԺԲ եւ ԺԱ Գրիգորները այնքան անշշան անձեր են, որոնք ոչ մէկ արժանիք կը ներկայացնեն Ս. Պատարագի մէջ յիշատակուելու։ Ասոնց կանխող երկուքը՝ Ջալալբէկեանց եւ Մուսաբէկեանց Ժ եւ Թ Գրիգորները, թէեւ ծանօթ անուններ են, բայց իրենց ինչինչ կասկածելի գործունէութեանց պատճառով չէին կրնար արժանանալ Ս. Պատարագի մէջ յիշատակուելու։ Իսկ այս երկուքին նախընթաց Ը Գրիգորը, Խաճճողատ կոչեցեալ, կատարելապէս անարժան անձ մըն է, որ բռնութեամբ կը տիրանայ Աթոռին եւ բռնութեամբ ալ գահընկէց կ'ըլլայ, եւ Հետեւաբար անկարելի էր, որ վերոյիշեալ խումբին մէջ դասուէր։ Իսկ առաջին Գրիգորը նոյնինքն Ս. Լուսաւորիչն է, որ արդէն յանուանէ կը յիշուի «Առաջնորդացն մերոց»ին մէջ։ Ուստի կը մնան Բ-Ձ Գրիգորները, զորս պէտք է դասենք «Գրիգորիսեանց» խումբին մէջ, որովհետեւ Հինգն ալ արդարեւ արժանաւոր անձեր են, Հետեւաբար մենք Համառօտիլ պիտի ներկայացնենք զանոնք։ Նկատելի պարագայ մըն է, որ այս Հինգ Գրիգորները իրարու ազգականներ են եւ կը պատկանին «ԳԱՀԼԱՒՈՒՆԻ» կոչուած իշխանական գերդաստանին, ուստի նախ ներկայացնենք իշխանական այս տունը։

«ԳԱՀԼԱՒՈՒՆԻՔ» այս անուան տակ մեր պատմութեան մէջ

կ'երեւին ժ դարու կէսէն յետոյ եւ կը նկատուին շարունակութիւնը հին ԿԱՄՍԱՐԱԿԱՆ կամ ԱՐՇԱԿՈՒՆԻ կոչուած կարեւոր նախարարութեան, որ Զրդ դարուն սկիզբները նուազած եւ նսեմացած՝ իրենց կալուածները Բագրատունիներուն վաճառելէն յետոյ, պահ մը կ'անյայտանան պատմութեան մէջ, ապա կը վերերեւին աւելի քան 100 տարի յետոյ «Պահլաւունի» անուան տակ:

Արդարեւ Հայ Կամսարականները կը պատկանէին Պարթեւ-Պահլաւունի ցեղին, ինչպէս էր պարագան Ս. Գր. Լուսաւորչի ընտանիքին: Այս երկու ընտանիքները դարեր յետոյ իրարու անուղղակի խնամիացան, երբ Վարդանանց շրջանի Արշաւիր Կամսարականը ամուսնացաւ Վարդանի կրտսեր դստեր՝ Վարդանոյշին հետ, որ Ս. Սահակ Պարթեւի միակ աղջկան՝ Մամիկոնեանց հարս գացած Սահականոյշի թոռն էր: Ասկէ կը ծագի Պահլաւունեաց այն ազնիւ յաւակնոտութիւնը, թէ Ս. Լուսաւորչի սերունդէն յառաջ եկած են: Այս իսկ պատճառով շուրջ 10 Գրիգորներ կան իրենց գրեթէ երեքդարեան պատմութեան մէջ:

Ասոնց նշանաւոր նախահայրն է Գրիգոր Համզէն, որ «Աստուածապաշտ. առաքինի, ողորմած, եկեղեցաշէն եւ վանաշէն անձ մը» կը ներկայացուի, որ ունեցած է 4 մանչ եւ մէկ աղջիկ զաւակներ, որոնցմէ նշանաւոր հանդիսացաւ Վասակ Իշխանը, որ 1020ական թուականներուն արշաւող Սելճուքներուն արշաւանքը պահ մը կասեցնելէ ու մեծ յաղթանակ մը տանելէ յետոյ, երբ հանդիստ առնելու համար կը ննջէր, այլազգիի մը կողմէ բարձրէն նետուած խոշոր քարի մը գլորմամբ նահատակեցաւ: Իսկ երկրորդ որդին, Վահրամ, իբրեւ սպարապետ Հայոց, արիարար պաշտպանեց Անին Յոյներու դէմ, սակայն երբ օրուան թագաւորը եւ կաթողիկոսը հաւանեցան Անին Յոյներուն յանձնել, ինքն ալ ձեռնաթափ եղաւ դիմադրութենէ: Յոյներ, յարգելով իր քաջութիւնը, զինքը պահեցին իբրեւ սպարապետ Հայագունդին եւ միասին արշաւեցին Դուբինի Իսլամ ամիրային դէմ, պատերազմի մէջ սպաննուեցաւ ինք եւ իր որդին՝ Գրիգոր, 1045ին:

Պահլաւունի իշխանաց մէջ սակայն ամենէն նշանաւորն է երրորդ կամ չորրորդ Գրիգոր իշխանը, որ ծանօթ է ՄԱԳԻՍՏՐՈՍ մականունով, որ որդին էր վերեւ յիշուած քաջարի եւ քարամբ նահատակեալ Վասակ Պահլաւունի իշխանին: Սա բարձրագոյն յունական եւ հայկա-

կան կրթութիւն ստացած իշխան մըն էր, որ հաւասար ճարտարութեամբ կը գործածէր սուրը եւ գրիչը: Բիւզանդիոնի կայսրերու կողմէ կուտակալ նշանակուած էր Հարաւային Հայաստանի իրապետականի, Տարօնի, Մանազկերտի եւ Հայոց Միջագետքի: Ոչ միայն ներհուն փրկիստփայ եւ աստուածաբան, այլ նաեւ լեզուագէտ մըն էր, հմուտ ըլլալով յունարէնի եւ արաբերէնի, թերեւս պարսկերէնի, թրքերէնի եւ ասորերէնի: Գրած է բազմաթիւ նամակներ՝ խրատականներով լեցուն, առղեր, քերականական մեկնութիւններ, կատարած է Պղատոնի գործերէն թարգմանութիւններ, նաեւ Եւկլիդէսի երկրաչափական երկերէն: Վախճանեցաւ 1059ին եւ թաղուեցաւ Հասանքայէի Ս. Աստուածածին վանքը, ուր կը ցուցուէր տակաւին իր գերեզմանը 60-70 տարիներ առաջ: Ունեցած է չորս մանչեր եւ չորս աղջիկներ: Մանչեր այս կամ այն պատճառով սերունդ չեն ձգած: Պահլաւունեաց տունը շարունակուած է իր աղջիկներու դիժով, զորս պիտի յիշենք իրենց կարգին:

1. ԳՐԻԳՈՐ Բ ՎԿԱՅԱՍԵՐ 1025-1105

Մեր ներկայացնելիք «Գրիգորեաններէն» առաջինը Գրիգոր Մագիստրոսի 4 մանչերէն երկրորդն է, որ մկրտուած էր Անիի մեծ պաշտպան իր քաջարի մեծ հօրեղբոր ՎԱՀՐԱՄԻ անունով, սակայն երբ եկեղեցական ասպարէզ մտաւ՝ առաւ Գրիգոր անունը եւ մարտիրոսներու կամ վկաներու հանդէպ ցոյց տուած յատուկ հետաքրքրութեան եւ սիրոյն համար կոչուեցաւ «Վկայաւեր»:

Իր կրթութիւնը եւ դաստիարակութիւնը ստացաւ իր իմաստասէր եւ գիտնական հօր խնամքին եւ հակողութեան ներքեւ, իր կարգին դառնալով կատարեալ գիտնական ու մեծ մտաւորական անձնաւորութիւն մը: Ժամանակակից պատմիչը զայն կը ներկայացնէ իբրեւ «քաջակիրթ մարդ մը, որ ամէն տեսակ հմտութեանց տիրացած էր, Հին եւ Նոր Կտակարաններու խորապէս հմուտ, որ Սուրբ Սոփիայի մէջ իմաստասէրներու հետ ամպիտն կը նստէր եւ Յոյն վարդապետներու հետ կը խօսէր եւ Հայոց տեսակէտները պաշտպանելու մէջ վարդապետի մը հանգամանքը ունէր» (Մատթէոս Ուռհայեցի, նաեւ՝ Ազգ. հտծ. 877):

իր հայրը, որ Տարօնի եւ Հայոց Միջազեւեքի կուսակալն էր, երբ վախճանեցաւ 1059ին, անոր տեղը Վահրամ անցաւ: Ամուսնացած էր եւ սրբութեամբ կ'ապրէր: Ձաւակ ունեցած ըլլալու յիշատակութիւն չկայ, ինք ալ հետեւելով Ա.Գր. Լուսաւորչի օրինակին, սիրով եւ համերաշխութեամբ բաժնուեցաւ իր կնոջմէն, եկեղեցական կեանք ընդգրկեց, կրօնաւորական կարգ մտաւ եւ հոգեւոր կեանքի ու կատարելութեան հետամուտ եղաւ: Այս առթիւ է, որ իր անունը Գրիգորի փոխել տուաւ: Երբ օրուան կաթողիկոսը վախճանեցաւ, իրեն առաջարկ եղաւ կաթողիկոսանալ: Երբեք յօժարութիւն ցոյց չտուաւ: Սակայն երբ բացատրուեցան օրուան կացութեան դժուարութիւնները, որոնք կուգային Յոյներէն, եւ որոնց վստահութիւնը կը վայելէին իր հայրը եւ ինք, ստիպուեցաւ յանձն առնել կաթողիկոսական Աթոռը թափուր չձգելու, ինչ որ Յունաց նպատակն էր: Օծուժը կատարուեցաւ Մամնդաւ բերդաւանի մէջ, որ կը գտնուէր այսօրուան Կեսարիոյ եւ Մալաթիոյ ճամբուն վրայ եւ Յունաց կողմէ տրուած էր Գագիկ Աբասեանին՝ Կարսի վերջին Հայ թագաւորին, որ յաջողուցած էր Գրիգորին կաթողիկոսութիւնը Բիւզանդիոնի օրուան կայսրէն: Այս բերդաւանն ալ եղաւ Գրիգոր Բ.ի աթոռանիստը: Սակայն տարի մը յետոյ իր սրտին մէջ փափաք արթնցաւ կրկին կրօնաւորական կեանքին վերադառնալ եւ ճանապարհորդել Բիւզանդիոն եւ Եգիպտոսի վանքերը եւ ճգնարանները, ուստի իր տեղ իր մտերիմներէն Գէորգ Լոռեցի Վարդապետը աթոռակից Կաթողիկոս օժեց եւ ճամբայ ելաւ 1067ին: Բիւզանդիոն երթալուն նպատակն էր հաւաքել եւ հայերէնի վերածել մարտիրոսներու վկայաբանութիւնները: Ինք քաջ տեղեակ էր յունական լեզուին եւ դպրութեան: Բիւզանդիոնի մէջ կայսեր եւ Պատրիարքի կողմէ մեծ պատուով ընդունուեցաւ, որոնք դիւրացուցին անոր գործը: Գրիգոր, անհրաժեշտ գրուածքները հաւաքելով, իր ճամբան շարունակեց դէպի Եգիպտոս: Սուլթանէն լաւ ընդունելութիւն գտաւ, որ կը քաջալերէր Հայերուն Եգիպտոս գաղթը՝ իբրեւ շինարար եւ պատերազմիկ տարր. այդ օրերուն անոնց թիւը 30000ի մօտեցած ըլլալը կը յիշուի: Այնտեղ եկեղեցի շինեց եւ իր քեռորդի Գրիգորիոսը անոնց եպիսկոպոս ձեռնադրեց: Հաւանաբար նաեւ հանդիպած ըլլայ Երուսաղէմ: Այս ճամբորդութիւնը տեւեց շուրջ 5 տարի եւ 1072ին կրկին Մամնդաւ վերադարձաւ եւ սկսաւ իր թարգմանչական գործին՝

կաթողիկոսական գործերն ալ վարելով հանդերձ օգնականներով: Ապա շրջապտոյտի կ'ելլէ Արեւելեան Հայաստան. Անիի եպիսկոպոս կը կարգէ իր քեռորդիներէն Բարսեղը: Ապա կ'անցնի Տաւրոս կը կարգէ իր քեռորդիներէն Բարսեղը: Ապա կ'անցնի Տաւրոս լեռները, ուր Հայ վանքեր բազմացած էին. աւելի բարեկարգեց զանոնք եւ իր կեդրոնը այնտեղ հաստատեց: Երբ զգաց, որ վախճանը մօտեցած է, իր մօտ կանչեց իր քեռորդի Բարսեղը, զոր Անիի եպիսկոպոս ձեռնադրած էր, եւ որ ետքէն ինքզինքը Արեւելեան Հայոց կաթողիկոս ձեռնադրել տուած էր: Ինք ալ հաստատեց Բարսեղի Կաթողիկոսութիւնը եւ միաժամանակ անոր խնամքին եւ հոգածութեան յանձնեց պատանի Գրիգորը, իր կրտսեր քրոջ թոռը, իբրեւ Բարսեղի յաջորդելիք կաթողիկոսացու, անոր Ներսէս եղբօր հետ: Վախճանեցաւ 1105ին ու թաղուեցաւ Քեսունի (ոչ շատ հեռի այսօրուան Մարաշէն) Կարմիր վանքը, ուր հաստատուած էր արդէն վախճանելէ առաջ:

Վկայասէրի մասին ժամանակակից պատմիչներ մեծ գովեստով կ'արտայայտուին իբրեւ «Սիւն հաւատոյ Հայաստանեայց եւ պարսպ սրբոյ եկեղեցւոյ Տանն արեւելից»: Արգարեւ գերազանց արժանիքի տէր անձնաւորութիւն մըն է: Իր անձնական կեանքը «Պայծառ առաքիլութեամբ» զարդարուած է: Կայսերական կուսակալ եւ դուքս մը ըլլալով հանդերձ, գիտցաւ հրաժարիլ այդ բոլորէն եւ մինչեւ իսկ ընտանեկան կեանքէ՝ կրօնաւորական եւ հոգեւոր կեանք որդեգրելու՝ «պահօք, աղօթիւք եւ անդադար սաղմոսերգութեամբ»: Եղած է վարքով «հեղ եւ խոնարհ սրտիւ» իր Փրկչին պէս, «յոյժ աստուածասէր եւ պատուիրանապահ», «սրբութեան եւ կատարելութեան ճշմարիտ տիպար մը»:

Գրական մարզի մէջ ալ մեծ պատակ ունեցած է: Իրմով կը սկսի լեզուական զարգացման նոր շրջան մը, «պարզ եւ ընտանի Հայերէն ոճ մը», որուն նախահայրն է ինք՝ Վկայասէր: Գրական մարզի մէջ իր յաջորդները եւ հետեւորդները՝ Ենորհալիներու սերունդը, հասցուցին այդ ոճը եւ լեզուն իր կատարումին՝ ստեղծելով այսպէս մեր «ԱՐՄԱԹԻ ԴԱՐԸ»: Միայն թէ, ինչպէս որ Մեսրոպ մեր «ՈՍԿԵ-ԴԱՐԻ» հիմնադիրն ըլլալով հանդերձ՝ իր անունով յստակ ու բացորոշ գրական երկ մը չունի, նոյն է պարագան Վկայասէրի, որ հակառակ շատ գիրքեր եւ գործեր թարգմանած ըլլալուն՝ այսօր իր անունը կրող ու յաւերժացնող գիրք մը չունինք մէջտեղ:

Բարեկարգիչ հոգի մը եղաւ Վկայասէր: Կրօնաւորական ու վանական կեանքի կանոններ հաստատեց եւ եկեղեցական ընտիր սերունդի մը պատրաստութեան սկզբնապատճառ եղաւ:

Վերախմբագրած ու ճոխացուցած է Յայսմաւորքը բազմաթիւ սուրբերու վարքերու եւ ճառերու թարգմանութեամբ: Թարգմանած է Ա. Եփրեմի յօրինած Ուղմալուայի կարգը: Ձեռնարկած է Մաշոց գրքի նոր խմբագրութեան, սահմանած է 46 տօներու ընթերցուածները, բայց գործը չաւարտած կը վախճանի՝ շարունակելու հոգը ձգելով իր գործակից Կիրակոս Վրդի:

Անցած է տօնացոյցի Օգոստ. 8ին՝ ըստ ՓԵՇՏԻՄԱԼՃԵԱՆԻ եւ Յուլիս 31ին՝ ըստ ՄԱՐԶՈՒԱՆՑԻԻ: Առաջին Յայսմաւորքի մէջ իր մասին ըսուած է ի միջի այլոց.

«Հովուէր զժօտն իւր ուղղափառութեամբ. նորոգեց բոլոր խանգարուած կարգերը: Եւ որովհետեւ սիրող էր Աստուծոյ վկաներուն, կը մեծարէր զանոնք եւ անոնց յիշատակը կը կատարէր անխափան. անոնց տօներուն յաճուկ մարգարէական, առաքելական ու աւետարանական ընթերցուածները կը տնօրինէր» (ՓԵՇՏ. Բ. էջ 68):

Այգրճադքիւր. Մասթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն:

2. ԳՐԻԳՈՐ ՊԱՀԼԱԻՈՒՆԻ 1093-1166

Մագիստրոսի ազդիկներէն մէկը ամուսնացած էր Մովք դղեակի տէր իշխանի մը հետ, որուն անունը չէ յիշուած պատմութեան մէջ: Այս իշխանին չորս զաւակներէն ամենէն կրտսերը՝ Գրիգոր, Եգիպտոսի առաջնորդ ձեռնադրուած էր իր մօրեղբայր Գրիգոր Վկայասէրէն: Միջին երկուքը քաջ զօրավարներ եղան իրենց տոհմին: Իսկ երէց որդին՝ Ապիրատ անունով, յաջորդեց իր հօրը իբրեւ Մովքի իշխան: Այս Ապիրատ իշխանի անդրանիկն էր Գրիգոր, որու մասին պիտի խօսինք, երկրորդն է նոյնինքն Ներսէս, նշանաւոր Ծնորհալին: Իսկ վերջին երկուքն են Շահան եւ Վասիլ իշխանները, որոնց իւրաքանչիւրին զաւակներէն մէկական հոգի կաթողիկոս եղան Գրիգոր անուններով, որոնց եւս պիտի անդրադառնանք յառաջիկային:

Ապիրատ իշխանը նետահար սպաննուեցաւ պատերազմի մը մէջ,

երբ իր զաւակները դեռ մատաղ մանուկներ էին: Ասոնցմէ առաջին երկուքը (Գրիգորը եւ Ներսէսը) Վկայասէր կաթողիկոս իր հայրական հովանիին տակ առաւ եւ Քեսունի Կարմիր վանքի վանահայր Ստեփանոս Մանուկ կոչեցեալ ուսումնական մեծ արժանիքի տէր վարդապետին խնամքին ներքեւ դրաւ՝ դաստիարակութեան համար ապագայ խոստացող ուշիմ այս քեռորդիները: Իր մահուան անկողինին մէջ Վկայասէր զանոնք յանձնեց իր յաջորդին, Բարսեղ Բ Անեցի Կաթողիկոսին, որ նոյնպէս Պահլաւունեաց ցեղէն՝ իր ուրիշ մէկ քեռորդին էր:

Բարսեղ Կաթողիկոս անակնկալօրէն արկածի մը զոհ դնաց 1113ին: Բայց նախ քան մահանալը եպիսկոպոս ձեռնադրեց եւ ապա կաթողիկոս ընտրել տուաւ երիտասարդ Գրիգոր 20 տարեկանին, որ եղաւ մեր ամենէն երիտասարդ տարիքին ընտրուած եւ ամենէն երկայն պաշտօնավարող կաթողիկոսը՝ 53 տարի մնալով Աթոռի վրայ:

Գրիգոր կը ներկայացուի իբրեւ կենցաղով առաքիլի եւ մաքուր եկեղեցական մը, բարձր ուսում եւ զարգացում ստացած, իսկ հասակով եւ արտաքինով փայլուն ու ներկայանալի անձնաւորութիւն մը:

Իր օրով խաչակրութիւնը արդէն իսկ հաստատուած էր Արեւելքի մէջ: Հայեր գրկաբաց ընդունած էին զանոնք իբրեւ Քրիստոնեայ եղբայրներ: Անոնք Արեւելքի մէջ հաստատուելէն յետոյ սկսան աւելի մօտէն շփում ունենալ Արեւելքի քրիստոնեաներուն հետ եւ ուղեցին իրենց հովանաւորութեան եւ իշխանութեան ներքեւ առնել զանոնք: Արդէն Հայ իշխաններ մօտիկ յարաբերութիւն կը մշակէին անոնց հետ՝ երբեմն դաշնակցելով եւ երբեմն թշնամանալով եւ յաճախ խնամիտանալով անոնց: Կրօնական գետնի վրայ եւս աւելի սերտ յարաբերութիւն սկսան մշակել Գրիգոր Պահլաւունիի օրով, ինչ որ շարունակուեցաւ իր բոլոր յաջորդներու շրջանին, յանգելով վերջին Գրիգոր Պահլաւունի կաթողիկոսի օրով իր գագաթնակէտին:

1141ին Լատիններ, իրենց ներքին խնդիրները հարթելու համար, ժողով մը կը գումարեն Անտիոքի մէջ, որ իրենց իշխանութեան ներքեւ էր: Այս ժողովին կը հրաւիրեն նաեւ Հայոց Հայրապետը: Գրիգոր իր Ներսէս եղբօր հետ ներկայ կ'ըլլայ ժողովին եւ այսպէս Հայոց կաթողիկոս մը պատմութեան մէջ գրեթէ առաջին անգամ ըլլալով՝ անձամբ եւ պաշտօնապէս շփման մէջ կը մտնէ Հռովմէական

եկեղեցիի Հետ: Ժողովէն յետոյ, երբ նախագահող Կարտինալը ուզեց Երուսաղէմ այցելել, հրաւիրեց նաեւ Հայոց կաթողիկոսը միասին երթալ: Գրիգոր այս հրաւերն ալ ընդունեց: Ներսէս վերադարձաւ Մովք՝ Աթոռին գործերը վարելու, իսկ Գրիգոր Երուսաղէմ գնաց:

Ինչպէս Անտիոք նոյնպէս Երուսաղէմ Խաչակիրներու իշխանութեան ներքեւ կը գտնուէր, եւ երկու տեղեր ալ կաթողիկ պատրիարքութիւններ հաստատեց չին: 1142ին Զատիկը միասին տօնեցին Երուսաղէմի մէջ:

Այստեղ ալ լատինական ժողով մը գումարեցաւ ընդհանուր բարեկարգութեանց համար: Գրիգորի ալ ժողովականներու կարգին պատուոյ տեղ մը տրուեցաւ իբրեւ «Մեծ Հայրապետ Հայոց, գլուխ եւ պետ ամենայն եպիսկոպոսաց Կապադովկացոց եւ Մարաց եւ Պարսից եւ երկաքանչիւր Հայաստանի (այսինքն՝ Մեծ եւ Փոքր Հայոց) եւ գերագոյն բարունապետ, որ Կաթողիկոսն անուանի», ինչպէս ժամանակակից Լատին պատմիչ մը կը հաստատէ: Այս ժողովի ընթացքին Գրիգոր Հայոց դաւանութիւնը ներկայացուց «Պայծառ եւ կանոնական կարգաւ եւ կանոնով եւ վարդապետական ճոխութեամբ»: Լատիններու հաճելի թուած է այս ներկայացումը, որուն իբրեւ արդիւնք «առաւել սէր հաստատեցին ընդ Հայրապետին եւ ընդ ազգս մեր»: Կարտինալը Հռոմ վերադարձին նպաստաւոր տեղեկագիր տուած է Հայ եկեղեցիին եւ անոր գլուխի մասին: Օրուան Պապն ալ՝ Իննովկենտիոս Բ, սիրոյ եւ բարեկամութեան գիր գրած եւ եկեղեցական ընծաներ զրկած է Գրիգորին, զորս կը ստանայ Երուսաղէմէն Մովք վերադառնել յետոյ:

Մովքէն ոչ շատ Հեռի ՀՌՈՄԿԼԱԹ անունով աւելի ամուր բերդ մը կար, որ այս միջոցներուն կը գտնուէր ձօսլին անուն Լատին իշխանի մը ձեռքը, որ պատերազմի մը ընթացքին գերի կը բռնուի եւ կը մահանայ: Իր այրին, որ Կոստանդին Ռուբինեան Հայ իշխանի դուստրն էր, ինքզինք անապահով զգալով, կ'որոշէ վերադառնալ Եւրոպա, ուր կը գտնուէր իր իշխանագուն որդին, ուստի բերդը իբրեւ աւանդ կը յանձնէ Գրիգոր Կաթողիկոսին, խնդրելով, որ եթէ որգւայն Հետ վերադառնան, վերստին իրենց յանձնուի, այլապէս, կ'աւելցնէ Հայ իշխանուհին, «աւելի ազէկ է, որ ձեզի մնայ, քան օտարներուն»:

Գրիգոր երբ ծերութեան պատճառով այլեւս անկարողութեան կը

մատնուի, իր Ներսէս երբայրը, որ միշտ իր Հետ եղած էր ու իր մեծագոյն գործակիցն էր, կաթողիկոս կը ձեռնադրէ բազմաթիւ եպիսկոպոսներու մասնակցութեամբ եւ ի ներկայութեան մեծ թիւով վանական հոգեւորականներու 1166ին, եւ կը վախճանի երեք ամիսներ յետոյ եւ կը թաղուի Հռոմկլայի մէջ:

Օրմանեան Հետեւեալ գնահատականը ունի Գրիգոր Պահլաւունի Հայրապետի մասին.

«Գրիգոր Գ Պահլաւունի Կաթողիկոսը, Թէպէտ երիտասարդ տարիքի մէջ Աթոռ բարձրացաւ, սակայն չափահաս եւ փորձառու անձի արդիւնք ցուցուց իւր պաշտօնին սկիզբէն եւ ամենքէն գովեստով նշանակուած է իւր անունը: Եռուրի (վանքին) առաջնորդ Ստեփանոս Մանուկ [ուսումնական Հռչակ Հանած] վարդապետի աշակերտած ըլլալով՝ լաւ ուսումնական պաշար մը գանձած էր մատաղ տարիքէն, որով «սկսաւ Թարգմանութիւնս առնել աստուածային գրոց, եւ բազում գիրս ետ Թարգմանել ի Հայ լեզու զորս ինքեամբ, եւ զորս այլոց ձեռամբ»: Այդ Թարգմանութիւնները պէտք է իւր մօրեղբոր՝ Վկայասէր Կաթողիկոսի ձեռնարկին շարունակութիւնը եղած ըլլան, որ առիթ տուին ոմանց Պահլաւունի Գրիգորը «ՓՈՔՐ՝ ՎԿԱՅԱՍԷՐ» մակդիրով պատուել: Թէպէտ իւր անունով մնացած յայտնի գործեր չկան, սակայն այն քիչն ալ, ինչպէս Աւետման եւ Երկրորդ ծաղկազարդի շարականները, եւ քանի մը տաղերը որ իրեն անունով ծանօթ են, կարող գրչի եւ բեղմնաւոր միտքի արտադրութիւններ են: Գրիգոր աւելի պայծառ եղաւ իւր վարչական արդիւնաւորութեամբ, «որով յոյժ հրաշափառագոյն բանիւ եւ գործով քան զբազումս յաթոռակալացն գտաւ սա նախնեաց»: Եւ իւր առաւելութիւնները եղան. «մաքրութիւն հոգւոյ, իմաստ բանի ի շարադրութիւնս տառի, ի վերծանութիւնս ի գիտութիւնս եւ մանաւանդ ի խորհուրդ հանճարոյ», որով միշտ «յաւելոյր ի բարեգործութիւն եւ ի պայծառութիւն եկեղեցւոյ»: Այդ ձիրքերն են, որոնցմով Պահլաւունին եղաւ «պատուեալ փառաւորութեամբ ոչ միայն ի մերազնեայ արանց, այլ եւ յօտարասեռ թագաւորաց եւ յիշխանաց, մանաւանդ ի Հռոմայեցոց թագաւորացն եւ Պատրիարքացն», որոնք անձամբ ալ

տեսան «ընդ վայելչագրեաց եւ պատշաճագեղ տեսիլ մարմնոյն... եւ ծաննան զՀոգւոյն գեղեցկութիւն եւ ի բաննն հաւատոյ՝ զճշմարտութիւն» (Ազգ. հտժ. 953):

Գրիգոր Յայսմատուրքի անցած է իր մօրեղբոր՝ Գրիգոր Վկայասէրին հետ միասին, Օգոստոս 8ին:

Սկզբնական աղբիրք. Մատթէոս Ուռհայեցի եւ Սամուէլ Անեցի:

3. ԳՐԻԳՈՐ Դ ՏՂԱՅ 1173-1193

Թէեւ «Գրիգորիսեանք» բացատրութիւնը ըստ Յայսմատուրքի եւ ըստ Օրմանեանի լոկ վերեւ յիշուած Գրիգոր Սրբազան Հայրապետներու համար գործածուած է, սակայն մենք այդ խմբական անունը կ'ուզենք տարածել նաեւ յաջորդ երեք Գրիգորներու վրայ, որոնք եւս Պահլաւունեաց տոհմէն են:

Ներսէս Ծնորհալիին յաջորդեց Գրիգոր Դ, որ պատմութեան մէջ ծանօթ է ՏՂԱՅ մականունով, որովհետեւ տղայ տարիքին որբացաւ ի հօրէ, երբ իր հայրը՝ Վասիլ, սպաննուեցաւ պատերազմի մը մէջ, ուստի իր հօրեղբայրները՝ Գրիգոր Կաթողիկոս եւ Ներսէս, իրենց խնամքին ներքեւ առին զայն Հոռմկլայի մէջ իբր իրենց տղան եւ պատրաստեցին զայն կաթողիկոսութեան համար տղայ տարիքէն: Ծնած կը համարուի 1130-ական թուականներուն: Կաթողիկոս եղած ատեն շուրջ 40 տարեկան էր: Բոլոր Պահլաւունիներու պէս ինքն ալ կերպարանքով «յաղթանդամ» եւ փառաւոր անձնաւորութիւն մը եղած է:

Գրիգորի գլխաւոր գործը եղաւ միաբարական ձեռնարկը Յունաց հետ: Այս խնդիրը սկսուած էր Ներսէս Ծնորհալիի պատահական մէկ հանդիպումով Յունաց Ալեքս իշխանին՝ Կիլիկիոյ Մամեստիա քաղաքին մէջ, Գր. Պահլաւունի կաթողիկոսի վերջին տարին, 1165ին: Երկար թղթակցութիւն մը սկսաւ երկուստեք, որոնք առանց որեւէ արդիւնքի վերջ գտան Ծնորհալիի մահուամբ: Յունաց Մամուէլ կայսրը իր ներկայացուցիչը զրկեց Գրիգոր Դ Կաթողիկոսը նախ՝ շնորհաւորելու եւ ապա՝ սկսուած բարի գործը շարունակելու եւ ի կատար հանելու: Գրիգոր «Ինք ալ իւր նախորդին նման անկեղծ փափաքող մըն էր միութեան»: (Ազգ. էջ 1450): Յոյներ 9 առաջարկութիւններ

ներկայացուցած էին իբրեւ միութեան հիմնական պայման: Գրիգոր Տղայ գրեց կայսեր, որ այդ 9 կէտերը ծանր են եւ անկարելի է, որ Հայեր ընդունին զանոնք, ուստի խնդրեց «թեթեւցնել» եղած առաջարկները: Կայսրը Հայերը Յունական եկեղեցւոյ շրջանակին մէջ առնելու յոյսով, ըրաւ առաւելագոյն զիջողութիւնը, այսինքն՝ 9 պայմանները իջեցուց մէկի, որ էր ընդունիլ «երկու բնութիւն» բանաձեւը: Ասիկա մեծ յաջողութիւն էր Գրիգոր Տղայի համար, ուստի ժողովի հրաւիրեց Հայց. եկեղեցւոյ գլխաւոր եպիսկոպոսները:

Ժողովի ներկայ եղան Արեւելեան Հայաստանէն՝ Աղուանից Ստեփանոս Կաթողիկոսը, Անիի Բարսեղ Արքեպիսկոպոսը, ինչպէս նաեւ Թիֆլիսի, Սիւնեաց, Դուինի, Նախիջևանի եւ Կարսի Հայ եպիսկոպոսները: Հարաւային Հայաստանէն՝ Բզնունեաց, Մանազկերտի, Տարօնի, Մոփաց եպիսկոպոսները: Պարսկահայ 2 եպիսկոպոսները: Արեւմտեան Հայաստանէն կամ Փոքր Հայքէն, որ Գոնիայի սուլթանին տիրակալութեան ներքեւ էր, եկած էին Կեսարիոյ, Մալաթիոյ, Սեբաստիոյ եւ Նիքարի եպիսկոպոսները: Ընդամէնը՝ 17 հոգի: Իսկ Կիլիկիան շրջանակէն եկած են Անտիոքի Արքեպիսկոպոսը՝ Գրիգոր Ապիրատ, Պահլաւունեաց տոհմէն եւ Կաթողիկոսի հօրեղբոր որդի, Տարսոնի Արքեպսկ. ը՝ նոյնինքն Ներսէս Լամբրոնացի, որ մեծագոյն ջատագովն էր միութեան եւ Կաթողիկոսին աջ բազուկը: Ասոնց հետ են նաեւ՝ Անարզաբայի, Սելեւկիոյ, Սամոսատի, Մամեստիոյ, Կիարոսի, Աշմուշատի, Կոկիսոնի Կիլիկեցի եպիսկոպոսները՝ 9 հոգի: Ասոնց հետ պէտք է հաշուել նաեւ Երուսաղէմի Սահակ Արքեպիսկոպոսը, Եզեմիոյ, Թէոդոսուպոլսոյ, Նփրկերտի, Ապտիմիոյ եւ Լաւողիկէի Հայ եպիսկոպոսները, որոնք Սիւրիոյ եւ Միջագետքի մէջ ցրուած գաղթական Հայոց առաջնորդներն էին առաւելաբար: Կիլիկեցիներ եւ Սիւրացիներ միասին՝ 15 եպսկ.: Ընդամէնը, կաթողիկոսով միասին, 33 հոգի: Ներկայ են նաեւ իբրեւ ունկնդիր բազմաթիւ վանականներ (վարդապետներ եւ կրօնաւորներ), մեծ մասամբ՝ Կիլիկեան վանքերէն: Գլխաւոր դէմքերէն եւ մեծ կեղծոններէն չէ եկած Գրիգոր Տուտէորդի՝ Սանահին մեծ վանքի վանահայրը, որ ոգի ի բռին հակառակ էր միաբարական նման շարժումներուն: Ներկայ եղած են նաեւ Ասորոց եկեղեցիէն «վարդապետներ եւ իմաստուն մարդեր»: Հայ իշխաններէն կամ աշխարհականներէն ոչ ոք ներկայ է:

ժողովին ոչ ատենագրութիւնը եւ ոչ ալ որոշումները պահուած են: Անկէ իբրեւ վաւերացող մեզի հասած են երկու պաշտօնական նամակներ, մէկը՝ Բիւզանդիոնի Մանուէլ կայսեր եւ միւսը՝ Կ. Պոլսոյ Պատրիարքութեան Սինոդին ուղղեալ, վասնզի Յունաց պատրիարքը վախճանած էր: Կայսեր նամակին մէջ կը շեշտուի, թէ Հայոց կաթողիկոսը եւ ժողովը «ձայնակից են ուղղափառութեան, որ կը տիրապետէ մեր մէջ եղած Աստուծոյ Սուրբ Եկեղեցիին մէջ, ոչ թէ նոր մտաւ մեր մէջ ուղղափառութիւնը, այլ մեր արդէն իսկ ունեցածն է, որ յայտնուեցաւ»: Հայեր իրենց արդէն իսկ ունեցած տեսակէտները եւ բանաձեւը չեն փոխեր, այլ Յոյներուն գրած նամակներու հիման վրայ կը դադարին զանոնք Նեստորականներու հետ շփոթելէ, ինչպէս որ Հայերու «Մի բնութիւն» բանաձեւէն կը հեռացնեն Եւտիքեական շփոթութիւնը «եւ այդ հիման վրայ կը հաստատեն կատարուելիք խաղաղութիւնը [եւ միութիւնը]՝ իւրաքանչիւր կողմ իր աւանդութեան մէջ թողով» (Ազգ. էջ 1473):

Նոյնիմաստ է Սինոդին գրուած նամակն ալ, որուն մէջ ամենէն նշանակալից հաւաստումն է հետեւեալը. «Խոստովանիմք Համաձայն ձեզ՝ Քրիստոս անճառ միութիւնն երկու բնութեան տեսութեան» բացատրութիւնը (Ընդ. 196): Օրմանեան հետեւեալ ձեւով կը մեկնաբանէ այս բացատրութիւնը.

«Հայոց եկեղեցին «երկու բնութիւն» ըսելէ կը խորշի, ինչպէս Հռոմկլայի ժողովն ալ զգուշացած է զայն գործածել, վասն զի «երկու» ըսելը, «զատ-զատ» ըմբռնելու իմաստ կուտայ: Սակայն ոչ [Քրիստոսի աստուածային ու մարդկային] բնութիւնները շփոթած եւ ոչ մին կամ միւսը ոչնչացած կ'իմանայ, այլ միայն կը պնդէ, թէ աստուածային ու մարդկային բնութիւններն ու կամքերն ու ներգործութիւնները միշտ ՄԻԱԽՈՐԵԱԼ եւ ՄԻԱՑԵԱԼ կերպով պիտի ըմբռնուին, որպէսզի նեստորական ԲԱԺԱՆՄԱՆ գաղափարը հեռացուի... Հայերուն ծրագիրն էր միութիւնը նուիրագործել միտքերու համաձայնութեան վրայ, որ երբ Յոյներ «երկու բնութիւն ըսեն, եւ Հայեր զիրենք նեստորական չկարծեն, եւ Հայեր «մի բնութիւն» ըսեն, Յոյներ զիրենք Եւտիքեական չկարծեն, եւ իրարու հետ համարձակ եւ կատարեալ Հոգեւոր հաղորդութիւն ունենան, իրար չհալա-

ծեն եւ չբռնադատեն» (Ազգ. էջ 1474-1475):

Ուրեմն՝ Հռոմկլայի ժողովը յունական «երկու բնութիւն» բանաձեւը չընդունեց. Քաղկեդոնի ժողովը չճանչցաւ. Լեւոնի տոմարի հաւանութիւն չյայտնեց: Մնաց իր նախկին դիրքին վրայ. միակ զիջումը այն եղաւ, որ պատրաստ էին Յոյները նեստորական չնկատելու, եթէ անոնք ալ Հայերը Եւտիքեան չնկատէին:

Ժողովը այս երկու պաշտօնագրերու պատարաստութենէն յետոյ ցրուեցաւ: Սակայն թղթատարներ այս պաշտօնագրերը չկրցան Կ. Պոլիս հասցնել, որովհետեւ մեծ պատերազմ կար Բիւզանդիոնի եւ Գոնիայի սուլթանութեան միջեւ: Մինչ այդ 1180ին Մանուէլ կայսրը մեռաւ եւ միաբարակայն շարժումն ալ իր հետ մեռաւ: Հայոց այս շարժումին մէջ մտնելու գլխաւոր շարժառիթը երկուք էր. նախ՝ Յունական կայսրութեան նեցուկն ունենալ մահմետականներով շրջապատուած երկրի մը մէջ, երկրորդ՝ վերջացած տեսնել յունական հալածանքները, որոնք շարունակ եղած են Հայոց դէմ երկուստեք գոյութիւն ունեցող կարգ մը կրօնական տարբերութեանց պատճառով:

Երբ Յոյներէն անյոյս մնացին եւ տեսան, որ անոնք կը շարունակեն իրենց հայահալած աւանդական ուղղութիւնը, Գրիգոր Տղայ, Լատիններու կողմէ նոր օգնութիւն գտնելու յոյսով, խորհեցաւ ուղղակի դիմել Հռոմի Պապին, որուն գրեց նամակ մը, որ կորսուած է, պահուած է սակայն պապին պատասխանը, գրուած 1184 Դեկտ. 3ին: Գրիգոր Տղայի այս նամակով եւ Պապին պատասխանով սկսուեցաւ Հռոմմէական եկեղեցիի հետ միութեան ձեռնարկը, որ տեւեց Կիլիկեան թագաւորութեան ամբողջ տեւողութեան ընթացքին, որ ոչ միայն ապարդիւն անցաւ, այլ նաեւ Հայոց համար վնասակար հետեւանքներ ունեցաւ թէ՛ քաղաքական եւ թէ՛ կրօնական գետնի վրայ:

Գրիգոր Տղայ վախճանեցաւ 1193ին Սիսի մէջ, ուր կը գտնուէր Հայոց Լեւոն իշխանապետին հրաւերով՝ լատիններուն հետ անձամբ բանակցելու: Իր մարմինը թաղուեցաւ մօտակայ Դրազարկ վանքը:

Օրմանեան հետեւեալ բառերով կ'արժեւորէ Գրիգոր Դ Կաթողիկոսը.

«Գրիգոր Տղայ... զօրաւոր եւ ձեռնարկու բնաւորութեան տէր պէտք է ճանչցուի, եւ նոր նշանաւոր գործերու ձեռք զարնող, թէպէտ պարագաներ իրեն չնպաստեցին: Եկեղեցական բարե-

կարգութեան ալ հետեւեցաւ, եւ պէտք է իրեն վերագրել Ենորհալիին յաւելուածներուն (մեր Ժամագրքին մէջ) կամաց-կամաց սովորական դառնալը եւ պարտաւորիչ ձեւ առնելը... Պահլաւունիի եւ Ենորհալիի ձեռքին տակ՝ հայրապետանոցին մէջ ուսած եւ զարգացած անձի մը՝ մտաւորական կարողութեան տէր եղած ըլլալը անտարակուսելի կէտ մըն է» (Ազգ. էջ 1493):

Սկզբնաղբիր. Ընդհանրական: Տարեգիրք Սմբատ Սպարապետի, Փարիզ, 1859:

4. ԳՐԻԳՈՐ ՔԱՐԱՎԷԺ 1193-1194

Գրիգոր Տղային յաջորդեց, Լեւոն Իշխանապետի կամքով եւ Արեւելիեան վարդապետներու պահանջով, Գրիգոր անուամբ ուրիշ Պահլաւունի երիտասարդ եպիսկոպոս մը, որ սակայն ժամանակ չունեցաւ մեծ գործունէութիւն ցոյց տալու, քանի որ հազիւ տարի մը կրցաւ Կաթողիկոսութիւն վարել:

Գրիգոր կը ներկայացուի բնութեամբ հաստատամիտ, ուղղութեամբ օտարներէ հեռու մնալու կողմնակից, Արեւելիեան վարդապետներու գաղափարակից, որոնք բացայայտօրէն կը հակառակուէին Յունաց կամ Լատինաց հետ կրօնական մօտաւորութիւն ունենալու գաղափարին:

Գրիգոր համոզումով Հայ եկեղեցիի անկախութեան պաշտպան՝ չհաճեցաւ հետեւիլ Լեւոն Իշխանապետի ուղղութեան, որ կ'ուզէր, Լատինաց զիջողութիւն ընելով, սիրաշահի անոնց համակրանքը իր իշխանապետութիւնը թագաւորութեան բարձրացնելու նպատակով: Ժամանակակից պատմիչը կ'ըսէ. «Ինքնիշխանութեամբ տանէր զհայրապետութիւնն»: Այս կը նշանակէ, որ Գրիգոր Ե երիտասարդ կաթողիկոսը Լեւոնի եւ իր համախոհ եպիսկոպոսներու խորհուրդով չէր ուզեր կառավարել եկեղեցին, ինչ որ իրեն համար յանցանք մը նկատուեցաւ եւ մահուան պատճառ դարձաւ:

«Նախանձոտ եպիսկոպոսներու խմբակ մը» ամբաստանեց Լեւոն Իշխանապետին առջեւ նորընտիր երիտասարդ Կաթողիկոսը, իբրև անփորձ ու անկարող, եւ որոշեցին ժողովով գահընկէց ընել: Այդ նպատակով Սիսի Արեքեպսկ-ը Լեւոնի մարդերով Հռոմկլայ գնաց,

նենգութեամբ ձերբակալել տուաւ Կաթողիկոսը եւ Սիս բերաւ, ուր բերդի մը մէջ բանտարկեցաւ մինչեւ զինք դատելիք ժողովին գումարուիլը: Բայց նախ քան ժողովին գումարուիլը Գրիգոր մեռած գտնուեցաւ բերդի արտաքին ժառերու վրայ: Որմէ ժառանգեց «ՔԱՐԱՎԷԺ» տիտղոսը: Իր մահուան պաշտօնական բացատրութիւնը այն եղաւ, որ Կաթողիկոսը փորձած է կտաւներէ շինուած չուանով մը փախչիլ բերդի պատուհանէն. չուանը փրթած եւ ինկած է քարերուն վրայ եւ մահացած: Բայց ընդհանուրի եւ պատմութեան տեսակէտը այն եղաւ, որ երիտասարդ եւ կորովի Կաթողիկոսը զոհ գնաց դաւաճանութեան մը, հաւանաբար մեղսակցութեամբ իր հակառակորդ եպիսկոպոսներուն, պարզապէս անոնց թելադրանքներուն անսացած ըլլալուն համար:

Կատարուեցաւ կաթողիկոսավայել յուղարկաւորութիւն եւ թաղուեցաւ Դրազարկի վանքը, իր մօրեղբոր՝ Գրիգոր Տղայ Կաթողիկոսին մօտ:

«Քարավէժի վրայ ոչ բարոյական եւ ոչ պաշտօնական մեղադրանք մը չկրցան խօսիլ իրեն հակառակորդները, եւ ասով յայտնի ըրին իրենց նախանձոտ եւ մախացող թշնամութիւնը» (Ազգ. էջ 1510):

5. ԳՐԻԳՈՐ Զ ԱՊԻՐԱՏ 1195-1203

Վերջին Պահլաւունի Կաթողիկոսը՝ եւ անոնց վառած բոցավառ ջահին վերջին առկայած եւ տկար նշոյլը:

Ներսէս Ենորհալիի Ծահան եղբոր որդին էր Գրիգոր: Երիտասարդ տարիները զինուորական ծառայութեան մէջ անցուցած էր իր հօր՝ Ծահան զօրավարի ձեռքին տակ, եւ 30 տարեկանին Բիւզանդիոնի մէջ աշխարհիկ կեանք վարած էր: Բայց կրօնաւորուելէ յետոյ հեղահոգի անձ մը դարձաւ: Աւագանի անունը Ապիրատ էր, ձեռնադրութեամբ Գրիգոր անունը իր վրայ մնաց իբրև մակդիր, զանազանելու համար միւս անուանակիցներէն:

Այն եպիսկոպոսները, զորս Լեւոն Իշխանապետը հրաւիրած էր Սիս՝ Գրիգոր Քարավէժ գահընկէց կաթողիկոսը դատելու, վերջնոյս անակնկալ մահուան վրայ, անոր հանդիսաւոր յուղարկաւորութիւնը

կատարեցին եւ ապա զբաղուեցան նոր կաթողիկոսի ընտրութեամբ:

Լեւոն իշխանը իր նպատակները յաջողցնելու համար իրեն հլու հնազանդ կաթողիկոս մը կ'ուզէր. երբ յուսախաբ եղաւ երիտասարդ կաթողիկոսէն, ուզեց փորձել ծերունի մը: Այդ նպատակով իբրեւ կաթողիկոսացու ներկայացուց Գրիգոր Ապիրատը, որ 72 տարեկան էր այն ատեն: Ժողովականք ընտրեցին զայն 1195ին:

Այս ըտրութիւնը սակայն հաճելի եւ ընդունելի չեղաւ Արեւելեան վարդապետներուն, նախ՝ որովհետեւ իրենք ալ չէին հարւիրուած ժողովի եւ երկրորդ՝ Ապիրատ ծանօթ էր ամենքին ոչ միայն իր կրաւորական բնաւորութեամբ, այլ նաեւ՝ Լատինաց հանդէպ ունեցած համակրանքով: Ուստի Արեւելեան վարդապետներ գրեցին Լեւոն իշխանապետին եւ պահանջեցին, որ Ապիրատի ընտրութիւնը չեղեալ նկատուի եւ կաթողիկոս ըլլայ Անիի Բարսեղ Արքեպիսկոպոսը: Պահանջեցին նաեւ, որ Լատինաց հետ մերձեցման ամենամեծ ջատագովը՝ Ներսէս Լամբրոնացի Արքեպիսկոպոսը, հեռացուի Արքունիքէն եւ Հայրապետանոցէն իբրեւ խորհրդատու թագաւորին եւ կաթողիկոսին: Լեւոնը, մասամբ մը գէթ սիրաշահելու համար Արեւելեանները, Լամբրոնացին հեռացուց, բայց պահեց Ապիրատը իր Աթոռին վրայ: Այն ատեն Արեւելեաններ ալ Բարսեղ ընտրեցին կաթողիկոս: Լեւոն եւ Կիլիկեան եպիսկոպոսներ, նկատի ունենալով, որ իրենց ընտրական գործողութեանց մէջ ալ թերի կողմեր կային, ձայն չհանեցին, եւ եկեղեցին կառավարուեցաւ երկու կաթողիկոսներով, մին՝ Հայաստանի մէջ, միւսը՝ Կիլիկիա:

Լեւոն իշխանապետի մեծագոյն փափաքն էր թագ ստանալ Արեւմուտքէն եւ ճանչցուիլ իբրեւ թագաւոր Հայոց: Իր այս փափաքը իրականացաւ 1199ին, եւ Ապիրատ երջանկութիւնը ունեցաւ զայն թագաւոր օծելու Յունուար 6ին, Աստուածայայտնութեան օրը: Գրիգոր իր մնացեալ տարիները անցուց Հռոմկլայի մէջ խաղաղօրէն: 1202ին հարկադրուեցաւ Սիս գալ՝ միջնորդելու համար Լամբրոնի բերդին իշխան իր քեռորդիին համար, որ բանտարկուած էր Լեւոնի կողմէ: Իշխանը ազատուեցաւ կրօնաւորական կարգ մտնելու պայմանով, ինչ որ կատարուեցաւ Ապիրատի ձեռամբ, որմէ յետոյ Ապիրատ չապրեցաւ ու վախճանեցաւ 1203ին, 81 տարեկանին՝ շուրջ 8 տարի կաթողիկոսութիւն վարելէ յետոյ: Թաղուեցաւ Սիսի մօտիկ Արքակա-

ղին վանքին մէջ, ուր կը մնար Սիս գալէ յետոյ:

Իր օրով, բայց ոչ իր նախաձեռնութեամբ, զօրացան Հայ եւ Լատին յարաբերութիւնները:

«Իր մեղմ եւ վարանոտ բնաւորութեամբ գործիք եղաւ իր ժամանակին երկու մեծ գործիչներուն, Լեւոն թագաւորին եւ Ներսէս Լամբրոնացին... որով մեծ գործերու հետ անունը կապեց եւ մեծ պակասներէ ալ անունը զերծ պահեց» (Ազգ. էջ 1558):

Սկզբնաղբիւր. Սմբատ Սպարապետի ՏԱՐԵԳԻՐ-ՔԸ:

6. ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ 1153-1198

Պատարագի ընթացքին «Առաջնորդացն մերոց»ի վերջաւորութեան յիշուած «Ներսիսեանց» մէջ կայ անտարակոյս նաեւ Ներսէս Լամբրոնացին: Տօնելի Սրբոց կարգին անցած է ան Հայ կաթողիկ օրացոյններուն մէջ: Այս մասին Օրմանեան հետեւեալ լուսարանութիւնը կ'ուսայ.

«Լամբրոնացին տօնելի սուրբերու հետ դասակարգելու սկզբնաւորութիւնը վերջին (19-րդ) դարուն մէջ տեղի ունեցաւ, եւ նախ Կ. Պոլսոյ մէջ սկսաւ միութենական նոր ճիւղերու առթիւ, բայց Մայր Աթոռին մէջ չընդունուեցաւ եւ շուտով Կ. Պոլիս ալ դադարեցաւ, եւ միայն Երուսաղէմի օրացոյցը կը յամառի տակաւին պահել զայն» (Ազգ. հտժ. 1062):

Այսօր Երուսաղէմի Օրացոյցն ալ դադարեցուցած է անոր յիշատակութիւնը, սակայն վերստին մուտք գործած է ներկայիս Թիւրքիոյ Հայոց Պատրիարքութեան Օրացոյցին մէջ, չենք գիտեր երբէն ի վեր կամ որո՞ւն տնօրինութեամբ:

Լամբրոնացին ծնած է 1153ին, իր հօրենական դղեակը եղող Լամբրոնի բերդին մէջ: Մօր կողմէ կապուած է Պահլաւունեաց գերդաստանին, իր մայրը՝ Շահանդուխտ, ըլլալով դուստրը Գր. Պահլաւունի կաթողիկոսի Շահան եղբոր:

Լամբրոնի տէրերուն նախահայրը՝ Օշին, Կիլիկիա եկած էր ամբողջ տունով եւ «ազատագուճ իշխաններով», ԺԱ դարու վերջին քառորդին, գրեթէ Ռուբինեանց հետ միաժամանակ, գաղթելով Արեւ-

լեան Հայաստանի Սիւնեաց աշխարհէն (Գանձակ քաղաքէն) եւ գրաւելով Լամբրոնի անառիկ բերդը՝ տեղաւորուած էին այնտեղ եւ հաւատարիմ աւատապետներ դարձած էին Բիւզանդական կայսրերուն, հակադրուելով Ռուբինեաններուն (յաճախ պայքարելով անոնց հետ), որոնք աւելի անկախ եւ ազգային ուղի որդեգրած էին: Լամբրոն կը գտնուէր Տաւրոս լեռներու ծովահայեաց լանջքին, լեռնագագաթի մը վրայ եւ տիրապետող դիրք ունէր Տարսոնի վրայ, որ անցեալին մէջ միշտ եղած է դաշտային Կիլիկիոյ գլխաւոր քաղաքը: Այսօր այդ դիրքը կը գրաւէ Ատանա:

Իր հօր անունն ալ Օշին էր, իսկ իր աւագանի անունը՝ Սմբատ: Իր նախնական դաստիարակութիւնը ստացաւ Սկեւոյի վանքին մէջ, որ Լամբրոնացւոց մայրավանքն էր: Կանխահաս, հանճարեղ եւ շատ ուսուսմանսէր պատանի մը եղած է: Ս. Գրոց խորապէս հմուտ դարձաւ տիրացաւ նաեւ յունարէն եւ լատիներէն լեզուներուն: Կուսակրօն քահանայ ձեռնադրուեցաւ 16 տարեկանին՝ Ներսէս Ենորհալիի ձեռամբ եւ այդ առթիւ ժառանգեց նաեւ անոր անունը: Ատեն մը մնաց Հոռովկայ, իր մեծ հօրեղբոր (Ենորհալիի) հսկողութեան եւ դաստիարակութեան ներքեւ: Երիտասարդութեան իսկ քաջ քարոզիչ էր, «թուէր նոր Ոսկեբերան»: Օրէ օր կը փայլէր սրբութեամբ եւ իմաստութեամբ:

Գրիգոր Տղայ Կաթողիկոսը 1176ին եպսկ. ձեռնադրեց զայն եւ նշանակեց Արքեպիսկոպոս Տարսոնի եւ Առաջնորդ Սկեւոյ վանքին՝ երբ Ներսէս հազիւ 23 տարեկան էր: Առանձնութեան սէրէն երբեք չհրաժարուեցաւ. յաճախ կը քաշուէր մեկուսացեալ վանք մը՝ թէ ճգնելու եւ թէ մանաւանդ գրական աշխատանք կատարելու համար: Իր ժամանակին ամենէն առատ գրողն է Լամբրոնացին: Իր երկերուն մեծ մասը գրած է երիտասարդութեան: Մշակած է գրեթէ ամէն տեսակ գրական սեռ՝ ճառ, ներբող, շարական, տաղ, մեկնութիւն, նամակ եւլն, տաղաչափեալ եւ արձակ:

Իր գրական գործերը մի առ մի յիշած է Նորայր Արք. Գողարեան «ՀԱՅ ԳՐՈՂ ՆԵՐ՝» գրքին մէջ, որոնց թիւը կը հասնի երեսունի. մենք կրնանք հետեւեալ ձեւով համադրել զանոնք:

Կրօնական ճառեր - Համբարձման, Հոգեգալստեան, Վերափոխման, Անառակ Որդիի եւ Տնտեսի առականերու մասին:

Ս. Գրոց մեկնութիւններ - Երկոտասան Մարգարէից, Յայտնութիւն Յովհաննու, Սաղմոսաց, Առակաց, Ժողովողի, Իմաստութիւն Սողոմոնի, Յովհաննու Հանգիտի, Կաթողիկէ Թուղթերու եւլն.:

Թարգմանութիւններ, առ Բաասրակ օրէնսգիտական ու կանոնական - Ասորական Դատաստանագիրքը, Բիւզանդական Օրինագիտութիւնը, Բենեդիքտոսի Կանոնները, Վասն 5 Պատրիարքական Աթոռոց, Հոռովմէական ծիսարան, Թուղթ Իննովկենտիանոս Պապի առ Գր. Պաշլաուուի, Թուղթը Ղուկիոս եւ Կղեմէս Պապերուն առ Գր. Տղայ:

Ծարականներ - Օրհնութիւն Ջատկի, լրիւ կանոնները Նոր Կիրակիին, Համբարձման, Որդւոց եւ Թոռանց Ս. Լուսաւորչի:

Տաղեր - բազմաթիւ:

Ներքողական - Ներսէսի Կլայեցւոյ, տաղաչափեալ:

Մեծ և Ուրբիւն ՊԱՏԱՐԱԳԻ - Իր գլխաւոր եւ մնայուն գործը:

Քննութիւն կարգաց եկեղեցւոյ:

Խնդիրք Հոռովոց եւ Հայոց:

Պատճառք Գամակաց - Որ է խմբագրութիւնը Հայ եւ Յոյն միութեան կանոնակարգութեանց նամակներուն, որոնք համադրուած են այսօր Ներսէս Ենորհալիի «ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ» կոչեցեալ գրքին մէջ:

Պատասխանիք առ Պատրիարքն Յունաց:

Թուղթ առ Յուսիկ ճգնատր:

Թուղթ առ Լեոն թագաւոր:

Ատեմաքանութիւն:

Եղած է իր շրջանին ամենէն կորովի գործիչներէն մէկը: Խորհրդատու եւ գործակից է իր օրուան Գր. Տղայ եւ Գր. Ապիրատ կաթողիկոսներուն եւ Լեւոն իշխանապետին, յատկապէս Յունաց եւ Լատինաց հետ կատարուած միաւորական գործերուն մէջ: Հակառակորդ է Արեւելեան Հայ վարդապետներուն, զորս կը նկատէ յետադիմական եւ շեղած հնաւանդ սովորութիւններէն եւ օրէնքներէն: Կարեւոր անդամներէն է Հոռովկայի Կրօն. ժողովին, ուր ծեծուեցաւ Յունաց հետ միանալու հարցը, 1179ին, ուր թէեւ կայսեր եւ Յոյն Սինհոզոսին նամակներ գրուեցան, բայց գործնական արդիւնք չունեցաւ՝ Պատրիարքի եւ կայսեր մահուամբ: 1197ին Լամբրոնացիի գլխաւորու-

Թեամբ պատգամաւորութիւն զրկուեցաւ Հայոց կողմէ Բիւզանդիոն, միարարական գործը Հետապնդելու համար: Ծամբայ ելաւ խանդավառ ու մեծայոյս տրամադրութեամբ. «Վերջապէս այնչափ ատենէ ի վեր իւր սիրտը տոչորող եկեղեցական միաբանութիւնը իւր ձեռքով պիտի կատարուէր»: Բայց վերադարձաւ պատրանաթափ եւ յուսախար, վասնզի բացայայտ եղաւ, որ Յոյներ, իր իսկ բառերով, «չեն խորժիր Աստուծոյ ծառայել նորոգուած Հոգիով, այլ՝ նիւթին կապուած» արտաքին շահեր կը Հետապնդեն. կ'ուզեն իրենց ծէսը եւ իշխանութիւնը տարածել Հայոց վրայ:

Յոյներէն յուսախար եղած՝ դարձաւ Լատինաց կողմը, մանաւանդ որ Լեւոն իշխանապետը անհրաժեշտ կը տեսնէր Արեւմուտքի մերձեցումը քաղաքական նկատառումներով: Որոշ համաձայնութեան մը գրեթէ յանգած էին, երբ ինք անակնկալ կերպով վախճանեցաւ 1198ին, 45 տարեկանին:

Օրմանեան Հետեւեալ տեսութիւններն ունի Լամբրոնացիի անձին, դաւանութեան եւ անոր անզուսպ եռանդով Հետապնդած միարարական գործի մասին.

ԼԱՄԲՐՈՆԱՅԻՒՆ ԵՎԱՐԱԳԻՐԸ.

«Հնար է Լամբրոնացիին ամէն գործերուն եւ նպատակներուն համամիտ չգտնուիլ, բայց հնար չէ հիացմամբ չդիտել անոր բարձր միտքը, անխոնջ աշխատանքը եւ անկեղծ իղձերը, եւ չզարմանալ անոր վրայ միացած տարբեր կերպարաններուն վրայ: Երբեմն ճգնասուն անապատակեաց եւ երբեմն գրասէր մատենագիր, երբեմն ժողովրդային հովիւ եւ երբեմն արքունիքի խորհրդական: Մէկ կողմէն առաքինի եւ չափաւոր, միւս կողմէն զայրացկոտ եւ անհամբեր, մերթ աշխարհէ բոլորովին հրաժարած եւ մերթ աշխարհային գործերու գլխաւոր շարժիչ: Այդ տարբեր կերպարանները միացնողը բուռն եռանդն էր, բուռն կիրքերու հետ ձուլուած, որոնք կը տիրէին անոր հոգւոյն, եւ ինչ բանի ալ ձեռնարկէր՝ մեղմ եւ հանդարտ գործունէութիւն պահել չէր կրնար: Այդ երեսէն եթէ միշտ գովելի եղաւ իւր անխոնջ աշխատասիրութեամբը, չի կրնար միեւնոյն գովեստի արժանանալ զգուշաւոր խոհեմութեան տեսակէտէն:

Շատ աւելի բարձր պիտի նկատէինք իւր արժանիքը, եթէ գիտնար ճարտարութեամբ իրենները շահիլ, քան թէ երբոր օտարներու սիրելի կ'ըլլար: Աւելի արդիւնաւոր պիտի ըլլային իւր ճիգերը, եթէ եկեղեցւոյ մէջ գժտութիւնները չի զայրացնէր եւ մինչեւ կաթողիկոսական բաժանման չմղէր, քան թէ երբ բուռն յարձակումներով, կծու հեղձութիւններով եւ նախատալից պատասխաններով Կիլիկիոյ եւ Հայաստանի մէջ բաժանման վէճ մը կը ստեղծէր՝ առանց մտաբերելու, թէ մինչեւ ուր կրնար յառաջանալ բացուած պատառուածքը»:

ԼԱՄԲՐՈՆԱՅԻՒՆ ԴԱԻԱՆՈՒԹԻՒՆԸ.

«Մեր նպատակին համար աւելի կարեւոր է Լամբրոնացիին տեսութիւնները ճշդել դաւանական վարդապետութեանց եւ միութեան խնդիրին մէջ: Պէտք է խոստովանիլ, թէ ինքն չստեղծեց այդ խնդիրը, որուն հեղինակը եղած էր Ներսէս Շնորհալին՝ իւր հոգեւոր ծնողը, եւ մշակողն եղած էր Գրիգոր Տղայն, իւր հոգեւոր տէրը, բայց ինքն այնպէս մը փարեցաւ այդ գործին, որ կատարելապէս իւրացուց, եւ անոր ուրոյն կերպարան մը տուաւ: Սակայն միութեան անպայման պաշտպան ըլլալով հանդերձ եւ օտարասիրութիւնը մինչեւ վերջին ծայրը տանելով մէկտեղ՝ Լամբրոնացին օտարին հպատակելու չհասաւ, եւ այս կէտն է, զոր կ'արժէ լաւ լուսաբանել: Լամբրոնացին թէ՛ Յոյնին եւ թէ՛ Լատինին հետ հաւասար եռանդով բանակցեցաւ, բայց երբեք մին կամ միւսը իրեն չսեփականեց»:

«Ուրեմն՝ ոչ յունադաւան եղաւ եւ ոչ հռոմէադաւան, այլ իսկապէս հայադաւան մնաց, որ այլադաւանէն չի խորշիր եւ տարբեր դաւանութիւնները իրարու միացնելու սկզբունքն ունի: Նա իւր եկեղեցւոյն մէջ շատ անբարեկարգութիւններ տեսաւ եւ ամէնքն ալ անխնայ կշտամբեց եւ համարձակ կը յայտարարէր, թէ «ես գիրք մի թովանդակ եմ գրեալ զՀայոց ազգիս անկարգութիւնս, որ յետոյ մտեալ եմ» (ՏՂԱ. 246), բայց անկարգութիւնը մոլորութենէ կը գատէ: Երբ խօսքը ուղղափառութեան վրայ է, այլեւս ամբաստանող չէ, այլ պաշտպան կը գառնայ. «Կարող եմք, կ'ըսէ, շնորհիւ գիտութեանս,

գոր ունիմք ի սուրբ Գիրս, ափիբերան առնել զՀելլէնացին, թէ զՀայն խորշեալ կարծիցէ յուղղափառութենէ» (ՏՂԱ. 235): Լուսաւոր օրինակ մըն է այդ բանին վերջին անգամ Կոստանդնուպոլսոյ պատուիրակութեան մէջ ունեցած ընթացքը... Այն Լամբրոնացին, որ իւր եկեղեցւոյն անկարգութիւններուն դէմ կը մաքաւէր, այս անգամ նոյնչափ եւ աւելի եռանդով օտարներուն դէմ կը բորբոքի, եւ կը պաշտպանէ, թէ «մի բնութիւն» ըսել սխալ է, թէ Քաղկեդոնը չընդունի մուսուլմաններն է, թէ Յոյներէն ձեռնադրութիւն ստանալու պարտք չկայ, թէ Հայոց քահանայապետութիւնը անխախտ է... Համարձակ կը յայտարարենք, թէ Լամբրոնացին յունադաւան է, եւս առաւել Հռոմէադաւան է» (Ազգ. հոմբ. 1060-1061):

ԼԻԱԿԱՏԱՐԻ մէջ Լամբրոնացին ներկայացուած է իբրեւ օրինակելի եւ տօնելի սուրբ մը, զօրաւոր ճգնաւորական հակումներով: Իսկ ՄԱՐՁՈՒԱՆՑԻԻ եւ ՓԵՇՏԻՄԱԼՃԵԱՆԻ հրատարակած Յայսմատորքները, իրարու գրեթէ նման, բայց աւելի զուսպ վարքագրութիւններ ունին, որոնց մէջ եւս շեշտուած են Լամբրոնացիի վրայ սուրբերու առհասարակ յատուկ առաքինութիւններ. «...եւ էր ինքն խոնարհ, հեղ, անպաճոյճ, ողորմած, աղօթական, արտասուող, անապատասէր» (միայնակեաց) եւլն.:

Հստ փեշտիմալճեանի՝ տօնելի Յուլիս 14ին, ըստ ՄԱՐՁՈՒԱՆՑԻԻ՝ Յուլիս 17ին:

Սկզբնաղբիր. Սմբատ Սպարապետ: Գրիգոր Սիււապի - Ներբողական Ա. Ներսէս Լամբրոնացիի, «Սոփէրք», ԺԵ. 1-90:

7. ԼԵՒՈՆ ՄԵՍԱԳՈՐԾ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ

1187-1214

Լեւոն Կիլիկիոյ մէջ Հաստատուած Հայ իշխանութեան 8-րդ իշխանն է եւ առաջին թագաւորը: Ամենէն կարող եւ մեծանուն եւ մեծագործ անձը եղաւ Կիլիկեան Հայ թագաւորութեան: Ուրեմն նախ երկու խօսք այս իշխանապետութեան հաստատման պարագաներու մասին:

ԺԱ գարեբուն Սելճուք թուրքեր կ'արշաւեն Հայաստան եւ Բիւզանդական կայսրութեան արեւելեան սահմանները: Այս արշաւանք-

ներուն իբրեւ հետեւանք Հայ ժողովուրդը իրենց իշխաններով կը գաղթեն դէպի Հարաւ-արեւմուտք եւ, օգտուելով տիրող անիշխանութենէն, փոքր իշխանութիւններ կը հաստատեն ուր որ կրնան: Ասոնց մէջէն յիշատակութեան արժանի է ՌՈՒԲԷՆ իշխանը, Բագրատունեաց վերջին թագաւոր Գագիկի ցեղէն: Այս վերջինին Յոյներու կողմէ դաւաճանութեամբ սպաննուելէն յետոյ, Ռուբէն անոր զօրքերուն գլուխը անցաւ ու եկաւ Հաստատուեցաւ Տաւրոս լեռներու անմատչելի տեղերը, ուր նախապէս եկած ու Հաստատուած էին արդէն բազմաթիւ Հայեր, եւ Յոյները վանելով այն տեղերէն՝ տիրացաւ քանի մը բերդերու եւ նոր իշխանութիւն մը հաստատեց 1080ին: Իր յաջորդները՝ որդին Կոստանդին եւ թոռը Թորոս Ա, աւելի ընդարձակեցին դայն:

Այս ատեններ Խաչակիրներ սկսած էին Արեւելք գալ Ս. Երկիրը ազատելու համար: Հայեր, իբրեւ Քրիստոնեայ ժողովուրդ, օգնեցին անոնց եւ օգտուեցան անոնցմէ: Ռուբէնի յաջորդ չորրորդ իշխանը՝ Լեւոն Ա, թէեւ լեռներէն վար իջաւ եւ սկսաւ զբաւել նաեւ Դաշտային Կիլիկիան, բայց իր կարգին գերի բռնուեցաւ Յոյներէն եւ տարուեցաւ Բիւզանդիոն, ուր բանտի մէջ մեռաւ, եւ այսպէս պահ մը ընդհատուեցաւ Ռուբինեան իշխանապետութիւնը 1140-1145:

Սակայն Լեւոնի որդիներէն Թորոս յաջորդեցաւ փախչել Բիւզանդիոնէն 1145ին եւ տիրանալ իր հօրենական կալուածներուն եւ վերահաստատել, զօրացնել եւ ընդարձակել Ռուբինեան իշխանապետութիւնը՝ իբրեւ Թորոս Բ եւ մեռաւ 1165ին: Իրեն յաջորդեց իր եղբայրը Մլիհ, որ Սիւ բերդաւանը շէնցուց, ամրացուց եւ իրեն կեդրոն ըրաւ, եւ որ այնուհետեւ Ռուբինեանց մնայուն մայրաքաղաքը դարձաւ: Մլիհ իր անկարգ կեանքով եւ անգթութեանց համար ամենքին ատելի եղաւ եւ սպաննուեցաւ Հայ իշխաններէն: Լեւոն Ա բացի վերոյիշեալ Թորոսէն եւ Մլիհէն, ունէր երկու որդիներ եւս. մին մեռած էր Բիւզանդիոնի մէջ, միւսը՝ Ստեփանէ՝ դաւաճանութեամբ սպաննուած էր Յոյներէն՝ ետին ձգելով երկու որդիներ: Ասոնցմէ առաջինն էր Ռուբէն, որ յաջորդեց Մլիհին, իսկ երկրորդը՝ ԼԵՒՈՆ, որ յաջորդեց իր եղբոր 1187ին եւ որուն մասին պիտի խօսինք այժմ:

Լեւոն, ժամանակակիցներու վկայութեամբ, «էր բարի եւ անենդ ընութեամբ»: Եղաւ շատ կարող պատերազմիկ զօրավար մը եւ ճարտար դիւանագէտ մը, որ Կիլիկեան իշխանապետութիւնը իր մեծու-

Թեան եւ ընդարձակութեան զենիթին Հասցուց եւ Թագաւորութեան բարձրացուց: Իշխանութեան զլուսն անցնելէ վերջ մի առ մի գրաւեց Կիլիկիոյ 72 կիսանկախ բերդերը, զօրացաւ Յոյներու եւ շրջակայ այլազգիներու վրայ: Լատիններուն Հետ իր բարեկամութիւնը ամբարձնելու Համար ամուսնացաւ Անտիոքի Լատին իշխանուհիին եղբոր դստեր Հետ: Իր օրերուն տեղի ունեցաւ երրորդ խաչակրութիւնը՝ Գերմանիոյ, Գաղղիոյ, եւ Անգղիոյ Թագաւորներու գլխաւորութեամբ: Երբ վերջին երկուքը ծովի ճամբով գացին Ս. Երկիրը, Գերման կայսրը՝ Տրետերիկ Երկամօրուսը, նախընտրեց ցամաքի ճամբով երթալ:

Լեւոնի մեծագոյն երազն էր իր իշխանութեան սահմանները տարածել մինչեւ Պատմական Հայաստան եւ ըլլալ Թագաւոր ամենայն Հայոց: Այս նպատակը ի գլուխ հանելու Համար պէտք ունէր Խաչակիրներու զինուորական ու քաղաքական նեցուկին: Անոր Համար որոշեց ի գին ամէն զոհողութեան սիրաշահիլ զէպի Կիլիկիա եկող Գերման կայսրը: Նախ անոր ընդառաջ զրկեց մեծ դեսպանութիւն մը Հայազուններով ու պաշարով եւ խոստացաւ օգտակար ըլլալ անոր ամէն մասամբ: Կայսրը գոհ մնաց Հայոց կողմէ գտած բարեկամական ընդունելութենէն եւ խոստացաւ Թագ ու արքայական զգեստ զրկել Լեւոնին, սակայն խեղդուեցաւ Կիլիկիոյ Կալիկադոնոս գետին մէջ լողացած ատեն եւ խոստումը չկրցաւ կատարել:

Լեւոն Խաչակիրներուն օգնութեան փութաց մինչեւ Աքիտ, զոր պաշարած էին Գաղղիոյ եւ Անգղիոյ Թագաւորները: Թէեւ քաղաքը գրաւեցին, բայց չկրցան տիրանալ Ս. Երկրին, եւ այս խաչակրութիւնն ալ ձախողութեամբ վերջացաւ: Անգղիոյ Ռիչարդ Առիւծասիրտ Թագաւորը երբ ուզեց Կիպրոսը գրաւել Յոյներէն, Լեւոն անձամբ օգնեց անոր: Այսպէս Արեւմուտքի Հետ իր բարեկամութիւնը ամբարձնելէ եւ պատերազմական աւարէն իր բաժինը առնելէ յետոյ դարձաւ Կիլիկիոյ, ուր իր դիրքը Հետզհետէ աւելի զօրացաւ իր իշխանութիւնը տարածեց մինչեւ իսկ Անտիոքի Լատին իշխանապետութեան վրայ:

Տրետերիկ Երկամօրուս կայսեր խոստումին Հիման վրայ Լեւոն Թէեւ գործնականապէս իբրեւ Թագաւոր ճանչցուած էր իրեններէն եւ օտարներէն, բայց դարուն սովորութեանց անսալով, կ'ուզէր անպատճառ ճանչցուիլ Թագաւոր Հայոց եւ պապական օրհնութեամբ եւ գերմանական Կայսեր արքայական Թագի պարգեւատրութեամբ: Այդ

նպատակով պատգամաւորութիւն մը զրկեց Եւրոպա Գերմանիոյ Հենրիկոս 2 կայսեր՝ յիշեցնելով անոր իր հօր՝ Տրետերիկոս Երկամօրուսի խոստումը: Հենրիկոս պատասխանեց, որ ինք կը ծրագրէ արգէն Արեւելք գալու, ուստի այն ատեն անձամբ կը կատարէ իր հօր խոստումը:

Մինչ այդ, Հայերու եւ Լատինաց իրարու ծօտենալը անշճար չանցաւ Բիւզանդիոնի կայսրերէն: Ուստի այդ օրերու կայսրը՝ Ալեքսիոս Գ Անգեղոսը, 1195ին կանխեց եւ Լեւոնին զրկեց «Թագ պատուական», թելադրելով՝ «Հռոմայեցիներուն Թագը մի դնել գլուխդ, այլ՝ մերինը, որովհետեւ աւելի մեզի ծօտ ես, քան Հռոմին»: Սակայն Լեւոն շնորհակալութիւն յայտնելով Հանգերձ զրկուած «սուկիով եւ Թանկագին քարերով զարդարուած» այս Թագին Համար, չհրժարեցաւ Արեւմուտքէն Թագ ստանալու իր փափաքէն:

Հենրիկոս Գերմանիոյ կայսրը չկրցաւ Արեւելք գալ, բայց Պապի Հետ Համախորհուրդ Արեւելք կը զրկեն իրենց ներկայացուցիչը՝ յանձին Արքեպիսկոպոս Կարտինալի մը, որ նախ քան Թագադրելը քանի մը կրօնական պահանջներ ներկայացուց Լեւոնին, որոնք կը յանգէին Հռոմէական եկեղեցիի Հետ կատարեալ ու գործնական միութեան: Լեւոն օրուան կաթողիկոս Գր. Ապիրատը եւ Կիլիկեան յայտնի եպիսկոպոսները խորհրդակցութեան կը հրաւիրէ Տարսոն 1198ին: Ասոնք կը մերժեն Կարտինալի առաջարկները: Լեւոն, տեսնելով, որ Թագադրութեան Հանդէսը պիտի վտանգուի այս մերժումով, ինք յանձնառու եղաւ ընդունելու ամէն պայման, ըսաւ Կարտինալին. «Ինչ որ կը հրամայէ ինքնակալ Կայսրը եւ մեծ Պապը պատրաստ է ինք ընդունելու»: Սակայն Կարտինալին նպատակն էր աւելի Հայոց եկեղեցին Հպատակեցնել Հռոմին, քան թէ Թագաւորը: Ի վերջոյ, նուիրակը քիչ մը մեղմացուց իր առաջարկները, եւ Լեւոն յաջողեցաւ Համոզել Կաթողիկոսը եւ 12 եպիսկոպոսները, որ այլեւս չընդդիմանան եւ ընդունին նուազագոյնի իջած առաջարկները:

Լեւոնի Թագադրութիւնը կատարուեցաւ 1199ին, Յունուար 6ին, Աստուածայայտնութեան օրը, Տարսոն քաղաքի մէջ, արտասովոր շուքով եւ ամենամեծ Հանդիսաւորութեամբ: Թագադրութեան Հանդէսին ներկայ են 14 Կիլիկեան Հայ Արքեպիսկոպոսներ, Կաթողիկոսի գլխաւորութեամբ: Օտար Հոգեւորականներէն ներկայ են Տարսոն նստող

Յունաց Անտիոքի Պատրիարքը եւ Մալաթիա նստող Ասորոց Կաթողիկոսը, բազմաթիւ Հայ եւ օտար վարդապետներ ու վանահայրեր: Ներկայ են Կիլիկիոյ եւ շրջակայքի գրեթէ բոլոր իշխանները եւ զօրավարները, որոնցմէ 44 հատը յանուանէ յիշատակուած են ժամանակակից պատմիչին կողմէ՝ եկած իրենց զօրադուևդերով եւ հարուստ ընծաներով: Հանդէսը կատարուեցաւ հետեւողութեամբ «Արեւմուտքի մէջ սովորութիւն եղած Պաշտօնաբաշխութիւն կամ Զգեստաւորութիւն (ինվեստիդուրա) կոչուած արարողութեան, որ պէտք էր կատարուէր յանուն Կայսեր եւ Պապին» (Ազգ. էջ 1546): Ըստ այսմ՝ Հանդէսի առաջին մասին գործադիրը եղաւ Հոռոմէն եկած Կարտինալը, որ թաղը՝ օրհնութեամբ եւ աղօթքով Լեւոնին գլուխը դրաւ այս կերպով Լեւոն եղաւ Արեւմտեան կայսրութեան եւ Պապական միացեալ իշխանութեան հպատակ աւատական թագակիր մը, Արեւմուտքի հովանաւորութիւնը եւ պաշտպանութիւնը վայելելու իրաւունքով:

Հանդէսը ունեցաւ երկրորդ եւ եզրափակիչ մաս մըն ալ, ՕԾՈՒՄը, զոր կատարեց Գրիգոր Զ Ապիրատ Կաթողիկոսը: Լեւոն այսպէս «նորոգեց Հայոց թագաւորութիւնը եւ պայծառացուց Հայոց եկեղեցին»:

Ան իբրեւ իշխանապետ Լեւոն Բ է, իսկ իբրեւ թագաւոր՝ Լեւոն Ա: 13 տարի իշխանապետութիւն ըրաւ ու 20 տարի թագաւորութիւն: Մեռաւ 1219 թուին. իր սիրտը թաղուեցաւ իր ձեռակիրտ Ակնէր վանքը, իսկ մարմինը՝ Սիւ: Օրմանեան Պատրիարք հետեւեալ խտացեալ դնահատականը կ'ընէ Լեւոնի մասին.

«Լեւոնի ձիրքերը կատարեալ եղան ամէն ճիւղերու մէջ հաւասարապէս. արիասիրտ պատերազմիկ, քաջ զօրագլուխ, ճարտար աշխարհավար, յաջող դիւանագէտ, բարեպաշտ քրիստոնեայ, առատաձեռն եկեղեցասէր, ժողովուրդին խնամող, արգարութեան պաշտպան, ուսմանց եւ դպրութեանց քաջալերող, որ կրցաւ Ռուբէնի Հիմնած փոքր իշխանութիւնը Հայ թագաւորութեան վերածել՝ նոյնիսկ Հայուն բնաշխարհէն դուրս: Նշանակութեան արժանի է եւս իրեն համար վկայուած ըլլալը, թէ «ուղղափառ հաւատով կեանքադարձաւ» ապրեցաւ ու մեռաւ (Միխ., 505), [այսինքն]... իբրեւ հաւատարիմ հայազաւան եւ ոչ երբեք Հոռոմէազաւան... Լեւոնի լատինատիրութիւնը եր-

բք զինքը իր եկեղեցիէն չհեռացուց, եւ ըրած զիջողութիւններն ալ արտաքին եւ առժամեայ ձեւակերպութիւններէ անդին չանցան» (Ազգ. էջ 1593-1594):

8. ԶԱՊԷԼ ԹԱԳՈՒՀԻ 1215-1252

Լեւոն Թագաւոր ամէն մասամբ բախտաւոր անձ մը եղած էր, սակայն կարեւոր կէտի մը մէջ անբախտ դուրս եկաւ. արու զաւակ չձգեց: Երկու անգամ ամուսնացած էր, երկու պարագային ալ օտար իշխանուհիներու հետ եւ քաղաքական նպատակներով: Առաջինը՝ Անտիոքի իշխանուհիին եղբոր աղջկան հետ: Աղջիկ մը միայն ունեցած էր, որ ապա ամուսնացած էր Երուսաղէմի տիտիղոսաւոր թագաւոր Լատին իշխանին հետ: Տարիներ յետոյ իր այս առաջին կնոջ մասին անհաւատարմութեան զրոյցներ տարածուեցան, որուն վրայ բանտ նետել տուած էր զա'յն Վահկա բերդի մէջ, ուր մեռած էր: Երկրորդ անգամ ամուսնացաւ 1211ին Կիպրոսի թագաւորին քրոջ՝ Միպիլին հետ, Լուսինեան Լատին իշխանական տունէն, որմէ եւս ունեցաւ մէկ հատիկ աղջիկ մը 1215ին, եւ որ ստացաւ մօրը անունը, որ Հայկական ձեւի վերածուելով՝ ընդհանրացաւ Զապէլ անուան տակ:

Լեւոն նախապէս իր անդրանիկ եղբոր Ռուբէնի համանուն թոռը (օտար կնոջմէ) իրեն ժառանգորդ նշանակած էր, բայց այս վերջինը ապիկար եւ ըմբոստ ըլլալուն՝ ի վերջոյ չեղեալ նկատեց իր կտակը, եւ զգալով, որ իր վախճանը կը մօտենայ իրեն գահաժառանգ յայտարարեց իր միամօր դուստրը՝ Զապէլը, երբ ան դեռ շատ մատաղ տարիքի մէջ էր: Կազմեց զօրաւոր խնամակալութիւն մը, որ կը բաղկանար օրուան Յովհաննէս Սեցի Կաթողիկոսէ, Կոստանդին սպարապետէ, որ իր մօրեղբորորդին էր, Պապեոսի բերդին տէրը եւ Բարձրբերդի եւ շրջակայից իշխանը. երրորդ անձը կը կոչուէր Սիր-Ադան «Հոռոմ դաւանութեամբ կամ ազգաւ» իշխան մը, որ ճանչցուած էր իբրեւ ճարտար դիւանագէտ: Ատեն մը վերջը այս վերջինը սպանուեցաւ, եւ Յովհաննէս Կաթողիկոսի մահէն յետոյ խնամակալութեան պաշտօնը կեդրոնացաւ լոկ Կոստանդին սպարապետին անձին վրայ:

Զապէլ երբ 7-8 տարեկան եղաւ, Կոստանդին ժողովի կանչեց Հայոց եկեղեցական մեծերը եւ իշխանները. ըսելու համար, որ փոքր

իշխանուհին ամուսնանալու տարիքին հասած է, հետեւաբար պէտք է յարմար ամուսին մը գտնել անոր համար, որ միաժամանակ Հայոց թագաւորը պիտի ըլլար: Փեսայութեան ընտրուեցաւ Անտիոքի դուքսին երկրորդ որդին՝ Փիլիպպոսը, որ 18 տարեկան էր: Ամուսնութիւնը տեղի ունեցաւ 1222ին, պայման դնելով, որ Փիլիպպոս հայադաւանութիւնը պիտի ընդունէր, եւ Հայ սովորութիւններով եւ իշխաններով պիտի կառավարէր Արքունիքը եւ երկիրը: Սակայն երբ Փիլիպպոս 20 տարեկան եղաւ, սկսաւ ինքնագլուխ գործել, խոստովանադրութեամբ եղաւ, Լատին սովորութեանց կը հետեւէր եւ Լատին իշխանները առաջ կը քշէր պալատի եւ երկրի վարչութեան մէջ: Մինչեւ իսկ յանդգնեցաւ Լեւոնի ամենէն թանկարժէք թագը եւ արքայական մեծարժէք վրանը, ոսկեղէն ու արծաթեղէն այլ գանձերուն հետ Անտիոք իր հօրը ղրկել: Հայ իշխաններ երբ իմացան, որ գողօններուն հետեւէն ինք ալ կը ծրագրէ Անտիոք փախչիլ, ալ չկրցան համբերել, ետեւէն հասան, ձերբակալեցին, գահընկէց ըրին ու բանտարկեցին: Հօրը լուր ղրկեցին, որ իր գաւազը բանտէն կ'ազատէին, եթէ գողօնները վերադարձնէր: Ագահ հայրը սակայն յանձնառու չեղաւ, մինչեւ որ իր տղան բանտին մէջ մեռաւ:

Կոստանդին կրկին ժողովի կանչեց օրուան Հայոց նոր կաթողիկոսը՝ Կոստանդին Ա Բարձրբերդցին, այլ եպիսկոպոսներով եւ իշխաններով, եւ թելադրեց, որ Զապէլին համար նոր փեսայի մը, եւ Հայոց համար ալ նոր թագաւորի մը մասին մտածեն: Ներկաները, տեսնելով, որ Կոստանդին սպարապետը մինչեւ այդ շատ խոհական եւ կարող կերպով կառավարած էր երկիրը, յարմարագոյն նկատեցին, որ անոր բազմաթիւ որդիներէն մին ըլլայ Հայոց նոր թագաւորը: Կոստանդին առաջարկեց իր փոքրագոյն տղան՝ Հեթումը, որ 10-12 տարեկան խոստովանալից պատանի մըն էր եւ տարիքի կողմէ ալ յարմարագոյն ամուսինը Զապէլին: Ամենքի հաւանութեան արժանացաւ այս առաջարկը:

Հեթում նկարագրուած է իբրեւ «մեծահոգի եւ հանճարեղ պատանեակ, անձնեայ եւ թիկնեղ, եւ գեղեցկադիտակ երիտասարդ, թէեւ տարիքով մանուկ, բայց առոյգ եւ տեսքով գեղեցիկ»: Պսակադրութեան եւ թագադրութեան կրկնակ հանդէսները փառաւորապէս կատարուեցան Տարսոնի մէջ, 1226ին, Յունիս 7ին Հոգեգալատեան օրը,

օրուան Հայոց Կաթողիկոսի՝ Կոստանդին Ա Բարձրբերդցիի նախագահութեամբ: Հանդէսին ներկայ էին բազմաթիւ եպիսկոպոսներ, իշխաններ եւ հսկայ բազմութիւն, որոնք ուրախ էին, որովհետեւ վերջապէս թագաւորական կնճռոտուած հարցը իր վերջնական եւ երջանիկ լուծումը կը գտնէր ազգային շրջանակի մէջ, առանց օտարներու պէտք ունենալու:

Կոստանդին խոհական ու կարող սպարապետը կը շարունակէր իր խեղճակալութիւնը նաեւ իբրեւ թագաւորահայր:

Պալատը նոր կարգի դրուեցաւ եւ ըստ ժամանակի սովորութեան, Կոստանդինի բազմաթիւ զաւակները պաշտօններ վերցուցին արքունիքի մէջ, որոնց մէջ էր Սմբատը, որ սպարապետ նշանակուեցաւ, որ նոյնինքն Սմբատ Պատմիչն է, որ զրած է ժամանակակից դէպքերու պատմութիւնը:

Կոստանդին թագաւորահօր օրով Կիլիկիոյ Հայ բնակչութիւնը օրէ օր կ'աճէր, որոնք Հայաստանի ներքին գաւառներէն դէպի Հարաւարեւմուտք կը գաղթէին՝ թաթարական արշաւանքներէն փախչելով: Դրացի պետութեանց հետ սիրալիր յարաբերութիւններ մշակեց, այսինքն՝ Գոնիայի սուլթանութեան եւ Սաչակիր իշխաններու հետ:

Մինչեւ Հոս Զապէլ, անչափահաս ըլլալով, ստուերի տակ կը պահուէր: Ուրիշներ կ'ընէին իրեն վերաբերեալ բոլոր կարգադրութիւնները, երբ օրինական գետնի վրայ ինք էր իրաւատէրը Հայոց թագաւորութեան, ըստ իր հօր կտակին: Երբ առաջին չափահասութեան թեւակոխեց, այսինքն՝ 12 տարեկան եղաւ, զգալի դարձուց իր կամքը եւ Լեւոնի դուստրը ըլլալը: Հաւանաբար երբ տեսաւ, որ ամէն կողմէն նոր դէմքերով շրջապատուած է, երբ մտաբերեց, որ իր նախկին ամուսինը բռնի իրմէ խլուած եւ բանտի մէջ մեռած էր, վերջապէս իր մայրը Լատին էր եւ ինք ալ Լատիններու նկատմամբ դրական զգացում ունէր, երբ տեսաւ, որ անոնք մէկիկ-մէկիկ կը չէզոքացուէին Կիլիկիոյ մէջ, ըմբոստութեան եւ դառնութեան ոգիի մը տիրապետութեան ներքեւ ինկաւ եւ միջոց գտնելով՝ իր մօրը քով փախաւ, որ այն ատեն կը գտնուէր Սելեւկիա, հիւրընկալ Լատին ասպետներու իշխանութեան ներքեւ:

Ատեն մը վերջ Կոստանդին Հրաւիրեց մանկամարդ թագուհին, որ պալատ վերադառնայ. մայրը չուզեց աղջիկը վերադարձնել, հիւրըն-

կալ ասպետներ ալ ըսին, որ իրենց քով ապաստանած մէկը Հակառակ իր կամքին չէին կրնար ուրիշներու յանձնել: Կոստանդին երբ տեսաւ, որ իր խաղաղասիրական եւ Համոզկեր միջոցները սպառեցան, Հեծելազօրքով մը պաշարեց Սելեւկիան: Ասպետներ գիտէին, որ պիտի չկրնային դիմադրել Կոստանդինի բանակին, ուստի պատճառանքով մը իրենք ելան բերդէն, Հայեր ներս մտան եւ առնելով իրենց Թագուհին՝ վերադարձան: Անկէ յետոյ Զապէլ, տեսնելով, որ այլեւս իր կեանքը եւ ճակատագիրը կապուած է Հայոց արքունիքին, Համակերպեցաւ կացութեան եւ օրինակելի տիպար ամուսին մը եւ Թագուհի մը դարձաւ. ընտանեկան երջանկութիւնը վերահաստատուեցաւ, եւ հետզհետէ երեք մանչերու եւ հինգ աղջիկներու մայր եղաւ, որոնցմէ առաջինը, Լեւոնը՝ ծնաւ 1236ին, երբ ինք քսան տարեկան եղած էր արդէն:

Օրմանեան մեզի կը ներկայացնէ Զապէլի նկարագիրը, որուն մենք նոյնութեամբ տեղ կուտանք այստեղ.

«Զապէլի նկարագիրը բարեպաշտ եւ բարեգործ եւ բարեսէր կնոջ տիպարը կը կազմէ անկասկած, եւ պատմութիւնն ալ մեզ զայն ոչ միայն սրբակեաց, այլ եւ կատարելապէս սուրբ անձի մը պէս կը ներկայացնէ, շարունակ պատմելով անոր գթասիրտ բարութիւնը, կարօտեալներու եւ հիւանդներու ցուցուցած խնամքը եւ անբասիր եւ անբիծ կեանքը: Սակայն ասոնք կատարեալ Հասակի մէջ իւր գործին տէր եղող կնոջ մը ճիրքերն եղան, որոնք չեն եղծուիր [երկո]տասանամեայ աղջկան մը Թեթեւութիւններով: Ոմանք Զապէլի անունին ստուեր չբերելու միտքով ենթադրեցին, թէ երբ Հեթումի կենակցութենէն կը խուսափէր, «խորհէր կրօնաւորիլ ի վանս կրօնաց» (ՁԱՄ. Գ. 194), որ հիներէն պատմուած չէ, եւ եթէ այս եղած ըլլար պատճառը, Հարկաւ Սմբատ պիտի չկարենար գրել, թէ «շարժեցաւ դիւակաւ քարկութիւն ի թագուհին Զապէլ» (ՄՄՐ. 121): ... Գատմութեան ընթացքին մէջ այլեւս Զապէլի պետական կամ ազգային գործունէութենէն յիշատակ չունինք, մինչ անոր մանկութիւնը սերտ կերպով կապուած տեսանք քաղաքական գործողութեանց հետ: Իւր անունը հռչակաւոր ընողը Սիսի հիւանդանոցն է, զոր ոչ միայն ինքն

կառուցանել տուաւ, ինչպէս արձանագրութիւնը կը վկայէ (ՄԻՍ. 539), այլ եւ անոր հոգեբարձուն եւ մատակարարը եղաւ, արքունական միջոցներով զայն պահպանեց ու Հարստացուց, եւ ինքն անձամբ անոր մէջ աշխատեցաւ, ու իբր Հասարակ հիւանդապահ կին մը ախտացելոց ծառայութիւնները կատարեց, զուարթաւատ ողորմութեան եւ գթասիրտ առաքինութեան օրինակը տալով ամէնուն, մինչեւ իւր կեանքին վերջը, որ երկար չեղաւ, զի 37 տարեկան վախճանեցաւ 1252ին, եւ Յայսմաւուրքը սրբուհւոյ յիշատակի պէս կ'արձանագրէ անոր անունը Յունուար 22ին (ՅԱՍ. Ա. 42): Կոստանդին կաթողիկոս գլուխ կանգնեցաւ փառաւոր յուղարկաւորութեան, որ տեղի ունեցաւ ընդհանուր սուգի արտայայտութեանց մէջ, եւ մարմինը ամփոփուեցաւ Դրազարկի վանքը, Ռուբինեանց Հարատութեան արքայազուններուն գերեզմանատեղին»: (Ազգ., էջ 1611-1612):

Զապէլ անցած է միայն ՓետրիՄԱԼՃԵԱՆԻ Յայսմաւուրքի մէջ, ուր իր մասին ըսուած է.

«Զապէլ Թագուհին շատ առաքինի եւ աղքատասէր էր, որով սիրելի եղաւ ամենքին: Երբ հիւանդացաւ, ամենէն առաջ ինքզինքը պատրաստեց բարի մահով հեռանալ այս աշխարհէն: Ս. Հաղորդութիւն ստացաւ եւ երկինքէն ձայն մը լսեց, որ Երգերգոցի բառերով կ'ըսէր. «Եկուր, իմ աղաւնիս, եկուր, սիրելիս, եկուր, կատարեալս»: Եւ անմիջապէս անպատմելի ուրախութեամբ լեցուեցաւ անոր հոգին, այնքան զուարթացան իր երեսները, որ քովը գտնուողները զարմանքով Համակուեցան: Այն ատեն երանելի Թագուհին պատմեց իր լսած աստուածային հրաւէրը եւ ապա աւանդեց իր հոգին առ Աստուած»:

* *

Իբրև պատմական տեղեկանք աւելցնենք, որ Զապէլի ամուսնութեամբ Հեթումի Հետ նոր արքայական գերզաստան մը տէր եղաւ Ռուբինեանց թագաւորութեան: Այս ընտանիքը իշխեց Կիլիկիոյ վրայ աւելի քան դար մը, տալով 9 թագաւորներ, որոնց վերջինը՝ Լեւոն Դ, մեռաւ 1342ին՝ առանց գաւազնի: Ապա թագաւորութիւնը անցաւ Կիպրոսի մէջ իշխող Լուսինեան Լատին իշխաններու ձեռքը, որոնք հազիւ 4-5 թագաւորներ տուին եւ հազիւ 30-35 տարի գիւմրացան Եգիպտոսի Մեմլուքներու տեւական յարձակումներուն, մինչեւ որ 1375ին Լուսինեանց վերջին թագաւորը Լեւոն Ե գերի ինկաւ Մեմլուքներու ձեռքը, եւ այսպէս վերջ գտաւ նաեւ Հայոց այս վերջին թագաւորութիւնը, լման 300 տարիներ տիրելէ ու տեւելէ վերջ՝ Կիլիկիոյ մէջ:

Սկզբնաղբիւր. Սմբատ Սպարապետի Պատմութիւնը:

ԳԼՈՒԽ Դ.

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ, ՄԻԱՐԱՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՒ ԱԹՈՌԻ ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԷԶՄԻԱԾԻՆ

1. ԱՐԵՒԵԼԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ խմբական անունով ծանօթ են մեր եկեղեցիի այն հոգեւորականները, որոնք կ'ապրէին Կիլիկիայէ դուրս, բուն Հայաստանի մէջ, 12-րդ դարէն սկսեալ, երբ հայութեան կրօնական ու քաղաքական իշխանութիւնները մայր հայրենիքէն փոխադրուած էին Կիլիկիա: Ասոնք այդ անուան տակ իրենց գոյութիւնը եւ գործունէութիւնը շարունակեցին պահել մինչեւ ԺԵ դարուն կէսերը, երբ շատոնց ջնջուած էր Հայ քաղաքական իշխանութիւնը Կիլիկիայէն, ու երբ Հայոց Հայրապետութիւնը վերափոխադրուեցաւ իր սկզբնական կեդրոնը՝ Ս. Էջմիածին, այս վարդապետներու անդուլ ջանքերով եւ յարատեւ աշխատանքներով:

Ասոնք ոչ միայն տէր ու պաշտպան կանգնեցան հոգեւոր ու քաղաքական վերին իշխանութիւններէ զրկուած Հայ ժողովուրդին իր բնիկ հողին վրայ, այլ նաեւ ախոյեան հանդիսացան Հայ եկեղեցիի դաւանութեան անաղարտութեան, ինքնուրոյնութեան եւ ինքնիշխանութեան, երբ անոնք վտանգուած էին Կիլիկիոյ մէջ: Ասոնք միաժամանակ վառ պահեցին Հայ դպրութեան ջահը եւ կրօնախմբատասիրական գիտութեան լոյսը հայրենի երկրին մէջ, հակառակ քաղաքական եւ ընկերային աննպաստ եւ դժուար պայմաններուն, եւ հարստացուցին Հայ մշակոյթը մատենագրական արժէքաւոր գործերով:

Ասոնք սկզբնական շրջանին ու երկար ատեն առաւելաբար համախմբուած էին Հիւսիսային Հայաստանի Գուգարաց գաւառի Զորագետի հովիտը եւ այդ իսկ պատճառներով կոչուած են նաեւ ԶՈՐԱԳԵՏ-ՑԻՆԵՐ կամ ՀԻԻՍԻՍԱՅԻՆ ԿՈՂՄԱՆՑ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ: Ասոնք, ընդունելով հանդերձ Կիլիկիոյ գրեթէ սահմանակից Հռոմկլայի բեր-

դին մէջ նստող Հայոց Հայրապետներու գերագոյն իշխանութիւնը, իրենց անմիջական Հոգեւոր կեդրոն կը ճանչնային Անի քաղաքը, որուն աթոռակալները միաժամանակ եպիսկոպոսապետներն էին «Հիւսիս-Արեւելք» կոչուած ընդարձակ շրջանին եւ տեսակ մը պաշտօնական կամ անպաշտօն կաթողիկոսական փոխանորդներն էին Հիւսիսային-Արեւելեան Հայաստանի: Ասոնց բնակութեան եւ Հոգեւոր գործունէութեան գլխաւոր օրօրաններն էին իրարմէ ոչ շատ հեռու երկու մեծ մայրավանքերը (ՀԱՂԲԱՏ եւ ՍԱՆԱՀԻՆ), որոնք արդարեւ ուսումնական կարեւոր կեդրոններ սկսած էին ըլլալ Բագրատունեաց Թագաւորութեան օրերէն եւ իրենց այդ հանգամանքը շարունակած էին պահել անոնց անկումէն յետոյ եւս: Ասոնք կը վայելէին ուղղակի կամ անուղղակի Հովանաւորութիւնը եւ պաշտպանութիւնը սահմանակից Վրացական պետութեան, ուր դեռ կը տիրէր Բագրատունեաց մէկ ճիւղը, եւ ուր ազդեցիկ էին Հայ զօրավարներ եւ Հայ իշխաններ:

Հաղբատը յատկապէս կը ծաղկէր ուսումնապէս այս շրջաններուն կարող վանահայրերու իշխանութեան ներքեւ, որոնցմէ մէկն էր Սարկաւազ կոչեցեալ Յովհաննէս վրդ.ը († 1129), որ մեր տոմարը երկրորդ անգամ նորոգողը եղաւ, եւ որ իր կարգին գրական մեծ դէմք մըն է, եւ պատկառելի անձնաւորութիւն մը, որուն առջեւ Վրաց նշանաւոր Դաւիթ Թագաւորն անգամ, «ոտքի կենալով եւ գլուխը խոնարհեցնելով, օրհնութիւն կը խնդրէր» (Կիրակոս Գանձակեցի):

Այս վարդապետները պատմութեան մէջ կը հակադրուին Կիլիկիոյ Հայ բարձրաստիճան Հոգեւորականութեան, որ շարունակ ապրելով Յոյն եւ Լատին եկեղեցիներու դրացնութեան մէջ, կը տեսնէին անոնց մէջ տիրող կարգ-կանոնը, համեմատաբար աւելի բարեկարգ ծէսերը եւ կրօնական սովորութիւնները, եւ կը ցանկային շատ բան փոխ առնել անոնցմէ՝ ճոխացնելու եւ պայծառացնելու համար Հայ եկեղեցիի այն ատենուան աւելի պարզ եւ անշուք արարողութիւնները: Բաց աստի, շրջապատուած ըլլալով իսլամական աշխարհով եւ իշխանութիւններով՝ կը փափաքէին անկեղծօրէն մէջտեղէն վերցնել Հայ եւ Յոյն, Հայ եւ Լատին եկեղեցիները իրարմէ բաժնող պատճառները, նախ համերաշխութեան եւ հաշտութեան մէջ ապրելու համար անոնց հետ, եւ ապա՝ ազատուելու համար անոնց շարունակական քննադատութիւններէն, դատապարտութիւններէն ու մինչեւ իսկ հալածանք-

ներէն: Կիլիկիոյ Հայ քաղաքական ու կրօնական գլուխները կը հետապնդէին այս հաշտութիւնը՝ մանաւանդ օգտուելու համար անոնց քաղաքական զօրութենէն, եւ այսպէս միատարր եւ միաձոյլ Բրիտանոնէական ճակատ յարգարելու համար ընդդէմ այլազգիներու:

Երբ Հայեր սկսան Հաստատուիլ Կիլիկիա, երկրին ընդհանուր Յոյներ էին: Որքան ալ Հայ իշխաններ տակաւ առ տակաւ վտարեցին Բիւզանդիոնի գործակալները եւ կառավարիչները Կիլիկիայէն, սակայն չէին կրնար մէկ օրէն երկիրը պարպել Յոյներէն, եւ հետեւաբար երկար ատեն եւ գրեթէ շարունակ ապրեցան անոնց հետ, յատկապէս մեծ քաղաքներու մէջ, ուր անընդհատ իրարու կը յաջորդէին Յոյն մետրապոլիտները:

Ասոնց վրայ եկան աւելանալ Լատինները, Արեւմտեան Բրիտանոնեաները, որոնք նաչակրական առաջին յաջող արշաւանքէն յետոյ, 1099-էն սկսեալ, իշխանութիւններ հաստատած էին Երուսաղէմ, Լիբնան, Սիւրիա եւ մինչեւ Միջագետք Հայոց: Հիւսիսային կողմը Կիլիկիոյ գրեթէ դրացի իրենց կեդրոններն էին Անտիոք եւ Եդեսիա (Ուռֆա), ուր շատ Հայեր կային: Լատիններ ժամանակի ընթացքին Թափանցեցին նաեւ Կիլիկիա, ուր իրենց բերդեր եւ աւաններ տրուեցան Հայ Թագաւորներու կողմէ, խնամիական սերտ կապեր Հաստատուեցան երկուստեք, այն աստիճան, որ տակաւ առ տակաւ Լատիններ եւ Լատինամիտներ տիրեցին նաեւ Կիլիկիոյ կրօնապէս ու քաղաքականօրէն, մինչեւ որ ԺԴ դարու կէսերուն արդէն իսկ Ռուբինեան Հայոց Թագաւորութիւնը անցած էր Լատին եւ հռովմէադաւան Լուսիմեան իշխաններուն ձեռքը: Ուրեմն Կիլիկիա, ԺԴ դարէն մինչեւ ԺԶ դար, պահելով հանդերձ Հայ տարրին գերակշռութիւնը եւ տիրակալութիւնը, եղած էր իրական խառնարան մը կամ շփման կեդրոնը այդ օրերու բոլոր Բրիտանոնեաներու (Հայերու, Յոյներու, Լատիններու եւ Ասորիներու), որոնց մէջ եւ որոնց հետ, կը կրկնենք, Հայ ժողովրդի կրօնական եւ աշխարհիկ իշխանները սիրով, համերաշխութեան եւ մինչեւ իսկ միութեան մէջ կ'ուզէին ապրիլ՝ օգտուելու համար անոնց քաղաքական ու կրօնական ինչինչ արտաքին առաւելութիւններէն եւ միաձոյլ ճակատ կազմելու ընդդէմ այլազգիներու, որոնք Թշնամի էին այս չորս Բրիտանոնեայ տարրերուն ալ հաւասարապէս:

Մինչ անդին, Արեւելեան վարդապետները, քաշուած իրենց աշխարհագրական, իմացական եւ հոգեւոր նեղ եւ մեկուսացեալ շրջանակներու մէջ, փակուած ու կտրուած էին արտաքին գրեթէ ամէն տեսակ Քրիստոնէական յարաբերութիւններէ, սերտօրէն կապուած էին իրենց նախնեաց ականգութիւններուն: Հետեւաբար՝ իրենց համար ուրիշ եկեղեցիներու հետ միութեան ամէն գաղափար կասկածելի եւ անբաղձալի էր:

2. ՄԻԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՐՁ ՅՈՒՆԱՅ ՀԵՏ: Կիլիկիոյ մէջ մերձեցման կամ միարարական առաջին շարժումը սկսաւ Յունաց հետ, ներսէս Ենորհալիի պատահական մէկ հանդիպումով 1165ին, Մամեստիա քաղաքին մէջ, Բիւզանդիոնի կայսեր ներկայացուցիչ Դուքսին, որ տեսնելով Ենորհալիի կրօնական հարցերուն հմուտ անձ մը ըլլալը, հետաքրքրուեցաւ Հայ եկեղեցիի դաւանական ու ծիսական հարցերով, եւ տրուած պատասխանները իրեն համար շահեկան նորութիւններ ըլլալով՝ խնդրեց Ենորհալիէն գրաւոր ձեւով ներկայացնել զանոնք: Ասիկա սկիզբը եղաւ բանակցութեանց եւ թղթակցութեանց, որ տեւեց Ենորհալիի ամբողջ Կաթողիկոսութեան ընթացքին, շուրջ 8-9 տարիներ, իր եւ Բիւզանդիոնի կայսեր ու Պատրիարքին միջեւ: Խնդիրները ըստ բաւականին հասունացած կը թուէին եւ որոշ եզրակացութեան յանգելու յոյսեր ալ ստեղծուած էին, երբ Ենորհալիի վախճանեցաւ 1173ին:

Մենք Յունաց հետ մշակուած միարարական շարժումի մասին ըստ բաւականին անդրադարձած ենք ԳՐԻԳՈՐ ՏՂԱՅ զուլխին մէջ, այսուհանդերձ աւելորդ չենք նկատեր կրկնել շատ մը կէտեր, աւելի ցայտուն կերպով մէջտեղ հանելու երկու կողմերու մտայնութիւնները եւ տեսակէտները:

Ենորհալիի յաջորդը՝ Գր. Տղայ Կաթողիկոսը, խնդիրը ձեռք առաւ մեծ եռանդով ու բարի տրամադրութիւններով եւ յաջողեցաւ Յունաց՝ մինչ այդ պնդած 9 պայմանները մէկի իջեցնել, այսինքն՝ Յոյներ ի վերջոյ առաջարկեցին, որ եթէ Հայեր ընդունին ԵՐԿՈՒ ԲՆՈՒԹԻՒՆ բանաձեւը՝ միութիւնը կ'իրականանայ, եւ նախքան Քաղկեդոնի ժողովը երկու եկեղեցիներու միջեւ գոյութիւն ունեցող հաղորդութիւնը եւ բարեկամական յարաբերութիւնը վերահաստատուած կ'ըլլայ: Զաջալերուած այս յաջողութենէն՝ Գր. Տղայ ժողովի հրաւիրա-

գրեր զրկեց Հայ եկեղեցւոյ բոլոր եպիսկոպոսներուն, որ հաւաքուին իր հայրապետանոցը՝ Հռոմկլայ, խորհրդակցելու եւ որոշման յանգելու համար այս կարեւոր հարցի մասին:

Արեւելեան վարդապետներ երբ ստացան այս հրաւիրագրերը, նախ իրարու հետ հաւաքուեցան՝ ճշդելու համար իրենց դիրքը այս հարցին նկատմամբ: Որոշեցին ժողովի չերթալ եւ պատրաստեցին յատուկ դիտողագիր, ուր մի առ մի կը թուէին ժողովի չմասնակցելու իրենց պատճառաբանութիւնները: Նախ կը քննադատէին յունական քաղկեդոնիկ դաւանութիւնը: Ձէին ընդուններ, որ Քրիստոս որեւէ կերպով ԵՐԿՈՒՔԻ բաժնուի, ուստի ամէն տեսակի ԵՐԿՈՒՈՒԹԻՒՆԸ մերժելով՝ «ՄԻ ԲՆՈՒԹԻՒՆ ԲԱՆԻՆ ՄԱՐՄՆԱՅԵԼՈՅ» բանաձեւին վրայ կը պնդէին: Կաթողիկոսը գրած էր նաեւ, որ Յոյներ այլեւս Հայերուն ուղղափառ ըլլալը կ'ընդունէին. «Եթէ այդպէս է, կ'ընէին ասոնք, ինչո՞ւ այս նոր առաջարկը կը ներկայացնեն մեզի»: ուստի կը կարծեն, որ Յունաց կողմէ գրուած վերջին կրկնակ նամակները «իրենց մէջ դառն թոյներ կը պարունակէն»: Ուստի կը յորդորեն Կաթողիկոսը, որ մերժէ Յոյներուն առաջարկը եւ միութեան խնդիրը եւ ժողով գումարելու գաղափարը խափանէ:

Այս նամակը ստորագրեցին Անիի առաջնորդը, իբրեւ «Եպիսկոպոս յԱրեւելս Հիւսիսոյ», որ իր իրաւասութեան սահմաններուն ընդարձակութիւնը կը ցուցնէ: Սանահինի վանքին վանահայրը՝ Գրիգոր ՏՈՒՏԷՆՈՐԴԻՆ, որ ամենէն անճկելի հակառակորդն էր միութեան գաղափարին եւ այդ նպատակով կատարուած կամ կատարուելիք ամէն տեսակ ձեռնարկի, եւ խօսնակն էր Արեւելեան վարդապետներուն: Հաղբատի վանահայրը՝ Իզնատիոս, Խորանակերտ վանքի վանահայր Մխիթարը, եւ Գետիկայ վանքի մեծաւոր միւս Մխիթարը, ԳՕՇ մականուանեալ, որ իր շրջանին ամենէն զարգացած, խոհական եւ հաւասարակշռուած միտքն էր, եւ տակաւին ուրիշ շատ մը վարդապետներ:

Կաթողիկոսը բնականաբար դժգոհ մնաց այս դիտողագիրէն, որով իր այնչափ եռանդով եւ յոյսով մշակած (ու նուիրական նկատած) գործը կը վտանգուէր այսպէս. ինչ որ միտժամանակ կը զրկէր Կիլիկիա եւ Արեւմուտք հաստատուած հայութիւնը այս միութենէն ակնկալուած բարեքներէն եւ օգնութենէն: Ուստի իր բոլոր կարողու-

Քիւնները զօրաշարժի ենթարկեց եւ գրեթէ գերմարդկային ճիգ մը ըրաւ, տարհամոզելու Արեւելեանները եւ ապահովելու անոնց ներկայութիւնը իր ծրագրած ժողովին, եւ նոր նամակ գրեց անոնց:

Իր գրութեամբ նախ ճառեց սիրոյ մեծութենէն, նոյնիսկ թշնամիները սիրելու. «Հայերու համար ուրիշ Բրիտոստ չեկաւ, ոչ ալ ուրիշ Բրիտոստ՝ Յոյներուն եւ Լատիններուն»: Նոյն Բրիտոստն էր, որ խաչուած էր ամենքի համար. ինչո՞ւ չմիանանք ամենքս Անոր անձին մէջ եւ կազմենք մէկ Եկեղեցի եւ մէկ Բրիտոստնէութիւն: Համոզուելու համար գանոնք յիշեց, որ առաջ Յոյներուն պայմանները 9 հաս էին, այժմ իր ջանքերով իջած էին մէկի, չէ՞ր արժեք, որ գէթ մէկ կէտի մէջ ալ մենք տեղի տայինք: Բաց աստի, կը շարունակէր Կաթողիկոսը, իր կարծիքով «ԵՐԿՈՒ ԲՆՈՒԹԻՒՆ» բանաձեւը կարելի է ընդունիլ առանց ԵՐԿՈՒ ԲՐԻՍՏՈՍՆԵՐ գաւանդու, ինչպէս կ'ընեն Նեստորականները, զորս թէ՛ մենք եւ թէ՛ Յոյներ կը նզովենք: Հետեւաբար, չի խորհրդ, որ Հայ եկեղեցին որեւէ ձեւով վտանգուի այս միակ գիղղութեամբ: Ու կ'եզրակացնէ Կաթողիկոսը՝ գանոնք խթանելու համար, որ անպատճառ գան ժողովին. «Յոյները մեզի առաջարկ մը ըրած են, քաջութիւն չէ խոյս տալը. կա՛մ հաւանիլ, կա՛մ հաւանեցնել. եթէ անոնք, երկու բնութիւն ըսելով, կը սխալին, գոցենք անոնց բերանը, ցոյց տալով սխալը, որպէսզի ետ դառնան, եւ ընդունինք ու շահինք գանոնք»: Գործնական պարագայ մըն ալ աւելորդ չի նկատեր յիշել. «Մեր ազգէն շատ Բրիտոստեաններ կան անոնց իշխանութեան ներքեւ, որոնք նեղութիւն կը կրեն այս անհամաձայնութեան ու բաժանման պատճառով: Լաւ գործ մը ըրած կ'ըլլանք, եթէ Յոյներուն հետ հասկացողութեան գալով՝ օգնենք նաեւ մերիններուն»:

Երկրորդ այս նամակը ծառայեց իր նպատակին: Հայաստանի Եպիսկոպոսներէն գլխաւորները յանձն առին ընդառաջել Կաթողիկոսի այս երկրորդ հրաւերին, եւ հետզհետէ սկսան հասնիլ Հռոմկայի Հայրապետանոցը 1179ի գարնան: Զատիկը միասին տօնեցին եւ անմիջապէս ձեռնարկեցին ժողովի: Թէեւ ներկաներուն թիւը մեծ չէր, ընդամէնը 33 հոգի, սակայն գրեթէ ամէն շրջաններէ ներկայացուցիչներ կային:

Հիւսիս-Արեւելեան Հայաստանէն ներկայ են. Աղուանից Ստեփանոս Կաթողիկոսը, Անիի Բարսեղ Արքեպիսկոպոսը, ինչպէս նաեւ

Սիւնեաց մեծ նահանգի, Թիֆլիզի, Դուինի, Նախիջեւանի եւ Կարսի Եպիսկոպոսները: Կեդրոնական Հայաստանէն՝ Բզնունեաց, Մանազկերտի, Տարօնի եւ Մոփաց Եպիսկոպոսները, Պարսկահայաստանէն՝ Հեր եւ Զարեւանդ գաւառի եւ Սալմաստի Եպիսկոպոսները, Փոքր Հայքէն (Գոնիայի սուլթանութենէն)՝ Կեսարիոյ, Մալաթիոյ, Սեբաստիոյ եւ Նէփեսարիոյ (Նիքսարի) Եպիսկոպոսները: Ընդամէնը 17 բարձրաստիճան հոգեւորականներ:

Իսկ Կիլիկեան շրջանէն ներկայ են. Անտիօքի Արքեպիսկոպոս Գր. Ապիրատ, Տարսուսի Արքեպիսկոպոս Ներսէս Լամբրոնացի, ինչպէս նաեւ Անարգաբայի, Սելեւկիոյ, Սամոսատի, Մամեստիոյ, Կիպրոսի, Աշմուշատի եւ Կոկիսոսի Եպիսկոպոսները: Ասոնց հետ պէտք է հաշուել նաեւ Կիլիկիոյ դրացնութեան մէջ եղող Մուրիոյ եւ Միջագետքի հետեւեալ Եպիսկոպոսները. Սահակ Երուսաղէմի, Ստեփանոս Եգեսիոյ, ինչպէս նաեւ Թէոդոսուպոլսի, Նփրկերտի, Ապտիմիոյ եւ Լաւոդիկէի Եպիսկոպոսները: Ընդամէնը՝ 15 հոգի: Ինչպէս բացայայտ կը տեսնուի՝ Կաթողիկոսը փափկանկատուով չէ ուզած շատցնել կիլիկեցի Եպիսկոպոսներու թիւը, ինչ որ դժուար չէր իրեն համար, եւ ոչ-կիլիկեացիները մեծամասնութեան մէջ ձգած է: Այս ժողովին ներկայ եղած են նաեւ «Հայեր (վանահայեր), վարդապետներ, քահանաներ եւ կրօնաւորներ», ինչպէս նաեւ Ասորոց Կաթողիկոսէն զրկուած «վարդապետներ եւ իմաստուն մարդիկ»: Իր բացակայութեամբ կը փայլի Գր. Տուտէորդին, որ Եպիսկոպոսական աստիճան ալ ունէր, եւ դիտմամբ չէ եկած եւ հաւանաբար արգելք եղած, որ վարդապետներ գան Հաղբատէն եւ Սանահինէն: Բացակայ են նաեւ Հայ իշխաններ, քանի որ Հռոմկլան Հալէպի ամիրաներու իշխանութեան ներքեւ էր:

Ժողովը, յետ երկար խորհրդակցութեան, գրեթէ նոյնիմաստ երկու պաշտօնագրեր պատրաստեց, իբրեւ պատասխաններ Մանուէլ կայսեր եւ Կ. Պոլսոյ Պատրիարքական Սինոդին, քանի որ Պատրիարքը վախճանած էր: Կայսեր ուղղեալ նամակին մէջ կ'ըսուի.

«Ուղղափառութեան միշտ ձայնակից եղած է մեր մէջ եղող Աստուծոյ եկեղեցին (այսինքն՝ Հայց. եկեղեցին): Ոչ թէ նոր մտաւ ուղղափառութիւնը մեր մէջ, այլ մեր արդէն իսկ ունեցած ուղղափառութիւնն է, որ նոյնութեամբ յայտնուեցաւ ձեզի»

այս օրերս, ինչպէս կայսրը իր նամակին մէջ հաստատած էր:

Ապա երկարօրէն կը բացատրեն Հայ եկեղեցիին դաւանութիւնը «վասն անիմանայի Միոնիթեան Բանին»: Կը մերժեն ամէն տեսութիւն, որ «Մէջ Տէր Յիսուսը կը բաժնեն ԵՐԿՈՒԹԻ» եւ Անոր միաւորութիւնը կը ջնջեն: Սուրբ Գիրքէն եւ եկեղեցական Հայրերէն վկայութիւններ կը բերեն հաստատելու համար «զՄիոնիթիւն անճառ խառնման Բանին եւ Մարմնոյն», «երկու միացեալներու վրայ»: Երբեք «Երկու բնութիւն» բանաձեւը չեն գործածեր, ըստ Օրմանեանի, Յովհաննէս Իմաստասէր Կաթողիկոսի (†728) Հաւատոյ ճառը կը ղրկեն կայսեր, որ գիտնայ, թէ ուղղափառութիւնը Հայոց մէջ Հին Հայրերէն կուգայ: Իսկ Յունաց դաւանութեան մասին ալ կ'ըսեն. «Ժողովս կարգաց զայն եւ սուրբ Հայրերուն համաձայն գտնուեցանք»:

Մինողին գրուած նամակին մէջ յատկանշանական է հետեւեալ բացատրութիւնը. «Սոստոլանիմք համաձայն ձեզ՝ ի Քրիստոս անճառ միութիւնն երկու բնութեան տեսութիւնն», զոր հետեւեալ ձեւով կը մեկնարանէ Օրմանեան.

«Հայոց եկեղեցին ԵՐԿՈՒ ԲՆՈՒԹԻԻՆ ըսելէ կը խորշի... զի ԵՐԿՈՒ ըսելը ՉԱՏ-ՉԱՏ ըմբռնելու իմաստը կուտայ: Սակայն ոչ բնութիւնները շփոթած եւ ոչ մին կամ միւսը ոչնչացած կ'իմանայ, այլ միայն կը պնդէ, թէ աստուածային ու մարդկային բնութիւններն, կամքերն ու ներգործութիւններն՝ միշտ ՄԻԱԻՈՐԵԱԼ եւ ՄԻԱՑԵԱԼ կերպով պիտի ըմբռնուին, որպէս զի նեստորական բաժանման գաղափարը հեռացուի: Այդ կէտը բացատրուած էր Ենոբազիին առաջին գրութենէն սկսելով (§ 951), եւ Հայրերուն ծրագիրն էր միութիւնը նուիրագործել ՄԻՏ-ՔԵՐՈՒ ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹԵԱՆԸ ՎՐԱՅ, որ Յոյները ԵՐԿՈՒ ԲՆՈՒԹԻԻՆ ըսեն՝ Հայեր զիրենք նեստորական չկարծեն, եւ Հայեր ՄԻ ԲՆՈՒԹԻԻՆ ըսեն եւ Յոյներ զիրենք Եւտիքեան չկարծեն ... եւ իրար չհալածեն եւ չբռնադատեն: Մանուէլ կայսրը այս միտքերը ԸՆԴՈՒՆԵԼՈՎ, ԲԱՆԱՅԵՆ ԱԼ ԿԸ ՊԱՀԱՆՁԷՐ, բայց Հռոմկլայի ժողովը ՄԻՏ-ՔԵՐՈՒՆ ՀԱԻԱՆՈՒԹԻՆԸ ՀԱՍՏԱՏԵԾ. իսկ յունական ԲԱՆԱՅԵՆԸ ՉԸՆԴՈՒՆԵԾ, Քաղկեդոնի ժողովը չճանչցաւ, Լեւոնի տոմարին չհաւա-

նեցաւ: ... Այդ միջին ճամբան Հայաստանէ եկող... եպիսկոպոսներուն կարծիքն էր, որ տիրեց, եւ Կաթողիկոսը կը յուսար անշուշտ այդ չափով կայսրն ալ համոզել, որ աւելին չպահանջէ» (Ազգ. Հտժ. 1014):

Սակայն Հռոմկլայի ժողովին պատրաստած թուղթերուն Կ. Պոլիս առաջուր դժուարացաւ պատերազմներու պատճառով, եւ նախ քան անոնց Բիզանդիոն հասնիլը Մանուէլ կայսրը մեռաւ 1180ին: Այս կերպով որեւէ գործնական արդիւնքի չյանգեցան աւելի քան 15 տարիներէ ի վեր շարունակուող միարարական այս ճիգերը եւ բազմաթիւ թղթակցութիւնները: Միութենական այս հարցին կարեւորութիւնը նկատի ունենալով՝ կրկին խօսքը տանք Օրմանեանին, որ շարունակէ իր տեսութիւնները այս մասին.

«Որեւէ ձեռնարկի յաջողութեան համար պէտք է կանխաւ հաստատուն կռուան մը ունենալ, եւ անկեղծապէս երկու կողմէն նոյն ուղղութեամբ գործել, ինչ որ կը պակասը մինչեւ Հիմա բացատրուած ձեռնարկին մէջ: Հայեր եւ Յոյներ բոլորովին ՏԱՐԲԵՐ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ունէին միութեան մասին... , բայց աւելորդ չէ անգամ մըն ալ շեշտել, քանի որ ՀԻՄՆԱԿԱՆ եւ ԿԱՐԵՒՈՐ ԽՆԴԻՐԻ մը շուրջ կը դառնայ խօսքը: Հայեր, դաւանական պարտաւորիչ կէտերը քիչցնելով եւ վարդապետական շատ մը կէտեր երկրորդական համարելով, իրենց համոզմամբ կրնային եկեղեցական ՄԻՈՒԹԻԻՆ եւ ՀՈԳԵՒՈՐ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՆ ՀԱՍՏԱՏԵԼ բոլոր Քրիստոնէից հետ, որ այդ էական կէտերու մէջ կը միանային. եւ այդ կէտերն էին երեք առաջին սուրբ ժողովներով հաստատուած ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ, ՄԱՐԴԵՂՈՒԹԵԱՆ եւ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ խորհուրդները: Քրիստոսը՝ մարդացեալ Բան, Աստուած եւ մարդ, եւ մարդկային փրկութեան համար մարմնացեալ ընդունելէն ետքը, Հայուն համար երկրորդական էր փնտռել, թէ՛ միաւորութիւնը ԱՆՁԻ՞Ն վրայ եղաւ, թէ՛ ԲՆՈՒԹԵԱՆ: Իրենք աւելի ապահով եւ նախնի հարց գործածած բացատրութեանց համաձայն կ'ըմբռնէին՝ ՄԻԱԻՈՐԵԱԼ ՄԻ ԲՆՈՒԹԻՆ Բանաձեւէն չհեռանալ: Բայց եթէ ուրիշներ նոյն միտքով ԵՐԿՈՒ ԲՆՈՒԹԻՆ ձեւը գործածէին, կը զիջանէին անոնց չհակառակիլ.

միայն թէ անոնք ալ իրենց չհակառակէին: Այդ սկզբունքին
յայտնի եւ պայծառ բացատրութիւններն են Հռոմկլայի ժողո-
վին երկու պաշտօնագիրները... Բովանդակ եղածը Հայադաւա-
նութեան թոյլատու դրութեան կատարեալ յայտարարութիւնն
է: Միայն զանց կ'ընեն Քաղկեդոնի եւ քաղկեդոնիկներու դէմ
նզովքները եւ Հերքումները... Այն վայրկեանէն, որ Կայսրն ու
Պատրիարքը եւ Սինոդոսը պաշտօնապէս կը յայտարարէին, թէ
սխալ կարծիք ունեցեր են Հայոց վրայ, եւ բարձրաբարբառ
Կ'ԸՆԴՈՒՆԷԻՆ ԱՆՈՆՑ ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹԻՒՆԸ ոչ իբրեւ
մոլորութենէ դառնալու, այլ ԿԱՆԽԱՊԵՍ ՈՒՂՂԱՓԱՌ Եղած
ԸՄԱՂու պայմանով, Հայերուն ալ դժուար չէր նոյն վկայու-
թիւնը տալ Յոյներուն համար, եւ նզովքանութիւնները դադա-
րեցնել (Ազգ. հտժ. 1016-)*:

Յոյներու Հետ միարարական Հարցը փակելէ առաջ կ'արժէ Համա-
ռօտ կերպով ներկայացնել Օրմանեանի տեսակէտները այս Հարցով
ցարդ զբաղած երեք անձնաւորութիւններու մասին, տեսնելու համար
այն աստիճանականութիւնը, որով ընթացաւ գործը եւ իր վերջաւորու-
թեան բերուեցաւ:

Ասոնց առաջինն էր Ներսէս Ենորհային, որ սկիզբը դրաւ այս
շարժումին: Ենորհայի բարձր սկզբունքներէ եւ ազնիւ տրամադրու-
թիւններէ առաջնորդուած անձնաւորութիւն մըն էր, որ կը տենչար
Քրիստոնէական եկեղեցին միացեալ տեսնել յանուն աւետարանական
եւ սիրոյ սկզբունքներուն: Ան ամուր մնաց իր եկեղեցիի դաւանու-
թեան եւ օրէնքներուն վրայ:

Երկրորդն է Գրիգոր Տղայ Կաթողիկոսը, որ քայլ մը աւելի առաջ
գնաց իր Հօրեղորմէն: Նա յանձն կ'առնէր ինչիւնչ կէտերու մէջ տեղի
տալ Յոյներուն եւ օրինաւոր պայմաններու սահմաններուն մէջ զոհո-
ղութիւններ ալ ընել, որպէսզի ցանկալի Հաշտութիւնը իրագործուի:
Գրիգոր Տղայ, Քրիստոնէական միութեան ինքնին ազնիւ գործ մը
ԸՄԱՂուն հաւատալով Հանդերձ, անոր մէջ խառնեց նաեւ ազգային
գործնական ակնկալութիւնները, այսինքն՝ Բիւզանդական կայսրու-
թեան քաղաքական ոյժէն օգտուելի՝ աւելի զօրացնելու համար Կիլի-

* Վերեւ կատարուած բոլոր գլխազրուածները մեր կողմէ եղած են (Շ. Գ.):

կեան Հայ իշխանապետութիւնը: Միաժամանակ ապահովել Բիւզան-
դական իշխանութեան հովանիին ներքեւ ապրող բազմահազար Հայու-
թեան համար խաղաղ կեցութիւն մը, զերծ ամէն տեսակ հալածանք-
ներէ, վէճերէ եւ քննադատութիւններէ:

Իսկ երրորդ անձն է Ներսէս Լամբրոնացին, որ աւելի առաջ գնաց
իր ազգական, մեծաւոր եւ զինք եպս. ձեռնագրող Գրիգոր Տղայ
Կաթողիկոսէն: Օրմանեանի բառերով՝

«Մօտէն ուսումնասիրելով օտար Քրիստոնէից մէջ տիրող եկեղե-
ցական (աւելի բարեկարգ) կարգ ու սարքը, որ քաղաքական (եւ
ուսումնական) աւելի լաւ վիճակի արդիւնք էր, եւ քաղաքատելով
զանոնք Հայերու մէջ տիրող անկարգութեանց (եւ անշքութեանց)
Հետ, որոնք Հետեւանքն էին քաղաքական աննախանձելի, անապահով
եւ արկածալից կացութեան, կը սկսի սիրահարիլ ուրիշներու մօտ
տեսածին, եւ Հետեւելով իր երիտասարդական տարիքին (եւ յառաջ-
գիմատէր ոգիին) եւ իր խառնուածքին, որ բուռն էր եւ յանդուգն, չի
վարանիր զիջողութեան միջոցներու դիմելէ եւ Համարձակ յայտարար-
ութիւններ ընելէ, որով առիթ կ'ընծայէ դիմադրութեանց եւ դժտու-
թեանց պահպանողականներու կողմէ»*:

Ինչպէս տեսանք, Արեւելեան Վրդ.ներու ամենէն պահպանողա-
կան եւ մոլեռանդը՝ Գրիգոր ՏՈՒՏԵՈՐԴԻՆ, ոչ միայն չէր եկած
Հռոմկլայի ժողովին, այլ նաեւ երկրորդ դիտողագիր մը գրած ԸՄԱՂ
կը թուի Գրիգոր Կաթողիկոսին, ի միջի այլոց ըսելու համար, որ
«Եկեղեցիին գլուխը եւ առաջնորդը իրաւունք չունի մինչեւ իսկ ժո-
ղով գումարելու, զբաղուելու համար աստուածային Հարցերու քննար-
կութեան նպատակով»: Ասոնք, ըսել կ'ուզէ Տուտէորդին, անփոփոխե-
լի եւ վերջնական ձեւ դատած աստուածաբանական ճշմարտութիւններ
են, զորս ոչ միայն կարելի չէ փոփոխութեանց ենթարկել, այլ մինչեւ
իսկ՝ քննութեան առարկայ դարձնել: Այս դիտողագրին տրուած պա-
տասխանը, յանուն Գր. Տղայ Կաթողիկոսի, խիստ է եւ կծու, եւ
երբեմն «ալ երգիծական դարձուածքներով լեցուն», ինչպէս է, արդա-
րեւ, Լամբրոնացիին առ Լեւոն գրած նամակին ոճը, ինչ որ ենթադրելի
կուտայ, որ Լամբրոնացին խմբագրած է նաեւ այս նամակը:

* Գիծերու մէջ առնուածները մեր կողմէ եղած յաւելումներ են (Շ. Գ.):

Իսկ միարարական այս գործը ի գլուխ հանելու նպատակով, Լամբրոնացիի մեծ յոյսերով Բիւզանդիոն երթալը, Հռոմկալի ժողովէն շուրջ քսան տարիներ յետոյ, եւ պատրանաթափ վերադառնալը պատմած ենք Լամբրոնացիի ընծայուած գլուխին մէջ: Անկէ յետոյ Հայ եկեղեցին անգամ մըն ալ չփորձեց Յունաց հետ միանալու հարցը ձեռք առնել, համոզուած ըլլալով, որ Յունաց յետին նպատակն էր Հայ եկեղեցին իրենց հպատակեցնել՝ նման Վրաց եկեղեցիին: Եւ Յոյներ շարունակեցին իրենց բռնութիւնները եւ հալածանքները Հայ եկեղեցիի գաւակներուն հանդէպ, որոնցմէ տասնեակ հազարներ կ'ապրէին Բիւզանդական կայսրութեան սահմաններուն մէջ: Մեզմէ անոնք, որ տեղի տուին ու քաղկեդոնական եղան՝ իսպառ կորսուեցան կայսրութեան յունախօս խառնարանին մէջ: Հայ իշխաններու ակնկալութիւններն ալ վերջ գտան յունական հովանաւորութեամբ զօրանալու մասին, եւ իրենց մտադրութիւնները դարձուցին Լատինաց կողմը, թէ իսկ ըլլար այդ՝ «աւելի լպրծուն եւ աւելի վտանգաւոր գետնի վրայ, եւ աւելի ազիտաւոր հետեւանքներով»:

3. ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ ՀՌՈՄԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԼԵՏ: Հայ ժողովուրդը եւ եկեղեցին Հռովմէական եկեղեցիի հետ ուղղակի եւ գործնական շփում եւ յարաբերութիւններ սկսան մշակել Խաչակիրներու Արեւելք հաստատելէն յետոյ ժԱ դարու վերջերէն սկսեալ Կիլիկիոյ մէջ: Անկէ առաջ եղած պատմութիւնները եւ թղթակցութիւնները առհասարակ կեղակարծ կը նկատուին. ամէն պարագային զուրկ են պատմական ստոյգ տուեալներէ եւ նշանակութենէ: Հետեւաբար չենք ուզեր անդրադառնալ Լուսաւորիչ եւ Տրդատ Հռովմ գացած ըլլալու առասպելին, ոչ ալ՝ Գրիգոր Վկայասէրի Հռովմ գացած կամ պապերէն մէկին հետ թղթակցած ըլլալու վիճելի հարցին: Օրմանեան կը վկայէ. «Բոլոր ժամանակակիցներ համամիտ են հաստատելու, թէ մինչեւ 1080, Արեւմուտք եւ Լատինք եւ Գապութիւն ոչ մի յարաբերութիւն չունէին Արեւելքի եւ Հայոց հետ» (ԱԶԳ. հտծ. 898):

Խաչակիրներ 1095ի անյաջող առաջին փորձէն յետոյ, 1096ին չորս լաւ կազմակերպուած բանակներով նախ կանգ առին Բիւզանդիոնի առջեւ, իրենց ակնկալած օգնութիւնը չգտնելով Բիւզանդիոնի կայսրէն, ճամբայ ելան եւ կտրելէ յետոյ ամբողջ Փոքր Ասիան, Կիլիկիան, Սիւրիան եւ Լիբանանը երեք տարիներու տառապագին ու ար-

կածալից եւ պատերազմներով լեցուն ճամբորդութենէ յետոյ, 1099ին գրաւեցին Երուսաղէմը եւ թագաւորութիւն մը հիմնեցին այնտեղ. ինչպէս նաեւ երեք իշխանապետութիւններ (կոմսութիւններ) հաստատեցին Լիբանանի ՏՐԻՊՈՒՍՈՅ (Թրապուլուս), Սիւրիոյ ԱՆՏԻՈՒՔԻ (Անթաքիա) եւ Հայոց Միջագետքի ԵՂԵՍՈՒՅ (Ուրֆա) մէջ:

ԺԱ դարու կէսէն յետոյ, ինչպէս տեսանք, Հայեր, նեղուելով Սելճուք թուրքերու արշաւանքներէն, գաղթած էին դէպի հարաւարեւմուտք եւ չորս նորելուկ հայկական իշխանութիւններ հաստատուած էին ի Կիլիկիա եւ շրջակայքը: Ռուբինեանք տիրած էին գրեթէ ամբողջ լեռնային Կիլիկիոյ: Լամբրոնի բերդը եւ շրջակայքը գրաւած էին Օշինեան իշխանները: Մարաշի եւ Ատրեւսմանի շրջանին մէջ կ'իշխէր Գող Վասիլ կոչուած Հայ իշխանը՝ իրեն կեդրոն ունենալով Քեսունը, այժմեան Գեհեսին: Իսկ Եդեսիան եւ շրջակայքը կը գտնուէր Թորոս Կիւրապաղատ Հայ իշխանին ձեռքը: Ասոնք ուրախութեամբ դիմաւորեցին Խաչակիրները՝ խորհելով, որ պատերազմի մէջ լաւ մարզուած Քրիստոնեայ դաշնակիցներ գտած են: Իսկ Խաչակիրներ ալ աւելի քան տարի մը թշնամի հողերէ անցնելէ, պայքարներէ եւ բազմաթիւ զոհեր տալէ յետոյ երբ Քրիստոնեայ եւ բարեկամներէ եւ բազմաթիւ զոհեր տալէ յետոյ երբ Քրիստոնեայ եւ բարեկամ այս շրջանակները մտան, քչիկ մը շունչ առին եւ մեծապէս օգտուեցան: Ռուբէնի որդին Կոստանդին օգտակար եղաւ Խաչակիրներուն եւ Տաւրոս լեռները ապահով անցուց: Խաչակիրներ ի նշան շնորհակալութեան Կոմսութեան տիրոջ տուին անոր, որ թագաւորութենէն յետոյ բարձրագոյն պետական պատիւն էր: Հայեր օգնեցին Խաչակիրներուն Անտիոքը գրաւելուն եւ այնտեղ հաստատուելուն:

Անոնցմէ ճիւղ մը մինչեւ Եդեսիա երկարեցաւ. Թորոս իշխանը օգնեց եւ հիւրասիրեց զանոնք: Անոնք սակայն դաւաճանեցին եւ Հայ իշխանը սպաննելով՝ տիրեցին անոր իշխանապետութեան: Այստեղ անոնք դրսեւորեցին իրենց իսկական նպատակը, որ տակաւ առ տակաւ աւելի շեշտուեցաւ, որ էր տիրել Արեւելքին՝ առանց միջոցներու մէջ խտրութիւն դնելու: Երբ ամբողջ տեղաւորուեցան, ըստ ժամանակակից Ուուհայեցի պատմիչին «ՁՀայ եւ զՀռոմ (Յոյն), զԱսորի եւ զՎրացի մերժեցին» Քրիստոնեայ նկատել եւ ամէն միջոցներու դիմեցին զանոնք դաւանափոխ դարձնելու:

Հայոց եկեղեցին ուղղակի եւ պաշտօնապէս Հռովմէական եկեղե-

ցելի հետ կապ ու յարաբերութիւն ստեղծեց Գրիգոր Պահլաւունի Կաթողիկոսով: 1141ին Լատիններ եկեղեցական ժողով մը գումարեցին Անտիոքի մէջ, իրենց ներքին խնդիրները հարթելու համար: Այս ժողովին իբրեւ պատուոյ հիւր հրաւիրեցին Նաեւ Հայոց կաթողիկոսը, որ իր գիտուն եւ օգնական եղբոր՝ Ներսէս Ծնորհալիի հետ ներկայ եղաւ:

Ժողովին աւարտումէն յետոյ նախագահ Կարտինալը յայտնեց, որ ինք Երուսաղէմ կ'երթայ եւ խնդրեց Հայոց կաթողիկոսէն, որ միասին երթան: Գրիգոր Պահլաւունի այս հրաւերն ալ ընդունեց եւ Ներսէսը ետ Հայրապետանոց զրկելէ յետոյ ինք Կարտինալին հետ Երուսաղէմ ուղեւորուեցաւ, ուր միասին տօնեցին 1142ի Զատիկը: Այստեղ ալ ժողով մը գումարեց Կարտինալը «ընդհանուր բակարգութեան համար»: Այստեղ ալ պատուոյ տեղ տրուեցան Հայոց կաթողիկոսին՝ իբրեւ «Մեծ Հայրապետ Հայոց, գլուխ եւ պետ ամենայն Եպիսկոպոսաց Կապաղովկացոց եւ Մարաց եւ Պարսից եւ երկաքանչիւր Հայաստանի, եւ գերագոյն Ռաբունապետ, որ Կաթողիկոսն անուանի»՝ ըստ ժամանակակից Լատին պատմիչի (ՉԱՄ. Գ. 53): Գրիգոր ալ իր եկեղեցիի տեսակէտները պարզեց՝ պաշտպանելով «Հայոց եկեղեցիի դաւանութիւնն ու կանոնները եւ սովորութիւնները»: Լատինները, ըստ Սամուէլ Անեցիի (1100-1180) «ճանչցան անոր խօսքերուն մէջ ստոյգ ճշմարտութիւնը, զոր պայծառ կերպով եւ կարգ ու կանոնով ու վարդապետական ճոխութեամբ կը խօսէր: Լատիններ ուրախացան ու զոհ մնացին, եւ աւելի սէր հաստատեցին Հայրապետին եւ մեր ազգին հետ»: Իսկ մեր եւ Լատինաց միջեւ եղած տարբերութիւններուն մասին խոստացաւ Կաթողիկոսը «ուղղել» զանոնք, եթէ հաստատուին, որ սխալ են: Այնպէս որ, երկու եկեղեցիներու մասին ընդհանուր գաղափար մը կազմելէ զատ ուրիշ ոչ մէկ գործնական քայլ առնուած է, եւ Գրիգոր Կաթողիկոս վերադարձած է Լատինաց համակրանքը շահելով իր ազնուական անձնաւորութեամբ եւ խոհական խօսքերով: Կարտինալը Հռոմ գաւառալէ յետոյ դրական տեղեկագիր տուած է Հայոց կաթողիկոսի մասին, որ օրուան Պապէն սիրոյ գիր եկաւ Գր. Պահլաւունիին՝ եկեղեցական ընծաներով միասին, որոնց մէջ է «գաւազան», որ լատինական կորագլուխ հովուական գաւազանը պիտի ըլլայ, որ Հայ եկեղեցին ցարգ կը գործածէ, եւ որ որոշապէս

Լատին եկեղեցիէն փոխառութիւն մըն է:

Գրիգոր ալ իր կարգին բարեկամական գիր մը գրեց եւ թանկագին ընծաներով Հռոմ դրկեց: Իր պատգամաւորները շուրջ մէկուկէս տարի թափառումներէ յետոյ ի վերջոյ 1145ին Եւգենէս Գ Պապին կը յանձնեն գիրը եւ ընծաները: Այնպէս որ, առաջին այս յարաբերութիւնները իրարու հանդէպ եղբայրական սիրոյ արտայայտութիւններէ անդին չեն անցած, եւ Գր. Պահլաւունի շարունակած է մնալ Հայ եկեղեցիի պատկառելի Հայրապետը՝ կապուած իր եկեղեցիի դաւանութեան, ծէսերուն եւ սովորութեանց:

Իր յաջորդը՝ Ներսէս Ծնորհալի, գրեթէ ոչ մէկ յարաբերութիւն ունեցաւ Լատինաց հետ: Անոր յաջորդը Գրիգոր Տղայ, յուսախաբ ըլլալով Յոյներէն, ուղեց յարաբերութիւն մշակել Հռոմի Պապին հետ եւ 1184ին նամակ մը գրեց Ղուկիոս Պապին: Հայոց Կաթողիկոսին նամակը չկայ մէջտեղ, կայ սակայն Պապին պատասխանը, գրուած նոյն տարին, ուր ըսուած է, թէ «այսուհետեւ սիրով եւ ճշմարիտ ոգով եւ սրտիւ՝ եկեղեցիս Հռոմայ տեսուէ է ձեր եւ ժողովրդոյ ոգով եւ սրտիւ՝ եկեղեցիս Հռոմայ տեսուէ է ձեր եւ ժողովրդոյ ձերոյ» (ՉԱՄ. Գ 144): Այս նամակին մէջ Հայոց յանձնարարուած են նաեւ ծիսական ինչինչ փոփոխութիւններ, օրինակ պատարագի բաժակին մէջ Չուր խառնել, ինչպէս իրենք կ'ընէն, Մնուեղը Դեկտ. 25ին տօնել եւլն.: Նամակին հետ զրկուած էր պալլիում (Լատինաց ձօտ մեր եմփորոնին համապատասխան եկեղեցական զգեստը) եւ եպիսկոպոսական խոյր, զոր մենք մինչեւ այդ թուականը չունէինք եւ չէինք գործածէր: Այս նամակով բացայայտօրէն կայ Լատինաց հետ միանալու եւ ծիսական գետնի վրայ ալ նոյնանալու առաջարկներ: Գրիգոր Տղայ անոնց ենթարկուեցա՞ւ թէ ոչ՝ յայտնի չէ:

Յաջորդ կաթողիկոսը, Գր. Բարապէժ, ընդհակառակը, Լատինաց հետ յարաբերութեանց, թղթակցութեանց եւ միութեան հակառակ դիրք բռնեց, որուն համար ալ պաշտօնազուրկ եղաւ Լեւոն իշխանապետին կողմէ, որ ի գին ամէն զոհողութեան կ'ուզէր ապահովել Լատինաց հովանաւորութիւնը եւ անոնցմէ թագադրուիլ:

1187ին Պապի ներկայացուցիչ Կարտինալը, որ եկած էր Լեւոնը թագադրելու, կը պահանջէր, որ Լեւոն եւ Հայ եկեղեցին միացած ըլլայ Հռոմի եկեղեցիին հետ, եւ ատոր արտաքին նշանները պիտի ըլլային ինչինչ կէտերու մէջ բացայայտ համաձայնութիւն, որոնք ի

վերջոյ կը յանգէին «Դաւանութեամբ եւ վարդապետութեամբ եւ հպատակութեամբ Հռոմի եկեղեցւոյն հետ յամենայնի միաբանել» (Ազգ. էջ 1535): Լեւոն, օրուան կաթողիկոսը՝ Գրիգոր Զ Ապիրատը, եւ եպիսկոպոսները ժողովի հրաւիրեց 1197ին Տարսուսի մէջ: Ժողովականներ, սակայն, որոնց մէջ չկան արեւելեան վրդ.ներ, «չհաւանեցան» ընթացք տալ Պապի նուիրակի առաջարկներուն: Լեւոն սակայն անհաստապէս յանձն կ'առնէր «կատարել ինքնակալ կայսեր (Գերմանցւոց) եւ մեծ Պապին առաջարկները»: Նուիրակը չգոհացաւ այս յանձնառութեամբ. իր նպատակն էր Հայոց եկեղեցին հպատակեցնել Պապին: Ի վերջոյ, Լեւոն յաջողեցաւ ժողովականներէն 12 եպսկ. համոզել, «որոնք Լեւոնի անձնական բարեկամութեամբ, անոր քաղաքական նպատակին օգնողներ էին», որպէսզի ընդունին Կարտինալի առաջարկները (Ազգ. էջ 1539):

Լատիններ չուզեցին աւելի խստապահանջ ըլլալ, տեսնելով, որ սկսուած գործը դժուարութեանց կը բախի, ուստի Լեւոն թագաւորեցաւ նախ Լատին ծէսով եւ ապա օծուեցաւ հայկականով: Այսպէսով, Լեւոն թագադրուեցաւ «ի հնազանդութիւն եկեղեցւոյն Հռոմայ եւ Օտարունին (կայսեր) Ալամանաց»:

Թագադրութեան հանգէսէն յետոյ «Լեւոն եւ [Գրիգոր] Ապիրատ մէկ-մէկ շնորհակալութեան գիրեր ուղղեցին Իննովիդինտիանոս Գ Պապին»: Ըստ Օրմանեանի՝ «երկուքին ալ խօսքերը քաղաքական միութեան եւ հպատակութեան շուրջը կը դառնան» (ԱԶԳ. էջ 1548):

Ուրեմն՝ Գր. Ապիրատի օրով «աճեցան եւ գորացան Արեւմուտքի հետ յարաբերութիւնները եւ հիմերը դրուեցան լատինասէր ընթացքի մը, որ փոքր ի շատէ ազդեց նոյնիսկ Հայ եկեղեցւոյ կացութեան վրայ», սակայն չի նկատուած ամբողջական Հռոմէադաւանութեան մէջ:

Լեւոն թագաւորի եւ Գր. Ապիրատի սկսած ըսնեք Հռոմի Աթոռին հպատակութեան ուղղութիւնը շարունակուեցաւ եւ աւելի շեշտուեցաւ յաջորդ կաթողիկոսներու եւ թագաւորներու օրով. մէկ կողմէն լատիններուն հետզհետէ գերակշռութիւն ստանալը Կիլիկիոյ եւ շրջակայքի մէջ, «միւս կողմէն ալ Հայոց մէջ միութեանական ձգտումներուն գորանալը, եւ Արեւմտեաններուն օգնութեամբ իրենց պետական եւ կենցաղական գործերը գորացնելու ճիգերը եւս քան զեւս քաջալերեցին քաղաքական կառավարութիւնը իր լատինասէր ընթացքին

մէջ»: Այնպէս որ, լեւոնի յաջորդ Հեթում Ա թագաւորը եւ օրուան կաթողիկոսը՝ Կոստանդին Ա Բարձրբերդցի, «կրնան իրաւամբ նկատուի Հայալատին մերձեցման գլխաւոր գործիչները, թէ՛ քաղաքական եւ թէ՛ եկեղեցական տեսակէտէ»:

Հեթում Աի եւ Կոստանդին Կաթողիկոսի հրաւերով եւ գլխաւորութեամբ 1243ին Սիսի մէջ ժողով մը գումարուեցաւ եւ 25 կանոններ սահմանուեցան, առհասարակ բարեկարգական բնոյթ կրող: Վերջին կանոնը «գիշողական» կը նկատուի Լատինաց, որով կ'որոշուէր գործադրել «Վերջին օծումը» հիւանդաց վրայ ազօթելու ատեն, ինչ որ սովորութիւն չէր եղած Հայոց մէջ, հակառակ Յովհ. Իմաստասէր Կաթողիկոսի եւս յանձնարարութեան: Իսկ այս շրջաններուն կաթողիկ եկեղեցւոյ մէջ ծնունդ առած Ս. Հոգիի «եւ յորդոյ» բխման կաթողիկոսի մէջ ծնունդ առած Ս. Հոգիի «եւ յորդոյ» բխման վարդապետութիւնը Յոյներ բացէ ի բաց մերժած են, իսկ Հեթում եւ Կոստանդին Ա Կաթողիկոսը «Սիսի մէջ գումարեցին Կիլիկիոյ մէջ գտնուող եւ զանազան դաւանութիւններէ եղող Քրիստոնեաները՝ Հայ, Յոյն, Ասորի, Վրացի եւ Լատին, բայց Համամտութիւն չզոյացաւ, եւ հարկ սեպեցին Արեւելք եղող վարդապետական կեդրոններուն եւ հռչակաւոր մեծ վարդապետներուն դիմել»: Հայ կաթողիկ հեղինակներ կը պնդեն, որ Հայեր ընդունեցին «եւ յորդոյ» յաւելուածը հանգանակի մէջ (ՁԱՄ. Գ. 236): Իսկ Օրմանեան կ'ըսէ. «երբեք ի Հօրէ եւ յՈրդոյ Բղխումը» չեն ընդունած Հայեր եւ հանգանակին մէջ չեն անցուցած (Ազգ. էջ 1645):

Լատիններու պահանջներուն գրեթէ վերջնական եւ ամբողջական համակերպութիւնը տեղի ունեցաւ Հեթում Բ. ի օրով (1288-1307): Հեթում մինչեւ իսկ Յրանչիսկեան կրօնաւոր եղաւ Յովհաննէս եղբայր անունով եւ մէջընդմէջ ապրեցաւ եւ գործեց երբեմն իբրեւ թագաւոր եւ երբեմն՝ իբրեւ կրօնաւոր: 1293ին կաթողիկոս ընտրել տուաւ իրեն գաղափարակից եւ «Լատինամիտ ուղղութեան եռանդուն քարոզիչ» Գրիգոր Է Անաւարդեցին: Երկուքը միասին ջանացին Հայ եկեղեցիի ծէսերը «յարմարիլ»՝ ըստ ծէսի Լատինաց:

Անաւարդեցի մտադիր էր ժողովով մը իր ծրագիրը կանոնականացնել, սակայն վաղահաս մահը արգելք եղաւ: Ուստի ժողովը հրաւիրեցին օրուան թագաւորը Լեւոն Գ եւ իր թագաւորահայրը Հեթում Բ: Երկուքն ալ համոզուած լատինամիտներ էին: Ժողովը գումարուեցաւ

Միսի մէջ 1307ին Մաղկազարդին: Ժողովի ներկաներուն թիւն ալ անորոշ է: Կ'ենթադրուի, որ 26 եպիսկոպոս եւ 30 վանահայրեր, վրդ.ներ եւ իշխաններ ներկայ եղած են: Ժողովը տեւած է մէկ օր: Նպատակն էր ՄԻՌՈՒԹԻՒՆ լատինաց հետ ոչ միայն ի հաւատս, այլ նաեւ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՏՕՆԵՐՈՒ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԷՋ: Երկու թագաւորներ նախապատրաստուած ծրագիրը ներկայացուցին եւ պահանջեցին ժողովականներէն, որ ընդունին եւ ստորագրեն զայն: Այս ժողովի ամենէն նկատելի պարագան այն է, որ նախագահող Կաթողիկոս չունեցաւ, քանի որ Անաւարզեցի վախճանած էր, եւ նորը դեռ չէր ընտրուած: Երկու թագաւորներն են, որ կը հրահրեն, կը կառավարեն եւ կ'առաջարկեն նախածրագրեալ կանոնները, զորս ներկաներ գրեթէ առանց առարկութեան կ'ընդունին: Օրմանեան կ'եզրակացնէ Միսի ժողովի մասին.

«Ուրեմն ոչ միայն «մեծագոյն» ժողով մը չէ (ինչպէս Լատին կաթողիկ հեղինակ մը կը յայտարարէ), այլ եւ ոչ օրինաւոր եւ վաւերական ժողով մըն է, եւ պարզապէս անգլուխ եւ անկանոն Համախմբութիւն մըն է, ուր թագաւորական ճշման եւ ազդեցութեան ներքեւ քանի մը ժամուան մէջ, պարզ Հանդիսական տօնախմբութեան ձեւով, առանց քննութեան եւ առանց վիճարանութեան Համակերպութիւն կը յայտնուի, որպէսզի ստորագրութեամբ մը ազատին եւ մեկնին, ետքէն ուղածնուն պէս վարուելու եւ վերաբերուելու Համար» (Ազգ. էջ 1791):

Կը շարունակէ Օրմանեան:

«Քանի մը Կիրիկեցի եպիսկոպոսներ, Հապճեպ գումարուած, առանց Կաթողիկոսի, քանի մը ժամուան մէջ որոշում կուտան: Հայոց եկեղեցւոյ եպիսկոպոսութեան մեծ կէսը ոչ կը հրահրուի եւ ոչ կը մասնակցի. ոչ ոք Միւնիքէն, ոչ ոք՝ Վասպուրականէն, ոչ ոք՝ Տարօնէն, եւ միայն չորս անշան ներկաներ (դուրսէն), որոնց երկուքն ալ ստորագրութիւն տալէ կը խուսափին» (Ազգ. հտժ. 1236):

Ժամանակակից Մովսէս Երզնկացի (1250-1323) Արեւելեան վարդապետներու տեսակէտներուն թարգման կը հանդիսանայ, երբ ձայն բարձրացուց եւ քննադատեց այս ժողովը իբրեւ ոչ օրինաւոր եւ «սուտ»: Կ'ըսէ այս վրդ.ը. «Պէտք էր ժողովի կանչել նաեւ ամբողջ

Հայաստանցի եպիսկոպոսները եւ վրդ.ները, որպէսզի յայտնի ըլլար, թէ ամէն ոք հաւառն էր ժողովի որոշումներուն»:

Ամէն պարագային այս ժողովէն յետոյ, մինչեւ Աթոռին Միսէն էջմիածին փոխադրուելը 1441ին, շարունակ եւ յարաճուն միտում կայ եւ գործնական քայլեր կ'առնուին Կիրիկեան նուիրապետութիւնը դաւանանքով եւ ծէսով Հռոմմէականին կապելու կամ անոր մէջ ընկղմելու: Նոյն ճամբէն քալեցին Լեւոն Գի յաջորդ Օշին թագաւորը եւ Անաւարզեցի յաջորդ Կոստանդին Գ Կեսարացի Կաթողիկոսը, որոնք գումարեցին Ատանայի ժողովը 1317ին: Ներկայ են Կաթողիկոսով միասին 18 եպիսկոպոսներ, որոնցմէ 10 հատը՝ Կիրիկիայէն, 2-3 հատը՝ փոքր Ասիայէն, 4-5 հատը՝ Հայաստանէն. կան նաեւ 7 վարդապետներ եւ 10 իշխաններ, ընդամէնը՝ 35 հոգի եւ «բազմութիւն քահանայից եւ կրօնաւորաց», որոնք սակայն աւելի դիտող են, քան մասնակից: Այս բոլորը կը ցուցնեն, որ, կ'ըսէ Օրմանեան, «Ատանայի ժողովը՝ ներկայից թիւով եւ կարեւորութեամբ, Սոս ժողովէն շատ ետեւ կը մնայ»: Յատկանշական է յիշել նաեւ, որ ժողովին ներկայ են նաեւ Դոմինիկեան Լատին վանականներ, զրկուած «Գերագոյն Պապէն Յովհաննէս 22րդէն»: Ժողովին նպատակն է վերստին Հաստատել Միսի ժողովի որոշումները:

Այս ժողովն ալ չի կրնար Հայ եկեղեցիի ժողով նկատուիլ, որովհետեւ «լատինամիտ կաթողիկոսին ու թագաւորին եւ տկարամիտ 17 եպիսկոպոսներուն կամքը շատ անզօր էր Հայոց. Ուղղափառ եկեղեցւոյն հազարամեայ անփոփոխ դաւանութիւնն այլայլել, եւ անոր հնաւանդ ծէսը խախտել: Ատանայի ժողովը քանի մը ժողովականներով հեղինակութիւն մը չէր կրնար ունենալ այդ մասին եւ չունեցաւ ալ»: (Ազգ. հտժ. 1257):

Լեւոն Մեծի յաջորդները՝ Հեթումեան գերդաստանի 9 թագաւորները, եղան կատարեալ կաթողիկներ: Ասոնց յաջորդեցին Լուսինեան գերդաստանի լատինազգի թագաւորները, որոնք ոչ միայն դաւանանքով, այլ նաեւ ծէսով կաթողիկ էին: Հայոց թագաւորութեան Լատինաց ձեռքն անցնելը աւելի արծարծեց պայքարը լատինամիտներու եւ Հայ եկեղեցիի աւանդական կարգաց եւ կանոնաց հաւատարիմ դատուողներու միջեւ, ինչ որ ողբերգական ու մահացու եղաւ տիրող իշխաններուն համար, որոնց վերջինը, Լեւոն Ե 1375ին անձնատուր

եղաւ Մեմլուքներուն, որոնք գրաւած էին ամբողջ Կիլիկիան, գերի տարուեցաւ Եգիպտոս. ազատուեցաւ 7 տարի յետոյ ու մեռաւ Փարիզի մէջ 1393ին:

Միս քաղաքը, Հայոց Հայրապետներու կեդրոնը, ինկաւ օտար տիրակալութեան ներքեւ: Կարգ ու կանոնը վերացաւ, եւ թագաւորութեան անկումէն յետոյ եկող 5-6 կաթողիկոսներ Աթուր իրարմէ յափշտակած էին՝ «նախորդներն սպաննել տալով եւ յաջողութիւնը դրամով գնելով»:

Այս շփոթ կացութիւնը օգտագործելով՝ Յրանչիսկեան քարոզիչներ, որոնք հինէն Հաստատուած էին ի Կիլիկիա եւ արքունիքին մէջ տիրապետող կրօնաւորներ էին, աւելի աշխուժացուցին իրենց քարոզչութիւնը Կիլիկիոյ մէջ:

Կաթողիկ եկեղեցիի Հետ միաբանական վերջին պաշտօնական փորձը կը կատարուի 1439ին Փլորենտիոյ ժողովով, որ գումարուած էր յատկապէս Յոյն եւ Հռոմէական եկեղեցիներու միութեան համար, որ թէեւ այդ ժողովով իրականացաւ, բայց գործնական արդիւնք չունեցաւ: Հայեր ալ ժողովի հրաւիրուած էին: Օրուան կաթողիկոսը նամակով մը պատասխանեց, որ ինք չէր կրնար գալ, ուստի նշանակեց 4 հոգեւորականներ իբրեւ ներկայացուցիչ. անոնք էին Հալէպի եւ Կաֆայի (Նրիմ) եպիսկոպոսները եւ ուրիշ երկու վրդ. Կաֆայէն: Այս քաղաքը կը գտնուէր ձեռնկալներու իշխանութեան ներքեւ եւ ունէր ծաղկեալ Հայ գաղութ մը, որ կ'աշխատէր սերտ եւ սիրալիր յարաբերութիւն մշակել ձեռնկալներուն հետ: Այս վերջինները դիւրացուցին պատգամաւորներու երթը՝ թէ՛ ճամբու ծախքերը հոգալով եւ թէ՛ անոնց ընկերակցելով երկու Լատին Յրանչիսկեան կրօնաւորներ՝ իբրեւ առաջնորդ: 7-8 ամիսներ յետոյ երբ Փլորենտիա (ներկայ Ֆլորանսը) կը Հասնին Հայ պատգամաւորները, ժողովը երկու ամիսներ առաջ վերջացուցած էր արդէն իր աշխատանքները: Ասոնց հասնելէն շուրջ երեք ամիսներ յետոյ օրուան Պապը՝ Եւգենէոս Դ, կոնդակ մը կը հանէ, որ ծանօթ է «Հրահանգ առ Հայս» անունով: Ուր կը հրահանգուի, որ Հայեր ընդունին Լատինաց սովորական բոլոր առաջարկները, զորս միշտ կրկնած են նման պարագաներուն. այսինքն՝ Երկու բնութիւն բանաձեւը եւ Քաղկեդոնի ժողովը, մինչեւ իսկ «Հռոմէ ճանչցուած բոլոր ժողովները»: Տօները Լատինաց Հետ աօնել,

Ա. Պատարագի բաժակին մէջ ջուր խառնել եւլն.: Այս կոնդակին մէջ կը Հաստատուի, որ

«Հայ պատգամաւորները, իրենց եւ Կաթողիկոսին եւ ամենայն Հայոց անունով այդ ամէն կէտերը Հաստատեցին, ընդունելով կամ մերժելով ինչ որ Հռոմայ եկեղեցին կ'ընդունի կամ կը մերժէ» (Ազգ. էջ 2084):

Հայ պատգամաւորները Պապին կոնդակը փոխանակ ուղղակի Միս՝ Կաթողիկոսին տանելու, բերին Կաֆա, կարծես տեղեկութիւն տալու քաղաքի ձեռնկալի մեծաւորներուն, որոնց կողմէ եւ որոնց տալու քաղաքի ձեռնկալի մեծաւորներուն, որոնց կողմէ եւ որոնց միջոցաւ գրեթէ զրկուած էին Փլորենտիա: Այս ժողովով վերջ կը գանէ Հայ եւ Լատին միաբանական պաշտօնական փորձերը առանց գործնական մեծ արդիւնքի, որովհետեւ Հայ եկեղեցին մնաց Հոն՝ ուր էր Պահլաւունիներէն առաջ եւ անոնց ատեն, բացի քանի մը ծիսական եւ կրօնական զգեստներու եւ սպասներու վերաբերեալ փոխառութիւններէ: Ասկէ յետոյ կը սկսի Լատին կամ Կաթողիկ քարոզչական գործունէութիւնը գէթ Հատուածներ որսալու Հայ հաւաքականութենէն: Այդ գործունէութիւնը, ինչպէս տեսնեք, Յրանչիսկեաններ կը կատարէին Կիլիկիոյ մէջ, իսկ բուն Հայաստանի մէջ գործի գլուխ անցած էին Դոմինիկեան կրօնաւորները:

Բարթոլոմէոս Բուրնիացի անունով Դոմինիկեան կրօնաւորը եպիսկոպոս կարգուած էր Պարսկաստանի Մարաղա քաղաքին, Ուրմիոյ լիճին հարաւ-արեւելեան կողմը, ԺԴ դարուն սկիզբները: Այստեղէն քարոզչական շարժումը թափանցեց Նախիջեւանի շրջանը, ուր Յովհ. Քոնեցի անունով Հայ վրդ.ը Բարթոլոմէոսի ուղեկանին մէջ ինկաւ եւ քանի մը համախոհներով 1330ին հիմնեց Հայ կաթողիկ միաբանութիւն մը, որ պատմութեան մէջ ծանօթ է ՄԻԱՐԱՐՆԵՐ, կամ լատինական բառով ՈՒՆԻԹՈՒՆԵՐ անունով, որոնք արդարեւ եռանդուն քարոզիչներ եղան՝ Հռոմէական դրութիւնը Հայոց մէջ տարածելու: Կաթողիկ համայնքներ կազմեցին եւ վանքեր ալ Հաստատեցին ի Հայաստան եւ Հայ գաղութներու մէջ, մինչեւ որ 1583ին ձուլուեցան Եւրոպացի Դոմինիկեաններուն մէջ, ինչպէս եղաւ ճակատագիրը Հայաստանէ դուրս կազմուած Հայ կաթողիկ համայնքներուն, որոնք ազի պէս Հալեցան օտար ազգերու մէջ: Ունիթոսներ ամէն ինչ լատինացնելու իրենց մոլուցքին մէջ աղարտեցին իրենց գործածած

Հայ լեզուն եւ Հայ ծէսը:

Ասոնց դէմ գինուեցան Արեւելեան վարդապետներ՝ Յովհ. Որոտնեցիի եւ Գր. Տաթևացիի գլխաւորութեամբ: Թէեւ չկրցան բոլորովին արմատախիլ ընել անոնց գործունէութիւնը Հայաստանէն, գէթ տկարացուցին անոնց եռանդին թափը, մինչեւ որ անոնք ինքնաբերաբար անցան պատմութեան՝ իրենց ետին ձգելով Հայ կաթողիկէ կղզեակներ:

Չենք ուզեր անդրադառնալ Հատիններու եւ լատինամիտ հայերու անջատողական երկար գործունէութեան, պայքարներուն, միաբանական ձեռնարկներու, 18րդ եւ 19րդ դարերուն, յատկապէս Իսթանպուլի մէջ, երբ ի վերջոյ յաջողեցան ունենալ, 1742ին, պապական նուիրագործումով իրենց Պատրիարք-Կաթողիկոսը, իսկ 1830ին, իբրեւ անջատ համայնք, պաշտօնապէս ճանչցուեցան Օսմանեան պետութենէն «Բոթալիք միլլէթի» ընդհանուր անունով, որուն մէջ կը մտնէին ամենազգի կաթողիկէները անխտիր:

4. ԱԹՈՌԻ ՓՈՒՍԱԴՐՈՒԹԻՒՆԸ: Կիլիկիոյ Հայ թագաւորութեան քաղաքական անկումին յաջորդեց Կիլիկիա փոխադրուած Հայոց Հայրապետութեան բարոյական անկումը: Կաթողիկոսութիւնը գրեթէ ամբողջութեամբ իր տիրակալութեան ներքեւ առած էր Աթոռը: Կարգապահութիւնը թուլցած եւ զեղծումները շատցած էին:

«Հայոց եկեղեցին ամենամեծ տաղնապի եւ դժուարակեցիկ շփոթութեանց մէջ կը գտնուէր ժՅ դարու առաջին կէսին... Հայոց կաթողիկոսութեան Աթոռը զօրութենէ եւ պայծառութենէ ինկած էր» (Օրմանեան, ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ, գլխ. ԺԶ):

ԺԴ եւ ԺԵ դարերուն Արեւելեան վրդ.ներու գործունէութեան կեդրոնը Հիւսիսային Հայաստանէն սահած էր դէպի Արեւելեան-Հարաւային Հայաստան, Սիւնեաց եւ Վասպուրական մեծ նահանգները: Ասոնք, տեսնելով Սիսի Աթոռին հետզհետէ քայքայուող կացութիւնը, մանաւանդ ազատագրելու համար Հայոց Հայրապետութիւնը կաթողիկոսութեան ազդեցութենէն, որոշեցին դիմել արմատական միջոցի, այսինքն՝ Աթոռը փոխադրել իր պատմական կեդրոնը՝ Էջմիածին: Ուստի օրուան կաթողիկոսը՝ Գր. Թ Մուսարէզեանց, Արեւելեան վրդ.ներու կողմէ գրաւորապէս հրաւիրուեցաւ գալ Էջմիածին: Մուսարէզեանց յանձն չառաւ գալ (ՁԱՄ. Գ 486): Այն ատեն Արեւելեաններ ազատ

զգացին իրենց մտադրութիւնը իրագործելու յատուկ ժողովով մը: Այս միջոցներուն Արեւելեան վրդ.ներու կեդրոնն է Տաթևի վանքը, Սիւնեաց աշխարհի մէջ: Աթոռի փոխադրութեան գործի վրայ գտնուողները առ հասարակ այս վանքի աշակերտներն էին, հետեւաբար իրենց մէջ բարձրագոյն հեղինակութիւն ունեցողը պիտի ըլլալ Տաթևի վանահայրը, որ այն օրերուն Յովհաննէս Հերմոնեցի մեծ վրդ.ն էր: Ուստի իրեն ինկաւ պարտականութիւնը ամէն կողմ շրջաբերական հրաւիրագրներ դրկելու, 1441ի սկիզբները, «փութանակի եւ առանց յապաղանաց գալ եպիսկոպոսօք եւ վարդապետօք» ժողովի մը, որ տեղի պիտի ունենար նոյն տարին Չատկէն յետոյ, Էջմիածնի մէջ:

Ըստ ժամանակակից պատմիչի եւ Աթոռի փոխադրութեան ամենէն եռանդուն գործիչի՝ [Թովմա Մեծոփեցւոյ] վկայութեան, ներկաներուն թիւը աւելի քան 300 էր, թէեւ ուրիշներ 700ի կը բարձրացնեն: Այս ժողովին ներկայ են Հայ եկեղեցիի չորս մեծ աթոռներու առաջնորդները, որոնք հին կանոնով «Կաթողիկոսընտիր» ճանչցուած էին. անոնք են՝ Գրիգոր ԱՐՏԱՁԻ, Գրիգոր ՀԱՂԱՍԻ, Եմաւոն ՏԱԹԵՒԻ եւ Յովհաննէս ԲՋՆԻԻ: Ներկայ են նաեւ Սիւնեաց մեծ նահանգէն Յովհ. Հերմոնեցի մեծ վարդապետը եւ Ստեփանոս Սիւնեաց արքեպիսկոպոսը 5 ծանօթ վրդ.ներով եւ Ազարիա Աղուանից Կաթողիկոսով: Այրարատէն կամ Հայոց միջնաշխարհէն՝ Գաբրիէլ՝ Վաղարշապատի եպ.ը, 7 այլ թեմակալ եպիսկոպոսներով եւ վանահայրերով: Վասպուրականէն՝ Թովմա Մեծոփեցի եռանդուն գործիչը 10-15 եպիսկոպոսներով ու վրդ.ներով: Ուրիշներ ալ հեռաւորութեան կամ քաղաքական արգելիչ պատճառներով թէեւ չէին կրցած գալ, բայց հաւանութիւն յայտնած էին գիրով: Այս կարգէն էին Տարօնի եպիսկոպոսները եւ վրդ.ները, գլխաւորութեամբ Ս. Կարապետ «գերահռչակ» վանքի վանահօր, 12 բարձրաստիճան հոգեւորականներ: Աղթամարի կաթողիկոսը չէզոք դիրք բռնած էր: Կիլիկիայէն ալ չորս եպիսկոպոսներ գիրով յայտնած էին իրենց Համամտութիւնը Աթոռի փոխադրութեան: Ժողովին ներկայ են նաեւ բազում «վանահարք եւ կրօնաւոր սուրբ ժողովին ներկայ են նաեւ բազում «վանահարք եւ կրօնաւոր սուրբ շարք եւ պատուական երիցունք», ինչպէս նաեւ «ազատք եւ որդեք հարք եւ պատուական երիցունք», այսինքն՝ աշխարհական կարեւոր անձեր: Իսկ Սիսի Աթոռը բացարձակ լուութիւն պահած է այս հարցի մասին. «վասնզի անոր կողմէն ոչ մի բողոքի եւ ոչ մի հա-

կառակուլութեան յիշատակութիւնն չկայ Վաղարշապատի ժողովին դէմ», հետեւաբար բոլոր վերոյիշեալ տուեալները կուգան ապացուցանել:

«Թէ Վաղարշապատի ժողովը ընդհանուր ազգին եւ ընդհանուր եկեղեցականութեան համակամ եւ համահաճ համաձայնութեամբ գործեց առանց բացառութեան, եւ օրինաւոր ու վաւերական ժողով եղաւ, եւ եկեղեցական կանոններու եւ ազգային իրաւունքներու հիմամբ կատարուեցաւ Հայրապետական Աթոռին Սիսէ Էջմիածին փոխադրուիլը, ուրկէ հեռացած էր 484ին Մանդակունիին օրով եւ հաստատուած էր Դուին, Էջմիածինէ ոչ շատ հեռու, եւ անկէ ալ կը հեռանար 928ին Դրասխանակերտցիի օրով, եւ վերջապէս իր նախնական եւ նուիրական սրբավայրը կը դառնար 957 տարի աստանդական Թափառելի հտքը» (Ազգ. էջ 2108):

Երեւանի պարսիկ կուսակալն ալ ոչ միայն արտօնած՝ այլ նաեւ քաջալերած է Վաղարշապատի ժողովը, որովհետեւ իբրեւ աշխարհաշէն իշխան նախատեսած է, որ Հայոց հոգեւոր կեդրոնը, Էջմիածին հաստատուելով, իր գաւառը աւելի պիտի շէննար եւ կարեւորութիւն պիտի ստանար բոլոր Հայերու կողմէ: Այնպէս որ, երբ ժողովականք նախ իրեն կը ներկայանան, իր պաշտօնական արտօնութիւնէն յետոյ զինուորներ կուտայ անոնց եւ փողով ու Թմբուկով կը մտնեն ի սուրբ քաղաքն Վաղարշապատ եւ կը ձեռնարկեն նոր կաթողիկոսի ընտրութեան: Ժողովը տեղի ունեցած է Համբարձման օրերուն: Կ'ընտրուի Կիրակոս Վերապեցի ճգնազգեաց վարդապետը: Այս կերպով Սիսի Հայրապետանոցը պաշտօնապէս դադրած եղաւ, իսկ Էջմիացնի Հայրապետանոցն ալ վերահաստատուեցաւ: Արեւելեան վրդ. ներ ի վերջոյ յաջողութեամբ ի գլուխ հանեցին իրենց պատմական պայքարը եւ դերը՝ անաղարտ պահելով Հայց. եկեղեցիի դաւանութիւնը եւ ինքնուրոյնութիւնը:

5. ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ: Ասկէ առաջ տեսանք, որ Սիս նստող Ամենայն Հայոց հայրապետները ինկած էին Կաթողիկոսութեան զօրաւոր ազգեցութեան տակ, ինչ որ հաճելի եւ ընդունելի չէր եղած Հայաստանի հոգեւոր իշխանութեանց եւ համայն հայութեան, ինչպէս նաեւ Կիլիկիոյ հասարակ ժողովուրդին: Իսկ Թագաւորութեան անկումէն յետոյ Կաթողիկոսարանը, ամբողջ Կիլիկիոյ հայութեան

հետ, ենթարկուած էր այլազգիներու ծանր կեղեքումներուն եւ շահատակութեանց: Այնպէս որ, Ամենայն Հայոց Հայրապետութիւնը ոչ միայն կորսնցուցած էր իր հմայքը եւ ազգեցութիւնը, այլ նաեւ՝ Կիլիկիա մնալու իր բանաւոր պատճառը: Այս էր շարժառիթը որ Արեւելեան վարդապետներ տարիներով աշխատեցան Հայրապետական Աթոռը իր սկզբնավայրը՝ Էջմիածին, փոխադրելու, ինչ որ յաջողութեամբ պսակուած էր 1441 թուականին: Սակայն խնդիրը այս կարգադրութեամբ չէր փակուած: Կիլիկիա նստող վերջին Ամենայն Հայոց Հայրապետը՝ Գրիգոր Թ Մուսարէզեանց, չէր հաճած անձամբ Էջմիածին փոխադրուիլ, հակառակ Արեւելեան վարդապետներու գրաւոր խնդրանքին: Միւս կողմէ, երեւոյթներէն դատելով, կարելի է հաստատապէս ենթադրել, որ Մուսարէզեանց Կաթողիկոսը իր հաւանութիւնը տուած էր նոր կաթողիկոսի մը ընտրութեան Էջմիածնի մէջ, որովհետեւ ոչ մէկ ընդդիմութիւն ցոյց տրուեցաւ իր կողմէ Էջմիածնի մէջ կատարուած ընտրութեան: Այս կերպով գոյութիւն առին երկու օրինաւոր Ամենայն Հայոց կաթողիկոսներ, քանի որ Մուսարէզեանց ոչ ինք հրաժարած էր եւ ոչ ալ՝ գահընկէց յայտարարուած էր Էջմիածնի ժողովէն: Հետեւաբար ներելի է ենթադրել, եւ երկուստեք հասկացողութիւն մը գոյացած էր, որ Մուսարէզեանցի մահէն յետոյ նոր կաթողիկոս մը պիտի չընտրուէր Սիսի մէջ:

Դժբախտաբար սակայն պատմական իրողութիւնը այն է, որ Մուսարէզեանցէն յետոյ ԸՆՏՐՈՒԵՑԱԻ նոր կաթողիկոս մը Սիսի մէջ, յանձին Կարապետ Եւդոկիացի-Թոգասցիի: Այսպէս սկիզբ առաւ եւ ստեղծուեցաւ Կիլիկիոյ մասնաւոր Կաթողիկոսութիւնը, որ ցարդ կը շարունակէ իր գոյութիւնը: Պատճառներ շատ կրնան ըլլալ Կիլիկիոյ մէջ նոր կաթողիկոս մը ընտրելու մենք պիտի իշխեք երեքը միայն:

Առաջին. Կիլիկեցիներ վարժուած էին կաթողիկոսի մը ներկայութեան իրենց մէջ՝ շուրջ 350 տարիներէ ի վեր: Հետեւաբար Մուսարէզեանցի մահէն յետոյ գոյացած պարապութեան չկրցան երկար հանդուրժել եւ ընտրեցին նոր կաթողիկոս մը 1446ին, որ կը նկատուի սկիզբը Կիլիկիան մասնաւոր կաթողիկոսութեան:

Երկրորդ. Լուրերը, զորս կը ստանային Մայր աթոռէն նոր կաթողիկոսի ընտրութենէն յետոյ, սրտապնդիչ չէին: Նորընտիր Հայրապետին շուրջ ստեղծուած էին անձամուլ «էնթրիքներ», եւ տարի մը

յետոյ առանց լուրջ պատճառի, սուրբի համբաւ հանած Կաթողիկոսը գահընկէց ըրած էին: Կիլիկեցիք չուզեցին Հիւսիսի մէջ սարքուած սադրանքներուն մաս կազմել եւ ընտրեցին իրենց նոր կաթողիկոսը:

Երրորդ. Հայուժեան երկու երկիրները՝ Հայաստան եւ Կիլիկիա, իրարմէ հեռու եւ իրարմէ անջատուած էին թշնամի հողամասերով, եւ հետեւաբար մէկ տեղէն միւսը ճամբորդութիւնները դժուար եւ վտանգաւոր էին, մանաւանդ երբ ծագէին եպիսկոպոս ձեռնադրուելու եւ Ս. Միլառն ստանալու անհրաժեշտութիւնները: Բաց աստի, երկու երկիրներ տարբեր տէրութիւններու իշխանութեանց ներքեւ էին: Հայաստան՝ Գարսկական իշխանութեան, իսկ Կիլիկիան Եգիպտական Մեմլուքներու իշխանութեան ենթակայ էին: Ուստի Կիլիկիոյ մէջ ալ նոր կաթողիկոսի մը գոյութիւնը մէջտեղէն պիտի վերցնէր քաղաքական այս դժուարութիւնները:

Սակայն պէտք է հաստատել, որ այս պատճառները որքան ալ հասկնալի ըլլային, բոլորովին անհարթելի չէին եւ հետեւաբար չէին արդարացներ երրորդ կաթողիկոսութեան մը ստեղծումը Հայց. եկեղեցիի ծոցին մէջ: Կիլիկիոյ մէջ կատարուածը մեծ տարբերութիւն չունէր 1113 թուականին Աղթամարին մէջ կատարուածէն, երբ հետեւալ երկրորդ կաթողիկոսութիւն մի ստեղծուեցաւ գրեթէ վերոյիշեալ նոյն պատճառներով: Հետեւաբար, եթէ դատապարտելի էր Աղթամարի արարքը ընդդէմ Կիլիկիոյ մէջ ընտրուած Ամենայն Հայոց Հայրապետին, դատապարտելի պիտի ըլլար նաեւ Կիլիկիոյ մէջ կատարուած նոր կաթողիկոսի մը ընտրութիւնը՝ ի հեճուկս էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Տարբերութիւնը կը կայանար սա իրողութեան մէջ, որ պաշտօնական որեւէ վճիռ չարձակուեցաւ Կիլիկիոյ նորընտիր կաթողիկոսին դէմ, ինչպէս արձակուած էր Աղթամարի Դաւիթ Թոռնիկեան հետեւալ կաթողիկոսին դէմ: Այս իրողութենէ քաջալերուած՝ Կիլիկիոյ կաթողիկոսները իրենք զիրենք նկատեցին ընական յաջորդները Մուսարէգեանց Կաթողիկոսին եւ շարունակեցին գործածել «Ամենայն Հայոց Կաթողիկոս» տիտղոսը, առանց անդրադառնալու, որ էջմիածնի մէջ Ամենայն Հայոց նոր կաթողիկոս մը ընտրուելէն յետոյ, Մուսարէգեանցի իսկ հաւանութեամբ, այս վերջինը նովին իսկ գործով դադրած էր այլեւս Ամենայն Հայոց Կաթողիկոսի իր հանգամանքէն:

Իբրեւ պատմական իրականութիւն պէտք է աւելցնել նաեւ, որ Կիլիկիոյ նոր կաթողիկոսներ շարունակեցին իրենց իրաւասութեան ներքեւ պահել Հայաստանէ դուրս իրենց նախապէս ունեցած բոլոր թեմերը, ամբողջ Անատոլուն, Սիւրիան, Լիբանանը, Եգիպտոսը եւ մասնաւորաբար Երուսաղէմը, այն աստիճան, որ իրենց տիտղոսներուն վրայ աւելցուցին նաեւ «Գատրիարք Երուսաղէմի» տիտղոսը: Իսկ բուն պատմական Հայաստանը, Գարսկաստանը, Կովկասը, Ռուսաստանը եւ Եւրոպան կը գտնուէին էջմիածնի իրաւասութեան ներքեւ: Դարերու ընթացքին սակայն, էջմիածնի եւ Գոլտոյ Աթոռներուն զօրացումով եւ քաղաքական նոր պայմաններու բերմամբ, այս մասնաւոր Կաթողիկոսութիւնը սահմանափակուեցաւ Կիլիկիոյ 10 թեմերով (ներառեալ Հալէպը), ինչպէս նաեւ արտաքոյ Կիլիկիայի՝ Մալաթիոյ, Եօզկատի, Կիւրիսի, Տիվրիկի ու Տարանտիայի վիճակներով, եւ այսպէս շարունակուեցաւ մինչեւ 20-րդ դար:

Առաջին համաշխարհային պատերազմին, պետական տնօրինութեամբ, Կիլիկիոյ օրուան կաթողիկոսը յայտարարուեցաւ որպէս Կաթողիկոս-Գատրիարք ամբողջ Օսմանեան կայսրութեան մէջ գտնուող Հայերուն, երբ տեղապահներով կը կառավարուէին Երուսաղէմի եւ Կ. Գոլտոյ պատրիարքութիւնները: Զինադադարէն յետոյ վերահաստատուեցաւ նախկին կացութիւնը: Իսկ Ֆրանսիան, որ Սիւրիոյ եւ Լիբանանի հետ գրաւման տակ կը պահէր նաեւ Կիլիկիան, երբ այնտեղէն քաջուեցաւ 1921ի վերջերը, տեղւոյն Հայ ժողովուրդն ալ, իր կաթողիկոսով միասին, գաղթեց ու տեղաւորուեցաւ Սիւրիա, Լիբանան Կաթողիկոսով միասին, ընականօրէն հաստատուեցաւ նախ եւ Կիւրոս: Կաթողիկոսութիւնը ընականօրէն հաստատուեցաւ նախ Հալէպի մէջ, որ ձեռքին մէջ մնացած իր միակ թեմն էր: Կանոնական տեսակէտէ Դամասկոս, Լաթաքիա եւ ամբողջ Լիբանանը կապուած էր Երուսաղէմի Հայոց պատրիարքութեան, իսկ Կիւրոսը՝ Գոլտոյ պատրիարքութեան: Սակայն գործնականապէս այս տեղերը լեցուած էին Կիլիկիայէն գաղթած ժողովրդով: Ուստի 1929 թուին Երուսաղէմի պատրիարքութիւնը կենդանի պահելու համար Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը, եղբայրօրէն իր թեմերը, եկեղեցիները եւ վարժարանները սուրբաբար Կիլիկիոյ կաթողիկոսութեան: Իսկ Գոլտոյ պատրիարքութիւնը երբ ամփոփուեցաւ լոկ նորակազմ Թիւրքիոյ սահմաններուն մէջ, Կիւրոսն ալ ինքնաբերաբար ձգուեցաւ անոր: Որով Կիլիկիոյ

կաթողիկոսութիւնը սկսաւ վերակազմակերպուիլ Հալէպի, Դամասկոսի, Պէյրուսի եւ Կիպրոսի 4 նոր թեմերով: 1930ին Ամերիկեան Նիւյորք-Ռըյիֆ կոչուած որբախնամ կազմակերպութիւնը Կաթողիկոսարանի տրամադրութեան ներքեւ դրաւ իր կարեւոր մէկ կալուածը Անթիլիասի մէջ, որ նախապէս իբրեւ որբանոց գործածուած էր: Ի վերջոյ Կաթողիկոսարանը տիրացաւ այս կալուածին շատ նպաստաւոր պայմաններով եւ զայն վերածեց իր նոր կեդրոնին, որ տարիներու ընթացքին օժտուեցաւ փառաւոր մայր տաճարով, վեհարանով եւ դպրեմանքով, որ բացուեցաւ 1930ին: Նոյն տարին օրուան կաթողիկոսը՝ Սահակ Խապայեան, իրեն աթոռակից օծեց Բարգէն Կիւլխէրեան Արմաշական եպիսկոպոսը, որ մեծապէս սատարեց կաթողիկոսութեան տնտեսական, կրթական ու վարչական վերակազմակերպութեան:

Այսպէս, գրեթէ Աղթամարի ճակատագրին սահմանուած Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը, շնորհիւ Երուսաղէմի Աթոռին եղբայրական ձեռնառութեան եւ Հայ Ժողովուրդի գրեթէ միահամուռ օժանդակութեան, իր գոյութիւնը պահեց եւ տարուէ տարի աւելի զօրացաւ եւ «նշահանց» Ամենայն Հայոց Հայրապետութիւնը, որուն գերագահութիւնը եւ Հայոց եկեղեցիի միակ գլուխ եւ ներկայացուցիչ ըլլալու հանգամանքը կը ճանչնար նախապէս: Սակայն 1956-էն ի վեր սկսաւ մշակել «հաւասարագոր կաթողիկոսներ» հակաեկեղեցական վարչական վարդապետութիւնը, ինչ որ պատճառ դարձաւ որ միջնեկեղեցական կազմակերպութեանց մասնակցի իբրեւ ուրոյն եւ անջատ եկեղեցի, եւ օտար կրօնական շրջանակներ եւս՝ համոզուած գոյացուցին, թէ Հայոց եկեղեցիին մէկ չէ, այլ՝ վարչականօրէն բոլորովին իրարմէ անջատ երկու եկեղեցիներ: Հայ եկեղեցիի ամբողջութենէն իր անջատուած ըլլալը ապացոյցը տուաւ, երբ Հայ եկեղեցիի նուիրապետութեան կողմէ իրեն եղբայրօրէն շնորհուած երեք թեմերու փոխարէն ինքն ալ անկէ խլեց չորս թեմեր: Իրանի երեք թեմերը եւ Յունաստանը, եւ կազմեց երկու նոր թեմեր Ամերիկայի էջմիածնի կապուած զոյգ թեմերու մէջ, ուրոյն երկու առաջնորդներով եւ եկեղեցական բոլոր անջատ կազմակերպութիւններով: Դժբախտ կացութիւն մը, որ ցայսօր կը շարունակուի:

ԳԼՈՒՆ Ե.

ԵՐԿՈՒ ԴԷՍՔԵՐ ՅԻՄՍԻՍԱՅԻՆ ՅԱՅԱՍՏԱՆԷՆ

1. ՄԻՒԹԱՐ ԳՕՇ ՎԱՐԴԱՊԵՏ 1140-1213

Բացի Գրիգորիսեաններէն, մենք Կիլիկեան շրջանէն ներկայացուցինք լոկ երեք յատկանշական դէմքեր՝ Ներսէս Լամբրոնացի, Լեոն Թազաւոր եւ Ջապէլ Թազունի, սակայն Կիլիկեան շրջանի մեծ դէմքերը միայն անոնք չեն, որովհետեւ Լամբրոնացիէն յետոյ ալ կը շարունակուի շարքը երախտաշատ վրդ.ներու- Սեւ Լեոնցիներու, Սկետացիներու, Դրազարկցիներու, Բարձրբերդցիներու եւլն: Հեւոնին կը յաջորդեն բարեպաշտ ու բազմաշխատ իշխաններ՝ Կոստանդիններ, Հեթումներ եւլն: Մինչեւ իսկ աշխարհական հռչակաւոր գրողներ ալ մէջտեղ կուգան՝ Մխիթար Հերացիներ, Սմբատներ, մանաւանդ ձեռագիրներ լուսազարդողներ՝ Ռոսլիններ, [Պիծակներ] եւլն: Կիլիկիայէն պիտի չկրնանք աւելի դէմքեր ներկայացնել մեր գործը աւելի չխճողելու համար:

Նոյն խնայողութիւնը ի գործ կը կը դնենք, երբ դուրս կուգանք Կիլիկիայէն եւ կը վերադառնանք բուն Հայաստան: Այստեղ ալ մեր դիմաց կ'ըլլեն բազմաթիւ հոգեւոր գործիչներ, գրիչներ ու պատմիչներ-Սարկաւազ, Վանակամ, Վարդան եւ այլ վերդ. ներ, Երզնկացիներ, Ուռնայեցիներ, Օրբելեաններ, Նչեցիներ, Ամիրտովլաթներ եւլն: Մենք ասոնցմէ երկու յատկանշական եւ ժամանակակից անձեր կ'ընտրենք, մին՝ կրօնաւոր, միւսը՝ աշխարհական, որոնք կրնան ներկայացնել իրենց դարաշրջանը՝ Մխիթար Գօշ վրդ. ը եւ Ջաքարէ սպարապետը:

Մխիթար իր դարուն ամենէն անուանի եւ գիտնական վրդ.ներէն մէկն է, որ մեծ հեղինակութիւն ու յարգանք շահած էր իր ժամանակակիցներուն մօտ՝ իր սրբութեամբ եւ խոհականութեամբ: Մնած է Գանձակ քաղաքը, աշակերտած է Յովհ. Տաւուշեցի երեւելի վրդ.ին:

Գօշ (Քէնսէ) մակդիրը ստացած է մօրուքը ուշ եւ սակաւ բուսնելուն համար: Իր ուսումը ճոխացնել եւ խորացնելու համար շրջեցաւ թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Կիլիկիոյ վանքերը: Երկար ատեն մնաց Կիլիկիոյ Սեւ լեռան վանքը: Կ'ենթադրուի, որ այս շրջանին Երուսաղէմ ալ ուխտի գացած է:

Հայրենիք վերադառնալէն յետոյ մեծ հռչակ հանեց իբրեւ գիտնական ու իմաստուն վրդ. եւ շուտով շատ մը աշակերտներ հաւաքուեցան իր շուրջը՝ օգտուելու համար իր հմտութենէն: Ասոնց մէջ նշանաւոր հանդիսացան Վանական ու Սարկաւազ վրդ.ներ: Վայելեց Հայ իշխաններու յարգանքը եւ պաշտպանութիւնը եւ անոնց նիւթական օժանդակութեամբ շինեց Գետիկի վանքը: Երբ այս վերջինս երկրաշարժէն անբնակելի դարձաւ, շինեց նոր Գետիկի վանքը 1195ին, որ կոչուած է նաեւ Գօշավանք: Այստեղ անցուց իր մնացեալ տարիները՝ շարունակ ուսուցանելով, եւ այստեղ փակեց իր աչքերը եւ հոս ալ թաղուեցաւ 1213ին, այեւորեալ տարիքին:

Մխիթար միջնորդի շատ դժուար եւ փափուկ դերը կատարեց Հաղբատի ծայրայեղ եւ աւանդապաշտ վարդապետներուն եւ Ջաքարէ սպարապետի միջեւ, որ Կիլիկիայէն ստացած իր բարեկարգական կանոնները կը փափաքէր հաստատել նաեւ Հիւսիսային Հայաստանի մէջ, որուն ուժգնօրէն կ'ընդդիմանային Արեւելեան վարդապետները:

Մխիթար կրցաւ Արեւելեան վրդ.ներու ընդդիմութեան եւ Արեւմտեաններու (Կիլիկեցիներու) օտարախրութեան միջեւ միջնաճաման ընթացք մը բռնել, յարուցուած խնդիրներուն լուծում գտնել եւ խանգարուած խաղաղութիւնը վերահաստատել եւ երկպառակութիւնները հարթել. ջանացած է մեղմ կերպերով նորութիւններուն կիրառութիւնը Արեւելեաններուն ալ ընտանեցնել (ԱԶԳ. էջ 1588):

Մխիթարի կը վերագրուին բազմաթիւ երկեր՝ աղօթքներ, առակներ, թիւով 190 եւ «Յայտարարութիւն Ուղղափառ Ռաւատոյ»: Ինչպէս նաեւ Ժամանակագրութիւն կոչուած պատմական գործը, մեկնութիւններ, խրատներ, թուղթեր եւլն: Բայց Մխիթարի անունը հռչակուած է Հինէն ի վեր իր գլուխ գործոցով, որ է իր ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔԸ, որ թարգմանուած է լատիներէնի, թաթարերէնի, լեհերէնի, վրացերէնի եւ ռուսերէնի եւ գործածուած իբրեւ հայկական օրինադիրք վերոյիշեալ լեզուները գործածող Հայ գաղութներու մէջ:

Սկզբնական աղբիւր: Կիրակոս Գանձակեցի Պատմիչ. (1203-1272): [Մխիթար Գօշ, Գիրք դատաստանի: Աշխատասիրութեամբ Խոսրով Թորոսեանի: Երեւան, 1973]:

2. ԶԱԲԱՐԷ ՍՊԱՐԱՊԵՏ † 1212

Երբ Լեւոն Ա թագաւոր կ'իշխէր Կիլիկիոյ մէջ իբրեւ Գերմանական կայսեր ենթակայ աւատապետ մը, նոյն ժամանակներուն Հիւսիսային Հայաստանի մէջ կը տիրակալէ Ջաքարէ սպարապետը՝ իբրեւ Վրաց թագաւորութեան ենթակայ աւատական իշխան մը:

Ջաքարէ որդին է Սարգիսի: Ըստ Վարդան Վարդապետի՝ ասոնց նախահայրը կը նկատուի «ի Քուրտ ազգէ» գլխաւոր մը, որ Քրիստոնեայ դարձած է եւ Խոշորնի Բերդին տէր եղած: Սարգիսի նոյնանուն թոռնորդին՝ Սարգիս Բ, պահ մը Անիի կուսակալ եղած է Վրաց կողմէ: Այս վերջին Սարգիսին որդիներն են Ջաքարէ եւ Իւանէ իշխանները, որոնք Վրաց Թամար թագուհիին սիրելի եղած եւ պետութեան մէջ բարձրագոյն դիրքերը զբաւած են: Ջաքարէ կարգուած էր սպարապետ Վրաց բանակին, իսկ Իւանէ Արքունիքի ընդհանուր պատասխանատուն եղած է Աթապէկ տիտղոսով, որ մեր մէջ Հին ատեն գործածուած արքունի հազարապետին կը համապատասխանէ:

Դարձեալ ըստ Վարդան Վարդապետի՝ Իւանէ «Խաբեալ ի Թագուհւոյն Թամարայ տկարացաւ ի հաւատոցն», այսինքն՝ յուսադաւան եղաւ, իսկ Ջաքարէ «մնաց ի սեպհական հաւատն»:

1197 թուականը ծուազատի տարին էր, որ կը պատահէր ամէն 95 տարին անգամ մը, երբ Հայեր, ըստ իրենց տոմարական հաշուոյն, Յոյներէն շաքաթ մը յետոյ կը տօնէին Ջատիկը, ինչ որ դուռ կը բանար շփոթութեանց, մինչեւ իսկ կատաղի կոիւններու: Այդ տարին մուսուլմանութիւնը այնքան արծարծուած է Վրաց մէջ, որ Հայ եկեղեցի մը այրած են 40 հոգիով: Ջաքարէի միջամտութեամբ առաջը առնուած է Հայերուն փոխվրէժի դիմելուն, եւ Վրացիներ եկեղեցիին համար՝ 100.000 եւ այրուածներուն համար՝ 40.000 դահեկան տուժելով խնդիրը փակուած է:

Ջաքարէ թէեւ հաւատարիմ հայազաւան մնացած էր, սակայն որտե՛ն մէջ ցաւ մը ունեւր. բազմամամբ Վրաց եկեղեցիներու շքեղու-

Թեան եւ զարդերու եւ արարողութեանց արտաքին ճոխութեան եւ փառաւորութեան՝ Հայոց ծէսերը եւ արարողութիւնները անպաճոյճ եւ անշուք էին:

«Մանր կուգար մանաւանդ, որ Վրացիներ կը նախատէին Հայերը, որ քաղաքէ դուրս եւ բանակի մէջ պատարագի եւ հաղորդի միջոց չուէին, եւ տօներուն օրերն ալ անորոշ էին եւ ամսաթիւի վրայ հաստատուն չէին» (Ազգ. էջ 1570):

Ձաքարէ կը փափաքէր գէթ այս կէտերուն մէջ փոփոխութիւններ ունենայ: Այս նպատակով կը դիմէ իր խոստովանահօր՝ մեծանուն Մխիթար Գօշ վարդապետին, որ Գետիկի վանքի հիմնադիր եւ վանահայր էր: Մխիթար հաստատեց, որ Հայեր շարժական պատարագի սեղան եւ վրանի ներքեւ պատարագ մատուցանելու սովորութիւն ունեցած են, յիշեց Տրդատի եւ Հայ բանակի մկրտութեան յաջորդող պատարագը, մանաւանդ Վարդանանց պատերազմի նախօրեակին բանակի մէջ մատուցուած պատարագը եւ ամբողջ բանակը հաղորդուած ըլլալու պարագաները: Բայց, կ'աւելցնէ գիտնական Վարդապետը, այդ սովորութիւնը այժմ խափանուած է եւ հետեւաբար վերսկսելու համար անհրաժեշտ է արտօնութիւն ստանալ Կիլիկիա նստող Ամենայն Հայոց Հայրապետէն, որ էր այն ատեն Յովհ. Սսեցիի կամ Մեծաբարոյն՝ խնդիրը յանձնելով նաեւ օրուան Հայոց Լեւոն Թագաւորի նկատաւման:

Ձաքարէ «նամակ կը գրէ եւ դեսպաններ կը ղրկէ Յովհաննէս Կաթողիկոսին, նմանապէս կը գրէ Լեւոն Թագաւորին եւ անոր կը ծանուցանէ խնդիրը»: Ձաքարէ, առիթէն օգտուելով, չէ բաւականացած լոկ պատարագի շարժական սեղանի եւ բացօթեայ պատարագ մատուցանելու արտօնութեան խնդրանքով, այլ նաեւ ուրիշ եկեղեցական եւ ծիսական հարցերու մասին ալ լուծում ուզած է:

Լեւոն եւ Յովհ. Սսեցի Կաթողիկոսը գժտուած էին իրարու հետ, ուստի Լեւոն Դաւիթ Արքակաղնեցիին կաթողիկոս ընտրել տուած էր Միսի մէջ: Վերջնոյս գլխաւորութեամբ Լեւոն ժողով մը գումարել տալով պատասխանած էր Ձաքարէի հարցումներուն ութը յօդուածներէն բաղկացեալ կանոններով: Իսկ Յովհ. Կաթողիկոս աւելի գործնական ձեւով պատասխանած էր: Պատրաստել տուած էր փառաւոր մատուովրան մը, շարժական մարմարէ սեղանով մը, բանակի մէջ պատարագ

մատուցանելու բոլոր յարմարութիւններով օժտուած, չմոռնալով ընկերացնել մինչեւ իսկ պատարագի երգեցողութեան յատուկ պաշտօնեաները՝ գեղեցկաձայն դպիր, սարկաւազ, քահանայ եւլն: Այս բոլորը զրկեց Ձաքարէին Մինաս անուն եպիսկոպոսի մը գլխաւորութեամբ 1208ին:

Ձաքարէ իր մօտ հրաւիրելով իր շրջանի մեծ կեդրոններու եպիսկոպոսները եւ վրդ.ները, հանդիսաւոր եւ փառաւոր պատարագ մը մատուցանել տուաւ, որուն ոմանք չուզելով մասնակցել, գիշերանց փախած էին Հաղբատի եպս. Գրիգորի գլխաւորութեամբ: Ձաքարէ այս վերջիններուն յամառութիւնը կոտորելու համար որոշեց յաջորդ պատարագը մատուցանել տալ նոյնինքն ընդդիմադիրներու բոյնին՝ Հաղբատի վանքին մէջ: Երբ Կիլիկեցի Մինաս եպս.ը իր մարդերով եւ Հաղբատի վանքին մէջ: Երբ Կիլիկեցի Մինաս եպս.ը իր մարդերով եւ պատարագի բոլոր սպասներով մօտեցած էր Հաղբատ, Գրիգոր եպս. անոնց դէմ արձակեց իր վրդ.ները, որոնք եկողները ձեռնեցին բիրերով, բեռնատար ջորիները, իրենց բեռներով դահալէժ ընելով, մեռցուցին, իսկ Մինաս եպիսկոպոսը այնքան ծանր ծեծուած էր, որ հազիւ պատգարակով կարելի եղաւ հասցնել Ձաքարէին մօտ: Սաստիկ զայրացաւ Ձաքարէ եւ զօրք զրկեց պատժելու ըմբոստ Հաղբատցիները: Առաջնորդը յաջողեցաւ փախչել եւ ապաստանիլ Ձաքարէի խոստովանահայր Մխիթար Գօշի մօտ: Երբ հոս ալ հետապնդուեցաւ՝ ուրիշ վանք մը փախչելու ատեն ձերբակալուեցաւ ու բանտարկուեցաւ: Բայց հարցը ատով չփակուեցաւ. ընդդիմադիր վրդ.ներ օրէ օր կը շատնային եւ չէին ուզեր Կիլիկիայէ եկած նորութիւններուն եւ Ս. Պատարագի Հանդիսաւոր նոր ձեւին հպատակիլ՝ զանոնք օտարամուտ սովորութիւններ նկատելով: Այս պատճառով շփոթութիւններ եւ երկպառակութիւններ ծագեցան նաեւ Հիւսիսային Հայաստան, ուր ցարդ Կիլիկիոյ ընդդիմադիր միակ ճակատ մը կը տիրապետէր:

Ի վերջոյ՝ Մխիթար Գօշի խորհրդով եւ Թեաղբութիւններով, Ձաքարէ ազատ ձգուեցաւ Կիլիկիայէն ստացուած հրահանգներով շարժել, իսկ չուզողներ պէտք չէր բռնադատուէին ենթարկուելու Կիլիկիան նորութեանց:

Ձաքարէ այնուհետեւ շարունակեց թէ՛ իր հայրենիքին եւ թէ՛ Վրաց Թագաւորութեան իր օգտակար ծառայութիւնը: Մեծ արշավանք մը կազմակերպեց այլազգիներու դէմ, գրաւելով Մարանդ եւ Արտա-

ւիլ քաղաքները, Թավրիզին մօտերը: Ջաքարէ իբրեւ փոխադարձութիւն ըրաւ այն, ինչ որ արաբներ ըրած էին Նախիջեւանի մէջ Ը դարուն սկիզբները՝ եկեղեցիի մէջ այրելով աւելի քան ութ հարիւր հայ նախարարներ եւ զօրականներ: Ջաքարէ ալ Արտաւիլի մզկիթին մէջ ապաւինած մեծամեծները եւ կարդացողները այրել հրամայեց՝ ըսելով. «Իշխանքդ՝ փոխանակ իշխանացն Հայոց, զոր այրեցին այլ ազգիք ի Նախջուանի»:

Ասկէ յետոյ երկար չապրեցաւ Ջաքարէ, եւ իր մարմինին վրայ յառաջացած անբուժելի վէրքերէն վախճանեցաւ եւ Թաղուեցաւ Սանահինի մէջ 1212ին:

«Ջաքարէի անունը իր պատուոյ տեղը պէտք է գրաւէ ազգային պատմութեան մէջ, իր եկեղեցւոյն հաւատարմութեան եւ անոր պայծառութեան համար ունեցած ջանքերուն, եւ օտար (վրացի) իշխանութեան ալ ծառայելով իր ազգը պաշտպանելուն համար» (Ազգ. հտժ. 1091):

Իր ետին զաւակ մը ձգեց դեռ պատանի, որ իր հօրեղբոր Իւանէի խնամքին ներքեւ դաստիարակուելով՝ հետեւացաւ անոր յունագաւառութեան:

Սպարճակաց աղբիր. Գատմութիւն Վարդան վրդի եւ Գատմութիւն Կիրակոս Գանձակեցիի:

ԳԼՈՒԽ Զ.

ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ԵՒ ԱՐԵՒԵԼԱՅԱՅՈՒԹԵԱՆ ԶԱՐԹՕՆՔԻ ՆԱԽԱՅԱՅՈՐ

ՄՈՎԱՆԷՍ ՏԱԹԵԱՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ 1578-1633

Մովսէս Տաթեւացի Կաթողիկոս մեր արդի ժամանակներու Հայ եկեղեցիի եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վերելքի եւ բարենորոգութեան սկզբնահայրը եղաւ: Երբ դուրս կուգանք ուշ միջնադարէն՝ մտնելու համար արդի ժամանակաշրջաններուն մէջ, պէտք է անցնինք արեւելքի «խաւար դարերէն», որոնք են ԺԵ եւ ԺԶ դարերը: Երբ Արեւմուտք իր վերածնունդը կ'ապրի վերոյիշեալ դարերուն, ու երբ մեր մէջ ալ այս դարերուն չեն պակսիր գործիչներ եւ գրիչներ, սակայն ամբողջ Արեւելք խաւար շրջան մը կը բոլորէ. պատերազմներ, կեղեքումներ, հալածանքներ կը ցամքեցնեն ժողովուրդներու տնտեսական եւ հոգեւոր ազդեցութիւնները: Չենք հանդիպիր այլեւս Տաթեւի եւ այլ վանքերու արդիւնաւոր վրդ.ներու, չկան քաղաքական կամ ընկերային մեծ առաջնորդներ: Կը տիրէր տնտեսական, իմացական ու կենցաղական մեծ անկում: Այս շրջաններուն սկսաւ «Մանկաժողով» ըսուած ողբալի երեւոյթը, երբ Քրիստոնեայ ընտանիքներէն բռնի մանուկներ կը խլուէին եւ խալամական կրօնքով կը կրթուէին Օսմանեան կայսրութեան զինուոր դառնալու համար: «Ողբեր, կոծեր եւ բռնութիւններ» անպակաս էին այս առիթներով:

Աթոռը, էջմիածին փոխադրութենէն յետոյ, գրեթէ երկու դար անգործութեան եւ կեղեքումներու մատնուեցաւ: Նոյն անմխիթար կացութիւնը կը տիրապետէ Կիլիկիա, Աղթամար եւ Երուսաղէմ, ուր հարստահարութիւններ եւ ներքին վէճեր անպակաս են:

Միակ դրական երեւոյթը Հայ տպագրութեան սկզբնաւորութիւնն է 1513ին, որ կարելի կը դառնայ հայաբնակ վայրերէ հեռու տեղ մը, Վենետիկ քաղաքի մէջ, որ կրնար նկատուիլ աշխարհի ամենէն զարգացած քաղաքը այդ շրջանին: Տպագրուած գիրքերը իբրեւ պարու-

կրնար վճարել վարդապետներ, քանի որ «անկար եւ չքաւոր» էին, ուստի արտօնուեցան Հանգանակութեան ելնել, ինչ որ ակնկալուածէն աւելիով իրականացաւ, եւ տուգանքը վճարելէ յետոյ մնացած գումարով «չատ մը գերիններ, բանտարկեալներ եւ դատապարտեալներ ազատեցին»: Իրենց ազատութիւնը ստանալէն յետոյ իրենց տեղերը վերագարձան եւ շարունակեցին իրենց քարոզութիւնները:

«Երբոր եկեղեցւոյ պետ ճանչցուող անձերը (յատկապէս օրուան Մելքիսեդեկ Կաթողիկոսը եւ իր Աթոռակից ընկերները) այդպիսի ստոր կացութիւն եւ դարձելի նկարագիր կը ցուցնէին, եւ եկեղեցւոյ պաշտօնական դրութիւնն ալ անոնց երեսէն Հետզհետէ խղճալի վիճակ մը կը ներկայացնէր, ՄԻԹԱՐԱԿԱՆ ԵՐԵՆՈՅԹ մըն է տեսնել, որ աստ եւ անդ վանքերու մէջ առանձնացած ՀՈԳԵՍԷՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐ անհատական ճիգերով կը սկսին եկեղեցական ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ աշխատիլ, ժողովուրդին բարոյականը բարձրացնելու ճիգեր կ'ընեն եւ դառն եղկելի ժամանակներուն ներածին չափ, փոքրիշատէ ուսումն ալ տարածելու եւ դպրոցներ բանալու ԱՆՁԼՈՒՆԷՐ ճիգեր կը թափեն: Այս կարգին մէջ նախապատիւ տեղ մը պիտի տանք ՍՐԱԳԻՈՆ ԵԴԵՍԱՑԻ վարդապետին (Մովսէս Տաթեւացիի առաջին դաստիարակը), որ անցողական կերպով Գրիգոր ԺԳ Կաթողիկոս ալ եղաւ: Գովութեամբ պիտի յիշենք Սրապիոն Օձտեղացի վարդապետը, որ Բաբերդի Վահանաշէն վանքին մէջ կը գործէր: ... Նոյնպէս Կարապետ Չազ վարդապետը, որ Վանայ Վարազայ վանքը աշակերտներ եւ վարդապետներ Հասցնելու կ'աշխատէր, եւ մեծ գաղթին ատեն Ասպազան գնաց այցելութեան եւ Հոն վախճանեցաւ ու թաղուեցաւ: Ասոնցմէ աւելի նշանաւոր եղան Մովսէս Տաթեւացի եւ Պօղոս Մովսէսի վարդապետներ...

Ասոնց հետ արդիւնքով եւ հռչակով պայծառացաւ նաեւ ՍԱՐԳԻՍ ԳԱՐՈՆՏԷՐ Սաղմոսազանքի եպիսկոպոս եւ Մեծ-Անապատին առաջնորդը: ... Կ'երեւի թէ ինքն ալ անոնցմէ մէկն էր, որոնց «Խննէշ եւ խաբուսիկ վայելչութիւն աշխարհիս» խորթելի կուգար: ... [Սակայն] կ'որոշէ հեռանալ յաշխարհէ եւ հետեւիլ առաքինական վարուց (ԴԱՎ. 190): Իւր

նպատակին իրագործման համար Հայաստանի մէջ պէտք եղած ուղեցոյցը չգտնուելուն, իր դիտումը նուիրագործելու համար Երուսաղէմ ուխտի կ'երթայ: Հոն իր հտեւէն կը հասնի ԿԻՐԱԿՈՍ ԳՈՆՏԱՑԻՆ, Տրապիզոնի ալրի քահանան, որ նոյնպէս հոգեւոր կեանքի եռանդ զգացած եւ Սարգիսի օրինակէն քաջալերուած, անոր հետ միանալու միտքը յղացած էր: ... Երուսաղէմի մէջ Սարգիս ու Կիրակոս իրարու հետ միախառնու միաբան եւ միախորհուրդ կ'որոշեն կրօնաւորական բարեկարգութեան աշխատիլ, եւ Երուսաղէմի վանքերուն մէջ իմացանին ու սորվածնին Հայաստանի մէջ գործադրել, ուր եւ քիչ ետքը կը դառնան: Յարմար տեղ մը ճարելու համար կը դիմեն Սիւնիք, վանքերու եւ կրօնաւորութեան աւանդական կեդրոնը, եւ Տաթեւ, Չորովանք կամ Յրուանց ու Թանահատ քիչ-քիչ մնալէ ետքը, կը նախընտրեն Տաթեւի Հին Անապատը կամ Հարաւց-Անապատը, եւ զայն կը նորոգեն եւ կը կազմակերպեն... 1608ին:

Շուտով կը հռչակուի Մեծ Անապատին համբաւը, եւ ամէն կողմէ աշակերտներ եւ գործակիցներ կը հաւաքուին Սարգիսի եւ Կիրակոսի շուրջը, եւ մինչեւ իսկ «անուանի արք, վարդապետք, եպիսկոպոսք եւ քահանայք, եկին եւ յարեցան ի նոսա»: Այս կարգին յիշատակութեան արժանի են Պօղոս Մովսէսի եւ Մովսէս Տաթեւացի վարդապետներ, որոնց արդիւնաւոր եւ Մովսէս Տաթեւացի վարդապետներն ինչինչ պատմած ենք, եւ գործունէութենէն եւ արկածներէն ինչինչ պատմած ենք, եւ ինչինչ ալ տակաւին պիտի պատմենք: Ասոնք առանց իրենց քարոզչական շրջապալութիւնները դադարեցնելու, Սարգիսի եւ Կիրակոսի մեծ օգնականներն եղան՝ դուրսէն նպատակներ Հասցնելով, խորհուրդներ տալով եւ ուսուցչութիւն ընելով, ու ատեն-ատեն Մեծ Անապատը քաշուելով եւ անապատական կեանքի հետեւելով: Անապատին հիմնարկողներուն կարգին պիտի յիշենք նաեւ ոչ կրօնաւոր մէկ մը, Ջուղայեցի Հախնազարի որդի Հայկազն իշխանը, ... զոր զինուորական քաջութեանը համար Շահ Աբբաս շատ սիրեց, եւ «կացոյց զնա իշխան երկրի, հաննալ պատիւ մեծութեան»: Հաւանաբար Հայկազնի իշխանութեան սահմանը Սիւնեաց երկրին կողմն էր, որ դիւրու-

թիւն ունեցաւ պաշտպան կանգնել Սարգիսի Հաստատութեան, եւ ինչպէս անապատին աշակերտներէն ներսէս Մոկացի կը վկայէ. «Անապատի սիւն լինէր գրգէր գթով Հայրական»: Հարկաւ Հայկազնի պաշտպանութեան շնորհիւ էր, որ Մելքիսեդեկ երբ միւս վարդապետները կը հալածէր, Սարգիսի գործին չկրցաւ երբեք արգելք դնել: Անապատի աշակերտներուն մէջ նշանաւորագոյն եղաւ ներսէս Մոկացի վարդապետը, ... եւ [որ] Անապատի մէջ ալ զարգանալէ ետքը, պահ մը նոյնտեղ ուսուցչութիւն ըրած, եւ անկէ մեկնելով նոր [Նոր Անապատ] մը հաստատած է [Վանայ ծովի] ԼԻՄ կղզիին մէջ, որ շատ բարգաւաճ եղաւ ներսէսի առաջնորդութեան ներքեւ, իսկ անոր 1627ին վախճանելէն ետքը իրեն յաջորդած է Ստեփանոս Մոկացի, նա ալ Անապատի աշակերտութենէն: Ստեփանոսի օրով Լիմայ միաբաններուն տարապայման աճելուն համար, մաս մը բաժնուած եւ ԿՏՈՒՑ կղզիի մէջ նոր անապատ մըն ալ հաստատած են (Ազգ. էջք 2342-45):

Մելքիսեդեկ բռնակալ եւ հարկահան կաթողիկոսը կը հալածէր ժողովուրդանուէր եւ գործունեայ վարդապետները եւ կ'աշխատէր անոնցմէ տուրքեր գանձել: Փորձեց զուճար մըն ալ գանձել Տաթևացիէն եւ արգելք հանդիսանալ անոր քարոզչական գործունէութեան: Մովսէս «զիւր փիլոնն եւ զգաւազանն եւ զխալիչէն» Մելքիսեդեկին զրկեց՝ ըսելով. «Մենք կը լռենք եւ կը դադրինք քարոզելէ. եթէ այդ պատճառով մեզք գործած կ'ըլլանք, դուն պատասխանատու ես Աստուծոյ առջեւ»: Ամչցաւ կաթողիկոսը եւ արտօնեց, որ շարունակէ ան իր քարոզութիւնը: Երբ 1620ին, Երեւան եկաւ Պարսիկ բարեմիտ կառավարիչը, տեսնելով Մովսէսի ուղղամտութիւնը եւ գործունէութիւնը, զայն Երեւան պահեց եւ անոր տրամադրեց Ս. Անանիայի եկեղեցին, զոր Մովսէս շէնցուց եւ նուիրական սրբավայրի մը վերածեց, ուր կը խուժէր ժողովուրդը Մովսէսի քարոզութիւնը լսելու, կը հոսէին նաեւ ժողովրդային նուիրատուութիւնները: Այստեղ եւս վերակազմեց բարեկարգ կրօնաւորական կենցաղ եւ միաբանութիւն, ինչ որ դարձեալ Մելքիսեդեկի նախանձր շարժեց: Ուզեց օգտուել Մովսէսի ժողովրդականութենէն եւ միասին միւսն օրհնել: Մովսէս առարկեց, որ ինք դեռ եպիսկոպոս չէ եւ չի կրնար մասնակցիլ:

Մելքիսեդեկ անմիջապէս եպսկ. ձեռնադրեց զայն 1623ին եւ միասին միւսն օրհնեցին, որ լաւ նիւթական արդիւնք տուաւ եւ գոհացուց Մելքիսեդեկի արծաթասիրութիւնը:

Այնքան տարածուած էր Մովսէսի հռչակը իբրեւ քարոզիչ, գիտնական վրդ. եւ սրբակենցաղ անձ, որ Նոր-Չուղայեցիներ ուզեցին վայել իր ներկայութիւնը եւ յատուկ պատգամաւորութեամբ զայն իսպահան հրաւիրեցին: Ատեն մը մնաց այնտեղ եւ կը քարոզէր թէ՛ քաղաքի եւ թէ՛ շրջակայ գիւղերու մէջ. կը մխիթարէր, կը լուսաւորէր եւ կը սրտապնդէր ժողովուրդը: Երբ վերադարձաւ Երեւան՝ իր բարեկամ Ամիրզունա կուսակալին մօտ գտաւ Շահ Աբբասի մէկ ներկայակամ Ամիրզունա կուսակալին 7ական ձեռնարկ մտմբ նուէր տուաւ: Մարդիկ հիացան մոմերու մաքրութեան ու ճերմակութեան եւ որոշեցին զանոնք նուէր զրկել Շահ Աբբասին: Մովսէս 7 մոմ եւս աւելցուց անոնց վրայ, եւ ներկայացուցիչը մոմերը նուիրեց Շահին, որ շատ գոհ մնաց անոնցմէ, որովհետեւ նման ճերմակութեամբ մոմեր պալատին մէջ անգամ անծանօթ էին: Երբ Շահը հասկցաւ, թէ որուն կողմէ շինուած են անոնք, հրամայեց Երեւանի կառավարիչին, որ Մովսէսը Պարսկաստան զրկէ՝ մոմ ճերմկցնելու արհեստը իր պաշտօնեաներուն ալ սորվեցնելու, ինչ որ ըրաւ Մովսէս ի մեծ գոհունակութիւն Շահին: Եւ որովհետեւ 1627ին Մանդեան տօնի օրեր էին, եւ Շահը, իմանալով, որ Մովսէս պիտի պատարագէ Յայտնութեան տօնին օրը, ուզեց ինք ալ ներկայ ըլլալ: Կատարուած արարողութիւններէն եւս մեծապէս տպաւորուեցաւ Շահը եւ ուզեց վարձատրել Մովսէսը դրամով եւ կալուածով: Նոր Ջուղայի գլխաւորներէն եւ Շահին մտերիմ խօսակար միջամտեց, ըսելով, որ Մովսէս աշխարհի ինչքերէն հրաժարեալ մըն է, ուստի մեծագոյն պատիւը կ'ըլլայ, եթէ անոր շնորհուրի էջմիածնի լուսարարութեան պաշտօնը, ինչ որ սիրով եւ կայսերական պաշտօնագրով մը շնորհուրեցաւ, եւ Մովսէս իր այս նոր պաշտօնին ձեռնարկեց 1627 Յունիս 25ին:

Էջմիածնի տաճարը այն օրերուն քայքայեալ եւ անմխիթար վիճակ մը կը պարզէր, ինչ որ սրտաճմլիկ ձեռով նկարագրուած է ժամանակակից պատմիչ Առաքել Դաւրիթեցիին կողմէ: Մովսէս նախ մաքրեց շրջապատը, պարիսպները վերաշինեց: Նորոգեց տաճարի գմբէթը եւ տանիքը: Նորանոր շէնքեր աւելցուց. միաբանութեան

խուցեր, սեղանատուն, փռատուն, տնտեսատուն, Համբարանոցներ եւ Հիւրատուն եւլն: Այս գործերը ի գլուխ Հանելու ատեն իր շուրջ Հաւաքուեցան եւ նիւթապէս ու բարոյապէս օժանդակեցին բարեխէր եկեղեցականներ եւ սրտցաւ ազգայիններ, որոնց Համար սրտի մեծ ցաւ էր էջմիածինը այսպէս լքեալ եւ աւերեալ տեսնելը: Մայր Աթոռի նիւթական նորոգութեան կարգին, կազմակերպեց նաեւ անոր բարոյական բարեկարգութիւնը. վանական կենցաղ Հաստատեց, աւանդ դրուած սպասները եւ սրբութիւնները ազատեց, դպրատուն մը բացաւ Յովհաննայ վանքին մէջ, ուրկէ արդարեւ առաջ եկան վարդապետներ, եպիսկոպոսներ, արեղաներ, քահանաներ, ամենքն ալ «պիտանի եւ օգտակար մարդիկ», զորս ցրուեց զանազան կողմերը՝ թէ՛ քարոզչութեան եւ թէ՛ դպրութիւն տարածելու նպատակով:

«Ասոնք մէկ կողմէ հոգեբույս քարոզութեամբ եւ բարեկրօմ վարութեամբ հաստատեցին զկարգս եւ զկրօնս քրիստոսական հաստատոյս եւ եկեղեցական աւանդութեան, եւ ընկրկեալ կործանեցին զհակառակորդս ճշմարտութեան, եւ միւս կողմէն շինեցին զեկեղեցիս եւ կը նորոգէին ու կը պայծառացնէին վանքերը, որք ամայացեալք ի խաւարի կային: Այս կերպով Մովսէսի նախնաձայնոյ աշխատութեան շնորհիւ, վանքեր կը լեցուէին միաբանօք եւ արեղայիք եւ կրօնատրօք, իսկ զեղօրայք՝ վարժերիցամբք (ԴԱԻ. 235): Մովսէսի ստանձնած պաշտօնը լոկ լուսարարութիւն էր, որ է փակակալութիւն Հին բառով, կամ լուսարարապետութիւն նոր կոչմամբ. բայց էջմիածին իրմէ զատ տէր չուներ, եւ անպաշտօն կաթողիկոսութիւն էր իր ըրածը: Այն, որ պաշտօնապէս դահակալ կաթողիկոսի անուն ուներ, Իսպահան կը գտնուէր, ամէն գործէ ձեռնթափ, եւ իննսնամեայ զառամեալ տարիքի մէջ. իսկ այն, որ արքունի Հրօվարտակով ճանչցուած՝ գործունեայ աթոռակիցի պաշտօնը պիտի վարէր, Հարկահանի դերը կը վարէր կարեւոր գաւառներու մէջ, եւ երկուքէն ոչ մէկը եկեղեցւոյ եւ ազգի Հոգածութեան գործերով կը զբաղէր: Իրաւունք ունէին ուրեմն ժողովուրդք Հայոց լրճհամար աշխարհս բնակեալք, որ այդ կաթողիկոսաց անկարգութեան ձանձրացեալք, կամ լաւ եւս առանց կաթողիկոսի մնացած, կամօք եւ յօժարութեամբ եւ կաթողիկոսի

սրտի կը փափաքէին, եւ վարդապետք եւ եպիսկոպոսք եւ երեւելի արք՝ գրովք եւ աղաչանօք թախաճճէին եւ կը խնդրէին Մովսէսէ, զի յաճճ աոցէ զաստիճան կաթողիկոսութեան» (Ազգ. հտժ. 1646):

1628 տարին եկեղեցական անգլխութեան տարի մըն է. բուն կաթողիկոսը զառամած եւ գործէ քաշուած կ'ապրի Իսպահան: Աթոռակիցները փախած էին Օսմանեան կայսրութեան սահմանները՝ տուրքերու ծանրութենէն: Ուստի Մովսէս դիմեց իր եւ Շահին բարեկամ Խօսա Նազարին, որ ձեւ մը գտնէ էջմիածնի վրայ դրուած պետական այս ծանր տուրքը վերցնել տալու: Այդ օրերուն կը մեռնի Շահ Աբբաս, անոր յաջորդը մեծամեծ նուէրներով Հաճեցնելէ յետոյ Խօսա Նազար եւ Մովսէս կը յաջողէին տուրքը վերցնել տալ էջմիածնի վրայէն եւ ապահովել նաեւ Հրովարտակ մը Մովսէսի կաթողիկոսութեան, որ ամբողջ ազգին փափաքն էր:

«Այս կէտէն սկսելով կերպարանափոխ կ'ըլլայ Հայոց Հայրապետութեան եւ կաթողիկոսութեան Մայր Աթոռին վիճակը, եւ գրեթէ դարագլուխ մը կը կազմուի ազգային եւ եկեղեցւոյ Համար» (Ազգ. էջ 2392):

Մովսէս կաթողիկոս օծուեցաւ 1629ին սկիզբները, եւ իր կաթողիկոսութիւնը եւ գործունէութիւնը կարճատեւ եղաւ, երեքուկէս տարի միայն: Վախճանեցաւ 1633 Մայիսին եւ թաղուեցաւ Երեւան: Օրմանեան Հետեւեալ խորհրդածութիւններով կ'եզրափակէ անոր կեանքը:

«Մովսէսի վարդապետական գործունէութեան Հետ կաթողիկոսական արդիւնաւորութիւնը եւ բարեկարգական ջանքերուն Հետ շինարար աշխատութիւնները՝ փոքրիշատէ պատմեցինք. բացատրեցինք նաեւ իր Հաստատուն եւ անվրդով ուղղափառութեան Հաւատքը, ինչպէս որ Հայաստանեայց եկեղեցին կ'իմասնայ եւ կը դաւանի: Իսկ իր անհատական եւ առաքինական առաւելութեանց Համար կը խօսին ամենուն սիրելի եւ պաշտելի դարձած իր գործերը, որով բացառիկ կերպով մը ամենուն անձկալի եղաւ եւ ընդհանուր միաձայնութեամբ կաթողիկոսական աթոռ բարձրացաւ: Իրեն Համար վկայուած է եւս, թէ էր մաքրակեցեալ եւ սրբասունդ, երկայնամիտ եւ ողորմած, եւ

թէ զօրաւոր էր աստուածաշնորհ վարդապետութեամբ եւ քաղցր քարոզչութեամբ, որով գիտէր հոգիներ շահիլ՝ ուղղելով ի ճանապարհս արդարութեան: Իր կաթողիկոսութիւնը Հայ եկեղեցւոյ համար դարազուլու մը կը կազմէ ըսինք, եւ իրօք ալ իրմով կը փակուի այն աղետալի եւ եղկելի շրջանը, որ ամենէն աւելի յուսալից պայմաններու ներքեւ սկսաւ՝ Աթոռոյն փոխադրութեան եւ Կիրակոս Վերապեցիի ընտրութեան առթիւ, այլ որ յուսախար ելք մը ունեցաւ, շատ մը իրարու շղթայուած արտաքին եւ ներքին պարագաներու պատճառով: Շատ ցանցառ միութարական արդիւնքներ ներկայեց մեզ 1441էն մինչեւ 1629, մօտ երկու դարերու ժամանակամիջոցը, աւելի աղետալի դարձած՝ աթոռակիցներու դրութեան մուտք գտնելովը եւ ընդարձակ զեղծումներու դուռ բանալովը: Մովսէս իրեն աթոռակից չառաւ եւ առնել ալ չմտաբերեց, եւ անով վերջ տուաւ այդ տարադէպ սովորութեան: Մեծագոյն եւ բացառիկ պատիւ ըրած է անոր եւ կ'ընէ եկեղեցին, անոր անունը յիշելով հանապազօր պատարագի մէջ, եռամեծ հովուաց եւ հովուապետաց կարգին, եւ կցելով զայն ուրիշ լուսաւոր անունի մը հետ, եւ զոյգ յիշատակելով Գրիգորի եւ Մովսիսի Տաթեւացեաց անունները, զի Մովսէս ալ Գրիգորի համանման եղաւ լուսատու տանս Արամեան, որչափ ալ ոչ Տօնացոյցը եւ ոչ Յայսմաւուրքը չեն արձանագրած տակաւին անոր անունը» (Ազգ. էջ 2420-2422):

Սկզբնադրիւր. Առաքել Դաւրիթիցի Գառմիչ: [Հմմտ. Ներսէս Ակիճեան, Մովսէս Կաթողիկոս Տաթեւացի, Վիեննա, 1936]:

ԳԼՈՒՍ Է.

1. ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԸ

Նախ քան Երուսաղէմի երկու համանուն եւ մեծանուն պատրիարքներու մասին խօսիլը կ'արժէ համառօտ տկնարկ մը նետել Հայ Երուսաղէմի վրայ:

Երուսաղէմի Հայոց Գառնարքութիւնը Հայ եկեղեցիի երկրորդ կարեւոր հաստատութիւնն է Մայր Աթոռ Ս. Էջմիածինէն յետոյ: Մեծ չէ եղած իր գործունէութիւնը մշակութային եւ հոգեւոր մարզերու մէջ: Նշանակելի դեր կատարած է սակայն Հայ եկեղեցիի անունը եւ դիրքը պատշաճ բարձրութեան վրայ պահելուն մէջ յարաբերաբար զիրքը պատշաճ բարձրութեան վրայ պահելուն մէջ, հակառակ վերել յիշուած մեծ ները հաւատարմօրէն պահելուն մէջ, հակառակ վերել յիշուած մեծ եկեղեցիներու կատաղի մրցակցութեանց եւ հակառակ դժուար ժամանակներու, կեղեքումներու եւ հալածանքներու: Նշանակելի է նաեւ այն իրողութիւնը, որ առ հասարակ հաւատարիմ մնացած է Հայ եկեղեցիի ուղղափառութեան եւ հոգեւոր վերին իշխանութեան:

Հայերուն Երուսաղէմի մէջ վանք ու եկեղեցի ունենալու սկիզբը մինչեւ Լուսաւորիչի եւ Տրդատի օրերը կը բարձրանայ. անոնք սակայն ժամանակի ընթացքին տակաւ առ տակաւ բազմացած են, հասնելու աստիճան եօթնասուն վանքերու եւ սրբավայրերու: Եօթներորդ դարուն ապրող Անաստաս Վրդը (600-667), որ այցելած է Ս. Երկիրը, կազմած է Հայ վանքերու ցուցակ մը, տպուած 1896ին Վենետիկ, ուր կը հաստատէ այս իրողութիւնը: Թարգմանաբար առաջ կը բերենք քանի մը մասեր այդ գրութեան:

«Ընդամէնը եօթնասուն վանքեր շինուեցան Երուսաղէմ Ս. Քաղաքին մէջ Հայոց իշխաններու կողմէ... Երուսաղէմի մէջ գտնուած այս բոլոր վանքերը սուրբ Լուսաւորիչէն սկսեալ հաստատուեցան, բայց անոնցմէ շատեր շինուեցան (Մեծն) Ներսէսէն՝ աղօթքի համար ի փրկութիւն Հայոց: Յետոյ տեղ-

ւոյն (Յոյն) հայրապետները խանգարեցին վանքերու կարգը: Ուստի Հայոց իշխանները Յուստինիանոս Թագաւորի (527-565) տուին եօթը կենդինար, որ կ'ընէ 70.000 դահեկան եւ ազատեցին Յոյն պատրիարքի իշխանութենէն Հայոց վանքերը, ըլլան անոնք այրերու կամ կիններու վանքեր, եւ կամ մենակեացներու խրճիթներ. այս կերպով Հայեր տէր դարձան իրենց ստացութեանց:

... Բացի ասոնցմէ՝ շատ մը Հայկական մենաստաններ կային Եգիպտոս, Աղեքսանդրիա, Թեփսալիզ եւ Սինա լեռ, ինչպէս նաեւ Թափօր լեռ, Տիրեւրիոյ ծովուն եզերքը եւ Պաղեստինի ուրիշ սահմաններու մէջ, որոնցմէ շատերը իմ աչքերովս տեսայ՝ շատ տարիներ այդ երկրամասին մէջ մնացած ըլլալով: Եւ ամբողջ Աստուածաշունչը եւ Հոգեւոր պատուիրանները միշտ Հայերէն լեզուով կը գործածուէին Երուսաղէմի եւ շրջակայքի բոլոր մենաստաններուն մէջ» (Նորայր Եպսկ. Պողոսեան, ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐ, էջ 81-82):

Հին սովորութեան համաձայն, երբ եկեղեցիներ չէին բաժնուած, մէկ թեմ մէկ եպիսկոպոս միայն կ'ունենար, որուն կը հնազանդէին բոլոր Քրիստոնեաները, Հոգ չէ, թէ ինչ լեզուով կամ ծէսով կը կատարէին իրենց պաշտամունքները: Հետեւաբար Սուրբ Երկրի Հայ վանքերն ալ Երուսաղէմի թեմակալ եպիսկոպոսի իրաւասութեան ներքեւ էին: Քաղկեդոնի ժողովէն յետոյ Հայեր յաճախ հալածանքի ենթարկուեցան Երուսաղէմի Քաղկեդոնական պատրիարքներու կողմէ: Ուստի հարկադրուեցան ունենալ իրենց խրոյն եպիսկոպոսները, որոնց անունները դժբախտաբար չեն պահուած պատմութեան մէջ:

Երբ էօմէր Խալիֆա Երուսաղէմի տիրեց, օրուան Հայ եպիսկոպոսն ալ ներկայացած է յաղթականին, եւ յատուկ հրովարտակով ճանչցուած է իբրեւ պետ կամ պատրիարք Հայոց: Էօմէրի հրովարտակին մէջ կը գտնուի ԱԲՐԱՀԱՄ Հայ եպս.ի անունը՝ պատրիարք կոչումով: Ներկայիս սովորութիւն եղած է Երուսաղէմի Հայոց պատրիարքներուն սկիզբը դնել այս Աբրահամ Պատրիարքը (638-669): Անկէ յետոյ Երուսաղէմի յիշատակարաններու մէջ 20-22 անուններ գտնուած են Հայ եպիսկոպոսներու, որոնք պահած են Աթոռին յաջորդութիւնը մինչեւ ԺԳ դարու վերջերը, շատ մը ընդհատներով: Հայ

պատրիարքներու դիրքը աւելի բարձրացած կ'երեւի արաբներու Ա. Քաղաքին վերատիրապետութենէ յետոյ: Քրիստոնեաներու մէջ առաջին տեղը կը գրաւէին Հայերը, ինչպէս ցոյց կուտան նոյն իսկ լատինական աղբիւրները: Իրենց Հոգեւոր պաշտամունքները կը կատարէին անխափան: Հայոց ուխտաւորներն ալ միւս քրիստոնեաներուն վրայ դրուած տուրքերէն ազատ էին:

Այդ ժամանակներուն Հայոց ձեռքով շատ մը նորոգութիւններ եւ շինութիւններ կը կատարուէին վանքերու եւ եկեղեցիներու մէջ: Ինչպէս Բեթղեհէմի Ս. Մննդեան տաճարին դուռը չքնաղ յօրինուածքով եւ ընտիր քանդակներով կը կառուցուի ձեռամբ Աբրահամ եւ Առաքել կրօնաւորներուն: Այդ դրան արձանագրութիւնը մնացած է ցարդ, ու անոր գեղարուեստական յօրինուածքը հիացում կը պատճառէ տեսողներուն, ինչպէս 1851ին Երուսաղէմ այցելող Միշօ Գաղղիացի կրօնաւորը կը գրէ. «Անիկա հնագիտական հազուագիւտ նշխար մըն կրօնաւորը կը գրէ. «Անիկա հնագիտական հազուագիւտ նշխար մըն է, ու կարելի չէ կարծել, թէ քրիստոնեայ աշխարհին մէջ անոր նմանը կը գտնուի... ճշմարիտ յիշատակարան մը՝ արժանի ամէն յարգանքի»: Դրան յիշատակարանները երկու հատ են, մէկը՝ արաբերէն եւ միւսը՝ Հայերէն փայտակերտ փեղկերուն վրայ բարձրաքանդակ փորագրուած: Արաբերէն յիշատակարանի թարգմանութիւնն է. «Աւարտեցաւ դուռս Մկրտոկոստան Աստուծոյ, մեր փառաւոր թագաւորին օրով, 624 տարին»: Հայերէն յիշատակարանին օրինակն է. «Ի ԹՈՒԻՍ ՀԱՅՈՑ Ո.Ղ. Եւ Ջ. (676†551=1227) ԿԱԶՄԵՑԱԻ ԴՈՒՌՍ ՍՈՒՐԱ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏԵՆՈՒԹԵԱՆ ՁԵՌԱՄԲ ՏԷՐ ԱԲՐԱՀԱՄՈՒ ԵՒ ՏԷՐ ԱՌԱՔԵԼՈՅ. Ի ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵԱՆՍ ՀԱՅՈՑ ՀԵԹՄՈՑ ՈՐԴՌՈՑ ԿՈՍԱՆ ԴԵՒ. ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐՄԵՍՑԻ ԱՇԽԱՏԱԻՈՐԱՑ»:

Այս դուռը երկու փեղկեր ունի, անոր լայնութիւնն է՝ երկու մէտր ու քառասունվեց հարիւրորդամէտր, (բարձրութիւնը, ի յիշողութենէ դատելով, շուրջ 5 մետր է. - Շ. Գ.): Իսկ քանդակները ճարտար ձեռքի գործ են արդարեւ, ուր կան նաեւ խաչեր՝ արաբական դրուագներով շրջանակուած: Բայց դարերու հնութիւնը խանգարած է զանոնք շրջանակուած: Բայց դարերու հնութիւնը խանգարած է զանոնք հետզհետէ, մանաւանդ Յոյն միաբանները՝ իրենց նախանձէն կը ջահեղէին, մանաւանդ Յոյն միաբանները չեն անցած տակաւին, որ անոնք նալի կերտուածքը, ու շատ տարիներ չեն անցած տակաւին, որ անոնք հայկական յիշատակարանը կիրով ձեւեղեցին՝ անընթեւնելի ընելու

Համար զայն:

Ռուբինեան թագաւորներ մասնաւոր հոգածութեան առարկայ ըրին Հայ Երուսաղէմը՝ կալուածներ եւ հարուստ ընծաներ նուիրելով: Այս նուէրներուն մէջ կը գտնուին թանկարժէք ձեռագիրներ - Ռոսլիններ, Համբրոնացիի Աւետարանը, Կերան թագուհիի Աւետարանը եւլն. ճոխ եւ փառաւոր մանրանկարներով. Հեթում թագաւորի սաթէ նուրբ եւ թանկարժէք գաւազանը եւլն.:

1307ին Սոյ միարարական ժողովէն յետոյ, երբ այդ ժողովի կանոնները Երուսաղէմ ղրկուեցան, օրուան Սարգիս Պատրիարքը (1281-1313) մերժեց ընդունիլ այդ կանոնները: Սարգիսով կը սկսի Երուսաղէմի պատրիարքներուն պատմական ցանկը:

Հայ Երուսաղէմի ցարդ ծանօթ եւ հնագոյն մոզայիքները, հայերէն արձանագրութիւններով, կը գտնուին Սրբոց Յակոբեանց վանքէն եւ Երուսաղէմի պարիսպներէն դուրս: Անոնք կը կազմեն շատոնց գոյութենէ դադրած Հայ վանքերու կամ մատուռներու յատակները: Առաջինները Զիթենեաց լերան Ռուսաց վանքին մէջ կը գտնուին: Այստեղը իբրեւ կալուած Հայոց պատկանած է. 19-րդ դարուն վաճառուած է Ռուսաց: Անոնք երբ այստեղ փառաւոր եկեղեցի մը եւ բարձր զանգակատուն մը կը շինէին, երեւան հանուեցան այս մոզայիքները, որոնք կուգան հինգերորդ դարու երկրորդ կէսէն, եւ այդ իսկ պատճառով անոնց հայերէն արձանագրութիւնները կը ներկայացնեն Հայ տառերու հնագոյն ձեւերը:

Երկրորդ մոզայիքը ամենագեղեցիկ եւ շատ լաւ պահուած յատակ մըն է Երուսաղէմի հիւսիսային կողմը, Դամասկոսի դուռէն, ոչ հեռի Զ դարու հետեւեալ արձանագրութեամբ.

«ՎԱՍՆ ՅԻՇԱՏԱԿԻ ԵՒ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԶՈՐՈՑ ԶԱՆՈՒԱՆՍ ՏԷՐ ԳԻՏԷ» (Սաւալանեանց, ՊԱՏՄԹ. ԵՍՄ.ի, էջ 1298):

Իսկ վանքին մէջ հնագոյն ծանօթ յիշատակարանները երկու քանդակագարը խաչքարերու վրայ կը գտնուին, որոնցմէ մին 1835ին Ա. Յակոբայ Վերնատան շինութեան առթիւ հին պատերը քանդուած ժամանակ երեւան կ'ելլէ, հետեւեալ յիշատակագրութեամբ. «Ի Թուրիս Հայոց Ո.» (600+551=1151): Այս խաչքարը այժմ ագուցուած է նոյն Վերնատան արեւմտեան արտաքին պատին վրայ:

Նոյն Վերնատան հիւսիսային արտաքին պատին վրայ ագուցուած է նոյնքան հին ուրիշ խաչքար մը հետեւեալ թերի արձանագրութեամբ. «Քս ողորմեա... հոգոյն ամէն. ՈԲ» (602+551=1153) (Սաւալանեանց, նշւ. աշխ. էջ 1219)

Յաջորդ հնագոյն արձանագրութիւններն են Երուսաղէմի հին շրջանի երկու պատրիարքներու տապանագիրերը տաճարի արտաքին բացօթեայ գաւթին մէջ:

«Այս է տապան եւ պահարան սրբաւնեալ մարմնոյ Տեառն Աբրահամու եպիսկոպոսի Երուսաղէմացոյ երջանիկ պատրիարգի Սրբոյ Արոտոյս որ հանգի յիշխանութեան Սուլթան Սալաւտիմի. ԹՎ. ՈՒՍ ԵՒ Ա» (641+551=1192):

«Տապանս այս որ կայ ատուէն է գերեզման տա Տէր Դաւթի գերերջանիկ եւ սուրբ հեղինակի, զձեզ աղաչէ աղերսալի՝ յիշման առնել զիս արժանի: ԹՎ. ԶԷ (1321)» (անդ էջ 1229):

Հնագոյններէն է նաեւ Մայր Տաճարի Հարաւային պատին մէջ բացուած գաղտնի ճամբուն իբրեւ ներքին դուռ ծառայող երկու դրուագեալ փայտեայ փեղկերուն վրայ գտնուած արձանագրութիւնները:

Ա. Փեղկ

«Կազմ. Դոտն սուրբ տաճարի, Որ է յանուն Սուրբ Պատրիարխի, Առաքելոց մեծաց գնդի».

Բ. Փեղկ

«Սա յիշատակ անընչելի Հեզառոտոյն Յովանիսի. Եւ որում... ԹՎ. ՊԻ «(820+551=1371) (անդ էջ 1225 եւ 1226):

Սարգիս Պատրիարքէն մինչեւ Գր. Պարոնտէր, այսինքն ժԳ դարու վերջերէն մինչեւ ժԵ դարու սկիզբները, շուրջ 40 պատրիարքներ իրարու կը յաջորդեն առանց աչքառու գործունէութեանց: Այս աթոռին քրոնիկ Հիւանդութիւններէն մէկն է շարունակ պարտքի տակ մնալ, սերկու պատճառներով. նախ՝ քսակներով դրամ կերցնել պէտք էր Երուսաղէմի անկուշտ կառավարիչներուն, դատաւորներուն եւ Սիոնի դրացի շէյխերուն, տէր մնալու համար հայապատկան սրբավայրերու, որոնք միշտ Յունաց եւ Լատինաց կողմէ գրաւուելու վտանգին ներքեւ էին: Երկրորդ՝ յոռի տնտեսութիւն: Աթոռին եկամտաւոր գլխաւոր աղբիւրն էր ուխտաւորութիւնը: Եթէ պատերազմներու եւ այլ աղէտներու պատճառով ուխտաւորութիւնը պակսէր, վանքը անխուսափելի տնտեսական տագնապի կը մատնուէր: Երիցս Հայ եկեղեցիի այս անփոխարինելի ժառանգութիւնը կործանման եզրին հասած է պարտքի պատճառով: Երկու անգամին ալ աստուածային նախախնամութեամբ մէջտեղ եկած են Հարազատ Հոգեւորականներ եւ անձնազօր գործիչներ, որոնք փրկած են զայն յաջորդ սերունդներուն համար: Անոնց մասին է, որ պիտի խօսինք յաջորդ գլուխներով:

Ամբողջացնելու համար մեր համառօտ ակնարկը Երուսաղէմի Պատրիարքութեան մասին, նախ յիշենք, որ Պարոնտէրի յաջորդ 15 պատրիարքներ գէշ-աղէկ պահեցին կացութիւնը, մինչեւ 1704 թուականը, երբ Երուսաղէմի Աթոռը միացուեցաւ Կ. Պոլսոյ Աթոռին եւ կառավարուեցաւ աշխարհական ներկայացուցիչներով, «Պապա» կամ «Նազը» կոչուած, ինչ որ պատճառ դարձաւ, որ Աթոռը հասնի յետին թշուառութեան, այս վերջիններու յոռի մատակարարութեամբ եւ ի հաշիւ Աթոռի՝ շարունակ պարտք առնելու նոյնքան դատապարտելի սովորութեան հետեւանքով: Յովհ. Կորոտ եւ Գր. Շլթայակիր կ'ազատեն վանքը այս քայքայման վիճակէն, վերստին կ'անջատեն երկու Աթոռները իրարմէ եւ անէծք կը դնեն միացման գէմ:

Գր. Շլթայակիրէն յետոյ իր 30 յաջորդները կը շարունակեն ստեղծուած բարեք կացութիւնը, երբեմն վերիվայրումներով եւ յաճախ բնականոն կերպով: Անոնցմէ Զաքարիա Պատրիարք (1840-1846) հաստատեց Երուսաղէմի տպարանը եւ գալարատունը, իսկ Յովհ. Պատրիարք Իգմիրցի (1850-1860) կը շինէ այժմու փառաւոր Պատրիարքարանը եւ ձեւարանի շէնքը:

Առաջին պատերազմէն յետոյ պատրիարք կ'ընտրուի Եղիշէ Արք. Գուրեան, որով կը սկսի Աթոռի արդի շրջանը եւ կը վերաբացուի փակուած ժառանգաւորաց վարժարանը: Աթոռը իր կրթական, տնտեսական ու վարչական պայծառութեան գագաթին կը հասնի Թորոքոմ Պատրիարք Գուշակեանի օրով, 1930-1939, որմէ յետոյ ներքին միաբանական հակամարտութիւններ կը ստեղծուին, որոնք դժբախտաբար Աթոռի փայլը եւ հմայքը կը նսեմացնեն, եւ անոր կրթական, տնտեսական եւ այլ գործունէութեան արգելիչ պատճառներ կը դառնան:

2. ԳՐԻԳՈՐ ՊԱՐՈՆՏԷՐ ՊԱՏՐԻԱՐԶ 1613-1645

Այս պատուական Պատրիարքի անունը, Երուսաղէմի պատրիարքներու շարքին մէջ ամենէն փայլունն է, իրմէ դար մը յետոյ պատրիարքութիւն վարող համանուն Գրիգոր Շլթայակիրն հետ:

Երկուքին ալ յիշատակը անմոռաց կը պահուի Երուսաղէմի մէջ իրենց մեծագործութիւններով եւ Ա. Պատարագի գոհութիւն քարոզին մէջ մշտական յիշատակութեամբ: Երկուքն ալ արժանի են տօնելի սրբոց կարգին անցնելու, ոչ միայն որովհետեւ մեծագործ անձեր են, սրբոց անոր համար, որ վասն հաւատքի եւ վասն Հայց. եկեղեցիի ալ նաեւ անոր համար, որ վասն հաւատքի եւ վասն Հայց. եկեղեցիի եւ Հայ Երուսաղէմի շատ չարչարանքներ եւ նեղութիւններ կրած են. երկուքն ալ սրբակենցաղ եւ վերջին ծայր բարեպաշտ, աստուածասէր, եկեղեցասէր ու անձնդիր հովիւներ եղած են:

Պարոնտէրի ծննդեան թուականը անյայտ է. ծնած է Հիւսիս-Արեւելեան Հայաստանի Գանձակ քաղաքի Վարանդ գաւառի Սպիտակաշէն գիւղը, Վարդանեանց ազնուական գերդաստանէ: Մանկութեան վառուած թոնիրի մէջ կ'իյնայ, բայց աստուածային նախախնամութեամբ անվնաս կ'ազատի, որուն վրայ ծնողքը կ'ուխտեն նուիրել զայն Երուսաղէմ: Սակայն ծնողքը կը վախճանին նախ քան Գրիգորի չափահասութեան թեւակոխելը. եւ ինք է, որ անձամբ կը կատարէ չափահասութեան թեւակոխելը. եւ ինք է, որ անձամբ կը կատարէ անոնց ուխտը Երուսաղէմ երթալով 1581ին: Ժամանակ մը այնտեղ մնալէ յետոյ Հոռոմ կ'այցելէ: Անկէ կը դառնայ իր հայրենիքը եւ կ'աշակերտի Պետրոս Կարկառեցի վրդին (ետքէն՝ Կիլիկիոյ կաթողիկոս Հալէպի մէջ), որ այն ժամանակ հուշակ հանած էր իր իմաստութեամբ եւ աւետարանական վարդապետութեամբ:

«Պետրոս, տեսնելով, որ Գրիգոր աշխարհի վայելչութիւններէն հրաժարած եւ ճգնողական կեանքի նուիրուած արի ու հանճարեղ անձ մըն էր թէ՛ խօսքով եւ թէ՛ գործով, բարի խորհուրդ մը կը յղանայ, այն է՝ Երուսաղէմի Ս. Աթոռին գործին լծել զայն այնպիսի ժամանակ մը, ուր Դաւիթ Պատրիարք թէ Հայաստան եւ թէ Հայաբնակ գաւառներ ուրիշ գիրեր ղրկելով՝ բարեպաշտներու օժանդակութիւնը կը հայցէր՝ ազատելու համար Ս. Աթոռը իր աղէտալի կացութենէն: Գրիգոր, որ եկեղեցական աստիճան չունէր տակաւին, ի սէր Երուսաղէմի այնչափ ջանք ու եռանդ կը նուիրէ, որ Պետրոս իսկ կը զարմանայ, ու Դաւիթի հաճութեամբ աւագ սարկաւագ կը ձեռնադրէ զայն: Երբ Գրիգոր կը դառնայ Երուսաղէմ, ուր հասած էր արդէն պարտքին թեթեւութեան համար իր գործ դրած անձնուէր աշխատութեանց համբաւը, գործունէութեանց բաց ու ընդարձակ ասպարէզ մը կը գտնէ իր առջեւ, ու սիրելի կը դառնայ ամենուն առհասարակ, մանաւանդ Դաւիթ Պատրիարք, տեսնելով անոր հանճարամտութիւնը, կը սիրէ ու կը յարգէ զայն մեծապէս եւ Աթոռին շատ մը գործերը անոր կը յանձնէ: «Անիկա քաջ լուրդորդի եւ հմուտ նաւավարի մը կը նմանէր, կ'ըսէ իր կենսագիրը, որ մրրիկի եւ փոթորիկի պահուն կը մաքառէր ամհհի ալիքներուն դէմ ու հնարքը կը գտնէր թէ՛ իր անձը եւ թէ՛ իրենները ապրեցնելու» (Սաւալուճեանց, Պատմ. Երսմ. ի, էջ 568):

Աստուծոյ ողորմութեամբ դուրսէն նուէրներ կ'առատանան, մեծահարուստ ուխտաւորներ Երուսաղէմ կուգան: Ասոնք ոչ միայն Աթոռին ունեցած շուրջ 48.000 դահեկան պարտքը կը հատուցանեն ու կ'ազատեն Ս. Աթոռը, այլ նաեւ շքեղ նոր սպասներով կը ճոխացնեն սուրբ տեղերը: Երեւելի ազգայիններ, տեսնելով Գրիգորի անձնուէր եւ արդիւնաւոր ծառայութիւնները, «միաբան խորհրդակցութեամբ կը խնդրեն Դաւիթ Պատրիարքէն, որ քահանայութեան եւ վարդապետութեան աստիճաններ տալով Գրիգորի՝ իր իշխանութիւնն ալ անոր փոխանցէ ու անոր յանձնէ Ս. Աթոռին բացարձակ կառավարութիւնը»: Այդ նոյն «Խոջաները» հետեւեալ տարին 1613ին Երուսաղէմ կը բերեն Աւետիս աթոռակից Կաթողիկոսը, շատ մը ուխտաւորներով, եւ Գրիգոր Եպսկ. ձեռնադրել կուտան եւ Դաւիթը հրաժարեցնելով,

պատրիարք կը նստեցնեն զայն: Լատիններ ոտնձգութիւններ կ'ընեն Հայոց ունեցած իրաւունքներու վրայ Պատանատեղիի եւ Բեթղեհէմի Ս. Այրիկ մէջ, սակայն Պարոնտէրի ջանքերով եւ Պոլսոյ ամիրաներու աշխատանքներով կարելի կ'ըլլայ տէր մնալ ազգային իրաւանց:

Կատարած է նորոգական մեծ աշխատանք ամէն տեղ Հայ Երուսաղէմի մէջ: Նորոգած է Ս. Փրկչի եւ Ա. Էրեշտակապետաց վանքերը. «Հիմէն կը կառուցանէ Բեթղեհէմի վանքին եկեղեցին» եւ կը կատարէ շատ մը ուրիշ նորոգութիւններ եւ կը շինէ եկամտաբեր կալուածներ նոյն տեղ: Ս. Յարութեան մեր վերնատունը կ'ընդարձակէ: Հալէպի մէջ Հոգետուն մը կը կառուցանէ ուխտաւորներու համար:

1634ին պատեհեցաւ ծաղաւորիկ: Հայեր թէեւ հանդարտ ու յաղթական Ձատիկ մը տօնեցին, բայց հետեւանքը տխուր եղաւ Հայոց համար եւ մեծ սրտամաշուք պատճառեց Պարոնտէրին, որ հարկադրուեցաւ մինչեւ Բերիա երթալ՝ Յունաց ոտնձգութիւններուն դէմ հակազդելու: Իսկ ուրիշներ, որոնք Իսթանպուլ գացեր էին, իրենց կեանքը կորսնցուցին՝ իբրեւ հետեւանք Յունաց զրպարտութիւններուն:

Պարոնտէրի անձնուիրութեան եւ սրբութեան համբաւը տարածուած էր ամէն կողմ, ինչ որ պատճառ եղաւ տարեկան ուխտաւորութեան բազմացման: Սիսի Սիմէոն Կաթողիկոսն ալ ուխտի կուգայ: Գր. Պարոնտէր կը ջանայ մէջտեղէն վերցնելու երկու կաթողիկոսական Աթոռներու միջեւ ստեղծուած հակառակութիւնը: Ժողով մը կը գումարեն 1638ին ուխտաւորաբար Երուսաղէմ գտնուող եկեղեցականներով եւ երեւելի աշխարհականներով: Սիմէոն Կաթողիկոս գրաւոր կը խոստանայ իր վիճակին չպատկանող եպիսկոպոսներ եւ քահանաներ չձեռնադրել, ինչ որ պատճառ կը դառնար երկու Աթոռներու գժտութեանց: Այս համաձայնութիւնը աւելի պաշտօնական դարձաւ 1652ին, Փիլիպպոս Կաթողիկոսի գումարած Երուսաղէմի ժողովով:

Գրիգոր շատ նեղութիւններ կրած է նաեւ Երուսաղէմացի արարներէն, որոնք շարունակ կը հարստահարէին Հայոց վանքը եւ կը յափշտակէին ինչքերը: Այս բոլորին արիաբար կը տոկար երանելի Պատրիարքը: Կը պատմուի, որ անգամ մը զայն կը տանին բաղանիքի մը հնոցին մօտ եւ կը սպառնան կրակին մէջ նետել զինքը՝ եթէ չյօժարի իրենց ուզած գումարը տալ: Ծարահատ 6000 դահեկան

տալով՝ կ'ազատի «եւ ապա գիշերանց գաղտնապէս Երուսաղէմի պարիսպներէն իջնելով ուղղակի կ'երթայ Կ. Պոլիս» եւ ապահովութեան հրովարտականք ձեռք կը ձգէ, որպէսզի կատարուած ու կատարուելիք շինութիւններուն ոչ ոք կարենայ հակառակել:

Սաւալանեանց հետեւեալ խտացեալ գնահատանքով կը վերջացնէ Պարոնտէրի գործունէութեան ընծայած իր ընդարձակ գրութիւնը.

«Պարոնտէր իր տոհմին ազնուականութեան հետ ազնիւ էր թէ՛ սիրտով եւ թէ՛ հոգիով, քաջարի՝ ամէն դժուարութիւններու դէմ, ու անձնուէր՝ Ս. Աթոռի բոլոր գործերուն մէջ: Անիկա կ'ատէր փառքը, եւ համեստ ու պարզ էր կենցաղով ու վարքութեամբով, ոչ իր անձին շահը կը փնտռէր եւ ոչ ուրիշներուն ակնառութիւն կ'ընէր. միաբանութեան սիրոյն կը յոգնէր անդու, ու հոգ կը տանէր անոր պատիւին ու պայծառութեանը, եւ միշտ հետամուտ կ'ըլլար շինութեանց ու նորոգութեանց: Ան գիտէր գնահատել Ս. Աթոռին ծառայութեան նուիրուած թէ՛ եկեղեցականներուն եւ թէ՛ աշխարհականներուն վաստակները, այդ պատճառաւ աշխարհիկ անձերու ալ կարեւոր պաշտօններ եւ իրաւունքներ կը յանձնէր ու նուիրակութեան կը զրկէր զանոնք: Խնայասէր էր ծախքերու մէջ, սակայն անհրաժեշտ հարկին առջեւ չէր ընկրկեր բնաւ: Ս. Աթոռին ահագին պարտքը հատուցանելէն ու անոր պէտքերուն համար մեծագումար ծախքեր ընելէն ետք՝ ապագայ կարիքներու համար ալ պահեստի մեծկակ գումար մը թողուց:

Ճգնասէր էր ան ու աղօթասէր, այդ պատճառաւ հոգեւոր պաշտամունքներու մէջ հարկաւոր կարգեր սահմանեց ու տնօրինութիւններ ըրաւ: Սաղմոսաց քահանաներ ու սարակաւագներ նշանակեց վանքերու մէջ ու կարգադրեց, որ Ս. Մննդեան եկեղեցիին, Ս. Յարութեան տաճարին եւ Փրկչավանքին մէջ ալ ամէն Շաբաթ ու Կիրակի օրերը Սուրբ պատարագ մատուցուի անխափան: Գիշերային ժամերգութեանց բոլոր կարգերը կը կատարէր լրիւ, ու ինք անձամբ եկեղեցական ուխտին հետ կը սաղմոսէր ծնրադիր: Այս հոգեւոր կրթութիւններէն զատ՝ ցերեկներն ալ քարակոփներուն եւ որմնադիրներուն հետ միասին կ'աշխատէր՝ քար ու շագախ կրելով իր ուսերուն վրայ, ու իր

անձին օրինակով ամէն կարգէ ու աստիճանէ միաբան եղբայրները աշխատանքի կը յորդորէր: Իր ամէն գործերուն թագն ու պսակն էր իր անբիծ առաքինութիւնն ու սրբասուն կեանքը, որուն համար սիրուած էր բովանդակ ազգէն, ու ամէն բերան պարծանքով կը յիշէր անոր անունը: Գրիգոր Պարոնտէր օրինակ ու հայելի մնացած է մինչեւ այսօր ու պիտի մնայ յաւիտեան ամէն անոնց, որ ծառանգեցին ու պիտի ծառանգեն Երուսաղէմի Առաքելական Աթոռը» (ՊԱՏՄԹ. ԵՍՄ.ի, էջ 592):

Իսկ Օրմանեան ալ հետեւեալ բառերով կը ներկայացնէ անոր ընդհանուր արդիւնաւորութիւնը.

«Երուսաղէմ սրբավայրերուն մէջ՝ ազգային ստացութիւններէն եւ իրաւունքներէն ամէնն ալ՝ թէ մահմետականներէն եւ թէ քրիստոնեաներէն խնդիրի եւ վէճի, վտարմանց եւ ձեռնձգութեանց առարկայ եղած են՝ Ս. Յակոբեանց վանքն ալ, Մննդեան այրն ալ, Համբարձման տեղն ալ, Պատանատեղոյն մոմերն ալ, բայց Պարոնտէրի աշխատութեամբ Հայոց իրաւունքները անեղծ են պահուած: Ազգային վանքերու շինութիւններն ու նորոգութիւններն ալ... մեծ վէճերու դուռ բացած են Հատիններ [եւ Յոյներ] բիւրատեսակ զրպարտութիւններով ջանացած են աննկուն Պատրիարքը տկարացնել, բայց ամէնուն դէմ միշտ զօրացած է Պարոնտէր իւր անխոնջ արիւթեամբը: ... Այս մրցումներուն հետ Պարոնտէր կրցած է վանքին վրայ ծանրացող պարտքերը սրբել, երեսունէ աւելի նոր այգիներ դնել, եկեղեցական զարդերն ու սպասները ճոխացնել, բարոյական տեսակէտէն ալ վանական բարեկարգութիւնը պայծառացնել, միաբաններու թիւը աճեցնել, կարող վարդապետներու զարգացմամբ նպաստել, որոնց մէջ պէտք է առանձինն յիշուին Կարապետ Մովսէսին, որ իւր կատարեալ աջակիցն էր, եւ Աստուածատուր Տարոնեցին, որ իրեն յաջորդեց: Նշանակելի էր նաեւ իւր առաքինական եւ ճգնողական կեանքը, հովուական ջանքերով եւ քարոզչական արդիւնքներով մէկտեղ, եւ իրաւամբ տիպար անձնաւորութեան մը կնիքը փայլեցաւ իւր վրայ» (Ազգ. էջ 2394):

Պարոնտէր Երուսաղէմը կառավարեց 32 տարիներ, թէեւ տապա-

նագրի վրայ 14 տարի նշանակուած է, Հաշուելով իր պատրիարքական պաշտօնական Հրովարտակի ստացման թուականէն, որ շատ յետոյ ձեռք ձգուած է: Վախճանեցաւ 1645ին բարի մահուամբ եւ թաղուեցաւ Սրոնի բարձունքին կառուցուած Ս. Փրկչի վանքին գաւիթը:

Կենսագիրներ: Աստուածատուր Եպսկ. ՊԱՏՄԹ. Ս. ԵՐՈՒՍԱ ՂԵՄԻ. Եսմ. 1890: Տիգրան Սաւալանեանց, ՊԱՏՄԹ. ԵՍՄ.ի, 1931, էջք 566-593:

3. ԳՐԻԳՈՐ ԵՂԹԱՅԱԿԻՐ ՊԱՏՐԻԱՐԶ 1717-1749

Գրիգոր Եղթայակիր եւ իր հոգեհարազատ եղբայրակիցը եւ աշակերտը՝ Յովհ. Կոլոտ, պատրիարքները մեր այն երիցս երանեալ Հայրապետներէն են, որոնք փրկարար դեր կատարած են Հայոց պատմութեան ճգնաժամային պահերուն: Մնած ըլլալով Հիւսիսարեւելեան Հայաստանի Օրդուան երկրամասը կամ Տարօնի Օրդուան գիւղը՝ կոչուած է նաեւ Երրուանցի: Մենդեան թուականը անյայտ է: Կանուխ տարիքէն կրօնաւորելով՝ մտաւ Տարօնի Ս. Կարապետ ԱՄՐՏՈՒՒ վանքը, որ Գրիգոր Տաթեւացիի ժամանակէն սկսեալ ուսումնական փայլ ստացած էր Դանիէլ Վարդապետի ջանքերով: Իր յաջորդներուն մէջ նշանաւոր են ԲԱՐՍԵՂ ԳԱԿԱՌԱՑԻ, «որ Ս. Գրոց ուսումնասիրութենէ զատ հետամուտ եղաւ իմաստասիրական եւ տրամաբանական ճիւղերը մշակել» եւ «պատճառ եղեւ գտանելոյ ԱՐՏԱՔԻՆ ԳՐՈՑ ԳԻՏՈՒԹԵԱՆ» (Ռարիժ. 303, Ազգ. էջ 2488): Ուրեմն մեր վանքերու մէջ առհասարակ աւանդուած զուտ հոգեւոր նիւթերու կարգին արտաքին գիտութիւններ ալ առաջին մտցնողը եղաւ նոյնինքն Բարսեղ Գաւառացին, որ վախճանեցաւ 1615ին: Իրեն յաջորդեց իր աշակերտներէն Ներսէս Մոկացի, որ «շատ աշխատեցաւ եւ Բարսեղէն եւ իր ընկերներէն շատ աւելի հմտութիւն հաւաքեց», որ ետքէն հեռացաւ Բաղէշէն եւ դարձաւ, ինչպէս տեսանք, Մովսէս Տաթեւացիի գործակից եւ Տաթեւի վանքին մերձակայ Մեծ Անապատը ծաղկեցնողներէն մէկը: Անկէ ոչ շատ յետոյ փէ դարուս կէսին Ամրտողիին մէջ կը փայլի ՎԱՐԴԱՆ ԲԱՂԻՇԵՑԻ մեծ վարդապետը, որ ընտիր աշակերտներու խումբ մը հասցուց, որոնց ընտրելագոյնները եղան Գրիգոր Երրուանցի եւ Յովհաննէս Բաղիշեցի (Կոլոտ) վարդապետները: Վարդան վախճանեցաւ 1705ին: Յաջորդի մասին

գժտութիւններ եղան, երկու ընտրելագոյնները, Գրիգոր եւ Յովհաննէս, բաժնուեցան իրենց սիրելի վանքէն, եւ զանազան մենաստաններ շրջագայելէ յետոյ Հաստատուեցան Մշոյ Գլակայ Ս. Կարապետ վանքը, քաջալերութեամբ եւ պաշտպանութեամբ վանահայր Կարապետ Եպս.ի: Երկրաշարժէ մը այս վանքը կը քանդուի եւ Հազիւ վերաշինութեան սկսուած՝ կը վախճանի Կարապետ Եպս. եւ անոր կը յաջորդէ Գրիգոր Երրուանցի, եւ Յովհաննէսի հետ, մեծամեծ պարտքերու ներքեւ մտնելով, վերականգնեցին վանքը:

Նախախնամութիւնը այնպէս տնօրինեց, որ Յովհ. Վրդ. նուիրակութեան ելլէ վանքը պարտքէն ազատելու համար եւ Հասնի մինչեւ Իսթանպուլ 1712ին: Իր հաւաքած դրամով ազատեցաւ Գլակայ վանքը իր բազմատոկոս պարտքէն:

Այս շրջանին Երուսաղէմ կը պարզէ ողբալի կացութիւն մը: Սաղիմայ Պատրիարքութիւնը 1704ին միացած էր Կ. Պոլսոյ պատրիարքութեան եւ կը կառավարուէր Իսթանպուլէն նշանակուած աշխարհական փոխանորդներով, որոնք իրենց չարաշահութեամբ վանքը հասցուցած էին նիւթապէս ու բարոյապէս քայքայեալ վիճակի: Կ. Պոլսոյ օրուան պատրիարքը եւ ամիրաներ, տեսնելով Կոլոտի յաջորդութիւնը դրամ պատրիարքը եւ ամիրաներ, տեսնելով Կոլոտի յաջորդութիւնը դրամ հաւաքելու մէջ, որոշեցին լծել զայն Երուսաղէմ իր պարտքէն ու անկարգութենէն ազատելու սրբազան գործին. «Աթոռակալ Եւ Վէրի» տիտղոսով լիազօրելէ յետոյ եւ նիւթական կոկիկ գումար մըն ալ իր տրամադրութեան տակ դնելով՝ զրկեցին զայն Երուսաղէմ 1713ին ուխտաւորներու բազմութեան մը հետ: Երուսաղէմ իր պարտքերէն քշիկ մը թեթեւալով շունչ առաւ, եւ Յովհ. Վարդապետ նուիրուեցաւ իր բարեկարգական գործին, հակառակ տիրող դժուար պայմաններուն, զրպարտութեանց եւ նեղութեանց, որոնք կը ձգտէին ցամքեցնել իր սրտին մէջ եղած մեծ սէրը հանդէպ Ս. Աթոռին: Սակայն Կոլոտ Հաստատուն էր իր ուղղամիտ գործունէութեան մէջ եւ ոչ ոքին կը ներէր Աթոռին մատակարարութեան մէջ նենգութեամբ եւ չարաշահութեամբ օգտուելու, ինչպէս կ'ըսէ օրուան պատմիչը՝ Հաննէ Վրդ.:

Սակայն յաջորդ տարին, տարօրինակ աղէտներով, ուխտաւորութիւն չի հասնիր Երուսաղէմ, եւ Կոլոտ նիւթական մեծ տագնապի կը մատնուի, ինչ որ կը բազմապատկուի, երբ վանքը անգամ մը անշքացնող եւ վատնող «վէքիւլ» կրկին Երուսաղէմ կուգայ: Վանքին պարտ-

քը տայու Համար «վէքիւը» կ'որոշէ ծախել Փրկչավանքը: Միաբանութիւնը կ'ընդգրկմանայ, ի վերջոյ Կոլոտ երաշխաւոր կ'ըլլայ պարտատէրներուն եւ Երուսաղէմի կուսակալին առջեւ, չորս տարիէն մաս առ մաս վճարել բոլոր պարտքերը, պայմանով, որ ոչ մէկ կալուած պիտի ծախուի եւ ոչ ալ նոր պարտք պիտի առնուի: Այս նպատակով կոտրել տուաւ պարտուց կնիքը, որով կը կնքուէին բոլոր պարտքերը յանուն վանքին: 1715ին կը վերագառնայ Իսթանպուլ եւ կը ձեռնարկէ նուիրահաւաքութեան:

Երուսաղէմի դժուարութիւնները լուծելու Համար որոշեցին Կոլոտը Կ. Պոլսոյ պատրիարք ընտրել: Օրուան պատրիարքը կամովին հրաժարեցաւ, եւ Յովհ. Բաղիշեցի ընտրուեցաւ եւ առաջարկեց, որ Կ. Պոլսոյ եւ Երուսաղէմի միացեալ պատրիարքութիւնները կրկին երկուքի բաժնուին եւ իբրեւ Երուսաղէմի պատրիարք առաջարկեց Գրիգոր Շիրուանցի եպիսկոպոսը, իր Հոգեհարազատը եւ Հայրապատիւ ընկերակիցը:

«Ըստ այսմ ամենայն ինչ սիրով եւ Համերաշխութեամբ Հաստատուելէն ետքը... Կոլոտի տուած հրահանգին Համեմատ, ժամարարը բաժանարար յիշուեց Երուսաղէմի պատրիարք Գրիգորը եւ Կ. Պոլսոյ պատրիարք Յովհաննէսը: ... Այդ օրէն կը սկսի Երուսաղէմի պատրիարքներուն գատարար Կ. Պոլսոյ պատրիարքութեան վիճակներու մէջ յիշատակուիլը, որ ոչ իրաւունքի կամ իշխանութեան եւ ոչ ալ յատուկ պատուոյ նշանակութիւն ունի, այլ միայն պատմական եղելութեան մը Հետեւանքն է: Երուսաղէմի Աթոռին ալ Կ. Պոլսոյ Աթոռէն առաջ յիշուիլը՝ պարզապէս Կոլոտի կողմէն իւր Հայրապատիւ ընկերակցին Հանդէպ մեծարանքի ցոյց մըն էր, ապա թէ ոչ իրաւասութեան կանոնով, տեղական իշխանութիւններ եւ ուղիղ գերիշխանութիւններ նախապատուութիւն կը վայելին» (Ազգ. էջ 2809):

Գրիգոր յակամայս ընդունեց իրեն եղած առաջարկը եւ 1717ին Պոլսոյ Հասաւ եւ անմիջապէս Կոլոտի Հետ Հանգանակութեան ձեռնարկեց՝ Երուսաղէմը պարտքէ ազատելու Համար: Ի նշան իր ամբողջական նուիրումին իր պարանոցէն շղթայ մը անցուց եւ ուխտեց չհանել, մինչեւ որ Երուսաղէմը ազատէ իր «լեռնակուտակ» պարտքէն: Այս պատճառով պատմութեան անցաւ «ՇՂԹԱՅԱ ԿԻՐ» տիտղոսով:

«Երկու պատրիարքներուն ձեռք ձեռքի տուած քրտնաջան ճիգերը իրենց արդիւնքն ունեցան, զի երկուքին քարոզութիւնները, Գրիգորին անձնուիրութիւնը, Յովհաննէսին Հովանաւորութիւնը, եւ մանաւանդ անոնց առաքինի եւ անձնուրաց օրինակը՝ ամենքը վառեց Սուրբ տեղեաց բարեպաշտութեան, եւ նպատաներ ու նուէրներ սկսան առատապէս տեղալ յօգուտ Աթոռոյն» (Ազգ. էջ 2813):

Հանգանակութիւնը շարունակելու Համար Գրիգոր Իսթանպուլ մնաց շուրջ երեք տարիներ: Իսկ Երուսաղէմի մէջ իրեն փոխանորդ կարգեց Յովհաննէս Երուսաղէմացին, որ պատմութեան մէջ ծանօթ է աւելի իր անուան արաբական Հնչումով՝ Հաննէ կամ Հաննա Վրդ., որ ոչ միայն Երուսաղէմի անձնուէր միաբաններէն ու Շղթայակրի Հաւատարիմ գործակիցը եւ կարող փոխանորդն էր իր արաբագիտութեամբ եւ բնիկ տարրերու Հետ սերտ բարեկամական յարաբերութեամբ, այլ նաեւ մանրամասնօրէն գրած է իր ժամանակակից Երուսաղէմի պատմութիւնը:

Իր Հանգանակութիւնը այսպէս յաջող կերպով կ'ընթանար ու կը տարածուէր գաւառները եւ մինչեւ Պարսկահայերուն, երբ 1718ին յանկարծական Հրդեհ մը Իսթանպուլին մեծ մասը այրեց, ներառեալ Գումգափուի Մայր եկեղեցին ու Պատրիարքարանը: Թէեւ Երուսաղէմի Հանգանակութեան գործեր ատեն մը կաղաց այս պատճառով, բայց ոչ ոք յուսահատեցաւ: Վերաշինեցին թէ՛ Մայր Եկեղեցին եւ թէ՛ Պատրիարքարանը, 70 օրուան մէջ, որուն աշխատանքներուն իրենք իսկ՝ Գրիգոր եւ Կոլոտ պատրիարքներ, յետին մշակներու պէս իրենց մասնակցութիւնը կը բերէին:

Երկու պատրիարքներու ջանքերով կատարուած Հանգանակութիւնը ի վերջոյ լաւ արդիւնք տուած էր, ուստի 1720ին Գրիգոր ճամբայ ելաւ դէպի Երուսաղէմ: Նախ Հանդիպեցաւ Հալէպ. Պարոնտէրի շինած Հոգետուենը նորոգեց եւ նոր կալուածներ աւելցուց յօգուտ Երուսաղէմի եւ 1721 Փետրուարին մեծ փառքով մտաւ Երուսաղէմ՝ իրեն Հետ ունենալով մեծ ուխտաւորութիւն մը: Հինգ տարուան ընթացքին գրեթէ ամբողջովին վերակենդանացուց մահուան դուռը Հասած Հայ Երուսաղէմը: Բոլոր պարտքերը վճարեց, վանքապատկան գրաւուած սպասները եւ կալուածները ազատեց: Կարևոր

Երուսաղէմ 4 տարի եւ 4 ամիս բացակայելէ յետոյ: Յաջորդ տարին Կոլոտ կը վախճանի, ինչ որ մեծ հարուած կ'ըլլայ Եղթայակիրին, սակայն ի վերջոյ կը մխիթարուի՝ լսելով Նալեանի պատրիարք ընտրուելը, որուն վրայ ամէն վստահութիւն ունէր: Հակառակ տարիքով Կոլոտէն աւելի մեծ ըլլալուն՝ Եղթայակիր շարունակեց իր շինարար ու հաշտարար գործունէութիւնը Ս. Տեղեաց մէջ անոր մահէն յետոյ 7-8 տարիներ եւս, մինչեւ որ գրեթէ հիւծած ու մաշած իր աչքերը փակեց 1749ին եւ թաղուեցաւ Ս. Փրկչականքը, 32 տարի մեծագոյն արդիւնաւորութեամբ պատրիարքութիւն վարելէ յետոյ:

Բազմերախտ եւ անձնդէր Պատրիարքը տառապէս իր կործանումէն վերականգնած էր Երուսաղէմի Հայոց վանքը, եւ անոր նոր փայլ ու պայծառութիւն մը տուած էր. նոր ստացուածքներու, նոր հրովարտակներու եւ նոր իրաւասութեանց տէր ըլլած էր զայն: Անոր յիշատակն ալ անմոռաց կը մնայ Երուսաղէմի մէջ ոչ միայն իր բազմաթիւ յիշատակարաններով, այլ նաեւ Ս. Պատարագի Գոհութիւն քարոզին մէջ յանուանէ յիշատակութեամբը, իր Համանմանին՝ Գր. Պարոնտէրին Հետ: Իրեն կը յաջորդէ Նալեան Յակոբ Պատրիարք, որ քանի մը ամիսներ առաջ հրաժարած էր Պոլսոյ Աթոռէն:

Սաւալանեանց Հետեւեալ բառերով կը փակէ Եղթայակիրի կեանքին եւ գործին ընծայած 60 էջնոց գրութիւնը.

«Այսպէս Քրիստոսի այգիին անխոնջ մշակը անդադար կը խնամէր եւ կը զգուշացնէր ժողովուրդը չար ճամբաներէ ու վերստին փարախ կը դարձնէր մոլորածները: Ան կը հսկէր անքուն Ս. Աթոռին սեպհական կալուածներուն եւ ստացութեանց վրայ, եւ թոյլ ու հանգիստ չէր տար իր մարմինին, այլ անցնելով վանքին կառավարութեան գլուխը՝ ինք անձամբ կը տնօրինէր ամէն բան, իրեն աջակից ունենալով Թէոդորոս, Գաբրիէլ ու Յովհաննէս (Հաննա) երեւելի եպիսկոպոսները: ... Ձէր դադրէր բնաւ տքնելէ իր դէպի Ս. Աթոռը ունեցած բուռն սիրով, մինչեւ ցխոր ծերութիւն, երբ տագնապներ ու վիշտեր կը պատեն իր սրբասուն մարմինը, եւ առանց երկար մնալու՝ շուտով վրայ կը հասնի մահը, 1749 Փետրուար 2ին, եւ միեւնոյն օրն ու միեւնոյն ժամուն, երբ առաջին անգամ Սիոնի դուռնէն կը մտնէր Երուսաղէմ, իր մարմինն ալ նոյն դուռնէն

դուրս կ'ելլէր փառաւոր Հանդէսով, եւ խոր սուգի ու սրտմուծեան մէջ կը ձգէր բովանդակ միաբանութիւնն ու ժողովուրդը, որոնց Համար դառն ու անդարմանելի կորուստ մըն էր երանելի Հայրապետին մահը: Գրիգոր Եղթայակիրի պաշտօնավարութեան տեւողութիւնն է երեսունըմէկ տարի եւ վեց ամիս:

Անիկա անզուգական դէմք մը եղաւ Ս. Աթոռի պատրիարքներու շարքին մէջ, բացի Գրիգոր Պարոնտէրէն, որուն անունը կրելով՝ անոր կեանքին ու գործերուն նմանեցաւ՝ մերթ գերազանցելով զայն շատ բաներու մէջ: Համօրէն ազգը ողբաց Եղթայակիրը ու մինչեւ այսօր ալ կ'վշտակիր՝ երբ կը յիշէ անոր Եղթայակիրը ու մինչեւ այսօր ալ կ'վշտակիր՝ երբ կը յիշէ անոր աթոռանուէր գործերն ու արդիւնաւոր վաստակները, որոնք անբարբառ վկաներ են իր սրտին ազնուութեան, Հոգիին անբծութեան ու այն եռանդուն սիրոյն, զոր ցոյց տուաւ աննախանձաբար դէպի ազգն ու դէպի Ս. Աթոռը: Հոգածու էր ան իր ժողովուրդին, ողորմած՝ աղքատներուն Հանդէպ, զորս անդադար կը խնամէր, մանաւանդ սովի տարին (1744), ոչ միայն կերակուր կը բաշխէր անոնց, այլ եւ դրամով կը նպաստէր՝ անոնց յատկացնելով բարեպաշտ ուխտաւորներէն ընդունած ժամուցները: Փափաքելի էր արդարեւ, որ վաստակաւոր Պատրիարքին յաջորդները փայլեցնէին իրենց վրայ անոր Պատրիարքին յաջորդները փայլեցնէին իրենց վրայ անոր հոգին եւ աթոռասէր եռանդն ու գործունէութիւնը: Երկու համանուն Հայրապետներուն՝ Պարոնտէրին ու Եղթայակիրին անունները Երուսաղէմի Աթոռին ենթակայ թեմերու բոլոր եկեղեցիներուն մէջ կը յիշատակուին անխափան Սուրբ պատարագներու ժամանակ: Ժամանակակիցներէն մէկը սա դրուատական սողերը կը նուիրէ Եղթայակիրին, զոր մենք ալ, իբրեւ կնիք մեր խօսքերուն, առաջ կը բերենք. «Մեր սրբազան Հայրը պատկերն էր Փրկիչին. խոնարհամիտ էր ու հեզաբարոյ եւ Հպարտութեան նշոյլն անգամ չէր երեւեր իր վրայ, այլ ըլլալով բարեգործ ու Համբերատար՝ երկնայիններու սովորութիւններով զարդարուած կ'երեւէր զինք շրջապատողներուն: Քուրճ կը Հանգէր ներսէն իր պարկեշտ մարմինին վրայ, եւ դուրսէն՝ ասուեղէն ցփախ. եւ ինչպէս խոշորագոյնս էր իր կրօնաւորութեան առաջին օրերուն, նոյնը մնաց մինչեւ վերջը, եւ Հայրա-

պետութեան արտաքին փառքով չյոռացաւ երբեք. այդ պատճառաւ արժան է կոչել զինքը քրիստոսազգեստ եւ ո՛չ փափկազգեստ, որոնք արքունիքներու մէջ կը գտնուին, ինչպէս ակնարկեց Տէրը Յովհաննէս Մկրտիչի մասին խօսած ատեն: Շղթայակիր ալ, նախապէս անոր դամբարանին ծառայած ըլլալով, Ս. Յովհաննէս Մկրտիչի շնորհը կը փայլեցնէր իր անձին վրայ... Անիկա ժիր էր աղօթքի մէջ, եւ ամէն օր սաղմոսը կը քաղէր ծայրէ ի ծայր...: Իր բեմբասացութիւնը քաղցր էր եւ ախորժալուր, սիրտեր կը շարժէր ու արցունք կը քամէր ամէն աչքերէ, ոչ թէ քմահաճ խօսքերու ճոռոմութեամբ՝ այլ կեանքի խօսքը՝ իրբեւ տղայոց՝ կաթի նման կը ջամբէր հաւատացեալներուն...: Միաբանասէր էր ան ու հասարակաց սեղանին կը մասնակցէր անխափան: Իր այս արժանիքներով ոչ թէ ազգին հաճելի ընծայեց իր անձը, այլ օտարներն անգամ կը սիրէին զինքը»:

Ուրիշ յիշատակագիր մըն ալ կ'աւանդէ, թէ Շղթայակիր «Վերափոխման տօնին վեց օր բոկոտն ուխտի կ'երթար Գեթսեմանի, Տիրամօր Գերեզմանին, ու անոր բարեխօսութեան կը յանձնէր ինչպէս իր անձը, նոյնպէս Առաքելական Աթոռը եւ ներկայ ու գալիք միաբանութիւնները» (Սաւալանեանց, ՊԱՏՄ. ԵՐՍՄ. Ի, էջ 740-742):*

* [Գրիգոր Շղթայակիրին վերաբերող գրականութեան մատենագիտութիւն եւ նոր նիւթեր տե՛ս Գ. Բամպուրճեան, Գրիգոր Շղթայակիր Պատրիարքի 15 Նոյ. 1748 թուակիր նորայայտ Կոնդակը..., «Շողակաթ» (տարեգիրք), 1970, էջ 66-80]:

ԹՈՒՐԻՔԻՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԻՒՆԸ

Բիւզանդիոն Հռովմէական կայսրութեան մայրաքաղաք ըլլալէ յետոյ Դ դարուն Հայեր անպակաս եղած են այս քաղաքէն: Հինգերորդէն սկսեալ՝ դարէդար աւելի զգալի եղած է Հայոց ներկայութիւնը այդ օրերուն քաղաքակրթութեան ու Քրիստոնէութեան կեդրոն այս մայրաքաղաքին մէջ: Թարգմանիչներէն եւ իրենց յաջորդներէն շատեր այստեղ կատարելագործած են իրենց բարձրագոյն ուսմունքը: Հայ գունդեր գտնուած են կայսերական բանակին մէջ: Հայ զօրավարներ առաջնորդած են եւ լեգէոնները յաճախ յաղթանակէ յաղթանակ, Հայ կայսրեր եւ Հայ ծագումով պատրիարքներ գրաւած են Բիւզանդիոնի արքայական ու պատրիարքական գահերը: Բայց որովհետեւ կազմակերպեալ համայնք ու սեպհական եկեղեցի չեն ունեցած, ամենքն ալ ժամանակի ընթացքին հալած են Բիւզանդական համաքրիստոնէական շնոցին մէջ:

Հայեր համայնք ու եկեղեցի կրցած են ունենալ Ոսկեղջիւրի հիւսափին՝ Ղալաթիա եւ Բերա կոչուած արուարձաններու մէջ, երբ ձեռնվացիներ տէր եղան Ոսկեղջիւրի հիւսիսային այս փերուն ժԲ կամ ժԳ դարերուն: ԺԴ դարու կէսերուն արդէն իսկ ունինք Ս. Սարգիս եկեղեցին, իսկ ԺԵ դարու կէսերուն արդէն իսկ կար ներկայ Ղալաթիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին:*

1453ին Օսմանցիներու կողմէ այս քաղաքի գրաւումէն յետոյ է, որ Հայեր կը սկսին մեծ թիւերով տեղաւորուիլ այստեղ, երբ նոյնինքն քաղաքի գրաւիչ սուլթան Մէհմէտ Տաթիհի նախաձեռնութեամբ կը

* [Միջայլ Ասորի պատմիչի տեղեկութեամբ Հայերը Կ. Պոլսի մէջ եկեղեցի ունէին կայսր Ալեքս Ա Կոմնենոսի օրոք (1081-1118 թ.թ.): Երբ Ասորիները ամբաստանեցին Հայերը, թէ յարաբերութիւն ունին Թիւրքերու հետ, կայսր հրամանով Հայոց ու Ասորոց եկեղեցիները աւերուեցին: Տե՛ս Chronique Michel le Syrien, patriarche Jacobite d'Antioche (1166-1199), par J.-B. Chabot, t. III, Paris, 1905 (=1963), p. 185]:

Հաստատուի Հայոց պատրիարքութիւնը 1461ին եւ կը ստեղծուի Իսթանպուլի Հայկական «վեց Համայնքները»: Առաջին շրջանին պատրիարքարանը գտնուած է Սամաթիա: 1641ին փոխադրուած է ներկայ կեդրոնը՝ Գումգաբը:

Առաջին պատրիարք Յովակիմէն մինչեւ այս պատրիարքութեան նշանաւորագոյն դէմքը՝ Յովհաննէս Կոլոտ Բաղիշեցիին, 1715 թուականը, գահակալած են 48 պատրիարքներ, առանց աչքառու արդիւնաւորութեան: 17րդ դարէն կը սկսի այս պատրիարքութեան անէծքը կազմող եւ զայն ջլատող Հակաքրիստոնէական եւ անբնական երեւոյթը՝ կաշառքով պատրիարք աթոռ բարձրացնելու եւ պատրիարք աթոռէն վար առնելու քանդիչ սովորութիւնը: 48 պատրիարքներ 71 անգամ գահակալութիւն ունեցած են. մէկը՝ Հինգ անգամ, երկուքը՝ չորս անգամ, մէկ Հոգի՝ երեք անգամ եւ ութ Հոգի՝ երկու անգամ: Կոլոտը կանխող շրջանի մէջ քիչ չէ թիւը անձնակերտն եւ ամիրաներու ձեռքը գործիք եւ խաղալիք դարձող պատրիարքներու, որոնց մէջ ոմանք պատմութեան անցած են տխրահուշակ մակդիրներով: Անգոյնները կամ անգործները մեծամասնութիւն կը կազմեն, բարեհամբաւները քիչ են: Սկզբնական շրջանի 10-15 բարեմոյն պատրիարքներէ յետոյ եկող 30-35 պատրիարքներու մէջ յիշատակութեան արժանի կրնայ նկատուիլ լոկ Գրիգոր Կեսարացի կորովի եւ զիտնական պատրիարքը, որ 26 տարիներու վրայ երկարող շրջանի մէջ 4 անգամ աթոռ ելածիջած է՝ Հազիւ 20 տարի պատրիարքութիւն ընելով:

Անիշխանութիւնը եւ անտիրութիւնը այն աստիճան տիրակալած էր, որ մինչեւ իսկ եղած են ժամանակներ, երբ աշխարհական տեղակալներով կառավարուած է Աթոռ. օրինակ 1650ական եւ 1690ական թուականներուն:

Նախակոյտեան մէկուկէս դարու ընթացքին գլխաւոր երեւոյթն է Հայ տպագրութեան երկիցս երեւումը Իսթանպուլի մէջ՝ թէ՛ իսկ ըլլար կարճ ժամանակներով: Առաջինը Աբգար Դպիրի ձեռամբ (1566-1570), երկրորդը Երեմիա Չէլէպիի անձնական եւ աննշան Հրատարակութիւններով՝ առաջինէն լրիւ դար մը յետոյ:

Երեմիա Չէլէպի (1637-1695) Ամիրտովլաթ Բժիշկի Հեա (1416-1496) կը կազմեն յիշատակութեան արժանի երկու մեծ աշխարհական դէմքերը, գործիչները եւ գրողները Իսթանպուլահայութեան: 1610ին

կը Հիմնուի Իսթանպուլահայութեան միակ կարեւոր վանքը եւ ուխտավայրը, Արմաշը: 3-4 էջմիածնի կաթողիկոսներ այցելած են Իսթանպուլ: Մելքիսեդէկ Աթոռակից, որ պատրիարք ալ կ'ըլլայ 1599-1600, Փիլիպպոս Կաթողիկոս 1652ին, Յակոբ Կաթողիկոս Ջուղայեցի երկիցս՝ նախ 1666ին, երկրորդ անգամ՝ 1679ին, որ եւ վախճանեցաւ տարի մը յետոյ եւ թաղուեցաւ այստեղ:

Յովհաննէս Կոլոտ Պատրիարքով սկսած է Արեւմտահայութեան վերագարթումը ԺԸ դարու սկիզբներէն, որ նոյն թափով շարունակուած է մինչեւ դարավերջը իր երկու մեծանուն յաջորդներով՝ Նալբան Յակոբ Պատրիարքով (1741-1764) եւ Ջաքարիա Կազգուանցիով (1773-1799): ԺԹ դարը կը տեսնէ իբրեւ ուրոյն Համայնք տակաւ առ տակաւ կազմուիլը եւ բաժանումը Հայ կաթողիկոսներու եւ Հայ բողոքականներու, որոնք պետական Հրովարտակով կը կազմեն առանձին «միլլէթներ»: Նոյն դարու կէսէ յետոյ կը կազմուի Սահմանագրութիւնը, որով կառավարուեցաւ Արեւմտահայութիւնը մինչեւ առաջին Համաշխարհային պատերազմ: Սահմանադրութեան կը յաջորդէ շարքը լուսամիտ պատրիարքներու եւ աշխարհական մեծ դէմքերու, մտաւորական եւ այլ գրեթէ ամէն մարդի մէջ: Առաջին Աշխարհամարտին Պոլսոյ Աթոռը պահ մը միացուեցաւ Կիլիկիան Աթոռին, որ պետական տնօրինութեամբ յայտարարուած էր Օսմանեան Կայսրութեան ներքեւ գտնուող Համայն Հայութեան Կաթողիկոս-Պատրիարքը: 1923ին կը Հիմնուի Թրքական Հանրապետութիւնը եւ Հետեւաբար կը ստեղծուի նոր կացութիւնը մը, որուն յարմարելով կը շարունակէ այս Աթոռը իր գոյութիւնը ցայսօր:*

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿՈԼՈՏ ՊԱՏՐԻԱՐՔ 1715-1741

Կոլոտ եւ Շղթայակիր պատրիարքներ իրարմէ անբաժանելի գործիչներ են, որոնց կեանքը եւ գործունէութիւնը սերտօրէն իրարու կապուած են, մանաւանդ սկզբնական շրջանի մէջ: Հետեւաբար մենք ըստ բաւականին խօսած եղանք Կոլոտի կեանքի սկզբնական շրջանի

* [Պոլսոյ Հայոց եկեղեցիների, Պատրիարքութեան ու պատրիարքների մասին տեղեկութիւններ տե՛ս «Շողակաթ» (բացառիկ) - 1461-1961, ԺԱ տարի, Թիւ 2, Յուլիս-Դեկտեմբեր, 1962]:

մասին Շղթայակիրի ընծայուած գլուխին մէջ: Այստեղ մենք պիտի անդրադառնանք իր արդիւնաւորութեան՝ իբրեւ Պատրիարք Հայոց Թիւրքիոյ:

37 տարեկան վարդապետ մըն էր Կոլոտ, երբ Պատրիարք եղաւ եւ 26 տարի մնաց աթոռի վրայ, ինչ որ հրաշքի համազօր երեւոյթ մըն էր իր շրջանին՝ երբ Պատրիարքարանէն ոմանք երբեմն մէկ տարի անգամ չէին յաջողեր բոլորել աթոռի վրայ: Եղաւ Պոլսոյ պատրիարքներուն երկարագոյն եւ ամենէն արդիւնաւոր պաշտօնավարութիւն ունեցող անձը:

Բացի Երուսաղէմի Աթոռին ի նպաստ իր փրկարար գործունէութենէն, որ իր կենսագրութեան առաջին կէսը կը գրաւէ, երախտաշատ մնայուն գործեր ըրաւ բնականաբար նաեւ Կ. Պոլսոյ իր Աթոռին եւ ժողովուրդին համար:

1. Երկու պատրիարքութեանց միացումը աղիտաբեր եղած էր Երուսաղէմի Աթոռին համար: Կոլոտն էր, որ կրկին զանոնք վերածեց անջատ պատրիարքութեանց, Երուսաղէմի պատրիարք ընտրել տալով Գրիգոր Շիրուանցին:

2. 1718ին կ'այրի Մայր եկեղեցին եւ Պատրիարքարանը. երկուքն ալ կը վերաշինուին երկու պատրիարքներու ջանքերով:

3. 1722ին կը նորգուի Սամաթիոյ Ա. Գէորգ եկեղեցին:

4. 1725ին ընտրել կուտայ Կարապետ Ուլնեցի իբրեւ Կաթողիկոս Ամենայն Հայոց եւ օծել կուտայ Գումգարուի Մայր եկեղեցիի մէջ: Նորընտիր կաթողիկոսը եպս. կը ձեռնադրէ Կոլոտը, որ ցարդ, աւելի քան 10 տարիներ է ի վեր պատրիարքութիւն կ'ընէր վարդապետ վիճակի մէջ:

5. 1726ին կ'աւարտի վերաշինութիւնը Օրթագիւղի եկեղեցիին, զոր կ'օծեն Կարապետ Կաթողիկոսի հետ միասնաբար:

6. Այս առթիւ է, որ Կոլոտ եկեղեցիի բեմէն կը կարգայ երեք անէծքները ընդդէմ անոնց, որոնք կը փորձեն միացնել Երուսաղէմի Աթոռը Պոլսոյ կամ ուրիշ որեւէ աթոռին:

7. 1727ին կը վերակառուցուի Սկիւտարի Ա. Կարապետ եկեղեցին եւ կը նորոգուի Ա. Խաչ եկեղեցին:

8. 1729ին կը շինուի եւ կ'օծուի Խասգիւղի եկեղեցին:

9. 1730ին կը վերաշինուի աւելի ընդարձակ չափով Պալաթի եկեղեցին:

10. 1732ին կը վերաշինուի Ղալաթիոյ Ա. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, որ այրած էր նախորդ տարին՝ զոհ երթալով հրդեհի մը:

11. Կոլոտի մեծագոյն գործը եղաւ, սակայն, իր պաշտօնավարութեան առաջին օրէն՝ Սկիւտարի մէջ Հիմնարկութիւնը առաջին կարեւոր եւ պաշտօնական ՀԱՅ ԴՊՐՈՑԻՆ, ուր ինք կը դասախօսէր եւ որմէ բազմաթիւ աշակերտներ եղած են, որոնց ծանօթներէն աւելի քան 25 հոգիներու անուանացանկը եւ համառօտ կենսագրութիւնը տրուած է 1978ին Կոլոտի ծննդեան 300 ամեակի առիթով հրատարակուած Յուշագրքի մէջ, էջ 11-18:

12. Վերոյիշեալ դպրանոցին եւ ընդհանուր ընթերցման համար Թարգմանել տուած է գիրքեր:

13. Իրմէ առաջ գոյութիւն ունէին 2 տպարաններ, իր օրով աւելցան երկուք եւս, որոնցմէ իր պատրիարքութեան շրջանին տպագրուած են 90 անուն գիրքեր, ոմանք հսկայական ծաւալով:

14. Բազմաթիւ հրովարտական ձեռք ձգած է պետութենէն՝ յօգուտ Երուսաղէմի եւ Հայ ժողովուրդին: Ասոնց կարգին յիշատակութեան արժանի է Երուսաղէմի Ա. Յարութեան տաճարի նորոգութեան Հայոց մասնակցութիւնը ապահովելու համար ձեռք ձգած պետական արտօնութիւնը:

Այս բոլորը, այսինքն իր բացած ԴՊՐԱՆՈՑԸ, Հասցուցած ԱՇԱԿԵՐՏՈՒԹԻՒՆԸ, Թարգմանել ու տպել տուած ԳԻՐՔԵՐԸ, մանաւանդ իր մշտական քարոզութիւնը եւ կատարած բարեկարգակամ տնօրինութիւնները սկզբնաւորութիւնը կազմեցին Կ. Պոլսոյ եւ անոր միջոցաւ ամբողջ Արեւմտահայութեան կրթական, կրօնական ու մտաւորական ՋԱՐԹՕՆՔԻՆ:

«ՄՏՔԻ եւ Հոգիի այդ հրաշալի ՋԱՐԹՕՆՔԻՆ առաքեալը հանդիսացաւ Ամբողջու վանական Յովհաննէս Կոլոտը: Ա. Հոգին իր բոլոր շնորհները պարգեւեր էր անոր, որ կոչուած էր կործանումէ փրկելու նաւը մեր Մայր եկեղեցիին եւ առաջնորդելու զայն դէպի աղբիւրը լոյսին: Ներշնչուած սուրբ զգացումներով, լուսաւորուած գիտութեամբ, օժտուած բարոյական

Հզօր նկարագրով ու աշխատելու անսպառ եռանդով, անբասիր վարքով եւ հմայիչ խօսքով. «վասն առաքիների վարուց եւ եւս անհամեմատ քարոզութեամբ, որ գրեթէ էր ազգիս մերոյ նոր Ոսկերերան եւ կրկին Աստուածաբան» ինչպէս կը վկայէ ժամանակակից պատմիչը՝ Հաննա Վարդապետ» (Վազգէն Աի Կոնդակը՝ Կոլոտի ծննդեան 300 ամեակի առիթով հանուած):

Կաթողիկոսեան հանդէպ Կոլոտի բռնած ընթացքի մասին Հետեւեալն է Օրմանեանի տեսակէտը.

«Կ. Գոյսոյ պատրիարք եղողին ժառանգական աշխատութիւնը՝ կաթողիկական կուսակցութեան խնդիրն էր, որ գայթակղութիւն եղած էր եւ էր եւ պիտի ըլլար տակաւին Հայութեան ծոցը: Կոլոտ ոչ բուն ընդդիմացող մըն էր Եփրեմի եւ Աւետիքի տեսակէն (իմա՝ կաթողիկամիտներուն - Շ. Գ.) եւ ոչ անձնական շահու տեսակէտէն զիջանող մը...: Նա կ'ընդունէր, թէ լաւ բաներ կը գտնուին օտար եկեղեցեաց մօտ, մանաւանդ բարեկարգութեան եւ կարգապահութեան տեսակէտէն, զորս իւրացնել չէր խղճեր: Բայց այս պատճառով չէր զիջաներ երբեք Հայադաւանութեան սկզբունքէն շեղիլ, [եւ իւր եկեղեցին օտարին հպատակեցնել], եւ կը յուսար, որ քաղցր կերպեր եւ համոզիչ միջոցներ պիտի կարենան համաձայնութիւն գոյացնել: Ուստի սկսաւ կաթողիկական կուսակցութեան գլխաւորները իրեն մօտ հրաւիրել, անոնց ցուցնել իրենց օտարասիրութեան վտանգները, պետական շրջանակներուն կասկածները, յառաջ եկած եւ տակաւին հաւանական երեւցող Հետեւանքները, որոնք ամենքը Հետեւանք են իրենց ազգային ուղղափառ եկեղեցին անարգելուն, եւ օտարադաւան եկեղեցիներ յաճախելուն: Իրբեւ առաջին գործնական քայլ կ'առաջարկէր զի գոնէ յաւուրս տօնից եւ կիրակիից մի զանց արասցեն գալ լեկեղեցիս Հայոց: Խոհական պատրիարքին իմաստուն խորհուրդները իրենց արդիւնքն ունեցան, զի Հռոմէականներ ալ կը պատմեն, թէ ազգայինք խոստացան յանձն առնուլ զԼիւթի պատրիարքին, ինչ որ խափանած կ'ըլլար դժպէի պատահարները: Սակայն Կաթողիկացեալներուն իսկապէս թշնամիները, զորս «բահանայք իւրեանց» կը կոչէ Հռոմէական պատմագրողը, այ-

սինքն են՝ Լատին եպիսկոպոսը, Լատին արեղաներ, Լատինաց մօտ կրթուած Հայազգիներ եւ Լատինէ շահուած եկեղեցականներ չէին համակերպիր, եւ ազգայիններ արգելեալ լինէին կատարել զխոստումն» (Ազգ. էջ 2826-2827):

Օրմանեանի տեսութիւնները Կոլոտի մասին ընդարձակ են եւ յոյժ գովաբան (ԱԶԳ., հտճ. 1998, 1999, 2000):

Կ'ուզենք վերջաւորութեան բերել այս մեծ ու արդիւնաշատ Հոգեւորականին համառօտ վարքը իր 300 ամեակի առիթով ի պատիւ իրեն հանուած Յուշագրքովիմ մէջ մեր առաջնորդող գրութեան վերջամասով.

«Սրբակենցաղ վանական, քաջ քարոզիչ վարդապետ, ճարպիկ գործիչ եւ արդիւնաշատ մշակ ու կատարելութեան տիպարին մօտեցող անձ մըն է Յովհաննէս Կոլոտ: Ամրացուց նախ Հայաստանեայց եկեղեցին իր նիւթական ու Հոգեւոր կառուցուածքին մէջ, Իսթանպուլէն մինչեւ Երուսաղէմ: Յաջողեցաւ խաղաղեցնել իր հօտը եւ վերջ տալ սպառիչ խռովութեանց եւ վատնիչ մտխուճներու, եւ լարել իր ժողովուրդին նիւթական ու բարոյական կարողութիւնները՝ շինարար գործերու համար: 1715ին բացաւ Սկիւտարի իր Հռչակաւոր ԴԱՍՏՈՒՆԸ եւ հասցուց մեծ թիւով աշակերտութիւն: Թարգմանել տուաւ Արեւմտեան լեզուներէն բազմաթիւ աստուածաբանական, քարոզչական, հոփուական, փիլիսոփայական, գիտական ու մեկնողական տարողութեամբ գիրքեր: Այսու Կոլոտ հիմնած եղաւ մեր Երրորդ Թարգմանական դպրոցը, Ոսկեդարէն ու Արծաթի դարէն յետոյ: Չարկ տուաւ տպագրութեան՝ մշակոյթի արծարծման եւ ընթերցումի տարածման այդ կարեւոր գործին: Կարճ ժամանակի մը մէջ հրապարակը ողողուեցաւ (այդ օրերու չափանիշով) բազմահատոր գիրքերով, որոնք մատչելի եղան ոչ միայն Իսթանպուլի եւ իր անմիջական շրջանակին, այլ նաեւ մինչեւ իսկ Երուսաղէմ եւ էջմիածին: Ազգային լուսաւորութեան համար Կոլոտ չբաւականացաւ լոկ թարգմանչական գործով, այլ Տարօնի իր նախկին դպրոցներէն՝ Ս. Կարապետէն, Ամրտօլիէն եւ այլ վանքերէն բերել տուաւ հազուագիւտ ձեռագիրներ, մեր մատենագրութեան թանկարժէք դանձերը, եւ

բազմազրել տուլալ զանոնք ընդօրինակութեամբ եւ տպագրութեամբ: Ինք լաւ գիտէր, թէ լուսաւորութեան կարօտ ազգ մը նախ լաւ պէտք է ճանչնայ ինքզինքը, իր անցեալի մշակութային արժէքներուն մէջ: Իր թարգմանածոյ, գրչագրեալ եւ տպագրեալ գործերով կազմեց ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ մը, զոր ժառանգ ձգեց իր դպրոցին, եւ որ մինչեւ մեր ժամանակները շարունակած էր իր գոյութիւնը եւ օգտակարութիւնը:

Իր աշակերտները շարունակեցին անոր սկսած մտաւորական շարժումը, որ ծագելու մի եւ փառքի ճամբուն մէջ մտաւ արդէն ժՔ դարուն, երբ Սահմանադրական Սերունդին ճիգերով աւելի ուժեղացաւ, տալու համար իր մեծագոյն արդիւնքները ժՔ դարու վերջերը եւ մեր դարուն սկիզբները: Այս շարժումը թափանցեց նաեւ մինչեւ հեռաւոր խորերը եւ խուլ անկիւնները գաւառներուն: Իսկ կեդրոնին մէջ ի վերջոյ կերտեց մեր Արեւմտահայ արդի գրականութեան ոսկեդարը:

Յովհաննէս Կոլոտ Բաղիշեցի Պատրիարքը Թիւրքիոյ Հայոց պատրիարքներու շարքին մէջ ամէնէն մեծ դէմքն է: Մարդու մը մեծութիւնը կը չափուի իր ԿԵԱՆՔՈՎ, ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԵԱՄԲ, ԱՐԳԱՄԻՔՈՎ եւ արտաբերած ՈՐԻՈՎ: Այս բոլորին մէջ ալ Յովհաննէս Կոլոտ Պատրիարք կը գտնուի գերազանց դիրքի վրայ (Յուշագրքոյ, էջ 5):*

Շղթայակիր եւ Կոլոտ, իրենց մանկութենէն Աստուծոյ երկիւղին մէջ սնած ըլլալով, հրաժարած էին անցաւոր աշխարհի բոլոր վայելչութիւններէն ու կ'ապրէին ամբողջութեամբ իրենց ժողովուրդին նուիրուած կեանք մը:

Յովհաննէս Պատրիարք տքնեցաւ շուրջ 30 տարիներ, 1711էն սկսեալ, երբ յայտնուեցաւ Իսթանպուլի հորիզոնին վրայ այնպիսի ժամանակ մը, երբ կրօնական ամուլ վէճերու եւ քանի մը փառամուլ եկեղեցականներու եւ նոյնքան մեծամիտ ամիրաներու պատճառով ահաւոր անկումի եզրը հասած էր եկեղեցին եւ ժողովուրդը: Կոլոտ

կացինը չարիքին արմատին զարնելու համար նախ աշխատեցաւ դաստիարակել ժողովուրդը իր հանապազօր եւ կրօնաբոյր քարոզութեամբ եւ պատրաստել նոր առաջնորդներ եւ նոր հովիւներ՝ իր դպրանոցով: Շատ աշխատեցաւ վերցնել ազգին մէջ ծագում առած կրօնանոցով: Կան վէճերը եւ հերձուածները եւ վերահաստատել Հայ եկեղեցիի միութիւնը եւ խաղաղութիւնը, բայց չկրցաւ յաղթահարել ըմբոստ միտքերը եւ խստապարանոց Լատին կղերը, որ Հռոմի եկեղեցիի շահը եւ Աստուծոյ փառքը Հայ ժողովուրդէն «եկամուտներ» ունենալուն մէջ կը տեսնէր:

Կոլոտ իր ամբողջ պաշտօնավարութեան տեւողութեան զօրաւիզ կանգնեցաւ Երուսաղէմի Աթոռին, որուն կարիքները անձամբ կը հայթայթէր եւ պետութեան մօտ միջնորդ էր իբրեւ փոխանորդ Երուսաղէմի Աթոռին: Այս պատճառով Շղթայակիր Երուսաղէմի գրեթէ բոլոր արձանագրութեանց մէջ իր անունին կից կը յիշատակէր նաեւ Կոլոտի անունը:

Այն աստիճան կապուած էր Յովհաննէս Պատրիարք Երուսաղէմի, որ Կ. Պոլսոյ գործերը կարգադրելէ յետոյ կը խորհէր հրաժարիլ իր պաշտօնէն եւ Երուսաղէմ երթալով՝ առանձնանալ վանքին մէջ եւ ամբողջութեամբ հոգեւոր կեանքի նուիրել իր անձը: Այդ նպատակով Գրիգոր Շղթայակիր վայելուչ բնակարան մը շինած էր անոր համար վանքին մէջ: Երկու հարազատներու այդ փափաքը չիրականացաւ (փառք Աստուծոյ), եւ Կոլոտ շարունակեց տքնիլ եւ արդիւնաւորել իր կեանքը մինչեւ իր վերջին շունչը, զոր տուաւ 1741, Փետրուար 12ին, մեծ վիրտ պատճառելով իր երէց եղբօր՝ Շղթայակիրին եւ ամբողջ ազգին: Ու ազգը, իր մեծագոյն եւ լաւագոյն զանգուածով գիտցաւ յարգել զայն ու գնահատել անոր մեծ ճիրքերը եւ կարողութիւնը, եւ ի նշան իր երախտագիտութեան մեծ եւ շքեղ յուզարկաւորութեամբ ամփոփեց անոր անշնչացեալ մարմինը Ղալաթիոյ Ս. Գրիգոր ամփոփեց անոր անշնչացեալ մարմինը Ղալաթիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչի դրան քով, ուր սովոր էր կենալ, առաջին անգամ Իսթանպուլ գալուն, եւ արցունքոտ աչքերով իր ժողովուրդին լուսաները հաւաքել Գլակայ եւ Սաղիմայ վանքերու նորոգութեան ու պայտնիքի համար: Այժմ կը ննջէ ան՝ փառաւորապէս վերաշինեալ նոյն եկեղեցիի զանգակատան ներքեւ յատկապէս պատրաստուած մատուռին մէջ (Սալալանեանց. ՊԱՏՄԹ. ԵՄՄԻ. էջ 735-737):

* [Շնորհք Պատրիարքի՝ Ս. Էջմիածնի Վեհարանում 1978 թ. Հոկտ. 8ին կարգացած ընդարձակ զեկուցման հրատարակութիւնը տե՛ս «Էջմիածին», 1978, Ժ ԺԲ, էջ 90-109]:

Սկզբնաղբիր. Հաննա Վրդ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ. Տպ. Կ. Պոլիս 1731. Տե՛ս. նաև Բարգէն Վրդ. Կիւլէսէրեանի ԿՈԼՈՏ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԱՏՐԻԱՐԹ, Վիեննա, 1904: [Գ. Բամպուրճեան, Յովհաննէս Պատրիարք Կոլոտ (1678-1741) եւ իր աշակերտները: Ստանպուլ, 1984]:

ՎԵՐՁԱԲԱՆ

Թէեւ ծրագրած էինք մեր այս վարքազրույթեանց շարքը հասցնել մինչեւ մեր ժամանակները, սակայն նկատի ունենալով 19-րդ եւ 20-րդ դարերու մեր արժանաւոր դէմքերու բազմութիւնը, ըլլան անոնք եկեղեցական կամ աշխարհական, դժուար եղաւ մեզ համար անոնց մէջէն քանի մը դէմքերու ընտրութիւն կատարելը: Երկրորդ՝ մենք ծրագրած էինք նաև կազմել առնուազն ցանկը այն բոլոր Հայազգի մարտիրոսներուն, որոնք դարերու ընթացքին իրենց կեանքը զոհած են Քրիստոնէական հաւատքին համար եւ որոնք չէին արժանացած արեւկան յիշատակութեան: Սակայն նկատի ունենալով, որ այս ցանկի կազմութիւնն ալ երկայն ժամանակի եւ աշխատանքի կը կարօտի, Հետեւաբար առ այժմ կանգ կ'առնենք այս կէտին, եւ երկու ծրագիրներու գործադրութիւնն ալ կը յետաձգենք յարմարագոյն ապագային:

Սակայն աւելորդ չենք նկատեր այս առթիւ գէթ անցողակի յիշել թէ վերանորոգիչ Մովսէս Տաթևացիի յաջորդները, սկսեալ Փիլիպպոս Կաթողիկոսէն մինչեւ 18-րդ դարու վերջերը գահակալող Սիմէոն Երեւանցին, եւ 19-րդ ու 20-րդ դարու մեծանուն Հայրապետները՝ Ներսէս Աշտարակեցին, Գէորգ Դ, Մկրտիչ Խրիմեան եւ մինչև մեր օրերուն Ս. Էջմիածինը վերակենդանացնող Գէորգ Զ Չէօրէքեան եւ Մայր Աթոռ Նիւթազէս շէնցնող ու պայծառացնող Վազգէն Առաջին Կաթողիկոսները. յիշած ըլլալուն համար 25-30 անուններու հոյժէն քանի մը հատը միայն, առ հասարակ արժանաւոր անձնաւորութիւններ են: Բիչ չէ նաև թիւը Արեւելահայերու այն աշխարհիկ գործիչներու, որոնք իրենց ժողովուրդին ծառայած են ամբողջական նուիրումով գրեթէ ամէն մարդի մէջ՝ ընկերային, կրթական, գրական, մշակութային ու բարեգործական:

Պատկերը նուազ փայլուն չէ Արեւմտահայութեան մօտ, սկսեալ վերանորոգիչ Յովհ. Կոլոտի անմիջական յաջորդներէն, Յակոբ Նալեան եւ Զաքարիա Կազգուանցի պատրիարքներէն, որոնք 18րդ դարուն Կոլոտի վառած զարթօնքի ջաշը արժանապէս վառ պահեցին ու առաւել եւս արծարծեցին, նիւթական ու բարոյական օժանդակութեամբ նոյն դարուն ապրող բարեգործ, ազգանուէր եւ կրթասէր մեծ ամիրաներուն: Կը շարունակուի շարքը մեծադորձ դէմքերուն 19րդ եւ 20րդ դարերուն մէջ, ըլլան անոնք հոգեւորական կամ աշխարհական, յիշած ըլլալու համար անոնցմէ քանի մը անուններ՝ Պօղոս Աարթանապոլսեցի, Վարժապետեան, Աշրգեան, Օրմանեան եւ մինչև այս Աթո-

ուր վերանորոգող Խաչատուրեան պատրիարքները: Աշխարհականներու մէջ կը շարունակուի գիծը բարեգործ ամիրաներու՝ Պէգճեաններ, Տատեաններ, Պալեաններ եւլն: Կան տակաւին 19րդ դարուն Պոլսոյ յատկանիշը կազմող մեր մեծանուն ՊԱՏՈՒԵԼԻՆԵՐԸ (ոչ բողոքական իմաստով), օրինակ՝ մեծազմուտ եւ Հայ եկեղեցիի ջերմ պաշտպան Յովհաննէս Տէրոյնց Պատուելին, եւ ԴՊԻՐՆԵՐԸ (բառին որքան կրօնական՝ նոյնքան եւ աւելի գրական ու մշակութային իմաստով), օրինակ՝ Պաղտասար Դպիր, [Գէորգ Դպիր], Գրիգոր Դպիր Փեշտիմալճեան եւ նմանները, որոնք ճոխացուցած են մեր հոգեւոր գրականութիւնը, Պապա Համբարձումներ, որոնք կարեւոր նոր ուղիներ բացած են Արեւմտահայ հոգեւոր եւ աշխարհիկ երգի եւ ձայնագրութեան մէջ: Ապա կուգան Սահմանադրական ու Զարթոնքի նոր սերունդի մեծ դէմքերը, որոնք արդիացուցին մեր լեզուն եւ դպրութիւնը եւ որոնք որքան ալ աշխարհիկ մտայնութեամբ լեցուած մարդիկ էին, բայց իրենց մէջ չէին պակսեր Գր. Օտեանի նման հաւատաւոր հոգիներ: Կան նաեւ անուանի ու նուիրեալ դաստիարակներ՝ Պէրպէրեան, Հինդլեան եւ ուրիշներ: Մինչեւ իսկ Սփիւռքի մէջ կան մեծ անուններ, յատկապէս բարեգործական մարդի մէջ՝ Նուպար Փաշաներ եւ նմանները: Աւելին եւ կարեւորն ալ չպակսիր բարեբախտաբար. մինչեւ մեր ժամանակները կը շարունակուի շղթան կրօնքի նահատակներուն եւ մարտիրոսներուն, ինչպէս նաեւ հին եկեղեցական Հայրերու եւ սուրբերու կաղապարով կերտուած հոգեւորականներու, որոնք իրենց սուրբ կենցաղով եւ ժողովրդանուէր գործունէութեամբ կ'իրականացնեն քաջ հովիւներու տիպարը: Ասոնցմէ են, օրինակ, մեզի ժամանակակից Ստեփանոս Արքեպսկ. Յովակիմեան եւ Բարթողիմէոս Մ. Վրդ. Թագապճեան, որոնցմով կ'արժէր վերջաւորութեան բերել մեր այս գիրքը:

Ուրեմն, նկատի ունենալով մէկ կողմէն վերոյիշեալ եւ տակաւին չյիշուած պարագաներ, միւս կողմէ նկատի ունենալով, որ ցարդ ներկայացուած անուններով արդէն իսկ ըստ բաւականին ստուարացած եղաւ այս Հատորը, հետեւաբար գայն աւելի չուսեցնելու մտահոգութեամբ առ այժմ կանգ կ'առնենք այստեղ, յառաջիկային ձգելով, եթէ Տէրը կամենայ, իրագործելու մեր ծրագրին այս վերջին մասը ուրիշ Հատորով մը:

Սուրբերու վերաբերեալ մեր նախորդ գիրքերու ցանկերը մեր Եկեղեցական օրացոյցի մէջ տեղ գրաւած սուրբերու անուններուն հետ բաղդատելով՝ հետեւեալ աննշան տարբերութեանց հանդիպեցանք:

1. ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԱԿԱՆ ՍՈՒՐԱԵՐ՝ գրքին մէջ (էջ 143) աւելցուած է նաեւ անունը Յովհ. Մկրտչի մօր՝ Եղիսաբէթին, որ կը պակսի մեր Օրացոյցի մէջ:
2. ՀԱՄԱՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՍՈՒՐԱԵՐ՝ գրքին մէջ ունինք երկու ՄԵԼԻՏՈՍներ (էջք 52 եւ 60), իսկ Օրացոյցի մէջ՝ երեք: Տե՛ս 1982 Օրացոյց Թ. Խաչ. Բշ. եւ Գ. Յիւ. շք:
3. Օրացոյցի մէջ կան երկու ՔՐԻՍՏՈՒՓՈՐներ - Բ. Վարդ. Բշ եւ Զ Խաչ Եշ., իսկ մեր գրքին մէջ՝ մէկ Հատ միայն (էջ 122):
4. Օրացոյցի մէջ կան երկու ՆԻԿՈՂԱՅՈՍ Հայրապետներ՝ ԺԱ. Խաչ շք. եւ Բ. Յիւ. շք., իսկ մենք գրած ենք մէկ Նիկողայոս Հայրապետի մասին (էջ 48): Մենք թէ՛ այս եւ թէ՛ վերոյիշեալ պարագային այնպէս կ'ենթադրենք, որ մէկ եւ նոյն անձի համար սխալմամբ կրկնակ տօնակատարութիւններ սահմանուած են:
5. ՀԱՄԱՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՍՈՒՐԱԵՐ՝ գրքին մէջ կը պակսի Ադդէ Հայրապետը, որուն վարքը կուտանք ստորեւ համառօտիւ:
6. [Վկայաբանութիւններու Հայերէն բնագիրները կորած ըլլալու պատճառով Հայոց մատենագրութեանն ու եկեղեցուն անծանօթ մնացած են Հայազգի նահատակներ Դաւիթն ու Տիրիճանը, Կողացի ինը մանուկները: Անոնց վարքը համառօտիւ տե՛ս ստորեւ: Լրացուցիչ են նաեւ ուշադրութենէ վրիպած «Արարատեան բիւր վկաների», Սուրբ Աշրևատիոս Եպիսկոպոսի, Սուրբ Մակարիոս եպիսկոպոսի, Շամշուլտէ քաղաքի բնակչաց վկայաբանութիւնները, վարքերն ու պատմութիւնները]:

ԱՌԴԵ ԼԱՅՐԱՊԵՏ

Ըստ ասորական եւ Հայկական աւանդութեանց, Ադդէ կը ներկայացուի որպէս «մետաքսագործ-կերպասագործ» եւ «խոյրարար-թագագործ» պաշտօնեան Արգար թագաւորին, Եղեսիոյ քաղաքին մէջ: Երբ Թադէոս Առաքեալ Եղեսիա (Ուրֆա) եկաւ ու քարոզեց Աւետարանը, Արգար թագաւորը, պալատականներէն ու քաղաքի ժողովուրդէն շատեր դարձի եկան, որոնց կարգին էր Ադդէ, որ աւելի մօտէն աշակերտեցաւ Առաքեալին: Երբ պէտք եղաւ, որ Թադէոս Առաքեալ Հեռանայ Ուրֆայէն, իր տեղ յաջորդ ձեռնադրեց Ադդէն, որ այսպէս եղաւ Ուրֆայի առաջին եպիսկոպոսը:

Արգարի մահէն յետոյ իր յաջորդը վերադարձաւ Հեթանոսութեան: Օրին մէկը երբ նոր թագաւորը Հրաման ղրկեց Ադդէին, որ իրեն ալ թանկարժէք ու փառաւոր թագ մը շինէ, ինչպէս կը շինէր Արգարին, Ադդէ Հետեւեալ պատասխանը ղրկեց. «Իմ ձեռքերս ուրացող թագաւորի մը թագ չեն կրնար շինել»: Այս մերժումին վրայ զայրացաւ թագաւորը եւ մարդ ղրկեց որպէսզի սպաննեն զայն: Գտան Ադդէն եկեղեցիի մէջ, աթոռի վրայ նստած քարոզելու պահուէն: Կտրեցին անոր սրունքները, որուն վրայ անմիջապէս մահացաւ:

Յունաց կամ Լատինաց մէջ տօնուած ըլլալուն նշան չկայ: Շատ Հինէն անցած է մեր Տօնացոյցին առանձինն, ապա Արգարին յիշատակն ալ իր տօնին կցուած է: Միմէննեան տօնացոյցով իրարմէ բաժնուեցան, եւ ներկայիս Ադդէի տօնը կը կատարուի Դ. Յիս. Բշին: ՓԵՇՏԻՄԱԼՃԵԱՆԻ մէջ կը յիշատակուի Դեկ. 24ին. իսկ ՄԱՐ-ՉՈՒԱՆՑԻ մէջ՝ Դեկտ. 21ին:

Սկզբնաղբիւրը.- ԼԱՌՈՒԲՆԱՅ կամ ԼԵՌՈՒԲՆԱՅ, Եղեսացւոյ ԹՈՒՂԹ ԱՐԳԱՐՈՒԻ եւ ԶԱՐՈՉՈՒԹԻՒՆ ՍՐԱՌՅՆ ԹԱԴԵՒ, Երուսաղէմ, 1968: ՄՈՎՍԷՍ ԽՈՐՆԱՑԻ, Պատմութիւն Հայոց:

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԲԻՒՐ ՎԿԱՆԵՐ ԿԱՄ՝ ԱԿԱՏԵԱՆՔ

118 թուականին Եփրատացիները եւ Կադարեանց ապստամբութիւնը ճնշելու Համար Հռովմայեցիների Ադրբանոս կայսրը զօրք է ուղարկում Արեւելք: Զօրաց մէկ մասը դասալիք է դառնում, իսկ կայսրը Հաւատարիմ մնացած ինը հազար զինուորները, Ակատոս կամ Ակատիոս զօրականի գլխաւորութեամբ, պարտութիւն են կրում: Հրեշտակի ազդմամբ Ակատիոսն ու նրա զինուորները քրիստոնէութիւն են ընդունում եւ յաղթում ապստամբներին: Նրանք, սակայն, այլեւս հրաժարուում են Հեթանոս կայսրը ծառայել, ուստի յաղթութեամբ ուրախացած եւ Հրաժարումով տրտմած կայսրը զօրք է ուղարկում Արարատեան երկիր՝ Հնազանդութեան բերելու: Նոր եկած զինուորներից «ջոկ մի հազար արանց» միաբանում է Ակատեանց: Այս տաս հազարը, սակայն, «ոչ կամեցեալ մարտնչել ընդ զօրս կայսեր, յանձն առնուն նահատակիլ յանուն Քրիստոսի, յոր եւ մկրտեալ էին ի պաշտօնէից կողմանցն»: Ադրբանոսի Հրամանով տաս Հազար քրիստոնեայ զինուորները նահատակուում են «Հարեալք քորկոծմամբ եւ պէսպէս տանջանօք»:

Այս բիւրը լատինական Յայսմաւուրքում (22 Յունիսի) յայտնի է Արարատեան վկայք անունով: Նրանց վերաբերող անդրագոյն յիշատակութիւն կայ Անաստաս Դիւանապետի մօտ (Թ դար): Կան եւ աւելի ուշ շրջանի ներքողական գրուածքներ: Վենետիկի Գեղարուեստից ճեմարանում է պահուում իտալացի նկարիչ Կարպուչիոյի (1450-1522) Հեղինակած «Նահատակութիւն Արարատեան վկայից» պատկերը (նմանահանութիւնը տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 475): 1840 Բուականին Հռոմում լոյս տեսաւ Մասսեաց Հին ու նոր նահատակների նուիրուած լատիներէն եւ իտալերէն քերթուած՝ «Յաղագս շարժման լեբինն Այրարատայ, ուր Ս. Ակատիոս խաչեցաւ տասն Հազար ընկերօք» խորագրով (Հեղինակ՝ Պիետրօ Մարիա Հերեդիա դել Ռիոյ, Թարգմ. տե՛ս Ղ. Ալիշան, նշւ. աշխ., էջ 476-477):

Հայկական սկզբնաղբիւրները զարմանալիօրէն ոչինչ գիտեն Արարատեան բիւր վկաների մասին: Յուսիկ Եպիսկոպոսի վարկածով «Անշուշտ այս զինուոր վկաները, եթէ ոչ ամբողջովին, մեծ մասամբ Հայ էին. այդ Հայերը, Եփրատացոց աշխարհում քրիստոնեայ դառ-

նալով, թողին զինուորութիւնը եւ յետ եկան իրանց երկիրը՝ Այրարատեան աշխարհը, Հայաստան»:

Ըստ վարկածի Հեղինակի՝ թերեւս Արարատեան այս բիւր վկաներից են Հայոց Ոսկեանք՝ Արեւմտեան եւ Արեւելեան ականգազրոյցներում, ապա եւ վկայաբանութիւններում տարբեր անուններ ու առաքելութիւն ստացած:

Ուշագրաւն այն է, որ Հռոմէական եկեղեցու ականգութեամբ քրիստոնէութեան առաջին դարերի զանգուածային այս նահատակութիւնը տեղորոշուած է Այրարատեան աշխարհում, որոշակի աղբր ունենալով Նոյեան տապանի, Մասեաց լեռան Հետ կապուած զրոյցների եւ մանաւանդ նախալուսաւորչեան քրիստոնէութեան պարագային:

Սկզբնաղբիրներ. 2. Ալիշան, Այրարատ. բնաշխարհ Հայաստանեայց: Վենետիկ, 1890, էջ 476-477: Նաեւ՝ Յուսիկ Եպիսկոպոս, Անպատականներ եւ վանականութիւն: Վաղարշապատ, 1906, էջ 86-87:

ՍՈՒՐԱ ՍԷՐՎԱՏԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

(Saint Servatius, IV դար)

Լատինական «Վարք սրբոցը» (Acta Sanctorum, t. III, 1780, մայիս) պատմում է, թէ Սէրւատիոս անունով մի Հայագգի եպիսկոպոս Սարգիկէի, ապա եւ Բիմիւիի եկեղեցական ժողովներին մասնակցելուց յետոյ (IV դար) քարոզչութեան է մեկնում Հիւսիսային երկրներ՝ Բելգիա եւ Հոլանդիա եւ դառնում Տոնգր (Tongres) քաղաքի թեմակալ, ուր եւ կատարում է անձնական զոհաբերութիւններ եւ անուն ու Համակրանք շահում: Այնուհետեւ նա Հաստատուում է Մաստրիխտ (Maastricht) քաղաքը, պարապում քարոզչութեամբ եւ անուանի դառնում Հրաշագործութիւններով: Նրա մասին յիշուում են ականգութիւններ, որոնց հիմամբ եւ VII դարում տեղացի մի եկեղեցական շարադրում է «Վարք Սէրւատիոսի» (Vita Servatii) երկը: Ըստ այդ շարադրանքի՝ սրբի տապանաքարը դրուել է ս. Մոնիւֆի (Monüfe) կարգադրութեամբ, որին է վերագրւում նաեւ լատիներէն տապանագրի Հեղինակումը:

Նրա յիշատակը մեծարուել է Գերմանիայում եւս, ուստի եւ նրան

ձոնուած քերթուած է յօրինուել:

Ըստ ականգութեան՝ Սէրւատիոս եպիսկոպոսը վախճանուել է 384 թ. Մաստրիխտում: Սրբի նշխարներն ամփոփուած են նրա իսկ գերեզմանի վրայ կառուցուած եկեղեցում: Յիշատակի օր է սահմանուել Մայիսի 13-ը, իսկ Հռոմի Պապից ստացած բանալին, որ պատկերուած է Բելգիայի մայրաքաղաքի եկեղեցւոյ խորանի գունաւոր ապակիների վրայ, պահպանուում է նշխարքն ամփոփող եկեղեցու գանձարանը:

Աղբիւրների եւ գրականութեան վկայակոչումները տե՛ս Սարուխան, Բելգիա եւ Հայերը, ՀԱ, 1936, սիւն. 360-363:

ԴԱԻԹ ԵՒ ՏԻՐԻԾԱՆ

Ձաւակներն են Բասեն գաւառի Օճկում ականը բնակուող բարեպաշտ Վարդան իշխանի եւ Թագինէ տիկնոջ: Հօր վաղաժամ մահից յետոյ մանկահասակ եղբայրների խնամակալութիւնն ստանձնած Թեւդոս մօրեղբայրը կրօնքով Հեթանոս է, եւ քրոջորդիների Հայրենական կալուածներին տիրանալու Համար Դաւթին եւ Տիրիճանին եւս յորդորում է Հրաժարուել ճշմարիտ Հաւատից եւ Հեթանոսութեան դառնալ: Եղբոր Հալածանքից որդիներին ազատելու նպատակով Թագինէն առնում է մանուկներին եւ ծպտեալ փոխադրում Տայքի Վաժգան ականը: Թեւդոսը, այնուամենայնիւ, գտնում է նրանց, եւ մինչ գառնարած մանուկները ուրախանում են մօրեղբորը տեսնելու պատեհութեամբ, Թեւդոսն ու նրան ուղեկցող սպասաւորները սպանում են Դաւթին: Նրա մահը տեսած Տիրիճանը փախչում է դէպի Դիւրի գիւղից արեւմուտք, սակայն յետապնդողները նրան եւս սպանում են: Եղբուլթեան լուրն առած Թագինէն շտապում է սարն ի վեր՝ որդիների մօտ եւ սպանուած գտնում նրանց: Ողբում է ու անիծում իր ճակատագիրը: Մեղսագործ Թեւդոսը կուրանում է, մինչդեռ նահատակների սպանութեան տեղը լոյս է իջնում, եւ իշխանից այդ տեսած ներսէս Հայոց կաթողիկոսը գալիս է Դիւրի:

Թեւդոսը զղջում է կատարածը, քրիստոնեայ դառնում եւ թողութիւն աղբրում: Տեսողութիւնը նորէն գտած մանկասպանը ծախսում է իր ողջ ունեցուածքը եւ զոհերի գերեզմանի վրայ եկեղեցի կառու-

ցում: Իսկ երանելի Թագինէն տեղափոխուում է Մամբուանի Տաճարա-
նի գիւղ եւ այնտեղ էլ կնքում իր մահկանացուն: Նրա գերեզմանը
ախտածէսների բժշկութեան տեղի է դառնում:

Սկզբնաղբիւր. Ընթերցումն երկու սուրբ տղաներ Դաւթի եւ Տիրի-
ճանի, տե՛ս «Բանբեր Մատենադարանի», Թիւ 12, Երեւան, 1977, էջ
181-186:

Մանօթ. Հայերէն գրուած բնագիրը չի պահպանուել: Մեզ է
հասել Հին վրացերէն, Թարգմանութեամբ՝ Ժ դարի գրչագրով (Աթոսի
Իւլիոն վանք, Թիւ 57):

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ԿՈՂԱՑԻ ԻՆԸ ՄԱՆԿԱՆՑ

Կող գաւառի Կրակուճք մեծ գիւղի բնակիչների մէկ մասը քրիս-
տոնեայ էր, միւսը՝ Հեթանոս: Ինչպէս սովորութիւն է մանկանց, քրիս-
տոնեաների ու Հեթանոսների երեխաները խաղում էին միասին, սա-
կայն եկեղեցի մտնելիս քրիստոնեաները արգելում էին իրենց անհա-
ւատ խաղակիցներին: Մանուկները մնում էին դրսում ու երանի
տալիս եկեղեցի մտնողներին: Ի վերջոյ՝ նրանք եւս որոշում են առանց
ծնօղների համաձայնութեան մկրտութիւն առնել: Գիւղի քահանան գի-
շերով գետի ակունքում մկրտում է նրանց, եւ նորադարձները այլեւս
հրաժարւում են իրենց տները վերադառնալ: Զայրացած ծնօղները
բողոքում են գեղջաւագին եւ նրա համաձայնութեամբ որոշում սպա-
նել նորադարձ մանուկներին: Տանում են մկրտութիւն առած տեղը,
խոր գուբ փորում եւ ինը երեխայ լցնում նրա մէջ. նախ քարկոծում
են, ապա՝ ծածկում հողով:

Նահատակութեան տեղը աստուածահաճոյ վկայարան է դառնում:

Սկզբնաղբիւր. Վկայաբանութիւն թուով ինը սուրբ մանկանց,
որոնք սուրբ Աւագանի մկրտութեամբ հոգեւոր եղբայրներ էին, իսկ
ծնուած՝ իւրաքանչիւրն իր մօրից, «Բանբեր Մատենադարանի», Թիւ
12, էջ 186-188:

Մանօթ. Նախորդի հետ նոյն պատմութեամբ ու գրչագրով:

ՍՈՒՐԲ ՄԱԿԱՐԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

(S. Macarius, X-XI դարեր)

Ս. Մակարիոսը որդին է Միքայէլ եւ Մարիամ իշխանական ամո-
լի, որոնք X դարում Հայաստանից գաղթել ու Հաստատուել են Ան-
տիոք: Նրանց մանկան շնորհալիութիւնը նկատած Անտիոքի եպիսկո-
պոս Մակարիոսը կնքահայր է դառնում, տալիս իր անունը եւ ստանձ-
նում հովանաւորութիւնը: Հայազգի պատանին, մայրէնիից բացի, տի-
րապետում է յունարէն, արաբերէն, եբրայերէն եւ ասորերէն, լեզու-
ների, հիմնաւոր կրթութիւն ստանում եւ եկեղեցական կարգի արժա-
նանում:

Խնամակալ առաջնորդի յանձնարարութեամբ Մակարիոսը փոխա-
րինում է նրան՝ բարձրանալով Եպիսկոպոսական աթոռ: Կարօտեալնե-
րի վերաբերմամբ ցուցաբերած հոգածութիւնը, բարեգործութիւններն
ու մանաւանդ բժշկական հրաշագործութիւնները նրա անձը յայտնի
ու սիրելի են դարձնում ողջ Ասորիքում ու Հայքում: Մակարիոսը,
սակայն, փառքից խոյս տալու համար չորս հայազգի ընկերների հետ
ուխտի է մեկնում Երուսաղէմ:

Առ ժամանակ Հրեաների ու Արաբների միջավայրում քրիստո-
նէութիւն քարոզելուց եւ այլազան չարչարանքներ կրելուց յետոյ,
վերադառնում է Անտիոք, հրաժարւում առաջնորդութիւնից եւ Սուրբ
երկրի վիճակը Եւրոպացիներին ներկայացնելու առաքելութեամբ մեկ-
նում է Գերմանիա, ապա եւ Բելգիա: Ամենուր դբաղւում է քարոզչու-
թեամբ ու բարեգործութիւն սերմանելով: Շուտով էսկօ գետի շրջա-
կայքի բնակչութեան մէջ ժանտախտի համաճարակ է սկսւում:

Մակարիոսը թողնում է Գանը (Gand) եւ մեկնում Հիւանդների
խնամելու եւ դարմանելու: «Այր Աստուծոյ» կոչուած խնամածուն,
սակայն, նոյնպէս ժանտախտի զոհ է դառնում: Նրա գերեզմանը ուխ-
տատեղի է վերածւում, որը բժշկութիւն է տալիս ախտածէսներին:

Կաթողիկէ եկեղեցին սուրբ է ճանաչում նրան եւ 1067 թ. տեղա-
փոխում են գերեզմանը: Յուդարկաւորութեանը մասնակցում է Յրան-
սիայի Թագաւոր Փիլիպոս Ա-ը: Նրա յիշատակի օր է սահմանւում Ապ-
րիլի 10ը եւ ներածւում լատինական Տօնացոյց: Մակարիոսի վարքը
յայտնի է երեք խմբագրութեամբ՝ «S. Macarius ep. Antiochiae

Armeniae» վերտառութեամբ:

Սկզբնաղբիր. «Bibliotheca Hagiographica Latina», Bruxelles 1900-1901, էջ 757: Հմտ. Ա. Սարուխան, Բելգիա եւ Հայերը, ՀԱ, 1934, սիւն. 144-148:

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԷԻՑ ՀԱՅՈՑ ԵՒ ՎՐԱՑ ՕԱՄՇՈՒԼՏԷ ՔԱՂԱՔԻՆ

Երեւանի Մատենադարանի ձեռագրերից մէկում (N. 1382, 1219 թ.) պահպանուել է Կիրակոս Բանասիրի կազմած Համառօտ Ժամանակագրութիւն՝ իբրեւ յիշատակագրութիւն: Այստեղ կարդում ենք. «ՊԶԹ (1440): Զհանձէն Շամշուտէ առ եւ կոտորեաց աւելի քան զերեք Ռ (1000) եւ տարաւ գերի աւելի քան զհին Ռ (1000) եւ մեծ սուր եթող քրիստոնէից, զի բազումք թողին զՔրիստոս» (էջ 306բ):

Դէպքերին ժամանակակից եւ ակնաստես մէկ այլ գրիչ՝ Յովնան Անտոնով, կազմել ու իր ընդօրինակած Յայսմաւուրք է մուծել (Քաղոցի ԺԴ եւ Դեկտ. ԻԲ) Շամշուտէ քաղաքի վերոբերեալ կոտորածի զոհերի վկայաբանութիւնը (ձեռ. N.4696, 1458 թ. էջ 235-236): Բովանդակութիւնն այս է. «Յողջոյն խաղաղութեան» չգալու եւ «զսահմանեալ Հարկս թագաւորական» չտալու պատճառով Վրաց թագաւորի (Աղեքսանդր Ա) զէմ զայրացած Զհանշահը նախ աւերում է Տփղիսը եւ հողործին 20000 բանակով «եկն եւ նստաւ ի վերայ Շամշուտէ քաղաքին աւուրս Խ. (40) ի գալստեան Մառզարդարի տօնին»: Անպաշտպան մնացած քաղաքի բնակչութիւնը, «նեղեալ ի սովոյ եւ ի ծարաւոյ», չի հոգում բերդի պաշտպանութիւնը եւ այն տալիս է թշնամուն: Երեք օր թալանում են բնակչութեանը, ապա հաւաքում նրանց եւ շարունակում բռնանալ: Արիասիրտ երկու երիտասարդ Հանդգնում են նզովել բռնացողներին եւ իրենց՝ «որդիք սրբոյն Գրիգորի Լուսաւորչին» լինելը հաստատել, որին ի պատասխան ասպատակիչները նետահարում են նրանց, ապա նաեւ 1000 բնակիչ, «եւ Խ. (40) ի նոցանէ կրանաւորք, քահանայք եւ սարկաւազուք»: Մնացեալներին՝ «ԺՌ ոգի» (10000) գերեվարում են ի «ՄՐ եւ Խորասան»:

Սկզբնաղբիր. Մասնակի կրճատումներով հրատարակուած է Լ. Խաչիկեանի կազմած Յիշատակարաններ»ում, ԺԵ դար, Ա, էջ 507-508:

ՀՐԵՇՏԱԿՆԵՐ

1. ՀՐԵՇՏԱԿՆԵՐՈՒ ՏԵՂԸ ԵՒ ԴԵՐԸ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻՆ ՄԷՋ: Եկեղեցին իր տարեկան տօնակատարութեանց մէջ ոչ միայն տէրունի տօներ եւ Սրբոց օրեր ունի, այլ նաեւ տարին մէկ օր Հրեշտակներու յիշատակութիւն կը կատարէ: Հրեշտակաց օրը, ըստ մեր տօնացոյցի կը հանդիպի Խաչի ութերորդ կիրակիի յաջորդող Շաբաթ օրը հետեւեալ խմբական անունի տակ. ՍՐԲՈՑ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑՆ՝ ԳԱՐԻԷՒԼԻ ԵՒ ՄԻՔԱՅԷԼԻ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ԵՐԿՆԱՅԻՆ ԶՕՐԱՑՆ:

Հրեշտակ բառը, ինչպէս նաեւ անոր համապատասխան երբայեցերէնը Մալախ եւ յունարէնը՝ Անգելոս, որ գրեթէ նոյնութեամբ անցած է եւրոպական լեզուներուն, կը նշանակեն պատգամատուր: Այս բառը նոյն իմաստով գործածուած է նաեւ մարդոց համար, որոնք իբրեւ պատգամաւոր զրկուած են: Օրինակ. «Առաքեցին Հրեշտակ զկնի նորա» (Ղուկ. ԺԹ. 14), որ կը նշանակէ՝ «Պատգամաւորներ զրկեցին ետեւէն»: Հրեշտակ բառը շուրջ 500 անգամ գործածուած է մեր գրաբար Աստուածաշունչին մէջ, որոնց փոքր մէկ մասը միայն կը վերաբերի մարդ պատգամաւորներու, իսկ մնացեալ մեծագոյն մասը յատուկ է երկնային էակներու, որոնք առ Հասարակ Հին Կտակարանի մէջ կը յիշուին իբրեւ «Հրեշտակ Աստուծո» կամ «Հրեշտակ Տեսուն»: Այս համեմատութեան մասին գաղափար մը տուած կ'ըլլանք, եթէ Հաստատենք, որ Նոր Կտակարանի մէջ գործածուած շուրջ 200 Հրեշտակ բառերէն, Հազիւ 3-4 հատը մայն պատգամաւոր մարդու համար են, եթէ չհաշուենք Յայտնութեան Գրքի Բ եւ Գ գլուխներու մէջ յիշուած եօթ եկեղեցիներու «Հրեշտակ»ները, որոնց եօթը կարճ նամակներ զրկուած են: Ասոնք կարելի է նոյնացնել եկեղեցիի տեսուչներուն կամ ներկայացուցիչներուն հետ:

Հրեշտակները առ Հասարակ ներկայացուած են Ս. Գրքի մէջ իբրեւ անթիւ անհամար բազմութիւններ. օրինակ Մննդ. ԼԲ. 2 ի մէջ կը պատկերացուին իբրեւ «Աստուծոյ բանակը», իսկ Դանիէլի գրքին է 10ին մէջ՝ «Հազարք Հազարաց եւ բիւրք բիւրուց»: Ասոնք կը կենան Աստուծոյ անմիջական ու մշտական ներկայութեան: Երկրաւոր բացատրութեամբ մը ասոնք կը կազմեն Աստուծոյ արքունիքը, ուր գտնուող անձնակազմին նպատակն է ծառայել թագաւորին, մեծամեծ

ներէն սկսեալ մինչեւ յետին սպասաւորները: Ինչպէս իրենց անուներն իմաստէն (պատգամաւոր) կարելի է հետեւցնել, անոնց հիմնական պաշտօնն է Աստուծոյ պատգամները եւ տնօրինութիւնները տանելու տալ պատկան մարդերուն, եւ Անոր հրամանները գործադրել ազգերու կեանքին կամ տիեզերքի վարչութեան մէջ (Տե՛ս Մննդ. ԺՁ 7, Դատ. 2 11, Դան. 2 22 եւլն.): Կարեւոր դեր կատարեցին անոնք Քրիստոսի կեանքին մէջ Աւետուածէն մինչեւ Համբարձումը: Շատ կարեւոր է նաեւ պաշտօնը եւ պարտականութիւնը, զոր անոնք կատարեցին եւ կը շարունակեն կատարել մեր փրկութեան մէջ. ըստ Եբրայեցւոց թուղթի հեղինակի հաւաստումին, հրեշտակները «Սպասաւորող հոգիներ են, որոնք կը զրկուին սպասաւորելու համար անոնց, որոնք փրկութիւնը պիտի ժառանգեն» (Եբր. Ա 14):

Հրեշտակները մարդոց պէս բանաւոր էակներ են, բայց անոնց հակառակ՝ անմարմին եւ հոգեւոր են. գերազանց են քան զմարդիկ իրենց կարողութեամբ ու փառքով: Ասոնց ստեղծումը չէ յիշուած Ս. Գրքին մէջ, բայց կը կարծուի, որ գոյութիւն ունէին տիեզերքի ստեղծումէն առաջ: Ասոնց բնութիւնը կրակի պատկերով ներակայացուած է. «Աստուած ստեղծեց հրեշտակները՝ իբրեւ հոգիներ եւ իր պաշտօնեաները՝ իբրեւ կրակի բոց» (Սղմ. ճԳ. 4, Եբր. Ա. 7):

Երկնային այս էակներն ալ օժտուած են մարդերու պէս ազատ կամքով, այսինքն՝ կրնան մնալ Աստուծոյ հպատակութեան մէջ կամ հեռանալ անկէ՝ եթէ կամենան: Բայց որովհետեւ ասոնք ստեղծուած են լոկ Աստուծոյ ծառայելու եւ անոր հետ ապրելու համար: Եթէ հետեւաբար իրենց երջանկութիւնը Աստուծոյ հետ ըլլալուն մէջ կը գտնեն. եթէ Աստուծմէ հեռանան, դժբախտ կ'ըլլան: Մարդն ալ ստեղծուած է Աստուծոյ կամքին եւ օրէնքներուն համաձայն ապրելու եւ անոր հետ հաղորդութեան մէջ մնալու համար, սահմանուած այս նպատակէն դուրս ելլէ մարդը, ինչ որ ազատ է ընելու, քանի որ օժտուած է ազատ կամքով, դժբախտ պիտի ըլլայ, ինչպէս արդարեւ եղան նախածնողք՝ Աստուծոյ կամքին հակառակ գործելէ յետոյ: Այսպէս եղան նաեւ հրեշտակներէն ոմանք, ինչ որ պիտի տեսնենք գրութեանս վերջաւորութեան: Քանի որ հրեշտակները հոգեւոր կամ «անմարմին» (աննիւթ) էակներ են, հետեւաբար անտեսանելի են բնութեամբ, բայց ի հարկին, եթէ Աստուած այդպէս կամենայ, տես-

սանելի կ'ըլլան զանազան մարմիններով եւ զանազան կերպարանքներով:

Հրեշտակները սեռ չունին, այսինքն՝ արուի եւ էգի զանազանութիւն չկայ անոնց մէջ (Մաթ. ԻԲ 30): Ոչ կը բազմանան, ոչ ալ կը պակսին, հետեւաբար մահ կամ ծնունդ ալ չունին: Ստոյգ է՝ ատեն մը նուազում յառաջ եկաւ անոնց մէջ, բայց ոչ մահով, ոչ ալ փճացումով, այլ՝ ապստամբութեամբ եւ Աստուծոյ ներկայութենէն վտարումով, որուն պիտի անդրադառնանք ըսինք գրութեանս վերջաւորութեան:

Բազմաթիւ յիշատակութիւններ, դէպքեր ու դրուագներ կան հրեշտակներու մասին Աստուածաշունչին մէջ Մննդոց գիրքէն մինչեւ Յայտնութեան գիրքը: Օրինակ, հրեշտակներ այցելեցին Աբրահամին՝ Սողոմ եւ Գոմոր ամբարիշտք քաղաքներու բնաջնջման կապակցութեամբ (Մննդ. ԺԸ եւ ԺԹ գլուխներ), Գէդէոնի ազատագրական առաքելութիւնը եւ Սամսոնի ծնունդը հրեշտակներու կողմէ յայտնուեցան. (Դատ. 2 11-23, եւ ԺԳ Գլուխ):

Նոր Կտակարանը լեցուն է հրեշտակներու յիշատակութեամբ: Քրիստոսի Մնունդի աւետիար անոնք տուին հովիւներուն: Քրիստոնէական եկեղեցիի առաջին երգը Փառք ի բարձունսր անոնք աւանդեցին (Ղուկ. Բ 8-15): Քրիստոսի ծառայեցին անապատի մէջ Անոր փորձութենէ յետոյ (Մաթ. Դ 11, Մրկ. Ա 13): Անոր Յարութեան առաջին երջանիկ աւետարները եղան: (Մաթ. ԻԸ)

Հրեշտակները կարեւոր դեր կատարեցին Առաքելոց կեանքին մէջ (Գործք, ԺԲ գլուխ): Իսկ Յայտնութեան գիրքը լեցուն է անոնց գործունէութեամբ աշխարհի կատարածին հետ կապուած: Մեր եկեղեցական պատմութեան մէջ ալ ծանօթ է, թէ Ս. Գրիգոր երբ ի՞նչ վիրացական պատմութեան մէջ ալ ծանօթ է, թէ Ս. Գրիգոր երբ ի՞նչ վիրացական պատմութեան մէջ ալ ծանօթ է, թէ Ս. Գրիգոր երբ ի՞նչ վիրացական պատմութեան մէջ ալ ծանօթ է: Իսկ Ս. Էջմիածնի տաճարի հիմնարկութեան կապակցութեամբ Աստուծոյ Միածինը Հայաստանի հողին վրայ իջաւ ի գլուխ հրեշտակներու հրաշալի եւ հսկայ թափօրի մը, ցուցնելու համար տեղը եւ ձեւը առաջին Քրիստոնէական տաճարի:

2. ՀՐԵՇՏԱԿՆԵՐՈՒ ԴԱՍԱԿԱՐԳԵՐՈՒ: Առ հասարակ ընդունուած է, որ անոնք զանազան դասակարգերու բաժնուած են: Այս դասակարգերէն կամ խումբերէն երկուքը յիշուած են շին Կտակարանի մէջ:

Առաջին խումբը կը կազմեն ՍԵՐՈՎՔԵՆԵՐԸ, որոնք նկարագրուած են միայն Եսայի մարգարէի գրքին մէջ, իբրեւ երգիչները երկինքին: Մարգարէն տեսիլքի մը մէջ կը նշմարէ Աստուած, որ բարձրութեան մէջ նստած է աթոռ մը. «Եւ ՍԵՐՈՎՔԵՆԵՐ կային Անոր շուրջը, որոնցմէ ամէն մէկը վեցական թեւեր ունէին. երկուքով իրենց երեսը կը ծածկէին, երկուքն ալ տարածուած էին թռչելու ձեւով: Եւ փոխիփոխ կ'աղաղակէին ու կ'ըսէին. «Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր Զօրութեանց, լի է ամենայն երկիր փառք նորա», եւ անոնց աղաղակէն տաճարի սեմերուն հիմքերը շարժեցան եւ Աստուծոյ տունը (ամպի նման գերբնական) ծուխով լեցուեցաւ» (Ես. 2 1-7): Իրենց այս երգեցողութեան Համար կոչուած են Սրբասաց Սերովքք:

Երկրորդ խումբը կը կոչուի ՔԵՐՈՎՔԵՆԵՐ, որոնք յաճախ յիշուած են Հին Կտակարանի մէջ: Օրինակ Ադամ երբ դարխտէն վտարուեցաւ՝ Քերովքէներուն յանձնուեցաւ «Կենաց ծառին ճամբան պահպանելու» պարտականութիւնը (Մննդ. 9 24): Ասոնք իրենց վրայ կը կրէին Աստուծոյ աթոռը, կամ մինչեւ իսկ իբրեւ աթոռ կը ծառայէին Աստուծոյ, անոր Համար Ս. Գրքի մէջ յաճախ կը յիշուի Աստուած, «որ նստի ի քերովքէս» (Ա թագ. 7 4, Բ թագ. 2, Սաղմ. 26 1 եւլ.): Եզեկիէլ մարգարէի գրքին (ժ Գլուխ) մէջ լայն տեղ կը տրուի անոնց, իբրեւ Աստուծոյ աթոռը կրողներ. կը ներկայացուին իբրեւ չորս դէմքերով արարածներ. մէկ երեսը՝ քերովքէի, միւսը՝ մարդու, երրորդը՝ առիւծի եւ չորրորդը՝ արծիւի: Կը ներկայացուին չորս թեւերով, եւ ամէն կողմէն ծածկուած աչքերով, անոր Համար ասոնք ալ առ Հասարակ ծանօթ են իբրեւ «Բազմաչեայ Քերովքէք»:

Քերովքէներու պատկերներ, քանդակներ կամ արձաններ կարեւոր տեղ ունին Աստուծոյ անմիջականօրէն յատկացուած վայրերուն մէջ: Օրինակ, նախ՝ Աստուծոյ Հրամանով շինուած Ուխտի ՏԱՊԱՆԱԿԻՆ կափարիչին վրայ երկու ծնրադիր Քերովքէներու արձաններ կային, դէմ դիմաց դարձած, գլուխները խոնարհած եւ իրենց թեւերը, իրենց գլուխներուն երկու կողմերէն վեր բարձրանալով եւ դէպի յառաջ հակելով, երկու Քերովքէներու երկու թեւերուն ծայրերը իրարու դպած էին (Ելք. ԻԵ. 17-22): Աստուած իր պատգամները այստեղէն կուտար: Երկրորդ՝ Քերովքէներու ձեռագործ պատկերներով ծածկուած էին Վկայութեան ԽՈՐԱՆԻՆ ներքին վարագոյրները. (Ելք.

ԻԶ. 1.ԼԶ. 8, 35): Երրորդ՝ Սողոմոնի ՏԱՃԱՐԻՆ մէջ ալ Քերովքէներու պատկերացումները կային: Նախ Տաճարի ԴԱՐԻՐ կամ Սրբութիւն Սրբոց կոչուած բաժնին մէջ շինուած էին երկու Հսկայ Քերովքէներ, Սրբոց կոչուած բաժնին մէջ շինուած էին երկու Հսկայ Քերովքէներ, ճիւղօթի փայտէ եւ ոսկիրով ծածկուած: Ասոնցմէ ամէն մէկուն թեւերուն երկարութիւնը՝ մէկ ծայրէն մինչեւ միւս ծայրը տաս կանգուն էր, իրենց Հասակին բարձրութիւնն ալ տասը կանգուն էր: Ուրի վրայ էր, իրենց Հասակին արեւմտեան պատին ներքեւ՝ իրենց թեւերը դրուած էին Դարբի արեւմտեան պատին ներքեւ՝ իրենց թեւերը Հորիզոնական բացուած, այնպէս որ երկու Քերովքէներուն ներքին ճորիզոնական բացուած, այնպէս որ երկու Քերովքէներուն ներքին թեւերը պատին ճիշդ մէջտեղը իրարու կը դպնային, իսկ արտաքին թեւերը՝ Հիւսիսային եւ Հարաւային պատերուն, ինչ որ կը նշանակէ, թէ տաճարին լայնքը 20 կանգուն էր (Գ. Թագ. 2. 23-28): Բաց աստի՜ թէ տաճարին լայնքը 20 կանգուն էր (Գ. Թագ. 2. 23-28): Բաց աստի՜ թէ տաճարի բոլոր պատերը ներսէն ծածկուած էին Քերովքէներու քանդակներով (Գ. Թագ. 2. 19): Նոյնպէս տաճարի ներքինը երկու մասի բաժնող միջնորմի դրան փեղկերուն վրայ եւս քերովքէներ քանդակուած էին (Գ. Թագ. 2 32.) Երկրորդ եւ երրորդ տաճարին մէջ այս միջնորմը Հսկայ վարագոյրով մը փոխարինուած էր, որուն վրայ եւս Քերովքէներ բանուած էին (Բզգ. Բ. Մն. Գ 1-14):

Քերովքէներու պատկերներու մասին մանրամասնութեանց մտանք յիշեցնելու Համար մեր ժամանակներու պատկերամարտներուն եւ եկեղեցիներուն մէջ պատկեր դնելու սովորութեան Հակառակորդ քարոզիչներուն, թէ Հին Ուխտի դերագոյն Սրբութիւններուն մէջ արձաններ ու պատկերներ դրուած ու քանդակուած էին Աստուծոյ Հրամանով, անշուշտ ոչ իբրեւ պաշտամունքի առարկայ, այլ իբրեւ երկնանով, անշուշտ ոչ իբրեւ պաշտամունքի առարկայ, այլ իբրեւ երկնային էակներու ներկայութեան տեսանելի խորհրդանշաններ: Նոյն նպատակով եւ ուսուցման Համար դրուած են նաեւ պատկերները մեր եկեղեցիներէն ներս:

Գօղոս Առաքեալ իր Կողոսացոց գրած թուղթին մէջ երբ կը Հաստատէ, որ Քրիստոսով ստեղծուեցաւ ամէն բան թէ՛ երկինքի մէջ եւ թէ՛ երկրի վրայ, թէ՛ երկնցողները եւ թէ՛ աներեւոյթները, այս առի՜ կը յիշատակէ նաեւ Հետեւեալները, որոնք եւս Քրիստոսի կողմէ ստեղծուեցան, «Թէ ԱԹՈՌՔ, Թէ ՏԵՐՈՒԹԻՒՆՔ, Թէ ԻՇՆԱՆՈՒԹԻՒՆՔ» (Կող. Ա 16):

Ասոնցմէ «ԻՇՆԱՆՈՒԹԻՒՆՔ» կը յիշուած են նաեւ նոյն թուղթի Բ 10 եւ 15 Համարներուն մէջ: Հոս մայրեցոց թուղթին

մէջ ալ յիշուած են «ՀՐԵՇՏԱԿՔ ԵՒ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՔ» (Հուս. Ը 38). Եփեսացւոց թուղթին մէջ ալ յիշուած են «ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ, ՊԵՏՈՒԹԻՒՆ, ԶՕՐՈՒԹԻՒՆ, ՏԷՐՈՒԹԻՒՆ» (Ա 21): Առ Կորնթացիս Ա թուղթին մէջ ալ յիշուած են «ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ, ՊԵՏՈՒԹԻՒՆ ԵՆ ԶՕՐՈՒԹԻՒՆ» (ԺԵ 24): Իսկ Պետրոսի Ա թուղթի Գ 22ի մէջ յիշուած են. «ՀՐԵՇՏԱԿԵՆՐ, ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՆ ԶՕՐՈՒԹԻՒՆՆԵՐ»: Այս բոլորը առ Հասարակ մեկնաբանուած են իբրև Հրեշտակաց դասակարգութիւններ, զորս օգտագործելով լրացուցած եւ Հանգամանօրէն բացատրած է Դիոնիսիոս Արիոպագացի մեծ մատենագիրը իր «ԵՐԿՆԱՅԻՆ ՔԱՂԱՆԱՅԻՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՔ» նշանաւոր գրքին մէջ, որ Հայերէնի թարգմանուելով Ը դարուն, Հրեշտակաց դասակարգութեան վերաբերեալ անոր տեսութիւնները անցած են նաեւ մեր մատենագիրներու, յատկապէս Ներսէս Շնորհալի Հայրապետը իր գրած շարահաններէն երեքին մէջ ներկայացուցած է մի առ մի Հրեշտակաց դասակարգութիւնները: Այս դասակարգերը բաժնուած են երեք «Քահանայապետութիւններու», որոնցմէ իւրաքանչիւրը ունի երեք խումբեր ըստ Հետեւեալի.

Առաջին քահանայապետութիւն.

1. Բազմաչեայ ՔերճՎԱԷՔ.
2. Սրբասաց եւ վեցթեւեան ՍԵՐՈՎԱԷՔ.
3. ԱԹՈՒՔ անեղ աստուածութեան:

Երկրորդ քահանայապետութիւն.

4. Անփոփոխ միշտ ՏԷՐՈՒԹԻՒՆՔ.
5. Անյաղթելի սուրբ ԶՕՐՈՒԹԻՒՆՔ.
6. Գերագոյն ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՔ.

Երրորդ քահանայապետութիւն.

7. Անմարմին ՊԵՏՈՒԹԻՒՆՔ.
8. ՀՐԵՇՏԱԿԱ ՊԵՏՔ բարձրութեան.
9. Հրեշտակաց ԶԻՆՈՒՈՐՈՒԹԻՒՆՔ*:

* Տես այս մասին Շնորհալիի երգերէն ժամագրքի Առաւօտեան ժամերգու-

3. ՀՐԵՇՏԱԿԱ ՊԵՏՆԵՐ: Այս բառը երկու անգամ միայն գործածուած է ամբողջ Ա. Գրքին մէջ: Նախ Պողոս Առաքեալի կողմէ, երբ կը խօսի ննջեցեալներու յարութեան մասին՝ կը Հաստատէ, որ անոնք պիտի յառնեն «ի ձայն ՀՐԵՇՏԱԿԱ ՊԵՏԻ ԵՆ Ի փող Աստուծոյ» (Ա. Թես. Դ. 15), առանց Հրեշտակապետի անունը տալու: Բայց առ Հասարակ այնպէս ընդունած է, թէ ԳԱՐԻԷԼ Հրեշտակապետն է որ պիտի Հնչեցնէ մեռեալներու յարութեան փողը: * Երկրորդ՝ գործածուած է Յուզա Տեառնեղբոր մանր թուղթին 9րդ Համարին մէջ՝ ուղղակի ՄԻՔԱՅԷԼԻ Համար: Ուրեմն նախ խօսինք անոնց մասին:

ԳԱՐԻԷԼ ամենէն Հանրածանօթ Հրաշտակապետն է Քրիստոնէական եկեղեցիի մէջ, յատկապէս Արեւելեան եկեղեցիներու մէջ. անոր Համար իր անունը սկիզբը դրուած է Հրեշտակաց տօնակատարութեան մէջ: Արեւմտեցի մէջ աւելի ծանօթ է Միքայէլը եւ Հետեւաբար նախապատելը ան է: Գարրիէլ անունը կը նշանակէ «Այր Աստուծոյ» կամ «Զօրութիւն Աստուծոյ»: Նախ յիշուած է Դանիէլի գրքին մէջ: Մարգարէին տեսիլք մը կ'երեւի. կ'ուզէ անոր իմաստը գիտնալ եւ չի կրնար, ու կը շարունակէ մարգարէն. «ԱՀա դիմացս մարդու կերպարանքով մէկը կայնեցաւ, միաժամանակ մարդկային ձայն մը լսեցի, որ կ'ըսէր՝ Գարրիէլ, բացատրէ ասոր՝ տեսիլքը»: Երբ Գարրիէլ կը մօտենայ մարգարէին, կ'երեւի, թէ մարգարէն սաստիկ կ'ահաբեկի անոր կերպարանքէն (ինչպէս եղաւ նաեւ Զաքարիա՝ Դ. Ա 13). «Երբ ան ինծի եկաւ, ես յիմարեցայ եւ գետին ինկայ երեսիս վրայ»: Հրեշտակը կը բացատրէ տեսիլքը (Դան. Ը 15-27): Յիշուած է նաեւ նոյն գրքի Թ. 21րդ Համարին մէջ, ուր եւս ապագայի մասին լուսաբանութիւններ կուտայ:

Իսկ Նոր Կտակարանէն ծանօթ է Գարրիէլի աւետուած Յովհ. Մկրտչի եւ մեր Փրկչի ծնունդներուն (Ղուկ. Ա 26-38): «Ես Գարրիէլն եմ, որ կը կենամ Աստուծոյ ներկայութեանը» կ'ըսէ ան ինքզինքը

Թեան վերջաւորութեան գրուած ԱՐԱՐՁԱԿԱՆ երգի առաջին մասը, որ կ'երգուի ԵՐԿՈՒՇԱԹԻ օրեր, եւ որ նուիրուած է նաեւ «Երկնային Զօրացն»: Երկրորդ Մաղկազարդի կանոնին Տէր Յերկնից շարականը. եւ Հրեշտակներու նուիրուած շարականի կանոնին՝ Տէր Յերկնից պատկերը:

* Տես ժամագրքի «ՌաՀ գործեալ» յաջորդող «երգ»երէն «Ի դնել բեմին» անունին երրորդ տողը. «Գարրիէլեան Փողն գոչէ»:

ներկայացնելով, որմէ ոմանք կ'ենթադրեն, որ Գաբրիէլ, այսպէս ասած, Աստուծոյ անձնական ու անմիջական պաշտօնեան է, որ ի գործ կը դնէ Անոր Հրամանները եւ կարեւորագոյն որոշումները եւ տնօրինութիւնները:

ՓԵՇՏԻՄԱԼԺԵԱՆԻ Յայտաւորքի մէջ Գաբրիէլ կոչուած է «Ճշմարիտ բարեկամը մարդկային բնութեան» եւ «միշտ բարեկամ եւ պահպան Քրիստոնէից»: Բացի Ամենայն Երկնային Ջօրաց Հետ տօնախմբութենէն՝ նոյն Յայտաւորքի մէջ Գաբրիէլի Համար յատուկ տօն նշանակուած է Յուլիս 13ին շատ կարճ գրութեամբ մը: Իսկ Ապրիլ 8ին «վերստին Աւետեաց տօն» ըլլալով Հանդերձ Յայտաւորքը կ'աւելցնէ. «Յիշատակ եւ տօն է Սրբոյ աւետարեւր Հրեշտակապետին Գաբրիէլի»: կցելով մէկուկէս սիւնակնոց գեղեցիկ ճառ մը ի պատիւ Գաբրիէլին: Այստեղ ան կը ներկայացուի իբրեւ «վեհագոյն ի բոլոր երկնաւորացն», որովհետեւ ամենէն առաջ ան ընտրուեցաւ Աստուծոյ կողմէ՝ մարդկութեան անծանօթ մարդեղութեան մեծ խորհուրդը նախ ինք իմանալու եւ ապա Ս. Կոյսին՝ եւ անով ամբողջ մարդկութեան յայտնելու: Ուստի կ'եզրակացնէ Յայտաւորքը, «մեր փրկութեան այս աւետարեւրը պարտինք պատուել իբրեւ նախընթաց եւ մեծ Հրեշտակապետ Աստուծոյ»:

Անունով յիշուած երկրորդ Հրեշտակապետն է ՄԻՔԱՅԷԼ, որ կը նշանակէ «Ո՞վ նման է Աստուծոյ»: Ըստ աւանդութեան, այս խօսքը մարտական աղաղակը եղաւ այն բարի Հրեշտակներուն, որոնք Հաւատարիմ մնացին Աստուծոյ եւ պատերազմ յայտարարեցին ապստամբող Հրեշտակներու դէմ, որոնց պետը՝ Սադայէլը, ինքզինքը Աստուծոյ տեղ դրած էր եւ անոր նման կը յայտարարէր: Ապստամբներուն յաղթելէն եւ զանոնք վտարելէն ետքը երկինքէն մարտական այս աղաղակը իբրեւ յատուկ անուն տրուեցաւ Հաւատարիմ Հրեշտակներու Հրամանատարին, որ նոյնինքն Միքայէլն էր:

Ան ալ առաջին անգամ կը յիշուի Դանիէլի գրքին մէջ «Իբրեւ մէկը առաջին իշխաններէ, որ կուգայ օգնել Դանիէլին (Դան. Ժ 13 եւ 21): Յիշուած է նաեւ Յուդա Տեառնեղբոր թուղթին 9-րդ Համարին մէջ իբրեւ «Միքայէլ Հրեշտակապետ», որ երբ Սատանայի Հետ կը մարտնչի «վասն Մովսիսեանն մարմնոյ», եւ զայն անարգելու գայրոյթին մէջ չի հանդուրժէր հայհոյանքի դիմել, այլ կը բաւակա-

նանայ ըսելով. «Թող Աստուած սաստէ քեզի»: Կը յիշուի նաեւ Յայտնութեան գրքին մէջ իբրեւ ախոյեանը եւ պաշտպանը եկեղեցիին՝ ընդդէմ չարութեան ոյժերու (ԺԲ. 7-9): Ուրեմն՝ Թէ՛ Ս. Գրքին եւ Թէ՛ աւանդութեան մէջ Միքայէլ կը ներկայանայ իբրեւ մարտնչող եւ պայքարող իշխան՝ Աստուծոյ փառքին եւ Անոր ժողովուրդին պաշտպանութեան Համար: Այս իսկ պատճառով պատկերներուն մէջ ան կը ներկայացուի առ Հասարակ զրահաւորուած, սուր ի ձեռն եւ վիշապ մը իր ոտքերուն տակ: Իսկ ուրիշ պարագաներուն կը պատկերացուի կշիռ ի ձեռին, որ կը կշռէ ննջեցեալներուն Հոգիները, արդարները Աստուծոյ ներկայացնելու եւ մեղաւորները դժոխք դրկելու Համար:

Յայտաւորքներու մէջ Միքայէլին Համար նշանակուած է առանձին տօնակատարութիւն մը Աեպտ. 6ին, ուր կը պատմուի, որ Փռիւզիոյ Կոլաս քաղաքին մէջ Միքայէլի անունով վանք մը կար, ուր շատ Հրաշքներ կ'ըլլային: Հիթանոսներ, Յուլիանոս Ուրացողի դրողմով, կը փորձեն մօտակայ գետ մը դէպի այս վանքը դարձնել՝ ջրամոյն ընելու Համար զայն: Սակայն Միքայէլ Հրեշտակապետ իր գեղարդով գետին կը զարնէ, մեծ վիհ մը կը բացուի, ուր կը Հոսին դարձուած գետին ջուրերը նախ քան եկեղեցին հասնիլը եւ ուրիշ տեղէն դուրս գալով՝ կը շարունակեն իրենց ճամբան. վանքը կը մնայ անվնաս եւ կը շարունակէ իր Հրաշագործութիւնները: Իսկ Նոյեմ. 8ին Թէեւ նշանակուած է՝ «Տօն է սուրբ եւ փառաւորեալ Հրեշտակապետացն Միքայէլի եւ Գաբրիէլի եւ ամենայն Երկնաւոր գօրացն», բայց իրականին մէջ կը խօսուի երկարօրէն լուկ Միքայէլի անունան կապուած սրբավայրերու մասին, որոնց մէջ եւս շատ մը Հրաշագործութիւններ տեղի կունենան: ՄԱՐԶՈՒԱՆՅԻԻ յայտաւորքի Նոյեմ. 8ի տօնակատարութեան վերջաւորութեան մի առ մի կը յիշատակուին նաեւ Հրեշտակաց 9 դասակարգութիւնները, իւրաքանչիւրին Համար մէկ երկու տողնոց փառաբանութեամբ: Այս գրութեան կը յաջորդէ ներսէս Ծնորհալիի փառաբանութեան ընդարձակ մէկ ճառը առ Սուրբ Հրեշտակա:

Ս. Գրքի մէջ անունով յիշուած երրորդ Հրեշտակն է ՌԱՓԱՅԷԼը, որ կ'երեւի երկրորդականոն գիրքերէն Տովբիտի մէջ (ԺԲ 12, 15), ուր ան ծպտուած կ'ընկերանայ Տովբիտի որդի Տուբիայի եւ մեծ յաջողութեամբ կը պսակէ անոր ճամբորդութիւնը: Իրեն կը վերագրուի պաշտօնը բարի մարդոց աղօթքները Աստուծոյ ներկայացնելու: Այս

անունն ալ կը նշանակէ «Աստուած կը բժշկէ»: Անոր տօնի օր նշանակուած է Հոկտ. 14, եւրոպական աղբիւրներու մէջ, որ մեր մօտ չ'երեւիր: Օրմանեան Պատրիարք, ժամագրքի «Քրիստոս Աստուած» մաղթանքի վերջաւորութեան կցելի «ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ» անունով տետրակ մը պատրաստած է Երուսաղէմ գտնուած միջոցին: Այդ տետրակը հրատարակուած է Երուսաղէմի տպարանէն 1965ին. այնտեղ ի Հրեշտակապետաց տօնին վերոյիշեալ երեք հրեշտակապետներու կարգին կը յիշատակէ նաեւ ուրիշ անուններ, այսպէս հրեշտակապետներու թիւը բարձրացնելով 9ի: Յառաջ կը բերենք Օրմանեան Պատրիարքի հրեշտակապետաց մասին յօրինած երեք «Յիշատակութիւն»ներէն միջինը էջ 21էն (էջ 53ի վրայինը տպագրական սխալներով լեցուն է):

Ինունց երկնայնոց գերազանց հրեշտակապետաց,
Իննեակ դասակարգութեանց պետաց հրաշալեաց,
Տեառն զօրութեանց պատգամաւորին ՄԻՔԱՅԷԼԻ,
Փրկագործ տնօրինութեանց աւետարանին ԳԱՐՐԻԷԼԻ,
Յանցաւորիս նեղելոց պաշտպանին ՌԱՓԱՅԷԼԻ,
Ապառնեաց ծածկելոց յայսնողին ՈՒՐԻԷԼԻ,
Օրինաց լրման միջնորդին ԱՆԱՅԷԼԻ,
Աստուածային էութեան մեկնաբանին ԱՊՈՆԻԷԼԻ,
Հողեղինացս ի յօճան բարեխօսին ՏԱԿՈՒԷԼԻ,
Երկնից արքայութեան քարոզողին ՓԱՆՈՒԷԼԻ,
Փառաց անմահին օրհնաբանին ԲԱՐԱԳԻԷԼԻ,
Եւ Համօրէն լուսեղինաց անմարմին զուարթնոց,
Հազարաւոր հազարաց եւ բիւրաւոր բիւրուց,
Անհամար բազմութեան երկնային զօրաց,
Որոց այսօր է յիշատակ, զխաղ...

(Ս. Հրեշտակապետաց 7 նոյ. 1915, Եբ.)

4. ՊԱՀԱՊԱՆ ՀՐԵՇՏԱԿՆԵՐ: Աւետարանի մէջ կը հաստատուի, որ ամէն ոք, առնուազն մանուկները, ունին իրենց պահապան հրեշտակները (Մտթ. ԺԸ. 10): Դանիէլի գրքին մէջ կը յիշուի, որ

ամէն ազգ իր հրեշտակն ունի (Ժ. 13): Յայտնութեան գրքին Համաձայն եկեղեցիներ իրենց հրեշտակներն ունին, որոնց անունով Յիսուս իր պատգամները կը զրկէ ամբողջ Համայնքին (Ա. 20, Բ. 1,8): Վերջապէս կ'ականարկուի, որ Պետրոս Առաքեալ ունի իր հրեշտակը (Գործք ԺԲ. 15), որուն հետ շփոթուած կը կարծեն զայն Հաւատացեալները, երբ Հոռովէ աղախինը կը պնդէ, որ Պետրոսը դրան առջեւ կեցած կը բախէ, երբ ամէն ոք դիտէր, թէ Պետրոս բանտի մէջ էր խիստ հսկողութեան ներքեւ (Գործք. ԺԲ. 13-16): Այս պահապան հրեշտակները ոչ միայն կը պահպանեն մարդիկը աշխարհիկ վտանգներէն, այլ նաեւ կ'առաջնորդեն իրենց հսկողութեան յանձնուած մարդերը դէպի երկինքի արքայութիւնը, եթէ ենթակաները այդպէս կամենան եւ Հակառակ չկենան անոնց թելադրանքներուն, ներշնչուածներուն եւ առաջնորդութեան: Վասնզի, ինչպէս Աստուած, այնպէս ալ հրեշտակները կը յարգեն մարդուն ազատ կամքը եւ իրենց բարի ցուցմունքները չեն պարտադրեր անոնց: Պահապան հրեշտակը Աստուծոյ նախախնամութեան մարմնացումն է. անոր Համար եկեղեցին շարունակ կ'աղօթէ եւ կը խնդրէ. «ԶՀՐԵՇՏԱԿ Խաղաղութեան պահապան անձանց մերոց ի Տեառնէ խնդրեսցուք»:

Արդարեւ հրեշտակները սուրբերուն չափ եւ յաճախ անոնցմէ աւելի յարգ ու պատիւ վայելած են Հաւատացեալներու եւ եկեղեցիի կողմէ:

Անոնց անուններով եկեղեցիներ կառուցուած են: Երուսաղէմի մէջ ունինք Սրբոց Հրեշտակապետաց գողտրիկ եւ հին եկեղեցին: Այստեղ՝ Իսթանպուլի մէջ, ունինք Պալաթու Ս. Հրեշտակապետաց հրաշագործ եկեղեցին: Սա պահուս մեր միտքը չեն գար հինէն կամ նորէն եկեղեցիներ, որոնք կառուցուած ըլլան մեր մէջ՝ յանուն Գաբրիէլի կամ Միքայէլի: Արեւմտեան եկեղեցին ունի բազմաթիւ տաճարներ յանուն Սէն Միշելի կամ Սէն Կապրիէլի:

Հրեշտակներու պահպանողական պաշտպանութիւնը միշտ խնդրուած է Աստուծմէ եկեղեցիին կողմէ. «զՀրեշտակ Խաղաղութեան քո առաքեալ առ մեզ, որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս ի տուէ եւ ի գիշերի» (ժամագիրք): Կը յիշենք ի մանկութենէ ննջելէ առաջ երգուած աղօթքը՝ ուղղեալ հրեշտակներու.

«Հրեշտակ գուարթուն, հզոր պահպան մեր,
Որ գտիւն ողջոյն զմեզ խնամեցեր...
Քուն քաղցր անփորձ՝ շնորհեա մեզ այս գիշեր:
Եւ զծնողս հոգւոց եւ մարմնոց կեցո»:

5. ՍԱՏԱՆԱՆԵՐ: Եկեղեցին կը հաւատայ ոչ միայն բարի հոգիներու գոյութեան, այլ նաեւ՝ չար ոգիներու: Ուրկէ՞ յառաջ եկան անոնք, երբ Աստուծոյ ստեղծած ամէն բան բարի է, ինչպէս կը հաստատուի Աստուածաշունչի առաջին գլուխին մէջ (Ծննդ. Ա. 4. 31): Այո. Սատանաներն ալ Աստուծոյ արարածներն են, մարդոց պէս, որոնք եւս «բարի» ստեղծուած էին, բայց չարացան իրենց կամքով, ճիշդ մարդու պէս, մեղանչելով:

Սատանաներ, այս կամ այլ անուններով, բազմիցս յիշուած են Աստուածաշունչի մէջ (Յոր. Ա. 6., Զաք. Գ. 1), բայց առաւելապէս Նոր Կտակարանի մէջ է, որ կարծես թէ մէջտեղ կ'ելլեն անոնք բազմութեամբ, սկսեալ Յիսուսի փորձութենէն (Մատթ. Դ. 1) մինչեւ Անոր վերջին գիշերը, երբ «Սատանան կը մտնէ Յուդայի մէջ» եւ «կը խարբալէ Պետրոսը» (Ղուկ. ԻԲ. 3,31): Կը շարունակուի անոր քանդիչ գործունէութիւնը ամբողջ պատմութեան ընթացքին, յատկապէս պիտի սաստկանայ աշխարհի կատարածը կանխող շրջանին մէջ (Յայտ. Ի 2, 7, 9): Սատանան բազմաթիւ ուրիշ անուններ ալ ունի. Բէեղզեքուդ, (Մատթ. ԺԲ 24), Բելիար (Բ Կոր. Զ 15), «Իշխան Աշխարհիս այսորիկ» (Յով. ԺԲ 31), «Այս օգին իշխանը» (Եփս. Բ 2): Ու վերջապէս՝ «այս աշխարհի աստուածը» (Բ Կոր. Դ 4): Իսկ իր ստորոգելիներն են՝ բանասրկու, Բակառակորդ, ստութեան Բայր, օձ եւլն. եւլն.: Կը նկարագրուի իբրեւ մէկը, որ լեցուն է նախանձով եւ չարակամութեամբ, անզթութեամբ եւ խարէութեամբ: Թշնամի Աստուծոյ եւ մարդոց:

Առ հասարակ ընդունուած հաւատալիք է, որ սկիզբէն դեւերուն գլխաւորը կամ «զօրագլուխը» նոյնինքն Սատանան կամ Սադայէլը, Աստուծոյ արարածներուն մէջ ամենէն փառաւորն էր: Այն աստիճան կատարեալ ու գեղեցիկ էակ էր, որ ինքն իսկ շլացաւ իր փառքէն եւ խորհեցաւ ինքն իրեն, թէ իր ի՞նչը կը պակսէր աստուածանալու եւ Աստուծոյ հաւասար ըլլալու: Այս մասին անուղղակի ակնարկութիւն

կայ Եսայի մարգարէի կողմէ, ուր Բաբելոնը, իբրեւ սատանայի մարմնացումը հետեւեալ ձևով կ'արտայայտուի ինքն իրեն համար. «Երկինք պիտի ելնեմ, Երկինքի աստղերէն աւելի վեր պիտի դնեմ աթոռս, բարձր լեռան մը վրան պիտի նստիմ... Բարձրեալին նմանող պիտի ըլլամ» (Ես. ԺԴ 13,14): Ուստի իրեն կողմնակիցներ ճարելով հրեշտակներու մէջէն՝ ապստամբեցաւ Աստուծոյ դէմ: Այն ատեն հաւատարիմ հրեշտակները, Միքայէլ հրեշտակապետի հրամանատարութեան ներքեւ, պատերազմ յայտարարեցին ասոնց դէմ՝ «Ո՞վ նման է մեր Աստուծոյ» կամ «Ոչ ոք կրնայ հաւասար ըլլալ մեր Աստուծոյ» մարտակոչով, եւ յաղթահարեցին ու վտարեցին զանոնք երկինքէն: Ահաւաստիկ երբեմնի այս բարի հրեշտակները ապստամբելէն յետոյ վերածուեցան սատանաներու կամ դեւերու, որոնք այլեւս իրենց գոյութեան եւ գործունէութեան նպատակը կը գտնեն՝ մարդիկը մոլորեցնելով՝ զանոնք Աստուծոյ կամքին հակառակ գործեր ընել տալու եւ իրենց տիրակալութեան ներքեւ առնելուն մէջ: Ամէն չարիք կամ մեղք գործող մարդ այլեւս սատանայի ազդեցութեան ներքեւ կը գտնուի:

Մարդիկը այս ստրկութենէն ազատելու (եւ իրենց համար նախասահմանուած երջանկութիւնը անոնց վերադարձնելու) համար՝ նոյնինքն Աստուծոյ Միածին Որդին, Ս. Երրորդութենէն մէկը, մարդացաւ: Առաջին գործը եղաւ Սատանան պարտութեան մատնել, իբրեւ մարդ, մերժելով անոր բոլոր թելադրանքները, զորս կ'ընէր Սատանան որպէս թէ Յիսուսի բարիքին եւ օգտին համար (Մատթ. Դ 1-11): Ապա իր չարչարանքներով, խաչելութեամբ եւ մահուամբ մարդոց տեղ ինք կրեց անոնց սահմանուած պատիժները, եւ ստեղծեց այսպէս կարելիութիւնը Սատանայի տիրակալութենէն դուրս գալու եւ վերստին մտնելու Աստուծոյ իշխանութեան ներքեւ: Յիսուսի իրագործած այս Փրկութեան մասնակից դառնալու համար մարդ պարտի գործադրել երեք պայմաններ. ա) Ապաշխարել եւ ընդունիլ Քրիստոսը իբրեւ իր Տէրը եւ Աստուածը, բ) Մկրտուել յանուն Հօր, Որդւոյ եւ Ս. Հոգւոյն, գ) Պահել ու գործադրել ամէն ինչ, որ Յիսուս սորվեցուցած է. «Ով որ կը հաւատայ եւ կը մկրտուի՝ պիտի ապրի», այսինքն՝ յաւիտենական երջանիկ կեանքի պիտի արժանանայ, իսկ «Ով որ չի հաւատար՝ պիտի դատապարտուի». Կ'ըսէ Յիսուս իբրեւ եզրափակիչ պատգամ իր ուսուցման (Մրկ. ԺԶ 16):

Յիսուս Սատանային անկումն ալ նշմարեց ու Հաստատեց. «Կը տեսնէի Սատանան, որ կ'իյնար երկինքէն փայլակի պէս» (Ղուկ. Ժ 18): Վերոյիշեալ Համարի անմիջապէս յաջորդող տողի մէջ Յիսուս իշխանութիւն կուտայ իր աշակերտներուն «Կոխել օձերը եւ կարիճները եւ թշնամիին (Սատանային) բոլոր զօրութիւնը, եւ ձեզի ոչ մէկ վնաս պիտի պատճառեն»: Սատանան մարդոց կրնայ վնասել միայն անոնց գործակցութեամբ, կամաւորապէս անոնց իրեն ենթարկուելովը: Օրինակ, Սատանան Յուդայի իսկ գործակցութեամբը անոր «մէջ մտաւ», եւ Յուդա անոր իշխանութեան տակ մտաւ կամաւորապէս, երբ իրեն իշխանութիւն տրուած էր Սատանան իրեն ենթարկելու: Ոչ միայն չգործածեց իրեն տրուած իշխանութիւնը, այլ նաեւ դաւաճանեց իր Վարդապետին՝ դուրս գալով Անոր իշխանութենէն եւ մտնելով Սատանայի իշխանութեան տակ (Ղուկ. ԻԲ 3, Յովհ. Զ 71, ԺԳ 27): Սատանան էր, որ «լեցուց» Անանիայի եւ Սափիրայի սիրտը իրենց բերած դրամին մէջէն մաս մը գողնալու (Գործ. Ե 3): Անդու անդադար կը շրջի եւ կը մռնչէ առիծի պէս «եւ կը փնտռէ, թէ ով կլանէ», որուն դիմաց Գետրոս Առաքեալ կը պատուիրէ: «Արթուն եղէք, Հսկեցէք, որպէսզի կարենաք դէմ դնել անոր՝ Հաւատքով Հաստատուած» (Ա Գետր. Ե 8-9): Երբեմն Սատանան Հրեշտակի կերպարանք կ'առնէ՝ մարդիկը խաբելու Համար (Բ Կոր. ԺԱ 14): Սակայն իրականութեան մէջ պարտեալ թշնամի մըն է ան:

Քրիստոս Չախճախեց անոր զօրութիւնը՝ իր փորձութեան ատեն անոր վրայ տարած յաղթանակով: Չախճախեց մանաւանդ իր չարչարանքներով եւ յաղթական յարութեամբ: Քրիստոս ի վերջոյ պիտի դատապարտէ զայն «յաւիտենական կրակին, որ պատրաստուած է Սատանայի եւ անոր Հրեշտակներուն» (Մատթ. ԻԵ 41): Յայտնութեան գրքին մէջ արդարեւ կը Հաստատուի, որ Վերջին դատաստանին չար ոյժերու «զօրագլուխը՝ Սատանան, պիտի նետուի կրակի եւ ծծումբի լիճը, ուր պիտի չարչարուի ցերեկ եւ գիշեր» (Յայտ. Ի 9-10):

6. ԵԶՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ: Համադրելով մեր ցարդ ըսածները, նախ Հաստատենք, որ Հրեշտակները պարզ, աննիւթական էակներ են, գերագոյնները բանաւոր արարածներուն մէջ, մարդոց անդրանիկ եղբայրները եւ այդ պատճառով ալ յաճախ կը կոչուին Անդրապակաց Եկեղեցի: Երկրորդ, ոչ միայն Արարիչ Աստուծոյ սպասաւորներն են,

այլ նաեւ միջնորդները Աստուծոյ եւ մարդոց միջեւ. նոյնիսկ Մովսիսական օրէնքը արուեցաւ Հրեշտակներու ձեռքով (Գործք. Է 38 եւ 53): Ասոնք միաժամանակ մարդոց պաշտպանները եւ պահապաններն են ինչպէս կ'ըսուի Սաղմոսաց Գրքին մէջ. «Տիրոջ Հրեշտակներու բանակները իր երկիւղածները կը շրջապատեն» ի պաշտպանութիւն (Սղմ. Լ Գ 8): Կամ, ինչպէս ուրիշ տեղ ըսուած է, «Իր Հրեշտակներուն պատուիրած է՝ քեզի Համար, որ պահեն քեզ քու բոլոր ճամբաներուդ մէջ (Սաղմ. Ղ 11):

Ուրեմն՝ մեզի կը մնայ գործակից եւ կամակից ըլլալ բարի Հրեշտակներուն, որոնք կը ցանկան եւ կ'օժադակեն մեր փրկութեան, եւ պայքարիլ չար Հրեշտակներու դէմ, որոնք կ'աշխատին մեր կորուստին Համար: Յիշելով երկնային էակները՝ գիտուինք Հրեշտակաց Հոգիով եւ Հոգեւոր զրահներով, աշխատինք ըլլալ անոնց պէս Հրեշտակային, անմեղ ու անարատ՝ Աստուծոյ ներկայութեան ելլելու Համար: Անոնց Հետ եւ անոնց պէս շարունակ փառաբանենք ամենասուրբ Երրորդութիւնը եւ յօժարակամ Հնազանդութեան մէջ մնանք: Պատրաստ ըլլանք ամէն օր, որ երբ անոնցմէ Հրաւէր գայ այս աշխարհէն Հրաժարելու եւ Հեռանալու, ընկերանանք իրենց սիրով եւ զուարթ երեսով, գիտնալով, թէ կը Հրաւիրուինք երկնային ու յաւիտենական երանութեան:

Նայելով անոնց Հաւատարմութեան, որով ըմբոստ Հրեշտակները վտարեցին երկինքէն, մենք ալ օժտուինք նոր զօրութեամբ, Ռաւատքի, յոյսի եւ սիրոյ նոր սպառազինութեամբ եւ վտարենք մեր կեանքէն սատանայական ամէն գործ եւ թելադրութիւն: Պէտք է գիտնանք, թէ երբեք պիտի չպակսի մեզի Երկնային զօրքերու նիզակակցութիւնը ընդդէմ իրենց եւ մեր Հասարակաց թշնամիներուն՝ դիւական զօրութեանց: Թող անոնք բարեխօս ըլլան մեզի Համար Աստուծոյ ներկայութեան, մեղաց թողութեան եւ աստուածային շնորհաց եւ ողորմութեան ընդունելութեան Համար, որպէսզի աղօթեմք հրեշտակօրէն, ապրինք հրեշտակօրէն եւ դասակից ըլլանք հրեշտակաց: Թող պարապի չանցնի անոնց Հոգը եւ խնամքը մեր վրայ: Այնպէս ապրինք, որ թէ՛ մեր պահապան Հրեշտակները եւ թէ՛ մենք պարզ եւ զուարթ երեսով մօտենանք Աստուծոյ, երբ Անոր ներկայութեան Հանեն մեզ:

Հրեշտակաց տօնը առիթ մըն է ամէն Քրիստոնեայի յիշելու Հա-

մար մեր լաւագոյն եւ ամենէն Հաւատարիմ բարեկամները, որոնք ոչ միայն մեր վրայ պահպանութիւն կ'ընեն՝ յաճախ փրկելով զմեզ երեւելի եւ աներեւոյթ թշնամիներէն եւ վտանգներէն, այլ նաեւ կ'ուրախանան՝ երբ մեզաւոր մը ապաշխարհէ, դուրս գայ չար ճանապարհէն եւ մտնէ բարի ճանապարհը. «Ուրախութիւն կ'ըլլայ Աստուծոյ Հրեշտակներու մօտ, եթէ մեզաւոր մը ապաշխարհ» (Ղկ. ԺԵ. 10): Պատճառենք այս ուրախութիւնը մեր բարեկամներուն, մեր երկնաւոր Հօր եւ մենք մեզի, ապաշխարելով, եթէ արդարեւ մեզքի կամ անտարբերութեան կեանք մը կ'ապրինք:

Այս տօնը միաժամանակ առիթ մըն է, որ մշակենք Աստուծոյ Հաւատարիմ, Հնազանդ եւ Հպատակ մնալու առաքինութիւնը, որ Հիմնական յատկանիշն է Հրեշտակներուն՝ սրբութեան եւ անմեղութեան առաքինութեանց հետ: Առիթ մըն է, որ անդրադառնանք անոնց հետ գործակցելու անհրաժեշտութեան, երբ անոնք շարունակ օգտակար ներշնչումներ կուտան մեզի եւ կ'ազդարարեն մեզի՝ երբ փորձութեան վտանգի կ'ենթարկուինք: Բայց ամենէն աւելի առիթ մըն է Հրեշտակաց տօնը, որ վերարծարծենք մեր աստուածսիրութիւնը եւ բարեպաշտութիւնը, եւ միանանք անոնց մշտամրմունջ սրբասացութեան «եւ Համարձակապէս գոչելով՝ ըսենք. «Սուրբ, Սուրբ, Սուրբ՝ Տէր Զօրութեանց. լի են երկինք եւ երկիր փառօք քո. օրհնութիւն ի բարձունս, օրհնեալ, որ եկիր եւ գալոց ես անուամբ Տեառն. Ովսաննա ի բարձունս»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկու խօսք - Պարոյր Մորադեան.....3
 Մուտք - Օնորիք արքեպսկ. Գալուստեան5
 Փոխան ներածականի7
 ա) Զխգել կապը մեր Աստուծոյ հետ.....7
 բ) Զկորցնել Հաւատքը13
 գ) Տէր մնանք մեր Հոգեւոր ժառանգութեան.....16
 դ) Սրբոց կեանքերը լաւագոյն միջոցներէն են Հոգեւոր կեանք մշակելու.....20

[ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ]

ԳԼՈՒԽ Ա
 ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴԷՄՔԵՐ

1. Գրիգոր Լուսաւորիչ.....23
 2. Արիստակէս Հայրապետ.....34
 3. Վրթանէս Հայրապետ.....38
 4. Գրիգորիս Աղուանից Կաթողիկոս.....44
 5. Յուսիկ Հայրապետ.....47
 6. Դանիէլ Ասորի Քորեպիսկոպոս.....50
 7. Մեծն Ներսէս Հայրապետ.....53
 8. Խազ Եպիսկոպոս.....62
 9. Ս. Սահակ Հայրապետ.....71
 10. Մեսրոպ-Մաշտոց Վարդապետ.....79
 11. Ղեւոնդեանք.....93
 12. Թարգմանիչ վարդապետներ94
 Եղիշէ Վարդապետ.....94

Մովսէս Խորէնացի ՊատմաՀայր	98
Մովսէս Քերթողահայր.....	100
Դաւիթ Անյաղթ փիլիսոփայ	102
13. Յովհաննէս Օձնեցի Հայրապետ.....	105
14. Գրիգոր Նարեկացի.....	109
15. Ներսէս Շնորհալի.....	113
16. Յովհաննէս Որոտնեցի.....	118
17. Գրիգոր Տաթևացի.....	123
Օրմանեան Պատրիարքի խորհրդածութիւնը Տաթևացիի արդիւնքին եւ յորինուած վարդապետական աստիճաններու մասին.....	128

ԳԼՈՒԽ Բ

ՀԱՅ ԺԳՆԱԿՆՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՎԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ներածութիւն	133
Ա. Բան խրատու եղիշէի Վարդապետի Յաղագս կրօնաւորաց	138
Բ. Թաթուլի խրատները իր աշակերտ Թուճասի	144
Գ. Ներսէս Շնորհալի Հայրապետի խրատները կրօնաւորներուն եւ անոնց առաջնորդներուն.....	151

ԺԳՆԱԿՆՈՐՆԵՐ

1. Ոսկեանք +100.....	156
2. Սուքիասանք +150	159
3-4. Անտոն եւ Կրօնիդէս +355.....	163
5-7. Թաթուլ, Վարոս, Թուճաս + Ե դարու վերջերը	166
8. Եօթը խոտաճարակներ +604	169

ԳԼՈՒԽ Գ

ԹԱԳԱԿՆՈՐՆԵՐ, ԻՇՅԱՆՆԵՐ ԵՒ ԶՕՐԱԿԱՆՆԵՐ

Արգար Թաղաւոր, ն. Ք +50?.....	172
Տրդատ Թաղաւոր 293-330	176
Սարգիս զօրավար, որդին Մարտիրոս եւ 14 զինուոր- ներ +365	183
Աստմեանք 449.....	187
Երկրորդ կամ Նոր Աստմեանք +853.....	189
Վարդանանք +451.....	190
Վահան Գողթնացի 700-737.....	193
Սահակ եւ Համազասպ իշխաններ	198

ԳԼՈՒԽ Դ

ՍՐԲՈՒՀԻՆԵՐ

Ս. Սանդուխտ 50?.....	201
Հռիփսիմեան եւ Գայանիկեան կոյսեր +301.....	204
Աշխէն Թաղուհի եւ Խոսրովիգուխ.....	211
Մանէ կոյս +323.....	214
Շուշան - Վարդենի +475.....	215

ԳԼՈՒԽ Ե

ՄԱՐՏԻՐՈՍՆԵՐ

1. Ստեփանոս Ուլնեցի +363.....	219
2. Գրիգորիս Ռաժիկ +549.....	222
3. Աստուածատուր-Մախոժ +553.....	224
4. Դաւիթ Դըւնացի +701	225
5. Սահակ եւ Յովսէփ Կարնեցիք +808.....	226
Գոհարիսեանք 1156.....	227

ՄԱՍԵ ԵՐԿՐՈՐԴ

ՏՕՆԵԼՈՒ ԱՐԺԱՆԻ ՄՐԲԱԿԵՆՑԱՂ
ԱՆՁԵՐ ԵՒ ՄԵԾԱԳՈՐԾ ԴԷՄՔԵՐ

Ներածումն.....230

ԳԼՈՒԽ Ա.

ՄՐԲԱԿԵՆՑԱՂ ԱՆՁՆԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ ՄԵԾԱԳՈՐԾ ԴԷՄՔԵՐ

1. Թէոդորոս Սալահունի +288.....231
2. Մանուէլ Մամիկոնեան +384.....232
3. Վռամշապուհ թագաւոր 390-414.....237
4. Գիւտ Կաթողիկոս 400?-487.....241
5. Յովհան Մանգակունի Կաթողիկոս 410-490.....244
6. Վահան Մամիկոնեան 440-510.....249
7. Ստեփանոս Սիւնեցի 680?-735.....257
8. Մաշտոց Կաթողիկոս եղիվարդեցի 897-898.....262
9. Աշոտ Ա. Բագրատունի թագաւոր 820-890.....265
10. Աշոտ Ողորմած թագաւոր 953-977.....269

ԳԼՈՒԽ Բ

1. Արծրունիք.....273
2. Գագիկ Արծրունի թագաւոր 908-943.....275
3. Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին.....278
4. Աղթամարի Կաթողիկոսութիւնը.....284

ԳԼՈՒԽ Գ
ԿԻԼԻԿԵԱՆ ՇՐՋԱՆ

- Գրիգորիսեանք.....286
1. Գրիգոր Բ. Վկայասէր 1025-1105.....288
 2. Գրիգոր Գահլաւունի 1093-1166.....291
 3. Գրիգոր Տղայ 1173-1193.....295
 4. Գրիգոր Քարավէժ 1193-1194.....299
 5. Գրիգոր Զ. Ապիրատ 1195-1203.....300
 6. Ներսէս Լամբրոնացի 1153-1198.....302
 7. Լեւոն Մեծագործ թագաւոր Հայոց 1187-1214.....307
 8. Զապէլ թագուհի 1215-1252.....312

ԳԼՈՒԽ Դ.

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ, ՄԻԱՐԱՐԱԿԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐ ԵՒ ԱԹՈՒԻ ՓՈՒՍԱԴՐՈՒԹԻՒՆԸ
ԷՋՄԻԱԾԻՆ

1. Արեւելեան վարդապետներ.....318
2. Միարարական փորձ Յունաց հետ.....321
3. Միաբանական փորձեր Հռոմէական եկեղեցիին հետ.....329
4. Աթոռի փոխադրութիւնը.....339
5. Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը.....341

ԳԼՈՒԽ Ե.

ԵՐԿՐՈՒ ԴԷՄՔԵՐ ՀԻՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՅՅԱՍՏԱՆԷՆ

1. Մխիթար Գօշ Վարդապետ 1140-1213.....346
2. Զաքարէ Սպարապետ + 1212.....348

ԳԼՈՒԽ Զ.

ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ԵՒ ԱՐԵՒԵԼԱՀԱՅՈՒԹԵԱՆ
ԶԱՐԹՕՆՔԻ ՆԱԽԱՀԱՅՐԸ

Մովսէս Տաթևացի Կաթողիկոս 1578-1633.....352

ԳԼՈՒԽ Է.

- 1. Հայ Երուսաղէմը.....362
- 2. Գրիգոր Պարոնտէր Պատրիարք 1613-1645.....368
- 3. Գրիգոր Շղթայակիր Պատրիարք 1717-1749.....373

ԳԼՈՒԽ Ը.

- Թուրքիոյ Հայոց Պատրիարքութիւնը.....382
- Յովհաննէս Կոլոտ Պատրիարք 1715-1741.....384

ՎԵՐՋԱՐԱՆ.....392

ՅԱԻՆԵԼՈՒԱԾ

- Ազգէ Հայրապետ.....395
- Աբարատեան ընկր վկաներ կամ Ակատեանք.....396
- Սուրբ Սէրւատիոս Եպիսկոպոս.....397
- Դաւիթ եւ Տիրիճան.....398
- Վկայութիւն Կողացի ինը մանկանց.....399
- Սուրբ Մակարիոս Եպիսկոպոս.....400
- Վկայաբանութիւն քրիստոնէից Հայոց եւ վրաց Շամշուլտէ
քաղաքին.....401

ՀՐԵՇՏԱԿՆԵՐ

- 1. Հրեշտակներու տեղը եւ գերը Աստուածաշունչին մէջ.....402
- 2. Հրեշտակներու դասակարգերը.....404
- 3. Հրեշտակազուտներ.....408
- 4. Պաշտպան Հրեշտակներ.....411
- 5. Սատանաներ.....413

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ.....418

« Գանձասար » մատենաշար

Խմբագիր	Պարոյր Մուրադեան
Մակետը՝	Արա Ստեփանեանի
Ծապիկը՝	Արմէն Քիրքչեանի
Տիտղոսաթերթը՝	Արեգ Ասատրեանի
Սրբագրիչ	Սիրանոյշ Բուլաթեան
Ծարուածքը՝	«ԳԱՆՁԱՍԱՐ» աստուածաբանական կենտրոնի Քամակարգչային ծառայութեան

Տպագրութեան պատասխանատու

Միսաք Կանուզեան

Տպագրիչ	Յարութիւն Սմարեան
Կազմարարներ	Մալաք Արամեան Սվետլանա Մարտիրոսեան
Ծալող վարպետ	Սամուէլ Կանուզեան
Կաղապարագործ	Ռուբէն Սմարեան

«Գանձասար» աստուածաբանական կենտրոնի տպագրատուն